ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ и ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

8

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1978

902·7 (с 43)
Ա 77

Խմբագրական կոլեգիա

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ, Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հատորի պատասխանատու խմբագիրներ
պատմական գիտ. թեկնածու Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ,
բանասիրական գիտ. թեկնածու Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
բանասիրական գիտ. թեկնածուներ
Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆԸ, Լ. Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ և Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Ա $\frac{10602}{703\ (02)—78}$ 39—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978.

ՍԵՐԻՆԵ ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱԳՅԱՆ



Սերինե Մովսեսի Ավագյանը (Սերինե) ծնվել է 1896 թ., Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Արճակ գյուղում, ուսուցչի ընտանիքում։ Հայրը, Մովսես Զաքարյանը, որ Վարագի վանքի դպրոցի առաջին շրջանավարտներից էր, 1897թ. տեղափոխվում է Վան։ Այստեղ էլ մանկահասակ Սերինեն զրկվում է մորից, մի քանի տարի անց՝ նաև հորից ու հանձնվում Արճակ գյուղում ապրող քեռու խնամքին։ Կրելով որբուհուն վիճակված դառնությունները և ունենալով Վանի Արարք Թաղամասի դպրոցից ստացած երկրորդ դասարանի գիտելիքներ միայն, Սերինեն կարողանում է ոչ միայն պահպանել իր գրաճանաչությունը, այլև օգտվելով գյուղի արական դպրոցի գրադարանից, հետզհետե ընդլայնել իր մտահորիզոնը։

Սերինեն գրել սկսել է մանկությունից։ Նրա առաջին ստեղծագործությունը, որ հայրենի բարբառով երգիծական մի պոեմ էր, Արճակում դասավանդող վանեցի ուսուցիչների միջամտությամբ, 1910 թ. լույս է տեսնում Վանի «Վան-Տոսպ» լրագրում։

1915-ի ազգային մեծ աղետի օրերին Սերինեն ևս կրում է կոտորածների սարսափը և ջարդից մազապուրծ համագյուղացիների հետ փախչում Վան, ուր ինքնապաշտպանության մարտեր էին մղվում։ Նույն թվականին էլ, Սերինեի համար անակնկալ, Բաքվի հայկական լրագրերից մեկում մի քանի թերթոնով «Արճակեցի» մակագրությամբ լույս են տեսնում Բաքվում բնակվող քեռուն Վանից ուղարկած նրա նամակները։ Դրանք մահվան սարսափ ապրած ականատեսի պատմություններ էին Արճակի եղերական դեպքերի, ինչպես և նրա բնակիչների Վան-Այգեստան տաժանելի փախուստի մասին։

1915թ. ամռանից Սերինեն հաստատվում է Բաքվում։ 1918-ին, երբ հեղափոխական Բաքուն ժամանակավորապես կտրվում է Սովետական Ռուսաստանից, Սերինեն իր ընտանիքով մեկնում է Աստրախան, որտեղից և 1920-ին տեղափոխվում է Երևան։

1920—30-ական թվականներին Սերինեն գործուն մասնակցություն է ցուցաբերում Հայաստանի գավառների հասարակական կյանքին. 1920—23 թթ. աշխատում է Դարաչիչակի (Ծաղկաձոր), Քանաքեռի և ապա Ղամարլուի (Արտաշատ) մանկատներում, որպես որբանոցի կառավարիչ, 1928—29 թթ. աշխատում է Բայազետի գավառային կոմիտեի կինբաժնում՝ հայ գեղջկուհիների անգրագիտության վերացման ուղղությամբ։

1940 թ. «Հայաստանի աշխատավորուհի» (№ 12) և «Խորհրդային գրականություն» (№ 12) ամսագրերում լույս են տեսնում առանձին հատվածներ Սերինեի «Հաղարան բլբուլ» պոեմից։ 1943-ին Սերինեն ընդունվում է Հայաստանի սովետական գրողների միության շարքերը։ 1944-ին Հայպետհրատը լույս է ընծայում «Հաղարան բլբուլ» պոեմը, իսկ մի քանի տարի անց՝ 1959թ., այն վերահրատարակվում է։

Առողջական վատ վիճակը խանգարել է Սերինեի ստեղծագործական ուժերի լիակատար դրսևորմանը և, այնուամենայնիվ, նա հանդես է եկել մամուլում («Եղեգնյա սրինգ» լեգենդը, «Հայաստանի աշխատավորուհի», 1959, № 9, Բանաստեղծություններ, «Գրական թերթ», 1946, № 19, 1947, № 16, պատմվածքներ, «Պիոներ» ամսագիր, 1954, № 4 և այլն)։

Սերինեն ունի նաև մի շարք անտիպ ստեղծագործություններ («Ուխտալեռան եղնիկ» պոեմը՝ արևմտահայության կյանքից, «Արճակի հրեղեններ» լեգենդը, «Հայոց պատմություն» և «Վանի հիմնադրում» պատմական պոեմներն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», «Խանձարուրից մինչ Ոլիմպոս» անավարտ պոեմը՝ գրված 1943 թ. զոհված Սովետական Միության հերոս Հմայակ Ղազարյանի հիշատակին և այլ գործեր)։

Առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Իմ երկրային ուղին» ծավալուն ինքնակենսագրական վեպը, որ ներկայացված է արևմտահայության ոչ հեռավոր անցյալը։ Վեպի երկրորդ գիրքը՝ «Փախստականները», նվիրված է Սովետական Հայաստանի վերակառուցման շրջանին, որը հեղինակի մահվան պատճառով անավարտ մնաց։

«Արճակ» աշխատության ստեղծմանը Սերինեն ձեռնամուխ եղավ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատողների խորհրդով։ Ժողովրդական բառ ու բանի հանդեպ ունեցած մեծագույն ակնածանքի ու հետաքրքրության շնորհիվ, տարիներ շարունակ իր մեջ ամբարած դիտելիքները նա թղթին հանձնեց վեց-յոթ ամսվա ընթացքում՝ առաջացած տարիքում։ Մինչև կյանքի վերջին օրը, 1971 թ. դեկտեմբերի 25-ը, Սերինեն երիտասարդական ավյունով ջակում, լրացնում, խմբագրում էր աշխատությունը։

Ս. Մ. ԱՎԱԳՅԱՆ
(ՍԵՐԻՆԵ)

ԱՐԾԱԿ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի ներկա պրակը ընդգրկում է մտավորական-գրող Սերինեի (Սերինե Մովսեսի Ավագյան) տարիների ընթացքում հավաքած ու շարադրած պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի բնակավայրերից մեկի՝ Արճակի ազգագրական ու բանահյուսական նյութերը։ Հիշյալ ժողովածուն պատրաստելու ընթացքում հեղինակը մշտապես ունկնդրել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի համապատասխան մասնագետներին և հիմնական ուղեցույց է ունեցել Ա. Դ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանը»։

Պատմական հանգամանքների բերումով Արճակի ազգաբնակչությունից աննշան բեկորներ են մնացել, որոնց մի մասն էլ (գերազանցապես նոր սերունդը) մոռացության է մատնել հնամենի ժողովրդական սովորույթներն ու ծեսերը, բանավոր զրույցներն ու երգերը։ Արճակի վերաբերյալ գրեթե չկան տպագիր ու անտիպ ազգագրական-բանահյուսական նյութեր։ Այդ իսկ պատճառով իր ժողովածուն պատրաստելիս Ս. Մ. Ավագյանը ապավինել է բացարձակապես իր ուժերին։ Իր շարադրանքը հեղինակը ստուգել ու մասամբ լրացրել է Երևանում և այլուր ապրող արճակցիների օգնությամբ։

Ժողովածուի բանահյուսական բաժնում ներկայացված ավանդությունները, առակները, երգիծական զրույց-անեկդոտները, երգերը, առած-ասացվածքները, օրհնանքները, երդումները, անեծքները գրի են առնված հեղինակի կողմից՝ հիշողությամբ, հարազատորեն պահպանելով տարբեր ժամանակներում տեղացի ծերերից լսած ու մտապահած նյութերի ամբողջականությունը, գաղափարական, գեղարվեստական ու լեզվական առանձնահատկությունները։ Որոշ նյութերի պատմողների ու կատարողների անունները նշված են, իսկ երբ չի նշված պատմողի ու կատարողի անունը, նշանակում է այն հեղինակի մտապահածն ու հաղորդածն է։

Ա. Մ. Ավագյանի «Արճակ» աշխատությունն ունի մի առանձնահատկություն, որով տարբերվում է այս կարգի ազգագրական-բանահյուսական մյուս հավաքածուներից։ Հիշյալ աշխատության մեջ ազգագրական ու բանահյուսական մի շարք նյութեր ներկայացված են շաղկապված ու համադրված. օրինակ՝ հարսանեկան սովորույթներն ու դրանց հետ կապված ծիսական երգերը, երկրագործական զբաղմունքն ու աշխատանքային երգերը, աշխարհագրական վայրերն ու դրանց վերաբերող ավանդությունները և այլն։ Աշխատությունն ունի նաև հավելված, ուր արված է Արճակում երգված մի քանի երգերի մեղեդիների նոտագրությունը և Արճակ գյուղի ծխերի ցուցակը՝ կազմված ողջ մնացած արճակցիների համատեղ ջանքերով։ Աշխատության վերջում զետեղված ծավալուն բառարանը ներկայացնում է բարբառային դժվար հասկանալի բառերի ու տեղական մի շարք հասկացությունների բացատրությունը։

«Արճակ» ժողովածուն վերակենդանացնում է պատմական Հայաստանի մի գավառի ազգագրական ու բանահյուսական պատկերը և օգտակար ու հարուստ ներդրում է մեր ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի ուսումնասիրության ընդհանուր գանձարանում։

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Վանից արևելք, մոտավորապես վեցժամյա հետիոտն ճանապարհ է մինչև Արճակի լիճը, որին տեղացիները Առճակը ծով էին անվանում, իսկ տեղական թուրքերը՝ Էրչեք գյոլը (Արճակի ծով)։

Լճի արևմտյան ափին, պատի նման կանգնած է Կըզըլչա կոչվող լերկ ու մշտամռայլ լեռը, արևելքից ու հյուսիսից՝ ընդարձակ, հարթ, կանաչ մարգագետիններ են։ Լիճն օղակված էր արևելքից՝ Արճակ ու Խառակոնիս, իսկ արևմուտքից՝ Կըզըլչա ու Մխկրներ հինավուրց հայկական գյուղերով։ Լիճն ընկած է լայնանիստ մի հովտի եզրին, իսկ վերջինս էլ օղակված է հյուսիսից՝ Հասփստանա սար ու Աղթաղաղ լեռներով, հարավից՝ Էրկըթներ (կամ Առճակու սար), Գնձան սար և Աղտաշա սար լեռնագագաթներով։

Աշխարհագրական այս դիրքի շնորհիվ էր, թերևս, որ ժողովուրդը հնուց ի վեր ասում էր. «Առճակ՝ մատընկի ակ»։ Արճակի լիճն անվերջ փոփոխում էր իր բռնած տարածքը և ընդլայնվում ի հաշիվ հյուսիսարևելյան հարթ մարգագետինների։ Մեծ եղեռնին նախորդող տարիներին լիճը երեսունյոթ վերստից ավելի շրջագիծ ուներ։

Լիճն են թափվում արևելքից՝ Խառակոնսա գետը, որին տեղացիք Ճոչ կեա էին անվանում և Պատիկ կամ Առճակու կետը, իսկ հարավից՝ Խնոյաճուր և Մալավու ճուր սակավաջուր գետակները։ Վերջին երեքն ամռանը վերածվում էին բարալիկ առուների։

Արճակի լճի ջուրը դառնաղի է՝ մեծ քանակությամբ բորակ (պարակ) է պարունակում, ունի մաքրող ու բուժիչ հատկություն։ Գավառի բնակչությունը լճափից բորակ էր հավաքում, որպեսզի ամռանը լողացներ անասուններին, ինչպես նաև օգտագործեր հագուստ լվանալիս և օճառ եփելիս։

Բորակ հավաքելը կատարվում էր հետևյալ կերպ։ Աշնան ամիսներին, մայրամուտին, գնում էին լճափ (օրվա այդ պահերին սկսվում էր տեղատըվությունը), քամին արագորեն չորացնում էր տղմոտ ափը և աղանման նստվածք առաջացնում։ Ավլում էին այդ աղանման նստվածքը և տուն բերում։ Մեկ օր այն փռում էին արևի տակ, ապա կլպագույն դարձած փոշին լցնում ծածկի անկյունը ու ամբողջ տարին օգտագործում։

Արճակի լճում ոչ մի տեսակ ձուկ չկար, լիճ թափվող գետակներում և կամ լճափնյա մարգագետիններում ծղծղացող բազմաթիվ աղբրակներից մեկն ու մեկում հազվադեպ նկատվում էր տառեխ։

Շրջակա անասնապահները տարին մեկ կամ երկու անգամ իրենց անասունները բերում էին լճափ, «չորի» (աղի), այն հավատով, որ «ծովային» օդը շնչելով, անասունները զերծ են մնալու դարաղ հիվանդությունից, թեև մշտական այդ «ծովային օդը» շնչող և նրա մարգագետիններում արածող Արճակի և Խառակոնիսի անասունները երբեք էլ զերծ չէին հիվանդություններից։

Ամռանը դաշտերում ու բլուրներում գայլերի երևալը հազվադեպ չէր. դրանք օրը ցերեկով ոչխարներ էին խլում հոտից։ Հայերը հրազեն պահելու իրավունք չունեին, և գայլերն աներկյուղ դիմում էին ոխի։ Աղվես ու նապաստակ էլ շատ կային։

Լեռներում բանջարի գնացած կանայք և ցախավելացու բերող տղամարդիկ հիացքով էին պատմում իրենց տեսած եղնիկների ու եղջերուների մասին։ Կային նաև արջեր։

Արճակի լճափնյա ճլճլուտներն ու եղեգնուտները, մանավանդ հյուսիս-արևմտյան եզրի, մարդու հասակի կրկնակի բարձրություն ունեցող, խիտ ճիլերով օղակված Ծւի գյոլ կոչված հսկայական ճահճուտը ամռանը անվտանգ ապաստարան էին չվող ջրային թռչունների համար։ Ամբողջ

ամառը, լճի երեսին լողում էին անհամար սագեր, բադեր, ճայեր, կիվիվներ, ձկնկուլներ և այլ թռչուններ։

Գարունը դեռ լրիվ չբացված, բարձր բարդիների կատարներին և գյուղական մի քանի հին ամբարների (աթարի կոնաձև կառուցվածք՝ մեջը ցան լցնելու համար) գլխներին գրած իրենց բները նորոգելու էին գալիս գարնան առաջին ավետաբերները՝ արագիլները և շրջապատը լցնում իրենց կտուցների կափկափումներով։ Արտերում թռչկոտում էին սերմնաղռավները, սարյակները, արտույտներն ու գեղնափորիկները, քարերի արանքներում ոստոստում էին լորերն ու կաքավները, ամենուրեք իրենց պայծառ ու երփներանգ փետուրներով փայլփլում էին ներկարարներն ու մեղվաքաղները, ծառաստաններում տարածվում էր հոպոպների կանչը, սրահների ու խորթանոցների պատերին իրենց կավաշեն բնիկներն էին ծեփում շինականների սիրելի ծիծեռնակները, օդում եռանկյունի կազմած, կռկռոցներով իրենց վերադարձն էին ավետում կռունկները, Գյաղնայի խորունկ ու երկար կիրճի ժայռակույտերում բույն էին դնում գառնուկների մեծությամբ, անձեռնմխելի սրբություն ճանաչված ծանրաթռիչ արոսները, բակերի վրայով սավառնում էին հավի ճտերին սիրահար ուրուրները։

Թռչունների բազմազանությունը ամռանն էր։ Ձմռանը մնում էին ագռավները, ճնճղուկներն ու կաքավները։ Ձմռանը որս անելը մեղք չէր համարվում։ Անասնակերի գնացող շինականները կողովներ էին շպրտում քուչուչ անող կաքավների վրա և բռնում։

ԱՐՃԱԿԻ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐՆ ՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Արճակն առաջներում եղել է զուտ հայկական գավառ՝ երեսունից ավելի գյուղերով։

Վերջին շրջանում հայկական էր մնացել միայն վեց գյուղ։

1. **Արճակ** (գավառի կենտրոն), բաղկացած 60 տնից։
2. **Խառակոնիս** (Արճակին ամենամոտիկ գյուղը), բաղկացած 200 տնից։
3. **Կըզըլջա** (լճի հակադիր ափին), 55 տուն։
4. **Մխկրներ** (նույն ափին), 60 տուն, հայտնի էր կտավատի մշակումով և ձիթավաճառությամբ։
5. **Նաբաթ**՝ 20 տուն։
6. **Պախեզիկ**՝ 16 տուն։

Այնուհետև գալիս էին այլ բնակչություն ունեցող, երբեմն հայախառն գյուղեր։

7. **Գյեղալավա**, ուր կեսից ավելին հայեր էին, մյուսները՝ ասորի։ Ընկած էր Վան տանող ճանապարհին։ Գյեղալավայի բազմաղբյուր մարգագետինը ուղևորների հանգստավայր էր։ Եթե մի ընտանիքի մասին խոսք լիներ, թե նրանց տանը բազմապիսի երթևեկներ են լինում, ասում էին՝ «Գյեղալավու չիման ի, մեյն կըլնի, տասն կիճնի»։

8. **Խնո**, զուտ ասորական հին գյուղ, ուներ իր հոգևոր հովիվը՝ կաշա (քահանա), որը 1915 թ. եղեռնի օրերին քաջաբար մարտնչում էր Արճակից Վան փախչող ինքնապաշտպան հայերի շարքերում։

9. **Աղտաշ**, քրդական գյուղ, Արճակից բաժանվում էր մի բարձր բլրով։ Սա նախկինում եղել էր զուտ հայկական գյուղ։ XVIII դարավերջին այնտեղ տեղավորվել էր մի քանի տուն քուրդ։ Եկվորները հետզհետե աճելով, սկսել էին ճնշել հայերին այնքան խստորեն, որ վերջիններս ցրվել էին։

10. **Մալավա**, սա գուցե գավառի ամենից շուտ հիմնադրված քրդական գյուղը լիներ։ Գյուղացիք պատկանում էին ոչ համիդիե աշիրաթների ցեղախմբերին և զբաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ։

11. **Քրդվան**, հիմնադրվել էր նախկինում Արճակին պատկանող հողամասում, հետզհետե ընդլայնել իր տարածությունները և առաջացել մինչև ս. Սարգիս կոչված բլուրն ու կանգ առել, տիրելով բլրի արևելյան մասին։ Բնակիչները համիդիե չէին, զբաղվում էին հողագործությամբ ու խաշնարածությամբ։ Արճակ գյուղը առավելապես Քրդվան գյուղի քրդերից էր վարձում գյուղի նորադարին (պահապան)։

Քրդվանցիներն առանձնակի հարգանք ունեին արճակցի հայերի հանդեպ, որովհետև արճակցիք հյուսներ էին ու նրանց համար սայլ ու գութան էին շինում կամ նորոգում։ Իսկ քրդերն արհեստը բարձր գնահատող ժողովուրդ են։

12. **Վերին և Ներքին Մազրա**, հիմնվել էին 1850—55 թվականներին։ Փոքրիկ գյուղեր էին ու պատկանում էին երկու քուրդ բեյերի։

13. **Ռաճմին**, փոքրիկ քրդական գյուղ էր, համեմատաբար հին, բնակչությունը զբաղվում էր ոչխարապահությամբ, հողագործությամբ և մանր ավազակությամբ։

14. **Կեճանց,** *քրդական գյուղ էր, բնակիչների զբաղմունքը՝ խաշնարածությունն էր ու երկրագործությունը։*

15. **Ազկարա,** *սա ևս, ինչպես հարեան Քըրդվան գյուղը, հիմնվել էր երբեմնի Արճակին պատկանող ամենահեռավոր հողամասերում։ Հիմնել էին Ղրիմից եկած չերքեզները և որպես չերքեզական գյուղ, գավառում միակն էր։ Չերքեզներից բացի, այստեղ ապրում էին նաև մի քանի քուրդ ընտանիք։*

16. **Մանդան,** *մինչև 1900-ական թվականները զուտ հայկական գյուղ էր եղել։ 1896 թվականին՝ 35 տուն ունեցող հայկական գյուղը 15 տարի անց 33 քրդական ընտանիք ուներ։ Մանդանում մնացած փոքրաթիվ հայերը նորածիններին մկրտում էին Արճակի կամ Խառակոնիսի եկեղեցիներում։ Ծննդյան ու Հարության տոների նախօրյակին, երկու մանդանցի գալիս ու իրենց գյուղն էին առաջնորդում Արճակի ավագ քահանային՝ հոգևոր գործերը հոգալու։*

17. **Հաշփիշատ,** *գյուղի կալվածատերը Աղաբեկ Լֆենդի անունով մի վանեցի թուրք էր։ Նա հնուց բարեկամական կապի մեջ էր Արճակի մի քանի տոհմական ընտանիքների հետ։ Ամեն աշնան, երբ Արճակի ու Խառակոնիսի ուխտավորները գնում էին Տիրամեր, առաջին օրը գիշերում էին Հաշփիշատի հայերի մոտ։*

18. **Հազարա,** *հին հայաբնակ գյուղ էր, քըրդախառն էր դարձել վերջին հարյուրամյակում։ 1915 թ. փետրվարին հազարացի հայերը, տեղյակ լինելով ռուսական բանակի ու կամավորական գնդերի նահանջին, նույն գիշերը վերցնելով իրենց անասունները, գյուղից փախան։ Քսանից ավելի ընտանիք եկավ Արճակ (ուր մնացին մինչև ապրիլ), մնացյալները՝ Վանին ավելի մոտիկ գյուղերը։ Արճակ եկած հազարացիները մինչև վերջին պահը մնացին այնտեղ ու զոհվեցին։*

19. **Հասփսատ,** *սա Արճակից ամենահեռու ընկած գյուղն էր։ Այստեղի հայերը 1915 թ. հայ կամավորական ջոկատների հետ կարողացան հեռանալ Կովկաս և փրկվել կոտորածներից։*

20. **Չարանց,** *35 տուն ունեցող հայկական գյուղ էր, ուր նաև երկու տուն քուրդ էին վերաբնակվել։*

21. **Բոզագֆյասա**[1], *հայկական գյուղ՝ քսան տուն։*

22. **Տաղվերան,** *32 տուն հայ, երկու տուն քուրդ։*

Արճակի գավառի մեջ էին մտնում նաև՝ Լիմ, Աևան, Զոպանօղլու, Կարթալան, Շամշադին, Աղջաշայ, Չախմախ, Սաթիրեկ քրդախառն գյուղերը։

ԱՐՃԱԿ ԳՅՈՒՂԸ

Արճակ գյուղը գտնվում է համանուն լճի արևելյան ափի հարթավայրում։ Գյուղի արևմտյան կողմից մինչև լիճը ծաղկուն ու բազմաղբյուր մարգագետին էր։ Մարգագետնի մի մասը՝ լճափին մոտիկ, տեղ-տեղ ճահճուտ էր, որից հետո եղեգնուտն էր՝ մինչև լիճը։ Գյուղի ու մարգագետնի արանքում կար և ավազուտ։

Դեպի արևելք ու հյուսիս-արևելք տասնյակ կիլոմետրեր տարածված էին գյուղի հարթ ու բերրի վարելահողերն ու արոտավայրերը։

Գյուղի հարավակողմի մարգագետնային հարթությունում էր գտնվում հայկական Խառակոնիս[2] *գյուղը։ Երկու գյուղերի սահմանն էր Խառակոնսա գետը, որ թափվում էր Արճակի լիճը։ Տեղացիներն այդ գետն անվանում էին* **Ճոչ կետ,** *ի տարբերություն Արճակի գետի, որը շատ սակավաջուր էր և կոչվում էր* **Պըստիկ կետ:**

Գյուղի հյուսիսակողմից, լճում եղած փոքրիկ հրվանդանից սկսելով և հետզհետե ձգվելով դեպի արևելք, Արճակ գյուղի հովտի մի մասը օղակում էին մի շարք գեղանիստ բլուրներ, որոնք գագաթ առ գագաթ բարձրանալով դեպի վեր, միաձուլվում էին Աղտաշա, Գնձան, Առճակու կամ Երկրթներ կոչվող լեռներին։

---

[1] *Այս և հաջորդ գյուղերի մասին տեղեկությունները վերցված են Ա-Դօ-ի 1921 թ. Երևանում լույս տեսած «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքից։*

[2] *Վանի նահանգում լայնորեն տարածված էր «Առճակ-Խառակոնիս՝ ակն աշխարհիս» ասացվածքը։ Այս գյուղերը լճափնյա նույն հարթության վրա էին տարածված, միմյանցից մի քանի կիլոմետր հեռու։ Արճակին ամենամոտիկ հարեան, բարգիների հարուստ ծառաստաններով օղակված Խառակոնիսը Արճակի գավառի ամենամեծ հայաբնակ գյուղն էր։ Տարազների նիստուկացի, ընտանեկան սովորույթների, նույնիսկ բարբառների տարբերություն համարյա գոյություն չուներ, եթե հաշվի չառնվի* **անճոչ** *բառի փոխարեն* **անճոշ** *ասելը, թանով սպասին* **արճակցոց պաս,** *խառակոնիսցոց* **ապուր** *ասելը։*

Բնավորության գծերում աչքառու տարբերություն կար։

Արևմուտքում, լճի հակադիր ափին էր կանգնած Կըզըլչա լեռը, իր ստորոտում ունենալով Կըզըլչա հայկական ծառտաղարդ գյուղը։ Հարավ ու հարավ-տրևելք, կողք-կողքի դծագրվում էին Ռահմին և Աղթաղաղ լեռների գագաթները։ Հիշյալ վեց լեռներն Արճակի լայնանիստ հովտի շուրջը բոլորած, նրան հմայիչ տեսք էին տալիս։

Ծառաշատ Արճակ գյուղին հմայք էր տալիս նաև արևելյան բլրալանջին ընկած Առճակու Ասպարածին կոչվող ավերակ վանքն իր հսկայածավալ ծառաստանով և հյուսիսակողմի բլրալանջում գտնվող սրբացված արհեստական ջրավազանով։ Ամբողջ գավառում ծառաղարդ էին Արճակ, Խառակոնիս և Կըզըլչա գյուղերը։

Տեղի բնակչության մեջ սերնդեսերունդ պահպանվել էր ավանդություն, որ ներկա Արճակը հինգերորդ Արճակն է, որ կառուցված է համանուն լճի ափին։ Մոտակայքում կային վայրեր, որոնք իրենց խորհրդավորություններով կամ անուններով դալիս էին հիմնավորելու ավանդությունը։ Բերենք միայն երեք վայրի նկարագիրը։

Գյուղի հարավ-արևելքում ընկած էր մի բարձրաթեք բլրալանջ, ուր տարածված էին Արճակին պատկանող անջրդի վարելահողերը՝ Ավետիսի ախպրներր։ Ավետիսի ախպրներից շրջապատը լավ երևում էր, մանավանդ լիճը։ Այդտեղ կար ընդամենը մի հորդառատ աղբյուր, բայց առկա էին բազմաթիվ խորդուբորդություններ, որտեղից սկիզբ էր առնում էրկրթներ լեռը, ուր մինչև 1915 թ. դեռ կանգուն էին երբեմնի Արճակին պատկանող ձմեռոտնոց փարախները։ Էրկըթներ լեռը արճակցիք անվանում էին «մեր սարը», իսկ քրդերը՝ «սարե Արճակե» (Արճակի սար)։ Ավետիսի ախպրները համարվում էին երբեմնի գոյություն ունեցած Արճակի տեղը։

Գյուղի արևմուտքում տարածված լճափնյա մարգագետինների որոշ տարածություն կոչվում էր Սըվեր Առճակ։ Ավեր Առճակ մարգագետնի դիմաց, լճի մեջ էր ժողովուրդը տեղադրել այն երևակայական «անխորտակ ժամը», որը «ծովն» իր տակն էր առել։

Գյուղից հեռու ընկած արևելակողմում (ուր Արճակը սահմանազատվում էր Քրդվան քրդական գյուղից) կար մի մեծ բլուր։ Բլուրը կոչվում էր Սըփ Սարկյիս (Սուրբ Սարգիս)։ Բլրի մի երեսն անջրդի վարելահողերով պատկանում էր Արճակին, մյուս երեսը՝ Քրդվանին։ Բլրի գագաթին կային հնօրյա վանքի, թե ընդդի ավերակների մնացորդները։ Բլրի շրջակայքից, վար անելիս, մի քանի անգամ հայտնաբերվել էին պղնձե ամաններ, խեցեղեն ամանների բեկորներ, ինչպես նաև ջրի կավե խողովակներ։ Սրանք մարդկային բնակավայրի ապացույցներ էին։ Ահա այս Ս. Սարգսի տեղն էլ ավանդաբար համարվում էր Արճակի երբեմնի տեղը։ Ս. Սարգիսը սրբացված էր նաև քրդերի կողմից։

Հնարավոր է, որ Արճակի լճի շուրջը հյուսված ավանդությունները լինեն Վահագնի ու Աստղիկի պաշտամունքի հետ առնչվող արձագանքներ, դուցե ժամանակին նաև մեհյան է եղել լճափին։

Դրա նյութական ապացույցը պետք է համարել այն, որ լճափին շատ մոտիկ մի բլրակ կար, գագաթին՝ դեմ առ դեմ կանգնեցրած չորս անտաշ, սև սալաքար։ Չորս պաս ներկայացնող հիշյալ քարերին, որպես ծածկ, հովանի էր անում մի այլ սովորական, սև սալաքար։ Դա ուխտատեղի էր։ Անխաչ այդ սրբավայրը կոչվում էր Թուխ Մանուկ։

Համաշխարհային առաջին պատերազմից առաջ Տիրան և Պողոս Կաղիկյան եղբայրները Թուխ Մանուկի մոտ գտնվող իրենց հողամասում

(Նությունից լավ ծայնով օժտված խառակոնիսցին միաժամանակ քնարական հողու տեր էր։ Լինելով վերին աստիճանի երգասեր, նա իր աստվածատուր շնորհքը ցուցադրում էր ամենուր։ Ավելի շատ տեղ հատկացնելով ժողովրդական սիրային երգերին, երգելիս ասես ձուլվում էր մեղեդուն։ Արճակցին ավելի հարգանք էր տածում նորաղույն ազատագրական երգերի հանդեպ։

Խառակոնիսցին, որքան էլ տնտեսական նեղ պայմաններում գտնվեր, իր շեմքը ոտք դնող հյուրին ընդունում էր գրկաբաց, ցուցաբերելով չափից ավելի սրտաբացություն, մտահոգված, որ հյուրը չնկատի իր անտեսական աննախանձելի վիճակը։ Այդպիսին չէր բանուկ ճամփարաժանում ընկած, ժամանակ ու անժամանակ փափագելի, թե անցանկալի գնացող-եկողից աչք չրացող արճակցին։ Վերջինս, որքան էլ որ կարոտայլ ու սպասված հյուր ունենար, մի քանի խոսքով էր հայտնում իր ուրախությունը։ Լի սեղանին նստեցնելով հյուրին, արճակցին ամենևին չէր մտահոգվում սքողելու անտեսության մեջ եղած պակասները։

Ինչպես խնամիական ու դրան հետևող ազգակցական կապերը չէին ջնջում արճակցու հոգուց գյուղի ու քաղաքի տարբերության հասկացողությունը, այնպես էլ, և դեռ կրկնապատիկ, այդ երկու գյուղերի ոչ միայն մոտիկ հարևան, այլև մեծ մասամբ հարազատ ազգականներ հանդիսացող գյուղացոց հոգիներում՝ արճակցի, խառակոնիսցի հասկացողությունները։ Քեռի ու քրոջ ղավակ, աներ ու փեսա, մորաքույր ու քրոջ աղջիկ, բոլորը աղոտանում էին արճակցի ու խառակոնիսցի անունների մեջ։ Խառակոնիսցին արճակցուն պիտակավորում էր՝ «րեմարիֆաթ», «րոուք խոկյի», «քյար սիրտ» և այլ ածականներով։ Արճակցին էլ իր հերթին խառակոնիսցուն կպցնում էր «պոպիկ պող», «աղքյատ-խպառտ» և այլ պիտակներ։ Եվ այս ամենը քաղցր ու սիրով էին դրուցում առանց վիրավորելու մտադրության։

նոր բնակարան հիմնելու ժամանակ, Թուխ Մանուկի ուռի ներքևից ագյուսներ պատրաստելու համար հող վերցնելիս, սրբատաշ քարերից շարված շինության մի ամբողջական պատ հայտնաբերեցին։ Պատի վրա խաչի ոչ մի նշան չերևաց։

Ըստ գյուղի ծերերի ու նրանց լսած ավանդությունների, Արճակը եղել է Արշակունիների ամառանոց։

Իրականությունն այն էր, որ Արճակը և շրջապատի գյուղերը զուտ հայկական բնակավայրեր են եղել՝ իրենց ընդարձակ վարելահողերով։ 1800-ական թվականներից էր, որ Արճակին պատկանող հողամասերում հիմնվել էին Քրդվան քրդական և Ազկարա չեքեզական գյուղերը։

Իմ ապրած Արճակը բազմամարդ էր՝ զուտ հայկական. գավառի կենտրոնն էր և հարուստ ու առաջավոր գյուղի համբավ ուներ։

Գյուղի արևելակողմից սկսվող մի աննշան ձորակ գյուղը բաժանում էր երկու մասի։ Աջակողմյան, ավելի ընդարձակ ու խիտ բնակեցված թաղամասը կոչվում էր Փոս թաղ, իսկ ձախակողմյանը՝ Քյոզարի թաղ: Փոս թաղի կողմի վրա էր ընկնում «Խին խաչեր» կոչված, հայկական անտաշ տապանաքարերով Արճակի հին գերեզմանատունը և Վանից (վանքի) տունը պատկանող ջրաղացը։ Փոս թաղի միջով էին անցնում «Խառակոնսա ջաղդա» (Խառակոնսի լայնուղի) կոչվող ճանապարհը, որը Խառակոնիսը միացնում էր Արճակին, ինչպես և Վան տանող ուղին։ Փոս թաղում էր գտնվում այն աննշան սրբատեղին, ուր, ըստ ավանդության, Նահապետ Քուչակը պատանի հասակում երգելու ներշնչանք էր ստացել։ Հիշյալ սրբատեղին կից «Պաղում խաչեր» կոչված վայրում թաղված էին 1896 թ. հունիսի իննի հայկական ջարդերին նահատակված արճակցիները։



Արճակ գյուղի հատակագիծ

1. Քողքի ճամբախ (Վան տանող ճանապարհը), 2. Խառակոնսա ջաղդա (լայնուղի), 3. Աչմու ճամբախ (Պարսկաստան տանող ճանապարհը), 4. Ճող կյետ (գետ), 5. Պրղաիկ կյետ, 6. Հին խաչեր (հին գերեզմանոց), 7. Վանից տուն, 8. Յոանգյուլի Տեր-Կարապետի կալվե, 9. Պապոր գյուքան, 10. Պաղում խաչեր, 11. Տեր-Կազարի տուն, 12. Կարմիր ավետրանի մառան, 13. Ավեդի Եղոյի տուն, 14. Ճեմոյի ճաղաց, 15. Մուքայելի տուն. 16. Կալատեղ, 17. Գյոլ՝ Մուքայելի ճաղացի հետ, 18. Շորեր (աղուտներ), 19. Ախպուր, 20. Ավզընոց. 21. Խսան տուն, 22. Մյուդուրլըք, 23. Խաժոյի տուն, 24. Թուխ մանուկ, 25. Կալատեղ, 26. Թալիսի գյուքան, 27. Սայրաղի կալվեն, 28. Պիպճի կալվեն, 29. Ոստիկանատուն, 30. Փոստհեռագրատուն, 31. Նախրակյնա, 32. Սուրբ Գեորգ եկեղեցի, 33. Վարժատուն, 34. Պաղում խաչեր, 35. Մոլոյի հին տուն 36. Կերեզմնոց (Նոր)։



Մոլոյի հին տան հատակագիծը

1. Սրահ, 2. Տան սրահ, 3. Թոնրատուն՝ քառասյուն, մեջտեղում թոնիրը, 4. Պիտոյի մառան, 5. Կյուրուկրու մառան (անվանակիր մառան՝ ամուսնացած երիտասարդի ննջասենյակ), 6. Հացի մառան, 7. Փայխի սրահ, 8. Գյուռ (քարե փորվածք, ուր լցվում էր ջրհորից քաշած ջուրը՝ անասուններին ջրելու համար), 9. Ծըրխոր, 10. Ջոլ (փայխի սրահի բարձրադիր սալարկված հատված, ուր լողացնում էին անասուններին. այստեղից ջուրը դուրս էր հոսում ծածկով), 11. Կյոմչներաց լար, 12. Էքյերաց (գոմշակովերի) լար, 13. Կովերաց լար, 14. Ծիերաց լար, 15. Եզներաց լար, 16. Դանա-դոլումերաց (մինչև երեք տարեկան խոշոր եղջերավոր անասունների) լար, 17. Փայխի հոդա (գիվանխանա), 18. Բուխարիկ (բուխարի), 19. Ծրրխոր, 20. Գոմ, 21. Հոդա, 22. Ամբրոցներ, 23. Բախչա, 24. Քարե պատ, 25. Առվակ։

Երկու թաղերի կենտրոնումն էր եկեղեցին ու նրա դիմացի լայնատարած «Նախրակյնեն», ուր անհիշելի ժամանակներից հավաքվում էր Արճակի նախիրը։ Այդտեղ էին իրենց շնորհքը ցուցադրում Սըփ Կարապետ (սուրբ Կարապետի) լարախաղացները։ Այդտեղ էին իջնում Գյավառ քրդական գյուղի քրդերը, որոնք մի ամսով Արճակ էին գալիս հունձ անելու։

Քյողարի թաղը փոքր էր, բնակչությունը՝ նոսր, սակայն այդտեղ եռուզեռը շատ էր։ Քյողարի թաղումն էին գտնվում գավառապետարանը, ոստիկանատունը, հեռագրատունը, թեյարանը ու այլևայլ հիմնարկներ։ Նահանգի կենտրոն Վան քաղաքը և Պարսկաստանի սահմանագլխին եղած Սարա կայմակամանիստ փոքրիկ քաղաքն իրար միացնող բանուկ ճանապարհով երթևեկող ամեն տեսակի ուղևորներ, որոնք գիշերելու էին Արճակում, կերադասում էին լինել Քյողարի թաղում։ Իսկ այդ ուղևորները բազմաթիվ էին ու բազմապիսի։ Տեղից անց փոխադրվող զորամասեր, դեսպանությունների հետ առնչվող ժամբերկրացիներ, պարսկական առևտրական քարավաններ՝ ուղտերի շարաններով, քուրդ համիդիե ասկյարներ, ինչպես նաև առևտրականներ ու արհեստավորներ։

Ամենօրյա այս շփումները Քյողարի թաղեցոց մեջ զարգացրել էին նորի ընկալման, քաղաքավարի նիստուկացի, կիրթ վարմունքի ու ինքնագնահատման զգացողություն և վայելուչ արտաքին պահպանելու ձգտում։

Քյողարի թաղեցոց նմանօրինակ «քաղքցութենը» ահաճություն էր պատճառում փոսթաղեցոց, որոնք իրենց նիստուկացում պահպանում էին նահապետական պարզություն։

Դպրոցը գտնվում էր գյուղից դուրս և ոչ մի թաղի կողմի վրա չէր ընկնում, այնուամենայնիվ, դպրոցում պաշտոնավարող ուսուցիչները ես նախընտրում էին ապրել Քյողարի թաղում։

Ինչքան էլ արճակցոց մեջ գոյություն ունենար թաղային տարբերություն, միևնույն էր, արյունակցական, խնամիական, հարևանական, աշխատանքային հազար ու մի թելերով նրանք հյուսված էին միմյանց։ Որքան էլ փոս-թաղեցինք քյողարի-թաղեցոց համարեին «պոչով-պոզով», իսկ քյողարի-թաղեցիք նրանց անվանեին «վայրենի», ընդհանուր առմամբ միևնույն հատկանիշների տեր մարդիկ էին՝ թե՛ պատվախնդրությամբ, թե՛ աղկասիրությամբ, թե՛ հյուրընկալությամբ և թե՛ անխարդախությամբ։ Տարբերությունն այն էր, որ փոսթաղեցիք միմյանց հանդեպ ցուցաբերելով սեր և մտերմություն, կիրթ չէին, կատակների մեջ նույնիսկ հայհոյանքներ էին գործածում, մի բան, որ քյողարի-թաղեցոց մեջ ընդունված չէր։ Նրանց հարսները, թեկուզ և լինեին քաղաքից բերված աղջիկներ, շատ շուտ աղատ ել ու մուտ էին անում հարևանների տները։ Կանայք և աղջիկները ավելի շատ էին մասնակցում դաշտային աշխատանքներին։

Այս ամենը նկատելի էր Արճակի ներսում, իսկ դրսում, ուրիշ գավառների բնակիչների աչքում Արճակը Արճակ էր, արճակցին՝ արճակցի՝ քաղքցուն բարեմրար, ղանգի (հարուստ), քիրար (հպարտ)։ Դրանք, այդ ուրիշները, արճակցոց նման որակում էին տալիս. «Դոր էլ էրթաս, խացդ ի խերիք, Առճակն էրթաս՝ կալին շիրիկ» (Ուր էլ գնաս, հացդ բավարար է, Արճակ գնաս, նրա կալի հասույթին իրավահավասար ես)։

Արճակ գյուղը բաղկացած էր 160 անից, բոլորը հայեր, բացառյալ վանեցի մի թուրք ծերուկից և իր կնոջից։

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐ

Արճակ գյուղը, որ անցյալ դարավերջին տակավին կոչվում էր շեն Արճակ, յուրովի է մասնակցել 1890-ական թվականների սկզբների ազգային-ազատագրական շարժումներին։ Այդ շարժումների կազմակերպիչներն ու գաղափարախոսները մեծ մասամբ կովկասահայեր էին, որոնք Վան հասնելու և այնտեղից իրենց գործունեությունը ծավալելու համար, բացի Թավրիզ-Բաշկալա ուղուց, ունեին ես երկու ճանապարհ։ Մեկն անցնում էր ռուս-թուրքական սահմանագլխային Օրգով պահակակետով, Բայազետի գավառի մի շարք ավարառու քրդական գյուղերով, ապա Վանի նահանգի քրդաշատ բնակավայրեր ունեցող Արաղայի ղաշտով, Բերկրի մյուդիրանիստ ավանով, այնուհետև Թիմարի գավառով ու նոր միայն Վան հասնում։ Այս ուղին խիստ վտանգավոր էր։

Վան տանող երկրորդ ուղին սկսվում էր Սալմաստից. պարսկա-թուրքական սահմանագլխային կայմակամանիստ Սարա փոքրիկ քաղաքից հետո, անցնում մի շարք քրդական գյուղերով, ապա Արճակով և գավառի հարավի հայաշատ գյուղերով մտնում Վան։ Վերջինս ավելի անվտանգ էր, քանի որ հիշյալ ճանապարհով էին

ընթանում պարսից առևտրական քարավանները, որոնցում ծպտվելով, հայ ֆիդայինները կարողանում էին անցկացնել անհրաժեշտ գրականություն և զենք։

Արճակի երկու ուսուցիչներ՝ Մովսես Զաքարյանը (Պողանց գյուղացի) ու Մարգար Հյուսյանը (ընիկ արճակցի) գրագետ ու վստահելի երիտասարդներից կազմել էին մի խումբ, որը գիշերով գյուղից դուրս էր տանում ու Վան հասցնում ընդհատակյա աշխատող «կովկասահայ կաշախնեբին» ու նրանց «ապրանքը»։ 1890-ական թվականների կոտորածների նախօրյակին՝ Արճակում դրությունը սրվում է։ Համիդիեական քրդերի հարձակումները հայկական գյուղերի վրա, իշխանությունների թողտվության պատճառով, հաճախակի են դառնում։

1895 թ. նոյեմբերի մեկին Արճակ է գալիս կարա-ասկյարների մի հարյուրակ։ Մյուդուրը գյուղի տվագանիներին հայտնում է, որ այդ զորամասը պիտի Արճակում մնա՝ ապագա թալանումներից գյուղը պաշտպանելու համար, ուստի օրը մի ջվալ ալյուր և շարաթական մի մսացու անասուն պետք է տրվի զորքին՝ որպես հավելյալ սնունդ։ Նույն օրն էլ դպրոցը վեր է ածվում զորանոցի, իսկ հակադիր մասում, Հարապի կողմից կառուցված երկհարկանի մի տուն՝ դիտանոցի։

Մինչև 1896 թ. հունիսի 3-ը, այսինքն՝ Վան քաղաքի հայության ջարդի օրը, Արճակը թեև ծանր լծի տակ, խիստ հսկողության ներքո, այնուամենայնիվ, իր առօրյա աշխատանքին էր լծված։ Հունիսի 3-ից մինչև 7-ը բնակչությունը գյուղից դուրս գալու իրավունքից զրկվում է։ Փոս թաղում մնալը դառնում է երկյուղալի, որովհետև ավարառու քրդեր են ելումուտ անում։ Ժողովուրդը հավաքվում է Քյոզարի թաղը, ուր զորապետն ու վարչական կազմն էր։

Հունիսի ութի լուսաբացին, գյուղի հարավային և արևելյան կողմերի բլուրներում հայտնվում են Վանի կոտորածից վերադարձող տասը քուրդ համիդիե ցեղապետներ՝ իրենց ասկյարներով, իսկ Սարայի կողմից էլ գալիս է Սարայի կայմակամը՝ մի հարյուրակ սուարի (հեծյալ) զորքով։

Հունիսի ութի երեկոյան, համիդիե ցեղապետները պատգամավորություն են ուղարկում, Արճակի վարչությանը հայտնում, որ «իրենք եկել են սուլթանից իրենց վստահված սուրբ գործը կատարելու» և սպասում են իշխանությունների հեռանալուն։ Նրանք կայմակամի ու մյուդուրի առաջն են գնում հարյուր հիսուն օսմանյան լիրա, որպես արվելիք թալանի փոխհատուցում։ Մյուդուրը պահանջում է նաև Խառակոնիս գյուղի «գինը», քրդերը ավելացնում են ևս հիսուն ոսկի։ Այս գործարքի բոթը (որ հաղորդում է Արճակի դպիրը) կայծակի արագությամբ տարածվում է։ Խառակոնիսցիները, որ գտնվում էին զորքի հսկողությունից ազատ և համիդիե զորամասերի օղակումից դուրս, կարողանում են մի կերպ կոտորածից ազատվել, ապավինելով քրդական ոչ համիդիե մեծ և փոքր Մաղրա գյուղերի բեյերի պաշտպանությանը, մի քանի ժամվա մեջ դառնալով ընչազուրկ։

Այլ է լինում Արճակի ճակատագիրը։

Հունիսի իննի լուսաբացին թուրքական վարչակազմն ու զորքերը հեռանում են գյուղից, ուղղություն վերցնելով դեպի Վան։ Արճակցիները հետևում են նրանց։ Անակյան ռսաիկանները և ու պինվորները հրացանի խղակոթերով հարված հասցնելով մեծին ու փոքրին, արգելում են գյուղից դուրս գալ։ Համիդիեները խիտ օղակով մտնում են գյուղին։ Ահաբեկված, անպաշտպան գյուղացիների մի մասը սահպված ապաստանում է եկեղեցում, դուռը ներսից փակելով։ Մնացյալները թաքնվում են տներում, ծառաստաններում, շատերն էլ հնարավորություն չեն ունենում թաքնըվելու։ Համիդիեները անմիջապես ջարդում են եկեղեցու դուռը և բոլորին դուրս քշում։ Մինչ նրանք զբաղված էին տղամարդկանց կոտորելով, կողոպտըված կանանց, աղջիկների կիսամերկ ու սարսափահար որոշ խմբեր, ահից կարկամած մանուկներին շալակած, փախչում են եղեգնուտների կողմը և ուղղություն վերցնում դեպի Վան։ Իսկ քրդերը, իրենց հետ առնելով խլված անասուններին ու հարյուր ութսուն ջահել կանանց ու աղջիկների, շարժվում են դեպի Արաղայի դաշտ։ Վան փախչողների մեջ ոչ մի տղամարդ չկար։ Հասնելով Վան, կանայք ապաստանում են ամերիկյան միսիոներական ընկերության ընդարձակ բակերում, իսկ գերի վերցրած 180 կանայք հետագա ճակատագիրն են ունենում։ Նրանց քշում են Պարսկաստան վաճառելու նպատակով։ Այն պահին, երբ գերիներն ու գերեվարողները գտնվում էին Բերկրի գավառի Արաղայի դաշտի Խաչան գյուղի սահմանում, պատահականորեն այդտեղով անցնում է Արաղայի գյուղերից մեկում ապրող, դեղձուկի ասրաղով մի հայ քահանա։ Իրազեկ լինելով դրությանը, քահանան շտապում է Խաչան, մտնում Հսեն բեյի ապարանքը և հանդիպում բեյի մորը՝ այրի իշխանուհուն, աղոթքից առաջ ջրամանը ձեռքին լվացվելու գնալիս։ Քահանան աղերսում է, որ իշխանուհին, հանուն ամենասահեղծ արարչի, փրկի գերուհիներին։ Այրին խոստանում է օգնել հայ կանանց,

քանի որ քահանան նրան դիմել էր աղոթքի պահին։ Բեյի մայրը կանչել է տալիս խնջույքի նստած որդուն և անեծքի սպառնալիքով ստիպում նրան գերեվարողներից խլել հայուհիներին։ Բեյը կատարում է մոր պահանջը, և գերիները մնում են Խաչանում, օթևան գտնելով տեղի հայ ընտանիքներում։

Կոտորածից ճողոպրած ու ցորենի արտերում թաքնված շուրջ հարյուր քսան տղամարդիկ, մարդասպանների հեռանալուց հետո, ուսուցիչ Մարգարի գլխավորությամբ, փախչում են ոչ շատ հեռու ընկած քրդական Վերին ու Ներքին Մաղրա գյուղերի բեյերի մոտ, որոնք ոչ համիդիե էին և խնդրում են իրենց հովանավորել։ Ներքին Մաղրայի բեյն ընդունում է նրանց, սակայն պատվիրում է, որ Մաղրայից դուրս չգան, որպեսզի առայժմ շրջակա վայրերի քրդերը չիմանան, թե իրենք այդքան մեծաթիվ հայերի են ապաստանել։

1896 թ. հունիսի 30-ին, Մաղրա է ժամանում երեսուն սուարի (հեծյալ), իր հետ բերելով Վանի վալի-փաշայի հրամանը, այն է՝ անհապաղ ետ ուղարկել Արճակում պատահած դեպքերի ժամանակ մահմեդականների տները ապաստանած բոլոր հայերին[1]։

Սուարիները արճակցի տղամարդկանց բերում հասցնում են, 22 օր անմարդաբնակ մնացած, Արճակ ու իրենք շտապում Արաղայի Խաչան գյուղը՝ այնտեղից ետ բերելու երիտասարդ կանանց ու աղջիկներին։ Տուն են դառնում նաև հեռավոր քրդական գյուղեր տարված ու բռնի մահմեդականացված տասից տասնհինգ տարեկան արճակցի մի քանի պատանի։

Արճակցիները Վանի արհեստավորներից պարտքով գործիքներ են գնում, թուրք անասնատերերից «մարարայի» պարտավորություններով լծկան ստանում, հավաքում են հացահատիկի իրենց բերքն ու նույն աշնանն էլ, հարյուրից ավելի տղամարդ (որից ութը՝ ընտանիքով) մեկնում է Կովկաս՝ դրամ վաստակելու։

Կոտորածներից հետո Արճակ գյուղն առժամանակ դադարում է ազատագրական շարժումներին մասնակցելուց։

1908 թ. սկզբներին Արճակում կատարվեցին մի շարք խուզարկություններ ու բռնություններ։ Վանում՝ Դհերցի Դավոն իր դավաճանական մատնության ժամանակ նշել էր նաև Արճակի անունը։ Բայց իշխանությունները, չնայած գործադրած ճնշումների ու առանձին մարդկանց խոշտանգումների, Արճակում թաքցված զենք չհայտնաբերեցին։ Մեկ ամիս անց, Դավոյի օրինակով, անձնական մանր վրեժխնդրությունից դրդված, մատնություն կատարեց նաև Արճակում խանութ պահող վանեցի Գևորգի երիտասարդ որդին՝ Պապոր Արամը, հայտնելով այն արճակցիների անունները, որոնց մոտ զենք կար թաքցված։ Հետևեցին նոր բռնություններ ու խոշտանգումներ, որոնց միջոցով, այս անգամ արդեն, իշխանություններին հաջողվեց հավաքել 40 հրացան ու փամփուշտներ։

1908 թվականի սահմանադրությունից հետո արճակցիները նորից մտան ազատագրական նորաձև պայքարի ոլորտը, սակայն ոչ նախկին ոգևորությամբ։ Հետագա 5-6 տարիներին գնեցին մի քանի տասնյակ զենք, փամփուշտ, սակայն այն համոզմամբ, որ դրանք ոչ մի բանի էլ պետք չեն։

1914թ., երբ պայթեց համաշխարհային առաջին պատերազմը, արճակցիք ունեին երեսունից ավելի հրացան, տասն ատրճանակ, որից հինգը՝ մաուզեր։ Թուրքիան պատերազմի մեջ մտնելուց հետո Արճակում ստեղծվեց այնպիսի դրություն, որ անհնար էր ազատագրական ամենաթույլ շարժում իսկ ծավալել։

1914 թ. ամառը շատ բերքառատ եղավ։ Ծերերը նման առատությունը համարում էին «գլխակեր»։ Գուշակությունը կատարվեց։ Հայտարարվեց ռազմական դրություն։ Օգոստոսին գյուղում եղավ ընդհանուր զորակոչ։ Ոստիկանների հսկողությամբ Վան տարվեցին գրեթե բոլոր տղամարդիկ։ Հայպճեպորեն դպրոցն ու Կոոյան ընտանիքի ութ սենյականոց նորակառույց տունը վերածվեցին զորանոցի, եկեղեցու ձիթհանը վերածվեց զինվորական փռի, գյուղը լցվեց երթևեկ զորամասերով։ Արճակից զորակոչվածներին տեղավորել էին Վանի բերդի մոտակայքում գտնվող զորանոցներում, այնուհետև բաժանել տարբեր զորամասերի վրա և տարբեր ճանապարհով ուղարկել այլևայլ վայրեր։ Հավաքակայանում մնացածների նկատմամբ խիստ հսկողություն չկար, սակայն զինվորական հրաման էր արձակվել՝ դասալիքներին ապաստան տվողների տները վառել, առանց խտրության։ Արճակցիներից ոմանց հաջողվել էր հավաքակայանից դուրս ճողոպրել, նախքան ընդհանուր հաշվառման ենթարկվելը։ Նրանցից մի քանիսը թաքնվել էին Վանում, մյուսները գյուղ վերադարձան և սկսեցին զբաղվել իրենց առանձին հոգ-

---

[1] Ուսուցիչներ Մարգարն ու Մովսեսը, որ գաղտագողի Մաղրայից Վան էին անցել, ֆրանսիացի միսիոներների աջակցությամբ կարողացել էին Վանի վալիից հրաման ստանալ՝ Արճակի փախստականներին գյուղ վերադարձնելու մասին։

սելով, իսկ հավաքակայանից զինվոր ուղարկված մոտ քառասուն տղամարդուց հետագայում հայտնվեցին միայն երեքը, որոնք Սարայի ստերքում զինաթափված ու սպանված հայերի դիակների տակ էին թաքնված եղել։

Արճակի վարչական, այսպես ասած, մյուլքյա (երկրային, հողային) կազմը այդ օրերին գտնվում էր կրավորական գերում։ Հիշյալ պաշտոնյաները իրենց ընտանիքները գյուղից հեռացրել էին և իրենք երկու-երեք հոգով զբաղեցնում էին մի սենյակ։ Այնպես որ, վարչական կազմի կողմից զբաղեցրած սենյակները ևս, այլևայլ տների հարմարավետ համարվող սենյակների հետ բարձրաստիճան զինվորականների տրամադրության տակ էին։ Մի տուն վերածվել էր զինվորական ճաշարանի, մի այլ տուն՝ ցորենի պահեստի։ Եվ այսպես, Արճակն ավելի շուտ նման էր զորանոցի, քան գավառի վարչական կենտրոնի։

1914—15 թթ. ձմեռը եղավ բացառիկ մեղմ, այնքան, որ գյուղամիջի երկու ջրաղացները (Վանից տան ու Տեր Կարապետի) ոչ մի օր չսառեցին։ Հիշյալ ջրաղացներում աղում էին զինվորականների համար պահանջվող հացահատիկը, սակայն զինվորական միակ փուռը սպասվող հացը չէր հասցնում թխել, ուստի բնակչության վրա էին բաժանում պարկերով ալյուրը՝ հացը թոնիրներում թխելու համար։ Ալյուրին, խմորին ու թխած հացին հսկելու էին գալիս երկու կամ երեք զինվոր։

Ակսվեցին լուրեր պտտվել, թե ռուսական բանակը մոտենում է։ Մի առավոտ զինաթափ արեցին զորամասերում գտնվող հայ զինվորներին, որոնց թիվը երկու հարյուրի էր հասնում։ Նրանք ամալյա-ասկյար կոչումով տարվեցին Սարա, այսինքն՝ ռազմաճակատ, իսկ գյուղացիներից տասներկու հոգու, որ ոստիկան էին նշանակված, տվել էին հրացան, բայց՝ ո՛չ փամփուշտ, ո՛չ էլ հանդերձանք։

Փետրվար ամսին գավառի հայ-քրդախառն Հաղարա գյուղի հայերը, որ մոտ քառասուն տուն էին, գիշերով, խուճապահար Արճակ լցվեցին։ Պատճառը հետևյալն էր։ Ռուսական բանակը, որ առանց մեծ դժվարության հասել էր սահմանամերձ հայ-քրդախառն Հասփասան գյուղը, նահանջի հրաման ստանալով, անմիջապես ետ էր դարձել՝ իր հետ տանելով նաև տեղի հայերին։ Դեռևս ռուսական բանակի առաջանալու օրերին հաղարացի քրդերն ու հայերը երդվել էին, որ ինչ էլ պատահի, միշտ կանգնած մնան իրար թիկունքի։ Իրենց խոստմանը հաստատ մնալով, քրդերը հայերին հասկացրել էին՝ դիմել շուտափույթ փախուստի, քանի դեռ վրա չէին հասել ուրիշ տեղերի քրդերն ու ասկյարները։ Հաղարացի քրդերն իրենց երդումը պահել էին այնքանով, որ չիմանալու էին տվել համագյուղացիների Արճակ փախչելը՝ այն էլ անասուններով։ Հաղարացի հայերը պատսպարվեցին արճակցիների տներում։

Գյուղից Սարա տանող ուղին արդեն արյունալի էր, իսկ դեպի Վան տանողը՝ վտանգավոր ու դժվարանցանելի։ Ուստի Վան գնացողները ճանապարհ էին ընկնում գիշերով և այն էլ ոչ բանուկ ճանապարհով։

Զորաշարժերը օր-օրի դառնում էին հաճախակի, իսկ զինվորները՝ անզուսպ։ Գյուղ հասնելուն պես, գիշերվա որ ժամն էլ լիներ, պատահած դուռը կատաղորեն ծեծում էին և մի փոքր ուշ բացվելու դեպքում՝ ազգ, կրոն հայհոյում։ Ներս մտնելուն պես պահանջում էին թոնիրը վառել ու տաք կերակուր պատրաստել։

Մարտն էլ անցավ։ Գյուղում տարածված մանկական կարմրուկ հիվանդությունը մոլեգնում էր։ Խիստ տխուր, անշուք անցավ նաև Մեծ զատիկը։ Դաշտերը լրիվ սևացել էին, ու անասուններին դուրս բերին արոտ։ Ոմանք, սովորականի նման, վիծկիներով վարեցին դռան արտերը՝ ոսպ ցանելու համար։ Ապրիլի վեցին, թե յոթին Արճակի առօրյան խախտվեց։ Ծագումով ալբանացի մեր մյուդուրը ռեսից երդում առնելով, գաղտնաբար հայտնել էր, որ այդ օրը, երեկոյան, Արճակ է մտնելու Սարայի կայմակամը, իսկ հաջորդ օրը, առավոտյան, կատարվելու է բանակից խուսափած երիտասարդների շուրջկալ և խորհուրդ էր տվել, որ երիտասարդները մի երկու օրով գյուղից հեռանան և ապա թե՝ «կայմակամը գալու է իր հատուկ զորամասով, նրա զինվորները անզուսպ են, կարող է պատահել նույնիսկ երիտասարդ կանանց պատվին կպչեն, թող այդ մասին էլ մտածեն»։

Լուր ստացվեց նաև, որ Վանում դրությունը խիստ լարված է։ Ջևդեթ փաշայի կարգադրությամբ Շատախ մեկնած Իշխանն ու իր թիկնապահները, նույն փաշայից հղված զինվորների ձեռքով սրախողխող են արված։ Վռամյանը ձերբակալված է, Արամը մի կերպ խուսափել է ձերբակալվելուց։ Բերդի ու Թոփրաք կալեի թնդանոթների փողերն ուղղված են քաղաքամիջի ու Այգեստանի հայկական թաղերին։ Վանից դուրս գնացող բանուկ ճանապարհները բռնված են։ Պետք է լինել խիստ զգուշավոր, որպեսզի միաժամանակ ևս երկարի խաղաղությունը։

Հապաղում չեղավ։ Զինվորական տարիքի երիտասարդներն անմիջապես Փոս թաղի տների

արանքով, առանձին-առանձին, վերցրած մինչ այդ խուրը թաքցրած զենքերը, գյուղից դուրս գալով, ուղղվեցին լճափ՝ եղեգնուտներում թաքնվելու, իսկ ռեսներն ու գզիրները զբաղվեցին կայմակամին ու նրա զորամասին դիմավորելու պատրաստությամբ։

Սպասվող Սարայի կայմակամի փոխարեն, մայրամուտին, գյուղ մտավ մոտ երեք հարյուր քուրդ։ Սովորական դարձած, ոչ այնքան էլ պահանջկոտ համալրված այդ խմբավորումը հրաժարվեց երթևեկ զինվորների համար նախատեսված օթևանից ու տեղավորվեց տարբեր տների ախոռների հողանքերում։

Գիշերն անցավ տագնապների մեջ, լսվում էին անկանոն կրակոցներ, իսկ առավոտը բացվեց խաղաղությամբ։ Երկու զորանոցների կայուն կոչվող զորամասերի սակավաթիվ ասկյարները հեռացել էին. հապճեպ հեռացել էին և նախորդ օրը ժամանած քրդերը։ Ամեն ինչ այնքան խաղաղ էր, որ գյուղը լծվեց իր առօրյային։ Տանու մանկահասակ հոտաղները լճափնյա մարգագետինը քշեցին անասուններն ու ոչխարները։ Կանայք վառեցին թոնիրները։ Սակայն երկյուղը պատել էր մարդկանց։ Տղամարդկանցից ոմանք լծեցին վիծկինները՝ նախորդ օրվա կիսատ թողած ոսպի ցանքն ավարտելու։ Նախորդ օրվանից գյուղին հայտնի էր, որ մյուդուրը ոստիկաններ է ուղարկել Խառակոնիս՝ մարդ բռնելու։ Այժմ էլ բերնեբերան անցավ, որ կայմակամից խուսափելու համար, ռես Սեդրակ Դիլոյանն էլ է Խառակոնիս փախել ու հետն էլ տարել իր մանկահասակ դստերը։ Փոս թաղում կատարված այդ դեպքը սնունդ տվեց մյուս մայրերին ու սկեսուրներին՝ հետևել հիշյալ օրինակին։ Կես ժամում Փոս թաղի երիտասարդ կանանց ու աղջիկների մեծամասնությունը, հեանները վերցրած իրենց կարմրուկով հիվանդ մանուկներին, մայրերին ու սկեսուրներին բռնեցին ձնհալից ջրողող Խառակոնիս գյուղի ճանապարհը։ Առաջընթացները արդեն անցել էին Արճակն ու Խառակոնիսը սահմանազատող Ձոր գետը, իսկ մյուսները դեռ նոր էին դուրս եկել գյուղից (վերջինները Քյողալի թաղեցիներն էին), երբ հայտնվեցին մոտ երկու տասնյակ ոստիկան։ Անցնելով Խառակոնիս շարժվող շարքերի կողքով, արճակցոց ծանոթ այդ հին ոստիկանները սկսեցին հասկացնել իրենց «սիրելի բաջիներին», որ երկյուղ կրելու պատճառ չկա, որ փախուստով Արճակի մյուդուրի ու ոստիկանների պատվին քար են գցում, ու հորդորել՝ որ չլքեն գյուղը։ Ետևից գնացողները վերադարձան, իսկ առաջընթացները շարունակեցին ճանապարհը դեպի Խառակոնիս։ Արճակի ու Խառակոնիսի հեռավորությունը մի քանի վերստ էր։ Խառակոնիս գյուղի կենտրոնում կար մի կլոր բլուր, որի գագաթին էին գտնվում գյուղի եկեղեցին, դպրոցն ու գերեզմանոցը։ Այդ բլրից երևում էր ողջ շրջակայքը։

Մի ժամ, ժամ ու կես հազիվ էր անցել արճակցիների Խառակոնիս հասնելուց, երբ հիշյալ բլրից նկատվեց դեպի Արճակ շարժվող մարդկային հեղեղ։ Հասնելով Արճակին մարդկային այդ հեղեղը բաժանվեց երեք ճյուղի, մեկը Ասպարծնա տակով տարածվեց մինչև «Քաղքի սար» կոչված բլրալանջերը և հասավ լճափ, մյուսը ցրվեց լճափնյա մարգագետիններում, իսկ միջին ճյուղը շարժվեց դեպի գյուղ։

Լսվեցին գնդակների կտկտոցներ։ Մարգագետնում շարժվեցին մարդկային կերպարանքներ։ Ոմանք ընկնում էին, ոմանք էլ վազվզում։ Արճակի ու Խառակոնիսի ժողովուրդը բլրի գագաթից ականատես եղավ Արճակի տնամերձ արտերում հատուկենտ աշխատող շինականների, ինչպես նաև մարգագետնում իրենց անասուններին արոտի տարած պատանիների գնդակահարմանը։ Հետո, հետո... եռաճյուղ դարձած այդ հեղեղը քիչ առ քիչ ներծծվեց Արճակի մեջ։ (Հետագայում իմացվեց, որ ջարդարարները կոտորել էին Արճակում ձեռքն ընկած տղամարդկանց, իսկ մյուսներին քշել Վան)։

Մութը խառնալիս, առանձին-առանձին Խառակոնիս հասան մի ծանր վիրավոր և երկու այլ տղամարդ։ Պատահականորեն մահից ճողոպրած այդ մարդիկ հայտնեցին, որ Արճակի վրա հարձակվողները եղել են գիշերվա կրակոցների ժամանակ գյուղից դուրս գնացած զորքն ու ոստիկանության մեծ մասը, Սարայի կայմակամն՝ իր զորամասով ու թնդանոթներով և խուճապահար փախուստ ձևացնող քրդերը։ Երեք ճյուղի հարձակում գործողները իրենց առջևից քշելիս են եղել Սարայի կողմերից գերված հայ կանանց՝ հնարավոր հակահարվածի դեպքում նրանց զոհ տալու միտումով։ Գյուղի աջ ու ձախ կողմեր տարածվածները կիպուկ նշանառությամբ հնձել են մարգագետնի հոտաղներին, դռան արտերի սերմնացաններին, գերեզմանոցի մեռելաթաղներին ու միաժամանակ ուժեղ համազարկի տակ պահելով գյուղը, մտել այնտեղ ու սկսել սպանդը։ Իրենց պահակակետում գտնվող արճակցի ու հաղարացի հայ ոստիկանները սրախողխող էին արվել իրենց գործընկեր՝ հին. ծանոթ ոստիկանների ձեռքով։

Լուսարացին կոտորողների խառնամբոխը դիմեց Խառակոնիս։ Սակայն Նոշ գետը դեռ չանցած, նրանք հանդիպեցին Արճակ-Խառակոնիսի երիտասարդության միացյալ ուժերի դիմադրությանը, որ դիրք էին մտած մարգագետնի խանդակներում։ Կռիվը շարունակվեց մինչև երեկո. խառնամբոխը Արճակ վերադարձավ։

Մինչև լուսարաց բնակչությունը Խառակոնիից փախցնելու որոշումը դարձավ հրամայական։ Վաղ առավոտյան, արճակցի փախստականների ու խառակոնիսցիների մի մասը շարժվեց դեպի Կըղըլչա հայկական գյուղը։ Երկու օր այնտեղ պատսպարվելուց հետո, երրորդ առավոտյան, նկատվել էր, որ Արճակից դուրս եկած զորասյուները ոչ թե դեպի Վան էին գնացել, այլ ուղղվել էին Կըղըլչա։ Երեք գյուղերի, այն է՝ Արճակի, Խառակոնիսի, Կըղըլչայի բնակչությունը ահաբեկված սկսեց փախչել դեպի Կըղըլչա լեռը։ Հիշյալ լեռից բավականին հեռու ընկած Թիմարի Նաբաթ լեռն ի վեր էին փախել նաև տասնյակ այլ հայ գյուղերի մահից ճողոպրածները։ Հալածիչները սկսել էին ուժեղ կրակի տակ առնել Կըղըլչա լեռն օղակող զորասյանը՝ նրան փախստական հայերի տեղ դնելով և ապա սպասել էին կատաղի պատասխանի։ Թյուրիմացաբար սկսված այս մարտը տևել էր մի քանի ժամ, և օրը կիսվել էր ու նրանց չէր հաջողվել ծրագրված լրիվ սպանդը։ Մութն ընկնելիս նրանք ուղղվեցին դեպի հարթավայրի գյուղերը։ Իսկ Կըղըլչա ու Նաբաթ լեռներին ապավինած երեսունից ավելի գյուղերի հայ անզեն փախստականները այդ ժամանակ շարժվում են առաջ և լուսադեմին հասնում վարչականորեն Վան-Տոսպ գավառի մեջ մտնող, տեղադրությամբ Վանին բավականին մոտ Ավերակի գյուղը։ Լույսը բացվելուն Ավերակի էին հասել նաև Արճակից մինչև այդտեղ նրանց հետապնդող զորամասերն ու քրդական միավորումները, ինչպես նաև Վանի Ջեվդեթ փաշայի կողմից հղված զորամասերը՝ թնդանոթներով զինված։ Մինչև մայրամուտ Ավերակի գյուղը վերածվեց սպանվածներով լեցուն ավերակի։ Մութն ընկնելիս զորամասերը, թողած իրենց դիրքերը, գնացին հանգստանալու։ Ավերակի տարբեր խրճիթներում կծկվելով իրենց կյանքը պահպանած փախստականները, որոնց թվում և տողերիս հեղինակը, նորից բռնեցին դժվարանց լեռնային ուղիները։ Եվ հաջորդ օրվա այգաբացին, Սխկա գյուղի միջով հասան Վան-Այգեստան՝ Ավերակում թողած իրենց կեսից ավելիի դիերը։ Ավերակից Վան հասած մարդկանց ընդհանուր թիվը շուրջ տասը հազար էր։ Դա Արճակում սկսված եղեռնի 6-րդ օրն էր։ Արճակից Վան հասնելու համար, ներառյալ և հանգստանալը, անհրաժեշտ էր վեց ժամ...

1915 թ. մայիսյան այն օրը, երբ ռուսական բանակն ու հայ կամավորական դնդերը ոտք էին դրել Վան, և ժողովուրդը ցնծության մեջ էր, Արճակը ևս մասն ուներ այդ ցնծության սեղանին։ Կամավորական խմբերում կային նաև Բաքվից եկած ութ արճակցի։ Այդ օրերին Արճակի խոշտանգված կյանքը ևս, որպես գավառի կենտրոն, որոշ չափով վերակենդանացավ։ Գավառապետ նշանակվեց խառակոնիսցի Շիրին Հակոբյանը (կառավարության կից մշտական հայկական ներկայացուցիչ), որը հսկայական ջանք էր թափել մի քանի տասնյակ հայ գյուղերի փախստականներին փրկելու ու Վան հասցնելու համար։

1915 թվականի Մեծ եղեռնին հաջորդած գաղթին արճակցիք ևս Բանդի Մահու դեսերին թողնելով իրենց զոհերը, հոգնած ու հուսալքված, հասան Բաքու։ Սակայն նույն թվականի դեկտեմբերին Բաքվում տեղավորված արճակցի որոշ ընտանիքների աշխատունակ տղամարդիկ արդեն վերադարձած իրենց դարավոր Արճակը, վերաշինում էին այն, այս անգամ արդեն ռուս գավառապետի աջակցությամբ։

Արճակի երդիկներից շարունակվեց ծուխ բարձրանալ մինչև 1918 թ. ապրիլը։ Արճակի ազգաբնակչության համարյա քառորդը կազմող այդ մարդիկ, հնարավորություն չունենալով բռնել իրենց ծանոթ Արճակ-Բաքու կարճ ուղին, փախուստով, հետապնդումներով ու զոհերով հասան մինչև Բաղդադ։ Այդ օրվանից էլ ընդմիշտ մարեց Արճակի երդիկներից երկինք բարձրացող ծուխը։

ՁԲԱՂՄՈՒՆՔ

Ձմեռները լինում էին բքաշունչ ու երկարատև։ Ձյան շերտի հաստությունը երբեմն մի մետրի էր հասնում։ Ձյան շատությունից, հաճախ, աշնանացան արտերը շնչահեղձ էին լինում, փտում, և արտատերը ստիպված գարնանը վիծկիով վարում էր ու տեղը գարնանացան անում։

Գարունները լինում էին երկարատև։ Անձրևները՝ մեղմ ու չափավոր։ Կարկուտը թեև ուշ-ուշ, սակայն վնասներ էր պատճառում։

Ամառները լինում էին ոչ խեղդիչ տոթերով, սակայն շոգ։ Օգոստոսի սկզբից սկսվում էր գաղջանալը։ Ընդհանրացված չէր մրգատու ծառ տնկելը, թեև եղած հատուկենտ սալորենիների ու խնձորենիների պտուղները լավ հասունանում էին։ Սահմանագծությունից հետո անկած մի քանի խաղողի այգիների տված խաղողը որակով չէր զիջում Վանին մոտիկ Շահբաղի գյուղի խաղողին, իսկ Շահբաղին Վան-Տոսպի ամենալավ խաղողն ունեցող գյուղն էր։ Մի քանի մասնակի փորձեր արվեցին բրինձ ու բամբակ աճեցնելու, սակայն ապարդյուն։

Արճակցիների հիմնական զբաղմունքը երկրագործությունը, անասնապահությունն ու անայնագործությունն էր. զգալիորեն տարածված էր նաև արտագնացությունը (պանդխտություն)՝ Աստամբուլ, Բաքու, Թիֆլիս և այլ վայրեր։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հացահատիկի մշակում: Արճակցոց կյանքում առաջնակարգ տեղ էր գրավում երկրագործությունը։ Հողը, լինելով ջրարբի, բերրի էր։ Ցանքաշրջանը ընդմիջումներով էր, առնվազն գոնե մի տարով հողը թողնվում էր անվար։ Հարթ-դաշտային տարածություններում ցանում էին աշնանացան ցորեն, իսկ բլրալանջերին՝ գարնանացան։ Գարնանացանի արտերը վարած էին լինում դեռ նախորդ ամառ, գութանով։ Գարնանը վիծկիով (արոր) փխրեցնում էին և ապա ցանում։ Գարնանացանը մեծամասնությամբ լինում էր քուիկ (անքիս) ցորեն, որն սպիտակ ու փխրուն լինելու պատճառով, օգտագործում էին գլխավորապես ձավարի, կորկոտի և փոխինդի համար։

Բարձրադիր բլրալանջերին ցանում էին գարի։ Սա ոչ թե հացի, այլ ապրանքափոխանակման, ինչպես նաև երբեմն «կոնախների» ձիերի համար էր։

Գյուղացոց կյանքում հացի նման կարևոր տեղ էր գրավում կտավատը։ Այն ցանում էին աշնանացանի նման՝ գյուղի թե՛ մոտիկ, թե՛ հեռու ջրաբբի արտերում։ Եթե ցորենից ստացած հարգը անասնակեր էր ծառայում, ապա կտավատի ջարդոտված ցողունները («բալմ») օգտագործվում էին միայն փայտյաների (գոմ) հողանների հատակին փռելու համար։ Կտավատի ձեթը և՛ պասվա սնունդ էր, և՛ ճրագ-լույս, և՛ գոմեշների օծանելիք՝ նրանց մակաբույծներից ղերծ պահելու համար։ Կտավատի քուսպը անասունների ամենահամեղ ու ամենաօգտակար սնունդն էր։

Արճակցիները, բացառությամբ խիստ չքավորների, մշակում էին նաև կանչրակ։ Այն նույնպես ջրարբի հողում էին ցանում, գյուղի ամենահեռավոր արտերում։ Երբեմն կանչրակը ծեծում էին հենց արտում։ Փայտե ձողերով ծեծում էին կանչրակի գլխիկները և հատիկները ջվալի մեջ լցրած տուն բերում և հյութը գործածում որպես պասվա կաթ։ Արտերի մեջ թողնված կանչրակի հատուկենտ ցողունները խաբուսիկ նյութ էին ծառայում մոտակա արտերի ջրվորների կամ անցորդների համար։

Ոսպը ցանում էին գյուղին մոտիկ արտերում։ Այն հատկապես պասվա ուտելիք էր։ Ոսպի կանաչ ու կիսահաս պատիճները արեհածաղկի նման չըրթելու սովորությունը շատ էր տարածված, այդ իսկ պատճառով, ոսպը միակ ցանովի բույսն էր, որ գարձել էր պահպանության ենթակա։ Ոսպատերերի փոքրիկ աղջիկները, երեկոները հավաքվում էին կիսահաս արտերի մոտ՝ դաշտից վերադարձող հոտաղ-երեխաներից ոսպը պաշտպանելու համար։

Ծառաստանների բաց տարածություններում ցանում էին կանեփ։ Սրա հատիկներն օգտագործվում էր աղանձի, ցողունի թելերը՝ չվանի համար, իսկ ցողունները՝ թոնրան կպչան էին գառնում։

Շաղգամը, որ օգտագործվում էր և՛ պասվա, և՛ ուտիք օրերում, ցանում էին սև բողկի հետ խառն։ Այն մշակում էին անամերձ արտերում։

Բանջարաբուծություն: Բախչա էին գնում տնամերձ արտերում։ Սովորաբար բախչան ցանում էին երկու կամ երեք հոգով միացած։ Միանում էին նրանք, որոնց արտերը կից էին։ Բախչա ցանելու համար հրավիրվում էր վանեցի հատուկ մասնագետ։

Մասնագետ բախչապանը գալիս էր գարնանը, իր հետ բերելով ցանվելիք սերմը։ Ցանում էին հիմնականում սեխ, կաղամբ, բաղուկ։ Ճոլիկը (պատինջան), սմբուկը (մոռ պատինջան) և ղանաղան կանաչեղենը երկրորդական տեղ էին գրավում։ Բախչապանը պղրում ու սնվում էր տրտատիրոջ հաշվին, մինչև որ սեխը այնքան մեծանար, որ կարելի լիներ կապուկ անել։

Հողային աշխատանքն այսպես էր բաժանվում։ Հողը հերկում էին արտատերերը՝ իրար մեջ համաձայնեցված կարգով, ածուները վարձու բանվորներն էին շինում (սրանց վճարում էր բախչապանը)։ Բախչապանի համար մի փոքրիկ

հյուղակ էր սարքվում, ուր և ապրում էր նա։ Ամռան ընթացքում բախչապանն ընտանիքը բերում էր իր մոտ։ Բախչայի ապրանքը գյուղացիք գնում էին հացով, ձվով, ճուտով և հացահատիկով։ Մի որևէ մթերանոցի դուռ դրսից փակում էին, երդքը նշան դնում և երդիկից ներս թափում հացահատիկը։ Մնացած մթերքի համար բախչապանից հաշիվ չէր պահանջվում։

Աշնանը, ցրտերն ընկնելիս, բախչայի արդյունքը վաճառվում էր մեծաքանակ և առանց կշեռքի։ Ուղղակի ածում վաճառվում էր գնորդին։ Այդ ածուներում աշնանը մնացած էր լինում միայն սոխ, շրջապատում՝ կաղամբ, իսկ թմբերի վրա՝ բողկ։ Բախչան քանդելուց հետո բախչապանը հաշվում էր իր ներդրումները, այն է՝ սերմի արժեքը, հողային աշխատանք կատարող աղամարդկանց, գարնանից մինչև ամռան վերջը քաղհան անող աղջիկների օրավարձը, ինչպես նաև պետական հարկը։ Ապա ավելացած դրամն ու մնացած ապրանքը, այն է՝ յուղ, ձու, հավ, չորաթան, ձավար և այլն, հավասարապես բաժանում էին, կեսը՝ բախչապանին, կեսը՝ արտատերերին։ Իսկ եթե բախչայի ապրանքը վաճառվել էր առավելապես ապրանքափոխանակման կարգով և կանխիկ դրամ այնքան էլ չէր ստացվել, որ ծածկեր նույնիսկ ներդրած ծախսը, այդ դեպքում որոշ չափի ապրանք վաճառում էին, վճարում բախչապանին, նոր միայն մնացած ապրանքը բաժանում։

Ինչքան էլ բախչայից ստացվածը քիչ լիներ, այնուամենայնիվ, կրկնակի, եռակի եկամուտ էր ստացվում, քան հացահատիկ ցանելու դեպքում։ Մինչև վերջին տարիները գյուղացիները ծանոթ չէին կարմրած լոլիկի գործածելուն, միայն կանաչըն էին օգտագործում՝ խաշելով և ձվով ու յուղով տապակելով։

Բոստանաբուծություն: Բոստանները ևս մշակվում էին ընդհանուր հիմունքներով, միայն ոչ թե բախչաների նման, անպայման անամերձերում, այլ ավելի հեռուներում։ Արտը ոչ թե բաժանվում էր փոքրիկ քառակուսիների, ինչպես բախչայում, այլ կորիների։ Ցանում էին սեխ, ձմերուկ, վայունգ իսկ ամբողջ արտի շուրջը՝ մի քանի շարք դդում։ Ցանում էին առանձին փոսիկներով, ըստ որում փոսիկներից յուրաքանչյուրի մեջ մի քանի հատ ձմերուկի ու սեխի սերմ էին դցում։ Ծլելուց հետո, աստիճանաբար քաշում, դեն էին դցում, մինչև որ յուրաքանչյուր փոսիկում մնում էր մի հատ բույս։ Աշխատանքը կատարում էին ավելի շատ 14—15 տարեկան աղջիկները, որոնց աշխատավարձը լինում էր հասուն մարդու օրավարձի քառորդը։ Բոստաններում հասուն աղջիկներ չէին վարձում, այնինչ բախչաներում անպայման հասունացած աղջիկներն էին քաղհան անում։

Բոստանների բերքը գողությունից ղերծ պահելու նպատակով, վարձում էին քուրդ հրացանակիր, որը գիշերները հսկում էր բոստանը։ Երբ եղանակներն սկսում էին փոփոխվել, բոստանչին հայտարարում էր բոստանը քանդելու օր։ Բոստան քանդելու, այսինքն՝ ամբողջ բերքը անխտիր քաղելու աշխատանքին մասնակցում էին գյուղի միջին ու չունևոր խավի տղամարդիկ, պատանիներ ու փոքրիկ աղջիկներ։ Ձմերուկը, սեխն ու դդումը բերում-շարում էին քոլիկի մոտ և ծածկում ձմերուկի թաղերով։ Մի քանի ժամվա մեջ բոստանն իրոք քանդվում էր։ Բոստան քանդելու աշխատավարձը լինում էր սեխն ու ձմերուկը։

Արճակում աճեցնում էին «դիարրեքիր» կոչված երկարավուն ձմերուկ, ինչպես նաև «Աստրախանի» տեսակ և այլն։ Արճակում ձմերուկը հաջող էր լինում, իսկ սեխը՝ ոչ։

Բոստանից միշտ էլ մեծ օգուտ ստացվում էր։ Գնորդները մեծ մասամբ քրդերն էին, որոնք իրենք այդ մշակությամբ չէին ղրաղվում (պատճառներից մեկը բարձրադիր վայրերում ապրելն էր, ուր կլիմայական պայմաններն անբարենպաստ էին)։

Վարուցանք: Գութան: Սովորական, անփոխ **գութանը** աշխատեցվում էր չորս զույգ լծկանով, որոնցից առնվազն երկուսը պետք է լինեին ամենաուժեղ և միջին տարիքի առույգ գոմեշներ։ Գութանի աշխատավորը հինգ տղամարդ էր։ Առաջինը մաճկալն էր, չորսը՝ գութանավորները։ Սրանցից ամեն մեկը մի-մի լուծի նստած ղեկավարում էր լծկաններին։ Գութանի մասերը, ներառյալ և խոփը, բոլորը միասին կոչվում էին **սարվածք:** Սարվածքը դաշտ էր տարվում մութը-լուսուն, մի լուծ եզով, խոփը շրջված դեպի «էշ» կոչված երկարավուն փայտամասը, վրան բարձած ակոսատի (նախաճաշ) ջվալն ու մի տոպրակ քամած մածուն։ Եթե գութանը առաջին անգամ էր դնում ավյալ արտը, սարվածքի վրա էր լինում նաև ջրի կուժը։

Բացի գութանի հինգ հիմնական աշխատավորից, պետք է լիներ նաև մի երիտասարդ։ Վերջինս կոչվում էր **գիշերարած:** Գիշերարածի դերը այն էր, որ նա գիշերը լծկանը տանում էր դաշտ արածացնելու։ Առավոտ վաղ, արևը դեռ չծագած, նա լծկաններին քշում էր այն արտը, որը տվյալ օրը պետք է հերկեին։ Վերջալույսին, գութանի

րանթողից հետո, գիշերարածը լծկաններին նորից էր քշում արոտավայր, մինչև կեսգիշեր արածեցնում, ապա բերում փայախ, կապում յուրաքանչյուրին իր սովորական տեղն ու մի քանի ժամ հետո նորից արոտավայր քշում։

Սա անփոխ գութանն էր։ Սակայն արճակցի գութանատերերի մեծ մասն ուներ փոխով գութան: Փոխով գութանի տարբերությունը անփոխից այն էր, որ փոխովը չորս զույգ լծկանի փոխարեն ութ լուծ էր աշխատեցնում, այսինքն՝ 16 լծկան։ Լծկանների չորս զույգը, գութանի հոտաղի հսկողության ներքո, արածեցվում էր մինչև կեսօրյա դադարի ժամը, որից հետո լծում էին այդ կշտացած ու հանգստացած անասուններին և հոգնած ու սոված լծկաններին հանձնում հոտաղին՝ արոտավայր քշելու։ Երեկոյան, րանթողից հետո, գիշերարածը այս չորս զույգ լծկաններին տանում-միացնում էր մյուս լծկաններին ու պահում արոտավայրում՝ մինչև գիշերվա վրա հասնելը։

Շատ հաճախ գիշերարածի և խուրիկ քշողի գործը, եթե գութանը անփոխ էր, կատարում էր մի մարդ։ Փոխով և անփոխ գութանի գութանավորների թիվը տարբերվում էր միայն գութանի մի հոտաղով։ Ուտելիքն էլ նույնն էր, մի հաց ավել, մի հաց պակաս։

Գութանավորների ակռասաը լինում էր տասից-տասներկու հաց, մի կուտիկ ժաժիկ և մի տոպրակ քամած մածուն։

Կեսօրին տանից տանում էին մի մեծ սափորով տաք սպաս և քսան-քսաներկու նորաթուխ հաց։ Գութանավորները ևս, դաշտի մյուս աշխատավորների նման, նախաճաշի, ճաշի ու ընթրիքի ժամերը որոշում էին գյուղի հարավակողմի «Քյաղքի սար» կոչված բլրի գագաթին եղած հրակայական ժայռի ստվերի՝ փոփոխումներով կամ հյուսիսում գտնվող Աղթագաղ լեռան մի այլ նշանով։

Ամեն օր, ցերեկով, գութանի հյուսնը անհրաժեշտ գործիքներով այցելում էր բանող գութանին ու եթե որևէ խափանում պատահած լիներ, նորոգում էր, վերացնում խափանման պատճառն ու շարունակում իր «մուշտարիներին» այցի գնալը։

Ինչպես գյուղական բոլոր աշխատանքների ժամանակ, երբ առկա էր նաև անասունը, ծորուն ու մեղմ երգեր էին երգվում, նույնը և արա հերկելիս։ Հայ շինականն ավելի շատ երգով էր խրախուսում լծկաններին, քան խարազանի հարվածով։

Գութանի չորս լծանի վրա նստած գութանավորները փոխնե-փոխ երգում էին գութանին նվիրված մի շարք երգեր, որոնցից ամենաբնորոշը՝ երկար ու ձիգ ճոռովելն էր։

Հառավել, հառավել, հառավել,
Հառավո՜ւլ ընի պղտի կեմեշ,
Հորովել, հորովել, հորովել,
Հառավել, հառավել, հառավել,
Հառավել Ջեյրանին կուրրան եմ,
Խորոտ Ջեյրանին կուրրան եմ։

Հառավել, հառավել Ջեյրան ջան,
Հառավել, հառավել Սեյրան շան.
Հառավել, հառավել, հառավել,
Ջանիս մատաղ տնուշ կեմեշ։
Հորովել, հորովել, հորովել։

Դե, փարա-փարա իմ Շեկո ջան,
Դե, փարա-փարա իմ Շեկո շան,
Հորովել, հորովել, հորովել
ընենք իմ Շեկո շան,
Քյաշիր, շանիս մատաղ իմ Շեկո շան,
Հա, փարա-փարա, փարա-փարա։
Դե, աղեյներ, խուրիկ քյաշեք,
Դե, աղեյներ, խուրիկ քյաշեք։
Փարա ի, փարա ի, կյեմեշ շան։

Դե, փարա-փարա, ցավըտ տանեմ,
Դե, փարա-փարա, ցավըտ տանեմ,
Էլանք, էլանք, էլանք ելը։
Դե, փարա-փարա, գե, փարա-փարա,
Հառավել, հառավել, հառավել ընենք,
Հառավել, հառավել, հառավել ընենք,
Տղա, խուրիկ շուռ ավեք,
Տղա, խուրիկ շուռ տվեք... (Եվ այսպես շարունակ)։

Ուշագրավ է մանավանդ հնօրյա «Կյութնի տաղը», որը վերաբերում էր բազմաչարչար մաճկալին։

Պարի լուսու աստղ էրեվաց,
Աղոթըրնի տըռներ ի պաց,
Պարով պացվեր լոս աղոթրան,
Լծեմ սարվածք, էրթամ կյութան։

Հո՛, հոոովել, հո, հոոովել, ոժտուն ախպեր,
ամել, սարծիլ,
Հո՛, հոոովել, քյաշեք-քյաշեք չուր առավել,
Հո՛, հոոովել, քելեք-քելեք, առատունի գանն
ի սարին,
Հո՛, հոոովել...

Կյութնի թախըմ՝ Նմուշ-Նմուշ,
Չկա վաստակ քյանձ էն անուշ,
Աշխըրի շէն վեր կյութնին ի,
Կյութան չըլնի աշխարն ինչ ի։
Հո՜, հոռովե՜լ...

Առա ճըրարպին առատամ կոկ,
Մաճն ի կալիմ, խոփն ի ղոթուկ,
Պոծառ արև, մարմանդ սարին,
Ասպած տա խոփ չառնի քարին։
Հո՜, հոռովե՜լ...

Խինկյ կյութնըվոր, չորս ջուխտ լծկան,
Իմ անքյումադ, անփոխ կյութան,
Տըու լուծ քյաշեք, ես մանի՞ պըռնեմ,
Ծեր լծառուկ վըղին մեռնեմ։
Հո՜, հոռովե՜լ...

Ոժտուն, ամել, սարծիլ, խուրիկ
Ան ձիկ կանեմ խալալ շիրիկ,
Կյիշերարած, կյութնի խուտաղ
Խե ձիկ կանեմ խալալ օրթաղ։
Հո, հոռովել...

Գութանատերն անպայման պետք է ունենար և վիծկի (արոր), որի համար բավական էր երկուսից չորս եզ և ևնոյ սել (մեծ սայլ). վերջինիս անհրաժեշտ էր երկու գոմեշ և երկու եզ։ Գութանատերը պետք է ունենար նաև սեփական մանգեռ ու տափ (ափան)։ Սակայն փոխգութանի անհրաժեշտ լծկաններ անհնար էր ունենալ, երբ 1896 թ. կոտորածից ու թալանից հետո նոր-նոր էր սկսվել Արճակի անասունների ու կայքի վերականգնումը։ Դեռ շատ վաղուց վարձու լծկանների սովորություն եղել էր՝ նաև արճակցոց մեջ։ Միջակ և չքավոր տնտեսատերերն իրենք ևս աշխատում էին գութանատիրոջ մոտ, սկսած մաճկալ լինելուց, մինչև խուրիկ քշելը։ Իսկ իրենց այդ աշխատանքի դիմաց ապահովվում էր թե՛ արտերի հերկը, թե՛ ցանքսը, և թե՛ հացահատիկը դաշտից տուն բերելը։ Գութանավորը երբեք էլ մշակի կամ հոտաղի նման հրամանի ենթակա չէր։

Գութանատերը վերցնում էր լծկանն այսպես. մի լուծ լծկանի համար նա եզատիրոջը տալիս էր մի ղութան ու մի սայլ։ Իսկ դա նշանակում էր, որ գութանատերը մի ամբողջ օր նրա համար էր աշխատեցնում իր գութանը և մի ոտ իր սայլով նրա օրանը (հունձը) տուն էր բերում։

Գութանի լուծ քաշող անասունն ու լծի վրա նստող մարդը դարեր շարունակ կրում էին միևնույն անունը։ Օրինակ, գութանի առաջին լուծը քշող մարդն էլ, անասունն էլ կոչվում էին ոժտան. այդպես էլ ամելը, սարծիլն ու խուրիկը։

Գութանի ամենակարևոր ու պատասխանատու աշխատավորը մաճկալն էր։ Նրանից էր կախված արտի խոր ու անխոտոտ հերկումը։ Մաճկալը պետք է լիներ թե՛ ուժեղ, թե՛ փորձառու մարդ։

Գութանի առաջին լուծը ոժտունն էր (ուժ տըվողը)։ Ոժլծկանները պետք է լինեին գոմեշներ, իսկ ոժտուն քշողը՝ փորձառու գութանավոր։ Երկըրորդ լուծը ամելն էր, որին երբեմն (ունենալու դեպքում) լծում էին գոմեշներ։ Երրորդ լուծը սարծիլն էր, իսկ չորրորդը՝ խուրիկը։ Խուրիկը գնում էր գութանի առաջն ընկած, ուրեմն ամենաքիչ ծանրություն տանողն էր։ Խուրիկը ուղղությունն էր պահպանում. խուրիկ քշողը հաճախ լինում էր պատանի։

Մանգեռ: Հերկելուց հետո, հողի մեծամեծ կոշտերը անպայման պետք է մանրացվեր, արտը հարթվեր, ապա միայն սերմը ցանվեր։ Դա կատարվում էր մանգեռով։ Մանգեռը (փոցխ) հսկայական սանրի ձև ունեցող փայտե գործիք էր։ Մանգեռի առաջամասը երկար փայտ էր, ու այն միացնում էին լուծին ու լծում մի զույգ ուժեղ գոմեշ։ Առջևից քայլում էր մի հոգի, որի վարժ կամ անվարժ լինելը նշանակություն չուներ. կարևորը մանգեռ քաշողի վարպետությունն էր։ Վերջինս կանգնում էր մանգեռի վրա և իր ծանրությամբ օգնում, որ մանգեռի մատները խոր խրվեն հերկի մեջ, ինչպես և մեծ հողակոշտերի դիմադրությունից մանգեռը վերուվար չլիներ։

Ցանք: Սերմացու ցորենը նախօրոք մաղում, ապա ջվալներով դաշտ էին տանում։ Սերմնացանի վարպետությունը մեծ նշանակություն ուներ, որովհետև նոսր ցանելու դեպքում ցորենը խիստ ցանցառ էր լինում և տեղ-տեղ էլ շաշալ, այսինքն՝ ոչ մի սերմ չընկնելու պատճառով, ցորենից զուրկ էր մնում, իսկ խիտ ցանելիս, ցորենը քյոք (արմատ) չէր տալիս և մեծ քյոլեր (փնջավորում) չէր ունենում։

Թեև յուրաքանչյուր արճակցի ի բնե սերմնացան էր ծնված, բայց կային նաև լավագույն սերմնացաններ։ Սերմնացանը հատա կտավե մեզարը (գոգնոց) կապում էր, սերմը լցնում, մեզարի երկու ծայրերը նորից էր կապում մեջքին և երկու ձեռքով աջ ու ձախ շաղ էր տալիս սերմացուն՝ սկսած արտի մի գլխից մինչև մյուսը, ապա նորից շաղ տալով եա գառնում[1]։

---

[1] Խառակոնիսի ըլրալանջային անչրդի դաշտերում շատ էին երևում շարքացանով ցանված, աչք շոյող արտեր։ Այդ

Անրմնացանները նրդ չունեին, նրանցը մաղթանքն էր տեր աստված։

Սերմ ցանելու մաղթանքն անում էին թե՛ չբրմեռանդ հավատացյալները, թե՛ թերահավատները։

Ամենաառաջին բռերը վերցնելով, երեսը երկինք ուղղած, բարձրաձայն կանչում էին՝ «Յա, Տեր երկնավոր, ամենեցուն խնդրացող, էս առճին պուտ կըթալեմ էրկնուց խավքերաց պաժին» և շաղ էին տալիս առաջին բռերը։ «Էսը մեյն էլ իմ շեմք կոխող՝ կարիք-կուրբաթ, անտուն-աղքյաա, բեղբած-մոլոր ճամխորթներաց փայ-պաժինն ի, Տե՛ր երկնավոր, տյու ընթունես», կրկնում էր սերմնացանը և շաղ տալիս երկրորդ բռերը։ «Էսը մեյ պուտն էլ մըռճըմներաց, կյել-կյազանթերաց, կոնախ-կարեյթերաց փայ-պաժինն ի, ո՛վ երկնային արթար դիվան անող Տեր» և շաղ էր տալիս երրորդ բռերը։ «Էսը մեյն էլ խաշկ ղռնող շան[2], ձիկ, էնան էլ իմ տան» երեսը խաչակնքելով, ասում էր սերմնացանը, դզգնոցից հանելով միայն մի բուռ ցորեն և որքան զորություն ուներ, շպրտում էր հեռուն։

Այս բոլորից հետո միայն սերմնացանը սկսում էր կանոնավորապես երկու ձեռքով ցանել։

Տափ (տափան): Ցանքին անմիջապես հետևվում էր տափը։ Տափը մանգեռի նման, հերկի մեջ խրվող գործիք չէր, այլ ավելի նման քաշ էր գալիս հողի երեսով և ծածկում էր ցանված սերմերը։ Տափը պատրաստում էին լեռնային փշփշոա ու ամուր մացառներից։ Մացառների բնամասերը ոլորումներով հյուսում էին երկարավուն ու հավասարաչափ տաշված փայտե ձողի շուրջը, որ կոչվում էր «սափափետ» (սափանելու փայտ), իսկ մացառները իրար կողքի, խիտ առ խիտ դարսվելով, ստանում էին լայնակի ցախավելի ձև։ Տափն էլ մանդեռի նման քաշում էին գոմեշները։ Տափի առջևից էլ մի հոգի էր քայլում, վրան էլ մարդ էր կանգնում, և տափը ցախավելի նման հարթում էր իր անցած ճանապարհը։

Կորի: Արտը որոշակի տարածություններ էին բաժանում կորիներով։ Վիծկիին լծում էին մի զույգ եզ և անցնելով ցանված արտի միջով, ակոսներ բացում։ Ակոսները հանդիսանալու էին արտամիջյան առվակների հուներ, որոնք կոչվում էին «կորամեջ» (կորիների մեջ), իսկ արտերը մասերի բաժանող տարածությունները կոչվում էին կորի։

Ցանքի ճուր (ջուր): Արտը ցանելուց հետո, անմիջապես, մի քանի օրվա ընթացքում պետք է անպայման ջրվեր, այլապես սերմը արեի ներքո կչորանար։

Արտի ջրվորները, նայած արտի մեծության, լինում էին չորս, հինգ, նույնիսկ վեց հոգի։ Նրանք հաճախ միմյանց օգնություն էին դնում՝ «փոխանակի» (փոխադարձության) սկզբունքով։ Այդ առաջին ոռոգումը, որ կոչվում էր «ցանքի ճուր», ամենադժվարն էր։ Ջուրը պետք է այնպիսի քանակությամբ հոսեր արտի մեջ, մինչև որ բոլոր կոշկոռները փխրվեին։ Ցանքի ջրով վերջանում էր աշնանացանի հետ կապված աշնանային աշխատանքը։

Մի քանի օր հետո, սև հերկի երեսը ծածկվում էր բաց-դեղնականաչ նուրբ շղարշով։ Նպաստավոր եղանակի առկայության դեպքում, մինչև ցրտերի վրա հասնելը, ծիլերը արմատներ ու փնջիկներ էին տալիս, հասնում էին չորս մատից ավելի բարձրության ու ստանում վառ կանաչ գույն։ Ահա այդ էլ կոչվում էր **«աշարա»:**

Հաջորդ գարնանը, երբ արդեն խոնավությունը հողից վերանում էր, երբ աշարան սկսում էր հասկավորվել, արտը ջրում էին երկրորդ անգամ։ Ծանքին արված այս ջուրը կոչվում էր «աշարի ճուր»։ Երրորդ անգամ արտը ջրում էին, երբ ցորենի հասկերի մեջ հատիկներ էին գոյանում և այդ հատիկները «մածնած» ու որոշ չափով լեցուն էին։ Այս ջուրը կոչվում էր «խացի ճուր» (հացի ջուր)։ Դրանից հետո արդեն արտերը ըսպասում էին մանգաղի։

Հունձ: Հնձելու աշխատանքը Արճակում կատարվում էր հետևյալ սովորությամբ։ Ոսպը, որ ամենաշուտ հասնող ընդեղենն էր, ու հունձն էլ հունձ չէր համարվում (քանի որ անամբրձ արտերում էին ու մեծ տարածություն չէին զբաղվում), քաղվում էր ձեռքով՝ փետվելիք բույս էր ու դրա հնձին մասնակցում էին ընտանիքի իգական սեռին պատկանող բոլոր տարիքի անդամները։

Գարի հնձելը ևս աղամարդու գործ չէր համարվում, որովհետև գարին սովորաբար փեա-

---

արտերի ցորենը կոչվում էր տիր, որը խոշորահատիկ էր ու սպիտակ։ Խառակոնիսցիները տիրն օգտագործում էին հատկապես ձավար-կորկոտի, փոխինդի ու առօրյա ազանձ ու հատիկ անելու համար։ Արճակցիները, որ բարձր էին գնահատում տիրը, երբեք չփորձեցին իրենց արտերում ևս ցանել այդ հրաշալի հացահատիկը։ Տիրն ու շարքացանը մնացին խառակոնիսցիների մենաշնորհը։

[2] «Հասկ րոնող շուն», ժողովրդի մեջ տարածում գտած զրույցներից մեկի գործող անձ, հացի հանդեպ մարդկանց ունեցած անհոգի վերաբերմունքից զայրացած աստծուց ցորենի հասկը բերանով փրկող (տե՛ս էջ 108)։

տում էին, և աղջիկներն էին այդ անում։ Գարու ցանքատարածությունները մեծ էին, և արտերն էլ հեռու, ուստի զարին հնձելու համար աղջիկներն արա էին գնում խմբերով, հեանները միայն մի տղամարդ՝ խրձերը կապելու համար։

Խուրձ կապող երիտասարդի աշխատանքը կոչվում էր «ճավկապություն», իսկ ինքը՝ «ճավկապ»։ Հնձվորուհի աղջիկներից (նայած իրենց տնտեսական ապահովության) ոմանք, միմյանց օգնելու նպատակով, իրենց արտի հնձելը ավարտելուց հետո, գնում էին մյուս աղջիկների հնձին մասնակցում։ Իսկ գարու սարակները (դաշտային աշխատողները), որոնք, ինչպես արդեն ասացինք կանայք էին, գարի հնձելու էին գնում օրավարձով՝ սկզբնական շրջանում օրը մեկ ղուռուշ (քառասուն կոպեկ), իսկ վերջում, երբ արդեն սկսվում էր կալսի աշխատանքը, և աղջիկները պետք է զբաղվեին յուրաքանչյուրն իր կալատեղում, հնձվորների վարձը հասնում էր 70—80 կոպեկի, թուրքական փողով՝ մոտ երկու ղուռուշի։

Գարի հնձողներն աշխատանքի էին մեկնում մութը-լուսին, իրենց հետ տանելով ակռասա ու ջրի դատարկ կուժ՝ արտին մոտիկ աղբյուրից լցնելու։ Ակռասաը լինում էր յուրաքանչյուրին երկուական հաց, ժաժիկ և մի տոպրակ քամած մածուն, եթե օրը ուտիք էր։ Իսկ եթե պաս էր, ապա քամած մածնին ու ժաժիկին փոխարինում էր կանաչ սոխ, կանաչ տերևներով սև բողկ, խաշած ոսպ, սխտոր (սրանցից մեկն ու մեկը)։

Կեսօրին արտատերը հաց էր տանում դաշտ՝ յուրաքանչյուր հնձվորին երեքական հաց, երկուսը՝ ճաշվա համար, մեկը՝ ընթրիքի։ Տանում էր նաև մի հողե սափորով տաք սպաս, որի նեղ բերանը խցկած էր լինում նոր թխած փափուկ լավաշ։ Իսկ եթե օրը պաս էր, թանե սպասին փոխարինում էր ոսպե վոռշը։ Ինչ էլ լիներ, դաշտում հունձ արողին տաք, ջրալի ճաշ պետք է տարվեր։ Ճաշ չէին տանում միայն խոտ հնձողներին և ջրկալներին (ջուր անողներին)։ Սակայն վերջիններիս էլ հացի հետ ոչ թե ժաժիկ, այլ յուղով շաղախած փոխինդ էին դնում։

Յորենի հունձը, որ ամենից շատն էր ու որպես մանգաղով հունձ, կանանց ուժից վեր, տղամարդիկ էին անում։ Սակայն արճակցի ոչ մի տղամարդ այդ աշխատանքը չէր կատարում։ Դա ասելիք էր դարձել ողջ գավառում։

Յորենը հնձում էին Գյավառից եկող սեզոնային քուրդ հնձվորները։ Գյավառցիները Արճակ էին գալիս հոծ բազմությամբ, նստում եկեղեցու պատի տակ։ Գյուղ գալուն պես արճակցին գնում էր ու նրանց խմբավարին հայտնում, թե ինքը հնձելու քանի չափի տարածություն ունի։ Տվյալ խմբի ղեկավար գյավառցի քուրդը գնում էր արտերը, տեսնում ու որոշում հնձելու վարձը, ըստ որում, սակարկել չկար։ Ինչ որ գյավառցին ասեր, պետք է ընդունելի լիներ, հակառակ պարագային մյուսները հրաժարվում էին իրենց ընկերոջ բազարը խանգարել։ Գյավառցիները հունձն անում էին մաքուր ու արագ. նրանց մի մարդու օրական աշխատանքը հայ հնձվորը 5—6 օրում չէր կարող անել։ Սակայն աշխատավարձն էլ այնքան շատ էին վերցնում, որ արճակցոց համար պետական հարկերին հավասար ծանր հարկ էր այն թրվում։ Գյավառցիները գյուղում մնում էին ընդամենը երկու շաբաթ, ու Արճակի լայնածավալ արտերը այդքան ժամանակում հնձվում էին։

Վերադառնալով, նրանք իրենց հետ տանում էին յուրաքանչյուրն այնքան հնչուն դրամ, որքան, իրենց ասածով, բավական էր իրենց ընտանիքի կարիքներին։ Երկու շաբաթ հետո գյավառցիները տուն էին դառնում։ Նրանք ասում էին, որ իրենց արտերն արդեն հասունացած կլինեն և թեկուզ օրը հարյուր ոսկու շահ լինի, միևնույն է, պետք է վերադառնան։

Գյավառցի հնձվորներին ամեն օր տաք, յուղալի ճաշ էր տրվում, ի դեպ, նրանք չափազանց շատակեր էին։ Յուրաքանչյուրին օրական 12 հաց էր տրվում և այնքան յուղ, որ հացի մեծ մասը ճմուռ անեին։ Որքան էլ դժվար լուծելի խնդիր լիներ գյավառցի սարակի կերակրումն ու աշխատավարձի ապահովումը, միևնույն է, 1898 թվականից գյավառցի սարակը ամուր նստել էր արճակցու կենցաղում։

Կալ (կալսում)։ Կալսումը կատարվում էր կամով ու ջարջառով։ Օղակաձև փոված հաշանի առջևից պտտվում էին երկար շղթայով իրար կապված դանանները (լծելու հասակի չհասած արու մոզիներ), որոնց կոչում էին կալատիղ։ Կալատիղի ետեից ընթանում էր կամը, իսկ կամի ետևից՝ ջարջառը։ Կամ քշողը կամին կանգնում էր այնպես, որ երկու եզներին էլ մոտ լիներ, իսկ ջարջառ քշողը նստում էր ջարջառի ետնամասին եղած հատուկ նստատեղին։ Թե՛ կամ, թե՛ ջարջառ քշողներն ամբողջ աշխատանքի ընթացքում երգում էին, կալի «տավրին» խրախուսում։ Հենց որ երգի ձայնը մարում էր, անասունները ծուլանում էին։ Երգում էին պահպանելով կալին հատուկ եղանակը, բառերը նշանակություն չունեին։

Քյառեշտը (վեց մասանի դործիք) ձեռքն առած, կալպանը անընդհատ պտտվում էր հաշանի շուրջը։ Նա շրջում էր հաշանը, տակը երես անում ու օղակաձև տարածությունը միշտ կոկիկ պահում, որպեսզի հաշանը կալատիղերի, կամի ու ջարջառի սահմանում լիներ։

Թեղի հերանումը տղամարդիկ էին անում, քամու առկայության դեպքում։ Ցորենը մաղում էին կանայք։ Հարդից բաժանված հացահատիկն սկզբում մաղում էին կալեմաղ կոչված, մեծ-մեծ ծակոտիներ ունեցող մաղով, ապա՝ ֆարեմաղ կոչված մաղով, որի ծակոտիները համեմատաբար փոքր էին։ Մարագները կալատեղերին մոտ էին լինում ու քանի որ հարդին տասանորդ չկար, կալատերը հարդն իր մարագն էր տանում։ Ցորենի կամ գարու շեղջերը մնում էին այնքան, մինչև պետական տասանորդ վերցնողները իրենց չափերը բերեին, հացահատիկը չափեին. դրանից հետո միայն տերերը իրավունք ունեին իրենց հացահատիկը տուն տանել։

Տուն բերված հացահատիկից սերմացուի համար նախատեսվածը լցնում էին սան մի տնկյունը։ Աշնան բնաղունացուն լցնում էին թաշրի մեջ, իսկ մնացածը հենց կտլատեղից սանում ու լցնում էին նախօրոք պատրաստված ու օդափոխված ցորենի հորերը։ Սկսած հորի հատակից մինչև բերանը, հողի ու հատիկի արանքում, մոտ երեսուն սանտիմեթր հաստությամբ խոտ էին դարսում, իսկ հորի բերանը ծածկում հողով։ Հորերը լինում էին բացօթյա։

Ոռոգում: Արճակն ուներ հողային հարթ ու ընդարձակ տարածություններ և ջրի առատ պաշար։ Ջրի պաշարի ակունքը գավառի հեռավոր Էրմանց գյուղի մոտերքում գանվող՝ Էրմանից սար կոչվող լեռան գագաթին ընկած Էրմանից գյոլն էր, որն Արճակի սեփականությունն էր։ Գյոլը (ջրավազան) երեք կողմից բնական պատվարով էր պատված, իսկ մի կողմից՝ քար ու կրե պարսպով։ Մի մեծ երկաթե դոնակ արգելակում էր ջրի հոսքը։ Դոնակը բացվում էր գարնան սկզբին ու փակվում աշնանը։

Աշնան վերջերին ռես-մաջլիսը, ինչպես նաև գյուղի իշխան ծերերը, ձիերը նստած գնում էին ամբարտակի վիճակն ստուգելու։ Վթարի դեպքում վարպետներ էին հրավիրում և փող հավաքում ընտանիքներից՝ ըստ իրենց ունեցած ջրային իրավունքի։ Այդ իրավունքը կոչվում էր «պճեղ», որոշված էր շատ վաղուց և անփոփոխ էր (այսինքը վեց պճեղ ջուր ունի, այնինչը՝ պճեղ ու կես և այլն)։ Պճեղը հավասար էր տասներկու ժամվա և որոշվել էր ջրավազանը գնելու թվականին։

Ջրավազանի համար պահանջվող դրամական ծախսից ոչ մի արճակցի չէր հրաժարվում, անկախ այն հանգամանքից, թե ինքն ինչքան էր այդ տարին ցանք տրել և ինչ չափով էր օգտվելու իրեն հասանելիք ջրի պճեղներից։

Գարնանը կատարվում էր առունելի մաքրման գործը։ Գկիրը հայանում էր, որ վաղը գնալու են «առու խանելու»։ Առավոտ շուտ եկեղեցու մոտիկ «նախրակյնայում» հնչում էր նաղարազուռնան և յուպաքանչյուր ընտանիքից մի հոգի բահով ու ուտելիքի պաշարով ուղևորվում էր դեպի Էրմանից լեռը։ Հենց ջրավազանի դոնակի մոտից առուները մաքրելով, առաջանում էին դեպի գյուղի սահմանները։ Եթե այդ օրը աշխատանքը չէր վերջանում, շարունակվում էր հաջորդ օրը։ Այս աշխատանքը չէր պահանջվում այնպիսիններից, որոնց տներում երիտասարդ տղամարդ չկար կամ ալանդխտության մեջ էր։

Ջրի հոսքի ուղու վրա էին գանվում գավառի Էրմանց, Զարանց և Սեան գյուղերի վարելահողերը, և այդ գյուղացիք, լի ու լի օգտվելով Էրմանից գյոլի ջրից, վերանորոգման ոչ մի ծախսի չէին մասնակցում։ «Գյոլն առճակցունն ի, թող առճակցիք պախպանեն»,—մի անգամ ընդմիշտ վճռել էին այդ երեք գյուղերի պապերը, ու թոռներն ամուր կառչում էին այդ սկզբունքին[3]։

---

[3] Էրմանից գյոլը արճակցոց սեփականություն էր դարձել հետևյալ հանգամանքներում։ Մինչև 1850-ական թվականները Արճակի գավառի չորս գյուղի (Արճակ, Սևան, Զարանց, Էրմանց) վարելահողերը ընկած են եղել այնպիսի տարածության, որ ուրիշ հարմար ջրի ակունք չեն ունեցել՝ օգտվել են միայն Էրմանից գյոլի ջրից, առանց սեփականատիրական իրավունքի։ Սակայն հիսնական թվականներին Վանի փաշան հայտարարում է գյոլի վաճառք և գնման իրավունքը վերապահում է ջրավազանից ամենահեռավոր կետում ընկած Արճակ ու Խառակոնիս գյուղերից մեկն ու մեկին։ Երկու գյուղն էլ պատրաստվում են գնման։ Սկսվում են թուրքական պաշտոնեության հանրահայտ ձգձգումները։ Երկու գյուղն էլ դրամը ժողովում են և պատրաստ են լինում ավելին վճարել։ Վաճառքի ձևակերպումը ձգձգվում է։ Վերջիվերջո, վալին հրամայում է վիճակ գցելով վճիռ կայացնել, վիճակահանությունը կատարել գյոլի մոտ, վիճակն ընկած գյուղին հանձնել արգեն պատրաստ արտոնագիրը, ավելացնելով գյուղի անունը։

Պետական պաշտոնյաները, արճակցի ու խառակոնիսցի ռես-մաջլիսները, ինչպես նաև երկու գյուղերի բնակչությունը գնում են Էրմանից գյոլ։ Այն պահին, երբ պաշտոնյան պատրաստվում է վիճակ գցելու, նրա ձեռքից բռնում է արճակցի մի պառավ կին ու ճչում.— Աղա, կոյ, ման կգարրմ (աղա, թող, ես եմ անելու)։—Նա՛ էգարսըն (ի՞նչ կանես),—հարցը-

ՋՈՒԲԱՐԱ

Ջուրարայի սովորույթը շատ էր հին և շատ էլ տարածված Վասպուրական աշխարհում։ Դա հասարակության կամովին օժանդակությունն էր հարգված անձնավորությանը՝ նրա աշխատանքում։ Կար նաև պատվիրյալ ջուրարա՝ քահանայի և ռեսի աշխատանքներին օգնելու նպատակով։ Տարեկան մեկ օր համախմբվում էին, գնում ռեսի կամ քահանայի արտը հնձելու, իսկ արտատերն էլ պետք է իր կողմից նրանց հյուրասիրեր։ Սկզբներում Արճակում այդպես էր եղել։ Հետըզհետե վերացել էր «տերտերոշ» ջուրարան ու մնացել էին ռեսի ու գութանի հյուսնի ջուրարաները։

Ռեսի ջուրարա: Սա ռեսի հացահատիկ հընձելն էր։ Ջուրարային մասնակցում էին ողջ գյուղի աշխատունակ ադամարդիկ։ Աղքատ, թե հարուստ, միևնույն էր, տնից մի հոգի, մանգաղը վերցրած, միևնույն օրը, միևնույն ժամին գնում էր ռեսի արտը։ Ռեսն ինքն էր որոշում ջուրարայի օրը։ Մի քանի հարևաններ, տվյալ օրը, գնում էին ռեսի ընտանիքին օգնելու՝ յուրաքանչյուրը մի-մի տաշտ խմոր թխելով կամ նոր ծեծված կորկոտ աղալով և այլն։ Երիտասարդները հնձվորներին դաշտում հաց մատակարարելն էին հանձն առնում։

Նախընթաց մայրամուտին Արճակի նաղարա ու զուռնան նվագելով, գնում էր ռեսի դուռը։ Ռեսը դուրս գալով, նրանց մի-մի բաժակ օղի էր մատուցում և շնորհակալական խոսքեր ասում։

Լուսաբացին, եկեղեցու մոտիկ նախրակնեն էին հավաքվում հարյուրից հարյուր քսան ադամարդ ու նաղարա-զուռնայի նվագակցությամբ գնում ռեսի այն արտը, որն ռեսի պատվերով, պետք է առաջինը հնձվեր։ Ավարտելով այն, անցնում էին երկրորդ, ապա երրորդ և մյուս արտերին։ Պատահում էր, որ ռեսի արտերը բոլորն էլ հնձված էին լինում նախքան արևամուտը. նման դեպքերում նաղարա-զուռնայի նվագով ետ էին դառնում և նախրակնայից բաժանվում միմյանցից։

Ջուրարայի եփվելիք կորկոտաճաշի համար ռեսի սեփական թոնիրը չէր բավականացնում ու մոտիկ հարևանի տանն էլ մեկ կամ երկու մեծ պուտուկ ճաշ էր եփվում։ Ճաշը, թե նախաճաշը դաշտ էր տարվում սայլով։ Սովորականի նման, նախաճաշը լինում էր հաց, ժաժիկ և քամած մածուն, սակայն ոչ թե հնձվորների թվի համեմատ, այլ եռակի, որովհետև օրենք էր՝ հեռուներում եղած դաշտային աշխատավորներին ես ջուրարայի ուտելիքից բաժին տանելը. ինչպես և ճանապարհից անցնող ուղևորներին պարապադրել, որ նստեն-ուտեն, ինչպես և ճամփապարեն վերցնեն։

Ճաշվա ժամին սայլին էին հարմարեցնում երեքից-չորս պուտուկ թոնրան վրայից նոր վերցրած կորկոտաճաշը, փաթաթում կարպետներով, հացով լիքը ջվալների արանքում սեռիկներով տեղավորում աաք-հալած յուղը և սպասարկող երիտասարդները նստելով այդ տաք ուտելիքներով բարձած սայլը, արտ էին ուղևորվում։ Այնտեղ ճաշը մատուցում էին ոչ թե քյասաներով (քրեղան), ինչպես սովորաբար, այլ չոխթրիկներով, իսկ յուղ լցնում ոչ թե շերեփով, այլ պողիկով. սրանք արդեն վկայում էին առատության մասին։

Մի քանի երիտասարդ, հալած յուղով լի պղինձները ձեռքներին, շրջում էին ճաշողների արանքով ու անընդհատ յուղ ավելացնում ճաշի վրա։ Մի քանիսը, քյասաներով ճաշ, լավաշ ու պողիկով յուղ վերցրած, վազում էին հեռակա արտերը, այնտեղի աշխատավորներին տաք ճաշ հասցնելու։

Ջուրարայի՝ արտ տարված ուտելիքը, եթե լրիվ սպառվեր, ամոթալի դրություն կստեղծվեր ռեսի համար։

Բացի դաշտը առատորեն ուտելիք ուղարկելուց, գյուղում ևս պետք է առատաձեռնություն ցուցաբերվեր։ Ոստիկանատան աշխատողներին, կառավարական կողմին, պատահական անցորդներին, բարեկամ-հարևաններին, բոլորին էլ պետք է բաժանվեր ջուրարայի ճաշը։ Սովորական կորկոտաճաշը այդ օրն առանձնակի հարգալի դերում էր և մեծ խորհուրդ ուներ։ Սակայն ռեսի համար այս ամենը դժվար չէր, քանի որ յուղն ու կորկոտը, հացն ու մածունը տանից էին։ Ծանրը այն էր, որ այդ օրը նա մյուզուրին հյուրասիրելու էր խուրուղույով, իսկ ռեսներից ոմանք ոչխարատեր չէին լինում, բայց օրինաղանց էլ չէին դառ-

---

նում է պաշտոնյան։—Կան էղարըմ (արյուն կանեմ),—պատասխանում է պառավը ու իրեն նետում ջրավազանը։ (Պառավին դուրս են բերում կենդանի)։ Վիճաբանահանման միտքը խափանվում է։ Վեճը է կայացվում հօգուտ Արճակ գյուղի բնակիչների, որոնք ճարյուն են թափել։ Վճռվում է էրմանից գյուղը Արճակի սեփականությունը համարել, բայց... Արճակը իրավունք չպիտի համարի ջրի ճանապարհին ընկած գյուղերից ջրի գին վերցնել. այդ իրավունքը մնալու է իշխանությանը։

Դրանից հետո խառակոնիսցիք իրենց վարելահողերը ոռոգում էին Ճյուղ կյետի, կամ, այսպես ասած՝ խառակոնստ գետի ջրով, հատուկ ջրատար առուներ փորելով։

նում։ Նրանք ոչխար էին դնում, թուրք ոստիկանի ձեռքով մորթել տալիս, նրան թողնելով ոտն ու գլուխը, սիրտը, թոքն ու դմակը։ Իր սեփական տանը, թոնրում պատրաստելով այդ հազվագյուտ ուտելիքը, իր ընտանիքի անդամներին մի փոքրիկ կտոր անգամ չէր կարող տալ, որովհետև օրենք էր՝ խուրուղուն անեղծ պիտի դրվեր նվիրատվածի սեղանին։

Մթրլամուտից առաջ, ռեսը ձի նստած, օղու կարճ փարչը խուրջինում, հայտնվում էր արտում, հնձվորներին բոլորին մի-մի բաժակ օղի բաժանում, նազարաչուն ու զունաչուն դրամական պարգև տալիս ու ետ էր դառնում։

Գութանի զուրարա (կյութնի զուրարա): Հյուսնի աշխատանքը թե՛ սեփական գյուղում, թե՛ գավառի քրդական ու քրդախառն գյուղերում, կապված էր գութանատեր գյուղացիների հետ։ Յուրաքանչյուր գութանատեր, որպես կանոն, իր հյուսնի համար պետք է մեկ օր աշխատեցներ իր վիծկին, մեկ օր՝ իր գութանը և մի ոա էլ իր սայլով օրան պիտի տեղափոխեր։ Դա ոչ թե հարգանք էր կամ հարկադրյալ պարտականություն, այլ սահմանված վարձատրություն։

Վիծկի և սայլի գործը այսպես էր՝ որ օրը որ հարմար էր հյուսնին կամ գութանատիրոջը։ Օրինակ, մեկի վիծկին կարող էր գարնանը վարել հյուսնի ոսպի արտը, մյուսինը՝ մի օր գնար նրա աշնանացանը մանդեռեր։ Նույնը և սայլի հարցը։ Մեկը կարող էր հուլիսին հյուսնի մարդագետնից խոտ տանել նրա մարագը, մյուսը՝ օգոստոսին արտից ցորեն տանել կալատեղ, երրորդը՝ սեպտեմբերին կտավատ տաներ և այլն։ Սակայն այդպես չէր սովորույթը գութանի խնդրում։ Մի հյուսն, եթե ասենք, տասը գութանի պայման ուներ Արճակում, տասնհինգը՝ մի ուրիշ գյուղում, ապա գութանատերերը, որոնց գութանը շինվել կամ նորոգվել էր, պետք է միևնույն օրն իրենց գութանները քշեին հյուսնի արտը։ Քսանհինգ գութան կողք-կողքի մտնում էին հյուսնի արտը, քըսանհինգ հորովելի երգ՝ հայերեն ու քրդերեն լեզուներով ու եղանակներով, թնդում էր շրջակայքում։

Գութանի զուրարային չէր լինում նազարազուռնա, օղու բաշխում ու ամենակարևորը՝ մյուդուրին խուրուղու տանելը, սակայն ճաշի բաժանումը, յուղի գործածության առատությունը, բոլորը նույնն էին, ինչ-որ ռեսի զուրարայի օրը։ Նրանք, թե՛ ռեսը, թե՛ հյուսնը, այդ մի օրում գործածում էին այնքան յուղ, որքան որ չէր գործածվում իրենց ընտանիքում վեց-յոթ ամսում։ Զուրարան այն օրն էր, որ նրանք առիթ էին ունենում ցույց տալու իրենց առատաձեռնությունը։

Զավար ծեծել: Զավարն ու կորկոտը ծեծում էին աշնանը, միևնույն օրը։ Ծեծվելիք ձավարի քանակը, յուրաքանչյուր ընտանիքում, կլիներ մոտավորապես չորսից-չորս ու կես չափ։ Զավարը ծեծում էին ծածկից դուրս գտնվող մեծ քարե սանդերում՝ փայտե երկարակոթ դինգերով։

Զավար ծեծելը ազապ աղջիկների գործն էր։ Այն ծեծել տվող տանտիկինը հավաքում էր բարեկամ-հարևան ընտանիքների ազապ աղջիկներից տասներկուսից-տասնչորս հոգի։ Թրջված ցորենը լցնում էին սանդի մեջ, աղջիկներից երկուսը կանգնում էին միմյանց դեմ, համաչափորեն բարձրացնում ու ուժգնորեն իջեցնում էին դինգը՝ սանդի մեջ, իսկ երկուսը, նստած սանդի կողքին, անընդհատ ներս էին հրում դուրս թափված ցորենը։

Երբ հատիկն արդեն թեփահան էր լինում, դատարկում էին, սանդը լցնում նոր ցորենով։ Հին քառյակին փոխարինելու էր գալիս նոր քառյակը և այսպես շարունակաբար։

Բարեկամ-հարևանի ձավար ծեծելու միախմբված ու հոժարակամ այս սովորույթը ևս շատ հնուց էր գալիս և յուրատեսակ զուրարա էր։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Լայնարձակ, դալարադեղ մարդագետինների առկայությունը և առվույտ ու կորնգան ցանելու սովորույթը հնարավորություն էին ընձեռում անասունների կերի առատ պաշար ունենալու։ Վարելահողի հերկման նահապետական ձեը պահանջում էր մեծաթիվ ուժեղ լծկաններ, իսկ կաթով, մածնով, յուղով սնվելու անհրաժեշտությունը նույնպես պահանջում էր կաթնասուններ։

Հացառատությունը արճակցու ոչ միայն տարերքն էր, այլև գոյության նախապայմանը։ Հաց շատ ստանալու համար պետք էր ժամանակին հերկել հողը. լծել ոչ թե սովորական չորս լուծ ունեցող գութան, այլև գութանը փոխով անել։

Արճակի հարյուր վաթսուն տնտեսությունից քսանութը գութանատեր էին, իսկ հարյուրը՝ վիծկի ունեին։ Մնացած երեսուներկու տնտեսությունից միայն երեքն էր, որ ոչ մի անասուն չուներ։ Դրանցից մեկը, հարյուրամյա մի կույր ու անտեր պառավ, ապրում էր իր որբ ու անչափահաս թոռան հետ, երկրորդն ու երրորդը այրիներ էին, որոնց ամուսինները ընիկ արճակցի չէին եղել և Արճակում

հող չէին ունեցել, բացի ամեն մեկը մի-մի խրճիթից։ Երկուսն էլ զոհվել էին քրդի ձեռքով՝ 1896 թվականին։

Արճակում անդործարարություն, անճարություն ու աղքատության բացահիկ կերպար համարվող այրի Տաժու Մարոն անգամ ուներ երկու կով, թեև Մարոն աշնանն իր հորթերը վաճառում էր մսագործին և այդ իսկ պատճառով նրա կովերը միշտ մնում էին երկուսը։ Արճակցիների կեսը իր անասունը չէր խառնում նախրին, այլ գաշտ էր ուղարկում անձնական հոտաղների հսկողությամբ։ Ու, այնուամենայնիվ, Արճակի նախիրը իր մեծությամբ հռչակավոր էր։ Եթե վրա հաստով մեծ եղեռր, ընտանիքներ կային, որ երեսունից ավելի միայն խոշոր եղջերավոր տնտասուն ունեին։

Ոչխարաբուծություն: Համեմատած խոշոր եղջերավոր անասնապահությանը, ոչխարաբուծությունը ավելի թույլ էր զարգացած։ Մոտ քառասուն տնտեսություն էր, որ ոչխար ուներ և այն էլ՝ երեսունհինգից հիսուն գլուխ։ Միայն չորս ընտանիք կար, որոնց ունեցած ոչխարի թիվը հասնում էր հարյուրի։ Մեծ թվով ոչխար ունեցողները վարձում էին հովիվ ու դառնարած, իրենց շուրջըն էին հավաքում հարևան ոչխարատերերի գառներն ու ոչխարները և արածեցնել տալիս գարնան սկզբից մինչև ձմռան գալը, յուրաքանչյուր քառնի համար ստանալով մի արու դառ։ Այսպիսի միացումները կաղմում էին «ջոլեր»։ Արճակում գոյություն ուներ հինգ ջոլ, երկուսը՝ Քյողարի թաղում, երեքը՝ Փոս թաղում։ Ոչխարների թվում հաշվվում էին և այծերը։

Ոչխարներն առավելապես «մաղեղ» կոչված ցեղի էին, իսկ այծերը՝ «չուռ» (դանդուր) անգորական։ Այծի մաղի պահանջի բերումով (չվանի, ջվալի լարանի համար) սակավ պահում էին նաև «մաղ» այծեր։

Ոչխարների թվով Արճակը թեև իր գավառի հայ գյուղերից, ինչպես նաև Թիմարի գավառի հայաբնակ գյուղերից առաջավոր էր, սակայն շատ աղքատ էր հիշատակած ժամանակում ունեցած իր խոշոր եղջերավոր անասունների, ինչպես և նախկինում ունեցած ոչխարների թվի համեմատությամբ։

Ձիաբուծություն: Ձիաբուծությունը ես Արճակում 1896 թ. կոտորածների ժամանակների համեմատությամբ դեռ լրիվ վերականգնված չէր։ Ամբողջ գյուղում քսանևրկու անասնության էր, որ ձի ուներ, որոնցից երկուսը՝ աչքի ղարնվելիք նրժույգներ։ Ձին արճակցու առօրյայում դրեթե շքեղություն էր. ձիով քաղաք կամ այլ աեղեր էին գնում-գալիս, իսկ մնացած ժամանակ ձին համարյա աղատ էր։

Մի քանի չքավոր տնտեսատերեր ու նախրապաններ ունեին էշեր։ Էշ էին պահում նաև հոտատերերը՝ հոտի հետ լինելու անհրաժեշտությունից դրդված։ Էշերի թիվը Արճակում հաղիվ տասի էր հասնում։

Թռչնապահություն: Ձնայած պայմանները ջրային թռչուններ պահելու համար շատ նպաստավոր էին, սակայն արճակցիք հավից զատ ուրիշ թռչուն չէին պահում։ Հավը պահում էին թխսամերերով։ Դրանց թիվը ամռանը շատանում էր, իսկ ձմռանը՝ քչանում։

Կերի ճայթայթումն ու անասունների խնամքը: Խոտհարքներն ու արոտավայրերը գյուղի արևմուտքում ընկած լճափնյա մարգագետիններն էին, ինչպես նաև հյուսիսակողմը տարածված ընդարձակ մարգագեաինները։ Վերջինները, որ կազմում էին «Վերին աաշաերի» սկզբնավորությունը, «Ջագան» ընդհանուր անունն էին կրում։ Խոտհարքները արոտավայրերից տարբերելու միակ նշանները աեղ-աեղ միմյանցից երկու-երեք հարյուր քայլ հեռավորությամբ դրրված մի քանի շիմրի կառրներ էին, որոնք և տեղանքին լավ ծանոթ հոտաղներին աղդարարում էին, որ ավյալ շիմանը «ղուռուղ» է, հետևաբար այդտեղ տնասուն չպեաք է արածեցնել և դաշտային պահակներին (ղուռուղչիներին) հասկացնում՝ պահպանել ղուռուղը պարաաղանց հոտաղներից։ Մարգագետնի խոտը նուրբ էր, բաղկացած մարգախոտից, երեքնուկից, լաբլաբուից և այլ ծաղիկներից։ Խոտը բարձրանում էր մինչև ծնկները։ Եվ այնուամենայնիվ գյուղացիներից քըչերն էին, որ գյուղին մոտիկ դանված արտերից մեկն առվույտանոց չէին դարձրել։ Բացի այդ, արտերում ցանում էին նաև կորնգան։

Ցիմանները (մարգագետինները) հավիտենական խոտհարքներ էին, որ ժառանգաբար պապերից էր անցել թոռներին։ Առվույտը առաաորեն, ցանված օրից մինչև տասը-տասներկու տարի աճում էր, և հնձում էին տարեկան երեք անգամ։ Կորնգանը, որ ուներ մարդահասակ դալար ու հյութեղ ցողուն, առաա բերք էր տալիս մինչև երեք տարի։ Չորրորդ տարին անպայման պետք է հերկվեր ու ցորեն ցանվեր։

Խոտից, առվույտից, կորնգանից բացի, հիմնական անասնակեր էր համարվում հարդը։ Օժանդակ և թանկարժեք կեր էր նաև կաավատի քուսպը։ Թե՛ մարգախոտը, թե՛ առվույտն ու կորնգանը հնձում էին երիտասարդ արճակցիք՝ թրրփանով։

Թըրըփանը գերանգաձև գործիք էր, միայն ավելի երկարավուն և կորություն չունեցող պողպատե շեղբով ու երկար, մեջտեղը մի թզաչափ հավելված ունեցող կոթով։ Այդ հավելվածը մի ձեռքով բռնում էր խոտ հնձողը և հենվում թըրըփանին, մինչ մյուս ձեռքով ավելի վերևից բռնելով, չարժման մեջ էր դնում թըրըփանը։

Թե՛ խոտի և թե՛ մնացյալների խուրձերը կապում էին քաղելուց երկու-երեք օր հետո, երբ արդեն այնքան էին չորացած լինում, որ ներսից փտելու կասկած չէր մնում և միաժամանակ այնքան խոնավություն էին պարունակում, որ չէին փշրվի-թափվի։

Խուրձը կապում էին երկու հոգով և այնպիսի մեծությամբ, որ մի մարդու ուժից վեր էր բարձրացնել ու սայլի մեջ դնել։ Խոտաբույսերի խրձերը կապում էին երկու տեղով, կապը լինում էր դալար եղեգն և կամ խոտից ոլորած պարան։ Խրձերը մնում էին իրենց տեղում, մինչև անասնակերի հարկահանների գալը։

Թե՛ առվույտ, թե՛ կորնգան ցանվում էր գարնանը, գարնանացան ցորենի կամ գարու հետ։ Առաջին տարին նորան խոտաբույսը հնձվում էր հասունացած հացաբույսի հետ, որից հետո մի անգամ էլ էին ջրում։ Հաջորդ տարվանից արդեն կերաբույսը քաղվում էր երկու անգամ։

Անասունների հետ ընդհանրապես խնամքով էին վարվում։ Սակայն գոմեշների նկատմամբ խնամքն առավել էր։ Ամռան ընթացքում արոտի դուրս բերված գոմեշները գնում-ընկղմվում էին մարգագետիններում գանվող մարգկանց ձեռքով փորված, լճակների աաք ու պղտոր ջրերի մեջ։ Մայրամուտին, գյուղ վերադառնալուց առաջ հոտաղները տղմոտված գոմեշներին քշում էին հոսող ջրերի մոտ և լողացնում ու տիղմից մաքրում։ Տանտիկինները նորածին գոմշաձագերին օրը մի ձվաչափ կարագ էին կերցնում, գաշա դուրս չէին թողնում, նրանց առաջ օրը մի քանի անգամ թարմ խոտ կամ առվույտ էին գցում, նախօրոք հին խոտը հավաքելուց հետո։ Երբ գոմշաձագը մի ամսականի էր հասնում, արդեն նրան սովորեցնում էին, բացի կարագից, հում խմոր ես ուտել։ Երկու-երեք օրը մեկ անգամ գոմշաձագերին լողացնում էին աաք շաուկով ու բորակով, կոպիտ, փայտե սանրով սանրում էին և լույսի ներքո մանրամասնորեն նայում ու ոչնչացնում մորթու մեջ գլուխ դրած մակարույծներին։

Գոմեշներին և էգերին (գոմշակովերին) կապում էին փարախի ամենախորքի շայն բաժանմունքում։ Այդ բաժանմունքի մի անկյունում, առաստաղից քիչ ներքև, թամայի վրա գիշերները քնում էր անասնապահը՝ գոմեշներին հսկելու

Գոմեշների բաժանմունքում՝ «կյոմշներանց յարում», շատ ելումուտ չէին անում, երդիկները ավելի կարճ ժամանակով էին բաց թողնում՝ նրանց չանհանգստացնելու նպատակով։

Առվույտ ու խոտ գոմեշներին ավելի շատ էին տալիս, քան «սեատավարին» (կով, եզ), իսկ քուսպը միայն տալիս էին գոմեշներին, նաև հղի կովերին։

Անասնակերը սովորաբար տալիս էին օրը երեք անգամ։ Առաջինը՝ լուսադեմին, երկրորդը՝ միջօրեին, երրորդը՝ մայրամուտին։ Կեր տալուց առաջ բաց էին անում երդիկները, ավլում անասունի տակն ու նոր, չոր փայեն ցանում, ապա մաքրում մսուրում մնացած «կրճոնը» (խոշորավուն հարդի մնացուկ), լցնում նոր հարդ, վրան ցանում խոտ, խոտի վրայից էլ թոնրում աաքացրած ու ձեռքով փշրած քուսպ (գոմեշներին)։

Երկու շաբաթը մեկ անգամ, բացի հղիներից, մնացած անասուններին լողացնում էին աաք ջրով ու բորակով, իսկ ձմռանը, մի քանի անգամ լողացնելուց հետո, գոմեշներին օծում էին աաք ձեթով։

Ձմռանը, օրը մեկ կամ երկու անգամ «կաշաղու» կոչված երկաթե քերիչով բոլոր անասունների մորթը մաքրում էին փայենից։

Ծանր հղի անասուններին ավելի խնամք էին տանում, իսկ ծնի օրերին համարյա միշտ հսկեվում էին մինչև ծնելը, որպեսզի թաց հորթուկի վրա աղ ցանեին և կանգնեին մոտը, մինչև մայրը լիզելով չորացներ, ոտքի կանգնած մատղաշին մոտեցնեին մոր կրծքին, որ մի քանի կում ծծեր (ծծելը չմոռանալու համար, ըստ որում՝ չորս պըտուկից էլ), հետո տանեին կապեին հորթերի բաժնում։ Ծննդկան անասունին անմիջապես խըմեցնում էին մի դույլ տաք ալյուրախյուս. սա շարունակվում էր մի շաբաթ։ Առաջին օրերին անասունին խմեցնում էին գոլ ջուր։

Մատղաշին առաջին անգամ կերակրում էին ինչքան որ նա կարող էր ուտել, երկրորդ օրը՝ մի քիչ պակաս, իսկ երրորդ օրը չէին թողնում ծծելու, ըստ որում, համոզմունք կար, որ, իբր, երրորդ օրվա կաթը, որին կոչում էին «րալաք խիժ» (երկգույն խեժ), չափազանց վնասավոր է նորածին մատղաշին։ Եթե մատղաշը պատահականորեն կերած լիներ րալաք խիժ, նրան խմեցնում էին երկու-երեք գգալ «աեղ-ճյուր» (պանրի մայա)։

Ամեն անգամ նոր ծնած անասունը կթելիս, նրա առաջ էին կանգնեցնում մատղաշը, մեջքին

աղ էին ցանում և մայրը աղը լիզելով, կաթը բաց էր թողնում։ Ծնած օրից մինչև երկու շաբաթ, կովի միայն երկու պտուկն էին կթում և այն էլ ոչ լրիվ։ Դրանից հետո կթում էին երեք պտուկը, նորից ոչ լրիվ։ Միայն քառասուն օր հետո էր, որ չորս պտուկն էլ կթում էին, բայց նորից ոչ լրիվ։

Նորածին հորթուկներին մի քանի ամիս հետո ուղարկում էին մոտակա մարգագետիններում արածելու, իսկ գոմշաձագերին, որոնց ուգզակի ձագ էին անվանում, ներսում էին կերակրում՝ մինչև օգոստոս ամիսը։

Այսուհանդերձ, մաաղաշների սաակելը հազվադեպ երեույթ չէր։ Մատղաշը հանկարծակի հիվանդանում էր ու մի քանի ժամ հետո սատկում։ Եթե հիվանդացածը գառ կամ ուլ էր, մորթում էին, միսը անում խուրուղու, այսինքն՝ ամբողջությամբ ծեփում էին ագի ու ազինթանի շաղախով ու կախում թոնիրը։ Եթե տեղ-ճրի համար գառան ստամոքս էր պետք և ընտանիքում պատահականորեն գառ կամ ուլ չէր սատկել, ապա մորթում էին 5—6 օրական գառ, որովհետև գեռ խոտով չսնված գառան կամ ուլի ստամոքսը ամենաանհրաժեշտ ու հիմնական նյութն էր տեղ-ճրի պատրաստման համար։ Փոքրիկ գառ մորթել կարելի էր։ Այլ էր վերաբերմունքը և սովորույթը խոշոր եղջերավոր անասունների նկատմամբ։ Հիվանդացածը կովի հորթ էր, թե գոմշաձագ, միենույն էր, նրա վզին գանակ չպիտի դրվեր, թողնում էին սատկեր։ Մորթին տիկ էին անում, միսը գցում շներին, իսկ մորթու մեջ հարդ լցնելով, շինում էին խրտվիլակ, վրան աղ ցանում ու առավոտ-երեկո՝ կթելու պահին, դնում մոր առաջ, որը լիզում էր իր «ձագին»՝ չոր մաշկը։ Սակայն այդ ձագակորույսը ուրիշի խրտվիլակով չէր խաբվում։

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Գյուղում կային և՛ ռըմնագիրներ, և՛ խիղարչիներ (տախտակ քաշողներ), և՛ պայտառներ, նույնիսկ՝ ջուլհակներ։ Սակայն սրանք իրենց արհեստով զբաղվում էին, երբ այն պետք էր իրենց կամ գյուղացիներից մեկն ու մեկին։ Նրանք, բացառությամբ ջուլհակների, ասենք՝ պայտառ, խիղարչի, ռըմնագիր, ճիշտ այնպես, ինչպես վարսավիրը, անղչին կամ հեքիմն ու նաղարաչին, իրենց արհեստով օգնում էին համագյուղացիներին, իսկ մնացած ժամանակ զբաղվում երկրագործությամբ։ Մի խոսքով, այդ մարդիկ Արճակից դուրս ոչ ճանաչվում էին, ոչ էլ իրենց արհեստից շահույթ ստանում։ Բացառություն էին կազմում երկու արհեստ՝ գութանի հյուսնությունը և շալվարագործությունը։

Շալվարագործություն: Շալվարագործները մոտ երեսուն տարի առաջ Արճակ եկած ու արճակցիների հետ միաձուլված երեք գհերցի ընտանիք էին և արհեստը բերել էին իրենց հայրենիքից։ Նրանք գործում էին գավառի հայ գյուղացիների պատվերով ու որոշակի վարձագնով՝ թե՛ բալաք, և թե՛ գյավր շալվարներ ու ջեջիմներ։

Գյավր, այսինքն՝ գորշ շալվարը բնական շառանակագույն թելից էր։ Սրա գործելը ամենահեշտն էր ու ամենից էժանը։ Գյավր շալվար հագնում էին չքավորները։

Բնավշա շալվար (բնավշան քրդերեն է և ունի միաժամանակ երկու իմաստ՝ առանց նախշերի, նաև՝ մանուշակ)։ Այն գործվում էր նախօրոք ներկված կարմիր և մուգ կապույտ գույնի թելերից. մեկը գործածում էին որպես հենք, մյուսը՝ սործվածք, և կտորը ստանում էր մի գույն՝ մանուշակագույն։ Մանուշակագույն, այսինքն՝ բնավշա շալվարը հագնում էին ամեն հասակի, դիրքի տղամարդիկ։ Բնավշա շալվար գործելու վարձը գյավը շալվարի գնի կրկնակին էր։

Բալաք շալվար։ Սրա թելերը նույնպես ներկում էին կարմիր։ Բայց գործում էին զոլերով, այսպես՝ մի զոլ սպիտակ, մի զոլ կարմիր։ Կար երեք զոլանի, հինգ զոլանի շալվար, իհարկե, պահպանում էին միայն կարմիր ու սպիտակ գույները։ Բալաք շալվարը գործվում էր առավել թանկ։

Նման արհեստներն այնքան էլ հարգի չէին Արճակում, որովհետև կապված չէին գյուղատնտեսության ամենօրյա պետքերի հետ։

Գութանի հյուսնություն: Ամենահարգի արհեստը գութանի հյուսնությունն էր։ Եվ Արճակն ուներ հյուսների մի քանի ընտանիք, որոնք սպասարկում էին ոչ միայն Արճակի գութանատերերին, այլև Աղաաշ, Մալավա, Քրզվան, Աղկարա, Մաղրա և Մանգան քրդական գյուղերին։

Աշխատանքի վարձը պապենական էր ու անփոփոխ. մի ողջ տարի հյուսնը կատարում էր գութանատիրոջ տան ամեն տեսակ վերանորոգումները (ինչ-որ գութանի հյուսնությանն էր պաականում) և սաանում էր չորս չափ ցորեն։ Բացի ղրանից, գութանատիրոջ գութանը մի օր պետք է աշխատեր հյուսնի համար, նույնը և վիծկին, ինչպես և նրա սայլը պետք է մի սայլառա օրան կամ խոտ բերեր հյուսնի արտից։ Հյուսնը, գութանի աշխատանքի ժամանակամիջոցին, ամեն

օր այցելում էր դաշտում գործող գութաններին և եթե կոտրվել էր որևէ մաս, ապա անմիջապես վերանորոգում էր։ Անհրաժեշտ գործիքները հյուսնը իր հետ ման էր տալիս, իսկ փայտը գութանի հետ միշտ էլ լինում էր, քանի որ տերը աչքի առաջ ուներ վթարումները։

Համաձայնագիր կամ պայմանագիր գոյություն չուներ։ Եթե գյուղի միջի գութանատեր էր, պայմանն այսպես էր լինում՝ գութանատերը գարնան սկզբին մի որևէ թեթև հանձնարարություն էր տալիս հյուսնին, թեկուզ մի թիակ կոթել։ Դա արդեն անխոս առաջարկություն էր. ուրեմն՝ տվյալ գութանատերը որոշել էր այդ հյուսնի հետ պայմանավորվել։

Եթե գավառի գյուղերին էր վերաբերում, ապա գարնան գլխին պատվիրատու գյուղի գյուղապետը գալիս էր ու հայտնում, որ իրենց գյուղացիք որոշել են այս տարի այսինչին հրավիրել իրենց գութանները շինելու։ Այստեղ արդեն անհատական պատվերին փոխարինում էր կոլեկտիվ պատվերը։

Մինչև 1896 թ. Արճակն ունեցել էր բարեկարգ դարբնոց։ 1896 թ. կոտորածներին սպանվել էին եղած հինգ վարպետ դարբինները, ու դարբնոցը հրդեհվել էր։ Այնուհետև ոչ մեկի մտքով չէր անցնում դարբնությամբ զբաղվել։ Դարբնոցի տեղը մնացել էր ավերակ։ Գյուղատնտեսական գործիքների կռելու կամ զոդելու անհրաժեշտության դեպքում գյուղացիք կամ քաղաք էին գնում, կամ դիմում շրջիկ դարբիններին։

ԱՌԵՎՏՈՒՐ

Արճակցիք առևտրականության հանդեպ առանձին արհամարհանք էին տածում։ Գյուղից մի մեծատոհմ ընտանիք, Բորանյան ազգանունով, տարիներ առաջ փոխադրվել էր Վան ու զբաղվում էր կտորեղենի առևտրով։ Արճակցիք այդ տոհմին արհամարհանքով էին վերաբերվում և բարվոք էին համարում օտար վանեցու խանութից գնել իրենց անհրաժեշտ կտորեղենը, քան «Բորանու լաճուց»։

Գյուղում կար երեք սրճարան և երկու մանրավաճառի խանութ, որոնք պատկանում էին ժամանակավորապես Արճակում հաստատված վանեցիներին։

Տան անհրաժեշտ մանր-մունր գնումները կատարվում էին կանանց ձեռքով՝ շրջիկ չարչիներից, որոնք մշտապես այցելում էին Արճակ, և կամ՝ գյուղի հիշյալ խանութների մանրավաճառներից։ Բոլոր տեսակի մանրուքները՝ սկսած թելասեղից մինչև էմալե թասերը, խունկն ու մոմը, համեմունքները, կժերն ու կարասները, ձեռք էին բերում ապրանքափոխանակությամբ։ Փոխանակում էին ցորենով, ալյուրով, չորաթանով, ժաժիկով, յուղով և այլ գյուղատնտեսական մթերքներով։ Եթե գնվելիքը թարմ միրգ էր, ապա մի մաղ ցորենին չարչի մրգավաճառը տալիս էր կես մաղ միրգ։

Սակայն արճակցին իր հիմնական գնումը կատարում էր Աստվածածնի տոնի նախօրեին, այսինքն՝ տարին մեկ անգամ։ Տան ղեկավարը Վան էր գնում ու կատարում ընտանիքի բոլոր անդամների համար նախատեսված գնումները՝ հագուստ, կոշիկ, անկողնու երեսացու և այլն։ Մեծաքանակ այդ գնումները դրամով էին։ Ընտանիքի պանդխտության մեջ գտնվող անդամները միշտ էլ օգոստոս ամսվա սկզբներին փող էին հասցնում գյուղ, որպեսզի, նախ՝ ցանքերը հնձելու վարձը տան և ապա՝ «աստվածածնա բաղարջ անեն»։ Իսկ այն ընտանիքները, որոնք պանդխտության մեջ մարդ չունեին, հետևաբար և կանխիկ դրամ ունենալու հնարավորություն էլ չկար, հիշյալ օրերին վանեցի առևտրականին էին վաճառում իրենց արդեն վարած այսինչ արտի գալիք տարվա բերքի կեսը։ Այդ գալիք բերքը գնահատվում էր արտի մեջ ցանված սերմացուի քանակով և արժեքով։ Եվ այսպես, ապագա հունձի արդյունքի հաշվին տան ղեկավարը ետ էր գալիս քաղաքից, բերելով իր հետ ընտանիքին պետք եղած հանդերձանքն ու կոշկեղենը։

Արտի ապագա բերք գնող առևտրականը կոչվում էր «աշարի խոջա» (կանաչ ցորենի տեր)։ Հունձը սկսվելուն պես գյուղն էր գալիս աշարի խոջան, որը արտատիրոջ պատվելի հյուրն էր, ու մնում էր մինչև բերքի կալսումը։ Կալից հետո նա տանում էր իր բաժին ցորենը, իսկ հարդը արտատիրոջն էր։

Միշտ հաշվենկատ վանեցի խոջան գյուղ գալիս, արտատիրոջ ընտանիքի համար բերում էր էժանագին նվերներ՝ մետաքսե կտորտանքից պատրաստված պոչիկներ (մազերի համար, որ փոխարինում էր ժապավենին), ճակտի կապեր, շլորալավաշ, չորացրած ռեհան, խաղողի թարմ տերև և թարմ միրգ, իսկ իր օրթաղին (բաժնետիրոջը)՝ մի քիչ թեյ-շաքար կամ օղի։ Աստվածածնա տոնից մի քանի օր առաջ գալիս էին խոջայի ընտանիքի անդամները, մասնակցում տոնախմբ-

բությանը, հյուրասիրվում ու վերադառնում, տանելով իրենց հետ և՛ լավ վերաբերմունքի զգացումներ, և՛ սանտիկինների կողմից իրենց հետ դրված բարիքներ։

Տարին մեկ անգամ, ձմռանը, հայտնվում էին Միջագետքի կողմերից եկող թուրք, պարզ հագնված թեչիրները (անասուն գնողները), որոնք հուրախություն անասնատիրոջ, գնում էին առավելապես ծերացած եզներ։

Սակարկելուց հետո, թեչիրները խարանում էին անասունը, տալիս որոշ կանխավճար, թողնում անասնատիրոջ մոտ ու իրենք գնում։ Գնման գործողությունը կատարվում էր ռեսի և մի քանի ոստիկանների ներկայությամբ։ Գարնանը գալիս էին տանելու իրենց անասունները, ու վճարում մնացած գինը։ Պատահում էր, որ մինչև թեչրի գալը անասունը սատկում էր, գյուղացին այդ դեպքում թեչիրին ցույց էր տալիս խարանված կաշին, և թեչիրը տանում էր կաշին, որի արժեքը վաղօրոք տվածի գնի կեսն էլ չէր կազմում։

Այս պարզ, հնատարազ թուրքերը անխարդախ մարդիկ էին։

Գյուղի ոչխարատերերը իրենց ունեցած արու ոչխարները կանխիկ դրամով վաճառում էին Արճակում ապրող միակ մսագործ՝ վաննցի Հովհաննեսին։ Հովհաննեսն, առհասարակ, անասունը մորթել էր տալիս թուրք ոստիկանի ձեռքով և միսը վաճառում թուրք պաշտոնյաներին։ Այս երկու ձեռի անասնավաճառությունն էր, որ արճակցուն դրամ էր բերում։

ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ (ՊԱՆԴԽՏՈՒԹՅՈՒՆ)

Առհասարակ Արևմտյան Հայաստանի գյուղացիությունը, նույնպես և արճակցիք, դրամ վաստակելու համար սովորաբար պանդխտում էին Կոստանդնուպոլիս, որպեսզի կարողանան վճարել պետական բազմապիսի ծանր հարկերը և հոգալ ընտանիքի կարիքները։ Երկար ու դըժվարին ուղին կտրելով, արճակցին նավահանգիստներում, ցնցոտիները հագին, սառնամանիքին, թե շոգին նավերը բեռնողի ու բեռնաթափողի աշխատանք էր կատարում, զրկանքներով լեցուն, կիսաքաղց օրեր անցկացնում, կեղտոտ խաներում (իջևանատներում՝) ապաստանում և «հաջող» դեպքում, ութը-տասը տարուց հետո, նույն դժվարին ճանապարհով հայրենի Արճակ վերադառնում, այնտեղ թողած իր առողջության փոխարեն տուն հասցնելով 30—40 ոսկեդրամ։

Հայ պանդխտի՝ փող վաստակելու առավել հին հանգրվան Կ. Պոլսին, սակայն, անցյալ դարասկզբին փոխարինելու եկավ Բաքուն։

1880—90-ական թվականներին արճակցի պանդուխտների մի փոքրիկ խումբ, դրամ վաստակելու մտահոգությամբ, հասնում է Անդրկովկասի նավթարդյունաբերության կենտրոն Բաքու։ Վեց արճակցի, որոնց ղեկավարում էր մինչև այդ միայնակ Բաքու պանդխտած ու վերադարձած, արդեն «փորձառություն» ձեռք բերած Հակոն (Բարխուդարի գերդաստանից), աշխատանքի են տեղավորվում բուլկիների մասնավոր փոքր փռերում և երեք տարի հետո բավարարվելով իրենց տնտեսած դրամով, հայրենիք վերադառնում այնպես, ինչպես եկել էին՝ միացած պարսից առևտրական քարավաններին։ Դա 1895 թվականի գարնանն էր։

1896 թ. կոտորածի ժամանակ արճակցին թալանվում է մինչև վերջին շյուղը։ Գավառի խաղաղված քրդերից և Վանի թուրքերից ծանր վաշխերով անասուն ու գործիք վարձու վերցնելով, արճակցիք հավաքում են արտասովոր առատ բերք և ընտանիքներն ապահովելով հացով ու ցանքով կրկին դիմում են պանդխտության։ Սա ավելի շուտ նման էր գաղթի, քան պանդխտության, երբ հարյուր անից միայն մեկն էր գնում։ Այժմ գնում են միանգամից հիսուն տղամարդ, որոնցից չորսը՝ ընտանիքներով։

Արճակցի տղամարդիկ առաջ են շարժվում աշխատելով ու աշխատանքի արդյունքով սընվելով։ Բաքու հասնելով, Հակոն ծանոթներից տոկոսով դրամ է վերցնում և հիմնում ընկերովի բուլկու փուռ, հետևյալ ձևակերպումով՝ ինքը փռատեր ու ավագ վարպետ, եղբայրը ևս ավագ վարպետ, կինը՝ գանձապահ, գրագետ ու հաշվումներում ընդունակ Համբարձումը (Փանոյի Խամբոն) հաշվապահ, իսկ մնացյալները բանվոր ու բուլկի վաճառող։ Վերջիններս պետք է մասնատեր համարվեին փռան հիմնադրման վրա եղած պարտքերին, սակայն ոչ շահույթին։ Մի խոսքով, չարաշահվեին։

Բուլկի վաճառողները զամբյուղներով բուլկին հասցնում էին բանվորական ավանները, վաճառում՝ ու դրամը հաշվում-տալիս հաշվապահին։

Որոշ ժամանակ անց, Խամբոն արճակցիների առաջ բացում է իր ծրագիրը՝ քսան տարվա պայմանագրով վարձել Ծովային մեծ (Большая морская) փողոցում գտնվող մի բարձր

շենքի ամբողջ նկուղը, իրենց բոլորի անախսած գումարը ներդնել և բաց անել ավելի ընդարձակ բուլկեղենի փուռ։ Նկուղի հարմարավետ ու լուսավոր չորս սենյակից մեկը ծառայեցնում են որպես մթերապահեստ, իսկ երեքը՝ փոի հետ կապ պահպանողների համար ննջարան։ Հաշվապահի ու գանձապահի կարիք այլևս չի լինում, յուրաքանչյուրն իր վաստակած բուլկեղենից ստացած շահույթի տերն է դառնում։ Փուռը կոչվելու էր «Խլոյան Համբարձում և արճակցի ընկերություն»։ Հայրենիք դրամ փոխադրելու գործողությունը, որ կապված էր ռուսերենի հետ, հանձն պիտի առներ, «Երկրից» նոր միայն եկած ուսուցիչ Մարգար Հյուսյան-Հովհաննիսյանը իր հորեղբորորդի Գալուստի հետ։ Փողի փոխադրումը պիտի կատարվեր Վանի հայտնի վաճառական Մարգար և Գալուստ Ջիգեչյան եղբայրների վաճառատան միջոցով։

«Հ. Խլոյան և արճակցի ընկ.» փուռը բացվելուց անմիջապես հետո, ուսուցիչ Մարգարի ջանքերով հիմնադրվում է նաև «Արճակի կրթասիրաց միությունը» (Նախագահ՝ Մարգար Հյուսյան-Հովհաննիսյան, գանձապահ՝ Համբարձում Խլոյան)։ Միության ծրագիրն էր՝ «Յուրաքանչյուր պանդուխտ արճակցի, որտեղ էլ նա պանդխտած լինի, ինչ զբաղմունք էլ ունենա, անկախ այն հանգամանքից գյուղում ընտանիք ունի, թե ոչ, կամ Արճակի դպրոցը հաճախող երեխա կա, արդյոք, գյուղում եղած ընտանիքում, պարտավոր էր պանդխտության մեջ վաստակած իր դրամի երկու տոկոսը հատկացնել գյուղի դպրոցի օգտին»։ Չէին մերժվում և առանձնակի նվիրատվությունները։

Միությունը հասավ իր ծրագրի իրագործմանը։ Երկու արճակցի, որ պանդխտել էին Տաշքենդ, երեք հոգի էլ՝ Թիֆլիս, առանց ստանալու, փոստով Խլոյան Համբարձումին էին ուղարկում դպրոցին հասանելիք տոկոսները և նամակով տեղյակ պահում նախագահ Մարգարին։ Հավաքված դրամը միության նախագահն ուղարկում էր Արճակի դպրոցում պաշտոնավարող ուսուցիչներին, միաժամանակ նամակագրական կապ պահպանելով ուսուցիչների ու դպրոցի հոգաբարձուների հետ։ Հիշյալ միության ջանքերով Արճակի դպրոցը դասվեց Վանի շրջակա գավառների առաջնակարգ դպրոցների շարքը, իսկ 1908 թ. հետո, ամենաառաջինը՝ իր բազմահատոր գրադարանով։

1896 թ. ջարդերից հետո, Պարսկաստանի առևտրական քարավանները փոխեցին իրենց երթուղին։ Արճակի միջով այլևս քարավան չէր անցնում, և արճակցի, ինչպես և մյուս գյուղերի, պանդուխտները ղրկվում են քարավաններին միանալով Պարսկաստան, այնտեղից էլ Կովկաս, մանավանդ Բաքու, հասնելու հնարավորությունից և սկսում են Թուրքական սահմանն անցնել քուրդ վալագների (ուղեցույց) ընկերակցությամբ։ Պայմանավորված օրը վալագները գալիս են Արճակ, պանդուխտներից յուրաքանչյուրը մեկական ոսկի հանձնում է վալագի կողմից վստահված որևէ արճակցու ու ուսերին հինգ օրվա ճամփապարեն, մթնով, գաղտագողի ղուրս գնում։ Գիշերները քայլելով, իսկ ցերեկները թաքնվելով, հինգ օրվա ընթացքում նրանք անցնում են Թուրքական սահմանը։ Վալագների միջոցով ուղարկվում էր առմսակ՝ անվտանգ անցման նախօրոք պայմանավորված խոսքերով։ Վալագները Արճակի ծանոթին ցույց տալով առմսակը, ստանում էին իրենց վարձը։ Նույնն էր վերադարձը։

Եթե մինչև նոր փոի գոյությունը արճակի պանդուխտները Թուրքական սահմանն անցնելուց հետո, օրավարձով աշխատանք կատարելով, պետք է գնացքի տոմսի գին վաստակեին, ապա նոր փուռը հիմնվելուց հետո առաջադեմ ու նահապետական հոգու տեր Խամրոն ստեղծեց նոր միջոցներ։ Առաջվա նման բոլոր բուլկիագործ արճակցիները նրան էին պահ տալիս իրենց խնայողությունները, և Խամրոյի մոտ միշտ էլ բավականաչափ դրամ լինում էր։ Վանի գավառից պանդուխտները հասնելով Իգդիր, մի հեռագիր էին ուղարկում Բաքու, անգիր արած հետևյալ հասցեով՝ «Բաքու, Բոլշայա մորսկայա, ուգլ Զադրով, բուլկեղենի փուռ, Խամրոյին՝ Այսինչ-Այսինչյանից, Իգդիր, փոստ, ռսա հարցման»։

Խամրոն հեռագրով ուղարկում էր դրամը։ Բաքու հասած պանդխտին մեկի հետ ուղարկում էր հնավաճառանոց՝ հանդերձ գնելու, ու մի քանի ժամ հետո արխավոր վասպուրականցին արդեն լողացած ու հագնված, Խամրոյի փոի սենյակներից մեկում, թախտին պառկած, հանգստանում էր։

Հաջորդ օրը Խամրոն նրան աշխատանքի էր դնում ու հարցնում, թե որքան դրամ է պետք «Երկիր» ուղարկելու համար։ Ինչքան որ ասվեր, այնքան էլ ուղարկում էր։ Դրամը Խամրոն ետ էր ստանում, երբ պանդուխտն արդեն վաստակ ուներ։ Նման վերաբերմունք Խամրոն ցուցաբերում էր ոչ միայն իր համագյուղացիների, այլ «Երկրից» եկած բոլոր «աղեյներաց» հանդեպ։

Արճակցոց փուռը հռչակ հանեց, շահելով ղարաբաղցիների ու շամախեցիների համա-

կրանքը։ Այն դարձավ «Հայաստանցոյց» հանդիպման վայր։

Արճակցի պարոն Մարդարը խամբոյի փոից մի քանի տուն հեռու հիմնեց լրագրավաճառանոց։ Դա բավական էր, որ արճակցիների մեծամասնությունը թողներ բուլկիագործի ու բուլկիավաճառի գործն ու դառնար լրագրավաճառ ու լրագրասար։

«Մալայա մորսկայա» փողոցում գտնվող «Դավլեանոյե բյուրո-Նոր լույս» ընդարձակ ու լուսավոր գրասենյակը դարձավ բաքվեբնակ հայ մտավորականության սիրելի հավաքատեղին։ Պարոն Մարդարը մեծ քանակությամբ ստանում էր թե տեղական, թե Թիֆլիսի, Պետերբուրգի ու Մոսկվայի օրաթերթերը և բաժանում հինդ կրպակի ու յոթանտասունհինգ լրագրավաճառի վրա։

Լրագրավաճառներից յոթանասունն արճակցի էր։ Նրանք ընթերցում էին հայերեն լրագրեր, իրենց ձեռքով բաժանող «Մուրճը», «Հասկերը», «Աղբյուր-աարաղը» և այլն, ու օր-օրի ընդլայնվում էր նրանց մաահորիզոնը։ Երբ այդ լրագրավաճառները «Երկիր» էին վերադառնում, իրենց հետ տանում էին լուսավոր մտքեր։

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ

Պատերի շինանյութը անտաշ քարն ու հում աղյուսն էր, ծածկերի ու դռների փայտը՝ գյուղում առատորեն աճող բարդին։

Նույն հարթության վրա գտնվող, նույն մարգագետիններով և նույն աղի լճով օղակված երկու գյուղերի՝ Արճակի և Խառակոնիսի տնաշինարարությունը արտաքնապես միատեսակ էր։ Սակայն խառակոնիսցիներն իրենց շինությունների պատերը շարում էին աղյուսաձև կտրտված ու արևի տակ չորացրած չիմբերով և միայն վերջին տարիներին էին գործածում հում աղյուս, այնինչ Արճակում անհիշելի ժամանակներից տները, միահարկ աղքատիկ խրճիթներից սկսած մինչև երկհարկանիները, հում աղյուսից էին։ Չիմրը Արճակում օգտագործում էին միայն ախոռների երդիկները փակելու համար։

Բակ: Սա մեծ մասամբ պարիսպ չուներ, իսկ պարսպապատվածներից քչերն էին, որ դարպաս ունեին։ Դարպաս փակելու սովորություն չկար։ Յուրաքանչյուր բակ ուներ իր ջրհորը։ Ջրհորի բերանը փակում էին տափակ քարով։ Ջրհորի կողքին դրված էր լինում պղնձե կլայեկած փարխաչը (դույլ)՝ ճիլ կոչված մարդագետնային ամուր բույսից գործած պարանով։ Ջրհորներն առհասարակ ունենում էին հինգից յոթ մետր խորություն։ Բակի ջրհորի ջուրը օգտագործվում էր տնտեսության մեջ, ամեն ինչում՝ խնոցի հարելիս, ճաշ եփելիս, բացի խմելուց։

Ամռանը բակերում էին դրվում գյուղատնտեսական բոլոր տեսակի իրերը, ինչպես նաև ղանաղան պուտուկներ։ Բակերում էին շարում նաև աթարը։

Տուն կամ թոնրատուն: Փոքրիկ սրահի ներսում բացվում էր թոնրատան դուռը։ Թոնրատունն ուղղակի կոչում էին տուն։ Տունը բնակարանի ամենակարևոր ու ամենաընդարձակ մասն էր։ Տունը ներսից հենված էր չորս միաչափ բարձր ու հաստ փայտե սյուների վրա։ Տան առաստաղը՝ ծածկը սյուների մասից, աստիճան առ աստիճան բարձրանում էր և թոնրատանը տալիս էր գմբեթաձևություն։ Կտուրի այդ ձևի ծածկը կոչվում էր «կուրա»։ Կուրան վերջանում էր քառակուսի երդիկով։

Երդիկը ծառայում էր թե՛ ծխահանության, թե՛ օդափոխության և թե՛ լույսի համար՝ որպես միակ միջոց, մանավանդ որ ձմռանը ոչ միայն տան, այլև սրահի դուռն էլ փակում էին։

Տունը ծառայում էր ամբողջ ընտանիքին թե՛ որպես ննջարան, թե՛ ճաշասենյակ, թե՛ աշխատասենյակ և թե հյուրասենյակ։ Տան երդիկի ներքո տեղադրվում էր թոնիրը, որով եփում էին կերակուր կամ ջուր ու կաթ էին տաքացնում, հաց թխում։ Ձմռանը թոնրան շուրջն էին նստում։

Տան մի պատի երկարությամբ կառուցվում էր հսկա քառառա «թաշիրը» (տախտակե երկմասանի ամբար)։ Թաշիրը ներսից, ուղիղ մեջտեղից բաժանված էր լինում երկու մասի՝ ցորենի ու ալյուրի համար։ Թաշիրն իր բարձրությամբ առաստաղից ցած էր լինում մեկ մետրով։ Նրա առաստաղին լինում էր երկու դռնակ՝ ցորեն և ալյուր լցնելու համար, իսկ առաջամասի ներքևից՝ երկու անցք, շարժական կափարիչներով՝ ալյուր կամ ցորեն բաց թողնելու համար։

Թաշրի գլխին էին դնում աշնան մսացուի համար մորթված, նախօրոք աղ արած և ղոլերի

րաժանված մորթիները, որոնց սովորաբար անվանում էին «չարխի զոլեր»։ Տանտիկինները թաչրի գլխին էին շարում իրենց եփած օճառների մեծ-մեծ գլուխները, փթերով քարաղերը՝ խոնավությունից զերծ պահելու համար, և հաղար ու մի բան։

Թաչրի ներքևն էին կործում խմորի տախտակե տաշտը, վրան էլ՝ դարաղած կաշե ռուփրաները։ Այնտեղ էին դնում կողքից կլոր անցք ունեցող կավե աղամանը, հասարակ կավն «սախնները» (տաշտի ձևի կավե ամանը՝ լվացք անելու համար) և «չողթրիկները» (սախնի ավելի փոքր տեսակը՝ չորթան արորելու և այլ պետքերի համար)։

Տան պատերին խփված էին լինում փայտե ցցեր՝ զանազան իրեր (մաղ, խարաղան, դդալի հատուկ ղամրյուղ և այլն) կախելու համար։ Դռան ետևի հատուկ հարմարանքից, վաղ գարնանից մինչև ուշ աշուն, կախված էր լինում խնցե «տիկը» (խնոցի)։ Այնտեղ՝ փայտե պատվանդանին դրված էին լինում ջրի կժերն ու պղնձե կլորավուն թասը։

Դռան մոտի պատի երկարությամբ, մի-մի թզաչափ փորված փոսիկների մեջ կանգնեցնում էին հսկայական պուտուկներ՝ լցված կաթով ու պինթանով։

Թոնրատան ամենավերևի անկյուններում, փայտե կոպիտ պատվանդանի վրա, դարսում էին թոնրատանը քնողների անկողինը և ծածկում կանաչ-կարմիր վանդակավոր ջեջիմներով։ Պատերին էին հենում գիշերները անկողինների տակ փռվող, իսկ ցերեկը կոլոլվող խսիրները։ Այս ամենին երբեմն գումարվում էր նաև քարե մի փոքրիկ սանդ՝ քարե դինդով՝ կանչրակ ու աղ ծեծելու համար։

Տան հողե հատակը միշտ բաց էր լինում, բացի թոնրատան վերևի կողմից, ուր փռված էր լինում մեկ կամ երկու խսիր, վրան էլ նույնքան թաղիք։ Հանդիսավոր օրերին թաղիքների վրա մինդարներ (ներքնակիկներ) էին փռում և պատի տակ բարձեր շարում։

Եթե հարուստ կամ քաղաքի նիստուկացին ձգտող ընտանիք էր, ապա փռվածքը ավելի ընդարձակ էր արվում և բարձ ու մինդար միշտ էլ լինում էր։ Տանը՝ դռան մոտիկ, անպայման լինում էր մի փոքրիկ պատուհան, այնտեղ տարին բոլոր դրվում էր ձեթով լի փարչ և մի քանի հողե կամ թիթեղե տափակ ճրագ, նույնպես ձեթով լի՝ ախոռ, գոմ, խորթանոց տանելու համար։ Տան վեղեի սյունին խփված մի ափաչափ տախտակի վրա դրվում էր թիթեղե բարձր պատվանդանավոր ճրագը՝ ընդարձակ ու մութ թոնրատան միակ լուսատուն։

Տան պատի մեջ բացվում էին մեկ կամ երկու մառանի դռները։ Ներսի մառան կոչվող այդ բաժանմունքները ընտանիքի առավել երիտասարդ զույգի համար ննջարան էին ծառայում։ Տան պատերից մեկում լինում էր փոքրիկ դռնակով մի տոլաբ (պահարան), որի բանալին գտնվում էր տան ղեկավար տղամարդու ձեռքին։ Այնտեղ նա պահում էր զանազան կարևոր թղթեր և իր օղու փարչը։

Սրահի մեջ բացվում էր մեծ մառանի դուռը։ Այստեղ դրվում էր ամբողջ պարենը։ Մեծ մառանի բանալին գտնվում էր տան ավագագույն տնտեսուհու մոտ։ Ինչպես տունը, այնպես էլ մառանները լույս ստանում էին երդիկից։

Ախոռ (փայախ): Փայխի սրախը շինված էր տանը կից։ Սրահները երբեմն լինում էին երկուսն իրար մեջ՝ փայախները ցուրտ հոսանքից պաշտպանելու համար։ Ձմռանը անասուններին տրվելիք օրվա կերը, այն է՝ սակառներով (մեծ եղղով) հարդ ու խրձերով խոտ, փայխի սրախում էին դնում։ Սրահից հետո սկսվում էր փայախը։ Փայախը բաղկացած էր լինում մի քանի նեղ և երկար բաժանմունքներից։ Փայախի այդ բաժանմունքները անվանվում էին լարեր, օրինակ՝ «դանա-գոլումներաց լար», «եզներաց լար», «կյոմըշներաց լար» և այլն։ Լարերը շինվում էին իրար մեջ։ Բացի սրահների ու ամենաառաջին լարը սրահից բաժանող դռնից, ուրիշ դուռ չէր դրվում, որպեսզի լարերի ջերմությունը փոխանցվեր մեկը մյուսին։ Փայախները, բացի սրահի հատակից, բոլորն էլ սալարկված էին լինում։

Յուրաքանչյուր լարի երկարությամբ հաստ կաղնե սյուներ էին շարված՝ իրարից երկու-չորս մետր հեռավորությամբ։ (Սյան փայտը ամուր ծառատեսակից էր, որպեսզի դյուրաբեկ չլիներ)։ Սյուների ուղղությամբ մեծ-մեծ սալաքարերից մսուրներ էին կապված, յուրաքանչյուր մսրան սալի վերնամասում մի ծակ կար արված, որտեղից ամրացված էր անասուն կապելու կանեփե պարանը կամ երկաթե շղթան, նայած կապվելիք անասունի ուժին։

Սալարկված հատակը աննշմար թեքություն պետք է ունենար, իսկ ետնամասի մեջտեղը համարյա փոսանման էր լինում, որտեղ օրվա ընթացքում հավաքվում էր անասնաղբը։ Առաջին լարը բաժանված էր լինում երկու մասի, հատակից կես մետր բարձր ու ցածր։ Բարձր մասում,

պատի մեջ, լինում էր բուխարին, այս մասը կոչվում էր փայլխի հօդա: Ձմռանը փայլխի հողայի բուխարին օրը երկու կամ երեք անգամ վառում էին, հատակին կտավատի բալմ կամ չոր խոտ էին սարածում, որովհետև տան անդամները սիրում էին նստել այնտեղ։

Համրա (ունևոր) ու անվանի տնատերերի այդ հողաններում էին հավաքվում թաղի ամեն տարիքի տղամարդիկ։ Նման փայլխի հողաններն արդեն կոչվում էին դիվանխանա: Դիվանխանաներում, նայած տանտիրոջ ու հավաքվող մարդկանց նախասիրությունների, պատմում էին հեքիաթներ, հին հուշեր, խոսում ներկա անցուդարձերի մասին, ընթերցում դյուրըմբռնելի վեպեր (Խրիմյան Հայրիկ, Րաֆֆի, Պռոշյան)։ Երբեմն էլ, մի քանի ծերեր թուղթ էին խաղում։ Նման դեպքերում դիվանխանայում տիրում էր լռություն։

Առաջին լարում, ուր դուռն անընդհատ բացվում-կողպվում էր, ուր մինչև կես գիշեր ճրագ էր վառվում, կապվում էին դանա-դոլուները, այսինքն՝ խոշոր եղջերավորների մինչև երեք տարեկան մատղաշները։

Երկրորդ լարը ևս բաժանված էր լինում երկու մասի, նորից ոչ թե միջնորմով, այլ հատակի բարձրությամբ ու ցածրությամբ։ Առաջին մասը երկրորդից փոքր էր լինում, հատակը կես մետրաչափ բարձր։ Այս մասում էր լինում ջրհորը և նրան կից՝ քարե մեծ գյուռը: Գյուռի վերևում, ցցից կախված էր լինում փարխաչը՝ իր ճլե պարանով։ Ջրհորի ջուրը օգտագործվում էր անասուններին ջրելու և աղբը թրջելու համար։

Ջրհորին կից, բավական լայն տարածությամբ, ավելի խնամքով սալարկված հատակից դեպի դուրս ջրատար ծածակն էր լինում, որտեղից դուրս էր հոսում հատակին թափված ջուրը։ Սալարկված հիշյալ մասը կոչվում էր չոլ: Ձմռանը չոլումն էին լողացնում անասուններին։ Եզներին՝ ողջ ձմռան ընթացքում միայն մի քանի անգամ, գոմեշներին՝ պարբերաբար, տասն օրը մեկ, իսկ ամիսը մեկ անգամ էլ օծում էին կտավատի տաքացրած ձեթով։

Եթե չոլում որևէ գործ չէր լինում, ապա ծածակը խցանում էին խոտով։ Գոմեշների լարերի սյուները, որպես բացառություն, լինում էին երկշար։ Ետնակողմի սյուներից մի երկուսի արանքում, առաստաղին մոտիկ, անասնապահը կապում էր իր թառման: Գիշերները նա այնտեղ էր քնում, որպեսզի անմիջապես տեղյակ լիներ անասունների վիճակին, քանի որ քիչ չէր պատահում, որ հանդուգն արուները հենց մսուրում շըղթայակապ դրությամբ ևս հարձակվեին միմյանց վրա։ Այդ իսկ նկատառումով էլ նրանցից հեռու էին կապում էգերին (գոմշակովերին)։ Բոլոր լարերի մսուրներն էլ մեկ-երրորդական մասով թաղված էին լինում հողում, այնպիսի ամրությամբ, որ ոչ մի ուժ չկարողանար ծանր սալաքարերը տեղահան անել։ Մսուր կապող վարպետները ևս որմնադիրների չափ հարգվում էին։

Փայլխի յուրաքանչյուր լարի առաստաղին լինում էր մեկից մինչև երեք փոքրիկ երդիկ։ Կտուրում, այդ երդիկների շուրջը, տեղադրված էին լինում լայն ու ծակ անիվ հիշեցնող չիմրեր (յուրաքանչյուրի կողքին կլորաձև մի մեծ չիմբ)։ Ձմռանը հենց փայլխի միջից, թիակի կոթով կիսով չափ ետ էին հրում չիմրը, բաց անում երդիկը և թիակի կոթով էլ առաջ էին քաշում չիմրն ու փակում երդիկը։ Երբ երդիկը բաց էր լինում, այնտեղից ելնող գաղջ գոլորշին սպիտակ ամպի էր նմանվում։

Հօդա (սենյակ): Հողան շինված էր լինում տնից անջատ։ Հողան առհասարակ երկհարկանի էր լինում, հարթ պատերով, ներսից ու դրսից սվաղած, ապակե փեղկեր ունեցող մեծ ու երկաթապատ լուսամուտներով, բաղկացած միջանցքից և մեկից մինչև չորս սենյակից։ Ջեռուցումը կատարվում էր թիթեղե վառարանով։

Հողան նախատեսվում էր նորապսակների համար, սակայն մինչև 1908 թ. աշունը, տերերի մտքով անգամ չէր անցնում դրանք վայելելու, որովհետև իշխանությունը օգտագործում էր իր կարիքների համար, իհարկե, առանց որևէ փոխհատուցման։ Մինչև հիշյալ թվականը արճակցիք բավարարվում էին միհարկանի հողաններով։ Դրանք ևս տաքացվում էին թիթեղե վառարանով և ծառայում էին որպես հյուրասենյակ կամ նորապսակների առանձնասենյակ։

Հողանների հատակն ու առաստաղը տախտակամած չէր լինում։

Խորթանոց կամ ցանոց: Խորթանոցը, որ ծառայում էր, նախ, որպես ցախատուն, կառուցվում էր բակի հեռավոր անկյունում։ Դա ջատ պարզ, քառանկյունի մի շենք էր, ուր ձմռանը դարսում էին հսկայական քանակությամբ փթիր ու տառթ, լցնում ցան, ոչխարի կտըսոր, կալատեղի խըզուլ, աշնանը՝ ըլուրներից բերած դյազ ու ծառերից կտրված չորացած ճյուղեր։ Ձմռանը խորթանոցի մի կողմի վրա էին շարում երկրագործական առարկաները (դութան, վիծկի, լուծ, մանգեռ, ատի, կամ, ջարջառ, անվադող, խոփ, և այլն)։ Խորթանոցում էին դարսվում նաև ցա-

խավելներն ու անային ավելները, չգործածվող կողովներն ու մեծ-մեծ սակառները։ Խորթանոցի պատերին խփված ցցերից էին կախվում աշնանն աղջիկների ձեռքով ռբրված տուղտի արմատներով փոքրիկ խրձերն ու հոտաղների հյուսած ճլճլուկի մի մատնաչափ պարանների կծիկը, որ ծառայում էր որպես գործվելիք խսիրների հենք։ Այնտեղ էին դրվում նաև խսիր գործելու համար բերված ճլերի հսկայական խրձերը։ Խորթանոցի մի կողմում, միմյանց կողքի հորվում էին պանրի ու ժաժկի պուտուկները, ինչպես նաև պատից կախված առանձին կողովներում էին դարսվում զանազան տեսակի բանջարների չորացված գալերը։ Այս ամենը՝ ձմռանը, իսկ ամռանը խորթանոցը դատարկվում էր։

Գոմ: Գոմը շինում էին բակում։ Դա երբեմըն առանց սյան էր լինում (նայած գոմի մեծությանը)։ Գոմի երդիկը երբեք չէին փակում, ոչ էլ հատակի անասնաղբն էին մաքրում։ Գոմում ձմռանը պահում էին ոչխարներ, այն էլ օրվա որոշ հատվածում, մնացած ժամանակ նրանք մնում էին դրսում, այսինքն՝ բակում, ուր խոտ էին ուտում։ Եթե գոմի հատակը շատ թաց էր եղել և դուռը բաց թողնելով էլ չէր չորացել, ապա ոչխարներին ներս քշելուց առաջ չոր փայեն էին շաղ տալիս հատակին։

Գարնանը, ծինն սկսվելուն պես, գոմի մի անկյունում կապում էին բարալիկ փայտիկներից, չվանով իրար միացրած, մի մետր բարձրություն ունեցող միջնորմ, որին անվանում էին չող: Չողի ետեն էին պահում գառնուկներին, նրանց ծնոտի բարձրության համեմատ խփված ցցից կախելով խոտի խրձիկ, որը նորոգում էին օրը մի քանի անգամ։

Գոմի դուռը լինում էր տախտակե, իսկ կողպանները նահապետական փայտե փականներն էին, փայտե բանալիներով։

Բոլոր նպատակների համար կառուցված շինությունները, կաթելքից զերծ պահելու համար, երեք-չորս տարին մեկ անգամ սվաղում էին։

Ոչխարի բակ (սյյակ): Պյակ ունենում էին մեծ թվով ոչխար ունեցողները, որոնք իրենց շուրջն էին հավաքում քիչ թվով ոչխար ունեցողների ոչխարներն ու կազմում էին հոտ՝ ջոլ. որի տերը կոչվում էր **չոլատեր**: Ջոլատերերի պյակերը լինում էին ընդարձակ, առանց ծածկի, պարսպապատ մի տարածություն փայտե ցանկապատաձև դռներով և փայտե փականքով։ Վաղ գարնանից մինչև ուշ աշուն, երբ այլեւս ոչխարը դաշտ չէին ուղարկում արածելու, ջոլի բոլոր ոչխարները գիշերը այդ պյակերում էին հավաքում, որպեսզի հովվին հնարավորություն ընձեռվեր գիշերով ոչխարն արոտ քշելու։

Հովիվները, եթե քուրդ վարձկաններ էին, իրենց թաղիքե թիկնոցի մեջ կոլոլված, քնում էին պյակերի դռան մոտ։

Մարագ: Մարագը սովորաբար կառուցվում էր գյուղից դուրս, յուրաքանչյուրն իր կալատեղին կից։ Մարագը տարածությամբ մեծ լիներ, թե փոքր, ունենում էր խիստ բարձր ու հաստ կավածեփ պատ, առանց ծածկի, ներսից խոր, և փայտե ցանկապատաձև լայն դուռ ու փայտե փական-բանալի։

Մարագը հարդ էին լցնում ու շարում լին հսկայական դեզը։

Սովորաբար հարդ լցնելու ձևն այս էր. որքան հնարավոր էր մեծ թիակներով, որ կոչվում էր րաֆրիկ, հարդը քշում էին մարագի մեջ, հետո էլ փայտե սանդուղքը դրսից դնում էին պատին կից, հարդը մեծ կողովներով շալակած, բարձրանում սանդուղքով ու հասնելով պատի վերջավորությանը, կողովը շրջում էին ցած՝ մարագի ներսը։ Խոտն էլ այսպես՝ մի հոգի խուրձն էր տալիս, մյուսը դեզը շարում։ Այդպես էլ, թե՛ հարդը, թե՛ խոտը պեաք է մնային բացօթյա։

ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ

Ամանեղեն: Ամանեղենն առհասարակ երեք նյութից էր, փայտե՝ խմորի տաշտ, շերեփ, դդալ, պղնձե՝ թաշտ, ջուր տաքացնելու մեծ կաթսա (պղինձ), ջրհորից ջուր քաշելու դույլ, ձվածեղ եփելու լյանդառ (տապակ), օրվա ճաշի յուղհալիկ, ջուր խմելու կլորավուն թաս և սեղանին դրվելիք սկուտեղ (պղնձե ամանեղեն առհասարակ քչերն էին ունենում) և կավե՝ տանը գործածվող բազմապիսի ու բազմաթիվ ամաններ։ Վերջինս ըստ տեսակի բաժանվում էր երկուսի՝ **կաղնձեղեն** և **պռանե**: Կաղնձեղեն էր կոչվում Վան-Տոսպ գավառի Գիրաշեն գյուղի ամանեղենը, որ պատրաստում և վաճառքի էին հանում այդ նույն գյուղի բնակիչները։ Հիշյալ ամանեղենը թեթև էր ու բաց գույն ուներ։ Կային նաև ջնարակածներ, որ կոչվում էին **կանաչիկ** (դուրսն ու ներսը կանաչ էր)։ Գիրաշենից էին գնում խնոցին, ջրի կուժը, փարչն ու պողիկը, ջըրան ու չողթրիկը, կարասն ու սեռիկը, կովկիթն ու նամիկը, ինչպես և տարբեր մեծության, մեծ մասը կանաչ ջնարակած քյասան ու կուռիկը։ Ակայն կաղնձե ամանները, լինեին պարզ, թե ջնարակած, այնպիսի շերմադիմացկունություն

չուններին, ինչպես պոտնե ամանները։ Պոտինը հողի մի որոշակի տեսակի անունն էր, որ ուներ շագանակի գույն և կպչուն էր։ Նման մի պոտնոց կար Արճակի դաշտում, որտեղից էլ բերում էին թե՛ թոնրի, թե՛ պուտուկ շինելու հողը։ Պուտուկ շինում էին այդ գործում հմտացած շքավոր կանայք։

Շաղախված պոտինը մոտ երկու շաբաթ պահում էին, չորս օրը մեկ անգամ հատակին փռված, պարզված, մազազերծված մորթու վրա ոտքով լավ տրորելով և քիչ-քիչ ջուր տալով, փափկեցնում էին։ Հետո, լայնշուրթ բյաստների կամ չոլթրիկների շրթերի վրա սկսում էին շինել ամանը՝ փորից բարձրանալով բերանը։ Մի քանի օր հետո, որոշ չափով պնդացած այդ կեսը պոկում էին իր հենակետից, կործում գետնին ու սկսում շինել ամանի ներքևի մասը, ինչպես նաև բերանին մոտիկ երկու տեղով մի քիչ ծակ էին անում, մացնում ունկերի ծայրերը և կլոր քարով այնպես հարթում, որ ներսից հետք չմնար։ Տաս-տասնհինգ օրից հետո, չորացած ամանները, օրը մի հատ, թրծում էին թոնրան մեջ։ Թոնրից դուրս բերված, շիկացած ամանների վրա սրսկում էին սառը թան և պուտուկը պատրաստ էր։

Պուտուկը վառ թոնրան վրա դնելով, եփում էին օրվա ճաշը, պուտուկի մեջ էին տաքացնում կաթը և նույն ամանում էլ մերում մածունը։ Պուտուկում էին թանը կալում՝ վերածում տինթանի։ Դրա մեջ էին աղ դնում կարագը։ Հին, յուղ կերած պուտուկը թաղելով հողի տակ, մեջը աղ էին դընում ամբողջ տարվա գործածելիք տառեխը, որից զատ, Վանի նահանգի ժողովուրդը մի այլ տեսակի ձկան մասին պատկերացում չուներ։ Պուտուկով էին պանիրն ու ժաժիկը թաղում հողում։ Հին, ջարդված պուտուկների մեջ էին բովում փոխինդացու ալանձն ու փլավացու ոջաան։

Վերջին շրջանում, ավելի շուտ, վերջին տասնամյակում որոշ արճակցոց սեղանից համարյա թե վերացել էին պղնձե ափսեներն ու ջնարակած կուռիկները, տեղի տալով էմալապատ, մասամբ էլ հախճապակե սպասքին, որ բերվում էր Բաքվից։ Մի քանի տներում կային սպիտակ ինքնաեռներ, գեղեցիկ, հախճապակե ափսեներ ու գավաթներ, ինչպես նաև ապակե բաժակներ։ Այս նորությունը, սակայն, չէր կարող պակասեցնել պուտուկների նշանակալից դերը։ Որոշ տներում երևան էին եկել պղնձե սրճեփներ և հախճապակե մանրիկ գավաթիկներ։ Մի քանի տներում հյուրերի առաջ պատառաքաղ էր դրվում։ Պառավների ձեռքով շինված պոտնե ծանր պուտուկները տեղի էին տըրվել այդ նույն կավից, սակայն մջեցի ջրչիկ բրուտ տղամարդկանց ձեռքով պատրաստված թեթև պուտուկներին։ Սրանք սարքվում էին դուրգի օգնությամբ։

Անկողին: Եթե համեմատելու լինենք գավառի մյուս գյուղերի կամ նույնիսկ Վան-Տոսպի ու Թիմարի որոշ գյուղերի հետ, Արճակում անկողնի վիճակը ավելի լավ էր, թեև բարվոք չէր։ Մինչև սահմանադրությունը շատ տներում նույնիսկ այնքան վատ էր, որ մի ձեռք պահունի անկողին չէին կարող ունենալ իրենց խստապահանջ «կունախների» համար։ Անկողինը (վերմակ, ներքնակ) բրդից էր, բարձը թե՛ բրդից, թե՛ փետուրից։ Ներքնակի առաջին շերտը, որի մեջ և բուրդն էր, կտավից էր, իսկ կտավի վրա քաշվում էր շերտավոր քաթան։ Վերմակի երկրորդ երեսը ծաղկավոր չիթ էր լինում, որ պասմա էր կոչվում։ Անկողնաշարից (ծալք) անկողինը երեկոյան հանվում էր և դցվում հատակին։ Հատակը, նախ ծածկում էին խսիրով, ապա վրան թաղիք փռում և նոր միայն ներքնակը։ Եթե պանդխտելուց վերադարձածների տներում կային փետրաբարձեր ու գործարանային ծածկոցներ, ապա մնացյալներում գյուղական ընդունված կլոր ու երկար բարձերի վրա դրվում էր կուշթուրքի կոչված, Վանում ընդհանրացված բրդե բարձն ու անկողնաշարը ծածկըվում կանաչ-կարմիր վանդակներ ունեցող ջեջիմներով։ Թաղիքները շատ էին, սակայն գյուղացիք դեռ չէին վերականգնել 1896 թվականի ջարդերից առաջ իրենց ունեցած գորգերի ու կարպետների պակասը։

ՈՒՏԵՍՏ

Արճակում ուտելիքը շատ էր առատ, սակայն ոչ բազմատեսակ։ Այն գլխավորապես բաղկացած էր հացամթերքից, կաթնամթերքից, ընդեղենից, բանջարեղենից, մսից, հավ ու ձվից, նաև տառեխից։ Այս ամենը, բացի վերջինը, արճակցու երկրագործական աշխատանքի արդյունքն էր։

Ցորենից էին ստանում, հացից հետո, ամենակարևորը՝ ձավարն ու կորկոտը, ոշտան ու փոխինդը, առանց որոնց չէր լինի ամենօրյա սըպասն ու պասվա վռոշը, փլավն ու կոլկոտաճաշը, յուղով կամ քաղցրով շաղախելիք փոխինդը։

Կտավատի ձեթով էր, որ եփում էին պասվա ամեն տեսակի կերակուրները, թխում պասվա բաղարջ, պատրաստում պասվա հալվա և այլ։

Ոսպը պաս օրերի գլխավոր ուտելիքներից էր։ Այն ուտում էին խաշած, եփում էին վռոշ, որը պաս օրերին փոխարինում էր թանի ու չորաթանի սպասներին։ Խաշած ոսպով կոտապ կոչվող կա-

կանդակ էին թխում։ Առանց ոսպի գյուղացին զրկվելու էր իր ուտիքը օրվա ամենասիրած կերակուրներից մեկից՝ ֆյալագյոշից:

Կաղամբը, թարմ, թե թթու դրած, ուտում էին ու օգտագործում և՛ ուտիս օրերին՝ մսի վրա գցելով, և՛ պաս օրերին՝ կանչրտկի հյութով կամ կտավատի ձեթով «կորկոտով թթու» անունը կրող կերակուր եփելիս։

Կանչրակի հյութով էին պասվա բազմատեսակ կերակուրները եփում, սկսած թթվից, վերջացրած չորացրած բանջարների ու կորկոտի խառնուրդ «փոշածներով»։

Շաղգամը օգտագործվում էր և՛ մսի վրա գցելով և՛ պաս օրերին խաշելով որպես աղցան. երեխաներն տյն ուտում էին թարմ վիճակում։

Ձմեռվա համար աղ դրած մանդակ, էրեժնուկ, սխտորուկ, սուխուկ, բոլոքը կամ կանայք ու աղջիկներն իրենք էին դաշտից բերում կամ քրդուհիների հետ փոխանակում էին հացամթերքով։

Հացահատիկով էին գնում դդումը, որից պատրաստած շիլը ձմռանը մսի վրա էին գցում, յուղով տապակում կամ թթում գործածում, ինչպես նաև սոխն ու բազուկը։

Ահա մի քանի կարևոր ուտելիքներ պատրաստելու ձևերը։

Պանիր: Արճակի գավառի բնակչությունը, բացի այծից ու ոչխարից, ուրիշ կաթից պանիր պատրաստել չէր պատկերացնում։ Միայն ոչխար ունեցողներն էին հնարավորություն ունենում մեկ անգամից, մի օրում իրենց տրամադրության տակ ունենալ այնքան քանակությամբ կաթ, որից կարողանային երկուսից-երեք մեծ պուտուկ պանիր պատրաստել։

Հնամենի սովորույթ էր, որ ոչխարատերը իր հոտատիրոջ և հոտընկերի հետ ոչխարի կաթի փոխանակում կատարեր։ Ըստ ընդունված կարգի, ոչխարը բէրի ճանէյու առաջին իսկ օրից սկսվում էր կաթի փոխ տալ-առնելը։ Առաջին օրից, յուրաքանչյուր ոչխարատեր բերում, հոտատիրոջն էր հանձնում կտավե «պանրի տոպրակ», որի մի մասն առանց կարել էր լինում՝ ծայրերն ազատ։ Առաջին իսկ օրից էլ կաթն իր վրա էր վերցնում հոտատերը։ Մի հոտատիրոջ շուրջն առնվազն խմբվում էր 12—15 տնտեսություն։

Կաթ փոխ տալու հաշվապահական ընդհանուր կանոնն էր՝ փայտե մի բարակ ու երկար ձող թաթախում էին կաթով կիսատ ամանի մեջ, դուրս բերում ու դանակով մի խազ անում, հաջորդ օրը տված կաթը ետ վերցնում, դրա վրա ավելացնում այդ օրվա կաթը, լիք ամանը դատարկում և հաշվում՝ «Աս մեկ չրա»։ Մնացած կաթի չափումը նորից կատարում էին փայտե ձողիկով, հին նշանը ջնջում, նոր նշան անում, և այսպես շարունակաբար։

Կանայք զարմանալիորեն ճիշտ էին պահում կաթնային հաշիվը։ Տոպրակները այդ օրից սկսած պտտում էին կաթ վերցնողների շրջանում։

Մի քանի օր հետո, կաթն իր վրա վերցնելու հերթը հասնում էր կաթի քանակով երկրորդ տեղը գրավող ոչխարատիրոջը, և այսպես հերթականորեն, մինչև կաթ վերցնելու հերթը հասնում էր միայն մի քանի այծ ու ոչխար ունեցողին, որի կաթի ամբողջ սեզոնի հաշիվը, ընդհանուր կաթերի համեմատական հաշվից ելնելով, մի օրից ավելի չէր լինելու։ Այնուամենայնիվ, այդ մի օրում էլ, արդեն որակով ու յուղալիության մակարդակով բարձրացած կաթից ստացած պանրով նա ապահովվում էր։

Այս սովորույթը համարյա ընդհանուր էր Վանի նահանգի գյուղացիների մեջ։

Նախքան ոչխարը բեր հանելը, ոչխարատերերը պատրաստած էին լինում պանրի մերանը՝ անղճուր: Դա հետևյալ բաղադրությունն ուներ՝ ամենակարևորն ու անփոխարինելին հինգից տասն օրական գառի կամ ուլի ստամոքսն ու նրա մեջ կուտակված պանրանման մի ձվաչափ զանգվածն էր՝ գլիխկ: Եթե գառը կամ ուլը չէին սատկում, ապա ոչխարատերն ինքն էր մորթում։ Այս երկու բանին, այսինքն՝ ստամոքսն ու մեջը եղած նյութին համապատասխան խառնում էին շիր, ջաքար, մեխակ, դարչին, սև պղպեղ, հավլուջան և հիլ, բոլորը լցնում որոշ քանակությամբ մաքուր շաուկով լցված սեռիկի մեջ ու բերանը փակում։ Ստացվում էր մի քիչ պղտոր, բայց անասելի բուրումնավետ հեղուկ. փորձարկում էին նրա ուժունակությունը։

Կաթն ում տուն տանելը որոշված էր լինում մի քանի օր առաջ։ Այն ստացողը կանխապես պատրաստում էր մաքուր կարասներ, բերից եկողները չափում, հաշվում էին կաթերը և դատարկում քամոց կտավներով փակված կարասների մեջ, իսկ տանտիրուհին կաթով լիքը կարասներից յուրաքանչյուրի մեջն էր լցնում երեքից չորս գդալ անղճուր, ապա բերանները ծածկում։ Երկու ժամ հետո կաթերը կպչում էին։ Խալամա կոչվող այդ մածնանման դոնդողը լցնում էին հիշյալ տոպրակների մեջ, հավասարապես ջող տալով աղ դրված մանրած սուխուկի ու ուրցի խառնուրդը։ Ոմանք դրա փոխարեն օգտագործում էին մանդակի տերև կամ քեղի զոխ։ Տոպրակները

երկու ծայրով կապում էին պատից մեկ մետր բարձրությամբ հորիզոնական դրված փայտե ձողից ու տակը դնում մաքուր աման։ Երբ տոպրակներում լցված ղալաման ցամաքում էր, խմորի մեծ տաշտի մեջ դնում էին սեղան-տախտակը (խմորի գնդերը գրտնակելու սեղանը), վերցնում տոպրակները, դրանց երկու ծայրերը բերում իրար վրա և շարում սեղան-տախտակին, վրան դնում մի լայն տախտակ ու դրա վրա էլ դարսում մեծ-մեծ քարեր։

Հաջորդ առավոտյան արդեն տոպրակներից դուրս էին հանում սափակած պանրի կլորավուն գլուխները, սեղան-տախտակի վրա կտրտում, կտորներն առանձին-առանձին թաթախում կարմրավուն սպի մեջ, թեթևակի թափահարում ու շարում էին երկար ժամանակ կաթ-մածնի համար գործածված պուտուկներում ու դնում մթերանոց։

Այսպիսով, դեռ քսաներկու ժամ չանցած, ոչխարից կթվող կաթն արդեն պուտուկներում աղ դրված պանիր էր։

Երեք օրվա ընթացքում պանրից քամված աղաջուրը ծածկում էր պանրի երեսը։ Պուտուկներն այս անգամ էլ դնում էին բերանքսիվայր։ Մի երեք օր էլ ամանից ջուրը դուրս էր քամվում, նորից մի քանի ժամ պուտուկները դնում էին ուղղահայաց, պանրի կտորներն իջնում էին ցած, պանրի պակասած տեղը, այսինքն՝ պուտուկի բերանի մասը սեղմում էին մի քիչ թարմ ժաժիկ, վրայից էլ պինդ կավ (հասարակ հողից) և գլխիվայր թաղում մթերանոցում, այդ նպատակի համար փորված և մի 15 սմ չոր մոխրով լցված փոսում ու ծածկում չոր մոխրով։

Աշնանը, հաջորդականությամբ, դուրս էին հանում պուտուկները անուշաբույր, ոչ շատ աղի և կարմիր աղից հաճելիորեն բաց վարդագույն դարձած պանրով։

Ավելի որակով պանիր ստանալու համար կաթի մեջ սեղճոր էին խառնում ու լցնում աղաջրից դուրս քաշած այդ պանրի վրա, մի քանի ժամ հետո բերանը ծեփում և թաղում հողի տակ։ Այս ձևով պատրաստված հորած պանիրը կոչվում էր **դալմայով պանիր:**

Ժաժիկ: Ժաժիկը շինում էին կարած թանի պինթանից։ Երբ տոպրակի մեջ լցված ու քարերից սեղմված պինթանը լավ ցամաքում էր, դրան խառնում էին նույն բանջարները, ինչ պանրին, միայն ժաժիկի մեջ լցվելիք աղը պետք է սակավ լիներ։ Ժաժիկը սեղմում էին պուտուկի մեջ, պուտուկի բերանը ծեփում կավով, գլխիվայր թաղում ճիշտ այնպես, ինչպես պանիրը և աշնանը դուրս բերում հորած ժաժիկը։

Խուրդալու: Արճակցիների կենցաղում ամենաթանկարժեք ու հաղվադեպ կերակրատեսակն էր։

Նոր մորթած ոչխարի չորս ոտքն իրար էին կապում, ամբողջ մարմինը ծեփում պինթանով, ալյուրով ու աղով խառը թանձր խյուսով, լավ վառված և արդեն ծուխը վերջացած թոնրան մեջ կցում երկու կամ երեք քար ու քարերի վրա դնում մի դատարկ հողե չողթրիկ։ Թոնիրը խառնելու երկար ու կեռագլուխ երկաթե երկու շիշ մտցնում էին ոչխարի կապված ոտքերի արանքը և կախում կրակի շեղջով լիքը թոնրան մեջ։ Թոնրան շրթին դնում էին շշերի երկու ծայրերը, թոնրան բերանն անմիջապես լրիվ ծածկում թոնրան սալով, սալն էլ ծածկում թոնրան ջուլով։ Թոնրան բերանը սալով ծածկելիս թողնում էին մի փոքրիկ անցք, որի վրա դնում էին հասարակ կավից կլորավուն, մի մեծ խմորագնդի չափ կնդիկ։ Սալը ջլով ծածկելիս կավե գնդիկը թողնում էին բաց։ Երբ այդ կնդիկը այնքան էր չորացած լինում, որ սպիտակում էր, բաց էին անում թոնրան բերանն ու դուրս քաշում պատրաստի խուրուղուն։ Ոչխարի վրա ծեփված աղե խյուսը չորանալով, ամուր կեղև էր կապում, պաշտպանում ճարպերը հալել-կաթելուց, միաժամանակ միսը չափավորապես աղիացնելով, իսկ դատարկ չողթրիկի մեջ կաթկթած հյութը սննդհատ շոգիանալով ու ներծծվելով մսի մեջ, պահպանում էր այն վաղաժամ չորանալուց։

Խյուսից առաջացած մուգ վարդագույն կեղեր խուրուղուի վրայից պոկում էին այն սառելուց հետո։

Խուրուղուն ամենահարգի ուտելիք-նվերն էր, որ ինչպես Արճակում, այնպես էլ մյուս հայ գյուղերում ընծայաբերում էին միմյանց որոշ արտակարգ դեպքերում, ինչպիսիք էին՝ գյուղից դուրս բարեկամի հարսանիքին կամ մահացյալի թաղումին, կամ փափագելի արու զավակի կնունքին, պանդխտելուց վերադարձած հարգելի անձնավորությանը տեսակցության գնալիս և այլն։

Պանրի մածուն, կարագ, սեր: Քամած մածուն ու կարագ: Հին, մեծ ու արդեն ճաք աված որևէ պուտուկ դնում էին թոնիր, ապա թոնիրը վառում։ Պուտուկը շիկանում էր և մաքրվում էր իր մեջ ներծծված յուղերից։ Այրված պուտուկը դնում էին մթերանոցի մի անկյունում ու լցնում մածնով։

Նորաթուրծ ու ճաքեր ունեցող պուտուկից

ծլծլալով դուրս էր մաղվում մածնի շտուկը, իսկ պակասող մածնին օր-օրի ավելացնում էին նոր մածուն ու գլուխներով կարագ և այսպես շարունակաբար։ Ապա երեսին հալած յուղ էին լցնում ու պահում։ Քամած մածունն ու նրա մեջ պահված թարմ կարագը հաճելի ուտելիք էին ձմռան օրերին, երբ ոչ մի անասուն չէր կթվում։

Քամած մածունը շրով բացում, նոր էին գործածում։

Մեռածուրիկ: *Մեծ պուտուկով կաթը թոնրում մարմանդ եռացնում, ապա մերում էին (նախօրոք այդ պուտուկը մթերանոց տանելով)։ Անշարժ պուտուկի երեսին երեք օր դնում էին չոր մոխրով լցված տոպրակ։ Երբ նկատում էին, որ մոխիրը թրջվել է, փոխարինում էին չոր մոխրով։ Այդպիսով, առանց մածունը թեկուզ թեթևակի շարժելու, նրանից անջատում էին ջրային մասը։ Իջնում էր մածնի մակարդակը, վրան լրացնում էին տոպրակով քամած մածուն, երեսին հալած յուղ լցնում ու պահում։*

Մերածուրիկը թարմ մածնի տեսք ու համ էր ունենում, սակայն մի քիչ կծված։ Հյուրերի համար մերածուրիկը սեղանին էին դնում՝ վրան դոշաբ կամ շաքարափոշի ցրած։

Ջոր սեր: *Ջոր սերը պատրաստում էին միայն ոչխարի կաթով, աշնան մոտերքը (օգոստոսի վերջերին), երբ ոչխարները շատ քիչ, սակայն թանձր կաթ էին ունենում։ Ոչխարի կաթը մեծ կաթսայի մեջ մի քանի ժամ եռացնում էին և թողնում մինչև սառչելը, կաթի բերանը ծածկելով ոչ թե խուփով, այլ մաղով։ Առավոտյան սառած կաթի երեսից զգուշությամբ վերցնում էին թոնրում թխվող լավաշ հացի ձև ստացած սերը և փռում պարանին։*

Տասից-տասներկու նման լավաշներ լայնակի դարսում էին նոր նամիկի մեջ, արանքները հով թոնրում չորացրած կորկոտ կամ ցորեն էին հավասարաչափ լցնում և պահում ձմեռվա տոն օրերի (Ծնունդ, Բարեկենդան) համար։

Ջոր սերը, որ միայն ոչխարատերերն էին ունենում, հաղվագյուտ և ամենարնտիր ուտելիքն էր։ Ջոր սերի արանքներում շաղ արված ցորենը անում էին աղանձ, որը նույնպես իր տեսակի մեջ առանձնակի համեղ էր լինում։

Աղջրի կարագ: *Աշնանը, երբ արդեն ոչ միայն օրը երկու-երեք խնոցի էին հարում, այլ երեք, չորս օրը՝ մի խնոցի, սկսում էին այդ կարագը պահել։ Կարագը մեծ գլուխներով լցնում էին աղաջրի մեջ։ Երբ արդեն ոչ մի խնոցի չէր հարվում, հանում էին կարագի գլուխները, դանակով երկու մասի հաստության կարագը անջատում և միջին մասը, որ աղ չէր ներծծած, դնում էին սեղանին։ Այսպես պահված կարագը ոչնչով չէր տարբերվում խնոցուց նոր դուրս բերված կարագից։*

Սոխաթան: *Սեպտեմբերի վերջերին թանը կարում էին ոչ թե թոնրան մեջ, այլ վառ թոնրան վրա և այնքան, որ հազիվ բղբում էր։ Այդ թույլ կարված թանից ստացված պինթանը լցնում էին վառ թոնրում այրված՝ հին ու ճաքճքված (ինչպես քամած մածնի համար պատրաստվողը) պուտուկի մեջ և անընդհատ պակասած շտուկի փոխարեն ավելացնում էին նոր պինթան, եռացրած ու սառեցրած կաթ։ Խառնված կաթն ու պինթանը նոր պուտուկի մեջ քամելով, ստանում էին առանձնակի համի թանձր զանգված։*

Սոխաթանը թուլացնում էին կաթով, իսկ եթե կաթ չկար՝ ջրով և աշնանը մի երկու ամիս ունենում էին մածնին փոխարինող ուտելիք։

ԲՈՒՅՍԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուտելի բույսեր: *Լեռներն ընդհանրապես անտառազուրկ էին, մի քանիսի գագաթին աճում էին կարծր ու ցանցառ թփուտներ, որոնք, ինչպես գավառի ծառազուրկ լեռնային գյուղերի բնակիչները, այնպես էլ արճակցիք բերում էին ցախավելի, մանավանդ տափի (հերկերը տափանելու գործիք) համար։ Փշոտ ու կարծր այդ թփուտները գյուղ էին հասցնում շալակով։ Երբեմն էլ գնում էին շրջակա լեռնային գյուղերի գյուղացիներից։*

Արճակի գավառի լեռները ընդհանրապես բազմաղբյուր, թավշականաչ ու ծաղկառատ էին։ Այդ լեռներում առատորեն բուսնում էր օգտակար բանջարեղեն։

Խավրծիլ[1]**:** *Սրա տերևը, որ կոչվում էր «կյապու տակ» գետնատարած էր և մի մաղի մեծության հասնող կլորություն ուներ։ Տերևների արանքից դուրս էին պրծնում գալար, հաստ, երկար կոթունները, ծայրերին վարդագույն կամ սպիտակ փնջաձև ծաղիկներով։ Թե՛ կյապու տակի մեկ թիզ երկարություն և երկու մատնաչափ լայնություն ունեցող տերևակոթերը, թե՛ խավրծիլները խիստ խավոտ մաշկ են ունենում ու թթվաշ համ։ Կոթունները ուտվում են թարմ վիճակում, բայց մաշկից մաքրում, կտրտում ու չորացնում են նաև՝ ձմռանը մսի վրա գցելու համար։ Անձրևի*

---

[1] *Խավրծիլն ունի շատ տարատեսակներ, որոնցից մեկը կոչվում է խանձիլ։ Խավրծիլ աճում է Նախիջևանի լեռներում, սակայն խիստ նվազ, հազիվ մեկ թիզ բարձրությամբ, ու մի քիչ էլ դառնաթթու է։*

առկայության դեպքում խավրծիլը առատորեն է ծլում, դալար ու հյութալի է լինում։ Երկարությունը հասնում է 40 սմ և ունենում է երկու մատի հաստություն։ Խավրծիլը հողի երես դուրս գալուց հետո, երկու-երեք օրում է այդքան հասակ առնում։ Մի քանի օր անցնելուց դառնանում է և ուտելու համար դառնում է ոչ պիտանի։

Նվիկ: Ավելուկի նման, նվիկի տերևներն են գործածում։ Տերևները լինում են սրաձև, երկարակոթ։ Թարմ վիճակում նվիկը սոսկալի կըծկըծացնող է, իսկ չորացնելուց հետո համեղ է և ամենակարևորը՝ բուժում է ստամոքսի խանգարումներն ու արյունալուծը։ Նվիկը բուսնում է լեռնագագաթների, ժայռերի ստորոտներում։ Քաղելը դժվարությունների հետ է կապված։ Ժողովրդի մեջ տարածված էր այն համոզումը, թե իբր օձերը իրենց բները շինում են նվիկ աճող տեղերում[2]։

Ծամոնի հյութ: Սնձանման, կաթնահոս բույս է, աճում է լեռներում։ Սնձի նման ուտվում է հում վիճակում, միայն թե մի քիչ դառնավուն է։ Հողի երեսին բազմաճյուղ աճած ծամոնի հյութի արմատը հիմնականում միաճյուղ է։ Այդ մի հատիկ հաստ արմատից կաթը հոսում է հողի մեջ և հետզհետե վերածվում կոշտ ու սև դանգվածի։ Հենց այդ դանգվածն էլ անվանվում է «Սև ծամոն», որը Վանի նահանգի բազմազգ բնակչության կենցաղում իր հաստատուն տեղն էր գրավել՝ որպես հողային, ինչպես նաև այլևայլ պատճառներից առաջացած ցավերի ամենաբույժ միջոց։ Պինդ, քարացած ցեխակոշտի նմանվող սև ծամոնի դանգվածը ծանր մուրճով՝ սանդաքարի եզրին այնքան էին ծեծում, մինչև տաքանում էր, միաժամանակ մաքրվում մեջը եղած հող ու ավազից և դառնում քիչ կպչուն։ Ապա ավելացնում էին չաքյան (քաշող) կոչվող ինչ-որ սև, մանր հատիկներ ու շարունակում ծեծել մինչև չաքյանի հատիկների լրիվ տրորվելը։ Այդ դանգվածը տաքացնում էին և փակցնում ամուր կտավի վրա, նախօրոք նկատի ունենալով, թե ինչպիսի տեղի համար է (դաստակ, թիկունք, մեջք, մատ և այլն)։ Պատրաստի յախուն մի քիչ տաքացնելով, կըպցընում էին մարմնի ցավոտ տեղին։ Ծամոնը ցաված տեղին ամուր կպչում էր՝ քանի տեղում դեռ ցավ կար, հետո ինքն իրեն պոկվում էր։ Ծեծված ու քաթանին փակցված սև ծամոնը օգտագործվում էր շատ անգամ, համարյա տարիներով[3]։

Չաքյան, ինչպես արևելյան մի շարք բուժիչ նյութեր, գյուղացիք գնում էին Վանի խանութներից։

Սիվակուկ (սպիտակ բանջար)։ Աճում էր առավելապես լեռնային վայրերում։ Սիվտկուկի երկար ու բարալիկ տերևների՝ հողից դուրս եկած մասը աղոտ կանաչ է, իսկ հողի միջինը՝ սպիտակ։ Ունի նաև կլոր, կոճակաչափ գլխիկ, որը նույնպես սպիտակ է։ Սպիտակ է նաև տերևների միջից բարձրացող ծաղկակոթունը և երկարափունջ ծաղիկը։ Սիվտկուկը մածուցիկ է, արտաքին տեսքով շատ նման է մարգախոտի, սակայն փափուկ է։ Սիվտկուկը իր լավ համով մյուս բանջարների թագուհին էր։ Այն թե՛ թարմ էին գործածում, թե՛ չորացրած։ Առավելապես չորացնում էին ձմռան համար։ Թե՛ յուղով-ձվով տապակում էին, թե՛ ձավարով շիլա եփում, թե՛ աղցան անում (Արևելյան Հայաստանի գյուղացոց ծանոթ է այն ու հաճախ են Երևանի շուկայում վաճառում)։

Պղպոջ: Արտաքին տեսքով շատ նման է սիվտըկուկին, միայն թե պղպոջի տերևները համեմատաբար լայն են ու կարճ, տերևների գույնն էլ ավելի մուգ է։ Պղպոջի մածուցիկությունն ավելի շատ է, և փորձված բանջարագետը իսկույն տարբերում է այդ երկու բանջարները՝ թե՛ տեսքից, թե՛ համից։ Պղպոջը նույնպես աճում է լեռնային վայրերում և Երևանի շուկայում վաճառվում է «Սպիտակ բանջար» անվամբ՝ պարանանման հյուսվածքով։

Շրեշտ (շրեշ)։ Կարճ, սկզբից մինչև տերևավերջը հավասարապես քիչ սրված, կանաչ տերևիկների խմբավորումները դուրս են պրծնում հողի տակից, իսկ հողի մեջ բոլորը միասին վարագուրված են մի քիչ նուրբ և ուտելու համար ոչ պիտանի շղարշով։ Հողի մեջ գտնվող այդ մասը դեղնասպիտակ է։ Արճակում շրեշը օգտագործում էին թե՛ թարմ, թե՛ չորացված։ Ձմեռները շրեշը, յուղով-ձվով տապակելուց բացի, ձավարի հետ խառնած փլավ էին եփում։ Շրեշտը ներկա-

---

[2] Նվիկը աճում է առատորեն Մոզդոկի շրջակայքում։ Այնտեղ վերաբնակված արևմտահայերը օգտագործում են այն և հաստատում, որ այդտեղի նվիկը «Երկրի» նվիկի որակը չունի։

[3] Արդի Հայաստանի լեռներում ևս շատ է աճում ծամոնի հյութ։ Երևանում ևս գյուղերից բերում-վաճառում են փոքրիկ կտորներով, մուգ գույնի և սկզբում մի քիչ դառնավուն սաղի ծամոնը։ Սակայն ծամելու համար հավաքված այդ ծամոնը պատրաստում են հողի երեսին աճած մասերը կտրատելով և հոսող կաթը հավաքելով։

Հողի մեջ կուտակվածը, ասում են իբր շատ հազվագյուտ երևույթ է, և գաղթած արևմտահայերը, որոնք կարիք էին ունենում իրենց հողային և այլ ցավերը «Երկրի պես» «սև ծամոնով» բուժելու, չէին կարողանում բավարար չափով ձեռք բերել դրանից։

յումս օգտագործվում է թարմ վիճակում, ապա-կում են յուղով ու ձվով։ Այժմ մշակովի է դարձրվել։

Ավիլուկ (*ավլուկ*)։ Արճակում ավլուկը չորացնում էին ձմեռվա համար միայն նրանք, ովքեր նվիկ չէին ունենում։ Ծանոթ է Հայաստանի ողջ աղգարնակչությանը, օգտագործվում է չորացված վիճակում, թե՛ որպես աղցան՝ համեմված սխտորով, թե կորկոտով կամ ընձով հարիսայանման ճաշ եփելով։ Ավլուկը ճանաչված է նաև որպես բուժիչ բանջար։

Դյանդալա (*շան սխտոր*)։ Թե՛ սխտորի ձև ունեցող տերևներով, համով, հոտով, թե՛ հողում գտնվող իր նախասերմի շուրջը գոյացող բազմաթիվ չոր, կեղևապատ սերմնահատիկներով, կարելի է համարել ներկա սխտորի նախամայրը։ Արճակցիք գործածում էին թե՛ թարմ, թե՛ չորացած վիճակում։ Գյանդալան գարնան սկզբում ուղղակի հում-հում աղ էին անում, ուտում, խառնած ուրիշ բանջարների հետ՝ փռշած էին եփում, աղ դնում, բայց ավելի շատ՝ չորացնում և ձմռանը խաշելով աղցան էին անում։

Հաակապես աղ էին դնում ձմռան համար հեռեխյալ բանջարները, առանց որոնց չէր կարելի պատկերացնել ոչ միայն Արճակի գավառի աղգարնակչությանը, այլ նաև Վան քաղաքի հայ և թուրք ընտանիքները։

Մանդակ։ Աճում է լեռներում։ Ունի բազմաթեր տերևներ, հաճելի համ ու անուշ բույր։ Վաղ գարնանը մանդակի դալար տերևները օգտագործում էին որպես սպասի բանջար։ Տապակում էին նաև յուղով-ձվով, գցում պանրի ու ժաժկի մեջ։ Ամռանը մանդակի կոթունը ուտում էին թարմ վիճակում, սակայն մանդակի օգտագործման ամենատարածված ձևը կոթուններն աղ դնելն էր։ Աղ դրած մանդակը ձմռանն էին ուտում (մանդակ Երևանի շուկայում վաճառվում է)։

Էրեժնակ (*երենչնակ*)։ Ավելի շուտ դաշտային բույս է, քան լեռնային։ Դրա դեղնավարած փշոտ տերևներից և նույնպես փշապատ կոթուններից անասունները խուսափում են։ Անգամ դրա բաց, վարդամանուշակագույն ծաղիկները փշապատ են, արմատը գազար է։ Այս ամենով հանդերձ, էրեժնակի կոթունները ուտվում են անգամ հում վիճակում։ Էրեժնակը քաղում էին ձեռքերին հաստ թաթմաններ հագած։ Սկզբում, դեռ կոթունը արմատի վրա, ձեռքը տանում էին արմատի մոտ և դեպի վերև քաշելով, կոթունը մաքրում փշոտ տերևներից և ապա պոկում արմատից, կապուկներ անում, բերում տուն։ Տանը մի անգամ ևս մաքրում էին փշոտ տերևների մնացուկներից և շարում պուտուկների մեջ, թունդ աղաջուր լցնում վրան ու պահում ձմռան համար[4]։

Պոխ (*բոխի*)։ Պոխը կամ ոմանց ասելով պուղուկը աճում է լեռներում։ Բազմաթիվ կարավածքներ ունեցող պոխի տերևները, երբ մաքրում են, ստացվում է մաանանման տերևակոթ։ Ահա հենց այդ տերևակոթերն էլ աղ են դնում։ Պոխը խիստ օգտակար, համով և հաճելի հոտով պասուց ուտելիք էր։ Ի տարբերություն Վանի նահանգի, Արևելյան Հայաստանում օգտագործվում է դառը բոխին։ Այն աղ է դրվում ձմռան համար, աղցան արվում։ Արճակի գավառում ուտում էին միայն քաղցր բոխին, այսինքն՝ պոխը։ Այն օգտագործում էին նաև մածնեղականները։

Քյեղ (*ճավիկ*)։ Լեռնային բույս է. բարձրաթեք, խողովակաձև և բավականին անուշաբույր։ Այն շատ սիրելի է Հայաստանի լեռնային շրջանների բնակիչներին, որոնք աղ են դնում ձմեռվա համար։ Արճակի գավառում օգտագործում էին նաև որպես պանրի ու ժաժկի բանջար։

Սխտրուկ (*սխտորուկ*)։ Վանեցիները սուխուկ էին ասում։ Մարդագեանային բույս է՝ մուգ կանաչավուն, սոխի նման խողովակաձև, սակայն համով ու հոտով ավելի շուտ սխտորին է մոտիկ։ Տերևները երկար են ու բարալիկ, շոշափելիս ըզգացվում է, որ հարթ չեն և դրանով էլ անվարժ տանտիկինները տարբերում են սխտորուկի հենց կողքին աճող և իր արտաքինով դրան հար և նման **Փորոտուկ** կոչվող չուտելի բույսից։ Սխտորուկը ևս, դյանդալայի նման, բազմանում է թե հողի ներքո գտնվող սերմնարմատի գլխի շուրջը գոյացող բազմաթիվ սերմնագլխիկներով, թե հետագայում զարգացող մանուշակագույն բազմաթիվ ծաղիկներ ավող ծաղկեպսակում գոյացող սերմնահատիկներով։ Սխտորուկը աղ են դնում թե՛ կապուկներով, թե՛ նախապես մանրացնելով։ Մանրացրած սխտորուկը, ուրցանուխի հետ խառնելով, օգտագործում էին որպես պանրի ու ժաժկի բանջար։ Աղ դրած սխտորուկը ձմռանը օգտագործում էին թե՛ առանձին, թե՛ պասուց օրերին եփած ձեթով ու ձավարով փլավի հետ (Երևանի շուկայում սխտորուկը՝ սուխուկ անունով, շատ է վաճառվում)։

Եղրոճա։ Գյանդալայի տարատեսակն է, մի-

---

[4] Երևանի շուկայում էրեժնակ վաճառվում է. սակայն, ավելի բարալիկ է, քան Արճակի և կամ Վանում վաճառվող էրեժնակը։

այն ավելի նուրբ տերևներով և նվազ սխտորահոտով։ Եղրռճան ևս, ինչպես գյանգալան, աճում է ամենուրեք, բայց սակավ է։ Եղրռճան, ինչպես սխտորուկը, մանրացնում էին և ուռցանուխի հետ խառնած օգտագործում որպես պանրի ու ժաժկի բանջար։ Աղ էին դնում ձմեռվա համար, թարմ վիճակում ևս աղ ցանում ու ուտում հացով (Երևանի շուկայում չի վաճառվում)։

Կային նաև անուշահոտ բույսեր, որոնք արճակցիները գործածում էին որպես կերակրի համեմունք և կամ սեղանին դնում, որպես կանաչի։ Դրանք են՝

Տաղց *(դաղձ)*։ Աճում է առավելապես առվակների եզրին, ինչպես նաև խոնավ, ջրառատ տեղերում։ Արճակցիները, Արևելյան Հայաստանի բնակիչների նման, դաղձը օգտագործում էին որպես սեղանի կանաչի։ Օգտագործում էին հում վիճակում, ավելի շատ՝ խաշած ձվի, պանրի, ժաժկի, ինչպես և հնդեղենի (ոսպ, բակլա, գլոլ, լոբի) հետ։ Դաղձի չորացած ծաղիկները ձմռանը որպես թեյ օգտագործում էին մրսած հիվանդներին քրանեցնելու համար։ Դաղձը ճանաչված էր նաև որպես մայասուլին հակադդող ուտելիք։

Ուռցանուխ։ Աճում է առավելապես անջրդի ու անմշակ տարածություններում։ Շատ ցածրիկ, բազմաճյուղ թփիկ է, խիստ մանր և անհյութ տերևներով անուշահոտ բույս, որ տալիս է մանր, բոսորակին տվող բուրումնավետ ծաղիկներ։ Աճում է ու վերաճում՝ հին արմատին մոտ։ Օգտագործվում էր որպես պանրի ու ժաժկի բանջար, ինչպես նաև՝ կերակրի համեմունք։ Ուռցանուխը անհյութ է դառնում հատկապես ծաղկելուց հետո, սակայն էլի օգտագործում էին։ Ձմռանը դրա ծաղկով եփած թեյը համարվում էր մրսածության դեմ բուժիչ միջոց։ Արևելյան Հայաստանի չոր բլրալանջերում առատորեն բուսնում է ուռցանուխը և բոլորի կողմից էլ ճանաչված է ուրց անունով։

Նանուխ *(անանուխ)*։ Ուռցանուխի տարատեսակն է։ Աս ևս աճում է անջրդի և անմշակ բլրալանջերում։ Նանուխը ավելի փափկիկ է և ավելի երկարավուն, բունը հաճելի կարմրավուն է։ Ճանաչում է դաշտ Հայաստանի հայ և ադրբեջանցի ազգաբնակչությունից։ Արճակցիք նանուխը օգտագործում էին ճիշտ այնպես, ինչպես ուռցանուխը։

Սարի կյինձ *(սարի գինձ, համեմ)*։ Սարի կյինձը, այլ կերպ՝ սարի համեմը, մշակովի համեմի ավելի լավ տեսակն է։ Մեր գործածած համեմի ծաղկման շրջանին հասած, նուրբ ու բարալիկ տերևներ և սպիտակավուն ծաղիկներ ունի, շատ բուրավետ է։ Արճակցիք օգտագործում էին որպես կերակրի համեմունք, առավելապես թանով ու չորաթանով սպասների մեջ. ուտում էին նաև պանրի ու ժաժկի հետ։

Սարի բռճակ։ Մշակովի ռեհանից ոչնչով չտարբերվող բույս է, միայն ավելի մանր տերևներով և ավելի բուրավետ է։ Աճում է լեռնալանջերին, օգտագործվում էր որպես կերակրի համեմունք։ Արևելյան Հայաստանի գյուղացիներին ես հայտնի է այն։

Պլթեմ։ Հազվադեպ պատահող բույս է։ Աճում է ոչ բոլոր լեռներում։ Ձևով հիշեցնում է նորածիլ մանդակի։ Հաճելի բուրմունք ունի և կարելի է պահել տարիներով։ Օգտագործվում էր միայն հագուստեղենը անուշահոտելու համար։ Աճում էր Արճակ գյուղի մոտակա լեռներում։

Սիվեղ *(սիբեխ)*։ Ամենաշատ տարածված բանջարաբույսերից է։ Խոր կտրտված տերևներ ունեցող այս բույսը աճում է ամենուրեք, սակայն վարելահողում, մանավանդ աշնանացան արտերում աճածներն ավելի համեղ են լինում և հեշտ են եփվում։ Փխրուն հողի մեջ եղած տերևակոթերը սպիտակ են ու դալարավուն։ Սիբեխը երևանցիների վաղածանոթ ու սիրելի բանջարն է և վաճառվում է Երևանի շուկայում։ Երևանցիները սիբեխը տապակում են յուղով ու ձվով, իսկ հետո, երբ կոթուններն են վաճառում՝ աղ են դնում։ Արճակի ազգաբնակչությունը վաղ գարնանը մի շարք այլ բանջարների հետ սիբեխը ևս օգտագործում էր թե՛ որպես աղցան, թե՛ որպես յուղով-ձվով տապակելու ու փոշած եփելու համար։ Արճակցիները կոթունները ուտում էին միայն հում վիճակում. ուրիշ տեղերում, մանդակի կոթունների նման աղ են դնում։ Ամռանը սիբեխի կոթունների ծայրերին բացվում են մանր ծաղիկների համախմբային սպիտակ պսակներ։

Կաթնանարուկ։ Հազվադեպ պատահող բույսերից է։ Գետնատարած տերևախումբ է և որպես բանջար չէր զիջում անգամ սիվտկուկին։ Աճում է բլրալանջերում և ձորակներում։ Հում վիճակում չի ուտվում։ Մյուս բանջարների հետ խառնած օգտագործում էին փոշած եփելիս կամ տապակելիս։ Ոմանք չորացնում էին նաև ձմռան համար։ Հայաստանի իմ շրջագայած վայրերում (Արտաշատ, Ծաղկաձոր, Ապարան, Եղեգնաձոր, Ջերմուկ, Կամո, Կոտայք) չեմ հանդիպել կաթնանարուկի։

Տափխիյարուկ։ Գյանդալային նմանվող երկար ու նեղ տերևներ ունեցող բույս է, բայց սխտորահամ ու հոտ չունի, աճում է ամենուրեք,

բայց ավելի շատ՝ վարելահողերում ու ցանքի մեջ։ Ուտվում է նաև հում վիճակում։ Ունի փշատաշափ երկարավուն կոճարմատ, որը նույնպես համեղ է։ Տափխիյարուկը ևս խառնում էին ուրիշ բանջարի հետ և կամ առանձին ապակում։ Այս բանջարը երևանցիներին ծանոթ չէ։

Ախչկու տակ (փիփերթ)։ Աճում է ամենուրեք, բայց ամենից ավելի բնակավայրերին մոտիկ։ Կլորաձև, գետնատարած և մի փոքր մածուցիկություն ունեցող այս բանջարը լայն ճանաչում է գտել հայ և ադրբեջանցի բնակչության կողմից և համարվել է բուժիչ միջոց։ Կամոյի շրջանում (Նոր Բայազետ) սրան ասում են հաց-պտնիր։ Արճակցիք ախչկու տակը մյուս բանջարների հետ խառնած (վաղ գարնանը) թե՛ աղցան էին անում, թե՛ փոշած եփում, թե՛ ապակում, իսկ արդեն հասունացած բույսը օգտագործում էին որպես բուժիչ նյութ, այն է՝ եփում էին և կանացի հիվանդություն ունեցողներին նստեցնում վրան։ Որոշ մայրեր ախչկու տակի սպիտակ արմատները մաքրում էին, չորացնում, հավանկով ծեծում-փոշիացնում, նուրբ գլխաշորով (յաղլայով) մաղում և խառնելով մոր կաթին, օրը մի քանի թեյի գդալ լցնում նորածնի բերանը։ Փորձը միշտ էլ տալիս էր դրական արդյունք։ Ախչկու տակի «քյոքով» կերակրված երեխան ավելի արագ էր աճում և սակավադեպ էր «սանչու» ունենում։ Փտկ, այսինքն՝ ներքուստ թարախ կուտակվող և ցավ պատճառող վերքերի վրա կապում էին աչխկու տակով և գոմշակովի կաթով եփած լափ։ Զանցած մի քանի օր, վերքի բերանը բացվում էր։ Երևանում ապրող կին հեքիմները ախչկու տակի (փիփերթի) արմատը օգտագործում էին կանանց վիժեցնելու համար։ Ախչկու տակի մի արմատից դուրս է գալիս մի քանի գետնատարած կոթուն, որոնք տալիս են բաց դույնի անբույր ծաղիկներ։ Յուրաքանչյուր ծաղկի տեղը գոյանում է մի սերմնակոճակ՝ նստած ափսեաձև ծաղկերաժակին։ Երեխաները շատ էին սիրում այդ սերմերն ուտելը, որին «ճնչղկան պաղարճ» էին ասում։ Արևելյան Հայաստանի շրջաններում ևս մանուկներն **ախչկու տակի** սերմերն ուտում են։

Թաղթել (թոոթեկ)։ Ոմանք **կվթոն** են անվանում, ոմանք՝ թոոթեկ, սպանաղանման բույս է, բուսնում է բնակատեղի ավերակների մոտերքում (եթե նույնիսկ ավերակներ չեն երևում, ապա եղել են. ժողովուրդն այդ համոզումն ունի)։ Երևանի ջուկայում թաղթեկը վաճառվում է կվթոն կամ թոոթեկ անվամբ և օգտագործվում է որպես աղցանի ու տապակելու բանջար։ Արճակում ևս նույն ձևով էին օգտագործում, բայց սիրված բանջարների շարքը չէր դասվում։

Կուխու ճայտեկ: Կտրտված, գետնատարած, երկարավուն տերևներ ունեցող բույս է, աճում է ամենուրեք։ Ոմանք այդ բույսին ճնչղկան պաշար են ասում, ոմանք՝ ջրկոտեմ։ Գարնան սկզբներին օգտագործվում է որպես աղցանի բանջար, իսկ հետո երեխաները ցողուններն ուտում են։

Խինձ (սինձ)։ Բուսնում է վաղ գարնանը, ամենուրեք, սակայն ավելի համեղ են լինում լեռնալանջերին բուսածները, որոնց կոթունները բաց կարմիր գույն են ունենում։ Ուտելի են այդ կաթնահոս բույսի երկար, բարակավուն կոշտ տերևները (ճանաչում է գտած նաև Արևելահայաստանում)։ Ավելի ուշ, դախացած տերևները հեռացնում են և ուտում միայն դալար ու հյութեղ համ ունեցող կոթունները։ Վերջիններս գետնից բարձրանում են երբեմն երկու թզաչափ։ Մեխակի նմանվող չրացված կոկոնները տալիս են դեղին գույնի ծաղիկներ և սերմերը հասունանալիս, խատուտիկի թռչող սերմերի նման, ցրվում են օդում։ Խինձը թեպետ կաթնառատ է, զուրկ է մածուցիկությունից ու եփելիս չի փափկում։

Կա նաև **«կյլխով խինձ»** (գլխով սինձ)։ Սրա՝ հողի երես դուրս եկած տերևները կարճ ու աղեղ են, իսկ հողի տակ եղածը սպիտակ, հյութալի տերևներից կազմված մի գլուխ է, շրջապատված հետը միացած այլ փոքրիկ գլխիկներով, որոնք բոլորն էլ հասալիկ տերևների միահյուսություն են։ Կյլխով խինձը բուսնում էր առավելապես Արճակ գյուղի հյուսիսակողմում։ Գոյություն ուներ և սնձի այլ տեսակ՝ լայնակի և բաղմոթեր տերևներով, կոչվում էր **«օձու խինձ»**. ուտելի չէր։

Մասառոն: Առատ կաթ պարունակող քաղցրահամ բույս է, տերևները լայնակի են, եղերքները՝ կտրտված, ծաղկերաժակը կոշտ է, սրածայր, ծաղկելիս դեղին գույն ունի ու տալիս է ոչ թե հատիկային, այլ փետրասերմ։ Մասառոնը իր մեջ այնքան կաթ է պարունակում, որ քաղելուց, տուն բերելուց երկու օր հետո նույնիսկ, եթե նրա թոշնած տերևները կարաեն, առանձին-առանձին կտորների ծայրերին կաթ է երևում։ Դաշտային հազվադեպ վայրերում է աճում, շատ սննդարար է, ուտվում է հում վիճակում, հաճելի են հատկապես հասա ու դալար կոթունները (Հայաստանի իմ ապրած վերը նշված վայրերում չեմ հանդիպել մասառոնի)։

Կուռուղու: Անձանման, նեղ ու երկարավուն տերևներ ունեցող բույս է, կաթնահոս է, աճում է հատկապես բլրակներում։ Տերևները գետնից քիչ

են բարձրանում և հենց գետնից էլ բաժանվում են մի քանի ճյուղերի, որոնցից յուրաքանչյուրն ունենում է մի կոթուն։ Դրանք շատ չեն երկարում, սակայն ծաղկելիս շատ են նմանվում սոխի ծաղկին։ Տերևներն ու կոթունները սոխի համ ունեն, ուտելիս գերադասում են արմատակոճը։ Դրա տերևախումբը հողում կազմված է միայն մի արմատակոճից, որը ամսական բողկի նմանության ու մեծության սևագույն կոպիտ կեղևով պատած սպիտակ տնուշահամ միջուկ ունի, որն էլ հենց ուտվում է։ Արմատակոճը մի քանի մազարմատով է միացած մայր հողին։ Որքան փխրուն է հողը, որի մեջ աճում է կուռուզուն, այնքան էլ փխրուն է կուռուզուն ինքը։ (Հաճախ է պատահում, որ կուռուզուի գլխիկի մեջը թաղված է լինում, դրան արճակցին կատվոտ է ասում։ «Կուռուզուները սաղա կատվոտ են, սաս խոտ չկա, որ մեչներ կատու չըլնի»,—ասում էին միմյանց։ Կուռուզուի մեջ «կատու» լինելը բացատրվում էր հողի քայքայվածությամբ։

Պոուկ: Սա կակաչ կոչվող այն ծաղիկն է, որ այնքան շատ է տարածված ամենուրեք և իր «սրահի» սևությամբ աչքերի առիթ է տվել։ Այն իր հմայիչ կարմիր գույնով զարդարում է դաշտերն ու բլուրները։ Պաուկները, այսինքն՝ կակաչները, բաժանվում են մի քանի տեսակի։ Կան մանր ու բաց գույն ունեցող ծաղիկներ, կան մեծածաղիկ, բայց բաց-կարմիր գույն ունեցող պտուկներ, կան նաև մուգ վառ-կարմիր գույնի՝ բոլորն էլ մշակովի խաշխաշների նախատիպերն են, որոնք ունեն մանր սերմեր։ Գյուղացիները ուտում էին միայն վառ-կարմիր ծաղիկ տվող կակաչի կոկոնը (պաուկը), որը տարբերվում էր մյուսներից իր վարսանդի ձևով։ Եթե մյուս պտուկների վարսանդները խիստ բարալիկ են ու այնքան երկարավուն, որ ծաղկաթերթերից դուրս են կանգնած, խաշխաշին նմանվողը, կարճ է ու լայն և սև վարսանդակալով է։ Այսպիսի կակաչի կոկոնն էր, որ չէր համարվում թունավոր և ուտում էին թե՛ մեծերը, թե՛ փոքրերը։ Մեծածաղիկ, բայց բաց գույն ունեցող կակաչը կոչվում էր «Աշմու պաուկ»։ Մանրաթուփ և բաց գույնի մանրածաղիկ կակաչները կոչվում էին «օձու կակաչ»։ Ընդհանրապես այն համոզումը կար, որ դրանք ուտողների միտքը «կպղտորվի, կմնան սարսամ»։

Չիմնի պոուկ: Ինչպես անունն է ասում, չիմնի պտուկը մարգագետնային բույս է, սոխի սարատեսակն է, ունի կաթնահոտ նեղ ու երկար տերևներ, ուտում էին միայն կոթունները։ Չիմնի պտուկը ես սոխի նման տալիս է դեղին ծաղիկներ և փետրասերմեր։

Խալիվորիկ (ալեորիկ)։ Բլրալանջերին աճող բույս է։ Մարգախոտի տերևներ հիշեցնող նրա երեքից-չորս նեղ ու երկարավուն դժգույն տերևները գետնատարած են և կենտրոնում ունենում են սպիտակ դիծ։ Հողի տակ գտնվում է խալիվորիկի մի հատիկ, կոճակաչափ կոճղարմատը, որը դուրս է բերվում սրածայր փայտի միջոցով։ Խիստ փոքրիկ այս կոճղարմատը հաճելի համ ունի։

Սեռղեզ (կոճղեղ)։ Նուրբ, շատ նուրբ ոլոռի տերևներ հիշեցնող բույս է, աճում է մշակվող վարելահողերում, արմատները մխրճելով հողի խորքերը։ Արմատներին գոյանում են կոշտ մաշկով, սպիտակ միջուկով, փխրուն ու անուշահամ պալարներ, որոնք էլ ուտվում են հում։ Վանում գտնվող մի ամերիկացի բժիշկ մեռղեզից մանկական առողջարար սնունդ ստանալու փորձեր էր անում։ Սա՝ Արևելյան Հայաստանում հայտնի է կոճղեղ անվամբ և շատ է տարածված։

Կյանզառ: Աճում է մարգագետնում՝ խիստ փշալի, գետնատարած բույս է։ Օգոստոսից հետո սկսում է բաց վարդամանուշակագույն ծաղիկներ տալ, ծաղիկները համարյա կպած են լինում գետնին։ Կյանզառի արմատը մի քանի արմատների համախմբում է։ Դրանք կարճ են ու հաստ և շաղգամի համ ունեն։ Կյանզառը հողի տակից հանում էին դանակի օգնությամբ, մաքրում արտաքին փշոտ տերևներից և ուտում։ Դա ստամոքսի հիվանդության բուժիչ էր համարվում։ Կյանզառը ավելի մեծացած է լինում, երբ նրա ծաղիկները արդեն գունատված են։

Կյետնի թութ: Սպանաղանման, սակայն գետնատարած բույս է, որ աճում է ամենուրեք, առավելապես՝ ցանքերում։ Տերևներն ու ցողունները քանի դեռ դալար էին, օգտագործվում էին որպես տապակելու բանջար, իսկ ամռանը գետնատարած կոթունները ծածկվում էին անհամար թըթանման պտուղներով, որոնք հասունանում էին ու կարմրում, ահա սրանք էին կյետնի թութ անունն ստացել և դարձել երեխաների սիրելի ուտելիք։ Կյետնի թութը խիստ անհամ պտուղ է։ Արևելյան Հայաստանի շատ վայրերում ևս աճում է։

Բայլա-պատիճ (բակլա-պատիճ)։ Աճում է անջրդի տեղերում, բոիկ կոչվող դառնահամ և խիստ սուր հոտ ունեցող ավելացու բույսի հարևանությամբ։ Գետնատարած ցողունները բակլայի ծաղիկ հիշեցնող ծաղիկ են տալիս, ապա՝ փոքրիկ, քնքուշ, վարդագույն պատիճներ։ Յուրաքանչյուր պատիճում լինում է մեկից-չորս

փոքրիկ հատիկ։ Այս պատիճներն էին, որ գեռ չհասունացած ուտում էին։

Փշկա-ղալա: Բալլա-պատիճին է նմանվում, նրա պես աճում է անշրգի հողերում, գեանատարած սերմնարմատներ է տալիս, միայն թե սըրանք նեղ ու երկարավուն են և իրենց մեջ ամփոփում են ավելի մեծ թվով հատիկներ։ Պատիճները բաց-կարմրավուն և կոշտ են, ուտում էին պատիճներով, չհասունացած վիճակում։ Արևելյան Հայաստանում խս շատ է աճում։

Մռճիկ: Աճում է ամենուրեք։ Մռճիկի կտըրտված գեղեցիկ տերևները տալիս են բաց գույնի անրույր, փոքրիկ ծաղիկներ։ Հողի տակ գտնվող և դյուրությամբ հանվող դրա բազմաթիվ մանրիկ պալարները գեպի իրենց էին գրավում մանուկների խմբերին։ Ուտում էին հում վիճակում, պալարները վաղ գարնանից մինչև աշուն էին գոյանում։

Մեղրածծուկ: Լինում է երկու տեսակ՝ կապույտ և դեղին։ Երկուսն էլ, քիչ տարբերությամբ, ծածկված են նուրբ, ծակծկող մազմզուկներով։ Եթե կապույտ մեղրածծուկը աճում է ամենուրեք, դեղինը սիրում է խոպան ու անշրգի տարածություններ։ Կապույտ մեղրածծուկի տերևներն ու ցողուններն ունեն մածուցող հյութ և կիսաքաղցր համ։ Վաղ դարնանը այն խառնում էին փոշած եփելու բանջարներին, օգտագործում նաև որպես սպասի բանջար։ Դեղին մեղրածծուկը համարվում էր չուտելի բանջար։ Մեղրածծուկները միմյանցից տարբերվում էին իրենց տերևների ու ցողունների տեսքով։ Երկու տեսակի մեղրածծուկների մանրիկ ու անհամար ծաղիկների բաժակներն էլ լիքն էին լինում քաղցր հյութով։ Դրանց կողքին հավաքվում էին երեխաները, հատ-հատ պոկում ծաղիկները և ծծում միջի «մեղրը»։ Դեղինի «մեղրը» ավելի ջատ էր լինում և մի քիչ էլ սուր համ էր ունենում, սակայն երեխաները չէին խուսափում դրանից։

Ախչկա մաաուկ: Գետնատարած, մանրատերև բույս է, աճում է ամենուրեք։ Մեծանալիս ախչկա մաաուկը իր յուրաքանչյուր մանրիկ տերևի տակից տալիս է մանրիկ և մի փոքր վարդագույն ծաղիկ։

ՏԱՐԱԶ

Տղամարդկանց: Տարիքավոր տղամարդիկ հագնվում էին նահապետական ձևով։ Շապիկի վրա հագնում էին կուրծքը երկու կողմից իրար վրա եկող **իշլիկ:** Իշլիկը կարվում էր մանիսայից կամ դոքից՝ բյաղե ատտառով։ Իշլիկը կոճակ չուներ, այլ կապվում էր բարակ կտորից կարված երկու բարակ կապով՝ մեկը վզի, մյուսն էլ մեջքի մոտ։

Ներքևում՝ լայնափողկ բանավշա շալվարն էր՝ խոնջաններով։ Մեջքին կապում էին պարսկական քիրմանի շալ։ Մեջքի շալը ծառայում էր նաև որպես գրպան, ուր տեղավորում էին ծխախոտի տուփը, տերողորմյան (թաղբեհ), թաշկինակը, փողի քսակը (քիսա) և այլն։ Ջքավորները կապում էին Վանի գործած հաստարակ շալեր, իսկ հետո՝ սև քյաղաղիկ։

Ոտքերին բրդե թելից գունավոր, ծաղկազարդ գուլպաներ ու սև պոչով սոլեր էին հագնում, չքավորները՝ պարզապես տրեխ (չարուխ)։

Գլխներին դնում էին շագանակագույն թաղիքե գգակ (քոլոզ), ճակատից վերև կապելով ոլորած, սև ու կարմիր նախշեր ունեցող, հաստ ու էժանագին կախիկներ (յաղմա)։

Երիտասարգների իշլիկի կտորը լինում էր գոք կամ պասմա, նույնպես բյաղե ատտառով, սակայն կուրծքը մեջտեղից, վերից-վար ճեղքվածքով և կոճակներով։ Շալվարները նույն ձևի էին, բայց գործվածքը ավելի գեղեցիկ, երկարությամբ կարմիր ու սպիտակ զոլերով։ Այդ շալվարներն ունենում էին երեք կամ հինգ զոլ։ Վերջինն ավելի թանկ արժեր։ Երիտասարդների մեծամասնության իշլիկների առաջամասի երեսի կտորն ավելի լայն էր, քան աստառինը։ Ջթի այգ հավելյալ մասը պարանոցի մոտ քաղ էին անում, բացվածքը կողքի վրա անում։

Իշլիկի վրա հագնում էին ելագ։ Ելագը՝ թևերի տեղերը լայն բացված, կուրծքը կիսաբաց, մինչև փորի կեսը հասնող, կրծքի երկու կողմերում փոքրիկ գրպաններ ունեցող կիսաղգեստ էր։ Այն կարում էին վանեցի գերձակները՝ առաջամասը եվրոպական բրդե կտորից, ետնամասը՝ սև սատինից։ Ելագը ևս աստառով էր լինում, սակայն ոչ թե սպիտակ կամ զոլավոր, այլ սատինե։ Երիտասարդները նույնպես մեջքին քիրմանի շալ էին կապում՝ վրայից նույնպես կրծքի երկու կողմը սպիտակ, իսկ մնացածը սև, կարճաթև (արմունկներից շատ վերև) ու մինչև մեջքը չհասնող չուռ քյաղաղիկ էին հագնում, իսկ ոտքերին սպիտակ, զունավոր նախշերով, մինչև ծունկի ներքևը հասնող բրդե գուլպաների վրա հագնում էին սև **կունդուրա** (կիսակոշիկ)։ Ելագի վրա ոմանք կըրում էին արծաթե շղթայով ժամացույց։

Երիտասարդներն իրենց քոլոզի շուրջը ոչ թե յաղմա էին փաթաթում, այլ սպիտակ գծերիղներ

ունեցող, սև մետաքսե մեծ ու թանկարժեք փուշիւ Փուշիները տյնպես էին ոլորում և այնպիսի ձևով փաթաթում բոլորի շուրջը, որ ծոպերը կախ ընկրնեին ճակատի շուրջն ու ծոծրակի վրա։ Զգավորներից ոմանք հագնում էին գյավր (գորշ) շալվար, որն իր տեսակի մեջ ամենաէժանագինն էր, մինչդեռ ունևորներից ոմանք (ծերերը), քյաղաղիկի փոխարեն հագնում էին մուգ շագանակագույն վերարկու։

Տարեց կանանց: Տարիքն առած կանայք, որ մինչև 1896 թ. կոտորածը հագնվել էին Վան-Տոսպի ու Թիմարի դավառների հայ-գեղջկական ընդհանուր ձևով և նրանց արգուղարդն էին պահպանել, կոտորածից հետո վերջ էին տվել գլխի, պարանոցի և կրծքի ու մազերի բազմապիսի արծաթե զարդերին, ինչպես նաև գասաակներին ու ոտքերի կոճերին հուլունքներ կապելուն և աչքերին սև գեղ դնելուն։ Եվ այդ բանը արել էին ոչ թե հնարավորություն չունենալով նորից արդուզարդ դնելու, այլ ուղղակի պարզ նորաձևությունը հետեվելու համար։ Սակայն պահպանել էին հագուստի հին ձևը։

Հասակավոր կանանց հանդերձը հետևյալն էր՝ շապիկը հասնում էր մինչև աղդրերի կեսը, բաց թողնելով վարտիքի մեծ մասը. վարտիքը լայն էր՝ վերևը խոնջանով, երկարությունը ծածկում էր սրունքների մի մասը։ Վարտիքի փողքերը մանր-մանր փոթեր էին անում և այդ փոթերին, որպեսզի այլևս չքանդվեն, կարմիր կայթան էին կարում։ Ընդ որում, կայթանը գնում էին Վանի խանութից, չունևորներն էլ գործում էին իրենք՝ բրդե թելից և այնքան բարակ, որ ոչնչով չէր տարբերվում մեքենայով գործածից։

Վարտիքը կարում էին հատկապես ռուսու պասմա կոչված, կարմիր ֆոնի վրա նշաձև սպիտակավուն ծաղիկներ ունեցող չթից՝ բյազե աստառով։ Շապիկի վրա հագնում էին բյազե աստառով չթե իշլիկ՝ առաջամասը ամբողջությամբ ճեղքված ու կոճակներով։

Իշլիկի վրա հագնում էին ֆոնը կարմիր կամ սպիտակ (նայած տարիքին, ընդ որում, սպիտակ ֆոնովը հագնում էին ավելի երիտասարդները) մեջը սև գծեր ունեցող մանիսա ղպուն կոչվող ամբողջական զգեստ։ Ջպունը կարվում էր բյազե աստառով ու պարանոցից մինչև ներքև ճեղքված։ Ճեղքվածք էին ունենում նաև երկու կողքից, սկսած աղդրերից քիչ ներքև ու մինչև վերջ։ Թևերը հարթ, առանց որևէ ձև տալու, քիչ էլ լայն։ Կարում էին կտորի լայնքով, որպեսզի սև գծերը թևերի շուրջն օղակներ գոյացնեին։ Կողքերին. բացվածքներից վերև. ղպունի ներսի կողմից, կարում էին գրպաններ։ Կողքերի բացվածքների շուրջը (սկսած վերևից), չորս մատի լայնքով կարում էին կայթան։ Կայթան էին կարում նաև վզի բացվածքի շուրջը և կոճկում էին պարանոցի տակ կարված մի հատիկ արծաթե կոճակով։

Ջպունի կողքերի «չաք» կոչվող ճեղքերից երևում էր և՛ չորս մատնաչափ սպիտակ շապիկը, և՛ մինչև սրունքների մեկ երրորդ մասը ծածկող կարմիր ծաղկավոր վարտիքը։

Ջպունացու մանիսան վաճառվում էր առանձնակի հակերով։ Յուրաքանչյուր հակը մի ղպունացուից ավելի չէր լինում։ Մեջքին կապում էին պարսկական քիրմանի շալ։ Շալին տալիս էին եռանկյունու ձև և կապում այնպես, որ սուր ծայրը ընկներ ետև։

Շալը կապելուց առաջ իրար վրա էին քաշում ղպունի աջևի մասերը, այդպիսով ապահովելով դրանց բացվելը։

Կրծքին կապում էին պարանոցից մինչև ներքև տարբեր չթերից երկաակ կարված գոգնոցը, որն ընդգրկում էր կուրծքն ու թևերի տակը և կոճկվում ետևը՝ թիկունքից ներքև։ Գոգնոցի վերնամասի շուրջը ևս կայթան էին կարում։ Գոգնոցը ետևից կոճկվում էր կաղինաչափ արծաթե մի հատիկ կոճակով։

Բարդ էր կանանց գլուխը կապելու պարագան։ Մազերը, եթե կարված չէին, հյուսում էին մեկ ճյուղ։ Գլխին ամենից առաջ դնում էին կարճացված ու ծոպը պոկված մի հին ֆես։ Ֆեսի վրա, գագաթի վրայով կապում էին փողֆիկը: Դա փոքրիկ եռանկյունի մի գլխաշոր էր, որի միջին ծայրը ծածկում էր ծոծրակը, իսկ երկու եզրածայրերը ծնոտի տակից հասնում էր գագաթին։ Այդ ծայրերը ֆեսի վրայից կապ էին գցում։

Գլխի առաջամասից կապում էին երկաակ չըթից կարված մի ավելի փոքր եռանկյունի, որ կոչվում էր ճայտի կապ (ճակատի կապ)։ Ճայտի կապը արդարացնում էր իր անունը, որովհետև այն իսկապես էլ ծածկում էր ճակատը։ Ճակատակապից հետո կապում էին չթե չոմբարը: Վերջինս կապում էին գագաթի մոտից, տակը թողնելով ճակատակապի միջին սուր ծայրը։ Այս չոմբարը անհամեմատ մեծ էր, իսկ չոմբարի վրայից գցում էին մի անկյունը ներս ծալած կանաչ ֆոնով ծաղկավոր յաղմա։

Որպես զարդ, համարյա անխափ, գասաակ-

ներին կրում էին արծաթե ապարանջաններ, որոշ կանայք պարանոցին կապում էին մեկ շար մարջան կամ սաթ։

Ոտքերին, ձմռանը նախշուն գուլպա՝ վրան սոլ, իսկ ամռանը՝ միայն սոլ։ Հարուստների տարեց կանայք ևս թաղթափափուշ էին հագնում։ Չըքավոր կանայք ամռանը շրջում էին լրիվ ոտաբաց, աղջիկներն ու մանուկները՝ նույնպես։

Աղջիկների: Աղջիկները հագնում էին վանեցուհիների օրինակով՝ տան մեջ **պասմա ֆստան** (շրջազգեստ)։ Նրանք լրիվ գլխաբաց էին, մազերը մի ճյուղով հյուսած, բաղունչքը մեջտեղից կամ կողքանց բացած։ Ճակատից վերև մազերի վրայից կապում էին երկու մատի լայնությամբ մանուշակագույն կամ մուգ կապույտ թավշյա ճակատի կապ, որի ծայրերը հանգուցում էին հյուսքի տակ։ Մազերի հյուսքի ծայրին, մազերի հետ հյուսում էին գույնզգույն մետաքսե կարրանքներից պոչիկ։

Ունեորներն ականջներից կախում էին լալով ու մարգարիտով ճոխացրած արծաթե երեք ճյուղանի ականջօղ, պարանոցին՝ մի շար հուլունք, լիներ դա մարջան կամ երկնագույն հասարակ հուլունք։ Ֆստանի տակից պարանոցը օղակող դավք կոչված հավելյալ վզկապ էին կապում և ֆստանի օձիքի տակից դուրս թողնված սպիտակ ժանյակը՝ գավքը, նոր ու մաքուր շապիկի պատրանք էր տալիս։ Ֆստանի վրայից, առջևը, կապում էին պասմայից **փեշտըմալ**, իսկ ոտքերին հագնում պայտավոր ու մեխապատ սև թաղթափափուչներ։

Շատերը ֆստանը փոխարինել էին **չալեամիսով** (փեշ-վերնաշապիկ)։ Աղջիկները, հարուստ, թե չունևոր, իրենց հագուստով բոլորովին չէին տարբերվում։

Հարսների: Արճակցի քոլողավոր սկեսրայրները, երբ վանեցու վաճառատուն էին մտնում, հատկապես հարսանեկան գնումների ժամանակ հիվանդագին շահագրգռվածություն էին ցուցաբերում, որ իրենց հարսների համար պատվիրելիք **փալթո–ֆստանը** լինի ամենաընտիր կտորից և կարվի նորաձևությամբ։ Այնպես որ, արդեն սովորական էր դարձել արճակցի հարսների համար եվրոպական ձևի, ետևն առանց ճեղքվածքի **փարդիսան** (կանացի վերարկու) և **կոռնե** (մետաքսե գործվածք) **չալեամիսան**: Իսկ նրանք, ովքեր ավելի վաղ էին ամուսնացել, հագնում էին փալթոն ու ֆստան, որը նույնիսկ վանեցի երիտասարդ կանայք էլ էին դեռ հագնում։ Այդ ֆստանի կուրծքըն ու օձիքը լինում էր սև թավշե հավելվածով, երկու մատի լայնությամբ սև թավիշ էր դրվում շրջագծին, իսկ թևերի վերևի մասը լինում էր բարձրաթեք ուռուցիկ (փուփուշով), ինչպիսին կարում էին աղջիկները իրենց պասմա-ֆստանները։

Վերարկուները (փարդիսա) լինում էին ընտիր սավե, իսկ ոմանցը՝ թավշե կտորից։ Հագնում էին սև բարձրաճիտ կոշիկներ, սև լաք կրկնակոշիկներով։

Որպես ղարդեղեն հարսները, որոնց ամուսինները նոր էին վերադարձել պանդխտությունից, ունենում էին մեկից երկու ոսկե մատանի, դաստակին՝ լայն ապարանջան, դրա աջ ու ձախ կողմերում՝ մի զույգից երկու զույգ արծաթե շատ բարակ **խալխալ** կոչվող ապարանջան կամ բարձլագիր, ոսկեզօծ նախշերով ապակե գունավոր օղակաձև ապարանջան։ Կրծքին ունենում էին արծաթե կամ ոսկե (նայած կարողության) ժամացույցի շղթա։ Մեջքներին կրում էին Վանի հռչակավոր վանքանկար արծաթե քամար, պարանոցին, երկնագույն հասարակ հուլունքների մեջտեղում, մեկից ավելի օսմանյան լիրա, ոմանց, նորից ըստ կարողության, լինում էր **բեշի–բիյլիկ** (հինգ լիրանոց), իսկ ականջներին՝ օրիորդական երեք ճյուղանի լալազարդ ականջօղերի վրայից կախում էին արծաթե օղերով օսմանյան մի լիրանոց ականջօղեր։

Այսպիսով, արճակցի նորահարսերը լինեին տեղի աղջիկներ, Վանից, թե հեռավոր հետամնաց որևէ գյուղից բերված, իրենց ամուսնական հանդերձով միմյանցից չէին տարբերվում։ Գըլխըներին էլ գցում էին սպիտակ ֆոնով ծաղկավոր յաղմա։ Հարսները սկզբի ամիսներին, նույնիսկ մինչև տարին լրանալը, այդ յազմայի երկու եզրերը կարում էին իրար, բաց առպրակի ձևով գըցում գլխներին և տղամարդկանց ներկայությամբ այդ առպրակները իջեցնում էին ներքև ու դեմքը ծածկում։

Նուրբ յազմայի տակից նրանք ամեն ինչ հըստակ տեսնում էին։

Երեխաների: Ամենափոքրիկները միատեսակ **թուլում** էին հագնում։ Թուլումը շրջազգեստի ամենահին ձևն էր։ Մազերից, ճակատի կողմից, կախում էին կլորավուն **աչքր ուլնիկ**, ինչպես նաև նշաձև աչքի ուլնիկ էին կարում մանկան ուսերին։ Թուլումի վրայից հագցնում էին տնասատ չթե վերնաշոր, որին վերարկու էին անվանում, երեխի վրայից հագցնելու պատճառով։

Մանկան մեծանալու հետ աչքի ուլնիկները պոկում էին, մեկ տարուց ավելի հասակ ունեցողների համար այլևս նոր վերարկու չէին կարում։

Հինգ տարու հասած աղա երեխաներին արդեն հագցնում էին իշլիկ և թումբան։ Վերջինս կարում էին սպիտակ կտավից, փողքերը փոթփոթած, որ կապում էին ծնկից ցած։

Թումբից թումբանին անցնելուն անվանում էին ոտ տոպրկել։ Տասից տասներկու տարեկանների գլխներին առանց փաթաթանների քոլոզ էին դնում, իսկ մեջքներին փոքրիկ ռամրակե շալ կապում։

Տղա երեխաները, լինեին դպրոցական, թե վարձու հոտաղ, այդ տարազով էին մինչև մեծանալը։ Հետո արդեն սկսում էին հագնել շալվար, կապել փուշի և այլն։

Աղջիկներին, ինչպես ամենուր, Արճակում ևս վաղ էին սկսում օրիորդի ձևով հագցնել։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արճակը Վանի նահանգի տասնչորս գավառներից մեկն էր, Արճակ գյուղը՝ գավառի կենտրոնը։

Արճակի գավառը վարչական տեսանկյունով մյուդուրլըք (մյուդուրանիստ) էր։ Ըստ օրենքի, մյուդուրը պետք է ենթարկվեր կայմակամին, սակայն Արճակի մյուդուրը միշտ էլ հաշվետու է եղել Վանի վալիին, այսինքն՝ նահանգապետին։ Արճակում կար հասարակ կազմով ոստիկանություն՝ ոստիկանապետով ու ոստիկաններով, հեռագրատուն, ինչպես և հարկային բաժին, զինվորական բաժին և այլևայլ բաժիններ ներկայացնող պաշտոնյաներ։ Վերջին տարիներին ավելացավ նաև փոստը։

Մյուդուրը ներկայացնում էր գավառի գերագույն իշխանությունը, մնացած բոլոր բաժինները ենթակա էին նրան։

Մինչև 1890 թ., ընդմիջումներով, Արճակում պաշտոնավարել էին մի շարք հայազգի մյուդուրներ և այն էլ բացառապես արճակցի հայեր։ Ամենավերջին հայազգի մյուդուրը՝ Ավետիս Հյուսյանը, 1890 թ. իր ծախսերով կառուցել էր երկհարկանի մի շենք և ծառայեցրել որպես մյուդուրլըք։ Շենքն այդ նպատակին էլ ծառայեց մինչև եղեռնի օրը։ Բայց հայազգի մյուդուրներ այլևս չեղան, մինչև 1913—14 թթ., երբ մեկ տարով Արճակում նշանակվեց վանեցի պարոն Մարգար Կարա-Սեֆերյանը։

Անցյալի արճակցի հայազգի մյուդուրներից ոչ մեկը թուրքերեն գրել-կարդալ չէր իմացել, բացի Վանեցյան Պետրոսից։ Մնացած հայազգի մյուդուրները գործերը վարել էին թուրք **քաթիբի** (գրագրի) միջոցով։

Վերջին Գիսնամյակում, ընդմիջումներով, Արճակում հիմնվել ու լուծարքի էին ենթարկվել 100—200 հոգիանոց զորանոցներ։ Զորանոցների տևողությունը եղել էր վեց ամսից երկու տարի։ Գոյություն ունեցող զորանոցի շենքը միշտ էլ Արճակ գյուղի սուրբ Մեսրոպյան դպրոցն էր եղել։

Մյուդուրին հասարակական կարգով օգնական էր նշանակվում մի արճակցի հայ, որը կոչվում էր **ազա** և որը միայն անվանապես էր։ Առհասարակ պետական (գավառային) հիմնարկները, ինչպիսիք էին՝ մյուդուրլըք (գավառապետարան), կավուշ (ոստիկանատուն), կըշլա (զորանոց), թելեկրաֆ-խանա (հեռագրատուն) և մնացածները տեղավորված էին գյուղացոց սեփական երկհարկանի բնակարաններում (իհարկե, առանց որևէ փոխհատուցման)։

Պաշտոնյաներից շատերն իրենց ընտանիքները պահում էին Արճակում։ Սրանք ևս ապրում էին հայերի տներում և եթե երկհարկանի շենք չըկար, ապա անպայման դրսի հոդայում։

Տանտերերի կողմից մատուցված ծառայությունները, ինչպիսին էր՝ հաց թխելը (որին ոչ մի պաշտոնյայի կին ընդունակ չէր) կամ աղբյուրից ջուր բերելը, նույնիսկ իրենց վառելիքը հայթայթելը, թե՛ պաշտոնյաները, թե՛ իրենց կանայք համարում էին հյուրընկալման ընդհանուր կանոն, ուրիշ ոչինչ։ Հաճախ այդ խանումներն այցի էին գնում համրաների կանանց և հյուրասիրվում օշարակով, սուրճով ու ծխախոտով, երբեմն էլ մնում էին ճաշի։ Սա համարվում էր հայ ընտանիքի հանդեպ սիրալիրության ցուցաբերում։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ

Ազա։ Նշանակվում էր մյուդուրի կողմից, լինում էր հարգված ու տարիքավոր անձնավորություն։ Ըստ օրենքի, ազան պետք է հանդիսանար բնակչության և կառավարության միջև անմիջական կապ պահպանողն ու հասարակության կարիքների մասին իշխանությանը տեղյակ պահողը։ Սակայն իրականում նա ոչ մի արտոնություն չուներ, բացի որոշ դեպքերում մյուդուրին ներկայանալուց, այն էլ՝ նրա կանչով։ Այս ամենով հանդերձ, ազա տիտղոսը պատկառազդու էր։

Ռես (գյուղապետ), գյուղի կարևորագույն

դեմքն էր, ընտրվում էր գյուղական համայնքի կողմից՝ գյուղի տոհմիկ հարուստ ընտանիքից՝ տարիքով ու բանիմաց։ Պետք է լիներ ազդեցիկ անձնավորություն և լավ տիրապետեր թուրքերենին։ Ռեսը անմիջական ներկայացուցիչն էր գյուղացիների և պետության միջև թե՛ արճակցիների, թե՛ այլևայլ գյուղերի միջև ստեղծված համայնքին վերաբերող գործարքները կարգավորողը։ Ռեսի տանն էին իջևանում կառավարության հետ առնչություն ունեցող գավառի տարբեր գյուղերից եկած մարդիկ (եթե գյուղում ծանոթներ չունեին), անծանոթ ուղևորները, փահլևանները և ուրիշները։ Ռեսի տանն էր սնվում նաև գյուղի գզիրը։ Ռեսը թեև տնտեսական զոհաբերումների առաջ էր կանգնում, սակայն ոչ մի վարձատրություն չուներ, բացի մի ղուրարայից, որից նյութապես ոչինչ չէր շահում։

Մաջլիսներ: *Սրանք ռեսի անմիջական օգնականներն էին, նույնպես ընտրվում էին գյուղական համայնքի կողմից։ Մաջլիսները հինգն էին, նույնպես տարեց ու տոհմիկ գյուղացիներից։ Նրանց դերն էր օգնել ռեսին գյուղի հասարակական գործերը վարելուն, ռեսի բացակայության ժամանակ կարգավորել հասարակական աշխատանքները, մասնակցել պետական հարկը հավաքելուն, կատարել իշխանությունից եկած անակնկալ պահանջները, ուրիշ գյուղից եկած որևէ բանագնացի հետ բանակցել և այլն։ Մաջլիսները ևս աշխատում էին հասարակական կարգով, առանց որևէ բան ավելացնելու իրենց ունեցվածքին, առանց արտոնության։*

Գզիր, *վարձվում էր ռես-մաջլիսի կողմից, լինում էր չքավորներից։ Նա պետք է շատ թե քիչ իմանար թուրքերեն խոսել, բնավորությամբ ոչ դյուրազգաց կամ խեղճ, ֆիզիկապես էլ լիներ տոկուն։ Պետք է միշտ մոտիկ լիներ մյուդուրլըքին, կատարեր պաշտոնյաների կողմից իրեն տրված հանձնարարությունները։ Նա առաջինն էր ներկայանում Արճակի ռաղմապիսի* **կոնախներին**, *բաժանում նրանց գյուղացոց տների վրա, հաշվի առնելով յուրաքանչյուրի աստիճանն ու քմահաճույքները, ըստ այդմ էլ ապահովելով նաև սպասարկումներով։ Ոչինչ սխալի կամ մի փոքր հապաղման դեպքում գզիրն էր, որ կոնախների կողմից ենթարկվում էր լուտանքի, նաև՝ ծեծի։ Քչերն էին, որ հանձն էին առնում գզրի աշխատանքը*[1]։

Գզրի աշխատավարձը գանձվում էր գյուղական համայնքից, յուրաքանչյուր տնտեսության տվյալ տարվա ստացած հացահատիկի քանակի չափաբերական հաշվով։ Ինչպես ամեն տեսակի գանձումները, գզրի աշխատավարձը ևս հացահատիկն էր և գանձվում էր կալոցին՝ կալատեղիներից։

Ռես-մաջլիսը նախօրոք որոշում էին, թե այսինչ տնտեսությունը տվյալ տարին ինչքան բերք ունի, և մաջլիսներից որևէ մեկն ու գզիրն այդ տնտեսության կալատեղն էին գնում։ Շահնաների գործը վերջացնելուց հետո, մի շարք հասարակական վարձահավաքների թվում լինում էր և գզրի վարձ հավաքելը։

Եթե տվյալ կալատեղը լիառատ բերք էր ստացել, և բերքը կիսրար չէր, բոլորը տվյալ տնտեսությանն էր մնում, ապա ռես-մաջլիսն էլ հաշվումների ժամանակ, ի շահ գզրի, խախտում էին գզրի աշխատավարձի կանոնները։ Եվ ոչ մի արճակցի չէր առարկում դրա դեմ։

Ջրբաշ: *Վարձվում էր ռես-մաջլիսի կողմից։ Ջրբաշի պարտականությունն էր շրջել դաշտերը, հսկել ջրատար առուները, ուղղել դրանց փոքր ու աննշան վթարները, մեծ վթարների մասին իրազեկ դարձնել ռես-մաջլիսին։*

Ջրբաշը լինում էր հաշվից գլուխ ունեցող և բավականին սիրված անձնավորություն։ Նա էր արտատերերին ջուր բաշխում, ըստ նրանց ունեցած ջրային պճեղների, հսկում էր, որ ջուրը կանոնավորապես հոսի ջրվելիք արտը և վերջինս ջրվելուց հետո, ջուրն ուղղում էր դեպի հերթական ջրվելիք հաջորդ արտը։

Ջրբաշը ևս իր աշխատավարձը ստանում էր հացահատիկով։ Վարձը լինում էր նայած տնտեսության տվյալ տարին ստացած ջրի ժամերի, անկախ նրանից, թե տվյալ տնտեսությունը պապենական քանի պճեղ ջրի իրավունք ուներ։

Այն ընտանիքները, որոնք ջրային մեծ իրավունքների տեր էին, բայց սնանկացել էին ու չէին օգտվում ջրային իրենց ժամերից, ազատվում էին ջրբաշին աշխատավարձ տալուց։ Սակայն նրանք պարտավոր էին ջրբաշին հայտնել, որ իրենց ջրային իրավունքը զիջում են այս կամ այն ազգականին, որը շատ ցանք ունի և քիչ ջուր։

Կստտուղչիներ *(ցանքերի ու խոտհարքների պահակներ)։ Լինում էին երկուսից-երեք հոգի։*

---

[1] *Խրիմյան Հայրիկն իր «Պապիկ ու Թոռնիկ» վիպակում ընթերցողին ներկայացնելով Արճակի գզրի տապանաքարը, մեջ է բերում մի երկար տապանագիր, որի մեջ ասվում է. «Գզեցին, գզգզեցին ինձ այդ «հյուրերը», և «Արճակի գզիրն իր տապանագիրը վերջացնում է մի այսպիսի պատգամով՝ «Ինչ աշխատանք անում եք, արեք, բայց ոչ Արճակի գզրությունս»։*

Վաղ գարնանից մինչև ուշ աշուն շրջում էին դաշտերում, պարտաղանց հողատերերի ու պատահական անցորդների անասուններից պահպանելով ցանքերն ու խոտհարքները։

Նման պարտազանցներին կարգի հրավիրելու համար չէին զլանում դիմել մահակի օգնությանը։ Հիշյալ պահակները արգելում էին նաև կանանց ու աղջիկներին ցանված արտերից բանջար քաղելը։ Կոռուղչիների աշխատանքը թեթևանում էր սկսած խոտհնձից մինչև աշնանացանի կանաչելը, այսինքն՝ սեպտեմբերի սկզբները։

Կոռուղչիների աշխատավարձը որոշվում էր սարքված խոտհարքների ու ցանքատարածությունների չափերի հաշվով։ Կոռուղչիները ևս վարձվում էին ռես-մաջլիսի կողմից և իրենց վարձը հավաքում էին կալոցին, կալատեղիներում։

Նոբադարներ (գյուղի գիշերապահներ)։ Հայերը զենք կրելու իրավունք չունեին, իսկ գյուղը գայլերից ու թալանչիներից պաշտպանվելու նախապայմանը հրազենն էր։ Նոբադարները լինում էին պավլտուի քրդական գյուղերի քրդերից, նայած հանգամանքներին, երկու կամ երեք հոգի։

Սնվում էին հերթականորեն՝ գյուղի ունևոր ընտանիքներում։ Այդ հերթականությունը որոշվում էր ռես-մաջլիսի կողմից։ Որպես լեռնաբնակ ու առողջ տղամարդիկ, նոբադարները աչքի էին ընկնում լավ տխուրժակով, բայց ոչ ծայրահեղ պահանջկոտությամբ։ Սակայն տանտերերն իրենք էին մտածում նրանց սնունդը լավ անել, այն է՝ անպակաս լիներ ձվածեղը, յուղով շաղախած փոխինդն ու ճմուռը և այլն։

Նոբադարներին կերակրելու պարտավորությունից զերծ էին մնում չքավոր ընտանիքները, այրիները և այն պանդխտածների ընտանիքները, որոնց տներում հասուն տղամարդիկ չկային։

Նոբադարները վարձվում էին ռես-մաջլիսի կողմից՝ հնչուն դրամով։ Նրանց վարձը լինում էր յուրաքանչյուրին երեքից հինգ հարյուր ղուռուշ։ Այս գումարը բաժանվում էր գյուղի տնտեսությունների վրա, ըստ նրանց կարողության։

Նախարարներ: Որանք երկուսն էին, որոնց նույնպես վարձում էին ռես-մաջլիսները։ Աշխատավարձը տալիս էին այն ընտանիքները, որոնք իրենց անասունների համար առանձին վարձած հոտաղներ չունեին։ Վարձատրվում էին ըստ իրենց արածեցրած անասունների գլխաքանակի, յուրաքանչյուր անասունին՝ մեկ որեկ ցորեն կամ երկու որեկ գարի։ Աշխատավարձը հավաքում էին կալոցին իրենք՝ նախրորդները։ Մատղաշ հորթերն ու գոմշաձագերը նախիր չէին ուղարկվում։

ՀՈԳԵՎՈՐ ԿԱԶՄԸ

Եկեղեցին: Գյուղն ուներ սուրբ Գևորգ անվամբ բավականին մեծ ու լուսավոր եկեղեցի։ Այս շինված էր 1878 թ. շեյխ Ջալալեդդինի հրոսակների կողմից հրդեհված նախկին համանուն եկեղեցու հիմքերի վրա։

Եկեղեցու հիմքը մի մետրաչափ քարերով էր շարված, մնացածը հում աղյուսից էր։ Դրսից բարձրանում էր մի մեծ գմբեթ և մի փոքրիկ զանգակատուն, մնացած կտուրը հարթ էր։ Ներսից, հենց դռան մոտից, շենքի մի մասը ճաղերով անջատված էր ընդհանուր եկեղեցուց։ Այդ մասը երկհարկանի էր։ Դա կանանց բաժանմունքն էր, վերևում՝ երիտասարդ հարս-աղջիկներն էին, ներքևում՝ տարեց կանայք։ Եկեղեցու հինգ զույգ փայտե սյուները ժամանակին գնվել էին տասը մեծատոհմիկ արճակցիներից, և նրանց ալեհեր ժառանգորդները եկեղեցի գալիս կանգնում էին իրենց պապենական սյան տակ։

Մի քանի էժանագին սրբապատկեր, խաչազարդ ժամագիրք, մի արծաթյա սկիհ, զույգ ծնծղա, երկու խաչ, մի զույգ հին փիլոն, մի քանի մոմակալ, խորանի չթե վարագույր, երկու տասնյակ չթե ժամի շապիկ, մկրտության կոնք, մի երկու բուրվառ և հատակին փռված խսիրներ, մեկ էլ նախկին սուրբ Գևորգից մնացած զանգը։ Այս էր սուրբ Գևորգ եկեղեցու ամբողջ գույքը։ Եկեղեցուն էր պատկանում նաև 1907 թ. աշխատանքի գցած (դեռ 1891 թ. կառուցված) ձիթհանը։

Հոգևորականները: Քահանա: Արճակի եկեղեցում միշտ էլ սպասարկել են երկու քահանա։ Ավագ քահանան ավագության պատվին էր արժանանում իր տարիքի և քահանայական պաշտոնի վաղեմության շնորհիվ։ Քահանաներն առանձնակի վարձատրվում էին կնունք, պսակ և թաղում կատարելիս։ Բացի այդ, յուրաքանչյուր ծուխ քահանային էր ընծայաբերում տարեկան մեկ օխա յուղ, ինչպես և մի սարակ (աշխատող) էր ուղարկում քահանայի դաշտային աշխատանքներն անելու։ Երբեմն, տոնական պատարագների պահերին, եկեղեցու ավագ տիրացուն, մի ձեռքով ծխացող խնկարույր բուրվառը թափահարելով, մյուս ձեռքին փոքրիկ թասը բռնած, մոտենում էր աղոթողներին ու մրմնջում, օրինակ՝ «խունկ-մոմի», «Այսմավուրքի» կամ «ժամասան խամար» և այլն։ Աղոթողները տասական կամ շատ-շատ քըսանական փարա էին գցում թասի մեջ, դրանով մասնակցելով եկեղեցուն խունկ-մոմ, Այսմավուրք և այլ պիտանի բաներ գնելու համար հավաքվելիք դրամական հանգանակությանը։

Բայց կար նաև «ժամվորի թաս», այսինքն՝ հանգանակություն այդ օրվա պատարագ մատուցողի օգտին։ Եվ հացառատ, բայց հնչուն դրամից միշտ պակասություն ունեցող արճակցիները, նույն չնչին տասը փարաներն էին գցում «ժամվորի թասի» մեջ։

Ծննդյան տոներին քահանան ժամհարի և երկու սարկավագի ուղեկցությամբ շրջում էր իր ծխի տները տնօրհնեքի։ Տանտիկիններն ալյուրի մաղի վրա երկու լավաշ էին դնում, քահանան օրհնում էր տունն ու ալյուրի մաղը, ժամհարը վերցնում էր հացը, դնում իր չվալը, իսկ քահանան մաղի վրա դնում էր Հիսուսի խաչելության պատկերով կնքված կլորավուն նշխարը։ Օրհնված տանտիկինը քահանայի ձեռքի խաչն ու Ավետարանը համբուրելիս Ավետարանի վրա էր դնում տնօխնեյան (տունն օրհնելու վարձը), որը լինում էր արծաթե քառասուն փարանոց կամ երկու կուռուշանոց։ Տնօրհնեքի փողը որոշակի չէր՝ ով ինչքան տար։

Նույն գործողությունն էր կրկնվում նաև Քրիստոսի հարության տոնին, միայն այդ օրը մաղի վրա դրված երկու լավաշին ավելացվում էր նաև չորս կարմիր ձու՝ երգեցիկ մանկահասակ սարկավագների համար։ Պսակի, կնունքի և թաղումի համար կանխատեսված հնգական կուռուշ վարձը պարտադիր չէր կանխիկ վճարել, սակայն նման արտակարգ դեպքերում քահանան պատրաստակամորեն գնում և կատարում էր իր հոգևոր դերը։ Նշանդրեքների ու հարսանիքների ամենակարևոր անձնավորությունը քահանան էր և ամենաառաջին հրավիրյալը նա էր լինում։

Լուսարար: Արճակում լուսարարը եկեղեցական գծով հասարակական աշխատող էր, որն իր դերն անշահախնդրությամբ կատարում էր։ Լուսարարը հսկում էր «ճրագ-լույսի» վրա։ Առավոտ-երեկո, ժամասացությունը սկսվելուց առաջ, նա էր վառում եկեղեցու ճրագները։ Լուսարարն էր դնում գործածվելիք մոմն ու խունկը, հոգ տանում պատարագների պահերին օրհնվելիք գինու մասին։ Քահանայի հետ լուսարարն էր պատրաստում եկեղեցում բաժանվող ծխախոտի թղթի նրբությամբ պանցրագը և խաչելության կնիքով կլորավուն նշխարը, պատարագի պահերին լուսարարն էր աղոթողներին պանցրաց բաժանում, հետևում ավետարանների ու այլ սրբությունների պահպանմանը, ինչպես նաև ժամի շապիկների մաքրությանը։

Տարեկան մի քանի անգամ, պատարագների արարողության պահին, ինչպես պատարագիչ քահանայի օգտին էին հանգանակության թաս պըտըտեցնում աղոթողների շարքերում, նույնպես և լուսարարի օգտին՝ տարին երկու, թե երեք անգամ, աղոթողների շարքերում պտտեցնում էին լուսարի թասը։

Ժամհար: Սրա պարտականությունն էր օրը երկու անգամ, այսինքն՝ այգաբացին ու վերջալույսին, եկեղեցու զանգեր տալը, ճրագները ձեթով լցնելը, նախօրոք դրանց կարճացրած պատրույգները փոխելով նորերով, եկեղեցու կտուրը ձնից մաքրելը, խսիրներով ծածկված հատակն ավլելը և այլն։

Ժամասացություններին ժամհարն ամենաառաջինն էր եկեղեցի մտնում և գնում ամենավերջինը։ Նրա մոտ էր գտնվում եկեղեցու բանալին։ Գյուղում մահացություն լինելու դեպքում, առաջինը ժամհարն էր հայտնվում ննջեցյալի դռանը, ուսին դրած մշտապես եկեղեցու սրահի մի անկյունի պատին հենված նաշը։ Եթե ննջեցյալը տղամարդ էր, ապա նրան լողացնող երկուսից մեկը ժամհարն էր, ննջեցյալին եկեղեցի տանող նաշակիրներից առաջինը նորից ժամհարն էր, եկեղեցում տղամարդ ննջեցյալին պատանողը նորից նա էր։ Նա ննջեցյալին, նրա հարազատներին հավասար, ուսերի վրա հասցնում էր մինչև գերեզմանը։

Ժամհարի աշխատավարձն էր՝ հարուստ տներից, կալոցին, տունը չորս ոբեկ ցորեն, տարին մեկ անգամ, յուրաքանչյուր տնից յոթական հաց (որը տանտիկիններն աղոթելու գնալիս իրենք էին տանում եկեղեցի), ինչպես նաև տնօրհնեքների օրերին ամեն մի օրհնված տնից՝ երկուական հաց։

Տիրացու: Արճակի եկեղեցու տիրացուները լավ ձայն ունեցող, գրագետ, երիտասարդ մարդիկ էին, որոնք այդ դերը կատարում էին կամավոր։ Տիրացուներից մի քանիսը եկեղեցու հոգաբարձուներ էին, մի քանիսը՝ դպրոցի հոգաբարձուներ և տիրացվական դերը կատարում էին ոչ թե կրոնական նեղ նախապաշարումներից ելնելով, այլ երաժշտության սիրուն, ժողովրդի հանդեպ ունեցած հարգանքից և այլն։ Տիրացվական դեր կատարելուց հետո, այդ մարդիկ մնում էին երկրագործի իրենց բնական դերի մեջ։

Սարկավագ: Սարկավագները դպրոցի բարձր դասարանցի, լավ ձայն ունեցող աշակերտներն էին։ 14—15 տարեկան այդ պատանիները, ժամի շապիկը հագներին, մասնակցում էին երգեցողությանը, խշշոցներն էին շարժում, նեղ ու երկար թղթե ժապավենի վրա դրված Դանիել, Եսայի

մարդարեների ընթերցվածներն էին կարդում, հաղորդության պահերին, հաղորդություն տվող քահանայի աջ ու ձախ կողմերում նստած, վառ կերոնները ձեռներին, «աշակերտություն» էին անում, տնօրհնեքներին, քահանայի հետ տներն էին օրհնում՝ իրենք ևս իրենց բաժինը երգելով. Հարսանիքի օրերին, պսակի ժամանակ, մոմը ձեռներին կանգնում էին քահանայի առաջ, իսկ պսակի արարողությունից հետո, հարս-փեսայի առաջից գնալ դուրս ընթացող երգեցիկ խմբի մեջ էին մտնում։

Այս ամենն իրենց հասակակից տղաների համեմատությամբ առավելություն էր, սակայն առավելագույնն այն էր, երբ ծնողները նրանց համար նոր ժամաշապիկ էին կարում։ Նոր ու իրենց հասակին համեմատ կարված ժամի շապիկը հագած եկեղեցու բեմում հայտնվելը, հպարտությամբ էր լցնում թե՛ աշխարհի չարին ու բարուն դեռ անծանոթ մանուկների, թե՛ նրանց ծնողների հոգին։

Երեցփոխան: *Սա ընտրվում էր համայնքի կողմից։ Երեցփոխանն առհասարակ գյուղի համբաններից էր. նա պետք է լիներ ծանրաբարո, կրոնապաշտ ու տարեց անձնավորություն և մանավանդ՝ հյուրընկալ ու լայնսիրտ։*

Երեցփոխանը պարտավոր էր հոգ տանել և՛ եկեղեցու կարիքներին, և՛ դպրոցը բարեկարգ պահելուն։ Դպրոցի գոներին փականներ դնելը, լուսամուտների ապակիներ գցելը, թիթեղե վառարաններն ու վառելիքն առնելը, դպրոցի ու եկեղեցու կտուրները սվաղելը, ուսուցիչներին բնակարանով ապահովելը և խոստացված քանակությամբ ալյուր տրամադրելը, եկեղեցապատկան միակ շահութաբեր կետի՝ ձիթհանի անխափան աշխատանքին հետևելն ու ստացված շահույթի նպատակահարմար օգտագործումը մտնում էին երեցփոխանական պարտականությունների մեջ։

Երեցփոխանի տանն էին իջևանում կրոնական գործի հետ որևէ առնչություն ունեցող ուղևորները, ինչպիսիք էին ամեն տարի եկող Շատախի «Փյութկի» սուրբ Գևորգի նվիրահավաքները, Պարսկաստանից Մուշի սուրբ Կարապետ ուխտի գնացողները և Թիմարի հռչակավոր Տիրամոր վանքին ապավինող, «Տիրամոր խեղճ» կոչված հիվանդները (բորոտները), զանազան հանգանակության կոնդակ ունեցող տարեց ու սնանկ, սակայն լրջախոհ ու հարգարժան մարդիկ, որոնց տնե-տուն ման գալուն երեցփոխանն ինքն էր ընկերակցում և ստացված հացահատիկը վաճառում և այլն։

Պարսկաստանի սահմանագլխային Սարա փոքրիկ քաղաքի և վիլայեթի կենտրոն Վան քաղաքի բանուկ ճանապարհի կենտրոնում ընկած Արճակում միշտ էլ հանդիպում էին կրոնական գծով երթևեկողներ, և նմանների համար իջևանատուն չունեցող Արճակում օրինական իջևանատունը երեցփոխանի տունն էր։

Հոգաբարձու: *Հոգաբարձուները ընտրվում էին համայնքի կողմից։ Սրանք պետք է լինեին կրոնական սնոտիապաշտական նախապաշարմունքներից զերծ, գրագետ և լուսավոր մտքի տեր մարդիկ։ Մինչև ընտրվելը նրանք դպրոցի նկատմամբ ցուցաբերած շահագրգռվածությամբ արդեն շահած պետք է լինեին համայնքի վստահությունը։*

Հոգաբարձուները հինգից-յոթն էին։ Սրանք Բաքու քաղաքում գտնվող «Կրթասիրաց միության» հետ համաձայնեցնելով, բանակցություններ էին վարում Վանի «Գավառների կրթական գործերը» ղեկավարող մարմինների ու Առաջնորդարանի հետ՝ ուսուցիչներ վարձելու խնդրում, երաշխավորում վարձվելիք ուսուցիչների ռոճիկի, բնակարանային և այլ կենցաղային պայմանների ապահովումը։

Հոգաբարձուներն իրենք էին քաղաքից առնում անհրաժեշտ դասագրքերը, տետրերն ու գրենական այլևայլ պիտույքները և դասերն սկսվելուն պես բաժանում աշակերտներին, ծնողներից գանձելով դրանց արժեքը։ Հոգաբարձուները հաճախակի լինում էին դպրոցում, տեղեկանում այնտեղի դրության մասին ու պակասներն անմիջապես լրացնում։

Նրանք թե՛ ուսուցիչների հետ էին ամուր կապ պահպանում, թե՛ Բաքվի միության հետ գրավոր հաղորդակցվում ու այնտեղից տրվող հրահանգների համաձայն գործում։ Մի խոսքով, հոգաբարձուները գյուղական մտավորականներն էին։ Դպրոցի գործը նրանք ինքնուրույն չէին վարում, այլ իրենց հաշվետու էին համարում Բաքվի «Կրթասիրացի» նախագահ Մարդար Հյուսյանի առաջ, որը կրթված ու բանիմաց մի անձնավորություն էր (հիմնադիրն էր եղել այդ դպրոցի ու «կրթասիրաց միության»)։ Թեպետ հիշյալ անձնավորությունը նյութական անապահով վիճակում էր, բայց մեծ կապեր ուներ Բաքվի հայ մտավորականների հետ և նամակային հարաբերություն էր պահպանում Վանի Առաջնորդարանի և գավառի կրթական գործով զբաղվող մարմնի հետ։

Հոգաբարձուները երեցփոխանի հետ միաձույլ էին աշխատում ու ջանք էին թափում ոչ այնքան եկեղեցին բարեկարգելու, որքան դպրոցը լավ վիճակում պահելու ուղղությամբ, ինչքան դա հնարա-

մոր էր Թուրքիայի պես նրկրի գյուղական պայմաններում։

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՎԱՔԱՏԵՂԻՆ

Համայնքը որոշակի ժողովատեղի չուներ։ Համայնական հարցերը, մեծ մասամբ արծարծվում էին կարնանն ու աշնանը, ու ժողովատեղին Փոս թաղում գտնվող «Պաղում խաչերին» մոտիկ մի պատի հովանին էր, որի դիմաց թաղված էին 1896 թ. նահատակված արճակցիները։ Այս վայրը ընդհանրապես գյուղի ծերունիների նստելու սիրած տեղն էր, որը ամենահարմարն էր խոսելու ու վիճելու համար, քանի որ հեռու էր կառավարական պաշտոնյաների աչքից։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

Պետական հարկերի հավաքը այնպես էր դասավորվում, որ յուրաքանչյուր անգամ, հարկահավաքները տարբեր մարդիկ էին լինում։ Այսպես, հողային հարկը միշտ անփոփոխ էր, քանի դեռ տվյալ տնտեսությունում չէր կատարվել հողային փոփոխություն, այսինքն՝ չէր գնվել նոր հողակտոր կամ ունեցած հողից որևէ վաճառք չէր կատարվել ու նման փոփոխությունը պետականորեն չէր ձևակերպված։

Հողային հարկ: Հավաքումը կատարվում էր հետևյալ կերպ։ Հունվարի վերջերին նյուֆուս մյուդուրը (հարկային բաժնի պետ), քյաթիբի (դրագիր), սանդխքյարի (ղանձապահ), ռեսի, աղայի և երկու ոստիկանի ուղեկցությամբ, շրջում էր արնե-տուն, ստուգում տվյալ տնտեսությունում պահպանված անցյալ տարվա հողային հարկերի վճարման համար տրված ընկալագրերը, հենց տեղնուտեղն էլ ստանում ընթացիկ տարվա հողային հարկն ու տալիս էր նոր ընկալագրեր։

Եթե պատահեր, որ տնտեսությունը հնարավորություն չունենար մինչև այդ օրը պատրաստած լինել վճարելիք դրամը, ապա տնտեսության ղեկավարը ենթակա էր բանտ նստելու[2]։

Մարդուն բանտ տանելը ոչ միայն անպատվություն էր, այլև աղետ, որից խուսափելու համար բոլորն էլ նախօրոք պետք է պատրաստած լինեին տուրքը։ Իսկ որևէ պատճառով հարկը պատրաստ չունեցողին, այսինքն՝ բանտարկվելու աղետին ենթարկվածին օգնության էին հասնում հարևան-բարեկամները, երաշխավորությամբ կամ իրենց հարսների ոսկեդրամ ականջօղերը տրամադրելով, որպեսզի վերանար բանտ տանելու խնդիրը։

Գլխահարկ: Նույն ձևով, նույն հիմունքներով և միաժամանակ էին գանձում գլխահարկերը։ Գլխահարկին ենթակա էին ընտանիքի չափահաս, արու անդամները։ Այս հարկն իր քանակով աննշանն էր։ Գլխահարկը ծանրացնում էին հենց իրենք՝ նյուֆուս մյուդուրները։ Ապրելով հայերի տներում, օգտվելով նույն տան բարիքներից, նրանց աչքից չէին վրիպում ոչ միայն տվյալ տան, այլև ամբողջ գյուղում կատարված մահացության դեպքերը։ Ակայն ռեսի ու աղայի կողմից նրանց հայտնված մահացածի անունն ու ազգանունը և խնդրանքը՝ ննջեցյալին ազատել գլխահարկից, թողնվում էր անուշադիր, ձգձգվում տարիներով, տվյալ ննջեցյալի անունով պահանջագիր էր ներկայացվում և գլխահարկ գանձվում։

Ղամշուռ (անասնահարկ)։ Ըստ օրենքի, հարկ պիտի վճարվեր երեք տարեկան խոշոր եղջերավորների և երկու տարին լրացած ոչխարների ու այծերի համար։ Բայց այս հարկի հաշվարկը Արճակում այլ բնույթ ուներ։ Փետրվարի վերջերին կամ մարտի սկզբներին, երբ դեռ ոչխարները դուրս չէին տարվել արոտի, գալիս էին ղամշուռչիները, մոտ քսան հոգի, որոնք նույնպես ռեսի, աղայի և մի երկու ոստիկանի ուղեկցությամբ շրջում էին գյուղամիջում, այն էլ ոչ միայն ոչխարաներեի, այլ հաճախ նրանց հարևանների տները։ Ղամշուռչիները չափազանց խարդախ ու ստոր մարդկանց հավաքածու էին։ Նրանք ստուգում էին ոչ միայն գոմերն ու մարագները, այլև թոնրատները, մառանները, մթերանոցները, ամենուրեք՝ մայունի ու բառաչի ձայներ արձակելով, որպեսզի հայտնաբերեին թաքնված անասուններին, թեև Արճակում երբեք նման դեպքի չէին հանդիպել։ Բացարձակապես սատում էին՝ կավլըրին (տարին լրացրած արու գառին) և հոջաչին (տարին լրացած էգ գառին) հաշվում էին հղի ոչխար ու դնում հարկի տակ։ Շնորհիվ նրանց այս սոսկալի խարդախության, Արճակի անասունների թիվը գերազանցում էր իրականությանը, որովհետև երինջներին հաշվում էին հղի կով, գաներին (երկու տարեկան արու խոշոր եղջերավորներին) հաշվում էին լծկան։

Ղամշուռչիներն իրենց հաշվարկումն ավարտելուց հետո, անմիջապես գանձում էին ղամշուռըն ու գյուղից հեռանում։

[2] Բանտը Արճակի ոստիկանատան ախոռն էր՝ ուրիշ գյուղերի բանտարկյալների համար, իսկ եթե կալանվածը արճակցի էր, նրան ուղղակի տանում էին Վան, ուր և գատվելու էր։

Ների տասանորդ: *Այս տասանորդը հաշվողներն, ըստ իրենց դերի, կոչվում էին* օթնյուֆուսցի *(խոտի հարկահան)։ Օթնյուֆուսչիները փոքրաթիվ էին և հեծյալ։ Նրանք սկզբում ստուգում էին, թե կտուրներում խոտի դեզ չկա՞, արդյո՞ք, մարագներում չի՞ թաքցված այն, ապա ձիերով շրջում կտուրների տարածություններում, համրում հրնձված խոտի խրձերը, դեռ չհնձված խոտհարքներն էին հաշվի առնում, ըստ որում, որոշելով հնձվելիքի քանակը, հաշվվում էին կորնդանի ու առվույտի տարածությունները, որից հետո արտոնություն տալիս գյուղի հասարակությանը՝ անասնակերը փոխադրելու մարագները։ Ըստ որում, հիշյալ արտոնությունը չէր վերաբերում անհատներին, այլ հաշվի էին նստում գյուղի կամ գավառի նյուֆուս մյուդուրի հետ, իսկ նյուֆուս մյուդուրը հայտնում էր գյուղի ռեսին, վերջինս էլ իր հերթին գիտեր, թե ցուցակում գրված այսինչ խոտհարքն ում է պատկանում։ Օթնյուֆուսչիները հենց դաշտից էլ ուղևորվում էին գավառի մյուս գյուղերը՝ հաշվառում կատարելու, իսկ երբ վերադառնում էին, արդեն գյուղացիք պատրաստած էին լինում խոտի տասանորդ հարկը՝ հնչուն դրամով։*

Քյարխանաների[3] (շահութաբեր ձեռնարկությունների) հարկեր: *Արճակում եղած ծառաստանները պտղատու չէին, ուստի դրանցից հարկ չէր գանձվում։ Գյուղում կար վեց ջրաղաց, որոնցից երկուսը արևմտյան մարդադետնում էին։ Ժամանակի ընթացքում լճի ջուրը առաջ շարժվելով, խափանել էր դրանց աշխատանքը։ Արճակի նյուֆուս մյուդուրը հարկային ցուցակից ջնջել էր այդ ջրաղացները։ Երկու ջրաղացը գյուղամիջումն էր, աշխատում էին աշնան ու գարնան ամիսներին և համարվում էին «իքինջի չլաշ» (երկրորդ կարգի աղաց)։ Դրանց հարկը այնքան էլ ծանր չէր։ Ջրաղացներից երկուսը գտնվում էին գյուղից մի քանի կիլոմետր հեռու՝ Արճակի հողային սահմանների եզերքին։ Սրանք նույն առվի ջրով էին աշխատում, այն էլ ամառ-ձմեռ անխափան, սպասարկում էին ոչ միայն արճակցոց, այլև շրջանի մի շարք քրդական գյուղերի։ Հիշյալ երկու ջրաղացները հարկային մարմինների կողմից համարվում էին «բիրինջի չլաշ» (առաջնակարգ աղաց) և ենթակա էին ամենաբարձր չափի հարկի։*

Գյուղում գոյություն ունեցող մեծ ձիթհանը, որ կառուցված էր 1891 թ. (բայց աշխատանքի էր դրվել 1907 թ.), պատկանում էր եկեղեցուն և հարկային ցուցակում չկար։ Սակայն անուղղակի հարկի էր ենթարկվում, որովհետև և՛ մյուդուրըլըքի, և՛ փոլիսխանայի ղանդաղան կարիքների համար գործածվելիք ձեթն այդտեղից էր տարվում։ Գյուղում ապրող պաշտոնյաների ընտանիքներին ևս քաղցր ձեթից առյուծի բաժին էր ուղարկվում և Արճակի ձիթհանի նման քյարխանայից միշտ մնում էր այնքան, որ բավականացնում էր ընդամենը եկեղեցու ու դպրոցի ճրագ-լույսին։ Երկրորդը վանից տան ձիթհանն էր և համարվում էր երկրորդ կարգի։

Բոստանների ու բախչաների հարկերի չափը որոշվում էր տեղական իշխանությունների, այսինքն՝ մյուդուրի ու նյուֆուս մյուդուրի կողմից։ Հարկը վճարվում էր միանվագ՝ կանխիկ դրամով և բոստանային բարիքներով։ Բոստանների և բախչաների թիվը կամ զբաղված տարածությունները շատ չէին։ Մշտապես բոստան էին դնում Վարագի վանքին պատկանող երկուսից-երեք արտում, իսկ գյուղացիք իրենց հերթին նորից երկու իրարնից արտեր և մեկից երեք արտ բախչա էին անում։ Այս իսկ պատճառով էլ բոստանների ու բախչաների վրա դրված հարկը գյուղացոց ընդհանուր հաշվի մեջ չէր մտնում։

Հացահատիկի տասանորդ: *Շահնաները (հացահատիկային տասանորդ հավաքողներ) թե՛ թըվով, թե՛ գյուղում երկար մնալով գերազանցում էին մնացյալ բոլոր տեսակի հարկահավաքներին։ Նրանք գալիս էին կալսումները սկսվելուց առաջ և հեռանում կտավատի կալսումից հետո։ Շահնաների թիվը հասնում էր երեսունի։ Նրանք սովորաբար մնում էին Փոս թաղում, վերցնում էին երկու հատ մի հարկանի հողա կամ ոչխարի գոմ, ներսից սվաղել տալիս, դրսից դռները փակում ու կնքում։ Կտուրի վրա բարձրանալով, հացահատիկը ներս էին թափում երդիկներից, մի ամբարում ցորենը, մյուսում՝ գարին։ Իսկ ոսպը վաղուց արդեն հավաքված էր լինում, կանչրակն էլ շատ ուշ էր հասունանում և երբեք շահնաները դրանցից տասանորդ չէին կարողանում հավաքել։*

Շահնաները սովորաբար իրարից բաժան-բաժան էին շրջում կալատեղերում։ Երբ որևէ ընտանիք մի թեղ արդեն ուներ, դիմում էր շահնաների գլխավորին և հայտնում, որ իրենք հերան ունեն անելու։ Թույլտվություն ստանալուց հետո

[3] *Քյարխանա բառը երկիմաստ էր՝ քյարխանաչի, քյարխանաչու որդի և կամ այլ ձևով արտասանվածը որևէ անհատի հացեին ամենածանր հայհոյանքներից մեկն էր, որովհետև այդ դեպքում բառի իմաստը բացասական էր։ Այդ նշանակում էր՝ անբարոյական տուն պահող և սատր ճանապարհով շահույթ ստացող։ Նման մարդու որդի։ Սակայն քյարխանաչի բառն ուներ և շահութաբերի՝ պատվավոր կոչման իմաստ, մարդ, որ ուներ քյարխանա, ասենք՝ ջրաղաց, ձիթհան, ներկատուն, ջուլհականոց և այլն։*

միայն կարող էին սկսել հերանը։ Շահնաներից մեկը հայտնվում էր տվյալ կալատեղը և մնում այնքան, մինչև ցորենը մաղվեր։ Եթե քամին էլ դադարել էր, և հերանել չէր լինում, թեղը լրիվ հերանված չլինելու պատճառով ցորենի չափումը հետաձգվում էր։ Լիներ լրիվ մաղված, թե առանց մաղելու, ցորենը փոքրիկ բրդի ձև էին տալիս և վերից վար հատուկ տախտակե կնիքներով կնքում էին։ Հաջորդ օրը կնիքները եղծված գտնելու դեպքում, կալատիրոջը տուգանում էին։ Նման անախորժություններից խուսափելու համար կալատերերը օր ու գիշեր հսկում էին շեղջը, որպեսզի պատահական անասուն կամ շուն չկոխկրտեր։

Երբ հերանվում ու մաղվում էր ամբողջ թեղը, ապա շահնաների մի խումբ հայտնվում էր շեղջի մոտ ու սկսում չափել։ Ջնայած այդ հարկը կոչվում էր տասանորդ, սակայն գանձվում էր ութանորդի հաշվով, այն է՝ յոթ չափ լցնում էին ցորենատիրոջ կողմը, մեկը՝ իրենց կողմը, այն էլ այսպես՝ առաջին չափը լցնում էին իրենց, հետո յոթ չափ կալատիրոջ կողմը. դուրս էր գալիս, ասենք, 27—28 չափ, ապա շահնաներին պետք է հասներ երեք ու կես չափ, մինչդեռ վերցրած էին լինում չորս ու կես։

Այս բոլորով հանդերձ, շահնաները (որոնց մեջ միշտ էլ լինում էին հողագործի զավակներ), բոլոր տեսակի հարկահավաքների համեմատությամբ, ամենամեղմաբարո և ամենանահապետական հոգու տեր մարդիկ էին։ Հացահատիկը չափելիս, մանավանդ, եթե քանակը շատ էր լինում, նրանց դեմքերին արտահայտվում էր հացը հարգող մարդու ուրախություն։ Առաջին չափը դատարկելիս բարձրաձայն ու միաբերան կանչում էին՝ բիր, ալլահ, բիր։ Երկրորդ չափը դատարկելիս կանչում էին՝ իքի, ալլահ, օլ վաքիլ (երկու, աստվա՛ծ, եղի՛ր երաշխավոր)։ Երրորդին՝ նորից էին կանչում՝ ուչ, ալլահ, վերմա բիղա սուրչ (աստված, մի սուր մեղ հանցանք)։ Ապա լռելյայն կատարում ջին աշխատանքը, մինչև քսաներորդը։ Սովորաբար քսաներորդ չափը կոչվում էր տալյա: Եթե չափվող ցորենը եղել էր քսան չափ, ապա մի տալյա էր խփվել, եթե եղել էր քառասունմեկ չափ՝ երկու տալյա, իսկ եթե երեսունինը չափ էր, նորից մի տալյա էր։ Տասնինն ու կես չափ ցորենը տալյայի չէր հասնում։

Յուրաքանչյուր տալյան, անկախ այն բանից, թե արտատիրոջն էր բաժին ընկնում, թե հարկահավաքին, այդ չափը լցնում էին գլխե-գլուխ (առանց հարթելու դատարկում էին), բայց նախքան դատարկելը շահնաները մի պահ կանգ էին առնում, բարձրաձայն ու երգեցիկ, հատ-հատ արտասանում քսան մաղթանք. աշխարհին՝ խաղաղություն, թագավորներին՝ սեր-միություն, հողագործին՝ առողջություն, հողին՝ բերրիություն, լծկանին՝ ուժ, բերքին՝ առատություն, ցավին՝ պակասություն, հացին՝ էժանություն, մահին՝ թանկություն, անձրևին՝ չափավորություն, աստծու ողորմությանը՝ անչափելիություն և այլն։

Շեղջի տակ որքանով շատ էր չափված ցորենը, այնքան էլ երբեմն մեկ մատի հաստությամբ թողնում էին առանց չափելու, որպես «կալեմաս» (կալից մաս)։ Դրա մոտ էին կանգնում տասնյակ աղքատ մանուկներ, որոնք մեծ մասամբ ուրիշ գյուղերից էին այդ օրերին հավաքվում Արճակ, ու արատտերն այդ շնչշատակը կուցերով լցնում էր նրանց տոպրակները։ Շահնաների կողմից շեղջի տակն արտատիրոջը թողնելը, որպես կալեմաս, և արտատիրոջից՝ այդ ցորենը չքավորներին բաժանելը, դարերի խորքից եկած, սրբագործված սովորություն էր։

Երբ չափվելիք ցորենը շատ էր լինում, կալատերը մի քանի մաղ ցորեն էր ուղարկում բոստան՝ սեխ ու ձմերուկի հետ փոխանակելու և բերում ու հյուրասիրում էր շահնաներին։ Այս հյուրասիրությունը, որ կոչվում էր «բողաղ թրջել» նույնպես դարավոր սովորույթ էր։

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Արճակցիք ատելություն և թերահավատություն էին ցուցաբերում Օսմանյան դատարանի հանդեպ։ Ուստի, թեպետ տարիներ շարունակ մոտիկ էին գտնվում թուրք պաշտոնեությանը, այնուամենայնիվ, չէր լինում դեպք, որ իրենց մեջ ծագած վեճերի կապակցությամբ գործը հասցընեին մյուդուրին։ Ծագած վեճերը նրանք հարթում էին յուրովի։ Ջրի համար վեճի բռնվածներին, իրար հետ դժված հարևաններին, ընտանեկան բաժանումների առթիվ ծագած աղմուկ-աղաղակներին միջամտում էին տարիքավոր հարևանները։ Հաշտություն չկայանալու դեպքում կանչում էին ռես-մաջլիս։

Դատաստանը լինում էր՝ նախատինք հանցավոր ճանաչված կողմին, կշտամբանք, վնասի փոխհատուցման որոշում, և որքան էլ անարդար համարվեր ռես-մաջլիսի կայացրած վճիռը, որքան էլ կռվող կողմերի մեջ շարունակվեր վեճը, գործը կառավարությանը չէր հասցվում։ Եթե հասցըվեր, ապա նման քայլն անողը շրջապատի ատելությանն էր արժանանում։

ԿՈՆԱԽՆԵՐ

Ինչպես հատկանշական է աշխարհի բոլոր ազգերի հոգի մշակներին՝ օտարականի հանդեպ դռնբաց լինել ու նրա հետ կիսել իր վերջին կտոր հացը, այնպես էլ արճակցին հոգատար էր իր շեմը մտնող ամեն մի օտարականի հանդեպ։ Իսկ Արճակը, որպես բանուկ ճանապարհի վրա ընկած հանգրվան, շեմք կոխողներ շատ էր ունենում։

Խաղաղ աշխատանքի սեր ուղևորները, ինչ ազգից էլ լինեին, մտնում էին պատահած տան բաց դռնից ներս, նստում սյան տակ կամ փայախն էին մտնում, տեղավորվում վառ բուխարու կողքին և աստծու այդ հյուրերը շնորհակալությամբ էին ընդունում տանտիրոջից իրենց մատուցված ուտելիքն ու գիշերելու ապաստարանը։ Հաջորդ օրը նրանք դնում էին իրենց ճանապարհը, երբեմն հետները տանելով տանտիրոջից տրված ճամփապաշարներ, երբեմն՝ դատարկաձեռն։ Սակայն միշտ էլ թողնում էին «շեն մնաք» մաղթանքը։

Այդպես էին վարվում ոչ միայն քրիստոնյա հյուրերը, ոչ միայն հայերը, այլև քուրդ հասարակ, խաղաղ հողագործները, նույնիսկ զինյալ ու աներկյուղ քուրդ ավազակները և գող, խարեբա մահմեդական դնչու-մաղագործները։

Տարին մի քանի անգամ Արճակում հայտնվում էին Պարսկաստանից Վան գնացող քարավանները՝ ուղտերի շարաններով։ Պարսիկները հայերի ուտելիքից խորշում էին, ուստի ուտելիքից չէին օգտվում, ոչ էլ ներս էին մտնում։ Լիներ ամառ, թե ձմեռ, նրանք կծկվում էին իրենց ուղտերի կողքին։ Ուղտերի համար ստացած խոտի արժեքը նրանք փոխհատուցում էին իրենց բեռան մթերքից՝ լիներ մի քիչ բամբակ, չամիչ, փշատ, դոշաբ, մանրած կարմիր պղպեղ, մի խոսքով նրանք անպայման որևէ բանով փոխարինում էին ստացած անասնակերն ու վառած աթարը։ Սրանց բոլորին էլ արճակցիք ոչ թե ասում էին կոնախ, այլ պարզապես «դյալան-գիդան» կամ «եկող-գնացող»։

Արճակցու համար կոնախները տեղից տեղ փոխադրվող ասկյարներն էին, ոստիկանական խմբերը, պետական նշանավոր, թե աննշան պաշտոնյաները, համիդիե զորախմբերը։ Լինեին նրանք փոքրաթիվ, թե շատվոր, հետիոտն, թե ձիավոր, միևնույն է, արճակցիների համար սերնդեսերունդ կոչվել էին կոնախ։

Կոնախները հասնելով գավառապետարանի հրապարակը, անմիջապես վրդովմունք էին արտահայտում, եթե գյուղը շուտափույթ չէր ներկայանում։ Այդպիսիներին գյուղը անմիջապես բաժանում էր ունևորների տների վրա, սպասարկու նշանակելով չունևոր և կոնախ ընդունելու հնարավորությունից զուրկ գյուղացիներին։ Կոնախները խստապահանջ էին։ Նրանց ձիերի առջև անմիջապես ոչ միայն խոտ պետք է դրվեր, այլև տոպրակները գարի լցվեր։ Շատերը չէին բավարարվում ձվածեղով կամ ձավարե փլավով, այլ պահանջում էին հավ մորթել, եթե համոզված էին, որ իրենք կարող են այնքան ժամանակ մնալ գյուղում, մինչև հավը եփվեր։ Գիշերողները պահանջում էին մաքուր անկողին, տեղի-անտեղի մտրակում էին սպասարկու գյուղացուն, հայհոյում տանտիրոջ հավատն ու բոլոր սրբությունները, հաշվի չառնելով դիմացինի պատկառելի տարիքը։

Այս ամենն արճակցու համար անսովոր չէր։ «Դե, հյուքմաթի (իշխանության) շունն են, հո իսկական շուն չեն, որ հաց տվող ձեռքերը չկծեն», ասում էին ծերերը և պատմում, որ վաղ ժամանակներում այդ կոնախները հյուրասիրվելիս՝ «դիշ քրասի», այսինքն՝ ատամնավարձ էին պահանջում տանտիրոջից։ Չնայած նման բռնությունների, այնուամենայնիվ, իգական սեռի պատվին դիպչել նրանց մտքով իսկ չէր անցնում։

1908 թ., օսմանյան սահմանադրությունից հետո, կոնախների նման կամայականությունները վերջ էին գտել, սակայն նրանք նորից անվճար կերակրվում էին։ Ահա թե ինչու, արճակցին ցորեն էր ցանում այնքան, որքան իր կարիքների տասնապատիկն էր և խոտ ու առվույտ հնձում այնքան, որքան իր գործածելիք կերի քսանապատիկն էր։

ԱՐՃԱԿԻ ԴՊՐՈՑԸ

Շենքը գտնվում էր գյուղի արևելյան մասում և երևում էր գյուղի բոլոր կողմերից։ Դա լայն տարածության կենտրոնում ընկած միհարկանի շինություն էր, գետնից երկու աստիճան բարձր, կառուցված 1899 թ. և, ինչպես գյուղի մնացած նորաձև շինությունները, հիմքից վեր մի երկու շար էր քարով շարված, մնացածը հում աղյուսից էր։

Դպրոցը բաղկացած էր ընդամենը երկու դասարանից և մեկ ուսուցչանոցից։ Հատակը տախտակից էր։ Դասասենյակներում դրված էին կո-

սիտ, երկար նստարաններ ու սեղաններ։ Կտուրը տափակ էր, լուսամուտները՝ լայն, երկաթե վանդակներով ամրացված և ունեին ապակեպատ փեղկեր։ Շենքը տաքացվում էր թիթեղե վառարաններով։

Դպրոցի առջևն ընկած լայն տարածությունը ծառայում էր, որպես աշակերտների խաղահրապարակ, իսկ ետևի արտը վերածված էր գերեզմանոցի։

Դեռևս 1870 թ., երբ Արճակը չուներ ոչ այդ շենքը և ոչ էլ կրթական գործն էր ապահովված, դպրոցի դեր էր կատարում գյուղի ավագ քահանա տեր Կարապետի փայախի հողան, ուր քահանան մոտ քսան տղաների տախտակե գրակալով դասեր էր սովորեցնում։ Տարիներ հետո էր, որ Խրիմյան Հայրիկի հիմնադրած Վարագի Ժառանգավորաց ուսումնարանի անդրանիկ շրջանավարտներից երկու երիտասարդ (Արճակից՝ Մարգար Հյուսյան-Հովհաննիսյանը և Վան-Տոսպի Պողանց գյուղից՝ Մովսես Զաքարյանը) եկան Արճակ, գյուղացոց օժանդակությամբ կառուցեցին դպրոցի շենքն ու իրենք էլ դարձան դպրոցի ուսուցիչներ, այն էլ առանց վարձատրության։ Դպրոցն արական էր և կոչվում էր Սուրբ Մեսրոպյան։ 1894 թ. դպրոցը վերածվեց թուրքական զորանոցի, մինչև 1895-ի հունիսյան կոտորածները։ Կոտորածի ժամանակ թալանվել էր դպրոցի աղքատիկ կայքը, քանդվել դռներն ու լուսամուտները, սակայն գյուղացիք նորից շինեցին։

Դրամ վաստակելու համար ժամանակավորապես Բաքու պանդխտած արճակցիք հիմնեցին Արճակի Կրթասիրաց միությունը, որը հիմնավորապես կարգավորեց դպրոցական գործը և դպրոցի ուսուցիչներին դրամով վարձատրելու հարցը։

Դրամական կանխիկ վարձատրության շնորհիվ, Արճակի դպրոցում սիրով էին գալիս պաշտոնավարելու Վան քաղաքի լավագույն ուսուցիչները, ինչպիսիք էին ներկայումս Երևանում ապրող, վաստակավոր ուսուցիչ (այժմ կենսաթոշակառու) Արսեն Հացագործյանը, Սփյուռքում հրատարակչական գործով զբաղվող Հովհաննես Վարդանյանը, հանգուցյալներ՝ Մկրտիչ Ոշտունին, Մկրտիչ Մնոշյանը, Բարունակ Կապուտիկյանը և այլոք։

Բացի Արճակից, գավառում միայն Խառակոնիս գյուղում էր, որ գոյություն ուներ սարրական (արական) դպրոց (Մ. Փորթուգալյանի հիմնադրածը)։ Վանի նահանգում, հայկական հինգ գյուղերի դպրոցներից միայն Խառակոնիսինն էր, որ անխափան գործել էր և մինչև Մեծ եղեռնը կապի մեջ էր Էրզրումի Սանասարյան դպրոցի հետ։

1908 թ. հետո Արճակի դպրոցը դարձավ երկսեռ։ Բացվեց երեկոյան դասընթաց՝ անգրագետ երիտասարդության համար, հիմնվեց գրադարան։ Թեև խափանումներով, լույս էր տեսնում դպրոցի խմորատիպ պարբերականը՝ «Գավառի ձայն» անունով։ Դպրոցի ուսուցիչները և գյուղի երիտասարդությունը հաճախ փոքրիկ պիեսներ էին ներկայացնում եկեղեցում։

Ակայն Կրթասիրաց միությունն այս ամենը քիչ էր համարում։ Արճակցին երազում էր մի նոր շենք՝ դպրոցի համար և կողքին էլ հարյուր հանդիսականի տարողության դահլիճ՝ ժամանակակից ոճով։ Բայց այդ բոլորը մնաց երազանք...

1914 թվականին երկրում ռազմական դրության հաստատվելուց անմիջապես հետո, Արճակի դպրոցը վերածվեց զորանոցի և զորանոց էլ մնաց մինչև 1915-ի ապրիլի տասը՝ Եղեռնի օրը։

Ը Ն Տ Ա Ն Ի Ք

ԿԱԶՄԸ

Մի ընտանիք էին կազմում, ապրում միևնույն հարկի տակ և ընտանեկան ընդհանուր հոգսեր էին կրում արդեն թոռների տեր դարձած ճերմակահեր եղբայրները, երբեմն նույնիսկ հորեղբոր որդիները և քանի որ երիտասարդ հասակում չէին բաժանվել, ապա օր ծերության լսել անգամ չէին ուզում «շեն տան ավիրվելը», մանավանդ, եթե դեռ տանը կենդանի էր թեկուզ մի զառամ կին։

Ընտանիքները տան ներսում կազմում էին օրարներ, ասենք՝ Հակոյի օրար, կամ՝ Սարգոյի օրար, ըստ որում, այդ Հակոն կամ Սարգոն, որոնք օրարի տերերն էին, հաճախ ոչ թե դեռ ողջ ալեհերներն էին, այլ հանգուցյալ ծնողներ։ Այդպիսի ընտանիքները, իհարկե, լինում էին հարուստ։ Նման բազմանդամ ու հարուստ տներն էին, որ կոչվում էին համրա տներ։

Ընտանիքներում, լինեին բազմանդամ թե սակավանդամ, համրա թե հասարակ, միևնույն էր, ընտանիքի կրտսեր անդամները հարգանք ու-

նեին տարեցների հանդեպ։ Թեկուզ նրանցից շատերը կենսափորձ էլ ունեին, իրենց գաղափարներով ու պատասխանատվությամբ շատ էին առաջադիմել ավագներից, այնուամենայնիվ հարգանքը դեպի տարիքավորը, ինչպես սովորաբար տիրում էր նահապետական կենցաղով ապրող հայ շինականների մեջ, արճակցիների հողերում խիստ ամուր էր նստած։

Կնոջը ծեծելու սովորությունն Արճակում բացառիկ երևույթների շարքն էր անցել, սակայն դա չէր խանգարում, որ կանայք առհասարակ հարգալից լինեին տղամարդկանց հանդեպ։ Այդ հարգանքի բազմաթիվ արտահայտություններից մեկն էլ այն էր, որ երեկոները ճաշելիս, սկզբից տղամարդիկ էին նստում սեղան, ապա՝ կանայք։

Հարսները տարիքավոր կանանց հետ չխոսկան էին՝ երբեմն մեկ տարուց ավելի, իսկ տղամարդկանց հետ՝ անկախ տարիքից, միշտ էլ մնում էին չխոսկան։

Տան ծերերը, որքան էլ անաշխատունակ լինեին, դարձյալ հետևում էին երիտասարդների աշխատանքին ու նրանց կողմից պարտազանցություն ու ծուլություն նկատելու դեպքում չէին խնայում խրատներն ու նախատինքը։

Երբ տանը բաժանում էր լինում, ծերացած տանտերերը կատարվելիք փաստի առջև իրենց զգում էին անզոր ու ծանր միշտ էին ապրում։ Արրանցից շատերը քաշվում էին մի կողմ, կարմիր ու երկար «չքարի չիբուխը» ատամների տակ սեղմած, դառը ծուխ էին ներծծում ու չէին մասնակցում ո՛չ բաժանվողների վեճերին, ո՛չ էլ բաժանելու եկած բարեկամ-հարևանների խոսակցությանը։

Երբեմն բաժանումների վեճերին խառնվում էր նաև ռես-մաջլիսը։ Որոշում էին, թե որ անասունը, որ արտը, ծառաստանի որ մասը, շինության որ մասը որին արժի։ Ծերունիներն այդ դեպքում անգամ լռություն էին պահպանում կամ էլ միալար ո՜ֆ, օ՜ֆ անում։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Նշանդրեք: Նշանդրեքը լինում էր երկու կողմերի տարիքավոր բարեկամների և փեսայի, քավորի մասնակցությամբ (հաճախ առանց փեսայի)։

Աղջկա հայրն այդ օրը պաշտոնապես ներկայացնում էր իր պահանջները, թե ինչ պետք է տան իրեն հարսանիքի օրվա համար և թե ինչքան է ղալանը (ղալանի սակարկումը համարյա թե դատարկ խոսակցություն էր, քանի որ ընդունված չափ կար)։

Ղալան լինում էր՝ ա) 1—2 օսմանյան ոսկի, բ) միս՝ 1—3 փութ, երբեմն պահանջվում էր «տատոչխար», այսինքն՝ կենդանի ոչխար (իր ոտքով գնացող ոչխար), գ) գինի՝ 20—30 լիտր, դ) օղի՝ 10—15 լիտր։

Նշանդրեքին տանում էին մի փարչ օղի, մի քանի նուռ կամ փայլաթղթերում փաթաթված հրեշտակների նկարներով զարդարված, բայց իրականում խիստ անորակ շաքարեղեն, որին «փախլավա-շաքար» էին ասում։ Նշանը լինում էր կամ արծաթե ապարանջաններ (երկու ձեռքի համար), կամ ոսկեզրամ ականջօղ։ Ոչ մի ակնարկ չէր լինում ո՛չ հարսի հորը արվելիք խալաթի, ո՛չ մորը արվելիք **զոքընչփերթի** (զոքանչի նվերի), ո՛չ էլ այն մասին, թե այդքան ղալան պահանջող հայրն ինչ օժիտ է դնելու իր աղջկա հետ։ Դա խնամիների պատվի խնդիրն էր և կատարվում էր սովորույթով օրինականացած կարգով։

Նշանդրեքի օրից նշանված աղջիկն այլևս դուրս չէր գալիս տնից՝ աղբյուր, կալատեղ կամ դաշտ գնալու։ Նա չխոսկան էր մնում փեսայի բոլոր բարեկամ-բարեկամուհիների հետ (բացի փոքրահասակներից, իրեն հասակակից տալից ու այլ օրիորդ բարեկամուհիներից)։

Փեսան հաճախ էր լինում հարսնացուի տանը, հարգվում ու հյուրասիրվում, բայց նշանածին կամ բոլորովին չէր հանդիպում, կամ էլ հանդիպում էր թաքուն։ Կիրակի օրերն սկեսուրը գալիս էր հարսին այցելության. ըստ ընդունված սովորույթի, նա ձեռքի ափին դրած բերում էր փոքրիկ սկուտեղով տաք-տաք ձվածեղ, վրան էլ երկու լավաշ։ Տոն օրերին, եկեղեցի կամ Ասպարածին գնալու դեպքում, սկեսուրը գալիս էր ուղեկցելու իր հարսին։ Նման հանդիսավոր օրերին նշանված աղջիկը ևս, նորահարսի պես, պետք է մետաքսե կիսածածկոցով քողարկված դուրս գար հասարակության մեջ և իր քողը բարձրացնողին հարգանք մատուցեր՝ **թամանդա անէր** (աջ ձեռքի բութը ծալած, չորս մատները սկզբում իր շուրթերին հպեր, ապա ճակատին), կամ ձեռքը համբուրեր, նայած դիմացինի տարիքին։

Նշանվածի այս դրությունը շարունակվում էր մինչև ամուսնությունը։

Բազառ: Հարսանիքից քսան-քսանհինգ օր առաջ հարսի ու փեսայի հայրերը գնում էին Վան՝ հարսի համար հանդերձներ գնելու։ Փեսայի հայրը ենթարկվում էր հարսի հոր կամքին։ Հարսի համար գնվելիք կոշիկը, վերարկուն, ավսե կամ մետաքսե շրջազգեստը, ոսկեզրամ ականջօղը, բոլորը լինում էր հարսի հոր ընտրությամբ։ Իսկ թե փեսայի հայրը հարսի հորն ու մորը ինչ գնանց կամ ինչ գույնի խալաթ էր տանում, հարսի հայրը

խուսափում էր այդ գնումներին ներկա լինելուց։

Փեսայի հայրը ևս խուսափում էր իրազեկ լինելու, թե իր ապագա հարսի հայրն ինչ մանրուքներ է գնելու հարսին որպես օժիտ։ Միակ բանը, որ բացահայտ էր լինում, դա աղջկա հոր կողմից գնված հասարակ տախտակե նախշուն սնդուկն էր, քանի որ միասին էին վերադառնում գյուղ, և սնդուկը հնարավոր չէր թաքցնել։

Խալվածև (հագուստի ձևում)։ Քաղաքից վերադառնալուց մի քանի օր հետո, նշանակված օրը հարսի տանն էին հավաքվում տարբեր բարեկամուհիները, ինչպես նաև հարսի ուստան: Ուստան այն շնորհալի աղջիկանուհին էր, որ դեռ մանկուց հարսնացուին սովորեցրել էր կար անել, գուլպա գործել և այլն։ Գալիս էին փեսայի մայրն ու բարեկամուհիները, բերելով հարսի համար գնված հասարակ հանդերձների կտորները։ Կապոցը կրում էր որևէ չքավոր կին, որը երկուսաեք արժանանում էր պարգևների (էժանագին յաղմա կամ թաշկինակ)։

Խալվածևին մասնակից էին լինում 30—40 կին։ Հարսը ներս էր մանում իր ուստայի ետևից, կրկնելով նրա բոլոր շարժումները։ Նրանք երկուսով ծունկի իջնելով, առաջ էին շարժվում, հերթով համբուրելով շուրջանակի նստած բոլոր հյուրերի ձեռքերը։ Սկեսուրը հանդիսավորությամբ մեջտեղ էր բերում հարսի համար գնված զարդերը։

Զարդերը լինում էին ըստ փեսայի տան կարողության, օրինակ՝ ոսկեդրամ մանյակ, նորաձև արծաթե քամար, ժամացույցի շղթա, հակառակ դեպքում՝ անխուսափելի արծաթե ապարանջաններ կամ ոսկեդրամ ականջօղը, եթե նշանդրեքի ժամանակ չէին տարել։

Անթիվ բարեմաղթությունների ու միմյանց ուղղված մեծարման խոսքերի տարափի ներքո սկսվում էր հագուստեղենի ձևումը, ապա արվում էր ճաշ։ Հարսի բարեկամուհիներից նրանք, ովքեր տանը հարս կամ աղջիկ ունեին, նորահարսին հարգանք տալու նպատակով, հետները տանում էին ձևված հագուստից մեկ կամ երկու հանդերձ՝ իրենց երիտասարդուհիներին կարել տալու։

Հարսը, որ մինչ հյուրերի ոտքի կանգնելը ուղղած էր եղել նրանց ոտնամանները, կանգնում էր դռան մոտ ու հերթականորեն համբուրում դուրս գնացողների ձեռքերը, ըստ որում, հյուրերն էլ իրենց հերթին համբուրում էին հարսի այտերը։

Տնից ամենավերջինը դուրս էին գալիս սկեսուրն ու քավորակինը։ Շեմի վրա հարսնեմայրը բողչա բերողը ուսին էր դցում իր կողմից արվելիք նվեր յազման:

Հարսանիքի նախապատրաստություն: Հարսանիք անելու առաջին նախապայմանը խմիչքի գնումն էր, որ կապված էր Վանին մոտիկ Շահբաղի կոչվող խաղողառատ գյուղ գնալու հետ։ Ամեն մի դժվարին դրության դեպքում միմյանց օգնության հասնելու ընդունված սովորույթի համաձայն, այս գործում ևս օգնության էին գալիս հարազատները։ (Պետք է նկատի ունենալ, որ հարսանիքները աշնանը էին ունենում ձմռանը, և խմիչքը բերվում էր կաշվե տիկերով՝ շալակով)։ Խմիչքի խնդրից բացի, հարսանքատերերին օգնության էին գալիս հարևան-բարեկամները՝ սկսած հաց թխելուց, ճաշ մատուցելուց, մինչև դրսից շրջելով հյուրեր հավաքելը։ Ին՝ էլ լինեին հարսանքատերերը (հարուստ, թե աղքատ), պետք է ունենային մառանապետ ու տանտկին: Սրանք պետք է լինեին փորձված, հասարակական ու աշխատունակ անձինք։

Տանտիկինը լինում էր հարսանքատիրոջից հարգված հարազատ պառավը։ Տանտիկնոջ արամադրության տակ էր դրվում մթերքը, նրա հրահանգով էին պատրաստվում ճաշերը։ Ճաշերը լավ պատրաստելը նրա պարտականությունն էր, իսկ մթերքի քանակի պահպանը՝ նրա իրավունքը։ Նա շահագրգռված էր ճաշն այնպես բաժանել, որ նստողների առաջ ճաշը ոչ ավելանար, ոչ էլ պակասեր, ուստի ինքն էր լցնում ափսեները։ Սովորաբար հարսանիքի ճաշը լինում էր երկու տեսակ՝ շաղգամով միս և կարտոֆիլով միս։

Մառանապետի համար տարիքը կարևոր չէր, այլ փորձառությունը։ Սրա տնօրինության տակ էր գտնվում խմիչքը։ Առանց մառանապետի համաձայնության, անգամ տան երեցն իրավունք չուներ մի աման խմիչք վերցնելու։

Հարսանիքի ամենահարգված հյուրերը ֆավոռտնքե էին, ուստի քավորանց տան աղապ աղան էլ նախատեսված էր ազապբաշի (ամուրիների գլխավոր), երկրորդը լինում էր փեսայի կրտսեր եղբայրը (եթե կար) կամ փեսայի սիրված աղապ աղդականը կամ ընկերը։ Աղապբաշիները մինչև հարսանիքի վերջին պահն անբաժան էին լինում փեսայից։

Տաշտաարեք և ֆյադըր զանել: Պսակի նախորդ օրվա նախաճաշի պահին սկսվում էր ֆյադըր զանելու (հալվա հարելու) հանդիսավոր գործողությունը։

Հատուկ հրավիրակների առաջնորդությամբ փեսայի տուն էին հավաքվում հարևան ու ազ-

դական տարից կանայք, յուրաքանչյուրը մի-մի ափսե հալած յուղ ձեռքի ափին դրած, ափսեի վրա էլ՝ երկու հաց։

Վառ թոնրան վրա դրված էր լինում հալվա հարելու շորթրիկը և տանտիկնոջ կողքին բերանը սարևկով կապած փթանոց յուղի ամանն ու ղոշարը։ Առանց ձեռք տալու հրավիրյալների ընծայաբերած յուղին, տանտիկինը պատռում էր յուղի ամանի բերանի սարևկն ու սկսում էին մի կողմից հալվան հարել, մյուս կողմից բաղարջի խմորը շաղախել։ Հետո թոնրի վառելը դադարեցնում էին ու սկսում բաղարջ թխել։ Գործը ավարտելուց հետո, հրավիրյալները հյուրասիրվում էին հալվայով ու բաղարջով, իսկ յուղի ամանները, որ դատարկված ու մաքրված էին, տերերին էին վերադարձվում՝ բաղարջով ու հալվայով լի։ «Քյաղցրը դանելու» այս գործողությունը համարյա թե արարողություն էր, քանի որ դեռ գիշերն էին հալվայի ու բաղարջի մեծ մասը պատրաստել։

Փեսաքրաշ կամ կյլոխ վեր առնել և սարորֆ: Մայրամուտին հատուկ հրավիրակներով փեսայի տունն էին հավաքվում հարսանքավորները։ Ամենահարգված հյուրերը, դրանց մեջ ամենաառաջինը՝ քավորանք, դհոլ-զուռնայով էին բերվում հարսանքատուն և դհոլ-զուռնայով էլ վերադարձվում իրենց աները։ Հարսի տանը, իհարկե, ոչ դհոլ-զուռնա կար, ոչ էլ տաշտառեֆ էր լինում։

Սկսվում էր սարորֆի գնալը (հարսի հոր տուն գնալը)։ Տարվում էր հարսի հանդերձն ու ոսկեղենը, եթե այդպիսին կար։ Նախօրոք կապակցված ղամարդիկ ուղարկվում էին լուր տանելու։ Այս լրաբերները անվանվում էին աղվես: Սրանց համար համարյա թե պատվավոր գործ էր հարսի հերանց անից հավ գողանալը, վիզը ոլորելն ու իրենց գլխից բարձր բռնած պարելը։

Արորք գնացողների մեջ, բացի մի քանի հարգարժան տղամարդկանցից ու կանանցից, մնացած բոլորը ջահել-ջուհելներն էին լինում։ Նրանք բոլորն էլ, վառ մոմերը ձեռներին, դհոլ-զուռնայի ուղեկցությամբ շարժվում էին դեպի հարսի տունը, անելով խոսացված միսը, օղին, գինին։ Եթե ոսաոչխար էր, ապա ոչխարի գլխին վառ մոմեր էին կպցնում։ Աղապրաշիները գլխըներին դրված մաղերի մեջ տանում էին հարսի կոշիկը, վերարկուն ու շլղաղգեստը։ Մյուս մաղի մեջ տանում էին բաղարջ ու հալվա, գործածվելիք հինան և հարսի մորն ընծայվելիք ղոքընչփերթին, այն էր՝ մի թոփ մանիսյա (բամբակե գործվածք, սպիտակ կամ կարմիր ֆոնով և սև, բարակ, երկարությամբ հյուսված գծերով)։

Մինչ սակավաթիվ մեծահասակները կհյուրասիրվեին, երիտասարդները բռնում էին գյոնդաչար: Հարսի անից մի աղամարդ, գինու պոզիկը ձեռքին, գինի էր տալիս պարող երիտասարդներին։

Վերադարձող սարորֆավորները իրենց հետ տանում էին հարսի կողմից փեսային նվիրված մի սպիտակ և նրբակար կրծկալ (աղամարդկանց դրսի իշլիկին ամրացվող-կապվող գեղեցիկ վերնաշապկային մի բան) և մի զույգ սպիտակ գուլպա:

Արորք տարողների վերադարձի հետ սկսվում էր փեսայի դեռ առավոտյան սափրված այտերի ձևական սափրումը։ Մինչ այդ, հրավիրյալներն արդեն ճաշած-վերջացրած էին լինում, սակայն սուփրաները չէին հավաքվում։ Փեսային նստեցնում էին աթոռին, երկու աղապրաշիները մի-մի մոմ ձեռքերին կանգնում էին փեսայի աջ և ձախ կողմերում, սափրիչը ածելին ձեռքին կանգնում էր փեսայի եսեր, նրա կողքին կանգնում էր բագ գովազոյը, ինչպես նաև գյուղի դղիրը՝ օղիով լի բաժակը ձեռքին։

Թաղ գովացողը երգով կանչում էր նորափեսայի հարաղաներին, որպեսզի գային «թաքվորին պաքևին ու թաքը կներին»։ Հարաղաները լսելով իրենց ուղղված կանչը, մեկիկ-մեկիկ մոտենում էին, փեսային համբուրում ու դրամ սահեցնում օղիով լի բաժակի մեջ։

Դրամը պատկանելու էր սափրիչին ու բաժակ բռնողին՝ դղիրին։

Էսր թաքյին թայն ի՞նչ պիտեր,
Ուր աղա խեր կայնուկ պիտեր,
Որ կյեր, պաքյեր, թաքյնը կյներ։
Որ թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, թաքոսին առւն կյեր։

Էսր թաքյին թայն ի՞նչ պիտեր,
Ուր խաթուն մեր կայնուկ պիտեր,
Որ կյեր, պաքեր, թարյնր կյներ։
Որ թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, թաքոսին առւն կյեր։

Էսր թաքյին թայն ի՞նչ պիտեր,
Աղա-քյավոր կայնուկ պիտեր,
Որ կյեր, պաքյեր, թաքյնը կյներ։
Որ թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, թաքոսին առւն կյեր։

Էսը Թաքյին Թայն ի՞նչ պիտեր,
Ծոչ քավորկին կայնուկ պիաեր,
Որ կյեր, պաքեր, Թաքյնը կյներ։
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռըե շոռ
կյեր, Թաքոսին առւն կյեր։

Էսը Թաքյին վովքե՞ր պիաեն,
Ծառ-ծառ խրոխպերներ պիտեն,
Որ կյան պաքեն, Թաքյնր կյնեն։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռըե շոռ
կյա, Թաքոսին առւն կյա։

Էսր Թաքյին Թայն ի՞նչ պիտի,
Ջիվան ախպեր կայնուկ պիաի,
Որ կյա պաքի, Թաքյնր կյնի։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռրե շոռ կյա,
կյա, Թաքոսին տուն կյա։

Էսր Թաքյին Թայն ի՞նչ պիտի,
Ուր աղիկ քյոր կայնուկ պիաի,
Որ կյա պաքի, Թաքյնը կյնի։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռրե շոռ կյա,
Թաքոսին տուն կյա։

Էսը Թաքյին վովքե՞ր պիաեն,
Ջան-չիդյար քեռիյԹեր կայնուկ պիտեն,
Որ կյան պաքեն, Թաքյնր կյնեն։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռըե շոռ կյա,
Թաքոսին տուն կյա։

Էսր Թաքյին վովքե՞ր պիաեն,
ԽաԹուն քեռկիյԹեր կայնուկ պիաեն,
Որ կյան պաքեն, Թաքյնը կյնեն։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռրե շոռ կյա,
Թաքոսին տուն կյա։

Էսը Թաքյին վովքե՞ր պիտեն,
Նադ-խաԹուն խորքուրներ կայնուկ պիտեն,
Որ կյան պաքեն, Թաքյնը կյնեն։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռրե շոռ կյա,
Թաքոսին տուն կյա։

Էսր Թաքյին վովքե՞ր պիտեն,
Ջեյրան-աղապրաշիք կայնուկ պիաեն,
Որ սրոտով պաքյեն, Թաքյնր կյնեն։
Որ Թաքյին շոռ կյա, շոռ կյա, շոռրե շոռ կյա։
Թաքոսին տուն կյա։

Որքան ազգականներ կային, երգով կանչվում էին, հետո սափրիչը ածելին դեպի մյուս այտն էր տանում։ Թադ գովացողը հիմա էլ սկսում էր երկրորդ դրվագը։ Այժմ արդեն կանչվում էին երկնայիններըւ

Մեր խարսնըսին վո՞վ խուր պիտեր.
Իսուս-Քյըրիստոս խարսխուր պիտեր,
Յոթ նկտնի օխնանքն ուր տեր,
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռըե շոռ
կյեր, պայսում դաս չի կյեր։

Մեր խարսնրսին վո՞վ խուր պիտեր,
Աստվածածին պտղմած պիտեր,
Կանաչ չոմրար պացած պիտեր,
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, ցավ-դարդ դաս չի կյեր։

Մեր խարսնըսին վո՞վ խուր պիտեը,
Սըփ-Կարապետ խարսխուր պիտեր,
Ուր յոԹ խունար Թաքյվորին տեր,
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, չար աչկ դաս չի կյեր։

Երես սափրելու շարժումներն ավարտվում էին, այժմ սափրիչը սրրիչով մաքրում էր փեսայի դեմքը, ծոծրակը, երգում էր երրորդ դրվագը։ Սա արդեն Թագավոր փեսային՝ լավագույններին նմանվելու իղձի արտարերումն էր։

Էսը Թաքյվոր վի՞ր նմանվեր,
Խեր Ապրախամուն Թո նմանվեր,
Որ ուր արԹար մստաղն աներ։
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռըե շոռ
կյեր, Իսախակ դաս կյեր։

Էսր Թաքյվոր վի՞ր նմանվեր,
Լուսավորչուն Թո նմանվեր,
Որ խայ խոկյին արժողքյից խաներ։
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռրե շոռ
կյեր, Ծոյ ՍոԹաա դաս կյեր։

Էսը Թաքյվոր վի՞ր նմանվեր,
Քաչ ՎարԹանա Թո նմանվեր,
Որ խայ խուկյուն հիմդաա կայներ։
Որ Թաքյին շոռ կյեր, շոռ կյեր, շոռըե շոռ
կյեր, լոս-խավաա դաս կյեր։

Սափրիչը օղիով լվանում էր ածելին, դնում պատյանն ու հեռանում։ Փեսան կանգնում էր ոտքի, երեսը դեպի Աստվածածնա վանքը, իսկ Թադ գովացողը սկսում էր նոր երգ, նույն եղանակով.

Աստարածնա աեմ կայնիր ես,
Կանաչը կարմիր կապիր ես,
Աստրծուց մուրադ առիր ես,
Ասպած քյե պախի պարկիրես,
Պարով Թաքուհիա վայիլես։

Էջմիածնա տեմ կայնիր ես,
Կանաչը կարմիր կապիր ես,
Աստրծուց մուրազ առիր ես,
Սուփ-մեռոն բյե պախի պարդիրես
Պարով Թաքուհիտ վայիլես։

Խանա-փլութկա տեմ կայնիր ես,
Կանաչը կարմիր կապիր ես,
Աստրծուց մուրազ առիր ես,
Ասպած բյե պախի պարղիրես,
Պարով Թաքուհիտ վայիլես։

Նրուստզամա տեմ կայնիր ես,
Կանաչը կարմիր կապիր ես,
Աստրծուց մուրազ առիր ես,
Ասպած բյե պախի պարգիրես,
Պարով Թաքուհիտ վայիլես։

Ավարտվում էր Թագ դնելու արարողությունը, փեսան ազապրաշինների ուղեկցությամբ դնում էր իր թագը (թագըն այն մասունն էր, որ սովորաբար լինում էր թոնրատան խորքում և որոշված էր նորապսակների ննջարանի վերածելու։ Կային այնպիսիններն էլ, որոնք թոնրատան մի անկյունը կարպետով անջատում էին և այդ անջատված մասում էլ հարսին պահում մինչև հարսանյաց հանդեսի վերջը)։ Տան պատերի երկայնքով, ուր նստած էին լինում հյուրերը, շարվում էին տախտակե կարճոտն, կլոր ու մեծ սեղաններ, որոնց վրա և մատուցվում էր ճաշը, տղամարդկանց՝ առանձին, կանանց՝ առանձին։ Ճաշկերույթի պահին տան մի անկյունում հարսանքատիրոջ մի հարազատուհի նստած, մեծ քյասայով ջաղախված հինան առաջին, փոքրահասակների ձեռքերին հինա էր դնում, որոնք թաց ձեռքերը վերև տնկած, վազում էին իրենց տները։ Հետո, դհոլ-զուռնայի ուղեկցությամբ, իրենց տունն էին գնում քավորանք և մյուս մեծարգո հյուրերը։

Հարսանքատանը գիշերելու էին մնում միայն ամենամոտ ազգական հարսն ու աղջիկները, որոնք փեսայի ու ազապրաշինների հետ հինա էին դնում իրենց ձեռքերը, իսկ մնացած հյուրերին չոր հինա էին տալիս, որպեսզի նրանք տներում ջաղախեն ու դնեն։

Խաչախուր: Ժամը տասի մոտերքը, նախկին կարգով, ոմանք դհոլ-զուռնայի ուղեկցությամբ, ոմանք՝ հատուկ հրավիրակների, հավաքվում էին նախորդ օրը հրավիրյալ ընտանիքները, այնքան թվով, որ թոնրատունը լցվում էր ոտքի վրա կանգնողներով։ Սեղան էր դրվում միայն ամենահարգված տարեց մարդկանց առաջ, որոնց թվումըն էին քահանան ու քավորը։ Այդ ժամանակ քահանայի առաջ էր բերվում մաղի վրա դրված քողը. քահանան օրհնում էր այն։ Դրսում ազապրաշինները փեսային նստեցնում էին ձի, ու, բացի փեսայի մորից, մնացած բոլոր հրավիրյալները պարելով ուղեկցվում էին հարսի տուն։ Պարողների ետևից երկու հոգի գլխներին կամ թևերի տակ դրած տանում էին մի-մի մաղ, մեկի մեջ՝ 25—30 հատ բաղարջ, նաև հարսի քողը, մյուսում՝ երկու կլայեկած սկուտեղով հալվա։ Մաղ տանողներից մեկը լինում էր գզիրը, մյուսը՝ որևէ տննշան անձնավորություն։ Նրանք պարգևատըրվում էին հարսանիքի ավարտի օրը։

Հարսի հերանց տանն էլ նույն ձևով հավաքվում էին հրավիրյալները, բայց առանց դհոլ-զուռնայի։ Այստեղ նստած հյուրերը սպասում էին փեսայի ժամանմանը։ Եկողներից տղամարդիկ նստում էին պատերի երկայնքով փռված թաղիքներին, ամենակենտրոնում, իհարկե, քահանան, քավորը, փեսայի հայրը և ուրիշ տարեց մարդիկ։ Դրվում էին սեղանները, մատուցվում էր անխուսափելի երկու տեսակի ճաշը, ըստ որում, ինչպես միշտ, հարսանքատանը ես, ճաշը դրվում էր ոչ թե առանձին-առանձին ափսեներով, այլ ընդհանուր ամաններով։ Մի սեղանի շուրջ, եթե բոլորած էր տասը հարսանքավոր, դրվում էր երեքից-չորս ափսե ճաշ։ Գինին բաժանվում էր նույն բաժակով, հատուկ գինի մատուցողների ձեռքով։

Մինչ տարեց ու միջին տարիքի տղամարդիկ նստած ուտում-խմում էին, փեսան, ազապրաշինների ու հասակակից երիտասարդների ուղեկցությամբ, դանդաղորեն, քայլ առ քայլ ներս էր բերվում ու հասցվում թոնրատան գլխին։

Հարսհյուր գնացած կանանց ու աղջիկներին սեղան նստեցնելու սովորություն չկար, նրանցից մի մասը ոտքի վրա էր մնում, մյուս կանայք՝ քավորկնոջ հետ մտնում էին այն մառանը, ուր հարսը հագնված, կանգնած էր յուրայիններով։ Քավորկինը երեք անգամ հարսի գլխի շուրջը պտըտեցնում էր քողը և մի շարք բարեմաղթություններով, ինչպիսիք էին՝ աստված անփորձանք պահի, բախտավոր հարս լինի, յոթ որդով սեղան նստի և այլն, քողը գցում էր հարսի գլխին, իսկ ներկաները՝ ամե՜ն, ամե՜ն էին ասում։ Ապա քողածածկ հարսին՝ մի թևը քավորկինը բռնած, մյուս թևը՝ հարսնեղբայրը, բերում-կանգնեցնում էին փեսայի կողքին։

Փիլոնն ուսին առած քահանան, ավետարանը ձեռքին, կատարում էր արարողության մի մասը,

որ կոչվում էր «կես փակ»: Այդ պահից էլ հարսըն ու փեսան անդառնալիորեն կապված էին համարվում։

Հարսանքավորները շարժվում էին դեպի դուրս։ Սակայն դռան մեջ կանգնած հարսի բարեկամներից մեկը թույլ չէր տալիս անցնել, մինչև քավորը դռնըբացեք չվճարեր։ Դրսում, դհոլզուռնայի և ուրախ բացականչությունների ազմուկի տակ, փեսան նստում էր ձի, հարսնեղբայրներից մեկը երկրորդ ձիու թամբից էր բռնում, իսկ մյուսը հարսին գրկած նստեցնում էր ձի, և պարող բազմության ետևից դանդաղորեն առաջ էին շարժվում հարս ու փեսայով բեռնավորված ձիերը։

Եկեղեցու դռան մոտ բազմությունը բաժանվում էր երկու մասի, ճանապարհ տալով հարս ու փեսային, որոնք առաջ էին անցնում՝ մեկն իր երկու ազապբաշիների և քավորի ուղեկցությամբ, մյուսն իր հարսնեզբայրների ու քավորկնոջ ուղեկցությամբ։ Եկեղեցի լցված հարսանքավորների աչքի առաջ կատարվում էր պսակի լրիվ արարողությունը, ապա բազմությունն ուղղվում էր դեպի դուրս։

Ելքի մոտ նրանց առաջն էին ընկնում գյուղի բարձր դասարանի տղաները՝ ուսուցիչների գլխավորությամբ և սկսում էին երգել սովորական դարձած երկու երգ.

> *Թե հայրենյաց պսակադիր*
> *Գողթնի քնարք լռել են,*
> *Երկնից թող գան անմահ հոգիք*
> *Հայոց քաջեր պսակեն։*
>
> *(ապա շարունակությունը)*

Եվ մյուսը.

> *Գողթան մանկտիք, ահա ձեզ*
> *Շքեղ փառաց ասպարեզ,*
> *Օ՛ն, փութացեք, խումբ կազմեցեք,*
> *Պսակ անթառամ մնա ձեզ։*
>
> *(և շարունակությունը)*

Եկեղեցու շեմն անցնելուն պես, քավորկինը հարսի քողի վրա էր սարածում մի ընտիր յազմա, հետո իր ետևից փեսայի հարազատներն ու մյուս բարեկամները սկսում էին հարսի գլխին գցել իրենց նվեր բերած յազմաները։ Վերջում հարսնեղբայրը վերցնում էր յազմաների կույտն ու հանձնում քավորկնոջը, որը դեռ հարսի թևն էր բռնել։

Հարս ու փեսային նորից էին նստեցնում ձի և նույն շուքով առաջնորդում փեսայի տուն։ Դռան առաջ ցած էին իջեցնում, հարսի գլխին չամիչ թափում, փեսայի ոտքի առաջ ափսե դնում, որը փեսան պետք է ջարդեր ոտքի մի հարվածով, իսկ շրջապատողները կանչեին՝ «կոտրի քյասեն, ապրի փեսեն»։ Ոմանք հարսի զգոնությունը փորձելու համար շեմի առաջ խաչերկաթ էին գցում, ոտքը քսքսացնելով առաջ շարժվող հարսը ըզգում էր ծանր երկաթի ներկայությունը և կռանում-վերցնում էր ու կանգնեցնում պատի մոտ։

Փեսայի հոր դռան մուտքը փակում էր գզիրը կամ փեսայի մի այլ հարազատ և մինչև հարսնեղբայրներից դռնըբացեք չստանային, դուռը չէին բացում հարսի առջև. մինչ այն կողմը հարսանքավորները փոխն ի փոխ երգում էին «թագավորի» հորն ու մորը ուղղված կտտակերգը.

> *Թաքյվորի մեր սաւս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Քյու սան ճրաքյն ենքյ պիրև,*
> *Խուկյուտ կրակն ենքյ պիրև։*
>
> *Թաքյվորի խեր, սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Քյե խորոտ խարս ենք պիրև,*
> *Լեզուն պակաս ենք պիրև։*
>
> *Թաքյվորի մեր սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Ալուրտ մաղող ենք պիրև,*
> *Լաշիյտ ճղող ենք պիրև։*
>
> *Թաքյվորի խեր, սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Քյե սոլ չիակող ենք պիրև,*
> *Ոտքերդ մաժող ենք պիրև։*
>
> *Թաքյվորի մեր սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Քյե խաց թխող ենք պիրև,*
> *Կյլոխա դմփող ենք պիրև։*
>
> *Թաքյվորի խեր, սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Ծրայա նորող ենք պիրև,*
> *Թոռներ շարող ենք պիրև։*
>
> *Թաքյվորի մեր սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*
> *Տախարա ավլող ենք պիրև,*
> *Շերեփըտ խլող ենք պիրև։*
>
> *Թաքյվորի խեր, սուս արև,*
> *Տե մենք քյե ինչ ենք պիրև,*

Աղըտ լվացող ենք պիրե,
Տուներտ շենցուցող ենք պիրե։

Քաքյվըրի մեր աուս արե,
Տե մենք քյե ինչ ենք պիրե,
Տյաշտ խաց տարող ենք պիրե,
Դարապտ արող ենք պիրե՚։

Փեսայի մայրը, ուրախ ժպիտը դեմքին, կրկընում էր. «Ես ծե մեռնեմ, ծեր պիրածներաց մեռնեմ, խաղար-խաղար պարով էկաք»։

Հարս-աղջիկների, հարսնեղբայրների ուղեկցությամբ հարսը տարվում էր իր բաղբը (առանձնացված բաժանմունք)։ Անմիջապես հարսի դիրկըն էին տալիս ընտանիքի ամենահարազատ տղա երեխային։ Հարսը գրպանից հանում էր այդ պահի համար պատրաստած մանկական ծաղկահյուս գուլպան, հետն էլ մի բուռ չամիչ ու տալիս մանկանը։ Հետո նա չամիչ էր բաժանում թաղթ մըտնող բոլոր երեխաներին, մինչև սկեսուրը դոնից մտնելով, հարսին համբուրելով տալիս էր որևէ պարգևը և իրավունք՝ նստելու։ Նստելու հրահանգի հետ արված այս նվերը կոչվում էր Ճասնյա:

Օրն արդեն մթնած էր լինում։ Հարսի հերանց տնեից գնացած դհոլ-զուռնայի նվագակցությամբ գալիս էին ճարսի ճերաճ, որոնց թիվը 30-ից 50-ի էր հասնում։ Նրանք բերում էին մի մաղով բաղարջ, մի մաղով էլ երկու սկուտեղ հալվա։ Այս երթը կոչվում էր խրճ:

Երկու նույնատեսակ մաղերով բաղարջ ու հալվա էր բերվում նաև քավորի անից (նույնպես դհոլ-զուռնայի ուղեկցությամբ), որը նույնպես իրեք էր անվանվում։ Տրվում էր Փսալյաճաշ՝ կանանց առանձին, տղամարդկանց առանձին, ազապրաշիներին՝ փեսայի հետ առանձին, հարսնեղբայրներին՝ հարսի թաղթում առանձին։

Կար մի ներելի սովորություն ես՝ հարսնեղբայրը, հարսի շուրջը հավաքված հարսն-աղջիկներից մեկն ու մեկի փեշից կամ մազից բռնելով համբուրելու շարժումներ էր անում, և հարս-աղջիկները թաղթից դուրս էին փախչում։ Պատահում էր, որ հարսնեղբայրը մեկն ու մեկից խճամասլաճյ էր առնում, այսինքն՝ համբուրում էր, դա առիթ էր տալիս կատակների ու ծիծաղի, բայց ոչ վիրավորանքի։

---

[1] Փեսայի մորը դուրս կանչելու այս արարողությունը խառակոնիսում կատարվում էր ոչ թե դռան առաջ, այլ երդիկի վրայից։ Փեսայի ու հարսի առաջ պարողները բարձրանում էին կտուրն ու երդիկի շուրջը պար բռնած երգում էին սույն երգը։

Կերուխումից հետո սկսում էր ծանրաշարժ գյոնդասյարը, որն այդպես էլ կոչվում էր՝ Ծան-դըր գյոնը: Ծանր դյոնդը կամաց իր մեջ էր ներդրավում հարսն ու աղջիկներին. սա արդեն կոչվում էր ալաջա գյոնդ (երկերանգ պար)։ Ալաջա դյոնդի մեջ էր ներդրավվում փեսան՝ իրենից անբաժան ազապրաշիներով։ Այս պարը փեսայի մասնակցության պատճառով էլ կոչվում էր փեսախաղ: Հարսանքավորներից քչերը կլինեին որ չմասնակցեին փեսախաղին, և բոլորն էլ վառ մոմը ձեռներին։

Կես գիշերին հարսանքավորները ցրվում էին, բացի հարսնեղբայրներից, ազապրաշիներից և մշտական հյուր մնացող հարազատներից։

Հաջորդ օրը նորից նույն կարգով հրավիրվում էին։ Նորից դհոլ-զուռնայով գալիս էին նաև հարսի հերանք, այս անգամ էլ բերելով ճարսի սնդուկը: Ահա դրա պարունակությունը՝ ա) երկու բոդչա՝ մեկն սպիտակ կտորից, ժանյակազարդ, մյուսը՝ երկտակ չիթ։ բ) հագուստեղեն՝ երկուական շապիկ, վարտիկ, իշլիկ, չթե ջրջաղդեստ, նուրբ ավսե ծաղկավոր կտորից, չթե աստառով և անպայման արծաթե կոճակներով՝ դոդնոց, չթե փեշտըմալ (կիսադոդնոց), մի զույգ ընաիր յաղմա, մազերը սանրելու ժամանակ ուսերին դցելու թեչոր. մոտ վեց հատ սպիտակ ժանյակազարդ դավքեր (շրջազդեստի ներքևից կապելու, որից միայն ժանյակներն էին երևում), մոտ վեց զույգ բրդե ծաղկահյուս գուլպա և սատրինչե թաշկինակներ։ գ) սնդուկի միջի աչքում դրված էր լինում խողանակ, սանր, ձեռքի օճառ, սրիչ, մկրատ, դրչահատ, տարբեր գույների թելի կոճեր, ժանյակ, գուլպա հյուսելու ճաղեր, ասեղի տուփ, մատնոց, լուցկի. մոմպատ (մի քանի մեծ երկարության գունագեղ բարակ մոմի ձևավոր փաթոթ), դեղմաշկ (հավի աղդրի մաշկից պատրաստված պարկ, որի մեջ լցնում էին աչքի ծարիր (սուրմա), դեղաիր (ոսկե բարակ իր՝ գլխիկը արծաթազարդ ու արծաթե շղթայիկով էլ միացած դեղմաշկին)։ Բացի սրանցից, լինում էին նաև կանաչ-կարմիր գույներով ներկված եղեգնի փափուկ գլխիկներից կապված փոքրիկ ավելներ, որոնք օգտագործվում էին ճաշից հետո սեղանը ավլելու համար, ուստի կոչվում էին սեղանի ավել։ Վերջիններս լինում էին նախատեսված թե՛ քավորի ընտանիքի, թե՛ ամուսնացած աալերի և ուրիշ բարեկամների համար։

Սնդուկի մեջ լինում էր նաև 2—3 զույգ տղամարդու գուլպա, ամեն մեկի մեջ կամ մեկական նուռ, կամ փախլավա-շաքար։ Դրանք

հարսի կողմից նվեր էին սկեսրայրին, քավորին և ամուսնու եղբորը։

Այս հրավերքը վերջինն էր։ Հրավիրյալ ընտանիքների ավագ տանտիկինները խոր ափսեները ձեռքերին դրած, բերում էին ջրով եփած չիր կամ չամիչ։ Մի խոսքով բերելիքը պետք է քաղցրահամ լիներ։ **Խռնանաշ** կոչվող հիշյալ օրվա ճաշին հաջորդող **պուլոր գյոնգը** տևում էր մինչև երեկո։ Երեկոյան, դհոլ-զուռնայի ուղեկցությամբ, ետ էին ուղարկվում հարսի հերանք։ Քիչ առ քիչ ցրվում էին նաև մյուս հրավիրյալները։ Հարսի թաղթն էին մտնում քահանան, քավորը, կեսրարը, ապա այնտեղ էր բերվում տիեզանի։ Հարս ու փեսային կանգնեցնում էին իրար դիմաց, վառ մոմերը ձեռքներին կանգնում էին աղապրաշիներն ու քավորը, քահանան նորից փիլոնը առնում էր ուսին և հարս ու փեսայի գլուխները մոտեցրած աղոթք էր մրմնջում։ Վերջին ու կարճատև այս արարողությունը կոչվում էր ուսը կտրել։ Դրանից հետո բոլորը դուրս էին գնում, մի քանի րոպե թողնելով հարսին առանձնացված իր հարսնեղբայրների հետ։ Քիչ անց, դհոլ-զուռնայով, հարսի հերանց տուն էին վերադարձնում նաև հարսնեղբայրներին։ Մեծ հարսնեղբոր ուսին էր գցվում հարսի հոր համար նախատեսված նվերը՝ **բիրմանի շալը**։

Հարս ու փեսայի առանձնանալուց հետո, ամենաանփորձ, ամենադոեհիկ ընտանիքներում էր, որ հարս ու փեսային ականջ ղնողներ լինեին, ինչպես նաև կուսության ապացույցներով հետաքրքրվեին, ուր մնաց՝ հարսի հերանց կարմիր խնձոր ուղարկելը։ Այս սովորույթը արևակցի հարյուրամյա պառավներն անգամ չէին տեսել։

Կյլխալվա (գլուխ լվանալ): Ամուսնության ութերորդ օրը, մոտիկ հարազատ կանայք հրավիրվում էին հարսի գլուխը լվանալու։ Հարսի սկեսուրը երեք երիտասարդ աղջիկների ներկայությամբ լողացնում էր իր հարսին։ Աղջիկներից երկուսը, վառ մոմերը ձեռքներին, կանգնում էին հարսի աջ ու ձախ կողմերը, իսկ երրորդը ջուր էր լցնում, քանի որ հարսը շարժումներ անելուց ամաչում էր։ Հագնված հարսը սկեսրոջ և աղջիկների ուղեկցությամբ գալիս էր ներս, հերթականորեն համբուրում նստածների ձեռքերը և սկսում սպասարկել ճաշասեղանին, հյուրերի մեկնելու պահին ուղղում էր նրանց սոլերը և վերջում կրկին համբուրում գնացողների ձեռքերը։

Գլուխ լվանալով էլ վերջանում էին փեսայի տան հարսանեկան ծիսակատարությունները։

Այնուհետև հարսի մայրը կիրակի օրերը գնում էր իր աղջկան այցի, այնպես, ինչպես սկեսուրն էր գալիս հարսին տեսության՝ տանելով ձեռքին դրած ձվածեղի ափսեն։ Իսկ մեծ պասի չորրորդ չարաթի չորեքշաբթի օրը հարսի հերանք բերում էին երկու մաղ պասվա բաղարջ։ Սա կոչվում էր **միճինճ**, որովհետև այդ օրը մեծ պասի միջին օրն էր։

Թ'ազա կամ ճաչ սաոց (մեծ դարձ)։ Մեծ պասից, այսինքն՝ Հարության տոնից երկու շաբաթ առաջ, հարսի հարազատներից մի կին գալիս էր, հարսին տանում դարձ։

Զատկվա տոներին, երբ առհասարակ բոլոր հարսն-աղջիկները եկեղեցի էին գնում հաղորդություն առնելու, հարսի սկեսուրը գալիս էր իր հարսին եկեղեցի տանում, իհարկե, հերանց ընտանիքի հետ։ Իսկ ղատկին հաջորդող կանաչ ու կարմիր կիրակիներին գալիս ու հարսի ընտանիքի հետ միասին գնում Աստվածածնա վանքը։

Այս դարձին հարսը հերանց տանն էր մնում վեց շաբաթ ու այդ ընթացքում էլ պատրաստում էր իր տանելիք ջհեզը (օժիտը)։ Ջհեզը լինում էր՝ տղամարդու գուլպաներ, որ հարսը տանում էր տան բոլոր տղամարդկանց ու քավորին, ինչպես և մյուս մոտիկ ընտանիքի ավագներին, նաև բրդե գունավոր թելերից ամանների բերանները կապելու թելեր ու չվալների բերանները կարելու լարաններ, եթե կեսարանք կամ քավորանք ձի ունեին, նաև ձիու կապ՝ զարդարուն կանաչ-կարմիր չուտով։

Սրանցով էլ վերջանում էին հարսի հերանց պարտականությունները։

Երկրորդ անգամ հարսը հերանց տունն էր տարվում աշնանը, այս անգամ արդեն՝ տասնըհինգ օրով, առանց հատուկ ձևականությունների, և դրանից հետո այցելությունները լինում էին ըստ հարմարության կամ անհրաժեշտության։

Հեռու տեղերից աղջիկ բերելը: Հարսանեկան բոլոր կանոնները պահպանվում էին, միայն թե տաշտադրեքի առավոտյան փեսայի կողմից հարսհյուր էին գնում տվյալ վայրը, ուր հարսն էր, հաջորդ օրը հարսին հասցնում էին տեղ։ Դհոլզուռնայով հարսանքավորները գնում-դիմավորում էին եկողներին ու տանում-իջեցնում քավորանց տուն։

Քավորի տուն էին առաջնորդում փեսային, քավորի թոնրան վրա էր կատարվում կես-պսակը և այդտեղից էլ հարս-փեսային ձի նստեցրած տանում էին եկեղեցի։ Մնացած ծիսակատարությունները արվում էին առանց հարսի հերանց։ Իսկ եթե այնպես էր պատահում, որ հարսի՝ բերած

որը տարաժամ էր լինում, ապա պսակը հետաձգվում էր հաջորդ օրվան։ Նման բացառիկ դեպքերում, երեկոյան, քավորի տուն էին գնում արոբք անելու, այսինքն՝ հարսանիքը ևս մեկ օրով երկարում էր։

Իսկ հեռու տեղից եկած հարսնեղբայրներին պահում էին տասից տասնհինգ օր, բոլոր բարեկամները նրանց հրավիրում էին իրենց տները և վերջում երկուսին էլ մի-մի բիրմանի շալ նվիրում ու առատ ճամփապարենով ճանապարհ դնում։

Եթե հարսը բերվում էր Վանից, ապա հարսին բերելու գնացող հյուրերը սովորաբար փոքրաթիվ էին լինում՝ քավոր, քավորկին, տալ, մի ուրիշ երիտասարդ կին և չորս հինգ տղամարդ՝ բոլորն էլ ձիերով։ Հաջորդ օրը փեսայի հայրը կառք էր վարձում, հարսին ու գնացած կանանց քաղաքից բերում գյուղ։ Քաղաքից եկած հարսի հետ հարսնեղբայր չէր լինում։ Մնացած ծիսակատարությունները ընդունված կարգով էին ընթանում։ Ի դեպ, կառքի սովորությունը նորամուծ էր։

Աղջիկն ուրիշ գյուղի տղայի հետ ամուսնացնելը: *Սովորաբար, եթե մեկն իր աղջիկը տվել էր ուրիշ գյուղի տղայի, ապա հարսանիքից շատ առաջ տուն էր հրավիրում ծանոթ-բարեկամների ավագներին։ Կանչվածները գնային, թե չգնային, միևնույն է, իրենց համարում էին հրավիրյալ և հարս տանելու օրը պետք է մասնակցեին այդ հարսանիքին։ Գյուղից գյուղ հարս տանելու եկողների թիվը 25—40 հոգի էր լինում, բոլորն էլ երիտասարդ տղամարդիկ և միայն մեկ, երկու կին։ Որքան մեծ էր եկողների թիվը, այնքանով էլ կարծիք էր ստեղծվում փեսայի ընտանիքի մասին։*

Նախքան հարսհյուրը կհասներ գյուղին, հայտնվում էին աղվեսները, որոնք հարսի դռան առաջ հյուրասիրվում էին խմիչքով, իսկ երբ լսվում էր մոտեցող նաղարա-զուռնայի ձայնը, ապա հարսի դռանը հավաքված նախապես հրավիրված ընտանիքների երիտասարդները իրենց գյուղի նաղարա-զուռնայով շտապում էին ընդառաջ։ Եկողներն անպայման ձեռնափայտեր էին ունենում։ Ընդառաջ գնացողներից ամեն մեկը մի հյուրի ձեռնափայտը վերցնում էր, իսկ եթե եկողների թիվը գերազանցում էր ընդառաջ գնացողների թվին, ապա վերցնում էին մեկից ավելի ձեռնափայտ և որոշ ժամանակ գյոնդապար կամ մենապար էին պարում, որից հետո յուրաքանչյուր դիմավորող իր վերցրած ձեռնափայտի տիրոջն առաջնորդում էր իրենց տուն։ Նախօրոք պատրաստված սեղանի կողքին նստած տան ավագը մեծ հարգանքով ընդունում էր հյուրին։

Հյուրասիրությունը երբեմն տևում էր մինչև մայրամուտ։ Աղջկա հոր տան կողմից ուղարկված նաղարա-զուռնայի ուղեկցությամբ, յուրաքանչյուր հյուր իրեն հյուրընկալողների հետ գնում էր աղջկա հոր տուն։ Սկսվում էր հյուրասիրությունը, ապա քահանան օրհնում էր։

Եթե գնալիք գյուղն այնպիսի հեռավորության վրա էր գտնվում, որ կարելի էր մինչև երեկո տեղ հասնել, ապա սեղանից շուտ վեր կենալով, հարսհյուրերը, վերցրած հարսին ու երկու հարսնեղբորը, ինչպես նաև հարսի օժիտը, ուղևորվում էին իրենց գյուղը։ Իսկ եթե ոչ, ապա յուրաքանչյուրն իր հյուրի հետ վերադառնում էր իր տուն։ Առավոտյան շարունակվում էր հյուրասիրությունը, նորից էր գալիս նաղարա-զուռնան։ Հարսի հերանց դռանը մի քանի երիտասարդ աղջականներ, գինով լի պոդիկներն (թեյնիկ հիշեցնող ջրամաններ) ու գավաթները ձեռքներին, գինի էին մատուցում բոլորին։

Հազար ու մի հաճոյախոսություններով, բարեմաղթություններով ու շնորհակալանքներով հարսին տանում էին, իսկ հենց որ հասնեին գյուղի եզրին, երկուստեք միմյանց ուրախ ծաղրի էին ենթարկում։ Նայած որ կողմից էր նախահարձակը, ասենք՝ տղայի, բարձր երգում էին.

Խեր խապիցինք կրթխեմ կյինով, սարանք,
սարանք, սարանք, սարանք,
Մեր խապիցինք մասըմ խինով, սարանք,
սարանք, սարանք, սարանք,
Կյեղ խապիցինք պուտուկ մը ժաժկով,
սարանք, սարանք, սարանք։

Արճակցիք խոսքի տակ մնացող չէին, ետևներից գոռում էին.

—Ծո՛, տարաննե՛ր (ողորմելիներ), ծեր սարած ըսկի մեյ քյասա ժաժիկ չարժե, արեք ծեր կյեղ, աշխար պիտի ուր մեռլի վրեն լա, տուք ծեր սարած խարսի վրեն պիտի լաք, տարեք, տարեք, որ պյարի պան ըլներ, մեր կյեղ տղար լաճ չկյե՞ր...

Կամ նախահարձակ էին լինում աղջկա գյուղացիները՝ բարձրաձայն գոռում էին.

—Ծո՛, այսինչ (տալիս էին գյուղի անունը) գյուղացիք, ապած ծեր մեկն խաղար անի, մի քիչ թափ (արաղ) քյելեք, էսր աչլաչեր աղջիկ մեր սնորից (սահմանից) ղասացուցեք, նոր կուղեք խաղցեք, կուղեք կյլոխներս դրմփեք։ Սնորն ընցաք, էլ չեք կանա եա տա։

Կամ հարսնեղբայրների եաևից էին կանչում.

—Տղեյներ, ասծու սիրում, կըխասնեք իտոնց կյեղ, չթողնեք էտը թարաուքյի իրես պանանտիսնան, չում չտանեն ժամ, չփսակեն, մեյ թողնե խարսին մոտանանւ

Այս բոլորն, իհարկե, սրախոսություններ էին, որովհետև աղջիկն իրականում վատ չէր։ Սակայն կար մի ճշմարտություն, որ արճակցիք իրենց ամենալավ աղջիկներին գյուղից դուրս չէին հանում։ Որպես մոտիկ հարևաններ, նաև համարյա նույն մակարդակի վրա գտնվող մարդիկ միշտ էլ խառակոնիսցի աղջիկներ հարս էին բերվել Արճակ և արճակցի աղջիկներ տարվել Խառակոնիս։ Հնօրյա և մշտանորոգ այդ աղգականները միմյանց հանդեպ ունեին հարաղատ հարաղատին վայել անքասիր սրտակցություն։ Արճակցի աղջկանից ծնված յուրաքանչյուր խառակոնիսցի, որքան էլ որ իր մայրը Արճակի անվանի տան աղջիկը լիներ ու իրենց գյուղի ամենալավ կիներ, նորից պեաք է պնդեր, որ արճակցիները անխտիր իրենց գյուղից տանում են գեղեցկուհիներ, իսկ խեղճ-միամիտ խառակոնիսցիների գլխին են եապում իրենց տգեղ ու գախացած աղջիկներին։ Արճակցին իր արյունակից ազգականից հարաղատ գյուղին ուղղված պարսավանքի դեմ արաահայտվելու փոխարեն, հաղթանակ ժպիտով համաձայնվում էր ու ասում, թե, հո անխելք չէին, որ իրենց լավ աղջիկները նրանց տային։

Տիրող սովորույթ էր, որ ուրիշ գյուղից աղջիկ ասնելու եկած հարսանքավորները հարգալիր հյուրասիրություն վայելելուց հետո, երբ պետք է գյուղից դուրս գնային, մի քանի խուքով աղջըկա գյուղի խափվածություն էին ծաղրում։ Ըստ ավանդական սովորույթի, աղջկա տերերը պետք է «կուլ տային» նման ծաղրանքները, թեև պատահում էր, որ աղջկա տերերն ծաղրանքին ծաղրով էին պատասխանում[2]*։*

Երբ հարսանիքն անցնում էր Արճակով: *Այնպես էր պատահում, որ Արճակի շրջակա գյուղերից մի տեղից մի այլ աղջիկ էին տանում և այդ երկու գյուղերը միմյանցից այնքան հեռու էին գտնվում, որ տնհնար էր տեղ հասնել ու ստիպված պետք է գիշերեին Արճակում։ Նման դեպքերում հորսանքատերը մի շաբաթ առաջ գալիս էր Արճակի ռեսի մոտ, հետը բերելով որևէ ընծա (քսան ղուռուշանոց շալ) կամ մի քանի օխա օղի և խնդրում իր հարսհյուրը պատվով ընդունել։ Ռեսն իր հերթին հրավիրում էր գյուղացոց ու հայտնում եղելությունը։*

Երբ տվյալ անծանոթները հասնում էին ռեսի դռանը, գյուղացիք, ինչպես կարգն է, դիմավորում էին, յուրաքանչյուրը մի հյուր տանում էր իր տունը, իսկ հարսը և հարսի հետ եկող կանայք ու հարսնեղբայրները մնում էին ռեսի տանը։ Առավոտյան յուրաքանչյուրն իր հյուրին առաջնորդում էր ռեսի տուն և օտարականները շարունակում էին իրենց ուրախ ճանապարհը։ Իսկ եթե գիշերելու կարիք չէր զգացվում, ապա այդ հյուրասիրությունը տևում էր մեկից մեկ ու կես ժամ։

Հարսհյուրերից յուրաքանչյուրին առանձին մեկի տուն տանելն ապացույց էր տվյալ գյուղի ժողովրդի հյուրասեր լինելուն։ Եթե մի տուն մի քանի հոգի էին հրավիրվում, ուրեմն տվյալ գյուղացիք կծծի էին։

---

[2] 1910 թ. արճակցի մի աղջիկ էին տանում Խառակոնիս։ Աղջիկը խիստ կարճլիկ էր, իսկ փեսան՝ շատ բարձրահասակ։ Երբ հարսհյուրը արդեն գյուղի ծայրն էր հասել, պարըռնած հարսնեորներն սկսեցին բոլոր գյուղերում տարածված ավանդական կատակերգը՝

Տարա՛նք, տարա՛նք, խոր խապիցինք կըթխեմ կյինով, տարա՛նք,
մոր խապիցինք մատըմ խինով, տարա՛նք,
Կյեղ խապիցինք պուտուկ մը ժաժկով, տարա՛նք...

Արճակցիներից մեկը բարձրաձայն կանչեց՝ «Ծո՛, խառակոնիսցի՛ք էտը տյուք մե խապե՞քյ։ Ծո՛, մեր ախչիկ պուտուկըմ չէ, ըսկի մեյ կուռիկ ժաժիկ էլ չարժի։ Իսկ խառակոնիսցի մորից ծնված Ավեդի Ներսեսը սկսեց բարձրաձայն նախատինք կարդալ օրինականությունը խախտող արճակցուն.

—Ծո՛, շան լակոտ, խառակոնսցոց ընչի՞ ես անպատվում, հ՞ր, որ նրանք չունեն, մենք մեր քյոռ-թոփալ աղչիկներ ո՞ւր սաղացուցենք։—Ապա դիմեց հարս տանողներին,—տարե՛ք, ախպեր, տարեք մեր մարալ, բաժով-բոյով Մարան, շնախավոր ըլնի ծե, Մելքյոնի պես թարանչա որ ունեքյ, էլմ էլ իկեք, Արճակ շեն տեղ ի, մեյն էլ կուտանքյ։

Այդ նույն թվականին արճակցիք են Խառակոնիսից հարս բերում։ Հարսանեկան բոլոր հյուրասիրությունները անցնում են պատշաճ կարգով։ Հարսնհյուրը գյուղից դուրս է գալիս առանց ծաղրելու ու ծաղրվելու։ Արճակ գյուղի ճանապարհին են գտնվում Խառակոնիսին պատկանող ջրաղացներից երկուսը։ Ջրաղացպաններից մեկը, որ անցյալ հարսանիքի հարսհյուրերից մեկն էր եղել և դեռ չէր մոռացել իրենց ծաղրվելը, որոշում է վրեժխնդիր լինել, ուստի կանչում է՝

—Առճակցի՛ք, շուտ մեր սնորից տյուս տարեք էար այլակերպ ախչկան, տարեքյ խասեք ծեր սնոր, էնտեղ նըստեքյ ծեր կյլոխ ղըմփեքյ։

Ծաղրված արճակցիք հանգիստ պատասխանում են.

—Է՛լ, խառակոնիսցիք, տյուքյ ծեր ախչկանից եք խաբար, տուքյ ըսկի մեր լաճուց խաբար չեք։ Այլակերպ չէ, մեյ խին ցախավել էլ որ խարս տանենք մեր լաճու խամար, էլըմ մե խամար փառքյ ի։

ՏՂԱԲԵՐՔԻ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Ծննդկանի երկունքի ցավերը սկսվելիս, լիներ գիշեր, թե ցերեկ, տան տարեց կնոջ առաջին գործն էր լինում տնից հեռացնել անչափահասներին ու տղամարդկանց, կանչել ազգական կամ հարևան կանանցից երկուսին կամ երեքին, նրանց, որոնց ծննդկանն է հոժարում, ապա տատմորը։

Ծննդկանի ձեռքն էին տալիս թոնրի խառնելու երկաթե կեռագլուխ շիշը, երկու կին նրա թևերից բռնած քայլեցնում էին տան մի գլխից մյուսը։ Պահպանվող օրենք էր ծննդկանին անընդհատ քայլեցնելը, միայն երբեմն-երբեմն, երբ ցավերը դադար էին առնում, նստեցնում էին աթոռին։ Ծննդկանի շուրջը պետք է տիրեր կատարյալ լռություն։

Ազատվելուց հետո, ծննդկանին զգույշ հասցնում էին իր անկողինն ու պառկեցնում, անմիջապես տակն էին դնում որևէ հին լաթի վրա ցրված տաք ու մաղված մոխիր և սկսում դդալով խմեցնել յուղի, փոխինդի ու շաքարի խառն շատ շլիկ ախտավը:

Նորածնին լողացնելուց հետո, տատմերը նրա ամբողջ մաշկին աղ էր ցանում և առավելապես ուշադրությամբ՝ ականջների ետևները, ոտքերի ու թևերի հոդածալերը, ազդրերի արանքներն ու թևատակերը, պարուրում ու դնում ծննդկանի կողքին։

Մանկանը կերակրում էին ծնվելուց 12—14 ժամ հետո, իսկ երկրորդ անգամվա լողացնելը հետաձգում էին երեք օրով։ Ծննդկանին կերակրում էին սննդարար ու դյուրամարս ուտելիքներով, բայց ոչ երբեք մսեղենով։ Տակի մոխիրը օրը երկու անգամ փոխում էին։ Տատմերն իր այցելությունները շարունակում էր, քանի դեռ ծննդկանը լրիվ չէր առողջացել։

Կնունք: Մինչև նորածնի մկրտությունը տատմերը համարվում էր հարամ (կեղտոտված)։ Նա չպետք է խմոր հուներ, կարագ հավաքեր, հորելու համար պատրաստվող ժաժիկը կամ պանիրը սեղմեր պարկերի մեջ։ Մի խոսքով, ձեռք չպիտի տար այն ուտելիքներին, որոնք ընդհանուր ընտանիքի անդամների համար էին։

Երեխային մկրտում էին ծնվելուց ութից տասն օր հետո։ Մկրտության օրն ընտանիքում կնքահաշի պատրաստություն էին անում։ Հրավիրում էին քավորին (քավորը տոհմական էր լինում, նոր քավոր կանչելու սովորություն չկար), նվեր տալով նրան մի զույգ գուլպա։ Մկրտող քավորը հաճախ լինում էր պատանի։

Ժամասացության պահին նորածնի ընտանիքի մի քանի անդամներ, քավորը՝ մանկան բարուրը գրկած, ինչպես և տատմերը գնում էին եկեղեցի՝ իրենց հետ տանելով և տաք ջուր։

Մկրտված նորածնին տատմերը բարուրում ու դնում էր քավորի գիրկը, որն իր նոր սանիկին տուն էր հասցնում և հանձնում սանամորը։ Կնքահաշին գալիս էին մասնակցելու մոտիկ հարևանները, ազգականները, քահանան ու ժամհարը։ Քավորը, գնալուց առաջ սանիկի բարուրի վրա էր դնում որոշ գումար՝ ընծա։

Կնունքից հետո, թե՛ ծննդկանն էր մաքրագործված, թե՛ տատմերը։ Նորածնին լողացնում էին երեք օր հետո։ Այդ լողացումը կոչվում էր մեռոնից հանել: Նորածնին այդ օրը լողացնում էին մաքուր չոգթիկի մեջ և ջուրը թափում էին կտուրը, որ մեռոնոտ ջուրը չկոխկրտվեր։ Նորածնին մեռոնից հանելուց հետո տատմերը դադարեցնում էր իր ամենօրյա այցը մորը և մանկանը։ Տատմորը խալաթ էին տալիս՝ նայած նորածնի ընտանիքի առատաձեռնության՝ մի յաղմայից մինչև մի զույգ սոլ։ Չունևորները երբեմն ոչինչ չէին տալիս։

Դրանից հետո նորածնին արդեն դնում էին օրորոցը և տակը թոնրում բոված հող փռում ու ամեն օր լողացնում։

Քառասունքից հանելը: Քառասունքը պահելու կանոնը հետևյալն էր՝ ծննդկանը քառասուն օր չպետք է արևի առաջ երևար, իսկ քառասուներորդ օրն իր հարազատների ուղեկցությամբ գնար եկեղեցի, ընդ որում, երեխան գրկին, աղոթողների բարեմաղթությունների տարափի ներքո մտներ վանք, խորանում՝ քահանայի առջև ծնկի եկած օրհնանք ստանար և ապա տուն վերադառնար։

Սակայն բոլոր ծննդկանները չէին, որ հնարավորություն էին ունենում քառասուն օր ներս ու դուրս չանելու։ Նման մայրերի նորածիններին առանց մոր էին տանում եկեղեցի քառասունքից հանելու։ Եթե դուրս գալու, արևի երես չտեսնելու կանոնը շատերը ստիպված խախտում էին, ապա քառասունքի մյուս կանոնները պահպանում էին, այն է՝ քառասուն օր ամուսնական առագաստ չմտնել, արևը մայր մտնելուց մինչև հաջորդ արևածագը իրենց սնարի ճրագն անմար պահել, քառասուն օր մսեղեն չգործածել, նորածնին ամեն օր լողացնել ու արևի տակ չհանել։

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԵՐ

Հողեվարքն սկսելու դեպքում, լիներ մանկիկ, թե զառամյալ, կանչում էին քահանային՝ հաղոր-

կություն տալու մեռնողին։ Մահանալուց անմիջապես հետո հավաքվում էին բարեկամ ու հարեվան։ Ննջեցյալի անկողնու մոտից հեռացնում էին հարազատներին, ննջեցյալին դուրս տանում, կամի տախտակի վրա լողացնում։ Մինչև այդ հասած էին լինում քահանան ու ժամհարը։ Վերջինս մի քանիսի ուղեկցությամբ բերում էր նաև նաշ կոչված եկեղեցական պատգարակն ու ծածկոցները։ Ննջեցյալին փաթաթում էին այդ ծածկոցներից մեկի մեջ, դնում նաշին, մյուսով ծածկում նաշը և քահանայի, բարեկամների ուղեկցությամբ ննջեցյալը տարվում էր եկեղեցի։ Այնտեղ ժամհարը վառ ճրագ էր դնում ննջեցյալի սնարին ու դուրս էին գալիս, ննջեցյալին թողնելով իր «պահապան հրեշտակների հետ»։ Իսկ տանը ննջեցյալի հագուստն ու անկողինը, ներառյալ խսիրը, արդեն տարվում էր խորթանոց կամ մի այլ աչքից հեռու տեղ ու պահվում։ Մեռնողի անկողնի տեղը խունկ էր ծխվում։

Մահացության դեպքում ոչ ոք չէր հրավիրվում։ Գալիս էին ամենքն ու յուրաքանչյուրն իր ծառայությունն էր մատուցում։ Նստում էին վշտահարների կողքին, որ նրանք մենակ չմնան, զբաղեցնում էին նրանց միտքը, որ գոնե ժամանակավորապես դադարեն սգալ։ Դա տևում էր օրեր ու շաբաթներ, եթե ննջեցյալը այնպիսի տարիքի էր, որ խոր վիշտ էր պատճառել հարազատներին։

Հաջորդ օրը նորից էին հավաքվում ննջեցյալի տունը և եթե ննջեցյալը մանուկ էր կամ կին, ապա նրա պատանը կարելու և թաղելու էին գնում տարեց կանայք։ Եկեղեցում մի պառավ կարում էր պատանը, նախօրոք ննջեցյալի քթածակերն ու շուրթերի արանքը խունկ մտցնելով։ Նաշի ետևից էլ՝ գերեզմանատուն, կանայք էին գնում ու թաղելուց հետո վերադառնում էին մեռելատուն։ Իսկ եթե ննջեցյալը պատանյակ էր կամ տղամարդ, նաշին հետևողները և՛ տղամարդիկ էին լինում, և՛ տարեց կանայք։

Եթե ննջեցյալին թաղում էին պատարագով, ապա թաղումից առաջ, եկեղեցում երեկոյան կատարվում էր հոգեհանգիստ՝ քահանայի և տիրացուների մասնակցությամբ, հաջորդ օրը, կեսօրին, պատանքը կարելուց հետո կատարվում էր պատարագ։ Ննջեցյալին եկեղեցուց մինչև գերեզմանատուն տանում էին եկեղեցական լրիվ կազմով՝ զգեստավորված և շարականներ երգելով։

Պատարագով թաղվածի համար տրվող հոգեճաշին մորթվում էր եզ կամ կով՝ ըստ ննջեցյալի հիվանդ ժամանակ տված պատվերի։ Հոգեճաշը մեռելատանը մատուցելուց բացի, բաժանվում էր բոլոր տներին։ Չտանելն էլ մեղք էր համարվում, մերժելն էլ։

Բոլոր դեպքերում էլ, հաջորդ օրը գնում էին խունկ ծխելու։ Խունկ ծխելու էին գնում նաև մահվան յոթերորդ օրը։ Այդ օրը լվանում էին ննջեցյալի հանդերձն ու անկողինը։ Հանդերձն այնուհետև բաժանում էին աղքատներին։

Քառասուներորդ օրը ննջեցյալի հարազատներին սգից հանելով էին զբաղվում։ Տարեց, թե երիտասարդ տղամարդկանց երեսն էին ածիլում, կանանց լողացնում, մայրամուտից առաջ գնում էին գերեզմանին այցելության՝ խունկ ծխում ու վերադառնում։

Ի դեպ, ննջեցյալի վրա արվող սուգը խիստ զուսպ էր։

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՏՆԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աչքացավ: *Որպես ծխի ու փոշու մեջ աշխատողներ, Արճակի տարեց կանայք ամենից ավելի էին ենթակա աչքի տկարության։ Վաղուցվա սովորություն էր՝ տարեց կանայք իրենց մոտ ունենում էին կսկծացնող դեղափոշի, որ աչքին էին դնում աչքը ծարիրող աեղտիրով։ Վերջինս սև, ոսկրե բարակ ու հղկված ձողիկ էր, որ պատրաստում ու վաճառում էին վանեցի արհեստավորները։*

Արճակցի հարուստ ու տոհմիկ Մինասի աան ավաղուհին աչքի հեքիմ էր։ Աչքի հեքիմությունը նրա հորենական տոհմից էր գալիս, և նա աղջիկ ժամանակ մորից սովորել էր ու ծերության հասակում սովորեցնում էր իր արդեն թոռատեր հարսին։ Դեղորայքի ցանկը չորսից ավելի չէր՝ մի կտոր պղնձարջասպ (շքամանիկ), քյաշմիկ (ոչ մուգ գույնի խիստ մանր ու տափակ սերմ, որ վաճառում էին Վանի խանութներում)։ Քյաշմիկը հատ-հատ չրթացնելով ու ասեղի ծայրով դուրս բերելով դրա սափակ ու դեղին միջուկը, հեքիմը դրանք որոշ ջերմության ենթարկելուց հետո, հավանգով փոշիացնում էր, ու դեղանյութը պատրաստ էր։ Ճապա՛ ռասութ (կարմիր գույնի փայլփլուն դեղափոշի) և վերջապես՝ սիվտայ

անք (սպիտակ դեղ) կոչված մոխրագույն դեղափոշի։

Վերջին երկու դեղափոշիները գնում էին Վանի քաղաքամիջում ապրող մի այլ հեքիմ կնոջից, որին անվանում էին Սրպիկ։ Արևակցի տարեց կանանց պրպաններում միշտ էլ գտնվում էր սիվտայ անքը։ Այս կծկծացնող դեղերը ամեն օր չէ, որ գործածում էին։ Իսկ լողանալուց և գլուխը լվանալուց հետո էլ նույն օրը չէին գործածում։ Ռասուխն էլ, սիվտայ անքն էլ անղափրով էին քաշում աչքերին և շատ կանայք իրենց մոտ ունենում էին ու հատկապես ռասուխը. համար նկատած ժամանակ քաշում էին աչքերին։ Բյաշմիկը, սակայն, դնում էր ինքը՝ հեքիմը, որովհետև նա այդ դեղափոշին ցանում էր վերևի կոպը շրջելով և եթե նպատակահարմար չէր գտնում, բյաշմիկով բուժում չէր անում, պատճառաբանելով, որ ավելորդ տեղը դեղ գործածելը վնասաբեր է։

Պղնձարջասպը նա գործածում էր, եթե գտնում էր, որ աչքի կոպերը կան-կանա են բռնել։ Այսպես էին կոչվում կոպերի ներքևում գոյացած մանր արնային կծիկները։ Շրջում էր վերևի կոպը և խիստ զգուշությամբ կոպին էր քսում պղնձարջասպի կտորը։ Արջասպով կոպին քսելը կոչվում էր կոպ ղալել, իսկ երբ կոպի ներսից դեղ էին ցանում, անվանվում էր կոպ կոխել: Կոպը կոխում էին թե՛ բաշմիկով, թե՛ ռասուխով։

Աչքաշոր (աչքացավ) կամ խուտուտիկ (ուժեղ ցավ): Աչքացավն ամենից շատ երևան էր գալիս ամռանը, մանավանդ կալոցին։ Սա միակ հիվանդությունն էր, որի դեպքում առողջներն զգուշանում էին վարակվելուց, սակայն քչերին էր հաջողվում վարակից զերծ մնալ։ Ամենից շատ աչքացավով վարակվում էին փոքրիկները։

Աչքացավի հիշյալ տեսակի դեպքում աչքերից արտահոսում էր դեղին թարախանման հյութ, կոպերը ուռչում էին, և զգացվում էր ուժեղ կսկիծ, որն էլ կոչվում էր խուտուտիկ։ Այսպես՝ «աչքերը կխուտուտիկեն» կամ «խուտուտիկ տաներ ի», «խուտուտիկ տարեց» և այլն։ Խուտուտիկը մեղմելու միջոցներն էին՝ փոքրիկ աղջնակի (1—7 տարեկան) մեզ և, մանավանդ, աղջիկ երեխայի մոր կրծքի կաթ լցնելը։ Դա խիստ մեղմում էր ցավը։ Սակայն խուտուտիկի դեմ պայքարելու, ավելի ճիշտ՝ խուտուտիկը բուժելու հիմնական միջոցը շբլնխն էր:

Շբլեխը պատրաստում էին երկու ձևով՝ տաք կամ սառը։

ա) Մի փոքրիկ մաքուր կուռա թոնրան մեջ տաքացնում էին, ձվի սպիտակուցը թափում մեջը և մի կտոր սպիտակ շիբով խառնում։ Տաքացրած և շիբով խառնված սպիտակուցը բաժանվում էր երկու նյութի՝ վճիտ ջուր և կիսեփ սպիտակուց։ Այդ ջուրը տաք վիճակում լցնում էին աչքի մեջ, իսկ մյուս՝ մածնանման մասը դնում էին աչքի կոպերի վրա։ Հիվանդը միաժամանակ աչքերը փակ էր պահում։

բ) Թարմ ձվի ծայրը ծակում էին, սպիտակուցը թափում, իսկ դեղնուցի մեջ լցնում մի քիչ մանրացված սպիտակ շիբ ու սկսում ձուն հարել։ Հարված շրախառը դեղնուցը օրը երեք անգամ կաթեցնում էին աչքի մեջ։ Խուտուտիկը տևում էր 4—5 օր։ Եթե հիվանդությունից հետո աչքի կոպերը մնում էին ճում, այսինքն՝ ուռած, և երեկոները ծանր էին բացվում ու առհասարակ լրիվ առողջացած չէին լինում, ապա դիմում էին այլ միջոցի։ Թոնրան վառ ժամանակ խաչերկաթի վրա մի քիչ սպիտակ շիբ էին դնում, մեջն էլ երկու մեխակ։ Ջերմացած շիբն սկզբում դառնում էր հեղուկ, ապա վերածվում սպիտակ, փրփրուն զանգվածի։ Այդ զանգվածը մի փոքր կտոր շաքարի հետ փոշիացնում էին, երեկոները հիվանդի աչքի կոպերին դրսից մի քիչ կարագ էին քսում, այրված շրափոշին ցանում վրան ու այդպես մնում էր։

Հիշյալ գործողությունը կրկնում էին չորս-հինգ անգամ։ Արդյունքը դրական էր լինում։

Թոզ (կատարակտ): Եթե աչքի վրա երևան եկած սպիտակ բիծը ծաղիկ հիվանդության հետևանք էր, ապա ոչինչ չէին ձեռնարկում։ Սակայն պատահում էր, որ դա արդյունք էր լինում գլխին իջած հարվածի։ Նման դեպքում, ութ օր իրար վրա, հատկապես բոցի վրա տաքացրած ջրով, գլուխը լվանում էին ու անմիջապես խմեցնում մի բաժակ յուղ ու մեղրի տաք խառնուրդ։ Միաժամանակ արգելում էին աշխատել, ինչպես նաև ուժեղ լույսին նայել։

Մազ: Եթե ղանդանան (տրախոմա) կոպերում խիստ արմատացած այս հիվանդությունը, ժամանակին չէր բուժվում, ապա տվյալ մարդու կոպերի տակ մազ բուսնելը անխուսափելի էր։ Այն բուսնում էր առավելապես տարեց կանանց աչքերում։ Բուժման միջոցը երկուսն էր՝ նախ, փոքրիկ ունելիով քաշելը, երկրորդ՝ մազը կոպին կպցնելը։

Մազ քաշելը կատարում էին աչքի հեքիմը կամ ձեռներեց ջահել կանայք։ Այն համոզմունքն էր տիրում, որ մազ քաշելն ավելի է նպաստում մազի բազմանալուն, քան մազը կոպին կպցնելը։

Իսկ մաղը կոպին էին կպցնում հետևյալ կերպ. տաք ասեղի ծայրի վրա էին վերցնում մի աննշան մասնիկ սպիտակ ծամոն և կամ սև-ճարճատուկ կոչված բույսի արմատի կպչուն հյութը, կպցնում մաղին ու մազը սեղմում կոպին։ Մազը պառկած վիճակում կպչում էր կոպին և այդպես էլ մնում մինչև այդ կպցնող նյութի հալվելը, որ երբեմն երկու ամսից ավելի էր դիմանում։

Ականջացավ: Ականջացավով ավելի շատ տառապում էին նորածինները։ Նրանց բոլորի դեղատոմսը մեկն էր՝ կաթեցնել մոր կրծքի կաթն ու տաք պահել։ Մեծահասակների ականջացավի հիմնական պատճառը համարվում էր գլխի մրսելը։ Ուստի առաջին հերթին դիմում էին գլուխը տաք պահելու միջոցին։ Տոպրակով տաքացրած աղ էին դնում և դեռ լրիվ չսառած՝ փոխում էին նոր, ավելի տաք տոպրակով, խորոված սոխի ծիլը թաթախում էին ձեթում ու սեղմում ականջի մեջ։ Ուժեղ ու տևական ցավի դեպքում կաթով կտավատ էին եփում ու այդ լափան (խյուս) տաք-տաք կապում ականջին և համբերությամբ սպասում ցավի հանդստանալուն։

Ատամնացավ: Եթե փտած ատամ էր, ապա մի քիչ օղի էին առնում վրան, ծխախոտի ծուխ պահում բերանում, աղ լցնում մի փոքրիկ բամբակի մեջ ու դնում ատամի վրա, սպիտակ շիբ դնում ատամի մեջ, չհանգստանալու դեպքում դաղում էին ընկույզով։ Այսպես. ընկույզի միջուկից մի երկարավուն կտոր ամրացնում էին զուլպա հյուսելու ճաղին, իսկ միջուկի ազատ ծայրը բռնում էին վառ ճրագի վրա մինչև բոցավառվելը և այդպես էլ հպում էին ցավացած ատամին։ Եթե այս միջոցն արդյունք չէր տալիս, ատամը հեռացնում էին։

Արճակում ատամ հեռացնողը գյուղի ժամհար Արթենն էր, որն այդ ծառայությունը կատարում էր անվճար։ Երբեմն Արթենը նվերի անվան տակ ստանում էր մի թաշկինակ կամ մի զույգ գուլպա։

Պատահում էր, որ ցավում էին բոլոր ատամները միասին։ Դրան **նավազիլ** էին ասում։ Նավազիլին համարյա ոչ մի միջոց չէր օգնում, բայց և այնպես աշխատում էին գլուխը տաքացնել՝ տաք աղի տոպրակ դնելով։ Ոմանք էլ **խաըըբուկ** կոչված թունավոր բույսի սերմերը խառնելով ծխախոտին, գլանակ էին փաթաթում ու ծխում, ծուխը ոչ թե ներս քաշելով, այլ բերանում պահելով ու ապա դուրս փչելով։

Ոսկրի կոտրվելը կամ դուրս ընկնելը: Ոսկրի երկու մասնագետ-սնըղչի աղամարդ կար Արճակում։ Սնըղչին շոշափում էր, եթե գտնում էր, որ ոսկորը դուրս է ընկել, մարմնի տվյալ մասը (ոտք, ձեռք, դաստակ) դնում էր տաք ջրի մեջ, միաժամանակ զգուշությամբ մաժում ներքևից վերև և հետո մի ձեռքով վերևի մասն ամուր բռնելով, ներքևի մասն ուժեղ ձգում էր, ապա տաք ու երկարավուն շորի կտորով (վիրակապի ձևով) ամուր փաթաթում ու պատվիրում 2—3 օր այդպես պահել։

Երբ սնըղչին գտնում էր, որ ոսկորը կոտրված է, ապա մի ուրիշ ուժեղ անձնավորության հետ ձգում էր կոտրածը, տեղը նստեցնում, նոր միայն կապում։ Կապելը կատարում էին հետևյալ կարգով՝ հում ձվի դեղնուցով **շռեշար** (սոսնձափոշի) շաղախում էին, լցնում համապատասխան կտավե կտորի վրա, ըստ որում, կտավը պետք է լիներ բոլորովին նոր ու ամուր տեսակի, դրանով կապում կոտրած տեղի շուրջը, հետո մի այլ շորով էլ փաթաթում, դրա վրա էլ երկու կտոր համապատասխան տախտակ դնում ու նորից փաթաթում։

Եթե կոտրածը թև էր, ապա պատվիրում էր թևը շալով կապել կրծքին ու լրիվ անշարժ պահել (հադուստ չհանել-չհագնել), ջանալ մատները միշտ դեպի վեր պահել, երբեմն շարժել, իսկ եթե ոտքն էր, ապա պառկել անշարժ վիճակում, ոտքին տալով մի քիչ բարձր դիրք։

Սնըղչին պատվիրում էր կոտրվածք ունեցողին լավ սնել, հատկապես պատվիրում էր կերակրել, ըստ հնարավորին՝ խաշով ու գինի խմեցնել, մատները հաճախ շարժել, որ չփայտանան, իսկ հեռադայում անպայման սնըղչին ինքն անձամբ պետք է քանդեր կապերն ու սաուղերը։

Բարեհաջող բուժումներին զուգընթաց պատահում էին նաև անբարեհաջող հետևանքներ, որի պատճառով տվյալ անձնավորության ոտքը կամ թևը ծուռ էր մնում։ Սակայն այդ բանի համար ոչ ոքի մտքով չէր անցնում սնըղչուն պատասխանատվության ենթարկել, ինչպես և հաջողության դեպքում՝ վարձատրել։ Հարգալիր վերաբերմունքն ու շնորհակալական խոսքն էր սնըղչու վարձը։

Մեյ դեխան կյլխացավ (մի կողմից գլխացավ): Սրանով տառապողները սովորաբար միջին տարիքի մարդիկ էին, հիմնականում՝ կանայք։ Հիվանդությունը միշտ էլ կապում էին մրսելու կամ հոգեկան ուժեղ ցնցումներ ունենալու հետ։ Համոզմունք կար, որ **մեյ դեխան կյլխացավին** լրիվ բուժում չկա, բայց կար մեղմելու դարտվոր մի միջոց, դա **շօպ զանելն** էր, որը կիրառում էին

Հիմնականում ուժեղ գլխացավի ժամանակ։ Կրակի մեջ շարում էին գուլպա հյուսելու մի քանի բարակ շյուղ և թողնում մինչև կրակի մեջ եղած մասերը սատանային կրակի գույն, հետո այդ շյուղերի շիկացած ծայրերով արագ-արագ և իրարից քիչ հեռու հարվածում էին հիվանդի ճակատին, գլխավորապես քունքերին մոտիկ։ Երբ շյուղը կորցնում էր իր շիկագույն տեսքը, վերցնում էին հաջորդը։ Շիկացած շյուղի կպած տեղերի մաշկը մանրիկ այրվածքներ էր ստանում (երեսանց)։ Այրողը ճակատին քսում էին **տալկոնով** (խիտ ջերմություն տվող, սպիտակ արմատ, որ վաճառվում էր Վանի խանութներում, արևելյան մյուս համեմունքների կողքին) խառնված օղի և թաշկինակով կապում։

Շուղ դանելը բավականին նուրբ գործ էր և բոլոր կանայք չէին, որ ընդունակ էին այդ անելու։ Շուղ խփված տեղի այրվածքները վերքի չէին փոխարինվում, այլ մի փոքր մուգ գույն էին ստանում ու երկու շաբաթվա ընթացքում անհետանում։ Շուղ դանելու երկրորդ օրը քունքերին կպցնում էին երկու կտոր **սպիտակ յախու**, որը պատրաստում էին հետևյալ ձևով։

Ծեծված, փոշիացված խունկի, տաք-կոճի և մի քիչ էլ սև պղպեղի փոշուն ավելացնում էին սպիտակ ծամոն և ձվի հում դեղնուց, լցնում օղիով թրջված բոլորովին նոր կտորի վրա և փակցնում քունքերին։ Յախուն մնում էր քունքերին կպած մինչև ինքն իրեն պոկվելը։ Սրանից հետո, հիշյալ գլխացավի դեմ պայքարելու ուրիշ միջոց չունեին։

Մատնաշուրթ (մատնտաշունչ): Ժողովրդի մեջ այն համոզումը կար, թե մատնաշուրթը կանխելիք վերք է։ Դրա համար էլ, երբ մատի եղունգի շրջանում ուժեղ, ծակող ցավեր էին զգացվում, միաժամանակ էլ նկատվում էր մաշկի որոշ գունափոխում, ինչպես նաև հիվանդացող մատը ջերմում էր, ապացույց էր, որ մատնաշուրթ է սկսվելու։

Հիվանդացող մատը սանեղ-սանեղ թաթախում էին եռացող կաթի կամ դրա չլինելու դեպքում՝ եռացող ջրի մեջ այնքան, մինչև ցավող մասի մաշկը այրվածքի աստիճանի հասցնելը, մինչև սպիտակելն ու ծակոցների մեղմանալը։ Ճիշտ ժամանակին ձեռք առնված այս միջոցառումը կանխում էր մատնաշուրթի զարգացումը։ Չկանխվելու դեպքում, վերքը բացվելուց առաջ, հասունացնելու նպատակով յուղով ու շաքարով խմոր էին կապում մինչև վերքը ծակվեր, հետո խորոված սոխի թերի վրա ձեթ էին քսում-կապում կամ եղան յուղու էին կապում, իսկ եթե ժամանակը ձմեռ էր, ապա թարմ կաղամբի տերև։

Այսպես թե այնպես, ժամանակին ձեռք առնված մատը ուրելը, որին գյուղացիք անվանում էին **վալսգուցել**, ամենատարածվածն էր։

Խավկոր (խավկուրություն): Այս հիվանդությունը ոմանք անվանում էին նաև **շավկոր** (գիշերվա կույր)։ Հիվանդության արտահայտությունն այս էր՝ արևի մայր մտնելուց մինչև հաջորդ առավոտ աչքը զրկվում էր տեսողությունից։ Խավկորով բռնվում էին արևի ներքո, դաշտում շատ երկար մնացողները, առավելապես հոտաղները։

Խավկորի բուժումը հիվանդին լյարդ կերցնելն էր, ընդ որում, ոչ թե խորոված կամ տապակած, այլ խաշած։

Հիվանդին լողացնում էին կամ գլուխը կախ լվանում, մի մեծ շորով գլուխը մինչև ծնկները ծածկում ու փոքրիկ կճուճով խաշած լյարդը տալիս նրան։ Վերջինս կճուճը դրկին պահած ու կռացած դրա վրա, արագ-արագ ուտում էր տաք լյարդը և խմում պղտոր լյարդաջուրը։

Ուտելիս հիվանդը աչքերը պետք է բացած պահեր գոլորշու վրա։ Մի քանի անգամ կրկնելուց հետո (ընդ որում՝ օրը մեկ անգամ) տեսողական այդ աննորմալ երևույթն անհետանում էր։

Թոլ մեշք (թույլ մեջք): Որոշ անչափահասներ, որոնք քնած տեղը տակները թրջում էին, համարվում էին թույլ մեջք ունեցողներ։ Նման երեխաներին կիսախորոված փայծաղ էին կերցնում, ուտելիքի հետ խառնում ու կերցնում էին հում ձվի կեղևի փոշի, մեջքին սև ծամոնի յախու էին փակցնում։

Ճնջխուկ (ճնճխված): Եթե որևէ հարվածից մարմնի որևիցե մասը ճնջխվել էր, մաշկը կապտել, բայց արյուն չէր եկել, դա համարվում էր ավելի վտանգավոր, քան եթե մաշկը քերծված ու արյունոտված լիներ։ Նման դեպքում դիմում էին **խմբուրծի**: Խմթուրծը պատրաստում էին հետևյալ կերպ՝ թոնրան տաք մոխիրը շաղախում էին աղաջրով և կապում ճնջխված տեղին։

Խամ առնել: Խամ առնել էր կոչվում այն ցավի զգացումը, երբ անաշխատ թողած մկանները չափից ավելի էին լարում, օրինակ՝ երկար ժամանակ ուղևորություն չկատարածը հանկարծ երկար ու դժվարին ճանապարհ էր գնում կամ հնձի անսովորը մի անգամից շատ հունձ էր անում։ Նման անսովոր ու չափից ավելի աշխատանքից հետո անհնարին էր լինում քայլելը կամ նստել, շարժվելը։ Սա հենց **խամ առնել** էր։ Այսպիսի դեպքերում խամ առած տեղին աղաջուր

էին քսում, իսկ եթե սովորականից ավելի էր արտահայտվում ցավը, թթխմորին ավելացնում էին երկու բուռ աղ և այնքան ալյուր, որ խմորը հազիվ իրար կպչեր, դրտնակով բաց էին անում և այդ բացված լավաշը գցում եռացող ջրի մեջ, ապա հանում, կապում խամ առած տեղին։ Կիսաեփ թթխմորալավաշը տվյալ տեղի վրա կապված էր մնում ամբողջ գիշերը։ Մարմնի ջերմությունից ավելի ևս պնդացած այդ խմորը պոկում էին ու հետո աղաջրով կամ մանկան մեզով լվանում մարմնի ավյալ մասը։

Մայասուլ (թուբf): Այս հիվանդությամբ տառապողները, ամոթի զգացումից, միայն մտերիմներին էին հայտնում։

Այն կարծիքն էր տիրում, որ մայասուլով հիվանդը ինքը պետք է իր բժիշկը լինի։ Նման հիվանդները պետք է խուսափեին կծու ուտելուց, ոտքերը պիտի տաք պահեին, թոնիր կախվելիս, այնպես պետք է նստեին, որ նստելատեղը կպչեր թոնրան աաք շուրթին, շատ ստեին **նվիկ** բանջարը։ Դառուշ անունով մի բույս կար, որ բուսնում էր ամենուրեք։ Սա այնքան դառն էր, որ երբ ձեռք էիր տալիս, ձեռքդ ղառնանում էր ու հաց ուտելիս զգացվում։ Ահա այս բույսի հյութը քսում էին հետույքին։

Բացի դառուշից, կար նաև մի այլ բույս, որ ուղղակի կոչվում էր մայասուլի ծաղիկ։ Բաղմաճյուղ ու բաղմաթիվ մանր վարդամանուշակագույն կամ սպիտակ ծաղիկներով այս բույսը, որ շատ նման է ոսպի ծաղկած թփիկի, շատ շուտ չորանում էր ու խիստ դառնտհամ էր։ Մայասուլի ծաղիկը թարմ, թե չորացած, խաշում էին, ջուրը տաք-տաք խմում, ինչպես և խաշված լցնում ամանի մեջ ու վրան նստում։

Տեղնութեն (դեղնախտ): Այս հիվանդությամբ տառապում էին մանուկները և այն էլ դողերոցքով հիվանդացածները։ **Տեղնութեն** **պոնած** մանուկներին լողացնում էին կովի շաուկով, փաթաթում **կոեզի թաֆ** կոչվող դառն ու մեծ տերևներով ու դրանց մեջ էլ քրտնեցնում։ Ոմանք ավելի հարմար էին գտնում մանկանը լողացնել ուռենու տերեի ջրով ու փաթաթել վերջինիս տերևի մեջ։

Դա արվում էր հետևյալ ձևով։

Լույսը դեռ լրիվ չբացված, քաղում էին մի մաղ ուռենու տերև, բերում լավ եռացնում, ստացված ջրով լողացնում մանկանն ու հետո փաթաթում խաշված տաք տերևների մեջ։ Սրա հետ օգտագործում էին նաև **տեղնուց ուլնիկ** կոչված մի հուլունք, որը դերրնական էր համարվում։ Մանկանը լողացնելիս հիշյալ հուլունքը գցում էին լողացնելիք ջրի մեջ, իսկ դրանից հետո կախում մանկան պարանոցին՝ շուրջ երկու շաբաթ։

Տեղնուց ուլնիկը սաթանման մի շատ խոշոր դեղնադույն հուլունք էր, որ դտնվում էր վաղուց Արճակում բնակություն հաստատած շատախցի մի ընտանիքում։ Տեղնուց ուլնիկի մասին ժողովրդական այն համոզմունքը կար, որ այն անձրևից հետո երկնքից է ընկնում, և գտնում են միայն ամենաարդար երեխաները։

Այլ էր համոզմունքը, երբ դեղնախտով հիվանդանում էին մեծահասակները։ Դա արդեն բացատրվում էր ծանր վշտով կամ հանկարծակիի եկած լինելով՝ խիստ անսպասելիորեն ծանր բոթ լսելուց։ «Հախտոց ի առե» ասում էին շրջապատի մարդիկ և բացատրում, որ «հախտոց հախտոցով կընցնի»։ Նման դեպքերում կիրառում էին ապտակելով բուժում։ Երբ հախտոցով հանկարծակիի եկած հիվանդը միամիտ նստած էր լինում, ռոնված հետաքրքիր գրույցով, հանկարծ մեկը նրան ապտակում էր։ Ապտակվող դեղնախտավորը մինչև կկռահեր իր ապտակվելու դրդապատճառը, գոնե մի րոպե անցած կլիներ ու կրացվեր լեղիի փակված բերանը, որ «փակվել» էր հախտոց առնելուց։

Սա բուժման մեկ կողմն էր, մյուսը, որ գեղնախտավորը պետք է պաս պահեր, այն էլ՝ մի քանի ամիս։ Անդամ նրանք, որոնք կրոնական նախապաշարումներից բարձր էին կանդնած, ղարձյալ ենթարկվում էին փորձառուներին ու հիվանդության ընթացքում ձեթ ու միս բոլորովին չէին ուտում, յուղ, ձու՝ շատ քիչ, դրա փոխարեն խիստ առատ էին դործածում բանջարեղեն, բստ իրենց կարողության՝ միրգն ու քաղցրեղենը։

Տյող-տայցոց (դողէրոցf): Ճահճուտների առկայության պատճառով Արճակի ու Խառակոնիսի բնակչությունը ավելի շատ էր ենթակա դողէրոցք հիվանդությանը, քան գավառի մյուս գյուղերը։ Այս հիվանդներին անպայման խմեցնում էին քինաքինայի փոշի և կամ այդ բույսի կեղևն էին կերցնում։ Երկուսն էլ գնում էին Վանի հայկական դեղատնից։

Պատահում էր, որ դողի ու ջերմի պարբերական նոպաներն անցնում էին, սակայն հիվանդը ունենում էր թեթև սարսուռներ, ոչ բարձր, սակայն տևական ջերմություն, գլխացավ, ախորժակի կորուստ և ուժերի անկում։ Սա արդեն կոչվում էր **կյազախյ տյող**, որը նույնպես բուժվում էր վերը նշված ձևով։ Ոմանց էլ միայն մեկ անգամ խմեցնում էին իշկաթուկ, դեղին ներկատու բույ-

մի կաթ։ Սակայն սա շատ համարձակություն էր պահանջում, քանի որ առաջ էր բերում սոսկալի սրտխառնոց ու գլխապտույտ։

Խունգավ (նարբուխ): Սա առհասարակ մտահոգող հիվանդություն չէր համարվում, բայց և այնպես աշխատում էին շուտ ազատվել դրա պատճառած անախորժությունից, ուստի և միջոցներ էին ձեռք առնում, որոնք հետևյալներն էին՝ սոխ կամ սխտոր հոտոտելը, օրական մի քանի անգամ կապույտ ջրի կտոր այրելն ու ծուխը քիթը քաշելը, գիշերը իր իսկ վարտիքը հանելն ու դրանով գլուխը, քիթն ու բերանը փաթաթելը։ Բոլորն էլ համոզված էին, որ խունգավը վարակիչ հիվանդություն է, այսինքն՝ կպչելու է, սակայն այդ ուղղությամբ ոչ մի միջոցառման չէին դիմում։

Շոռա (գրիպ): Նորան խունգավից անմիջապես զանազանվում էր և մտահոգում բոլորին։ Նորայով հիվանդը ծանր էր տանում ցավը, նույնիսկ ոմանց տաքությունն այնքան էր բարձրանում, որ հիվանդը զառանցում էր։ Ամենահնամոլ ծերուկից մինչև աշխարհ տեսած գրագետն ու ազատամիտը գիտակցում էին, նաև անցյալի փորձից էլ եզրակացրել էին, որ եթե շորան տուն մտավ, ապա բոլորին էլ վարակելու է։ Սակայն, թե՛ նահապետական մտածելակերպը, թե՛ կենցաղային պայմանները հնարավորություն չէին տալիս հիվանդին առանձնացնելու։

Հիվանդը միաժամանակ ունենում էր հազ ու բուկուռոցք, ուժեղ ցավեր՝ հոդերում, գլխացավ ու ախորժակի պակաս։

Ձեռք առնվելիք միջոցներից ամենահիմնականն էր քրտնեցնելը։ Հավլուջան կոչված արևելյան մի կարմրավուն արմատով, որ քրտնեցնելու հատկություն ուներ, օրական մի քանի անգամ թեյ էին խմեցնում, կերցնում ձեթով խավիծ, խորոված սոխ, մեջը խունկ դրած ու մոխրում խորոված սերկևիլ, եռացրած աուղաի ծաղկի սաք ջուրը որպես թեյ խմեցնում, մատին մի կտոր շոր կամ բամբակ փաթաթում ու հիվանդի բերանը մտցնելով սեղմում քիմքի խորքը, երբեմն մատն այնքան խորն էին տանում, որ հնարավոր լիներ կոկորդը պատած կեղևը պոկել, դրսից շոշափվող ուռած գեղձերը հենց դրսից էլ մասաժ էին անում, ապա ծնոտից բռնելով՝ գլուխը երեք անգամ աջ ու ձախ թեքում։ Վերջին գործողությունը կոչվում էր վիզ քյաշել։ Թե կոկորդ սեղմելը, թե վիզ քաշելը կատարում էին բավականին մասնագիտացած ու ժամանակին երկվորյակ երեխա ունեցած կանայք։ Գլխացավը մեղմելու համար հիվանդի ճակատին բողկի շերտեր էին դնում, իսկ ջերմությունը իջեցնելու համար ափերի մեջ, քունքերին ու ոտքերի տակ օղի կամ քացախ էին քսում։ Շորայով հիվանդին աշխատում էին թարմ միրգ ուտեցնել, ըստ որում, ամենալավը համարվում էր ձմերուկը։ Սակայն սա ձմռանը հազվադեպ էր, իսկ շորան ձմեռային հիվանդություն էր։

Շորան առհասարակ վաղանցուկ հիվանդություն էր, տևում էր ութից տասն օր։

Սաբռջամ (թոքերի բորբոքում): Սա սովորաբար առաջ էր գալիս մրսելուց ու ահաբեկում հիվանդատերերին։ Պատկերավոր խոսքի վարպետ ծերերը սիրում էին բառախաղ անել՝ Սաթրըշամ չի էտր անտեր ցավ, «սաթրըրը ջան ի» (ծախում է կյանք)։

Հանկարծակի դողը և ջերմաստիճանի բարձրացումը, շնչառության վատացումը, գիտակցության կորուստը բավական էին փորձերեց մարդկանց համոզվելու, որ հիվանդը սաթրջամ է ու փրկությունը շարունակ որոնում էին քրտնեցնելու մեջ։

Արճակցիները սովորաբար հիվանդին քրտնեցնում էին վաղ առավոտյան։ Այսպես. կրակը լրիվ հանգած, բայց տաքությունը դեռ պահպանած թոնրան մեջ մի մեծ կառը աթար էին դցում։ Հիվանդը մերկ մտնում էր թոնիրը, ոտքերը դնում աթարի վրա, իսկ թիկունքը սեղմում թոնրան տաք կողերին և այդպես նստած էլ սկսում քրտնել։ Հիվանդը թոնրում եղած ժամանակ, թոնրան բերանը վերմակով ծածկում էին, թողնելով մի աննշան օդանցք։

Հիվանդն ինքն էր հայտնում, որ արդեն լավ քրտնել է։ Այդ ժամանակ տալիս էին շապիկ, վարտիք և գլուխ փաթաթելու շոր, որոնք հիվանդը հագնում էր թոնրան մեջ և նույն վերմակով էլ ծածկված դուրս էին բերում թոնրից ու պառկեցնում թոնրան եզրին պատրաստած անկողնում։ Ջանցած քսան րոպե, թոնիրն արդեն վառված էր լինում, իսկ մինչ այդ, նորից քրտնած հիվանդի հագուստն ու անկողինը փոխում էին։ Մնում էր հիվանդին հսկել, որ չմրսեցնի իրեն։ Առաջին օրն արգելում էին նրան ոչ միայն գլուխը բարձից բարձրացնել, այլև անգամ ձեռքերը վերմակի տակից հանել։

Սա քրտնեցնելու ընդունված ձևն էր Արճակում։

Սակայն սաթրջամով հիվանդին թոնրում քրտնեցնել հնարավոր չէր։ Նրան քրտնեցնում էին «Նեսոյի քարաբաղնիսի» մի ուրիշ տեսակով։ Մեծ կաթսայով եռման ջուրը դնում էին հիվան-

գի անկողնու մեջ (ոտքերի կողմից)։ Կաթսայի բերանը ծածկված էր լինում տախտակով, իսկ եզրերը փաթաթված էին լինում շորով։ Հիվանդին ծածկում էին, և նա սոսկալի տանջանքներ էր զգում մինչև քրանելը։ Քրտնելուց հետո հանգստանում էր, ապա սկսում էին սովորական ձևով թաց հանդերձներն ու անկողինը փոխել։ Սաթրջամով հիվանդին աշխատում էին կերակրել շուտ-շուտ, բայց թեթև ուտելիքներով՝ հավով ապուր, մածուր, քամած մածուն, խավիծ, խմեցնում էին հավլուչանով թեյ, խոշարաջուր, թան և այլն։

Երբ հիվանդության երեք շաբաթն անցնում էր, վտանգը համարվում էր անցած, թեև ասում էին, որ մինչև քառասուն օր պետք է հիվանդն իրեն լավ պահպանի, այլապես կարող է կրկնվել։

Այս բոլորը սաթրջամի բարեհաջող ընթացքն էր։ Լինում էր, որ կատարվում էր հակառակը, տաք դոլորշիով բավարար քրտնեցնել չէր հաջողվում կամ անհասկանալի պատճառներով հիվանդն օր-օրին, լավանալու փոխարեն ծանրանում էր։ Նման դեպքերում հիվանդատերերը ապավինում էին **փյոսա քաշելուն**: Մորթում էին մի չաղ ոչխար, սաք մորթու ներսի կողմին ցանում էին տաք-կոճի, աորոնի, սև պղպեղի մանրացրած փոշի ու դեղափոշով պատված մորթին փռում հիվանդի մերկ թիկունքի տակ՝ սկսած ուսադլխից։ Հիվանդի թևերը սեղմում էին կողքերին ու կրծքի կողմից այդ մորթին կարում հիվանդի մարմնի շուրջը։

Մորթու մեջ կարված հիվանդները, որ մեծ մասամբ գտնվում էին գառանցադին դրության մեջ, այդպես էլ մնում էին ամբողջ երկու ժամ։ Նրանք անասելի տանջանքներ էին ապրում, մինչդեռ քրտինքը ոաքերից հոսում էր ներքև։ Մորթին քանդելուց հետո, հիվանդին հագցնելիք հանդերձն ու անկողինը պետք է լինեին խիստ փափուկ ու սաք, որովհետև մորթով փաթաթված մարմնի մասերը, հատկապես թիկունքը, պատված էին լինում մանր, կարմրավուն չոր պզուկներով, որոնք և՛ քոր էին գալիս, և՛ ցավ պատճառում արդեն քիչ-քիչ դիտակցության եկող հիվանդին։

Պետք է ասել, որ փոսար երբեմն ծառայում էր իր նպատակին, եթե հիվանդի սիրտը դիմանար և այդ միայն վերջին օրերում չլինեին ձեռնարկած։

Աղքյացավ (փորանարինք): Աղքյացավը սկըսում էր լուծով, սակայն սա սովորական լուծից տարբերվում էր որովայնի շրջանում զգացվող ուժեղ կծկումներով, նիքերով և արյունալուծով։ Ըստ տիրող համոզմունքի, սա ևս ուժեղ մրսելուց էր լինում, ինչպես նաև մի այլ աղքացավով հիվանդից կպնելով (վարակվելով)։ Համոզում ունեին, որ նման հիվանդների աղիներն այնքան են նրրանում, որ նման են դառնում դլանակի թրջված թղթի։

Հիվանդի ստամոքսը տաք շալով ամուր կապում էին, հետույքի տակ ձեթի մեջ եռացրած թաղիքի տաք կտոր փռում, շիբով քամած մածուն ուտեցնում, նվիկի ջուր խմեցնում, նոտն եփած եռացնում ու խմեցնում, կերակրում ալյուրով կամ փոխինդով եփած ճաշով։

Աղքյացավը հաղվադեպ երևացող և բարեհաջող ելք ունեցող հիվանդություն էր։

Պոտուն ակըոկել (պատառ խըգկըլ): Երբ մեկը բավական երկար ժամանակ որևէ բան կուլ տալիս կերակրափողի ներքևի մասում ցավ էր դդում, համոզվում էին, որ «պըռտուճ ի ակըռկե», այսինքն՝ կերակրափողում ուտելիքի կտոր է խցկվել։

Տվյալ անձն առավոտյան, դեռ ոչինչ չկերած, երկու ձեռքով կախ էր ընկնում որևէ բարձրությունից (ծառի ճյուղից, գերանի ծայրից և այլն), այն հաշվով, որ ոտքերը մի մեարաչափ բարձր մնային դետնից, բերանը լիքը ջուր էր առնում և մի քանի անգամ ճոճվում էր, հետո ուժգնորեն ցած թռչում և հենց այդ թռչելու պահին էլ ջուրը կուլ տալիս։

Կար համոզմունք, որ ջուրը պոկելու էր խցկված պատառիկը, իսկ երբ այդ գործողությունը ոչ մի արդյունք չէր տալիս, ապա ասում էին, որ «ակըռկած պըռտուճը» իր համար տեղ է արել և պետք է սպասեին նրա աստիճանաբար լուծվելուն։

Պոտ ինգնել (պորտն ընկնել): Եթե ուժից վեր ծանրություն վերցնելուց անմիջապես հետո կամ մի քանի օր անց տվյալ անհատը սկսում էր որովայնում, ավելի շուտ՝ պորտի շրջանում տևական ցավեր զգալ, դրա հետ էլ թեթև սրտխառնոց և ընդհանուր ուժասպառություն, ապա դա բացատրվում էր նրանով, որ մարդու «պորտ ինդեր ի»։ Բուժման ձևը «պորտ անելն» էր (պորտ դնելը)։

Դա սարքում էին մասնագիտացած պառավները, որոնք առավոտ շուտ, դեռ հիվանդը ծոմը չլուծած, ջոշափում էին հիվանդի պորտը՝ մինչև ցավ պատճառելու աստիճան։ Եվ եթե համոզվում

էին, որ «պորտը տեղից ցած է ընկել», ապա երկու բուռ աղ լցնում էին կապույտ շորի մեջ, կապում այնպես, որ շորի ազատ մնացած ծայրերը միահավասար լինեին, սափակեցնում էին, աղը դնում հիվանդի պորտի վրա, շորի ծայրերը ձեթոտում ու վառում։ Երբ շորի ծայրերը սկսում էին բոց արձակել, նախօրոք պատրաստված փոքրիկ սեռիկը բերանքսիվայր բռնում էին բոցի վրա և աստիճանաբար մոտեցնում մարմնին՝ ընդհուպ պորտին։

Պորտ դնողն սկզբում փորձում էր, թե արդյոք սեռիկը ամուր կպե՞լ է պորտին ու հետո երբեմն թեթևակի պտույտներ էր կատարում։ Որոշ ժամանակից (հինգ-տասը րոպե) հետո սեռիկը պոկում էին պորտի վրայից՝ օդ բաց թողնելուց հետո։

Թե՛ պորտուց խցկվելը, թե՛ պորտ դնելը միայն կանայք էին կիրառում, և շատ քիչ էր դրական արդյունք տալիս, բայց հավատում էին։

ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԱՓՈԽԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սաղիկ: Կենսափորձը ինչպես ուրիշ վայրերի բնակչությանը, այնպես էլ արճակցիներին հասկացնել էր տվել, որ ծաղիկը պատվաստի միջոցով կարելի է զինաթափել։ Սակայն ինչպես Թուրքիայի ամբողջ գյուղական ազգաբնակչությունը, այնպես էլ արճակցիները (չհաշված բացառությունները) ձեռները ծալած սպասում էին այդ դարհուրելի անաես այցելուին, բավարարվելով երեխային պատշաճական ձևով խնամելով։

Սաղիկով հիվանդացած երեխային չէին լողացնում։ Որքան էլ թեթև լիներ հիվանդությունը, այնուամենայնիվ, պահպանում էին անկողնային վիճակը։ Նրա սնարին վառ ճրագ չէին պահում, որ շողքը չդիպչեր մանկան աչքերին։ Սնում էին քաղցրեղենով, առավելապես անպակաս էին անում չամիչն ու նաբաթ շաքարը, չէին ուտեցնում յուղ, ձեթ, միս։

Այս հոգատարությունը եթե բոլոր ծնողներն էլ կարողանային լրիվ կիրառել, ինչ խոսք, որ նպաստում էր ընդհանուր առողջական վիճակին, սակայն, ցավոք, ծաղկապատվելուն և կուրանալուն արգելք չէր հանդիսանում։ Կային փորձառու մարդիկ, որոնք մանկան վրա գոյացած բշտիկներին նայելով, կռահում էին, թե երեխան ծաղկատարվելո՞ւ է, թե՞ ոչ։ Նրանց ասելով, այն բշտիկները, որոնց մեջտեղները փոսիկներ էին, հետք էին թողնելու՝ ծաղկատելու էին։ Եթե գյուղում մի երեխա հիվանդանար ծաղկով, մնացած բոլոր ծաղիկ հանելու տարիք ունեցողները հիվանդանում էին։ Կար այն հանգստացուցիչ համոզումը, որ իբր ծաղիկով հիվանդացածը այլևս երկրորդ անգամ չէր հիվանդանում։ Սակայն փաստերը հակառակն էին ապացուցում։

Կարմրուկ: Որպես անխուսափելի հիվանդություն, կարմրուկը ևս հայտնվելիս բոլոր երեխաներին վարակում էր։ Կարմրուկով հիվանդ երեխայի խնամքը շատ էր նման ծաղիկով հիվանդ մանկան խնամքին, այն տարբերությամբ միայն, որ կարմրուկով հիվանդին գոնե մեկ անգամ էշի կաթ էին խմեցնում ու շրջապատում կարմիր պաստառներով։ Կարմրուկին ուղեկցում էր թոքերի բորբոքումը և երիկամների տկարությունը։

Կարմրուկի մասին ժողովուրդը այն կարծիքն ուներ, թե առերևույթ հեշտ անցնող այդ հիվանդությունն ավելի շատ է մահացություն տալիս, քան ծաղիկ հիվանդությունը։ Այսպիսի ասացվածք կար՝ «Տյու, խիվընդի աչկ կկուրցուցես, ես ինոր խոր, մոր աչկ կկուրցուցեմ»։

Կարմրուկ հիվանդությունը Արճակում մոլեգնեց 1915 թ. ապրիլին։ Եղան մայրեր, որոնց հաջողվեց իրենց հիվանդ երեխային շալակել ու փախչել Խառակոնիս, այնտեղից՝ Կըղլչա, ապա՝ Ավերակի, այդտեղից էլ Վան, այնտեղից ղաղթ ու հետո դերեզման... Սակայն եղան նաև կարմրուկով հիվանդացած ութ-իննամյա երեխաներ ևս, որոնք բարձր ջերմության մեջ լինելով, ոչ յաթաղանի սառը փայլը տեսան, ոչ էլ նրա հարվածի ուժն զգացին...

Խուշկուկ (Քութեշ): Արճակի ազգաբնակչությունը այս հիվանդությանն էր վերագրում հետևյալ ասացվածքը՝ «Էն որ ես կամ, էլ տյուք ինչացո՞ւ եք»,— ասում է խուշկուկը ծաղիկ ու կարմրուկ հիվանդություններին։ Ժողովրդական ողորմելի միջոցները, ինչպիսիք էին՝ երեխայի ուռած կոկորդը մատով սեղմելը, նավթ քսելը, իշու կաթ խմեցնելը և այլն, որոնք սովորական բուկուռուցքի ժամանակ դրական արդյունք էին տալիս, քութեշի դեպքում անզոր էին մանկան կյանքը փրկելու։

Խուշկուկը թեև ուշ-ուշ էր հայտնվում, բայց հայտնվելիս մեծ ավերածություններ էր կատարում։

Կարլամա: Սա կարմրուկին մի քիչ նմանվող հիվանդություն էր, կարմիր ցաներով էր պատում մանկան մաշկն ու դեմքը։ Կարլաման անցնում էր խիստ բարեհաջող, և երեխան յոթ-ութ օր հետո լրիվ առողջանում էր։

Խոռոզա (կապույտ ճազ): *Հանկարծահաս այս հիվանդությունը, հայտնվում էր փոքրահասակների մեջ առավելապես գիշերներն ու շնչարգելում խորը քնած երեխային։*

Երբ երեխան սկսում էր խոխոացնել, և կոկորդից սկսում էին աքաղաղի կանչերին նմանվող ձայներ դուրս գալ, անմիջապես ուղարկում էին ժամհարի՝ Արթենի ետևից։ Մինչ նրա գալը մի երկու գլուխ սոխ և մի բուռ աղ իբար հետ ծեծում ու կապում էին երեխայի գլխի առաջամասին։ Եթե դա չէր օգնում, ապա ժամհարի հասնելուն պես ածելիով մաքրում էին հիվանդի գլխի առաջամասը և նույն ածելիով սկսում էին մանր-մանր հարվածներ հասցնել։ Մանր-մանր կարտված գանգամաշկից սկսում էր դանդաղորեն դուրս հոսել սև, լերդացած արյուն։ Երեխայի շնչառությունն սկսում էր կանոնավորվել, իսկ մաշկին քսում էին օղի, և կանխվում էր թարախակալումը։

Խոռողան տարափոխիկ հիվանդությունների շարքը չէր դասվում։

Խոզուկ: *Խոզուկը համարվում էր մրսելուց առաջացած հիվանդություն և միջոցառումն էր՝ գլուխը օղիով թրջելն ու տաք փաթաթելը։*

Ծարավ fյաշել (ծարավ fաշել): *Եթե ութ ամսականից մինչև մեկ տարեկան երեխան անընդհատ նիհարում էր, հրաժարվում ուտելիքից, կառչում մոր ստինքներին, ջուր էր խմում անհագորեն, նշանակում էր, որ երեխային ծարավը կոարել է (ծարավը նրան հաղթահարել է), այսինքն՝ եղել է մի որևէ օր, որ երեխան ծարավ է եղել ու մայրը չի հիշել նրան ջուր տալ և ահա այդ օրից մանկիկը ջրից չի հագենում։ Ուրեմն, պետք է նրա ծարավը քաշել։ Երեխային պառկեցնում էին մեջքի վրա, ոտքերը մի քիչ ավելի բարձր, քան գլուխը և ծարավ քաշող կինը սկսում էր նրա ազդրերի առաջամասերի և որովայնի միջև մասաժ անել, հետո որովայնի ներքեը մի քանի անգամ զգուշությամբ սեղմել դեպի վեր։*

Եթե հիշյալ գործողության ընթացքում երեխայի սասամոքսից լսվեր թեկուզ մի փոքրիկ ձայն («փորի գոռոց»), ապա երեխան արդեն համարվում էր բուժված։

Ծարավ կոարածի քաշելը կատարվում էր այդ գործին սովոր մի քանի կանանց միջոցով, որոնք ունեցել էին երկորյակ երեխա։

Ծարավ քաշելը ոչ դրական արդյունք էր տվել, ոչ էլ բացասական։ Դրա համար շատ երիտասարդ մայրեր թերահավատությամբ էին տրամադրված բուժման այս ձևին։ Ջրի հանդեպ ունեցած երեխայի տենդոտ հակումն անցնում էր ինքն իրեն, երբ նա սկսում էր քայլել սովորել։

ԲՈՒԺԻՉ ԲՈՒՅՍԵՐ

Ինչպես արևելյան ժողովուրդներն ընդհանրապես, այնպես էլ Արճակի գավառի բնակիչները սերնդե-սերունդ օգտագործում էին որպես բուժիչ միջոց մի շարք բույսեր։ Դրանցից էին.

Եզան լեզու: *Ծառայում էր վերքից թարախ դուրս քաշելուն։ Բացի վերքի վրա դնելու սովորական ձևից, Արճակի հեքիմները, երբ տեսնում էին, որ վերքի բերանը փակ է, եզան լեզվի սերմերը դոմշակովի կամ կովի կաթի մեջ եփում էին և այդ լափան տաք-տաք կապում վերքին։ Այդ նույն հեքիմները խորհուրդ էին տալիս ստամոքսի հիվանդություն ունեցողներին եզան լեզուն խաշել և որպես աղցան ուտել, մանավանդ սերմերը խաշել և ջուրը պարբերաբար սաք-տաք խմել։*

Կյաղտիկ ուռ *(դաղտնի կրծքադեղձ)։ Եզան լեզվի մի այլ տեսակն է, միայն թե խիստ նեղ ու երկար տերևներով։ Եզան լեզվի նման աճում է ամենուր, սակայն ավելի շատ առուների եզրերին։ Կյաղտիկ ուռի սերմերը ես օգտագործվում էին վերքեր, ինչպես և տևական ստամոքսային հիվանդություններ բուժելու համար ու համարվում էր ավելի ազդեցիկ, քան Եզան լեզուն։*

Հյավլի թաֆ *(ցըտահարման, ցրտի տերև)։ Արտաքին տեսքով շատ է նման բողկի կամ շաղգամի տերևներին, ավելի փափկավուն է, քան եզան լեզուն։ Աճում է առավելապես հոսող ջրերի եզրերին։ Պառավները՝ վերքի վրա դնելու համար հյավլի թաֆը ավելի նախընտրելի էին համարում, քան եզան լեզուն։ Տերևներն ու արմատները մանրացնում էին, կաթով եփում և կապում վերքին։ Եթե վերքի բերանը փակված էր և շուրջը կապտած, ասում էին, թե «յարեն հավայի ի առե» (վերքը ցուրտ է առել) և որպես ցրտահարությունը չեզոքացնող միջոց, անմիջապես դիմում էին հյավլի թաֆին։*

Ձոպաճ դոշակի *(հովվի ներքնակ)։ Աճում է առավելապես բնակավայրերից հեռու։ Գետնատարած, սպիտակականաչ, մանր ու խավոտ տերևներով բույս է։ Գյուղական վիրաբույժները դրա տերևները փոշիացնում էին և ցանում արդեն առողջանալու փուլին հասած վերքերի վրա՝ վերքը չորացնելու նպատակով։*

Ոչ խոճդատ: *Հանրահայտ բույս է. աճում է անջրդի ու անմշակ տարածություններում։ Խոըն-*

պատի՝ երբեմն մետրից ավելի բարձրացող ու մանկան բազկից հաստ ցողունները, ներքևից վերև, պատվում են մանր, դեղին ծաղիկներով և հեռվից ուշադրություն գրավում։

Այդ բույսի անհամար ծաղկաբաժակների մեջ կուտակվում են բազմապիսի բզեզներ. անասունները դրանից տերև խոտ չեն պոկում։ Չորացած խոնդասը աշնանը քաղում էին որպես թոնրան կպչուն։

Նկարագրածս սովորական խոնդասն է. սակայն կա և այնպիսին, որ անգամ մատնաչափ ցողուն չի տալիս։ Տերևները դեղնատարած են։ Սա որձ, այսինքն՝ չբազմացող խոնդասն է, տերևներն օգտագործում էին որպես դեղանյութ՝ չորացած ու փոշիացած վիճակում։

Խարբրուկ (բարբադ): Աճում է ամենուր՝ կտուրներին, պարտեզներում, մշակովի թե անմշակ տարածություններում, խիստ թունավոր բույս է, սակայն բարբադ (ավեր) անվանն է արժանացել։ Դրա բաց գույնի ծաղիկները խաժխամժի նման կլոր, անոթաձև սերմնարանի են փոխարկվում, որը ներսից երկու մասի է բաժանվում, սերմնարանի կափարիչը ևս երկու մասից է կազմված։ (Հասունանալիս կափարիչն ընկնում է, և միջի մանր ու բազմաթիվ սերմերը թափվում են)։

Ատամների ընդհանուր ցավի դեպքում, որին գյուղացիք անվանում էին «նավադիր», երբ ոչ մի կերպ ցավը մեղմել չէր հաջողվում, խարբրուկի սերմով գլանակ էին փաթաթում և նավադիրից տանջվողը ծխում էր այն, ծուխը բերանը պահելով և դուրս փչելով։

Առվուշի ծաղիկ *(առվույտի ծաղիկ)*։ Առվուրական առվույտի ծաղիկը չորացնում, փոշիացնում և ցանում էին արդեն առողջացման փուլում գտնվող վերքի վրա՝ այն չորացնելու նպատակով։

Կարմիր ավել: Աճում է անմշակ տարածություններում, օգտագործվում էր որպես ավել։ Կանանց ծննդաբերության ժամանակ, երբ նկատվում էր, որ ծննդկանի ցավերը արագանալու փոխարեն, կանգ են առնում, և տատմերը գալիս էր այն համոզման, որ կինը մրսած է, կարմիր ավել էին վառում ծննդկանին մոտիկ, վերջինիս նստեցնում ծխացող կրակի վրա։

Պող-կար: Սա պարզապես ամենադատար տեսակի պողի (բոխի) արմատն է, որ հայ ու քուրդ հովիվները սովորաբար պահում էին իրենց մախաղներում որպես ոչխարների վերքերը բուժող ամենաազդու միջոց։ Սովորաբար ոչխարների դմակի ներքևի մասի նուրբ մաշկը, ինչպես նաև ոճեղների արանքները քերծվածքներից որդնոտում էին։ Պող-կաթի մի փոքրիկ կտորը վերքատեղի մեջ սեղմելը բավական էր եղած որդերը սատկեցնելու և ճանճերին հեռու վանելու համար։

Սիվաակ ճառճրառուկ: Բուսնում է ամենուրեք։ Նեղլիկ տերևներով, արագ ճյուղավորվող, հոդավոր ցողուններով բույս է։ Ցողունների յուրաքանչյուր հոդի տակից մի գեղեցիկ, կապույտ ծաղիկ է բացվում։ Ծաղկակոթերը խիստ կարճ են լինում։ Անասունները չեն մոտենում։ Ունի խիստ դառն արմատ, ինքը ևս դառն է։ Օգտագործում էին անիվի ու սռնիի արանքը դնելու համար։ Այրելով՝ մոխիրը կարագով շաղախում էին, քսուկ պատրաստում ու լծկանների լծառված վզներին քսում։

Արճակում ապրող թուրք պաշտոնյաների ընտանիքներում սիվաակ ճառճրառուկը գարնանը խաշած ձվի հետ ուտում էին որպես դաղտնի դողէրոցքի, ինչպես նաև դեղնախտի բուժիչ միջոց։

Ապրեմ-չապրեմ *(երիցուկ)*։ Հանրահայտ և ամենուր տարածված այդ ծաղիկը Արճակում ևս համարվում էր հարցուկ։ Մեկ առ մեկ պոկելով ծաղկի թերթերը, հարցնում էին՝ ապրեմ-չապրեմ։ Ատամնացավի դեպքում, երբ ատամի շուրջը ուռչում էր, ապրեմ-չապրեմի չորացված ծաղիկները խաշում էին ու տաք գոլորշու վրա պահում բերանը։

Տեղտ *(տուղա)*։ Վայրի տուղտի արմատները օգտագործվում էր օճառի փոխարեն՝ գլուխը լվանալիս։ Վայրի տուղտը տալիս է տարբեր գույնի ծաղիկներ։ Ծաղիկները չորացնում էին և ձմռանը եռացնելով, ջուրը թեյի փոխարեն խմեցնում հիվանդներին։ Նախընտրում էին հավաքել դեղին ծաղիկները։

Կռեզի բաֆ *(տերև)*։ Սրա հիմնականում դառը և չափազանց մեծ տերևներով փաթաթում էին այն փոքր երեխաների մերկ մարմինները, որոնց լողացնում էին կովի շտուկով։

Ծըլճլուկ: Արժե հիշատակել նաև այս բույսը, որը շատ առատ բուսնում էր գյուղի «Վերին այաշտեր» կոչվող մարգագետնում։ Սրա տերևները աշնանը քաղում և բարալիկ չվաններ էին հյուսում, որպես խսիրի հենք։ Այդ բարակ չվանների մի քանի հատի միացումից ստանում էին ջրհորից ջուր քաշելու պարաններ։

Ամռանը Միջագետքի կողմերից Արճակ էր գալիս անդեն քրդերի ոչ սավար մի խումբ։ Սրանք իջևանում էին գյուղի աղբյուրի մոտ, ուտելիքի հետ փոխանակում էին տեսակ-տեսակ ու-

լունքներ (որոնց մեջ և աչքի ուլունք՝ աչքով տալու դեմ) և շրջում էին հիշյալ մարգագետնում, փորփրում հողն ու հանում ճըլճլուկի և մի ուրիշ բույսի արմատների վրա աճող կաղինաչափ պալարները։ Ավլնոցում, ավաղով տրորելով, կեղևահան էին անում սպիտակ միջուկները, արևի ներքո չորացնում և պարկերը լցնելով վերադառնում էին։ Թե ինչի համար էին օգտագործում այդ պալարները՝ չէին ասում։

ՄԱՔՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Արճակում բաղնիք չկար, լողանում էին՝ ոմանք թոնրատանը մեծ տաշտերի (պղնձե թաշա) կամ կավաշեն սախսների մեջ, ոմանք՝ փայտի շոլում։

Կանայք ու աղջիկներն իրենց մազերը լվանում էին տուղտի արմատով, որն աճում էր ամենուրեք, սակայն արճակցի կանայք ու աղջիկները տուղտի արմատը բերում էին գյուղի հեռավոր՝ Վերին տյաշտեր հանդից։ Տարին մեկ անգամ, աշնանը, թաղի ջահել աղջիկներն ու իրենց երիտասարդ եղբայրները, մեծ խմբերով, պինված փայտատներով, գնում էին այդ հանդը, երբեմն նույնիսկ հասնում Խառակոնիսի արաերին և փայտատներով փորում-հանում տուղտի սպիտակ ու հաստ արմատները։

Լողանալու օրերին մեկ կամ երկու արմատ քսան-քսանհինգ րոպե դցում էին տաք ջրի մեջ, հետո քարի վրա դնելով մի քիչ ծեծում, այնքան, որ հեշտանար թելիկների բաժանվելը, կապում էին այնպես, որ ստացվեր փնջիկ։ Այդ կապված փնջիկը կոչվում էր տղտի թճջուկ: Փոքրիկ մի թնջուկ բավական էր ամբողջ ընտանիքին։ Թրնջուկը գլխներին քսելիս ամբողջ մազերն ու մարմինը ծածկվում էր սպիտակ ու մածուցիկ փրփուրով։

Տուղտի արմատով գլուխ լվանալը գալիս էր դարերի խորքից։ Այն գլխի մազերն ու մաշկը փափուկ պահելու հատկություն ուներ և միաժամանակ մազերին փայլ էր տալիս։

Հագուստեղենը լվանալու անհրաժեշտ օճառը մեծամասամբ հայթայթում էին իրենք՝ տանտիկինները՝ տներում օճառ եփելով։ Այդ գործում լավ հմտացել էին հատկապես մի քանի տարեց կանայք։ Հավաքում էին ամռան ընթացքում կերած ծիրանի կորիզը (որը դառն էր), ձեթի կարասների տակի նստուկը և միացնելով աշնան մսացուից ստացված ստամոքսի ու աղիքների ճարպերին, օճառ էին եփում։ Օճառ եփելու համար անհրաժեշտ նյութերը ձեռք էին բերվում անվճար։

Քագնայի մոտերքից հավաքում էին սպիտակ քարեր, աթարից խարույկ վառում, նախապես ջերտառ ջերտ այդ քարերը տեղավորելով աթարի արանքներում և երբ մի քանի ժամ տևող խարույկը գադարում էր վառվելուց, թողնում էին կրակը մոխրանար (մոխրացման ու սառչելու տևողությունը երբեմն օրվա էր հասնում), ապա ցրում էին մոխրակույտն ու հավաքում պատրաստի չհանգած կիրը։

Օճառ եփելու օրը, ըստ կարիքի, բորակաջուր էին պատրաստում՝ երեք չափ ջրին՝ մեկ չափ բորակ։ Պատրաստի կրաքարերի վրա եփման ջուր էին լցնում և փայտանով ծածկում։ Կրաքարը փոշիանում էր, փոշին լցնում էին թոնրան վրա եռացող բորակաջրի մեջ և հավի թևի փետուրով փորձում այդ խառնուրդը։ Ապա խառնուրդից ստացված մաքրված ջրի մեջ լցնում էին ճարպանյութն ու մի քանի ժամ եռացնելուց հետո թողնում, որ սառչի։ Երեսը կանգնած կիսաեփ օճառն անջատում էին արդեն ուժը կորցրած ջրից, լցնում նոր, ուժեղ կրաբորակային խառնուրդի մեջ՝ եփում մի քիչ էլ, ու օճառը պատրաստ էր։ Օճառը սառեցնում էին հողե ղանաղան կոտրատված ամանների մեջ ու, այսպիսով, ապահովվում օճառով։

Հագուստեղենը լվանալիս օճառի հետ օգտագործում էին բորակ։ Քչերն էին, որ լվացքը չորացնելու համար պարան էին կապում։ Լվացքը փռում էին պատերին։

Մինչև 1909 թ. Արճակում արդուկ գոյություն չուներ, հետո էլ քչերն էին, որ տներում արդուկ ունեին։ Քիչ խոնավ լվացքը ձեռքով ուղղում էին, ծալում ու դարսում։ Ջրի հատկությունի՞ց էր, կտորեղենի որակի՞ց, թե՞ կանանց վարպետությունից, այնուամենայնիվ, այդ չարդուկված սպիտակեղենը հարթ էր լինում։

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

Ասպարածին (Աստվածածին): Գյուղից մոտ երկու վերստ հեռու, արևելյան բլրալանջին, ձեռատունկ անտառիկի կենտրոնում էր գտնվում Արճակու Ասպարածին կոչված ավերակ վանքը։

Վանքից կանգուն էին մնացել միայն պա-

ներն ու խորանը։ Սրբեմնի հոյաշեն, այժմ չորս պատ միայն մնացած տաճարի հատակից մի քանի քարե աստիճաններով բարձր, կամարակապ խորանը մթին էր և լույսը ստանում էր բաց դռնից։ Դիմացի պատի ամբողջ տարածությամբ մարդահասակ բարձրության սեղան էր։ Դա մի հսկայական ժայռաբեկոր էր՝ առաջին մասը սրբատաշ և ուներ գեղեցիկ խաչքանդակներ։ Վերնամասը հարմարեցված էր բեմի։ Խորանի աջակողմյան պատի տակ էր Ասպարածնա կերեզմանը, որի քարն ամբողջովին ծածկված էր հայերեն արձանագրությամբ։ Ըստ ավանդության, այդ գերեզմանում թաղված էր Մարիամ Աստվածածնի դոտից մի կտոր։

Վանքի պարիսպների մնացորդներն իսկ պերճախոս կերպով վկայում էին, որ այն հարուստ է եղել։ Ասպարածնա ամեն ինչը սրբացված էր ոչ միայն արճակցու, այլև գավառի ողջ բնակչության կողմից։ Վանքից երկու մետր հեռու գտնվող առատ ու սառն աղբյուրների ջուրը համարվում էր հրաշագործ։ Վանքի սահմանից դուրս այդ ջրից ոչ մի կաթիլ չպետք է դուրս թափվեր։ Վանքի շրջակայքի ուռենիներից պատահականորեն կտրված որևէ ճյուղ պետք է վանքապատկան տարածություններում էլ թողնվեր։ Անգամ սավանների եզրերից քաղված դաղձը տուն տանելիս պետք էր զգույշ լինեին, որ մի տերևիկ չընկներ սարի տակ։

Ասպարածնա ջրերն անհիշելի ժամանակներից, երևի վանքի շեն եղած ժամանակից, ուղղված էին դեպի հյուսիս-արևելակողմի բլրալանջում փորված փոքրիկ ջրավազանը։ Խաթյուն-գյոլ կոչված այդ ավազանը ևս սրբացված էր։ Այնտեղ լողանալու էին գնում ջերմախտով հիվանդները, ինչպես նաև բոս ունեցողները։ Խաթյուն գյոլի ջրով էին ոռոգվում նրա մոտ գտնվող Աստվածածնապատկան արտերը։

Ասպարածին այցելող ուխտավորները միշտապես անպակաս էին։ Սակայն Ասպարածնի բուն ուխտը նրա տոնի օրն էր (օգոստոսին)։

Աստվածածնա տոնի նախօրեին՝ շաբաթ օրվա մայրամուտից, սկսում էին հավաքվել ոչ միայն գավառի հայ բնակչությունը, այլ նաև Սարայի ասորիները։ Գալիս էին գավառի ուրիշ բրդական գյուղերի բնակիչներ, եզդիներ։ Գալիս էին անհամար մրգավաճառներ, ինչպես նաև մանրավաճառներ։ Ուխտը սկսվում էր կիրակի առավոտից։

Արճակի եկեղեցական կողմը Աստվածածնա խորանի մեջ պատարագ էր մատուցում, Արճակի ժամհարը մոմ էր վաճառում հավատացյալ ուխտավորներին։ Դարավոր կեղտից, հալված մոմերից սևացած սեղանն ու Ասպարածնա կերեզմանը վառվող մոմերի ջահ էին ներկայացնում։ Իսկ դրսում, ուռենիների հովանու տակ բացված էին սնում ուխտավորների սուփրաները։ Ուխտավոր տղամարդիկ խմբերով մի սուփրայից մյուսն էին անցնում, երիտասարդ աղջիկներն ու հարսները ձեռք-ձեռքի տված զբոսնում էին, տարբեր կողմերից լսելի էր նաղարա-զուռնայի ձայնը։ Նվագի ներքո պարում էին երիտասարդները (առավելապես դյոնդապար)։

Երկուշաբթին մատաղ անելու օրն էր։ Դեռ լույսը չբացված, գավառի քուրդ ոչխարատերերը հազարից ավելի արու ուլ էին բերում Ասպարածնա ներքևի փոքրիկ հովիտը, և ուխտավորները գնում էին։ Ի դեպ, Արճակու Ասպարածնա տոնի օրվա մատաղը պետք է անպայմանորեն արու ուլ լիներ, մատաղացուն գնվեր տեղում, առանց սակարկելու։ Մատաղացուից ոչ մի կտոր, հում վիճակում, չպետք է տուն տարվեր։ Վանի Ակռոփի կոչվող գյուղի սահմեղական գնչու մաղագործներն այդ օրը հսկայական քանակությամբ մորթի էին հավաքում (անվճար)։

Ուխտը վերջանում էր երկուշաբթի մայրամուտին։

Դարավոր սովորույթ էր՝ տոնից առաջ գնել ընտանիքի բոլոր անդամների համար նախատեսած ամբողջ տարվա հանդերձանքն ու կոշիկեղենը։ Աստվածածնա տոնի օրը յուրաքանչյուրը, ըստ իր կարողության, պետք է պատշաճ արտաքինով մտներ իր ամենօրյա այդ սրբատեղին։ Դա յուրաքանչյուր արճակցու տան ղեկավարի պատվի խնդիրն էր։ Շատերի համար այդ խնդիրը լուծվում էր այնպիսի ծանր գնով, ինչպիսին էր կանխօրեն իր որևէ արտի գալիք տարվա բերքը վաճառքի դնելը։

Աստվածածնա տոնը մեր գյուղացոց համար հեռուներում ապրող բարեկամների հանդեպ կատարելիք մեծարման, հյուրասիրության պարտքի ամենահրամայական պահն էր։ Տոնից մի քանի օր առաջ պետք է գնային մոտակա, թե հեռավոր գյուղի հարազատներին բերելու։ Իսկ դրա համար անհրաժեշտ էր ձի ունենալ։ Դժբախտաբար, արճակցիներից քչերն էին, որ ձի ունեին, այնպես որ այդ ևս ծանր լուծվող խնդիր էր։ Եվ արճակցին շատ թանկ գնով խնդիրը լուծում էր՝ ձիու փոխարեն վարձելով փոքրիկ փասինա կոչվող սայլ։

Հաճախ հեռավոր բարեկամներն իրենք էին գալիս, բերելով նաև իրենց բարեկամներին։ Դա

արդեն փրկություն էր տվյալ արճակցու համար։

Տանտիկինները մի քանի օր առաջ, յուրաքանչյուրն ըստ իր ընտանեկան պահանջի, ցորեն էին բովում (մեկից-երեք փութ), տղամարդիկ այդ աղունը տանում էին ջրաղաց, աղում։ Տոնի նախօրյակին, երեկոյան, թարմ, բուրող փոխինդը լցնում էին խմորի տաշտերի մեջ և մի քանի օրվա հավաքած կարագը (որը, ի դեպ, պահում էին թանի մեջ՝ ամեն օր հին թանը թափելով ու նորը լցնելով) թանից հանում էին, ցամաքեցնում ու շաղախում փոխինդը, կարմանք պատառելով ոչ միայն խնամի վանեցիներին, այլև օտար գյուղերից առաջին անգամ Աստվածածնա տոնին Արճակ հյուր եկած գյուղացիներին։

Աստվածածնա տոնին Արճակում դրեթե մարդկային շունչ չէր մնում, եթե չհաշվենք մի քանի կույր ծերերի ու պառավների։

Վարչական ամբողջ կազմը, ոստիկանությունը, ինչպես նաև գյուղում ապրող պաշտոնյաների ընտանիքները, բոլորը գնում էին Աստվածածին։

Վանից թագավոր ավետարան: Գյուղի վերևում, Աջմու ճամբախ կոչված ճանապարհին, գյուղի հին գերեզմանատան մոտ էր գտնվում հին, տոհմական Վանից (վանքի) տունը։

Վանից տունը, որ ժամանակին սպասարկելիս էր եղել Աստվածածնա հարուստ վանքին, վերջինիս ավերվելուց հետո էլ մնացել էր ոչ միայն մեծահարուստ ու համբավավոր, այլև նվիրական, որովհետև այդ տանն էր գտնվում կարմիր կաշմով մագաղաթյա մի ավետարան, թերևս իսկապես էլ նախկինում՝ վանքապատկան։ Ավետարանը համարվում էր հզորազոր ու հրաշագործ։

Տարբեր ժամանակներում ասպատակներից շատերը հափշտակել էին ավետարանը, բայց միշտ էլ Վանից տոհմի մարդիկ, մեծ փրկագնով կամ նույնիսկ կյանքը վտանգի ենթարկելով, վերադարձրել էին ավետարանն ու դրել իր տեղը, այսինքն՝ Վանից թոնրատան միջի մառանում՝ փոքրիկ թմրի վրայի փայտե հին, հասարակ արկղի մեջ, որի բանալին մինչև իր մահը գտնվում էր տան ավագի մոտ, ապա նոր նրա որդին էր իրեն իրավունք համարում ձեռք տալ ավետարանին, իսկ կանայք ձեռք չէին տալիս։

Ավանդություն կար, որ Լենկ-Թեմուրը Վանից թագավոր ավետարանը տարել էր մինչև Սամարղանդ։ Վանից անից Սարգիս անունով մեկը պարսիկ ախունդի տարազով հետևել էր ավետարանին։ Նա աշխարհասասանի բարեհաճությանն էր արժանացել մինչև այն աստիճան, որ կարողացել էր ազատորեն ելումուտ ունենալ այն շենքը, ուր արգելափակված էին եղել բազում ազգերից խլված գրական արժեքները։ Ու մի օր, կեղծ ախունդ-արճակցի Վանից Սարգիսը գողացել էր Վանից թագավոր ավետարանն ու Սամարղանդից վերադարձել Արճակ։

1896 թ., հայկական ջարդերի ժամանակ, գյուղը կռատրող ու թալանող տասնութ համիդեական սպիրաթներից մի համիդիե (Մոկսի կողմերից) տարել էր այդ ավետարանը։ 1904 թ. նա ինքնակամ բերել էր Վան ու քրդերի հետ սերտ կապ պահպանող վանեցի մի հայ իշխանատիրոջ պատվիրել էր ավետարանը վերադարձնել Արճակ գյուղի այն տունը, որի մոտ մեծ-մեծ քարերով գերեզմանոց կա ու ջրաղաց։ Ավետարանի տերը՝ Վանից Պետրոս աղան, որ մի ժամանակ մյուդուր էր եղել, այդ ուրախալի օրը երկու կով էր մորթել, ավետարանը մեռոնով մկրտել ավել, ապա միայն տարել էր տեղը դրել։

Սուրբ Սարգիս անուն ունեցող բլուրն ու նրա ավերակները: Առհասարակ տարբեր տոհմերի պատկանող արաերի սահմանը երկու արտերի տրանքում անհիշելի ժամանակներից կորթ թողնըված բավական լայն տարածություններն էին, իսկ գյուղերը սահմանազատվում էին տասնյակ վերստեր բռնող խոպան դաշտերով։ Այդպես էր նաև Արճակը իր ենթակա գյուղերի հետ, բացառությամբ Խառակոնիս հայկական ու մոտակա Քրդվան քրդական գյուղերի։ Արճակապատկան «վիրին տյաշտ» կոչվող վարելահողերը ձգվում էին շատ հեռուները՝ ընդհուպ մինչև Սուրբ Սարգիս լայնանիստ ու սրածայր բլուրը, որ Արճակի ու Քրդվանի միջև սահման էր հանդիսանում։

Բլուրն իր արճակահայաց կողմով պատկանում էր Արճակին, նրա հենց փեշին էլ նստած էին երկու աչքանի երկու ջրաղաց, իսկ մինչև գագաթը անջրդի վարելահողեր էին։ Դեռ հեռվից նկատելի էին բլրագագաթին եղած շինության ավերակները (բլուրը մի ժամանակ Արճակին էր պատկանել)։ Հայտնի չէր, թե սուրբ Սարգսի հիշյալ ավերակները վանքի՞, բերդի՞, թե՞ ամրոցի մնացորդներ էին։

Արճակի մի քանի կանայք սուրբ Սարգսի բլրի սակ տուղաի արմաս քանդելիս գտել էին պղնձե ափսեներ, որով կարելի էր եզրակացնել, որ հիշյալ վայրը ժամանակին հարուստ բնակատեղի է եղել։ Հայերը այդ ավերակների հանդեպ սրբազան հարգանք էին տածում, իսկ Քրդվանա քրդերը, որոնց այդ անեղերում հայտնը-

վելը 150 տարուց ավելի չէր, նույնպես այդ ավերակների հանդեպ մեծ երկյուղ ունեին՝ բլրագագաթին չէին մոտենում, ոմանք նույնիսկ խունկ էին ծխում և բոլորն էլ միաբերան վկայում էին, թե դրանք հայկական տաճարի հիմքեր են, հավատում էին, թե այդ հիմքերից լույս է ճառագում։

Թուխ Մանուկ: Գյուղի ներքևում, քաղաքի ճանապարհի եզրին, լճին մոտիկ (սկզբներում լիճը ափերից բավական հեռու էր եղել, վերջին ժամանակներում ջուրը մոտ մի կիլոմետր առաջ էր եկել), Բարուլիկ կոչված հարթ դաշտավայրի ու նույնպես հարթ մարգագետնի մեջտեղում կար մի փոքրիկ բլրակաձև բարձունք։ Բարձունքն պատում էին մի կողմից Կաղկե սանը պատկանող արտը, մյուս կողմից՝ տերտերանց ընդարձակ ծառաստանը, մի այլ կողմից՝ քաղաքի ճանապարհը։ Ահա հենց այս բարձունքն էլ կոչվում էր Թուխ Մանուկ։ Բարձրության գագաթին, ղեմ դիմաց, չորս միահավասար տաշած քարերից շուրջ պատ էր արված, որի ծածկը նույնպես նույնանման մի սալ էր։ Քարերից մեկը այնպես էր դրված, որ արանք էր մնում ձեռքը ներս տանելու (ճրագ դնելու կամ դուրս բերելու)։ Հենց քարերից ոչ մեկի վրա ոչ խաչ կար փորված, ոչ էլ մի այլ նշան։ Սակայն այդ Թուխ Մանուկին վերագրում էին մի շարք հիվանդությունների՝ էկզեմայի, կրծքի վերքի, ականջացավի, և այլնի բժշկություն։

Հիշյալ սրբի մասին ավանդություն չկար, սակայն նրան ուխտի էին գնում ոչ միայն արճակցի, այլև գավառի ուրիշ գյուղերի հիվանդները։ Թուխ Մանուկին վերագրում էին նաև վատ երազը բարի դարձնելու զորություն։

Թուխ Մանուկին մատաղ անելու սովորություն չկար, պարզապես գնում էին ու նրա հողից մի պտղունց վերցնում, ցանում վերքին։ Կիրակնամուտերին պառավները ձեթ էին տանում՝ Թուխ Մանուկի ճրագները վառում։

1913 թ. արճակցիներից մի քանիսը գյուղամերձ արտերի եզրերին նոր բնակարաններ էին կառուցում, Կաղկե Տիրան ու Պողոս եղբայրները նույնպես, Թուխ Մանուկին առընթեր բարձունքի մոտ նոր բնակարանի հիմքեր փորելիս բացեցին տաճարի ավերակները։ Երևան եկած ամբողջ պատի վրա (չնայած տաշված քարերից էր պատը) ոչ մի խաչ չերևաց, ուստի եզրակացվեց, որ դա հեթանոսական տաճար է եղել։

Դժբախտաբար այդ համոզմունքը պեղման միջոցով հաստատելու ժամանակ չեղավ...

Պազում խաչեր (Բազմաթիվ խաչեր): Գյուղում կար երկու Պաղում խաչ, մեկը՝ Քյողարի թաղում, մյուսը՝ Փոս թաղում։ Թուխ Մանուկի նման սրանք ևս քարե չորսական պատ և մի-մի ծածկասալերից բաղկացած մանկական խաղալիք տների նման բաներ էին, բայց երկու Պաղում խաչերի քարերն էլ խաչաքանդակ էին։ Սրանք էլ այնպես էին դասավորված, որ ներսը ճրագ դնելու հնարավորություն կար։ Նրանցում էլ կիրակնամուտերին ճրագ վառողներ էին լինում, սակայն այդ անում էին առանց խնդրանք ներկայացնելու, այլ իրենց հոգու համար։

Քյողարի թաղի Պաղում խաչերը, որ գտնվում էր գյուղին մոտիկ, իր առաջ ուներ և մի շատ ընդարձակ տարածություն։

Ավանդություն կար, որ դա եղել էր եկեղեցի, իսկ հարթ տարածությունը՝ գերեզմանատուն։ Դրա մոտ գտնվող Մոլոյի տան տերերը մի երկու անգամ այդ հարթ տարածության եզրին ցանկացել էին ցորենի հոր փորել, երկու տեղից էլ մարդկային ոսկորներ էին դուրս եկել և նրանք թողել էին հողից օգտվելու միտքը (մարդ թաղված հողը սուրբ ու անձեռնմխելի էր համարվում)։

Փոս թաղում գտնվող Պաղում խաչերը բնակելի տարածության ներքին արանքում էր։ Նրա ծածկասալը սղխակ էր, խաչի հենց մեջտեղը մի մեխի գլուխ էր երևում։ Ավանդություն կար, որ երբ աշըղ Ջիշադն է (Նահապետ Քուչակ) այդ մեխն իր բռունցքով խփել հիշյալ քարի մեջ, երբ, դեռ պատանի, Արճակ էր եկել և հենց այդտեղ էլ երազ տեսել ու երազում ոգեշնչման, ստեղծագործման խմիչք էր ըմպել։

Այս Պաղում խաչերից մի հարյուր քայլ հեռավորությամբ անցնում էր գյուղը երկու մասի բաժանող առուն։ Առվի մի կողմում եղել էր մի անհայտ ծագում ունեցող փոս։ Ահա այդ փոսում էին ամփոփվել 1896-ի կոտորածների 108 մեծ ու փոքր արճակցի նահատակների աճյունները։

Ամեն մեռելոցի քահանաներն ու աճյունատերերը սկզբից այդտեղ էին գնում մեռել օրհնելու, խունկ ծխելու, նոր միայն՝ գերեզմանոց։

Արճակի գերեզմանատան անտաշ ու մամռապատ քարերի վրա փորագրված կային հովվական զավազաններ (նշան, որ թաղվածը եկեղեցական է) և մեկ էլ հավի պատկեր ու արձանագրություններ, որոնք այնքան էին քարաքոսերով պատվել, այնպես եղծվել, որ դարձել էին անընթեռնելի։

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Սատանաներ: *Սատանայի գոյության հավատում էր գրեթե ողջ բնակչությունը։ Սատանան պատկերված էր մարդկային տգեղ կերպարանքով, ոտքերը՝ հակառակ, այսինքն՝ ոտքի թաթը դեպի ետ։ Սատանաները ամենուրեք էին և խանգարում էին մարդկանց։ Դրանց հաղթահարելու միջոցը խաչակնքումն էր և Իսուս-Քրիստոս ասելը։ Պետք է խաչ քաշվեր խմորի, ալյուրի երեսին ու նոր միայն բերանը փակվեր։ Պանիրը ամանի մեջ շարելիս պետք էր անպայման սկրզբից մի մեծ կտոր պանրի վրա խաչ նշվեր և այդ կտորը ամենասկզբում դրվեր ամանի մեջ և այլն։*

Բոլոր տեսակի ուտելիքներն սկզբից ու վերջից կամ խաչ պետք է կրեին, կամ խաչակրնքում, որպեսզի սատանաները դրանց բարաքյաթը *չտանեին։ Իսկ ամեն տեսակ ուտելիքի ձեռք տալիս, այսինքն՝ մեծ ամանից ուտելիք վերցնելիս, պետք էր «Իսուս-Քրիստոս» մրմնջալ։ «Իսուս-Քրիստոս» պիտի մրմնջային գիշեր ժամանակ (մանավանդ մթան մեջ) որևէ շեմք անցնելիս, որպեսզի այնտեղ պահված սատանաները անցնողին չկարողանային խփել, հորանջելիս պետք է բերանները խաչակնքեին, որպեսզի սատանաները չմտնեին փորը։ Նման յուրաքանչյուր գործողության սկզբին, եթե դա կապված էր ուտելիքի հետ, պետք էր «Իսուս-Քրիստոսի» անունով կամ խաչի նշանով սաստել բարիքի թշնամի սատանաներին, քանի որ Իսուս-Քրիստոսի անունը լսելիս նրանք իրը կործանվում էին։*

Առհասարակ այն համոզումը կար, որ սատանաներն ավելի աղաա-համարձակ ապրում են բնակավայրերից հեռու ընկած ավերակներում։ Բացի բարիքներին թշնամի լինելուց, սատանաները մեծ թշնամություն ունեին ծննդկանների ու նորածինների հանդեպ։ Ըստ տեղական հավատալիքի, երբ որևէ գյուղում ծննդաբերություն էր լինում, սատանամայրը ավերակից դուրս էր գալիս և շտապում դեպի ծննդկանի տունը, որ մտներ նրա փորը, պոկեր ջիգյարն ու աներ ուտեցներ իր սատանայաճուտին։ Ջիգյարը տարած ծննդկանը մահանում էր։

Ջիգյար տանելու ճանապարհվող սատանան, գյուղացիների պատկերացմամբ, ուղևորության ընթացքում, անհրաժեշտության դեպքում, կերպարանափոխվում էր, վերածվելով մարդու, աղվեսի, գայլի և այլն։ Գյուղին հասնելիս, նա ընդունում էր շան կերպարանք, ծննդկանի տունն էր մտնում կատվի կերպարանքով, ծննդկանին էր մոտենում ճանճի կերպարանքով և ծննդկանի փորն էր մտնում մազի կերպարանքով, որից հետո արդեն պոկում էր լյարդը։

Սատանաներից պաշտպանվելու նպատակով ծննդկանին երկունքի ժամանակ երբեք մենակ չէին թողնում, որովհետև այդ ժամանակ նա անընդհատ պետք է քայլեր, ու մոտը մարդ լինելն անհրաժեշտ էր։ Քայլելիս նրա ձեռքը տրվում էր ոչ թե փայտ, այլ թոնրան երկաթե կեռգլուխ շիշը։

Աղատվելուց հետո սառը ջուր բոլորովին չէին տալիս, իսկ սովորական դարձած ախռավը (տաք յուղը՝ փոքրիկ քանակությամբ փոխինդ խառնած) խմեցնելիս ուշադիր էին լինում, որ մեջը մազ չլիներ։ Ծննդկանին տեղից տեղ, այսինքն՝ անկողնից անկողին չէին փոխադրում։ Գիշերները նրա ճրագը չէին հանգցնում մինչև քառասուն օր։ Թեև ութ օրական ծննդկանը նորածնի մկրտվելով, մեռոնվելով սատանաների հետապնդումից ղերծ էր մնում, բայց առաջվա նման առանց խաչակնքելու, առանց Իսուս-Քրիստոս մրմնջալու, նա բարուրը չէր վերցնում կամ տեղը դնում, նույնը և լողացնելիս։

Գյազնա: *Ըստ ավանդության, ամենուրեք բնակվող սատանաներն Արծակում ունեին նաև իրենց հատուկ բնակավայրը։ Դա գյուղից հեռու, վերևի մասով Աստվածածնա բլուրներին հասած, իսկ ցածի մասով՝ Ջնձեմ կոչվող արտերին հասնող բլուրներից մեկի մեջտեղը եղած խոր, քարքարոտ, երկայն կիրճն էր, որը կոչվում էր Գյազնա։*

Ահա այդ Գյաղնան սատանաների բնտկավայրն էր։

Լեռնային ձնհալներից գոյացած և իր անցած ճանապարհին սլարզված մի փոքրիկ առվակ էր հոսում այդ կիրճի միջով։ Վերը, կիրճի մեջ, կար մի տեղ, որ ջատ նեղ էր, և ջուրը ոչ թե հոսում, այլ վիժում էր ցած։ Ջրվեժի այդ մասը կոչվում էր Գյաղնի խոփնչք, ուր ավանդության համաձայն, անհամար սատանաներ էին աղմկում, հալար ու մի ձայնով ողբում, կաղկանձում։

Ո՛չ հովիվներն ու դառնարածներն էին այնտեղ հոտը քշում, ո՛չ կանայք ու աղջիկներն էին Գյաղնեն բանջարի գնում, ո՛չ էլ անցորդներն էին դնում սատանայաբնակ Գյաղնայով։ Ըստ արծակցիների Գյաղնի խոփնչքը միշտ էլ լիքն էր անխորտակելի չարքերով, որոնք շատ հեռու վայրերից հալածվել-եկել էին թաքնվելու Աստվածածնա զորությունից ու պատսպարվել Գյաղնի խոփնչքի մեջ։

Գյազնի ժայռերի ծերպերին իրենց բույնն

էին հյուսում ծանրամարմին և ազգաբնակչությունից սրբացված արոս կոչվող թռչունները։

Աններելի մեղք էր համարվում ոչ միայն արոսի ձագ գողանալը, այլ անգամ նրա բնին ձեռք տալը, քանի որ այն կարծիքը կար, որ երբ մայր արոսը, երբ հեռվից նկատում է, թե իր բնին մարդ է մոտեցել, ինքը սկսում է իր կտուցն այնքան խփել ժայռին ու տրորվել ժայռի վրա, մինչև սատկում է։ Մեկի վիշտը, ողբը նկարագրելիս ասում էին՝ «Արոսու պես ուր դոշ վեր թարերաց կտրորի»։ Հավատում էին որ Գյաղնի չարքերն անգամ արոսներին չեն անհանգստացնում։

Պապերից եկած երկյուղախառն պատումներ կային այն մասին, որ երբ մութն ընկնում է, Գյաղնի մեջ ապրող անհամար չարքերը հազար ու մի սատանայական հնարանքներով խաբում են միայնակ ուղևորներին, տանում Գյաղնի խորխնջը և այնտեղից քաշում դժոխք։ Որդոց-որդի ամրացած այս երկյուղը ստիպում էր դաշտում աշխատող կանանց, մութն ընկնելիս չանցնել Գյաղնի ձորաբերանով (թերևս այդ անցերում ժամանակին ավազակներ էին եղել)։

1897 թ. արճակցի հյուսն Խասն Ուսեփը, մի մտայլացել ու սակավախոս մարդ, հայտարարել էր, որ ինքը մի երեկո, Ջնձեմ կոչված իր արտը ջրելուց վերադառնալիս, երբ, Գյաղնի ձորաբերանից մի կանացի ձայն է լսում, որը, հարցնում է.

—Ախչի, էտր պյան բյե վո՞վ արաց։

—Քոսքրսոն[1],—լինում է աղջկական ձայնով տրված պատասխանը։

—Վո՞վ կեր գյա,—հարցնում է առաջին ձայնը։

—Քոռքրսոն[2],—պատասխանում է նույն աղջկական ձայնը։

—Ախչի, վյո՞րտեղ։

—Գյաղնեն։

—Այո՞թ, ախչի,—խիստ ծիրլտուն ձայնով հարցնում է առաջին ձայնը։

—Վալա, բիլա, թալա,—սատանայական բրբիջով երդվում է երկրորդ ձայնը։

Խասն Ուսեփը, երեսին խաչ հանելով, վազելով անցնում է ձորաբերանի մոտով։ Ուսեփի ասած ժամին այդ անցերում ոչ մի մարդ չէր լինում։

Վարակյա տներ: Սատանայաբնակ էին հռչակված նաև գյուղի հարավ-արևելյան կողմում գտնվող Վարակյա տներ կոչված ավերակները։ Դրանք 1870-ական թվականներին Վարագի վանքի կողմից կառուցված և 96-ի կոտորածներին թանդված երկհարկանի գեղեցիկ շենքի և իր օժանդակ կառույցների ավերակներն էին։ Շենքի շրջապատում եղած մեծ թվով ցորենի դատարկ հորերի բերաններին փարթամորեն աճող վայրի սուլախոտերը ծածկում էին հորերը, և այնտեղ խաղացող երեխաները հեշտությամբ կարող էին ընկնել հորերից մեկն ու մեկի մեջ։ Թերևս այդ էր եղել պատճառը, որ մեծերից Վարակյա տները համարվել էին սատանայաբնակ, և կամ այն, որ Վարագա ավերակների հենց դիմացի ճանապարհից քիչ այն կողմ գտնվում էր թուրքական փոքրիկ ու անշուք մի գերեզմանոց, ուր թաղվում էին Թուրք պաշտոնյաների ընտանիքի անդամները, որոնց «հողը քաշել էր Արճակում թաղվելու» (սա ժամանակի տիրող համոզմունքն էր)։ Այսպես թե այնպես, Վարագի երբեմնի լիառատ տները ճանաչված էին սատանայաբնակ։ Տեղական թուրք պաշտոնյաները, մանավանդ ոստիկաններն այդ բանին տեղյակ էին։ Թերևս այդ գիտակցությամբ էր, որ 1915 թ. ապրիլյան օրերին խառակոնիսցի Շիրին Հակոբյանի կնոջն ու իր երեխաներին կենդանի-կենդանի գլորել էին Վարակյա տների ցորենի մի հորի մեջ ու վրաները մի քանի քար շպրտելով, «թագնելու»։ Վարակյա տներում գնդակահարելու էին տարել նաև արճակցի 7—10 տարեկան տղաներին, որոնք եղեռնի առաջին օրը պատահականորեն կենդանի էին մնացել։

Պուպուշիկ: Պուպուշիկները պատկերացվում էին թխամորթ, խիտ-ղանդրահեր, հաստատոչ, ճրագի նման փայլուն աչքերով, գզգզված հանգրձներով մանուկներ։

Պուպուշիկ-սատանայաճուտերի կողմից մարդկանց հանդեպ ցուցաբերված թշնամական վերաբերմունքի մասին առանձնապես ոչինչ հայտնի չէր, բայց հանդուրժելի չէին նրանք։ Ասում են տարվա մեջ մի օր, Ավետման տոնի երեկոյան, տանտիկինները ձեռքներն առած թոնիր խառնելու հսկա փայտե ձողը, վառ ճրագը տալով փոքրահասակ աղջիկների ձեռքը, թոնրատան, մառանների, մթերանոցների, ախոռների ու այլ տեղերի չորս անկյուններում թոնրան անթրոցի (թոնիրխառնիչ) ածխացած ծայրով խաչ էին քաշում, անընդհատ կրկնելով՝ «պուպուշի՛կ, այո՛ւս, պուպուշի՛կ, տյո՛ւս»։ Պուպուշիկները «փախչում էին»

[1] Քոսքրսո՝ արճակցի չփրված և վավաշոտի համբավ հանած մի այրի ծերունու մականունն էր։

[2] Քոռքրոռ՝ խառակոնիսցի նույնպես վավաշոտ համարված ռեն Պետրոս ծերունու մականունն էր։ Երկուսն էլ մինչև 1915 թվականը կենդանի էին։

և խմբերով «գնում-մտնում» Գյաղնան՝ մեծ սատանաների մոտ։

Տավրի շլուա *(անասունի մերկ)։ Տավրի շլուտր ըստ հավատալիքի պատկերացվում էր մերկ տղամարդու կերպարանքով, որը լռությամբ շրջում էր գյուղից գյուղ, իր հետ բերելով անասնացավը։ Նա անխոցելի էր բոլոր տեսակի միջոցների հանդեպ, խաչակնքելիս չէր խափանվում և ասում էր. «Ես տավրի շլուան եմ, գալիս եմ այսինչ տեղից, գնում եմ այնինչ տեղը»։*

Տավրի շլուտի երևալը տագնապ էր առաջացնում գյուղացիների մեջ։ Հայտնվելով գյուղում, նա, իբր, կոտորում էր խոշոր եղջերավոր անասուններին։ Այդ աղետաբերին գյուղից հեռացնելու միակ միջոցը սրբերին մատաղ խոստանալն էր։ Եթե Գեղարդը (Էջմիածնի վանքում պահվող երկաթե սրածայր կարճ տեգը, որով զինվորը ծակել էր խաչված Քրիստոսի կողը՝ ստուգելու, թե նա մահացա՞ծ է արդյոք) գտնվում էր Վանում, արտակցիք գնում էին, գյուղ բերում ամենափրկիչ սուրբ Գեղարդը։

Աչք կամ Նիաք: *Աչքի զորությանը շատ-շատերն էին հավատում։ Այսինչ երիտասարդին հիացքով նայեց այնինչ անձնավորությունը, երիտասարդն իրեն վատ զգաց, իսկ այդ անձնավորության «աչքն արդեն փորձված» է։ Երիտասարդը նրա աչքից է հիվանդացել, թեկուզ այդ հիվանդությունը լիներ գլխացավ, ջերմ կամ քթից արյուն հոսեր։*

Նույնը պատահում էր և աղջիկներին։ Նրանց լավ ձեռագործի, գեղեցկության, շնորհալի շարժուձևի վրա շատերը կարող էին հիանալ, սակայն եթե աղջիկն իրեն վատ էր զգացել, ասենք՝ մատնաշուրթ էր ստացել, սայթաքել էր և ընկնելիս մի վնաս էր պատահել (ուսին դրած ջրի կուժն էր կոտրվել, թե ձեռքը կամ ոտքը), այդ պատահարից առաջ ով որ նրան հիացքով նայել էր, հենց այդ նայողի աչքից էլ աղջիկը «աչք էր առել»։

Աչք էին առնում անասուններն անխտիր՝ լծկան, կթան, մատղաշ։ Աչք էր առնում ամանի մեջ լցված կաթը՝ կտրվում էր, խնոցում լցված մածունը՝ յուղ չէր տալիս։ Աչք առած կթանի կուրծքն ուռչում էր, ու կաթն էլ տհաճ համ առնում, մատղաշ գառներն ու հորթերը սատկում էին, նորածին դոմշակովերը կատաղորեն խփում էին կթողներին ու թույլ չէին տալիս մոտենալ իրենց, երբեմն նրանք «աչքի» պատճառով թույլ չէին տալիս իրենց ձագուկներին կաթ ծծել։

Աչքի նիաթին ենթակա էին ամենքը և ամեն ինչը, սակայն ամենից շատ՝ երեխաները։ Այսինչ բարեկամուհին առաջին անգամ տեսավ երեխային, գուրգուրեց, իսկ հետո երեխան հիվանդացավ. ուրեմն՝ նրա աչքից էր։ Եթե աչքով տվող անհատի վրա այնքան վստահություն ունեին, որ եթե նրան ասեին՝ ոչ մի անախորժություն չէր ստեղծվի, ապա ասում էին։ Աչքով տվողը գալիս էր «աչք» առածին նորից էր գուրգուրում, թքում նրա վրա, հաճախ իր հագուստից մի դերձան էր տալիս կամ գլխից մի քանի մազ և գնում։ Հագուստի ծվե՞ն էր, թե՞ գլխի մազ, վառում էին փոքրիկի քթի առաջ, այնպես որ ծուխը կլլեր երեխային։ Իսկ եթե աչքով տվողի վրա վստահ չէին, վախենում էին վիրավորվի, կռվի, ապա գաղտագողի էին ձեռք բերում նրա հագուստի ծվենը կամ գլխի մազը, կամ վերցնում էին նրա ոտքի տակի հողը կամ նրա դռնից մի փոքրիկ տաշեղ էին փրցնում։ Ծվեն էր, մազ էր, թե տաշեղ, այրում էին երեխայի քթի տակ, իսկ եթե ոտքի տակի հողն էր, ապա լցնում էին մանկան լողացնելիք ջրի մեջ։

Տարափոխիկ հիվանդությունների դեպքում այնպես էին դասավորում, որ օտարները քիչ տեսնեին հիվանդ երեխային։ Շատերն իրենք էին խուսափում հիվանդ մանկանը նայել, որպեսզի, աստված մի արասցե, մի բարդություն ստեղծվելիս չասեն թե նրա աչքից է։

Դոլվաթ: *Դոլվաթը համարվում էր ընտանիքի կարողության պահապան անտեսանելի բարի ոգին։ Դոլվաթ ունենում էր յուրաքանչյուր ընտանիք։ Դոլվաթը յուրահատուկ կերպարանք չուներ։ Մի ընտանիքում նա կրում էր մարդկային կերպարանք, մյուսում՝ թունազուրկ օձի, մի այլում՝ անասունի և այլն։*

Դոլվաթը ապ ու պապերի ժամանակներից ապրում էր տվյալ տան մթերանոցի կամ տնի շատ՝ փայախների որևէ անկյունում։

Դոլվաթը կարող էր խռովել ընտանիքից երկու դեպքում՝ անասուններին չխնամելու և տան «շեմքը փոխելու», այսինքն՝ նոր տուն կառուցելու ու հին տունը լքելու դեպքում։

Գյուղում կային որոշ նախապաշարված ծերեր, որ վերադասում էին բնակվել պապենական խարխլված, կիսամութ տանը, քան նոր, լուսավոր բնակարան կառուցել, որովհետև վախենում էին «դոլվաթի խռովելուց»։ Նման համոզում ունեցողները նոր բնակարան փոխադրվելուց հետո, գնում էին հին կացարանը, դոլվաթի համար ճրագ վառում, լսելի ձայնով խնդրում նրան՝ տեղափոխվելու իրենց նոր կացարանի որ անկյունը որ կամենում է։ Եվ այս անում էին այնքան ժամանակ, մինչև որևէ երազ առիթ էր

տալիս համոզվելու, թե դովլաթը փոխադրվել է նոր տուն։

Դովլաթը հարգվում էր ընտանիքի բոլոր անդամներից, առավելապես՝ տան ծերունիներից։

Կուդրաթ: *Կուդրաթը տանու, հին, անտեսանելի բարեկամ ոգին էր։ Կուդրաթը պատկերացվում էր կանացի կերպարանքով։ Երիտասարդ, հեզ ու խոնարհ հարս կամ ջահասեր ու ամոթխած աղջիկ էր նա, որ ապրում էր կամ թոնրան ակի մեջ, կամ ալյուրի ամբարի ետեր, կամ մթերանոցի որևէ անկյունում։*

Կուդրաթը անտեսանելի կատարում էր տանտիկինների աշխատանքի դժվարին մասը, պահպանում օրրոցի մանուկներին՝ եթե տանը ոչ ոք չէր լինում։

Բարեկիրթ տանտիկիններն հաց թխելիս կուդրաթին որպես բաժին, մի փոքրիկ կտոր էին դնում թոնրան ակի մեջ։ Կուդրաթը ոչինչ չէր ուտում, միայն բավարարվում էր այդ կտորից հոտ քաշելով։

Կուդրաթին սիրում և նրա կատարած աշխատանքի համար օրհնում էին տան տարեց տանտիկինները։ Կուդրաթը կանացի հարգված անձնանուններից էր։

Թագա ճաց ու մատաղ: *Թագա հաց էին խոստանում աստծուն՝ որևէ դժվարին վիճակի մեջ ընկնելիս կամ ծանր հիվանդության դեպքում, երեխայի անհատ հիվանդության ժամանակ կամ որևէ նպատակի հասնելու աղերսանքով և այլն։*

Մայրամուտին շաղախում էին խոստացված քանակի ալյուրը, կեսգիշերին սկսում էին թխել հացն ու դեռ լուսաբացը դուրս չեկած, տների երդիկներից ցած էին գցում երկուսից-երեք լավաշ, հետը կանչելով՝ «Այսինչ (տանտիրոջ անունն էին տալիս), արթնացեք, այսինչի «թագա հացն է» «Աստված ընդունելի անի» —պատասխանում էր տանտերը։

Նույնն էր և մատաղը։ Միայն թե մատաղը մորթվում էր ցերեկը, միսը մասերի հետ տմանով էր բաժանվում։ Մատաղ, թե թագա հաց կանչող անձը ինքը չէր ճաշակում ոչ մեկից և ոչ էլ հյուրասիրում բարեկամներին։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Կաղանդ: *Կաղանդը կամ նոր տարին շատ աննշան ու անշուք տոն էր։ Բոլոր տներում էլ այդ օրը սովորականից շատ էին ալանձ անում ու մեջն էլ չամիչ, ընկույզի և կաղինի միջուկ խառնում, ապա՝ խոսք հանդիպելիս մեկն ասում էր՝ «քո կաղանդը շնորհավոր լինի», մյուսը պատասխանում էր՝ «քոնն էլ շնորհավոր լինի, հմեն տարի պարով էլ օրվան հասնենք»։ Եվ դրանով էլ վերջանում էր նոր տարվա ամբողջ նշանակալիությունը։*

Պռատիկ զատիկ: *Համմարի հինգի երեկոյան զատկի խորանն էր։ Դեռ նախընթաց օրվանից կանայք չնայած պաս էին պահում, բայց պատրաստում էին դադարչն ու բաղցրը։ Ձվերը էին ներկում, մեծ ու փոքր լողանում էին և հինգի առավոտյան, արշալույսի հետ, յուրաքանչյուր տանտիկին իր ընտանիքի հարս ու աղջիկներին վերցրած, գնում էր եկեղեցի։*

Եկեղեցի էին շտապում թե՛ տարեց ու ծեր աղամարդիկ, թե՛ հավատով լեցուն ու թեթևահավատ երիտասարդներ ու մանկահասակներ։ Ժամասացության ավարտին զգեստավորված պատարագիչ քահանան նստում էր բեմի առաջ. մոտենում էին նրան, ինչպես միշտ, այստեղ էլ նախ՝ այն աղամարդիկ (ծերերը), որոնք որոշել էին հաղորդություն առնել։ Նրանք մի քանի քայլ ծնկում էին քահանայի առաջ, ստանում իրենց մեղքերին թողություն ու դուրս գալիս։ Մանուկների, երիտասարդ-աղջիկների և առհասարակ բոլոր կանանց համար էլ պարտադիր էր տարվա մեջ երկու անգամ, այն է՝ փոքր և մեծ պահքերին, հաղորդություն առնելը, և բոլորը լցվում էին բեմ, մի քանի քայլ ծունկի գալիս, մի քանի անգամ քահանայի հետ կրկնում՝ «ողորմիա մեղավորիս», և արդեն խոստովանած տուն վերադառնում։

Սոմ բերանով, մայրամուտից առաջ, նորից ժողովուրդը գնում էր եկեղեցի, լսում պատարագ, հետո հաղորդություն առնում։ Մինչև հիշյալ արարողությունների ավարտը արևամուտ էր լինում, ու ժողովուրդը նստում էր խթումի լրանալուն սպասում։

Խթումի օրն արգելված էր որևէ մսեղեն կերակուր։

Խթումի սեղանին, ըստ սովորության, լինում էր դոշաբով ու ալյուրով եփված ճաշ, ոսպով ու ձավարով խառը փլավ ու գյուղական չրեր։

Երբ խթումն արած-պրծած էին լինում, 12—14 տարեկան տղաները, խմբերի բաժանված, գնում էին «Ավետիս» երգելու խումբ-խումբ ել-

նում էին երթիկներն ու գլուխները վար կախած երգում էին.

Այսօր տոն է ծննդյան, ավետի՜ս,
Աշխար լցվավ լիությում, ավետի՜ս,
Մեր Տերն էլավ նախատակ, ավետի՜ս,
Տժողքն էլավ տուռ խորտակ, ավետի՜ս։

Ապա եղանակը փոխում էին.

Մարիամն կնաց տուռն հերին, ալելույա՜,
ԾՆավ, պիրեց Հիսուս որթին, ալելույա՜,
Քրիստոս որդի կյրկանոցին, ալելույա՜,
Քյավոր՝ Սիմոն ծերն արիցին, ալելույա՜։

Հետո երգիչները հարցնում էին.—Սեր լաճու անուն ի՞նչ ի։

Տանտերերը տալիս էին տան ամենափոքրիկ տղայի անունը, ասենք՝ Սիմոն։ Ավետիս ավոգները սկսում էին երգել Սիմոնի գովքը։

Սիմոնի ճուճ ճրթացավ, ալելույա՜,
Քյանգյ բարդի ծառ հերկնցավ, ալելույա,
Խեր կերավ խպառտացավ, ալելույա,
Մեր կերավ ղվարթացավ, ալելույա,
Քյոր կերավ, խորոակրցավ, ալելույա,
Սխպեր կերավ, հայլորացավ, ալելույա,
Մամիկ կերավ, ջրհելացավ, ալելույա,
Պապիկ կերավ, անմախացավ, ալելույա,
Խորքուր կերավ, գյումրախացավ, ալելույա,
Խորոխպեր կերավ, գանգրնացավ, ալելույա,
Ռեռաղեն կերավ, առողճացավ, ալելույա,
Քեռամեն կերավ, բախտավորցավ ալելույա,
Մորքուր կերավ, ինգավ թոներ, կոտն իրիցավ, ալելույա՜,
Քյանիմ կերան, չպստկցավ, ալելույա՜,
չղսակցավ, ալելույա՜։

Եվ ավետիս երգողները մի քանի անգամ կրկնում էին վերջին տողը։

Տանտիկինը երգող երեխաներին յուղ, ձու կամ ձավար էր ընծայում ու մինչ նա մառանից կվերադառնար, երեխաներից մեկը կտուրից իջնում էր ներքև՝ ընծան ստանալու, իսկ մյուսները զվարթաձայն երգում էին.

Մամի՛կ, մամի՛կ, մո՛ղ արա,
Քյասեն պոպոլեվ արա՜...

Խթումի երեկոն մխիթարանքի օր էր այն ընտանիքների համար, որոնց տներում մեծ ղաակից այս կողմ մահացության դեպք էր պատահել։ Տարեց տղամարդիկ ու տարեց կանայք գնում էին մխիթարանքի խոսք ասելու։

Միմյանց ասում էին.

—Քրիստոս ծնավ և հայտնեցավ. ծեղ ու մեզ մեծ ավետիս։

—Օրհնյալ ի սուրփ ծնունդ Քրիստոսի,—պատասխանում էր ավետիս սաացողը։

Այս գործվածքը հունվարի հինգի երեկոյից մինչև հունվարի վեցի երեկոյան փոխանակում էին բոլոր միմյանց հանդիպողները։

Հունվարի վեցի արշալույսին նորից ամբողջ հասարակությունը գնում էր եկեղեցի։ Առավոտից սկսում էին խմբերով միմյանց տուն գնալ, ղատիկը շնորհավորելու Քահանաները ևս շրջում էին՝ յուրաքանչյուրն իր ծխի տունն օրհնելու։

Պստիկ ղատիկը ձմեռնամուտի առաջին ուրախ ու համաժողովրդական տոնն էր։

Սուրբ Սարգիս: Պստիկ ղատկից հետո, սուրբ Սարգսի պասը, առաջին շաբաթապասն էր։ Սուրբ Սարգսին կանայք ու աղջիկները բացի պասը, ծոմ էլ էին պահում։

Սուրբ Սարգսի շաբաթ օրվա նրակին մեծ նշանակություն էին տալիս հատկապես չամուսնացածները։ Այգ գիշերվա երազը համարվում էր բախտագուշակ։ Ամբողջ տարվա ընթացքում միայն սուրբ Սարգսի պասի ուրբաթ օրն էին կտավատի փոխինդ պատրաստում՝ ցորենն ու կտավատը առանձին-առանձին բովում էին ու միասին լցնում սանդի մեջ, ծեծելով մանրացնում և ուտում։ Իսկ աղապ աղջիկներն երեկոյան ուտում էին աղի բլիթ և առանց ջուր խմելու քնում, որպեսզի ծարավեն ու քնի մեջ իրենց ուրիշը ջուր տա։ Սուրբ Սարգսի այգ օրվա երազը պետք է անպայման պատմվեր։ Շատ խանգավառներ այդ ծոմը պահում էին «խինգ օր մեյ գանով», այսինքն՝ առաջին երկուշաբթի օրվանից ոչինչ չէին ուտում մինչև չորեքշաբթի ճաշին մի անգամ ուտում էին ու մնում ծոմ՝ մինչև ուրբաթ երեկո։

Տյառնընդառաջ (Տեառն ընդառաջ): Տենդառաջի օրը նշանված աղջիկների սկեսուրներն այցի էին գնում իրենց հարսնացուներին և խնամոնց տանը նստում մինչև տենգառաճ վառելը։

Արևը մտնելուն պես կտուրներին դիզում էին չոր եղեգ ու կյաղ, և յուրաքանչյուր ընտանիք բարձրանում էր իր տան կտուրը։ Կտուր էին հանում նաև հարսնացուին ու սկսում խարույկ վառել։ Խարույկը վառում էին ոչ թե իրենց տան

յուզկով, այլ եկեղեցուց բերված վառ մոմով։ Պարտադիր չէր, որ ամեն ոք վառ մոմ հասցներ իր կտուրը։ Կարելի էր և մեկը մյուսից կրակ վերցնել, պայմանով, որ առաջինը լիներ եկեղեցուց բերած կրակից վառված։

Երբ խարույկի բոցը սկսում էր մեղմանալ, շուրջը բոլորածները խարույկի վրայից թռչում էին։ Խարույկի մոխիրը բուռ-բուռ ցանում էին թաղում տան, մառանների, գոմերի ու փայախների երդիկներից։

Այդ օրվա հրաշները վառում էին եկեղեցու լույսերից։

Պարկենդանք (Բարեկենդան)։ Սուրբ Սարգսից հետո սկսում էր բարեկենդանի երկու շաբաթը։ Պարկենդանքը իրոք որ մարդկանց սրտերում կուտակված ուրախության պոռթկում էր, ամենուրեք կերուխում, երգ ու պար։ Պարկենդանքին էին լինում հարսանիքների մեծ մասը, նշանդրեքները։ Պարկենդանքի առաջին հինգշաբթին էր լինում Եղօրի օրը։ Այդ օրն ազգական ու հարևան աղջիկներն ու աղջնակները հավաքվում էին նորահարս կամ նշանված աղջիկ ունեցողների տները, երդիկից կախում էին երկօղակ հաստ պարանը։ Աղջիկներից ամեն մեկը նստում էր մի օղակի մեջ ու ոտքերը երկարացնում դիմացինի նստած օղակին, իսկ ձեռքերով բռնում իր նստած պարանը։ Երկու հողի կանգնած ճղոր նստածների ետևը, համաչափորեն հրում էին նրանց թռնրտան մի պատից մյուսը։ Օդի մեջ ուժգնորեն տարուբերվելով, սկսում էին սիրային ուրախ տաղեր ասել։ Աղջիկների ու հարսների զույգերն անընդհատ փոփոխվում էին, մինչև հերթը հասնում էր նորահարսին կամ նշանված աղջկան։

Ճղորը բարեկենդանի ուրախություններից միայն մեկն էր։ Պարկենդանքի վերջին օրերին արդեն, աղաները ոչ թե առանձին աներում էին գյոնդապար խաղում, այլ հարազատ աղա-աղջիկ խմբովին հավաքվում էին միատեղ գյոնդապարի, փոխնեփոխ երգելով երգիծական տաղեր։ Տվյալ ընտանիքի տարեցներն էլ, կենտրոնում նստած, «թամաշա» էին անում։

Ընդունված էր և խաղ խաղալ, որին այնպես ընդունակ էին գյուղի զվարճասեր երիտասարդները։ Նրանք վարպետորեն ծպտվում էին մաշ վաճառող մթրրների, Միջագետքի թափառիկ կովարար քրդուհիների, հայատյաց կիսախելագար մոլլաների կամ հեռու գավառների հայերի դերում ու ուրախացնում շրջապատին։ Լուսադեմին ցրվում էին տները և սկսում վայելել իրենց ունեցած ուտիք օրվա ամենարնտիր ուտելիքները։

Չէ՞ որ բարեկենդանին հետևելու էր հիսնօրյա մեծ պահքը։

Ահա երիտասարդության կողմից ներկայացվող խաղերից մի նմուշ։ Այն հատակա մի հայ գյուղի ընտանեկան ծաղրանկարն է։

Տախ ախչկան տարան իրկան
կամ՝ Կակո-Մակոն նշնվեց։

Բակում կանգնած, վատ հագնված, տգեղ ու պառավված աղջիկը ծիծաղելի անհամբերության նշաններով ինչ-որ եկվորի է սպասում։ Ձեռնափայտին հենված ծերուկը, պատանի, բայց հիմարավուն որդուն հրում է դեպի տան կտուրը, որ ուշադիր հետևի, և եթե որևէ օտարական երիտասարդ գյուղ մտնի, պատանին հարցանքով նրան առաջնորդի իրենց տուն։

Շուտով հայտնվում է և օտարականը։ Պառանին երգով ընդառաջում է, երգի հետ նա զանազան ծամածռություններ է անում.

Պյարով էկավ մեր փեսեն,
Մեյ ոտ կառն ի, մեյն հերկեն.
Ակընջկըներ մեյ գյաղ են,
Գյավր շլվար ճըղճըղուկ,
Խեյքից սանս ճնճըղուկ։

Աղջիկը վազում է փեսացուին ընդառաջ։ Փեսացուն սարսափահար դեն է հրում նրան, ապա դառնում գեպի ժողովուրդն ու երգում.

Աուեք իմ շաշ անիրոչ,
Ես խավան չեմ ուր քյուրոչ,
Քյրթի առաճն ի փուղոց,
Մասա-եղընքյներն են սղոց,
Իրեն՝ քյրոնած փրթրի պես,
Ծամեր ճրճան՝ կյալի անգլ։

Լնդլնդալեն առաջ էր շարժվում ձեռնափայտին հենված ծերուկն ու երգում.

Ես կուրրան եմ իմ փեսին,
Ինչ անուշ էր ծեր կյսեն,
Մեյ մեկու բոլ պատվիցիք,
Մտեքյ հողեն դրնջացեր։

Առաջ էր վազում աղջկա կույիկ, պառավ մայրը։ Սա ես պարելով ու երգելով.

Օլրուկ խսիր դատի տեմ,
Նստեքյ՝ կուրրան ծն դաղեն,
Աուփրեն պյացի գավաթի,
Մաթրաթ հյին չոր-քյառթու

Կյարճ խացեր, Թան Թըթու,
Կիրեքյ-խմեքյ, կըշտացեքյ,
Թոեքյ տտնիս փշտացեքյ։

Աղջիկն առաջ էր բերում կտրած սմանի կըտորով կուլաչուր՝ չոր աթարի մտորտանքներով լիքը։ Եթե փեսացուն ճարպկորեն դուրս չպրծներ, ապա մյուսները նրա գլուխը կխոթեին կուլաջրի մեջ։

Ի դեպ, կանացի բոլոր դերերը խաղքերում կատարում էին միայն տղամարդիկ։

Ճոչ պաղս (Մեծ պաճf)։ Բարեկենդանի կիրակի օրվան անմիջապես հաջորդում էր մեծ պասի երկուշաբթի օրը։ Այդ օրը տանտիկինները մի մեծ գլուխ սոխի վրա շուրջանակի խրում էին հավի յոթ փետուր, որպես մեծ պահքի յոթ շաբաթների խորհրդանիշ։ Փետրազարդ սոխը կախում էին թոնրատան երդիկից ու անցած ամեն շաբաթ օրվա մայրամուտին մի փետուր պոկում ու թոնրում վառում։ Իսկ վերջին շաբաթ երեկոյան վեր էին առնում սոխն ու դրանով էլ եփում խըթման օրվա ջիբուրը (յուղով հաշ)։ Երդիկից կախված փետրազարդ սոխը կոչվում էր ակլատիզ: Երբեմն ծծկեր մանուկներին վախեցնում էին ակլատիզով։

Մեծ պահքի առաջին օրը ատն բոլոր կերակրամաններր կամ եռացնում, կամ եռման բորակտջրով մի քանի անգամ լվանում էին։ Այդ լվացումը կոչվում էր ամանները պասից հանել։ Մեծ պահքի առաջին երեք օրերը կանայք համարում էին կիրակի։ Այսպես, առաջին օրը՝ մկան կիրակի, երկրորդ օրը՝ կաաաղած շան կիրակի, երրորդ օրը՝ կայծակի (կեծակի) կիրակի։ Հիշյալ երեք օրերը եկեղեցուց չէր րխում, սակայն կանայք այդ կիրակիները նշում էին ոչ մի ձեռագործ չանելով (բուրդ գզել, գուլպա հյուսել և այլն), որպեսզի տստված մարդկանց պահպանի կայծակից, կատաղած շնից, ինչպես և հեղուկ ուտելիքով լի ամանները հեռու պահի մուկ ընկնելու վտանգից։

Միճիճf (միջիճf)։ Այդ օրը տանտիկինները թխում էին մի մեծ ձեթով բաղարճ, որը կոչվում էր միճճապլիթ, քանի որ այդ օրը մեծ պահքի քսանհինգերորդ օրն էր։ Միճնապլիթի մեջ թխելուց առաջ դրված էր լինում 1—5 ղուռուշ արժողությամբ արծաթե դրամ։ Երեկոյան միճնապլիթը բաժանում էին այնքան մասի, որքան տվյալ ընտանիքի անդամների թիվն էր։ Տան անդամներից, ում բաժնի միջից որ հայտնվում էր տվյալ արծաթե դրամը, նշանակում էր, որ տան գոլվաթը (հարստության ոգին) նրա գլխին էր։ Միճնապլիթից դուրս եկած արծաթե դրամը գտնողին էր մնում։

Նույն միճնապլիթի մեջ դրված էր լինում մի այլ փոքրիկ իր (կոճակ, հուլունք և այլն), որը խորհրդանշում էր խելք։ Այդ իրը ևս իր բաժնում հայտնաբերողին էր մնում։ Սակայն «խելքը» այնպիսի ցնծություն չէր առաջացնում, ինչպես «գոլվաթը»։

Նշանված աղջիկներին այդ օրը կեսարանց տնից, նորահարսներին՝ հերանց տնից ուղարկվում էր երկու մաղ ձեթով բաղարճ կամ ռսպով թխված «կուտապ» կոչվող կարկանդակ, հետն էլ որևէ նվեր կամ հնգական ղուռուշ արծաթադրամ։ Նվեր տանողը, լիներ տան պատանին, թե վարձու հուտաղը, պարգև էր ստանում մի զույգ գուլպա կամ դրամ։

Ավետիf։ Ավետիքի տոնը նշվում էր երկու անխախտ սովորույթով։ Առաջինը՝ արևածագից առաջ ընտանիքի ամուրի անդամը, լիներ հասուն, երիտասարդ, թե պատանի, պետք է դաշտ հասած լիներ և ձնից դեռ չմաքրված իրենց աշարաներին (ցորենի կանաչ արտին) ավետիս տար, ասելով՝ «Աշխըրին լոս տըլու իկող Թո քե էլ չիութեն աա»։ Երկրորդ՝ երեկոյան տանտիկինը, ձեռքն առած թոնիր խառնելու անթրոց կոչվող երկար փայտը, դրա մրոտ ծայրը խաչաձև քսում էր տան չորս անկյուններին, կրկնելով՝ «Պուպուշի՛կ, տյո՛ւս, պուպուշի՛կ, այո՛ւս, Իսուս Քրիստոսի անունով, պուպուշի՛կ, այո՛ւս»։ Տանտիկինը խաչակնքելով, թոնրատնից մտնում էր մառաններն ու մթերանոցը։ Հավատում էին, որ տան անկյուններում թաքնված պուտուշ-մուպուշ (դանդրահեր-փոքրիկ) սատանայաճաերը տներից հալածված, ձեռքերը գլխներին դրած, մեծ խումբ կազմած, լացուկոծով փախչում են դեպի Ոստանայարնակ Գյաղնի ձորը։

Ծառզարթար (Ծաղկազարդ)։ Մեծ պահքի մեջ ընկնող այս վերջին կիրակի օրը եկեղեցում փակ խորանի առաջ օրհնում էին բախչաներից բերված և բողբոջները դեռ չաված ուռենու ճյուղերը։ Քահանան օրհնած ճյուղերը բաժանում էր ժամավորներին։ Կանայք այդ ճյուղերից մի-մի հատ խրում էին իրենց խնոցիների պարաններին, իսկ տղամարդիկ, հատկապես պատանիները, տանում էին անկում ծառաստաններում։ Այդ օրվա օրհնած ճյուղը, եթե կպչում էր, առանձին ուրախություն էր պատճառում ոչ միայն ծառ տնկողին, այլև ամբողջ ընտանիքին։ Այդ օրը նորահարսներին տանում էին առաջին դարձի

Մեծ զատիկ: Մեծ զատիկը, այսինքն՝ Հարության տոնը, որպես հաղորդություն առնելու համընդհանուր օր, իր կանոններով համարյա նույնն էր, ինչ պստիկ զատիկը (շաբաթ առավոտ եկեղեցի գնալ՝ «խոստովանվել», մայրամուտին եկեղեցի գնալ «հաղորդվել», կիրակի առավոտյան պատարագին ներկա լինել): Սակայն, այդ տոնից առաջ, մեծ պասի վերջին ուրբաթ օրը, որին եկեղեցական լեզվով կոչում են «Չարչարանաց ուրբաթ», իսկ ժողովուրդն ուղղակի անվանում էր խոլին ուրպար, շատ էր տարբերվում հունվարի չորսի ուրբաթ օրվանից:

Արճակի գավառում ընդունված չէր հեռու տեղերում մահացող իրենց հարազատների ու բարեկամների թաղմանը անպայման ներկա գտնվելու սովորույթը: Թաղումին ներկա լինելուն փոխարինում էր ուրպար գնալու պարտականությունը: Ուրբաթ էին գնում, սուրբ խաչի տոնից հետո մահացածներին, որոնց մահից հետո մեռելոց տոն չէր եղել: Մեծ պասի վերջին ուրբաթը համարվում էր տարվա մեջ մեռելոց տոների առաջին այցելության օրը: Մեծ զատկին նախորդող այդ ուրբաթ օրը գնում էին ննջեցյալ հարազատի գերեզմանը՝ առաջին անգամ օրհնելուն ներկա գտնվելու, նաև նրա հարազատներին գլուխ տալու, այսինքն՝ մխիթարական խոսք ասելու: Տանում էին՝ տան ղեկավարին մի բիրմանի շալ կամ այլ նվեր (յուրաքանչյուրն ըստ իր կարողության), մի գլուխ շաքար, կանանց՝ մի-մի յաղմա, հետն էլ բաղարջ, քաղցր (հալվա) և մոտավորապես 50—100 ձու, իսկ բարեկեցիկները, բաղարջն ու քաղցրը փոխարինում էին ոչխարի խորովածով:

Ամբողջ մեծ պասի ընթացքում հավաքած հավկիթները ուրբաթ օրը սոխի կճեպով ներկում էին, և շաբաթ օրն առավոտից պատանիները սկսում էին ձու խաղալ: Աղջիկները ծոմ բերանով մոտակա արտերից նորածիլ բանջար էին քաղում՝ երեկոյան յուղով-ձվով տապակելու համար, իսկ սամիթը (կաթով եփված կորկոտահաշ) պարտադիր կերակուր էր մեծ զատկվա իթումի օրը:

Նորահարսների ու նշանված աղջիկների կեսրանց տներից նրանց համար զատիկ էին բերում՝ մաղով բաղարջ, քաղցր, կարմիր ձու և որևէ զարդեղեն կամ դրամական նվեր (դրամ ստացողն իր համար որևէ զարդ պետք է գներ):

Շաբաթ մայրամուտին երդիկից ցած էին բերում մեծ պասի առաջին օրը կախված, յոթ փետուրներով պսակված մեծ պասի յոթ շաբաթը խորհրդանշող սոխը, որից ամեն շաբաթ երեկոյան մի-մի փետուր էին պոկել և այդ օրը մնացել էր վերջին փետուրը: Այդ սոխով տանտիկինները եփում էին իթումի երեկոյան ճաշը:

Տան աղջիկներն զբաղվում էին ձու նախշելով: Սոխի կճեպով ներկված ձվերին սոսնձում էին նորածիլ կանաչի տերևներ, չորացնում. հետո մի քանի ժամ դնում թթու թանի մեջ, ապա զգուշությամբ ձուն մաքրում սոսնձած կանաչիներից: Այդ մասերում կարմիր նախշազարդ տերևների դաջվածք էր մնացած լինում, իսկ շուրջը՝ թթու թանից սպիտակած: Ստացվում էր տերևազարդ ձու:

Միմյանց զատիկը հետևյալ խոսքերով էին շնորհավորում.

—Քրիստոս հարյավ ի մեռելոց, ձեզ ու մեզ մեծ ավետիս,—ասում էր առաջինը:

—Օրհնյալ է Հարություն Քրիստոսի, հավիտյան,—պատասխանում էր երկրորդը:

Հաջորդ օրը նոր ասում էին՝ «Քյու զատիկ շնախավոր ըլնի, հմեն տարի պարով խասնեք էսր օրին, տսած անփորձանք պախի» և այլ նման մաղթանքներ, իսկ դիմացինը պատասխանում էր.

—Քյու զատիկն էլ շնախավոր ըլնի. տյու էլ պարով հմեն տարի էսօրին խասնես, աստած ուր պարի իրես քյե շանց սա... և այլն:

Համբարձում: Տոնի նախօրեի մայրամուտին, յուրաքանչյուր ընտանիքից մի մանկահասակ աղջիկ, հին փարչն առած, անձայն շրջում էր բազմաղբյուր մարգագետնում, յոթ աղբյուրից յոթ կում ջուր, յոթ քար էր լցնում փարչը, բերանով յոթ անգամ էլ կանաչ էր պոկում ու դնում փարչի մեջ: Հետո վերադառնում էր, փարչը դնում կտուրը մի հարմար տեղ, որ տղաները չիմանային, իջնում էր ցած, մտնում տուն, նոր խոսում:

Աստղերը երևալիս, մեծահասակները թելով չափում էին որևէ կանաչ ու նշան դնում: Առավոտյան, արեգակը չծագած, նրանք նորից էին չափում կանաչը, եթե գիշերվա ընթացքում երկարել էր, ապա այն անձը, որի անունով կանաչը չափված էր, բախտավոր էր, եթե չէր երկարել՝ դժբախտ:

Տանտիկինները, արևը դեռ չծագած, ցած էին բերում կտուրում պահված յոթն աղբյուրի ջրով լի փարչը: Ջրի մի մասը լցնում էին հարվող խնոցու մեջ, մյուսը խառնում ջրին, խմեցնում կաթնատու անասուններին, մի մասն էլ թողնում փարչում: Ի մի խմբված ազատ աղջիկները փարչում մնացած ջուրն ու քարերը դատարկում էին անկանթ ու նեղաբերան կավե սեռիկի մեջ, ավե-

լացնելով նաև մանր իրեր (հուլունք, կոճակ, մատանի), որպես բախտանշան իրենց ու իրենց հարազատների համար, նախօրոք որոշելով, թե ով իրն ում անվամբ է։ Հետո արդեն դրտնակը մտցնում էին սեռիկի մեջ, այնպես որ մեծ մասը ջուրը մնար, դրտնակի ու սեռիկի բերանի միջև մնացած բաց տեղը խցկում էին շորի կտորներով և այնպես ամրացնում, որ ջուրը դուրս չթափվեր։ Գըլանակի վերևի մասին կլխիկի ու դեմքի տեսք էին տալիս, պատրաստում մի շքեղազարդ հարսիկ, կրծքին ու գլխին տեղադրելով իրենց ընտանիքում եղած հին արծաթե զարդերը։ Վիճակը պատրաստ էր։

Սկսվում էր վիճակը ձեռքերով թոցնելն ու երգով գովելը։

Ինչպես բոլոր տոն օրերին, Համբարձմանը ևս արճակցիները գնում էին Ասպարածին։ Համբարձման օրը, վերջին անգամ ձու էր ներկվում և սուփրաներ էին փռվում ծառերի հովանու տակ։ Մոտ տասը տեղից լսվում էին աղջկական զիլ ձայնով երգվող վիճակի խաղիկները։ Տաղի յուրաքանչյուր տողին հաջորդում էր՝ «Ջա՜ն վիճակ, ջա՜ն ծաղիկ, ջանե-ջան»-ը, իսկ յուրաքանչյուր երեք տողից մեկը «տղապ լաճերի» հասցեին ուղղված վիրավորական խոսք էր լինում։

Ինչպես առհասարակ ժողովրդական շատ երգեր, վիճակի երգը ևս անսկիզբ ու անվախճան էր։ Երգում էին աղջիկները, ձեռքերին վեր-վեր թոցնելով վիճակը։ Ու վիճակի շարժումից արծաթե բազմաթիվ ու բազմապիսի զարդերն իրար էին գիպչում, թափահարվում էին սեռիկի միջի քարերն ու մանր իրերը ու այս ամենից նվագանման հաճելի ձայն էր ստացվում։

Ահա ազապ աղջիկների վիճակի գովքը։

—Վիճակ նստե վեր իշուն, ջան վիճակ, ջան ծաղիկ.
ջանե-ջան,
Իտե, առճև աոբըշում, ջան վիճակ, ջան ծաղիկ,
ջանե-ջան։
Ազապ լաճեր վիճկին շուն, ջան վիճակ, ջան ծաղիկ, ջանե-ջան։
Վիճա՛կ, սանյաթըռ գյուլբան, ջան վիճակ,
ջան ծաղիկ, ջանե-ջան,
Խալավտ ատլաս ոսկեպյան, ջան վիճակ, ջան
ծաղիկ, ջանե-ջան...
Ազապ լաճեր քյե կուրբան, ջան վիճակ, ջան
ծաղիկ, ջանե-ջան.
Վիճա՛կ, անունըա Նիգյար, ջան վիճակ....
Աչկով տնելն ի քյու քյար, ջան վիճակ...
Ազապ լաճեր քյե նոքյար, ջան վիճակ...
Ես վիճակ չեմ, յալդուզ եմ, ջան վիճակ...
Պարակ մեճացս շալ կուզեմ, ջան վիճակ...
Ազապ լաճեր լալ կուզեմ, ջան վիճակ...
Վիճա՛կ, աըե քյե սանեմ, ջան վիճակ...
Տոնսե-սանիս քյե խանեմ, ջան վիճակ...
Ազապ լաճեր ախ անեն, ջան վիճակ...
Վիճա՛կ, անունըտ Մանուշակ, ջան վիճակ...
Տայտ փոուկ կուժնի դոշակ, ջան վիճակ...
Ազապ լաճեր քյե մշակ, ջան վիճակ...
Վիճա՛կ, քյու լեզուն բլբուլ, ջան վիճակ...
Նման ես սարի սմբուլ, ջան վիճակ...
Ազապ լաճեր կյան քյե կուլ, ջան վիճակ...

Մոտակայքում թոքնված ազապ տղաները, հանկարծակի դուրս գալով թաքստոցից, վիճակը փախցնելու փորձեր էին անում։ Վրիպելիս ավելի էին ենթարկվում ծաղրանքի, հաջողության հասնելիս, կաշառքի խոստումներ ստանալով, վիճակն անվնաս վերադարձնում էին տերերին (ըստ որում, սա էլ սովորություն էր և կատակից այն կողմ չէր անցնում)։

Ասպարածնից վերադառնալով քանդում էին վիճակը։ Չորսից հինգ տարեկան աղջիկների իմացականությունը փորձում էին, և այն փոքրիկը, որ դեռ ճշդրիտ չգիտեր թե արևը որ կողմից է ծագում, հարսիկ էր ընտրվում։ Նրա գլուխը ծածկում էին քողով ու վիճակը հանող այս հարսիկին սովորեցնում էին, թե ամեն անգամ, երբ ասում են՝ «Խարս, խան վիճակն պյարի, խամբարցում քյու դիլաք կաաարի», նա պետք է ձեռքը մացնի սեռիկի մեջ ու մի որևէ իր դուրս բերի։

Այս անգամ արդեն սկսվում էին վիճակահանման չափածո կարճ ասացվածքները.

Օրինակ՝ Տիքրիս խասավ կյեա Մուրադին,
Տյու էլ խասար քյու մուրադին,
Խարս, խան վիճակն պյարի,
Խամբարցում քյու դիլաք կաաարի։

Հարսիկը դուրս էր բերում մի իր։ Մուրազին հասած տերը ուրախանում էր։ Հաջորդ ասացվածքը հաջող չէր լինում, օրինակ՝

Քյու խոը, քյու մոր ինչ մեդ աըրած,
Քյու ճայտի կյիրն էա էր կյրված,
Խարս, խան վիճակն պյարի,
Խամբարցում քյու դիլաք կատարի։

Անհաջող ասացվածքից իրի տերը տխրում էր, և այսպես շարունակվում էր մինչև «աջխարհի շարն ու բարին չիմացող» քողածածկ հարսիկը

վիճակի փորից՝ դուրս է բերում ամենավերջին իրը։ Վերջանում են Համբարձման տոնակատարությունը։ Վիճակի ջուրը թափում էին կտուրը, որ չկոխկրտվեր։

Համբարձման տոնի հետ կապված էին նաև մի շարք կախարդելու ձևեր, որոնք 1896 թ. կոտորածներից առաջ արել էին նախապաշարված, սնոտիապաշտ կանայք, ինչպես, օրինակ՝ գիշերով ավելը հեծնել ու իրենց տան շուրջը յոթ անգամ պտույտ գալ, սակայն կոտորածն ընդմիշտ ջնջել էր այդ սովորույթը և դա արդեն ծիծաղելի հուշերի շարքն էր անցել։

Վարթավար (Վարդավառ): *Այս տոնը Արճակում նշվում էր միմյանց վրա ջուր շպրտելով։ Ջուր էին նետում առանց հաշվի առնելու դիմացինի տարիքն ու հասարակական դիրքը։ Ջուր էր շպրտում չխոսկան հարսը կեսրայրի վրա, իր կյանքում քավորի ներկայությունից փախչող սանամերը, եթե հաջողացներ քավորի վրա իր թաքստոցից ջուր շպրտել, կաներ առանց երկմտելու։*

Վարթավարի այդ կիրակին նույնպես արճակցիներն անցկացնում էին իրենց ավերակ Ասպարածնի ծառերի տակ, այնտեղ եփելով մի-մի հավի մատաղները։

Սուրբ Գևորգ (սուրբ Գեորգ): *Սկսած Վարդավառի տոնից մինչև սուրբ Գևորգի տոնը, ներառյալ Աստվածածնա ու Սուրբ խաչի տոնը, տոհասարակ գյուղացու աշխատանքային ամենաեռուն ժամանակաշրջանն էր։ Այդ ժամանակամիջոցի համար էր հորինված «կյանքի մեռել պիտի խանեն, պանդուխտն» փոխաբերական ասացվածքը։ Այնինչ, ս. Գևորգի տոնից հետո իշխում էր արդեն «գյախավերը կալից էկավ տուն» փոխաբերականը։ Նշված տոնից հետո հիմք էր դրվում որոշ չափով խաղաղ կենցաղին։*

Ս. Գևորգի հնգօրյա պասից հետո, շաբաթ օրը, թեև ոմանց համար դեռ «գյախավերը կալից չէր էկել տուն», այսինքն՝ կալի աշխատանքները դեռ ամբողջովին չէին ավարտվել, այնուամենայնիվ, մնացած չնչին գործը երբեք էլ հիմք չէր ծառայում, որ նման ընտանիքների երիտասարդ անդամները չմասնակցեին Վան-Տոսպ գավառի ս. Գևորգի վանքի համաժողովրդական տոնին։

Շաբաթ օրվա կեսօրից սկսվում էր ուխտագնացության պատրաստությունը։ Ուխտագնացությանը մասնակցում էին բնակչության տասնչորս-տասնհինգ տարեկանից մինչև տարիքն առած երկսեռ անդամները։ Ս. Գևորգի վանքը գնում էին արճակցի ու խառակոնիսցի ուխտագնացները՝ միասին, յուրաքանչյուր գյուղն իր ղեկավարով, նաղարա-զուռնայով։ Ս. Գևորգ հասնելուն պես, վանքի կառավարիչներն այդ երկու գյուղերին առանձին-առանձին սենյակներ էին հատկացնում։

Ս. Գևորգի ուխտագնացության երթը սկսվում էր երեկոյան։ Տեղ էին հասնում արևածագից առաջ։ Արճակցիներն սպասում էին մինչև խառակոնիսցիները հասնեին Արճակի ներքևը, իրենք ևս գյուղից դուրս էին գալիս, միանում ու մեկտեղ ուղևորվում։ Ուխտագնացությունը մեծ մասամբ լինում էր հետիոտն, բացառությամբ ձի ունեցողների։ Ուխտագնացների հետ էին լինում և մի քանի փասինասայլ կոչվող թեթևաշարժ սայլակներ, որոնց վրա բարձվում էին ուխտավորների ուտելիքի պաշար- կապոցները։ Երկու գյուղի սակավաթիվ ձիատերերն էլ իրենց ձիերը տրամադրում էին ծանոթ-բարեկամների հասուն աղջիկներին, իսկ իրենք իրենց ձիերը նստում էին, երբ տեղ էին հասնում։

Ս. Գևորգի ուխտագնացությունը տևում էր երեք օր։ Այդ նույն շաբաթ երեկոյան, երբ ուխտավորները պատրաստվում էին ճանապարհ ընկնելու, տանը սկսվում էր հարիսա դնելու *գործողությունը։ Հավով հարիսա, թե մսով կորկոտ, արճակցիների ձմեռային կերակրացանկում միշտ էլ կարևոր տեղ էր գրավում, սակայն ս. Գևորգի տոնը պետք է նշվեր հավով հարիսա եփելով։ Հարիսա էին դնում բոլորն անխտիր։ Ամենասակավանդամ ընտանիքը պետք է դներ երկու հավով հարիսա, իսկ բազմանդամների տներում այդ օրը մորթվում էր ութից տասը հավ։ Այս հարիսային նաև* կալի կորկոտ *էին ասում։*

Տիրամոր ուխտագնացությունը: *Աստվածածնա տոնը ամենուրեք նշվում էր նույն օրը։ Ասպարածին վանք ունեցող արճակցին պարզ է, որ Աստվածածնա տոնի օրը չէր գնա մի այլ տեղի Աստվածածնա վանքի ուխտին։*

Դարավոր հարևանությամբ և հազար ու մի ազգակցական թելերով արճակցիներին կապված Խառակոնիս գյուղը ևս Աստվածածնա տոնին Արճակի Ասպարածնից չէր բացակայում։ Հենց այդ պատճառով էլ այդ երկու գյուղի բնակչության պատմական սովորույթն էր ամեն տարի աշնանը, այն է՝ ս. Գևորգի տոնից հետո, միասին ուխտի գնալ Թիմարի գավառի հռչակավոր Տիրամոր վանքը։ Այդ վանքը բոլոր բնակավայրերից այդտեղ գնացած բորոտների գլխավոր ապաստանն էր։ Տիրամոր վանքն ստացել էր մի քանի

պատվանում, օրինակ՝ **Ջառաճ-ճեֆիմ** (թարախաբուժ ըժիշկ), **կանաչ չոմբար** (իբր Քրիստոսի մոր գլխաշորն էր վանքի հիմքի տակ թաղված), **Թալաֆյ ֆյմբեթ** (գմբեթը տարբեր գույնի քարերից էր կառուցված)։ Իսկ քրդերն ու թուրքերն այդ վանքն անվանում էին **դերա բայաֆյ**:

Տիրամոր վանք ուխտ գնալու կանոնները նույնն էին, ինչ ս. Գևորգինը։ Սակայն այս վանքըն ավելի հեռու էր և ոչ թե Վանի կողմն էր ընկնում, այլ Բերկրիի, ուստի խառակոնիսցիներն էին իրենց գյուղում սպասում արճակցիներին, ու ապա շարունակում ճանապարհը։ Եթե ս. Գևորգի առնն ուրախ երգ ու պարերի, զանազան զվարճությունների ականատես լինելու բազմամբոխ մի տոն էր Վանի նահանգի բոլոր բնակիչների համար, ապա Տիրամոր ուխտագնացությունը աշխատանքից թեթևացած այս երկու գյուղերի բնակիչների համար շրջագայության բնույթ էր կրում։

Նրանք գյուղից դուրս էին գալիս ուրբաթ օրվա կեսօրին, գիշերում էին գավառի վերջին գյուղում՝ Հաջփշատում ու շաբաթ օրը մայրամուտին հասնում վանք։ Կիրակի առավոտյան տեղում դնում էին մատաղացուները, եփում, պատարագ անել տալիս և մայրամուտին, դուրս գալով Տիրամեր կոչված գյուղից, ամբողջ հինգ օր, օրը մի գյուղ շրջում։ Այցելում էին Թիմարի՝ Գոբծոթ, Էրերին, Կյոսնենց և Համկուբերդ հայկական գյուղերը, իրենց հետ բերած ձավարն ու չոր փոխինդը գյուղացիների հետ փոխում ծիրանի չրով ու ընկույզով և յոթերորդ օրը կեսօրին տուն վերադառնում։

ԺԱՄԱՆՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ծըվլի-ճըվլի: (Փոքրահասակ մանուկների առաջին խաղերից)։ Մանուկները նստած աեղը մեկը մյուսի ձեռքերի երեսի մաշկից բռնում էին. և մի քանի մանկական ձեռքեր իրարից բռնած, բարձրանում-իջնում էին, ու երեխաները միաժամանակ երգում էին.

Ծըվլի-ճըվլի,
Ակլա ճըվլի,
Աղեն կյնաց
Երուսաղեմ,
Պուրթ ի պիրե,
Պամրակ չիպե,
Շալ արաց,
Շըլվար չարաց,
Ուրն արաց,
Լաճուն չարաց։
Թո՜ւռ, ճուճուղի՜կ...

Վերջին ճուճուղիկ (ճնճղուկ) կանչի հետ բոլորն էլ ձեռքերը բաց էին թողնում ու նայում վեր։

Դըռմփինա: Մանուկները նստած ձեռքերը բռունցք արած, բութ մատը վերև ցցելով, մյուսի բռունցքի մեջ տեղավորելով, կազմում էին իրար միացած բռունցքների շարք և բարձրացնելով ու իջեցնելով, երգում էին.

Օմ-փինա,
Դըռմփինա,
Ծոչն իլե
Օմփի բաշի,
Պստիկն իլե
Ջլաշ գաշի,
Աղեն կասի՝
Վիրին քյաշի։

Վերջին խոսքի վրա վերևի ձեռքը շղթայից անջատվում էր, իսկ մնացածները շարունակում էին նույն երգը, նույն համաչափությամբ՝ վեր ու վար անելով ձեռքերը։ Սակայն այս անգամ ասվում էր՝ «Աղեն կասի արկին քյաշի» և ամենաներքևի ձեռքն էր պոկվում ընդհանուրից։ Այսպես, մինչև բոլոր ձեռքերն էլ «աղայի» հրամանով հեռացվում էին. ամենավերջին ձեռքը ստանում էր «Օմփի բաշի» պատիվը։

Կյըգրի կըևգաճ պայարճ: Երեխաներից մեկն իր զույգ ձեռքերի չռած մատների ծայրերը միացնում էր իրար, ու ստացվում էր չորս բացվածք։

Մյուսը սկսում էր բաղարճի խմոր հունցելու արարողությունը, ընդ որում, ծիծաղելի կերպով՝ մերթ քթից ծորացող ջուրը ենթադրյալ խմորի մեջ խառնելու շարժումներ, մերթ թեատակի կամ գլխի մազերի մեջ վաղվգող ոջիլները բռնելու ու խմորի մեջ գցելու ձևեր անելով, վերջապես ավարտում էր «խմոր հունցելը» և մոտենում նստածին ու «խմորը» ձեռքով նրա բաց մասների (սկզբում ճկույթի) արանքը մտցնելով, հարցնում՝

—Էսա վի՞ր թոներն ի։
—Ես այսինչի,—պատասխանում էր խաղընկերը։
—Մեչ կրակ կա՞ իմ պաղարձ թխեմ։
—Չկա,—պատասխանում էր «թոնրատերը»։

—Վո՜ւյ, բ....մեչ,—հայհոյում էր խմորատերը և ձեռքը մտցնում միջամատի ու մատնեմատի արանքը։

—Էսա վի՞ր թոներն ի։
—Բավար այսինչի,—լինում էր պատասխանը։
—Մեչ կրակ կա՞ իմ պաղարձ թխեմ։
—Չէ, էսա թոնրան մեչ կատուն ծյար ի խանե։

—Վո՜ւյ, խարամ ըլնի բավոր այսինչի տան հաց,—հայհոյում էր խմորատերը և ձեռքը մտցնում միջամատի ու ցուցամատի արանքը.

—Էսա վի՞ր թոներն ի։
—Տերտերոչ,—լինում էր պատասխանը։
—Մեչ կրակ կա՞, իմ պաղարձ թխեմ։
—Մեչ պծոռ կեր, ժամխարն էկավ տարավ։
—Վո՜ւյ, ժամհարի խեր շուն տանի։

—Էսա ճոչ թոներն վի՞րն ի,—հարցնում էր խմորատերը, ձեռքը մտցնելով թոնրատիրոջ բթամատի ու ցուցամատի արանքը։

—Մերն ի,—լինում էր պատասխանը։
—Մեչ կրակ կա՞, իմ պաղարձ թխեմ։
—Հըլին կրակ ի,—լինում էր պատրաստակամ պատասխանը։

«Ծղրի կինը» հապար ու մի սխալ շարժումներով վերջին «թոնրան» մեջ թխում էր իր բաղարձը, «թոնիրը» ծածկում և «խմորի տաշտը» տանում տիրոջը հանձնելու։ Մինչև նրա վերադարձը, թոնրատերը թոնրից հանում էր բաղարձները, որն «ուտում» էր, որը «թաքցնում» ու ձեռքերը իրարից անջատելով՝ նստում։
—Դո՞ւ են բառեզի թոնրրներ, դո՞ւ ի բառեզի թոնրատեր,—լացակումած հարցնում էր «ղղրի կնիկը» դեսուղեն ման գալով, այնինչ թոնրատերը հանգիստ, նրա աչքի առաջ նստած, ուտում էր բաղարձները։

Խաղը սրանով էլ վերջանում էր։
Պապիկ-պապիկ (խմբախաղ): Մի քանիսով մեկի աչքը կապում էին, ձեռնափայտը ձեռքը տալիս։ Վերջինս կորացած մեջքով, փայտը թրխփացնելով «ուղևորվում» էր։ Երեխաներն ըսկըսում էին ետևից վազել։

—Պապիկ, պապիկ, ո՞ւր կէրթաս,—հարցնում էր նրանցից մեկը։
—Կէրթամ ժամ,—տխրաձայն պատասխանում էր պապիկը։
—Ջիկ էլ տանե՞ս։
—Ախըր վախենամ համրխեն ըլա...

—Չէ՜, պապիկ, չեմ ա...ըրթու տան խաց խաբամ ըլնի. թե որ ես ա...,—և բոլորն էլ կուզիկ ձևանալով, շարվում էին պապիկի ետևից։
Պապիկը շարունակում էր իր երթը։ Հետևող երեխաները սկսում էին շրթունքներով պրո-պըռ ձայներ արձակել։ Պապիկը վրդովված կանգ էր առնում, ձեռնափայտը պտտեցնում աջ ու ձախ ու լացակումած կանչում՝
—Էսա ո՞ր շան թուլեն էր աղոթքս խարամեց։
Խաղընկերները լռությամբ փախչում էին տարբեր կողմեր։ Իսկ «պապիկը» ձեռնափայտը պտտեցնելով, որոնում էր «շան թուլաներին»։ Եթե հաջողվում էր ձեռնափայտը որևէ մեկին կպցնել, ապա տվյալ երեխան փոխարինում էր պապիկին, եթե ոչ՝ պապիկը մնում էր իր դերում, և խաղը կրկնվում էր։
Քյարափոսիկ: (Առավելապես աղջիկ երեխաների սիրված խմբախաղերից)։ Հավաքում էին հին, քայքայվող պատերի ներքեր թափված փոշիացած հողը, կիտում բրգաձև, բրգի գագաթից խիստ զգուշությամբ ջուր էին լցնում, որ հողակույտը մինչև ներքև թրջվեր, սակայն արտաքին տեսքը չխաթարվեր։ Շուրջանակի շարվում էին և նույն փոշիացած հողով, խիստ զգուշությամբ, գագաթից մինչև ստորոտ իրենց ափերով տրորելով հողակույտը, կրկնում էին՝

—Քյարափոսիկ, մազ տուր։

Երբեմն-երբեմն դադարեցնում էին աշխատանքը և «քյարափոսիկի» վրա ցանված փոշեհողը ետ տանելով, ուշադիր նայում, թե քարափոսիկի վրա մազ երևում է, թե ոչ։
Հենց որ մազ նկատեին, քարափոսիկը մաքրում էին վրան լցված հողից։ Այդ պպուշ և չընդհատվող շփումից հողակույտի արտաքին կեղևն արդեն ամրացած էր լինում։ Հետո ստացված բուրգի շուրջը նստած խաղացողներից յուրաքանչյուրը, իր բաժին «հողամասի» առաջ չոքած, իր քարափոսիկի ներքևի մասում տան համար

մի դռնակ էր բացում։ Մի «դուռ» էլ բացում էին Քարափոսիկ «դյուղի» գադաթին, ապա ղդուշությամբ, մասի ծայրով ամեն մեկն իր «սան» ներսը եղած հողը դուրս էր քաշում, մինչև մնում էր մի երդիկով ու մի քանի դռնակով, որոշակի, ամուր, միակտուր մի կառույց, որի «երդիկից» ընկած լույսից կարելի էր նշմարել քարափոսիկի ներքին դատարկությունը։

Խաղացող յուրաքանչյուր երեխա իր դռան առջևը դուրս բերված հողափոշուց իր «սան» առաջ պատ էր քաշում, ներսում ղանաղան չոփեր անկելով, իր համար «բաղչա» էր ստեղծում և հետո, հերթականորեն, քարափոսիկի «երդիկից» ջուր չրն լցնում ներս։

Երդիկից լցված ջուրը դատարկ քարափոսիկի միջով հոսելով, դուրս էր գալիս աղմկող «սանաերերի դռներից» ու լցվում նրանց ծառաստաններն ու բախչաները։

Խաղից հոգնած, միահամուռ ջանասիրությամբ երեխաները ավերում էին իրենց «դյուղն ու բաղչաները» և ցրվում։

ՀՈԴԱՆԵՐ

Ինչպես ամենուրեք, Արճակում ևս հնամենի սովորույթ էր ձմռան երեկոներին տղամարդկանց հավաքվելը մի քանի հոդայում և ասուլիսով երկար դիշերները կարճելը։ Հոդաները, որ «Դիվանխանա» ընդհանուր անուն էին ստացել, ախոռի առաջին բաժանմունքի մի մասն էին կաղմում, որի վերևի ճակատին կար մի լայն բուխարի, իսկ հատակին փռված էր լինում կտավասի չոր ցողուն (բալմ) կամ չոր խոտ, որն ամեն շաբաթ փոխում էին ու նորը փռում։ Թե՛ բուխարու վառ պահելը, և թե հատակին փռված չոր խոտը միշտ նորոգելը սանտիրոջ պարաքն էր։

Միջտ ավելի բաղմամարդ էին լինում Քյողարի Թաղի Մոլոյի դիվանը, Փոս Թաղի Կամրոյի ու Աիանսու դիվանները։ Եթե մեկի սանը հյուր էր լինում, ընթրիքից հետո սանաերն իր հյուրին ևս տանում էր իր հաճախած դիվանխանան։ Հաճախ այդ հյուրերի մեջ լինում էին ժողովրդական ավանդավեպերի, հրաշապատում հեքիաթների և այլ պատումների գիտակ մարդիկ, որոնք հոժարությամբ դիվանխանայում պատմում էին։

Իգական սեռը, որքան էլ տարիքով, դիվանխանա մուտք չուներ։ Հիշված երեք դիվանխանաների սիրված հյուրն էր Արճակում երեսուն տարուց ավելի ապրած, բայց միշտ նորեկ կոչվող ու միաժամանակ «կոունկ» մականվամբ մկրտված «Թաղահայերաց Մարտիրոսը»։

Մարտիրոսը կռունկ մականունն էր ստացել իր չափազանց երկար ու նիհար սրունքների համար։ Մոտ տասը տարի տեխնիկական աշխատանք կատարելով Վիեննայի Մուրատ-Ռափայելյան դպրոցում, շնորհիվ իր սուր մաքի, արտակարգ հիշողության և լսածը յուրովի պատմելու դերաղանց ունակության, Թաղահայերաց Կռունկը բոլորի համար էլ պատմելու նոր ու հետաքրքիր նյութ էր ունենում։ Նրա պատմությունները օրեր էին տևում։ Պատմածները լինում էին թե՛ աստվածաշնչային, թե՛ պարսկական ու հունական դիցաբանությունից վերցրած։

Կռունկ Մարտիրոսն ուներ ճոխ լեզու և յուրաքանչյուր պատում ձևակերպում էր յուրովի, օրինակ՝ աստվածաշնչային բոլոր պատմությունները անվանվում էին կամ «Տավիթ մարկյարեն էնան ուր գուշմըններ», կամ՝ «Կյապրել խրիշտակ էնան սատանեք»։ Պարսկական ամբողջ «Շահնամեն» անգիր պատմում էր, սակայն բոլոր հերոսներն ու փահլեանները դառնում էին «Ռուստամ էնան Սոհար»։ Ավելի սեղյակ էր հունական առասպելներին, որոնց կիսաաստվածները բոլորն էլ «Ճոչ-ճոչ դևեր» էին, օրինակ՝ «Ջիղի-պող դև» (Սիղիփոս), «Դանդալոշ դև» (Տանտալոս), «Կրակակլող դև» (Պրոմեթևս), «Հռոա դեվամեր» (Հերա) և այլն։ Կռունկ Մարտիրոսը հեքիաթասեր դյուղացոց անփոխարինելի ասմունքողն էր։ (Նա և իր պառավ կինն իրենց փոքրիկ խրճիթում սրախողող արվեցին 1915-ի եղեռնի հենց առաջին օրը)։

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱՎԵՊԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՔՈՒՉԱԿՅԱՆ ԱՎԱՆԴԱՎԵՊ[1]

Իմ պապիկնըրյ Առճակու Մառտոյի տան խետ խաչ-բավոր են իլե։ Մառտոյի տուն կնումըյ կյընի, Նախոն[2] էլ էտր վախտ տրաշուրս տարեկան կյընի, կյուրոխկեն էրթա բավրութեն անելու։ Մառտոյի տան կընըյաճաշին ժողվըռտված մարթերից մենյն կասի.— Ծո, մարթեր, իկեք կյտռալավեժ անենըյ։

—Խա, վալլա, անենըյ։

Տուն կըփակեն։ Ըստեղ, էոր մեր լաճու լեզին կըկտրի։ Զունրի չուր էտօր տաղ ասած չի իլե։ Աղաճանըյ-պաղատանըյ կանի, կասի.—Ես չեմ կոնա տաղ ասե,—կըտխինա պյանի տեղ տըող չկա, գըլխս կուգա։

Էար Մառտոյի տան պառավ (օղորմի ուր խոկյուն), ըր խոսր լոց կըտխինա կասի.— Քյա, մարթեր, պյուրյ ըիթունտ էլ ըր ըստեղ կարյ, մեր աշկի լոսն երյ, համա էսր ահաթին, մեր պստիկ քավոր ըիթունիցըտ աստվեծն ի, ծե մեռնեմ, էն իկեր ի մեր տուն խաթրումն ի խալյե, ռափ-լաս մեռան՝ էն ուր կըկյովն ի պիրե մեր տուն, տուրյ մկա մեյ տաղ ասելու խամար ինսր կըպցպցուցե՞ր։ Չի ուզե, թո չասի։ Թո էթա բաղշեյթեր կան կյա, ֆաստխյամիշ ըլնի։ Սորա այուս կպանա՝ Նախոյին կխանի այսու։

Նախոն ի՝ մալուլ-մութ կէրթա կմտնի Ֆստնդյուլի բաղշեն, կոպակի ծառի տակ, քյուն կտանի։ Մեկ էլ կտխինա, որ ախպըրի թարաֆեն ծիյավորըմ էկավ, կայնավ վեր ուր կյլխուն, ծեռն էլ մեյ սակի թաս, ծեն կուտա, թե՝

—Աշըղ Չիչագ, առա էսր ճուր, խմի՝ կընա քյու տաղն ասա։

Նախոն թաս կըվերուցի, մեչու ճուր չում տայ կըխմի։ Սորա, կըտխինա, որ թասի մեջ մեյ խատ սիպեռ կա։ Ծիյավոր կասի.—Դե, տյու էտր սիպեռըն առ, արև խըղըրաց էրթանըյ Պաղում խաչեր։ (Պաղում խաչերն էլ էտր սեղեն էփեզա սատ ի)։ Նախոն ծիյավրու խետ կէրթա կըխասնի Պաղում խաչեր։ Ծիյավոր կասի.— Դե, էտը սիպեռ քյու գյոմփով պիտոր էսը խաչ-քարի մեչտեղ։

Նախոն գյոմփով սիպեռ կըդանի մեչ խաչ-քարին, կիրիշկա ուր խտեվ՝ ծիյավոր չկա, կիրիշկա ուր առճեվ՝ կըտխինա սիվտայ խաչ-քարի մեչտեղ թաժա ղարկած սիպըռի կյլոխ կըպսպըղա։

—Յա˚, էսը ի՞նչ պյան էր, ախըր ես քյնիր իմ Ֆըստնդյուլի բաղչեն, այխիր եմ Պաղում խաչերաց մոտ...

Թիրդան կըխասկնա, որ դոլու խմելու էըած ի տեսե։ Կըլնի, կէրթա, կմտնի Մառտոյի տուն։ Կըտխինա՝ որ նստած մարթեր հալա ուրանց կյառալավեժ չեն պրծե։ Կըմտնի ներս թե չէ, էլ նյա ամոթ, նյա գամոթ, կըշոքյի սան տակ, ծեռ կըդանի սիրնչին, տաղ կըկանչի։

—Աշըղ Չիչագ խառակոնսա,
Կյովամ պյարի լոսն, կյովամ,
Խոսնի ծիյավոր Առճակ ախսա,
Մեռնեմ պացվող պյարի լուսուն։
Պաղում խաչեր՝ քյու տուն խասա,
Ծունգըր եմ դարկե պյարի լուսուն։

Նախոն ի քըլըրըի պես պյարի լուսու կյովըյ կանի։ Էսր առճակցիք կըթներոնեն-կմնան, կասեն.
—Ծո˚, պստիկ քավոր, պյու որ ըսըսկնեմ անուշ ծենի աեր ես, համ էլ ըսըսկնեմ տաղ ասել կիտես, էլ ընչի՞ մե կըխափիր։

Նախոն էլ տաղ ասելով կըսա կանի, թե՝ ըսըսկնա, ըսըսկնա պյան ի իլե։

---

[1] Պատմեց Աշտարակի շրջանի Հաղս գյուղի վերաբնակիչ, խառակոնիցի Փանոս Չիչագյանը, 1940 թ. օգոստոսին՝ Հաղս գյուղում։ Նա Չիչագենց տոհմի, եղեռնից մազապուրծ, վերջին շառավիղն էր։

[2] Խառակոնիսում և ընդհանրապես Արճակի գավառում տարածված ավանդության համաձայն աշըղ Չիչագը (Քուչակը) խառակոնիցի Նախոն (Նահապետ) է եղել, որն իր ծնողներն ու աշուղի իր անունը երազով ստացել է Արճակի լճի ձիերեր բաշխող գիրեգեն մարթուցը։

Էտը առճակըցիք կըլնեն ըիթումով կէրթան Պաղում խաչեր, կիըիշկան, որ աղորթմանց սիվտայ խաչ-քարի մեչտեղ մեյ խատ թաժա պիպեռ պիպոռւկ։

Փառքյ կուաան աստըծուն, ըիրագի էլ կաըեն.— Տյու աղորթմանց աշըղ Ջիչագ ես, որ աշըղ Ջիչտգ։ էլ ի՞նչ Նախո, էլ ի՞նչ պստիկ քավոր, աշըղ Ջիչագ, ու աշըղ Ջիչագ։

Ինչ որ կըղըուցի, տաղ ասելով ի կըղրուցի։

Դորիս, տաղ տսելով Մառտոյի տան ճոչին կասի.— Քավոր աղա, ես ըստեղեն գողրի պիտի էրթամ դեխ Մշու Աուլթան սըփ Կարապետ։ Տյու քյու քավըրակտն պենով ձիկ օխնանք տուր, համ էլ չարխըներս ծակ են, ձիկ մեյ ջուխա թաժա չարուխ տուր։

Էտը մարթն էլ կասի.— Քե կուրրան քավոր Ջիչագ, քյանի ոը տյու գուլու խմելուն ես արժանացե, հալբաթ որ սըփ Կարապետ պիտի էրթաս։ Ծո՛, օխնանքյ չէ, խոկյիս էլ կուտամ. մեյ ջուխտ չարուխ չէ, մեյ եղան կաշի քյե կուրրան, համա տյու ձիկ ականշ արա, մեյ խատ կընա ծեր տուն, քյու խոր, քյու մոր ծեռքըներ պաքյի, ինոնց օխնենքյներն առ, նոր ինգյի քյու մուրաղի ճամրախ։ Ի՞նչ կիտես եփ կըտառնաս ետ։ Դե, բալամ, մախ-մեռ որ կա՝ հիսանին ի, առանց մոր ծըծի կաթի, խոր տըված ամագի խալալութեն ուզելու, ավլագ ասածըտ ղատու ճամրախ չի էրթալու։

Ջիչագ կասի.— Ջի ֆայմե, քյու պյարի խրատ նըկատարեմ։

Կուկյա տուն։ Ջիչագին էլ մեյ քյոր էլ կըլնի, էրկու աչկով կոր, համա շատ իմաստուն ախչիկ կըլնի։ Էտը էլ էտ օր էրագի մեչ տիսեր ի, որ Առճակու Թարաֆեն ծիյավորըմ՝ ոսկի թաս ծեռ պըռնուն, էկավ մտավ ուրանց փայախ, ծեռ թալեց ուրանց բող որթըկան վիգ, ասաց,— Աշըղ Ջիչագի ծի՛, քյու տիրոչ խըմածից այո՛ւ էլ խմի։ —Էար թասի միշուն խըմըցուց բող որթըկան։

Քյորն ուր տիսած էրազ նաղլ ըրած կյախին, ախպեր առնից կըմանի, կըշոքյի խոր-մոր առաճ, տաղ ասելով կըսա կանի, որ ինքըն աշըղական գուլու ի խմե։ Մեյ կիշեր էլ կըմնա, տաղ կասի, սորա՝ կինի ուր մուրաղի ճամրախ։

Էն էրթալն ի, կըքյաշի չում տասը տարի։

Արփ Կարապետ (աս ծե էլ մուրաղ) աշըղ Ջիչագին կյրապյաո կիր կալամի էլ շնոխքյ աված կըլնի։ Համ էլ թյությանքի շնոխքյ։ Էար տաս տարվան մեչ սաղ աշխարքյ կան կուկյա։ Դոր էլ որ կէրթա՝ անուն կըխանի։ Վասալամ, մեկ Անատոլու, մեկ աշըղ Ջիչագ։

Ջուր ետ կըտառնա, խերն էլ. մերն էլ ծեր ըավ տարած կըլնեն։

Մնացե մենակ կոր քյոր։ Բոգ որթիկն էլ տաոցեր ի մեյ չըլսնված, չտեսնված մարալ եղ։ Էտը եգան խետ քյտյլան ծիյանքյ չեն կառցե ոտ թալել։ Ջիչագն ի՝ կըմնա ուր տուն. կըփսակվի, կըտառնա ռիժ-պըժի տեր։ Համ ռենչրարութեն կանի, համ աշըղութեն։ Քյայլան բող եղ տտկ. սըփ Կարապետաց պիրած դավթար ծոց տըած, սազ թեվ թալած, գվիթ-կալամ գոտիկ՝ ըխտատեղրանք կան կյալով օր կընցուցի։

Մեյ տիր Ջիչագ՝ ոտպոպիկ, պյախ ծեռ, մեր տըռան առտի մեչ ճուր կանի, մեկ էլ իրեքյ խաս ենի-չարի կուկյան կըկտյնեն վեր կյլխուն. էն մեկն կասի.— Օլան ռենչրար սան, բու քյոյլի սան։

Ջիչագ ջույար կուտա.— Աղա, սան գողըու սան։

Էն մեկելը կասի.— Աշըղ Ջիչագըն ավի բուլուրսըն։

Ջիչագ կասի.— Աղա բյուլ, մանըմ։

Էն իրեքընշին կտսի,— Օլան, օ, աշըղա բանաըսըն։

Ջիչագ ջույար կուտա,— Թան, մանըմ։

Սըրա, կտիսնա որ ենի-չարիյթեր ուր ասածից պյան չխասկըցան, ծեռով մեր տան տեղ շտնց կուտա, կտսի,— Տյուք կնացեք էնա տուն, նստեքյ՝ ըոհաթցեքյ, չում էտը տան տեր ուր պյանից պըռծնի կյա ուր առնւ։ Ենիչարիյթեր կուկյան մեր տուն կընստեն։ Ջիչագն էլ առափ ճրեյ կըպռծնի, կուկյա առնւ։ Ենի-չարիյթեր ոը ինոր կըտիսնան՝ կըթերըռեն, կասեն,— Ա՛յ տվարհարի, տյու մե ընչի՞ խափիցիր, ասիցիր՝ ես նյա՛ աշըղ Ջիչտգի տուն կիտեմ, նյա՛ էլ ինոր կիտեմ։

Ջիչագ կըծըծղա, կասի,— Այ աղանըրս, ես մեկուտ ասիցի՝ բյուլ մանըմ, յանի թե, կիտցի՝ ես եմ։ Մեկելիտ էլ ասիցի.— Թան, մանըմ, յանի թե, ճանչըցի՝ ես եմ։ Համա որ տյուք ծեր լեզուն թամամ չեք կիտե, սուչն իմ չի։

Ջիչագի կնիկն ի, կըլնի խաց կըպիրի կըտնի առաճներ, կուտեն, կըպըռծընեն, նոր էտը ենիչտրիյթեր կասեն։

—Աշըղ Ջիչագ, կիտե՞ս, մենքյ որ կանըյ, բոշ-մոշ ենի-չարիյթեր չենք, մենք Սուլթտնի նոքյարներն ենքյ։ Սուլթանի հըմենից շատ թանգ-վաղիղ հարեմ, մեյ լաճ տղա ի պիրե, Սուլթան կամիցեր ի որ էար ճիժն ըլնի ուր թաքյին ժառանքյ, համա հարեմին չարոց ի տիպե, ծըծերաց մեչ կաթ չկա։ Ճիժն էլ ուրիշի ծըծի սըտուկ չի պըռնե, կիշեր-ցերեկ կըվընգյըստա։ Հարեմին ասիր են՝ քյի Անաաոլույի մեչ մեյ խաս

աշըղ գա, անուն Ջիշագ, որ սյու էտը աշըղի տաղ կանչեյ լսես, քյու սիրտ ըսկուն կըմռմռա, ըսկուն տիժարյամիշ կըլնես-լաց կուլաս, որ ծըծներացտ ախպըրի պես կաթ կըփըլփխա։ Սուլթանն էլ մե ամըր ի արե, Լկանք քյե տաններյ Սաամրոլ։

Սուլթան մե որ ի ավե, որ անկյընանք, մեր միգ կգանի։

Ջիշագ կասի.—Սուլթանի ամըր անկըընցնելու րսկի իրավունք չկա։ Կըլնի վեր, ուր գավթար կըտնի ուր ծոց, գըլխթ-կալամ կըսնի ուր գոտիկ, ասպ կըթալի թե, րոզ եղ կխեծնի, կիննեն համրախ։

Կեսգից որ կըլնեն սյուս, Ջիշագ իտոնց Առաքու Ասպարածին շանց կուտա. կասի.—Ես որ գատու համրախ կէրթամ, առաջ-առաջ պիտի մանեմ Լնր վանք, իմ աղոթքն անեմ, նոր էրթամ իմ կնոլիքյ համրախ։ Մըկա այուք ծեր իկած համխով կընտցեր գեխ Ստամրոլ, ես կուկյամ ծե կըխասնեմ։ Համա պյան ի, որ ծե չխասա, տյուք Ստամրոլա մոտ իմ համխեն պախեք, որ ըսկուն ըլնի շորսը էլ խրնդրաց կայնենք Սուլթանի տան տառե խտ՞ւ—Կասեն՝ խա՛, վալա՞հ, խա՛։

Նոր-շարիյթեր ուրանց Լկած համխով կէրթան գեխ Սաամրոլ, Ջիշագն էլ կէրթա դեխ Առաքու ճոչ կյետ կընցըրնի։ Առաքու խուտըրղներ ստուկ չարուխ կըչինեն, ինտ որ Ջիշագին կըախսնան, կխոտշինած չարուխներ կըպըննեն ծեռըրներ, խա-գալով կուկյան՝ առաջ կըպռնեն տաքերեն սաղ անելով խանելուկ կասեն.

Աշըղ Ջիշագ՝ ինմիշ բոյի, միշ բողի, միշ բողի,
Բիր ալլահ գըր, բիր օղի, բիր օղի, բիր օղի.
Օ, բիմա գըր, բիր բունի վար, կըոխ գողի,
կըոխ գողի, կըոխ գողի...

Ջիշագ չի կանա էտը խանելուկ խանի։ Աշըր-գական ադաթով էլ օրենքյ չկա, որ թողնի ընցընի։ Ճոռ-փոռ եղան կյոխ կըշըռմի եա։

Կրիսանի առն, քյուրոշ կասի.—Ծամքախըս ադուքով չի։ Առաքու խուտըրղներ խանելուկըմ առեցին՝ չկտացա խանել։ Քյոր կասի.—Մկա խա-նելուկ քյու միտն՞ ի։

Ջիշագ խայերեն կասի.

Աշըղ Ջիշագ խնծե բողին.
Մեկ տապածն ի, մեկ ինըն.
Էն վիրն ի՝ մեյ բիթ կա, բառսուն աշկ։

Քյոր կասի.—Ասպած քյու առն ակոլ չանի. Լար ի՞նչ գոռ պյան ի, որ չես կառցե խանել։ Էար շարուխն ի, մեյ բիթ, բառսուն աշկ։

Ջիշագ կըծըծղա. կասի.—Կիտե՞ս, չարխըններն էլ ձեռըրներ պռնուկ ինի։ Տո՛, ես իտոնց շարագա խելքին մեռնեմ, իտոնք ձիկ հըշկըոցու-ցեր են։—Կասի.—Մկայ էլ արեվմտոց ի. շուր ես իւասնեմ ճոչ կյետ. իտոնքյ էլ կնացած կըլնեն ուրանց աներ։ էլախսա մնամ վաղն էրթամ. կայ-նեմ էնաեղ. շուտ էտը խուտըրղներ կյան, իտոնց ջուլաբներ տամ, նոր էրթամ Ասպարածին, սորա՝ գեխ Ստամրոլ։

Մեկել օր կէրթա՝ էտը խուտըրղներաց ջուլար-ներ կուտա. կէրթա գեխ Ասպարածին։ Ասպա-րածնա տյարի տակ էրկու խաս պատիկ որթկարած կըլնեն։ Իտոնքյ էլ մե-մեկ խայերեն խանելուկ կասեն։ Մեյն կասի՝

Էն ի՞նչ ի, էն ի՞նչ. սերսուփ սախտըկի.
անջըրնջում ներկի
կյոնն էլ, կյըրվածքյն էլ։
Էն մեկելն էլ կասի.
Էն վո՞վ ի, էն վո՞վ. ոսկոռ տախաըկի.
նըղշուն սընդըկի.
մեչ նստուկ ծվանի։

Ջիշագ կասի.—Ծըժեր, համխիցս անկյըն-ցիր եմ, իկեր մեյն առեմ, մեյ թո մնա, իմ խուկյու արտըրն ըլնի, իմ կնացած տեղից առնամ, ծե թանդ ադիյա տամ։

Ծըժեր կասեն.—Աղեկ, մեյն առա, մեյ թո մնա վեր քյու խուկյուն պարտըրյ. մենք քյե կը-հանչընանք։

Ջիշագ կասի.—Սերսուփ տախտակ որ կա, էար իմ կայիմ կողով դավթարն ի, որ ես սըփ Կարապետուց եմ պիրե։ Անջըրնջում ներկ որ կա՝ էար իմ չխամրող, խաս բոյա թանաքյն ի։ Կյըր-վածքյներն էլ՝ իմ կյրած տաղերն են։

Որթկարածներ կասեն.—Ջէ, իրրոխպեր, չը-կտացար խանել։

Ջիշագ, մալուլ-մութ ետ կըդառնա տուն։ Քյոր կիմնա ինչ ի իլե, կասի.—Ես Առաջա-կու նաղս եթըմներաց պատըներյներ կարեմ, ժուռ կուռափ ըլնեն, որ էս էլ էրկու տիր ի քյե քյու դառու համխից ետ կըտառցուցեն։

Ջիշագ կասի.—Աման, քյուրիկ, քյու բախտն եմ ինգյե. էտը արթար ճժերաց մի՛ անիծե, իտոնց ասշն ի՞նչ ի, իմ ֆալմն ի մթնե։ Աստված վերա պյարին անի։

Վառալամ. էլմ էլ քյոր խանելուկներ կխառ-ցուցի, էլմ էլ Ջիշագ կըսա կանի, քյոր կասի.—Ախպերըս, աղորթ որ էս էրկու օր այս քյոռաֆայ-միը ես։ Ընչի այս չէս՞ կիտե. սերսուփ սախտակ որ կա՝ էտը Հիսանի ճակատն ի. Հիսանի ճայտի վրեն մազ չի պուսե։ Անջըրնջում ներկ որ կա՝ Հիսանի ճայտի կյիրն ի։ Ճայտի կյիր չի ջընջըվե։

Հիսանի ճայտի կյըրի ո՛չ սեվ-կարմիր կըճոկվի, ոչ էլ կյրվածքյ կըկաըթացվի։ Էսը մեկ, մկա մեկն էլ ասեմ՝ ուսկըոե տախտակ, նղշուն սնդուկ որ կան, իտոնք կըըըրի կոտն են. մեչու նստուկ ծվանն էլ՝ կըըըրեն ի։ Կըըըրեն խո ծաքյ չի՞ խանե, ծո՛ւ կտծի։

Էտը օրն էլ ըտըսկնա կմթնի։ Մեկել օր կըլնի վեր՝ քյուվֆըթին թաժադան կաց պյարեվ կանի, կէըթա։ Քյոը իտիվանց կկանչի,—Քյա ․տղա՛, մեյ պյան ինդյտվ միտըս. ասածու սիրուն, չըլնի շորաչկութեն անես, տաղ ասելու կյախ՝ աչկով-ընքյով չանե՛ս։ Ջաթի էտը ճոչ շնեըաց կըճեյթերն էլ ըստեռճ կովու կայդա մեյ պյան են, մեյ ուցեղենի խոտ որ առնեն, պընշներ յոթ դյագ կըլենցուցեն։ Ինոնց իըիսնեը չիրիշկա՛ս։

Դե, Ջիշադ ուր քյուըոչ խարըից ըսկի տյուս չէր ըլնե։

Կըլնի-կէըթա Սսպարածնա տյարի մոտի որթկարածներաց ջույարներ կուտա, կէըթա կըմըտնի վանքյ՝ ուր աղոթքյ կանի, կինի ճամրախ, համա ենի-չարիյթերաց էլ չի տիսնա։ Մեն-մենակ կխասնիՍտամբոլ։ Խաոց-փոոց կտնի, կիմնա որ իառնքյ հալտ տեղ չեն խասե։ Տյու մի ասե, ինքն իրեք օր էլ շոա ի տեղ խասե։

Իրեքյ օը կընստի Ստամբոլա քաղքի առան վրեն, չուր ենի-չարիյթեր կուկյան։

Իտոնք Ջիշտդին կըտանեն հարեմ խանասի բաշու մոտ, էտը էլ կաանի դեխ էն հարեմի հոդեն. ըստեղ րիրդան քյուըոչ խըաա կինի ուր միտ։ (Ինքն էլ աղորթմանց մե քիչ շոռաչկ կըլնի)։ Ուրան-ուրան կասի.—Ախպեր, ջըհել կնիկ տիսնալ, աչկով-ընքյով չանել, իմ սանյաթ չի, հմենից աղեյն էն կըլնի, որ ես էտը հարեմի իրես չըախնամ։

Ծոչ վաղիըն էլ էնտեղ կըլնի, Ջիշադ կասի.—Ծեղնից ռուջա կանեմ, ես նսաեմ տյուս՝ իմ սավ ղանեմ, իմ տաղն ասեմ, թո թաքուհին ուր հոդից լսի։

Ծոչ վաղիր կասի.—Չէ, պիտի մտնես ներս։

Ջիշադ կասի.— Դե որ ըաըսկընայ ի, իմ տչկեր կապեքյ, նոը ձիկ տարեքյ թաքուհու հոդեն։—Ծոչ վաղիր խայու ղուշման կըլնի, չի թողնե Ջիշտդին ուր ուղածի պես տնի։ Ջիշադն էլ ուր իրես կտնի դեխ այուս, իաեվ-իաեվ կէըթա, շեմքյ կընցնի, կըչոքյի տըոան իտեվ, ուր սաղ նըղանի, ուր տաղ կըկանչի։

Հարեմի սիրա կըպըևի, ընքյուռ-ընքյուռ կուլա, ծըծերացն էլ կաթ ախպըրի պես կթալի, դոշմոշ կըթըոճըվի։

Ակընչկըլա կըաանեն Սուլթանին, թե.— Անատոլույա խայ աշըղն էկավ, մեյ սհաթ սազ զարկեց, տաղ կանչեց, քյու խանըմու ծըծեր եռացին։ Գյոխան,—կասեն,—թաքյի ժառանքյ բըխկ-բըխկալեն կըծըծի։

Սուլթանն ի՝ Ջիշադին կանչել կուտա ուր տռաճ, քիսեմ ոսկի պիըել կուտա՝ որ տա պաշխիշ, էն յանեն ճոչ վազիր կյլոխ կուտա Սուլթանին, կասի.—Փաթիշտհն ապրած կենա, էսա կյավուր տշըգի մեկ արածն տսիցին, մեկըն թոդին։ Ախըր էսը անօրեն նյա՛ քյու թտքուհու. նյա՛ էլ քյու թադի ժաւանդյի առաճ՝ ուր իրես չքսեց կյեստին։

Սուլթան ոսկու քյիսեն կըտնի վեր թադթին, Ջիշադին կասի.—Աշըղ, տյու ըսկուն ճոչ սուչ ես աըե, որ ես մկա քյու վիզ ղտնելու տմըր պիտի տի, հսմա խաթըը կանեմ քյու արած աղեկութնին, քյու կյլոխ կըպաշխեմ։ Կընա, կասի, իմ թաքի ժտռանգյի արիվու սադաղեն ապրի։

Ջիշտդն ի, կըչոքյի Սուլթանի առտճ, կասի.— Փաթիշահն տպըած կենա, ես ինչկանդտը սստծու իրիսանց ինդյուկ մարթ պիտի ըլնի, որ պաց աչկով կայնի իմ փաթիշահի օղլուշաղի առտճ, իտոր խամար էլ ռուջա աըիցի քյի իմ աչկեր կապեք, նոր ձիկ մտուցեք թտքուհու հոդեն։ Ջկապիցին։ Ես էլ խաառծ հոդի տըոան-չըխասսծ, իտեվս արիցի դեխ հոդեն, յավաշ-յավաշ տռտճացա, շեմքն ընցա, չոքյիցի կյեստին։ Իմ իտեվ դեխ թտքուհին՝ ոը ինի վեր իմ իրիսին, իմ խելքով էտը ճոչ կարահաթ արսծ կըլնի։

Սուլթան կասի.—Վալլահի, էսը հպտստակ չէ թե մենտկ պաշխիշի, խալաթի էլ արժտնի ի։ Տարեք, կասի, իմ խալվներաց մառան, իմ խերվան պտնցուցած լահոռի շտլ տվեք խտլաթ. էսօր էլ չում իրիկուն նտղտրով-դուռնով մեչ Ըստամբոլա քաղքին կան տվեք։

Ծոչ վաղիրն էլ ավել կըըտխըընտ։ Հեվարին կուկյա Սուլթանին կյլոխ կուտա, կասի.—Փաթիշահն ապըած կենտ, քյու ամրով ես էտը էրմանի աշըղին խալաթիցի, նաղաըով-դուռնով ենի-չարի թարուռով օըոխկիցի մեչ քյաղքյին կտն տալու։ Ստամբոլտ միչու եթմիշ-իքյի-փուշուխ ասլի միլաթ տյուս են իկե փաթիշահից փաոքյի արժանացածին կյլոխ կուտտն, հտմա էտը անօրեն շուն, առանցի քյու ամըան, քյու տվտծ խտլտթ ուը կյլխուց իճուց տտկ, կապեց վեր ուր պոոտին։ Թե որ ձիկ չէս խավաաա, ուրիշներաց խաոցու։

Սուլթան կփըոփոռտվի, կասի.—Դե, որ ըտսկընա պյան ի արե, շտտ ջալադ կանչի, ես ինոր վիզ ղտնել տամ։

Ջիշադին կըպիրեն, կըչոքյըցուցեն ջալադի առաճ։ Ջիշադն ե, կյլոխ կուաա Սուլթտնին,

կասի.—Փաթիշա՛ն ապրած կենա, ախըր ես չեմ կիտեր, իմ ի՞նչ ստոչի յան կարա՞աթի խամար ի, որ իմ միզ զաննել կուտաս։

Սուլթանն էլ կասի՝ բըրսկնա-բըրսկնա պյան կա, չուր իմ ամըր ըիկլեր քյու ծեռ թե իմ տված խալաթ՝ տյու ինչըխ պանցուցես, էտը խալաթ պիտի մընեք վեր քյու կյլխուն։ Համա, տյու ջազամաթի տսա. իմ թարավորական պատվին էլ, օրենքին էլ ուշունց ես տվեւ Իմ տված խալաթ՝ տյու քյու կյլխուց ի՞նուցեր ես, կապեր ես վեր քյու ամաթին։

Չիչազ լեզուն կըծծի։ Սօրա կասի.—Փաթիշա՛ն ապրած կենա, քյու տված խալաթ ծիկ խամար սըրփութենի պես պյան ի՝ Կապիրին վեր իմ կյըլխուն, Սօսամբյըպա՝ ոռչ-պատիկ, բիթուն կրախոնին, մենակ ես չի տիսնեւ Կյլխուցս վիրիցի տակ. Լապիցի վեր ստախս Փաթիշա՛ն իմաստուն ի. կիտի որ ճիտանի խոկյին սրտի տայն ի, ես փաթիշա՛ի տված խալաթ վեր իմ խուկյան եմ կապել։

Սուլթան կասի.—Սա՛ վայ, ես էտը պյան չեմ ֆայմեւ Կրնա, կասի, էսօրից ըեն, վով վեր յլե փողըր տա, ես ինըր միզ կզանեմ։—Կատանա ռաչ վազիրին կասի.— Նաս, ֆարման կյըրի, որ բասաց ըեն Անատոլու աշըրք Չիչազի յոթ պոռտ թարավորական խազցից ազատ մնաս։

Էտը թարեխսւմն էլ Կիլիկիա թարաֆի խայերաց իրավունք չի իլե ժամ շինելու։ Չիչազ ուրան-ուրան միտքյ կանի՝—Ասենք թե իմ յոթ պոռտ թարավորական խազցից ազատ մնան, Սուլթանի խազինից ի՞նչ պիտի պակսի, խայոց աւկին ի՞նչ շախ պիտի ըլնի։ Ես էս էլ էրկու տիր լեզու թափիցի, իմ կյլխի նաջխի ապկից ազատիցի, արև մեյ տիր էլ լեզու թափեմ, բալքի իմ սուփ խավաշին մեյ խաա շախ պիրեմ։ Ըսըսկնա կըմեզի, ուր իրեն կըրյափ կյեատին՝—Փաթիշա՛ն ապրած կենա, կասի, մեր ավետըրնի մեջ կյըրված կա, որ մեր Քյրիստոս թամըրեխ ի աըև քյի՝ Թարավըու Հարկ թարավըուն տվեքյ, աստըծու Հարկ՝ աստըծուն տվեքյ։ Ըսկուն որ իմ փաթիշա՞ թա ծիկ չզոռի մեր Քյրիստոսի էսը մեջ խառըը մտնում, իմ յոթ թոռան թոռներ ասացուցեմ իմ թարավըու խազնին զարաըըյարը։ Թե որ փաթիշա՛ կապի ծիկ ճանային ազեկութեն տնի, թա ամըը աա ես յոթ տեղով Հիսուս-Քյրիստոսի անվան աըաթրատուն շինել տամ։ Ըսկուն որ թարավորական խազինից մեյ փարա չի պակսելու։ Խայ տակ՝ ուր ժամ ուր փարով կըշինի։

Սուլթան շատըմ ըարսկնա ամըը կյըել կուտաւ ռաչ վազիրին էլ կասի.—Էս քյիսա ոսկին էլ տու, թա աշըրք Չիչազն ուր պյարի ճամբախն էրթաւ

Չիչազն ի՝ ծանըըր քյիսեն տրուկ ծոց. բոզ եզ խեծուկ, սազ թալած թեվ. Ստամբոլա իլերի սյուա, ուր ճամխեն կէրթաւ Մեյ խալիվոր ղավուեշի ոտստ կուկյաւ Մեյ-մեկու պյարեվ կուտան. պյարեվ կառնեն, կըխանի էտա քյիսեն. կասի.—Դավուեշ բաբա, արև էսը թաքավորական փարեքյ խալալ կիսենքյ։ Կեսըն տյու տար պաշխի մուեուլման աղքյըանըրաց, կեսըն ես տանեմ պաշխեմ քյըիստոսապաշա աղքյըանըրաց. գոլըու սաա, Ճյախ պյան կըլնի։ Դավուեշ կասի.—Խավյլա՛, ճախ պյան կըլնի։ Համա որ քյիսի պենը թարավորական մոյր կըպանան, կըտիսնան մեչուն փախրը փարա ի։ Ծոչ վազիր ախըր-ախըր մեյ մունութեն արիր էր։ Քյիսեն փոխիր էր։

Չիլազն էլ Սուլթանի ամըր ծոց տրած. կէրթա, չեմ կյիտե որ թարաֆներ կան կուկյա. վեց տեղ ժամ շինել կուտաւ Ժամեր օխնել կուտա (օխնած մնա ուր անուն)։ Վերա-վերա կուկյա երխանի մեր կյեղ։ Մեր ժամտան տյարի մոտ բող եզ կիսի կյետին։ Չիչազ կասի.—Էսը պյան աստծուց նշանակ էր, կասի, որ մեր կյեղի ժամտան տեղ ըսը տյար պիտի ըլնի. ճամ էլ ես էլ մեր կյեղից տյուս չէրթամ։

Կըմնա մեչ կյեղին. ծեռնամուխ կըլնի մեր ժամ շինելուն։ Ժամու շինել կըքյաշի իրեքյ տարի։ Մեյ խաա էլ կըռապաշտական բար կըկընդնի. կըպիրի կանի ժամտան շեմքյ։ Ժամ կըշինի. կըպըոծնի, յոթըն վարթապետ, յոթըն ժամու աեր-տեր, տիրացու, սարկավարյ. կըպիրի մեր ժամ կօծեն՝ անուն կըդնեն սուփ Թեաթուրոս։

Չիչազ էտը խոկյեվոր խեբերաց կասի.—Էսա կըռապաշտական բարն էլ օծեքյ, թո սըրփանա, որ ժամ ըլնող-մանողներ՝ վեր էսը քաըին սռ չըկոխեն, վըավըւ կյըեր փողմիչ շաննեւ Խոկյեվոր խեբերն էլ մեյ փուռ մեռոն կըթափեն վեր շիման բարին, կըսրփացնեն, խեան էլ սուփ Թեաթուրոս ժամու շեմք կոխողի վրեն աներծքյ կըտանեն, ըսկուն որ մեր ժամու շիման վրեն սռ տրող չէյավ չում իտին օրւ

Ժամու օծելու պատարաքյի առաթին Չիչազ կասի.—Չի մնաց մեյ պյան. մըկտ տյուրյ իմ աչկեր կապեքյ, ծի պանցրացուցեքյ ժամտան տանիս, տյուր բիթունըռ էլ իծերյ ցած, թարանջին էլ բաշերյ ըեն, ես որ յան կէրթամ, ինչ կանեմ, կինեմ, կըկայնեմ, նյա ծեն տվերյ, նյա էլ վախիցերյ։ Իմ արժալ Հայա չի խասեւ Չիկ ծանըըր ցավով մախ էլ չկա, մենայ թե կուզեմ իմ կյերեզմընի տեղն իմնամ։

Էտը յոթը տեղից էկած վարթապըտներ, բյախաներյ, Չիչազի աչկեր կըկապեն, կըխանեն

ժամու տանիս, Թարանչեն կառնեն տակ, ուրանքյ կըթողնեն կուկյան կըմտնեն ժամ՝ ուրանց պատարաքը կանեն։ Կըպըռծընեն կըլնեն տյուս՝ կըտիսնան որ ինչ, Ջիշագն ինգեր ի պաափ տակ, սաղսալամաթ, ըսկի մեյ տեղ էլ չի ցավցե։ Աորա կասի.—Տյուք բիթունըտ էլ ծեր պյարի աշկով տիսաքյ, թե ես որաեղն եմ ինգյե. մեոնելուցըս ձիկ ըստեղ կըխորեք։ Ես իմ մախու օր չեմ կիտե, համա մախվանըս օրվան նշանն ասեմ՝ տյուս պիտի անձրեվ ըլնի, իմ խալվըներ թաց՝ տըռնեն մտնեմ ներս, իմ կընիկ իմ տայ սեվ փոստ տընի, ես էտը օր կըմեռնեմ։

Կընցրնի չեմ կիտե քյանի աարի։ Օրըմ Ջիշագ ենացած կըլնի մօր տըռան առա ձըրելու Անձրե կըպըռնի։ Ջիշագ աղեկըմ կըթըռձըվի, կուկյա ետ, կնիկ մոոցած կըլնի ինոր ասածներ, թոնրտն ակտն վրավու սեվ փոսա կըքյաշի սան տակ, իրկան կասի.— Նըստի, տյու Նստի, ես քյու քաթ-չարոխ խանեմ։ Ջիշագ կիրիշկա կընգյան իրես, ծեն չի տա։ Կընգյան միա կինի էար սյան, շոտըմ փոստ կըվիրուցի, կանթոլկի տըռան իտեվ։

Ջիշագ կասի.—էլ բոշ ի։ Կաաարվելիքյն կաարվտվ։ Կընա, կասի, ձիժ-պիժ ժողվի պե աուն, ես իմ օխնանքյըս ատմ, քյանի խոկյիս պենիցըս չի թրոե այուա։

Կընիկ լալով, հավար կանչելով կըվազէ տյուս։ Ջուր եա կուկյտ՝ կտիսընա, որ խոկյին տվտծ ի իլե։

Ինքյըն ամրախտի ի իլե, համա քյախանայական թտղում են ավե։

Յոթ կյեղի քյախանա են ժողվըոարվե, յոթն օր ժամ-պատարաքյ են արե։

Թաղիր են սուփ-Թեվաթուրոսու պատի տակ, համան էնաեղ, որաեղ որ ժամու աանսից ինգյեր էր։ Ինոր կյերեղման մուրաղատուր էր։ Ջուր մեր քտղթ, կյեզրայթերաց աողցըվորներ կուկյին վեր ինոր կյերեղմընին, ուրանց ծեռքյեր կըլվանին, կըմտնին մեր սուփ Թեաթուրոս, ուրանց աղոթքյ կանին, այողեր կրտրուկ եա կըաառնին։

Առճակու Պագում խաչերաց պիպոուկ քարն էլ (մեոնեմ ուր սուփ ղոյւաց) ուր տեղ կայնուկ էր։ Աութ-աղորթ չեմ կիտե. կաոեն ծովն իկեր ի աաեր ի։

ԱՋՆԱՎՈՒՐԻ ԳԵՐԵԶՄԱՆ

Արճակ-Վան ճանտպարհին էր գտնվում «Աղնավուրի կերեզմանը», որը ճանապարհից դուրս ընկած, մի քանի մետր լայնությամբ ու մի արտարոյ երկտրությամբ ոչ մեծ քարերի կուտակում էր։

Աղնավուրի գերեզմանի մոտով անցնողները մի-մի բռաշափ քար էին վերցնում ու շպրտում դեպի հիշյալ «կերեզմանը»՝ «չվերկենաս» մըմնշալով։

Իրենից առանձնակի ոչինչ չներկայացնող այս քարակույտը, սակայն. ուներ իր պատմությունը։

Սատանան այն գլխից միշտ էլ աստծուն հակառակ էր գործում։ Այն օրը, երբ Աստված Ադամին ստեղծեց ու գրեց դրախտի մեջ. սատանան էլ անասելի ուժի աեր Աղնավուրին աշխարհ բերեց, հետո էլ պատվեր տվեց, թե.—Հակառակ Եղիր Աստծուն ու իր ստեղծած, իր պատկերը կրող Ադամին։ Ադամը, որ Աստծու բարկությամբ մտել էր երկիրը ու փուշ-տատասկից մաքրում էր, մինչև իրիկուն չարչարվում, երկիրը մշակում էր, երեկոյան՝ Աղնավուրը ոտքի մի հարվածով նրա արածը քանդում էր։ Վերջը Ադամը գնաց Աստծու մոտ՝ գանգատ։ Աստված իր հրեշտակին ուղարկեց երկիր։ Հրեշտակն եկավ, Աղնավուրին գցեց գետին, Ադամին էլ ասաց.—Թաղիր սրան այնպես ամուր, որ էլ տեղից վեր չկենա։

Աղնավուրն էլ այնքան շատ էր երկար, որ Ադամը թաղել չէր կարող։ Աստծու հրեշտակը ասաց.—Ադա՛մ, ծնկներից կարիր, գիր կողքին։— Ադամն այդպես էլ արեց։ Բայց լրիվ չկարողացավ թաղել։ Պատվեր թողեց, որ իր զավակները՝ ամեն մեկը մի-մի քար շպրտեն Աղնավուրի վրա, որ նա իր տեղից այլես երբեք-երբեք վեր չկենա։

ՃԺԵՐԱՑ ՄԱԽՆ ԻՆՋԽ Ի ՓԱՅԴԱ ԻԼԵ[1]

Ավալ վախտըներ ճժերաց մախ չի իլե։ Աստծու խըրամանքով, խալիվորքեր էնան պառվըքեր ուրանց մախու կյախ իմցիր են, իկեր են, ճժերաց մոտեն ղատ, մեյ խոլվաթ աեղ թուփ են էր ըլնելի։ Կյապըել խրիշտակ էկիր էր խոկյիներ առնես էր, տանես էր տաս էր աստըծուն։ Աստածն էլ՝ խատով-խամըրով էտա խոկյիներ օրոխկես էր որըն որ տըթար էր՝ արքավութեն, որըն որ մեղավոր էր, օրոխկես էր տժոխքյ։

Մեյ խալիվոր մարթըմ իմցիր էր թե պիտի մեռնի, ուր բեղ-մուրուս թամուղ թըրաշիր էր, ուր խալվքեր փոխիր էր, ճժավարի խալավ խակյիր էր, ձաներն աոիր էր, կընացիր էր ճժերաց մեջ, մաեր՝ ձան էր խաղալի։

---

[1] Պատմեց Արտաշատի շրջանի Դալար գյուղի վերաբնակիչ, Վանի նահանգի Պողանց գյուղի բնակչուհի Առտուն Միրզոյանը, 62 տարեկան հասակում, 1970 թ. փետրվարին։ Բարբառը՝ Պողանցի և Արտաշատի խոսվածքների խառնուրդ է։

Կյաբրել խրիշտակ իկյալ ի խոյիվորքերաց պառավրքերաց խոկյիներ ըմեն առիր ի, համա հեսար ի արի. տեսիլ ի, որ մեյ խոկյի պակաս իս էկիր ի հժերաց մեչ ման ի էկի, համա, չի կրցի ռոկ-կել, թե որն էր հիժ, որն էր խալիվոր. եա ի ատոե ասարծուն ասեր ի.—Մեյ խալվոր փախիր ի, մոխր ի հժերաց չյարդյան, չեմնալի. դըպրու խոսր խոմար էլ մեյ խոկյի հեսարիցըս պակաս իմ ըլեր։

Աստըծն ասեր ի՝—Դորուց դեն հիժ-խալվոր մի՛ խոսըցու, տու քյու հեսար թամամ արա։

Էսու խալվորի աղով էլ, Կյաբրիել խրիշտակ, էլ՝ հիժ-խալվոր, էլ՝ ահել-ջահել, չի խարցուցե, ինչ ռաստ կյա, խոկյիներ առնել ի, որ իւր հեսար թամամ անի։

ԱՆՀԻՇԱՏԱԿ ՊԱՌԱՎԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՂՈՐՄԻ

Երիտասարդ հարսներին, աղջիկներին յողացնում և նրանց մայերն էին անիծում տարեց կանայք։ Եթե մայր խճճվում էր, անիծողը մրմնջում էր աստերի աստերից մնացած մի օրհնություն, հավատացած, որ մինչև այդ օրհնությունը չասի, մայերը չեն «խարկիլ»։

Ահա այն.—Խալար, խալար օղորմի քյզ, անհիշատակ պառավ. Քյար քյաղիցիր, ավաղ մաղիցիր, պայիկ անով՝ իրեք ավր Երուսաղեմ կնացիր։ Աստծուց չուզեցիր քյու ավրյավութեն, ուզեցիր աշխրքի՝ խառնուկ ծամերաց, խառնուկ կամերաց խարկութենը։ Խալար ավր՝ խալար օղորմի քյզ, աղքատ, անտեր, անհիշատակ պառավ։

Եվ էին կծկում, կամքը խառնված, խճճված էր լինում, նույն՝ անհիշատակ պառավի հոգուն օղորմի էին տալիս, մինչև կամքի «խարկվելը»։

ՈՒՍՏԱ ՆԱԶԱՐԻ ԱՍՏԾՈՒՆ ԱՊԱՎԻՆԸ

Դյուղի անխիղճ իշխանը սովորություն ուներ իր հպատակներին չիրականացվող առաջադրանքներ տալ և բանի որ հպատակը չէր կատարում իր առաջադրանքը «պարտադրանքի» հպատակին դրամական տուգանք էր տալիս։

Մի անգամ նա կանչում է ատաղձագործին ու պատվիրում, որ այդ գիշեր այնքան տախտակ սղոցի, որ տասն ուղտաբեռ թարմ թեփ ստացվի։

—Առավոտ շուտ,—ասել էր իշխանը,—իմ ուղտապաններին ուղարկելու եմ թեփը բեռնելու։

Հուսահատված ատաղձագործը տուն նստած՝ իր [illegible] մասին է ասում. Կինը անկողինը բաց է անում և պառկելով, ամուսնուն հորդորում է ինքը ևս պառկի։ Այդ հորդորը քառատող բրդերեն շարադրված էր.

—Լո, սար, սարըմ, ուստա Նազար.
Նվեմ՝ խո կյա, որա ռաղա։
Ցառախ նա կյա հարե սրրա,
Խոդե եկա. խուդե դարդե հազար։

Թարգմանությունը հետևյալն է՝

Այ, գլխիս գլուխ վարպետ Նազար.
Քո աղոթքն արա, արի քնիր։
Հոգս մի անիր, մինչև առավոտ
Աստվածը մեկ է՝ իր դարպասները՝ հազար։

Լուսադեմին իշխանի ծառաները արագ-արագ ծեծում են ատաղձագործի դուռը։ Մարդ ու կին բացում են դուռը՝ այն հաստատ համոզմունքով, թե եկել են իշխանի ուղարկած դատավճիռը գործի դնելու։ Սակայն իշխանի ծառաները եկել էին ատաղձագործին ապարանք տանելու, որ [illegible] հանկարծամահ եղած իշխանի չափը վերցնի՝ դագաղ շինելու համար։

«Յա՛, ուստա Նազարի ասված, քյե եմ ապավինե»։—Արտաքին մրմնջում էին անելանելի դրության մատնված մարդիկ։

ՑՈՐԵՆ ԽԱՑ ՊԱՂՍ ՉԱՐՈՂ ԹՈՓԱԼ ՎԱՐԹԱՊԵՏ

Երուսաղեմա մեջ յոթմիշ իրի փուչախ (յոթանասուներկու կեռ) միլաթից խայրապետներ. վարթապետներ կըժողվովեն՝ պաղս-չպաղսի օրենք կըանեն. ինչ ուտեն ուտիքին, ինչ չուտեն պաղսին։

Իրեք խարիր վաթսուն խինըյն իկած ժողվըռտված կըլնեն, մեյն պակաս ի. Թոփալ ի իյե, չի եացե ուր կյախին խասնի։ Խառներ էլ մեյ խուկյու խաթրին խո ուրանց ժողով չե՞ն թողնե մնա. ժողով կանեն, պաղս-չպաղս կըկյըեն. ժամուց կըլնեն դյուս՝ Թոփալ կըխասնի, խաց-փաց կանի, կըմնա. որ ցորեն խացն էլ են արե պաղս, կըխոկռակվի կասի.—Ջնջե՞ք։ Ջեն ջնջե։ Թոփալ մեյ խաս փիծկի կըձարի, եղներ կըդծի, կըդչի մեջ ծովուն. մանճ կըդոնի ծեռ, եղներ յողալով կէրթան, ինըյըն ծով կըվարի։

Էսա դյան տխնողներ կըտոան, կասեն.—Թոփալ վարթապետ. արե, արե, ցորեն խաց չենք անե պաղս, դյու մեզնից արթար ես։

Թոփալ վարթապետի սաղաղեն ի, որ ցորեն խաց պաղս չեն արե։

«Թոփալ վարթապետի» մարդասիրական ու ար-

կարացի վտրմունքի մասին բոլորն էլ դիտեին և պաս օրերին Հացը ձեռք վերցնելով, երկինք նայելով, «Թոփալ վարթապտի» Հասցեին կրկնում էին.

—Տեր, տյու խաղար տիր, խաղար օղորմութեն անես Թոփալ վարթապտի խուկյունւ

ՍԱՆ ՓՐԿԱԾ ՑՈՐԵՆ ԽԱՇԿ

Մեղնից առաձ արթրոց թարեխն ի իլեւ Աստված Հիսանի տեմ՝ շատ օղորմած ի իլեւ Տիսեր ի որ Հիսանի խամար Հմեն պյանից կյլխավոր ուտելիքյ ցորեն խացն ի, պոնե ցորնի կյլխու վրեն յոթ խաշկ ի տնդեւ Ասեր ի.—Ես ըսկուն կտնեմ, որ տյուք ծեր մեյ ցանածից խարիր քյաղեքյ, որ մեյ-մեկելու խացին րախլութեն չանեքյւ Էար Հալա խերիքյ չէր, ալուրն էլ մաղած-շարմըղած երկնուց թափեր ի ցածւ Ասեր ի. —Ծե ինչկանդար լաղըմ ի՝ վերցուցեքյ, մնացած ավիլեք, տվեք պատերի առկ. չկոխկռձե՛քւ

Մեկ օր մեյ ճժի փոր կըքշի վրեն, մեր կիրիշկա ղեսա-ղենա, կախսնա մարթ-մուրթ չկա, ծեռ կըթալի մեյ լըպ ալուր կվերուցի, ճժի իաեվ կըսրպիւ Ծիժ կձվա, կասի.—Ցաման, էսր ինչ պաղ պյան ի։

Մեր կիրիշկա, որ ինչւ Արար-աշխըրքի ալըրներ րիթուն պադիր են, տառցիր են պաղ ծյունւ

Աստված կասի.— Էսր Հալա ալուրն էր, ես ցորենն էլ պիտի կտրցուցեմ Հիսանի կյլխունւ Թո ըստուց դեն կորեկ ուտեն, որ ցորնի կադըր իմնանւ

Կերթա ցորնի առտ, տանակ կըքյաշի, ժուռ խաշկեր ցածից վիրե կըփռթի, կթափի կյեարինւ Շուն էն թարաֆեն կվաղի, վիրիվի խաշկ պենով կպռնի, կիրիշկա աստըծու իրեսւ Աստըծու աիժառ կուկյա վեր շան, էար մեյ խաշկ կթողնի շան պենի մեջւ

Էտր մեյ խաշկն ի որ մնացե աշխըրքի իրես, էն էլ շան սաղաղեն ի,—ասում էին պաամողները,—շան փայ-պաժինն ի որ մենքյ կուտենքւ

Շունը Հոդի չունի, որ նրան ողորմի տայինւ Սակայն Հաց թխելիս, ամենաառաջին Հացը շան առաջ դցելու սովորույթը խախտելը Համարվում էր տնների մեղքւ

ՀՄԵՆ ՄԱՐԹ ՈՒՐ ԿԸՍՄԱԹԻ ՏԵՐՆ Ի

Կըլնի՝ չի ըլնե մեկ կոնախասեր մարթ կըլնի, Համա շատ էլ ախքատ կըլնիւ Օրական-օրական ինչկանդար այատում անի, շատ վասակի, քիչ վասակի, ուր կըսմըթից փողոքավոր չի ըլնե, Հյա կասի.—Փառք քյե, Տեր, իմ էսա խալալ վաստակ խարամ բողաղ չըմտուցեսւ

Օրըմ էլ մեկ ճոչ առաի մոտով կընցնի. կտիսնա կյեաին ինդյուկ էրկու ցորեն խաշկ մեյ մեկու կյլխով օղչում կուտանւ Մեյն կասի.—Պարեվ, արեվելքի թաքավորւ Էն մեկելն էլ կասի.—Պարով-պարով արեվմուտքի թաքավոր։

Էտր մարդն էլ, էտա կյետին ինդուկ խաշկեր կըվերուցի՝ կտնի ուր ծոց, կպիրի ուր տուն, կասի.—Վալլահի, ես էսա խաշկեր պիտի պախեմ չուր տիսնամ ինչ կըլնիւ—Ծոցից կըխանի կտնի թաչըրի կյլոխւ

Արփ-Սարկըսի պաղսի ուրպաթ օրւ կնիկ կինի թաչըրից ցորեն կխանի, որ աղանձ անի, սըփ Սարկսի փոխինդ շինի, աչկ կինի էտա խաշկերաց, կվերուցի ուր ափի մեչ կտըրըրի, կխառնի մեչ աղընձտցուին՝ կթալի պովի մեջւ Տյուսն էլ մեյ պուքյ ի, որ ասսլած աղատիւ Մարթն ի, տան տուռ կպանա, որ էրթա տուս, մեկ էլ էն կախսնա, որ ուր աան աչու, ծախու թարաֆեն էրկու ծնակոլոլ ճամխորթ կըկայնեն մեյ մեկու տիմաց, մեյ մեկու կյլխով օղչում կուտանւ Էտա օղչումն էլ էն խաշկերաց տված օղչումի պես կըլնիւ Էտա ճամխորղներ, որ ուրան կտիսնան, կասեն.— Մարթ աստըծու, զատու աեղաց ճամխորդ ենք, մե էսա նեղ օր սթար արա, չուր էսա զուլում պյուքն ընցնի՝ մեր ճամրախ պռնենքւ

Էաա մարթն էլ ծեռ կտնի վեր ուր սուսին, պարեվ կառնի, տառնա կասի՝—Արեվելքի-արեվմուաքի տեր-թաքավորներ, իմ տուն ծե դյորա չի, Համա ղարար չկա, էս օրվան ծեր կսմաթն իմ աանն էր, մտեք՝ աայցեք, աստըծու ավածից էլ սեղան պանամ, ուտենք-խմենք, փառք տանք աստծուն, վասալամւ

Էսա կոնախներ կիրիշկեն մեյ-մեկու իրես, մեկն կասի՝—Դողրուն ասա, այու թաքավո՞ր եսւ Կասի՝—Խա, վալլահի, ես արեվելքի թաքավորն եմ, տյու վո՞վ եսւ—Էն մեկելն էլ կասի՝—Ես էլ արեվմուաքի թաքավորն եմւ

Առրա, էտա մարդուն կասեն.—Ախպեր, արե տյու էլ դողրուն ասա, այու որտեղից կիտցար, որ մենք թաքավոր ենքւ Ջունքի, կասեն, մենք էսա յոթ տարի ի ինչ աղքրաի կըլըղ մտած աշխարք կան կուկյանք. մեյ մարթ չի իմցե որ մենք թաքավոր ենքւ

Էաա մարթ կասի.—Ծեր մեյ-մեկու կյլոխ տալու թախկին. իմ կընդած խաշկերաց՝ աղընձված խաաեր, մեչ փոխրնդին կդըրուցեն. մեյն կասի.—Կըսմաթ էլա արեվելքի-արեվմուտքի թաքավորներացւ Մեյն էլ կասի.—էսա յոթ տարի

ի թաքավրութես չեն արե, խալալ մարթ են։ Որ ձիկ չէք խավատա, ականջ տրեք սրփ-Սարկրսվա փոխրնգի վրեն։

Թաքավորներ ականջ կտնեն վեր փոխրնգն. աղորթմանց փոխրնգից բտրսկնա ծեն կուկյա։

Էտա արեվելքի-արեվմուտքի թաքավորներաց մասներին՝ մեյ-մեկ պողպրաե մասնիկ կրլնի, թաքավորական նշանն էլ փրեւթեր։ Կխանեն էաա մատրնկներ կատան էաս մարթուն, կասեն՝—էաս մատրնկներ առ, տրե մեր թաքավորական խաղինի վրեն կայնի, աչկա ինչ կտրի, ինչ չափ ուզես՝ ոսկի, ակունք վերցու. պեւ

Էտա մարթ կասի.—Ախպե՛ր, թաքավորական խաղինախանի մեչ խալալ ապրանք որտեղի՞ց պիտի րլնի. որ ես իմ խալալ ունեցրութեն թողնեմ ինեմ թաքավորական խաղինի իաեանց։ Թե որ կուտար էտա պողպրաե մատրնկներ ավեք, պողպատ խալալ պան ի, համ էլ իմ կոմաթն ի էսով պեն ես իմ կոմաթին։

ԿՅՈՌՏԱՆ ՔՅԱՐԱՐ

Կրլնեն չէն րլնի՝ մեյ տնող-րնող կիսուր, էնան մեյ թմախքյար խարս կրլնեն։ Կիսուր որ կրպառվրնա, աչկերն էլ կկուրնան, տան չերեփ կրնցնի խարսի ծեռ։ Մեկ օր էտր աուն միս-մորթ կանեն, կիսուր կասի.—Խարսա՛, ի՛մ աչիկ, վազուց ի սիրտրս քյարար կուզի, ասպած աչպերներրա պյաշխի, մեյ խաա քյարար արա։

Խարս իրկան հախուն չի իշխնա կիսրոչ խարրից տյուս կլա. համա միսն էլ կափսոսա. կէրթա հավից մեյ քանի խատ կյոռտ կպոնի, կպիրի եպանի շիշ. կխորովի՝ կպիրի կրտնի կիսրոչ առաճ։

Կոր կիսուրն ի՝ իշտախով կուտի. կպոծնի. խարսին կասի.— Խարսա, րսկուն սրտավ կիրա, աստված պիրի քյու առաճ։

Ժուկրմ կրնցնի։ Կիսուր կմեռնի։ Խարս կրտառնա կիսուր, կրպառվնա, պինր էլ կկուրնա։ Օրերից մեկ օր ինոր սիրտն էլ քյարար կուզի. ինքն էլ իր խարսից քյարար կուզի։ Խարս շռար՛մ կվազի կասարխանեն, մեյ չարեք ոչխրրի միս կառնի, կպիրի մեյ շիշ հյին քյարար կանի կպիրի որ տրնի կիսրոչ առաճ, կտեսնա ի՞նչ, շշի վրեն րիթուն քյարարրամիշ կյոռա են։ Էտրանք կրթափի շան առաճ, նոր կանի։ Կանի, կրպոծնի՝ էյմ էլ էար մսեր վեր շշին կրտառնան կյոռա։ Ըարսկնա կրլնի, չոր խարսի առած մեյ չարեք ոչխրրի միս կպոծնի։

Կիսուր կասի.—Խարսե, եփվանից ի քյարրրի անուշ խատն իսկիր ես տուն, սիրտըս թուլցավ. ե՞փ կուտաս ուտեմ։

Խարս կուլա. լաչով կասի.—Իմ խաթուն կիսուր. չեմ կիտի աստծու առաճ ինչ մեղք եմ կյոռծե. էսօր աստծու անեծքն իճեր ի վեր ձիկ. կես չարեք միս արիցի քյարար. հա՛ ես արիցի. հա՛ աստածային անեծքն իճավ վրես՝ քյարարլամիշ մսեր առոցան կյոռա։

Կիսուր կասի.—Խարսե՛, բալա՛մ, էտր ոչ թե քյու մեղքն ի. իմ մեղքն ի. աստված թփեց իմ իրես, իմ արած կյոռտան քյարարն էկավ իմ առաճ։ Պե րստեղ. պե, պե ուտեմ. աստված բտրսկնա ի կամեցե։

Էտօրեն դես, մեյ մեկեյու անիծելիս կասեն.—Քյու արած կյոռտան քյարար տառնա, կյա քյու առաճ։

ՀԻՍԱՆԻ ՈՒՄԲՐԸ

Աստված. որ մարթ արարածին, րիթուն ինրսցինրս բտեղծիր էր. պրոծել, սորա էլ միտք արեց. ասաց.—Արե իանոց հմեն մեկին ուր դյորա էլ ումրրր կրտրեմ։ Հմենից առաճ կանչեց մարթարարածին, հիսուն տարվան ումրրր տվեց ծեռ. ասաց.—Առ՛, էար քյու աշխարային փայ-պաժինն ի։ Հիսուն աարի իմ բստեղծած աշխար վայելի. սորա՝ խոկյիտ աուր Կյապրել խրիշտրկի ծեռ։ Մարթ արարածն ասաց.—Տե՛ր, շատ քիչ ես տվե։ Հիսուն աարին ի՞նչ պյան ի, որ այու տվեր ես ձիկ։ Հիսուն տարի կյիշեր-ցերեկ այաշեմ, ջորով-ջըլով ձիկ խամար տուն-տեղ. մալ-մուլք, բաղբաղչա պրրրստեմ, ապա իմ պրրրսանքներաց խամ չառած՝ էրթամ-մանեմ խողի աա՞կ։ Ք՛իչ ես արե իմ ումրրր, ք՛իչ։

Աստածն ասաց.—Որ ձիկ մնա, հիսուն աարին րոլ-րոլ ի։ Համա որ ձիկ չես ավատա, այու կիսեւ

Աորա, կանչեց շան. ասաց.—Ա՛յ շուն, ես քյե եռսուն տարվան ումրրր եմ տվե, առ կրնա. հիսանի սաան մոտ ապրի։ Շունն ասաց.—Տեր աստված, եռսուն տարի կապ վզիս, մարթու ստռան վրեն կայնեմ, տիմանալ կրլնի՞։ Տրսնրխինդ տարին ետ առ, տրսնրխինդ տարին թող. էար էլ հալա շատ ի։

Աստված ասաց.—Աղեկ. տրսնրխինդ տարին քյու ումրրրից կրտրիցի։ Այ, մարթ-արարած.—ասաց մարթուն,—կուզե՞ս էար շան ավելի ումրրր ավելցուցեմ վեր քյու ումրրրին։

Մարթ արարածն ասաց.—Կուզեմ. կուզեմ։

Աստածն էլ ասաց.—Դե առ։

Աստված կանչեց իշուն. ասաց.—Էշ. ես քյե

եոսուն տարվա ումրրր եմ տվե, առ կրնտ մարթ-արարածի մոա, ինոր շինած կյոմի մեչն ապրի, ինոր տված ուտելիք կե, ինոր տրած պեո կրրի, չուր օրր քյու մախուն։ էշն ասաց.— Ա՛յ ասպած, քյու խիղճն ին՞չ ի, եոսուն տարի, որ ես սաղ մնամ, պեո կրրեմ, էլ մեչ՞կ կրտիմանա. աղաճանքյ-պաղատանքյ կանեմ՝ ումրրիս կեսն ետ առ։

Ասպած ասաց.—Աղեկ, տըսնըխինդ տարին ետ կառնեմ։ Կրնա, տըսնըխինդ տարի ապրի։

Մարթ-արարածին էլ խառցուց-ասաց.—Կուղե՞ս իշուց կրտրածս ումրրր տընեմ վեր քյու ումրրին։ Մարթ-արարածն ասաց.—Տու՛ր, տու՛ր, իտորով կրլնի ութսուն տարի։ Ութսուն տարին ի՞նչ շատ ումրրր ի, որ չուղեմ, հալա քիչ ի, շատ չի։

Ասպած իշու ումրրրի կեսն էլ տվեց մարթարարածին։ Աորա կանչեց մեյմունին, ասաց.— Շանն էլ, իշուն էլ տրրիցի մարթ-արարածի կողքին, տեսա որ ինորից ըսկուն վախեցան, որ ուրենց ումրրրներաց կես վիրուցին։ Ես քյե՝ մարթ-արարածից ղատ, մոշեյթերաց մեչ կրտնեմ, առ էսր եոսուն տարվան ումրրր, կրնա քյե խամար էն ծառից՝ էն ծառ թրովրոա, սըրտղներ կե, քյե խամար ումրրր արա։

Մեյմունն ասաց.—Ա՛յ րստեղծող տեր, քյանի որ վերճր մախն ես տրրե, էլ ընչի՞ եոսուն տարի՝. էս ծառից են ծառ թրոնեմ, ինչ ի, ինչ ի մեքի. ավելի պտուղ ուտեմ. ինչ կըլնի ու՞ ումրրի կես կրարի, թալ վեր մարթ-արարածի ումրրրին։

Ասպածն ասաց՞—Քյու ումրրի կես կրկտրեմ, համա չեմ իտա մարթ-արտրածին։ Ջաթի շան, իշու դեն թալածներ վերուցեր ի, խերիք ի, թո ութսուն տարի ապրի խոկյին տա ձիկ։

Մարթ լրսավ, ասավ.—Տե՛ր, էտր մեյմունի ավել ումրրրն էլ ավրլցու վեր իմ ումրրրին։

Ասպածն ասաց.—Ա՛յ մարթ-արարած, ախրր մեղք ես, րտրսկըրնեմ ումրրր տանել կըլնի՞։

Մարթ-արարածն ասաց.—Ես կանամ տանե, մենակ թե այու տուր։

Ասպածն էլ ասաց.—Դե տյու կիտես, կրնտ հիսուն տարի ապրի հիսանի պես, տըսնըխինդ տարի՝ տրռան շան պես, տըսնըխինդ տարի ասխ իշու պես, տըսնըխինդ տարի էլ ապրի խալիվոր մեյմունի պես։

Մարթ-արարած էկավ աշխարք, հիսուն տարի սաղ-սալամաթ ապրեց, տասեց, պյանեց, մալմուլքյ դըրրստեց, էլավ ճիժ-պըժի տեր, ինոնց էլ պյախեց-շախեց, րաղ-րաղշա էլ տրրեց։ Հիսուն տարին որ թըմըմավ, էկավ ջան ումրրրի օրեր։ Մարթ-արարածի թըմախ շատացավ, խոկյին կապվավ ուր ունեցվածքյին, էլ ուր տրոնեն չուպեց ղատտնալ։

Ընցավ շան ումրրի տարիներն էլ. խասան ասխ իշու տարիյթեր։ Խեղճացավ. յավաշ-յավաշ կուդում կոտրըվավ, մեչկ ծրովավ, համա քյամկից պեո պակաս չէլավ։

Խասավ մեյմունի դեն թալած խալիվորութնի տարիյթերաց. ատըմներ թափան. աչկի լոս քյաղվավ, թրովրոունութեն կուրիսցուց, ծեոքերաց մատներ՝ քեթրր-մեթրըվտն, օր-օրին կերպարանքից էլ ինգավ, ըսկուն որ քյուլֆրթի օրհելներ մոտեն կըպըրղվին։

Մարթ-արարած նոր ֆայմեց, որ աստըծու տված հիսուն տարվան ումրրր րոլ-րոլ էր։ Էսր՝ շան, իշու, մայմունի դեն թալած ումրրրեր որ վիրուց, էտրանք րիթուն ասպածային անեծք ին, որ վըրեն առեց։ Համա էլ ֆայդեն ինչ էր։

Ուր ծակաշկութենն էր, զինքն էլ՝ չուր կյալոց տատասաան պիտի քյաշի։

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԱՐՃԱԿԻ ԼՃԻ ՄԱՍԻՆ

Արճակի լճի մասին րաղմաթիվ լեդենդներ կային։ Լեդենդների արմատները հասնում էին հեթանոսական հավատալիքներին և ամուր տեղ էին դրավել ոչ միայն հին, ընիկ հայերի սրտերում, այլև զավառի նորեկ, այլազդի (քուրդ, եզիդի, ասորի, չերքեզ) ժողովուրդների հոգիներում։

Լեգենդներից ամենաակնառուն այն էր, որ «Առճակու ծովում» ապրում են մի հրեղեն տղամարդ, մի հրեղեն կին և մի հրեղեն ձի։ Նույնիսկ հավաաացողներ կային, որ հրեգեն ձիու խրխինջը «շատ-շատերը լսել են»։ Հրեղեն ձիուն «տեսնողներ էլ էին եղել»։ Սակայն հրեղեն մարդուն ու հրեղեն կնոջը «անսնողներ» չէին եղել, բայց այդ հանդամանքը մաղաչափ անգամ չէր խախտել հավաար նրանց գոյության նկատմամբ։

Մյուս սիրված լեդենդը կապված էր տրեմայան մարգագետնում գտնվող մի հորդաաատ աղբյուրի հետ։ Աղբյուրը Արճակ գյուղին մոտիկ էր, ու ջուրը հոսում էր դեպի լիճն ու ներծծվում լճափնյա եղեգնաոատ ճահճուտում։ Արճակ գյուղի բնակիչները այդ աղբյուրից էին տանում իրենց խմելու ջուրը։

Արճակի հիշյալ աղբյուրը հոչակված էր, որպես «սիրո աղբյուր»։ Այն համոզումը կար, որ «Առճակու ծովու» հրեղեն հարսը այդ աղբյուրում լողանում է, որ այդ ջուրը խմողը անարատ սիրով

է բորբոքվում, որ «Առճակու ճուր խմողի» ձայնը «անուշ» կլինի. Երգը՝ գյուղից:

Որպես ընդի արձակցի, ստորև բերում եմ ավերակից սերունդ անցած ասացվածքներից մի քանիսը, որոնք առնչվում են Առճակի լճին, նրանում ապրող հրեղեններին ու Առճակի աղբյուրին:

Ահա դրանք.

Արար-աշխարքի ծովերաց մեջ, մենակ մեր ծովու մեջն է, որ խռեղեյթեր կան. մեյն՝ մեյ ջրհեղջիվան մարթ է, մեյն՝ ուր կնիկ. մեյն էլ ուրանց ծին (ձին)։ Աստծու հրամանքով ինոնց նյա հավքնալ կա, նյա պատվինալ կա, նյա էլ՝ մախ։

Խեա որ լուսնակ պայծառ (լուսապայծառ) կայի, մեր ծովու խռեղն կրյնի այսա, օցերաց պրներ կը կոխկրռճի։ Մեր ծովու խռեղն որ չըլներ, մկա աշխարքյ օցերով լըցվեր էր։

Մեր ծովու խռեղն խաղար տարին մեյ տիր ծովու ափ ռասա էկած խողածին կրնդյան կը պոնի, խեա կը խառնվի, որ աշխարքի մեջ ուր նմանակ խռեղն ժառանքյ, թողնի, համա մեր-մեղավորներ կրխափաննեն։

Ինչ միյաթ էլ ըլնի հիսան-օղլին, որ մեր ծովու խռեղնին ռասա կյա, խռեղն ինոր մեյ սուփ շնոցր կուտա։ Համա աշխարքի մեղաց, խաղար տարին մեյ տիր էլ, մարթ ինոր ռասա չի կյա։

Մեր ծովու խռեղն կնդյան ճայտի վրեն վառման ասարդ կա։

Տարին մեյ տիր, մեր ծովու խռեղն կնիկ, կեշըրով կուկյա մեջ մեր ափերին կըլողկնա, համա ինքն հիսանի աշկին չի էրեվա։ Մենայ մեյ տիր մեր Աստվածնա առճին (առաջին) վանախերն էր տիսե՝ մեր ափերի մեջ լողկնալուն։ Լուսնայ կեշեր էր իյե, խեա որ վանախոր շուքյ տիսեր էր, փախիր էր մտիր էր կամշրնոց (եղեգնուտ)։

Մեր ծովու խռեղեյթերաց վրեն խաչ խանեյա, յան թե չէ՝ «Քրիստոս քյե խափանյա» ասելու իրավունքյ չկա. չումրի ինոնք չարք-չարոց չեն։

Աստծու-մթու խեա, մեր ծովու խռեղն ծին ծովուց կըթոնի այսա, մեջ կամշներաց առճիկ կուտա, կիրիշկի դեխ երկինքյ, կխրխնջա, պյարի լուսուն օղշում (ողջույն) կուտա։ Համա խեա որ հիսանի շուք էրեվա, մեյ յոնքյով ուրան կըթայի ծով։

Մեր ծովու խռեղն ծիյու կաշին սաթյու առծթի պես կըփեյլքկա։

Մեր ծովու խռեղն ծին. կյախ-կյախ ժամանակ առ ժամանակ, մեր կյեղի դուլումբյարներաց աշկին կերևա. էտր ախուն ինոնք կըթողնեն կըտառնան եա։

Մեր ծովու խռեղն ծիյու խրխնջոց, խաղար-խաղար խայ. տասիկ ուրանց ակրնջով կըլսեն էտր ծին մարթու ձենով կըկանչի՝ «օղ-չում օղ-ջին...»

Մեր ծովու ճուր աստծուց օխնուկ է. ինոր մեջ ջրտել մեղք է։

Մեր ծովու մեջ անխորտակում ժամ (եկեղեցի) կա, ինոր «քյամրախ ըլնես» ասել մեղք է։

Մեր ծով՝ արար-աշխարքի ծովերաց ծնող մերն է, ինոր մեջտեղ անտակ ախպուր կա. արար-աշխարքի ծովերաց մեջ կերթա էտր ախպրի ճրից։

Մեր ծովու վրեն գյամի (նավ) չի պյանե. ինոր մեջտեղ անտակ պրտոր կա։

Մեր ծովու մեջ սթխով (հավատով) լողկցողի ջանի վրրեն քոս-քյոր չի պյանեն։

Առճակու ախպրրի ճուր խմող վեր Առճակու կըյնի սիրուանը։ Յան Առճակուց չի ղատանայ, յան չէ, չուր ուր մախու օր Առճակու խաց-ճուր չի մոռնա։

Վանի շրջակա գավառների հայ գյուղացիների խոսակցության մեջ կային նաև համեմատություններ։ Մեկը երգում էր։ Երգողի և՛ ձայնն էր բաղցրալուր, և՛ երգն էր հուզիչ։ Գովում էին՝ «Ա՛յ օղուլ, այու էտր ո՞ր անղաց ճուր էս խմե, խո Առճակու ախպրի ական ռասա չը՞ս իկէ»։

Կամ էլ թե՝ «էտր ի՞նչ անուշ ձենի տեր ես, ասես թե Առճակու ճուր խմած ըլնես»։

Մի ազգիս կամ հարսի գեղեցկությունն էին գովաբանում «Խորոտ մերյ աս.— ասում էին.— Առճակու ծովու խռեղնի կտոր ասերյ»։

Մեկը սիրահարված էր, անհուսալի. սակայն խորունկ և այդ սիրով պարմանք էր պատճառում շրջապատին։ «Ախպեր, էտր սեր չի,— ասում էին,— էտր Առճակու ախպրի մեջն է լողկրցե»։ Կամ թե՝ «էտր Առճակու ախպրի ճուր է խմե»։

Գովում էին մի գեղեցիկ, ցեղական նժույգ՝ «Ծի մըք աս, Առճակու ծովու խռեղն ծի ասերյ»։

ՀԵՔԻԱԹՆԵՐ

ԿՈՒՌՔՅ ԹԱՔԱՎՐՈՒ ԽԵՔԱԹ[1]

Կուռքյ Թաքավոր մեկ անողորմ, անկուշտ, անաչքյ-տնիրես, համ էլ անմախ մարթ էր։

Էնկանդար անողորմ էր, որ ուր քյուլֆթին՝ բիթունին արտց դարդավարամ, որն ուր խեղաեց, որն մեռան, մնացին մենակ իրեք լաճ։

Ասիցի որ անկուշտ էր, համա ինչխ անկուշտ՝ ուր աշխրրքյի մեչ ինչկանդար մալ-տավար, ինչկանդար կյել-կյաղան որ կին, սավայի մեյ կրմփրռ շնից, ըիթոնին պրռնեց խում-խում կերավ։ Գյնա չկշտացավ։ Ետ տառցավ տյաշտերաց կար-կանաչ արածաց, գյնա չկշտացավ, մկա էլ ծառեր քյակեց՝ կրռծեց։ Ըսըսկնա անելով, ուր աշխարքյ տառցուց չոր անապատ։ Դորիս ուր ումուտ տրեց վեր մեյ ցորնի առտի։

Լաճերաց ճոչի ծեռ մեյ հերկեն մյարտակ տվեց՝ կտյնցուց էտր առտին նոբադար։ Առատվե չուր իրիկուն, էտր ճոչ լաճ, պիտի առտի էս կյլխուց էն կյլոխ վաղեր, հուշտ-հուշա կանչելով, մյարտակ դեխ երկնուց խավքյեր թաղթրփեր, որ չըլնի թե էտր երկնուց խավքյերաց մեյն ըիրդան իճներ վեր առաին, մեյ խաա ցորեն կըարցեր։

Մեկ շոքյ օր լաճու քյուն տարավ։ Կուռքյ Թաքավոր աղորթ ի, անաչքյ էր, համա ակըռնջներ սուր ին, խետ «հուշա-հուշտի» ծեն կըտրվավ, իմցավ որ լաճ քյըներ ի. էկավ առեց ոտաց տակ, տուր թե կուտաս, էնկանդար պարկեց, լաճու քիթ-մռութ ասփկըցուց, լալուց աչկեր նեղցան, խելքյ կնաց։

Ըսըսկնա էլ խելքյ կնացուկ էլ թողեց՝ մոտեն կտտացավ։

Իսոր կյմփրռ շուն, լաճուն էնկանդար լրկըստեց, չուր խելք պիրեց կյլոխ, վերճն էլ կյադտիկ տաաց.—Քյանի քյու խեր քնուկ ի, իլի՛, ես ինեմ քյու առաճ, քյե ճամբախ շանց տամ, խըղրաց էրթանքյ սառն աշխարքյ, էնտեղ մենքյ տատենքյ, մենքյ ուտենքյ, խաղտր տիր աղեկ կըլնի, քյանձ թե մնանքյ էսա չոր-կոիկ աշխարքյ։

Ըտըսկնա էլ կուռքյ Թաքավըու կյմփրռ շունն էլ, ճոչ լաճն էլ թողին մոտից փախան։

Մեկել օր կուռքյ Թաքավոր մյատտկն իտուբ միճնեկ լաճու ծեռ՝ կայնըցուց առտին նոբադար, ասաց.—Մեյ երկնուց խավքու ոտ կպեր ի իմ աշխրրքյի խողին, քյու ճոչ պըռտուճ քյու ակտնջ կթողնեմ։ Խետն էլ թալեց լաճու ըեղ-մուրուս պրռնեց օլյորկաեց։ Մուրուսի ցավի ահու, խեղճ լաճու ռանքյ-ըռունքյ իրիսից թըռավ, տեղըռնցավ, տառցավ ինչխ այաշաի ղառդարըռ։ Երկնուց թըռնող խավքյեր որ իտոր տողտըղալ տիսան տիժտրներն էկավ, կըռկըռալով ծեն տվին.—Տղա՛, ասիցին, ըտրըսկնա տողարղալով այոռ չես կանա քյու խորից աղատվե, չումքյի էն անմախ ի. իլի վեր, մեր կրռկըռոցի ծենի իափվանց արե, մենք դոր կիճնենքյ, այու էլ էնտեղ կայնի, քյե տունտեղ շինի, աանրտ պյուլորն էլ բադան քյաշի, որ ինս-ջինս չմտնի քյու առն, քյե խամար ապրի։

Միճնեկ լաճ լստվ, էլավ վեր, երկնուց թռնող խավքյերաց կրռկրռոց, էնան էլ ինոնց կյետին ինդյող շյուքեր պըռնեց, խորից կյապաիկ, խոր աշխրրքյից փախավ։ Էն փախնելն էր, որ փախավ։

Կուռքյ Թաքավոր, որ տիսավ էսա էրկու լաճեր փտխան, հերսեր թափեց վեր պըստիկ լաճուն, պրռնեց չըլտըցուց, կըլոխվեր կապնց ուր շադրի սնից, թողեց պյարկ տրիվի տակ, կինք պառկավ ըռհաթ քյնավ։

Պըստիկ լաճն էր, պյարկ արիվուց խաշվավ, տառցավ սե քյոմուռ, կյլոխվեր էլ որ կապուկ էր՝ պըռկըներ ուռան, աչկեր ըկլորցան, ըտըսկնա կերպարանքից ինգյավ։

Ասլան-կափլանթերաց տիժար էկավ։ Էկան, ինոր կապեր կրռծիցին, խանիցին կայնըցուցին վեր ոտաց։ Ասիցին.—Ու՛, տըղա՛ քյու քյաֆըր

---

[1] Պատմեց արճակցի ծերունի Դավիթ Միրզոյանը՝ 1931 թ. Երևանում։

խորից քյն պրծում չկա. իլի՛, քյու իրեսն արա գեխ աղոթրան, կնա. էտր աղոթրան-աշխըրքի տերեր որ կան՝ մեր էլգյուն-էլաշիրներն են, քյու խոր ձեռ՝ ինոնց չի խասնել։

Էտա պըստիկ լաճն էլ էլավ, տկլոր, ջանջանդակ սեվցուկ, փախավ։ Փախավ կընաց չուր աղոթքըրնի աշխարք։

Անմախ, անօգուտ, անաչքյ-անիրես կուռքյ թաքավոր մնաց մեն-մենակ իր ավերակ-անապատ աշխըրքյի մեչ։

Երկնուց իրեքյ խնձոր իճավ, մեյն ասողաց, մեյն լսողաց, մեյն էլ էսոր կրսեն մե կրսա արողներաց։

ԱՍՏՂԱԳԻՏԻ ԽԵՔԱԹ[1]

Մեկ աշխըրքըլի մեչ մեկ աղքյատ խալիվոր մարթ կըլնի։

Ցինըն ի, իր պառավ կնիկ, մեկ էլ իր խասուկ աղչիկ։ Իտոնց ապրուստըն էլ էն ի, որ էտա աղչիկ կէրթա, տյաշտերաց պանչար-մանչար կըպիրի, մեր կտանի կուտա ուրանց գանղին արըկըցներաց, իտոնք էլ որըն խաց կուտա, որըն ծավտր-մավար, որըն թար-թացան, կըպիրի որ կըննցուցեն։

Օրըմ էլ էսա աղչիկ կասի.—Այ՛ խեր-մեր, չուր էսօրըս ձեղնից պախիր եմ, համա ասարծուց ինչըրխ պախեմ, ախըր ես ծոցվոր եմ, էսօր-վաղն էլ իմ ճիժ կըլնի։

Խեր-մեր կուտան մեչ ուրանց կըլխուն, կասեն.—Էսա ինչ սև ես պիրի վեր մե. մեր աղքյրատութեն խերիքյ չեր մե, մըկա էլ բենամուս տառցանըքյ։ Աղչի՛, կասեն, ըտըն գուգընդուղ ասա՛, տյաշտի խավիվ-նախըրըթներից ո՞ր շան թուլեն ի էտա պյանն արե, տանըքյ տառ-դիվանի, բոլըրի պիրենք կայնցուցենք վեր քյն, վեր քյու ճժին տեր։

Աղչիկն ի, կասի.—Այ՛ խեր-մեր, վի՞ր վրեն շատ թալեմ, որ ես էլ չեմ կիտե վավ էր։ Մեկ օր էն պառու սարըն ի կնացե, տխտրի մառ նստուկ պանչար կիքտըկի. մեկ էլ մեր սնորի էն թարաֆից մեյ խակյուկ-կապուկ ապավարի ավչի էկավ. նստավ մառըս, գրուցիցինքյ։ Դե, ջըհելի խելք էր. չըֆայմա, որ էտա մեյ արըով պիտի ծոցվորնամ։ Զրուցիցինքյ, գրուցիցինքյ. կամքըս առեց. իր արածն արաց, թողեց կընաց։

Խեր-մերն ի. կասեն.—Աղչի՛, տյու անից այուս մի՛ ըլնե. մենք էլ մըրթու պյան չասենք, թո տուռ-արկեց չիմնան, չուր քյու պիճն ըլնի. սորա տիսնանք ինչ խող տանք վեր մե կյլխուն։

Դորուս էս խալիվոր էնան պառավ կընըստեն՝ վեր-տիր կաննեն. թե էտա պճին ինչըրխ սըթրենն։

Պառավ կասի.—Պիճն ըլնի թե չէ. խեխտենքյ. թալենքյ շներաց։

Խալիվոր կասի.—Ծո՛, կնի՛կ. մեր ախչկան ասածով՝ էտա ավէին վեր ինոր ղոռ չի արե, էլախսա ասըլղաղա մարթ ի ըլեր։ Արե. մենք էլ ինոր ժառանքյին պախենք-պախպանենք. թե որ օրըմ չէ, օրըմ էկավ՝ իր ժառանքյին տեր կայնավ. թո կայնի, թե չէկավ, ավիլի աղեկ, մենք կտառնանքյ ասըլղաղա ժառանքյի տեր։

Վասալամ, աղչիկ կայնավ վեր ոտաց. լաճըմ պիրեց։

Պառավն էր՝ ճիժ պըռնեց թալեց պյարկ թոններ։ Խալիվոր, էտա թաղկին ծեռ պարղեց կրակի մեչից ճիժ քյաշեց տուս։ Համա, էլ ի՞նչ, ճժի կըլոխ-մյոխ, աչ թեվ վառվուկ։ Ըտըսկնա սախկատ-քյաչալ էլ մնաց։

Ժամանակ կըռնցնի, խալիվորն էլ, պառավն էլ ուրանց աղչիկն էլ կըմեռնեն։ Ջաչալն էլ խելացի մարթ առուս կուկյա, կըպասակվի. լաճըմ էլ ուրան կըլնի, համա հյա կմնա ասածու աղքյատ, չումքըլ սախկատ էր, ոչ մեյն էլ ինոր սարակ չին պըռնե՝ որ պիրեր իր ապրուսա աներ։ Էսա խերիքյ չէր. սաղ կյեղով էլ խոսր սախկըրտութեն, պըճութեն իրես կուտին։

Օրըմ էլ սիրա շատ կըրցվի, կառնի իր կնիկաղեն էսա տեղեն կէրթա։ Կէրթա-կէրթա. կըխասնի մեկ սիրիշ կըռալի խող։ Մեկ պանցրիկ քյոշկի առաճ կկայնի, քյոշկի տիրոջ աղաճանք կանի. կասի.—Աղա՛, կարիրական մարթ եմ, մեյ սթար առ իմ բյուլֆըրթին, չուր ես գեսից-ղենից վաստակ անեմ, պիրեմ քյու աղեկութնի արկից այուս կյամ։

Զանգին կծծղա, կասի.—Ծո՛, չաչա՛լ, տյու ինչ ես, որ քյու ավածն ինչ ըլնի։ Հախի խամար չէ, համա ես ասըլղաղա մարթ եմ, իմ այուոն էկած կարիրականին հյա էլ ծեռ թալեր եմ, մենակ թե ծիկ մեյ խասյաթ կա, առաճուց պիտի իմնամ, իմ քյոյղեն պըռնակվող մարթ ինչ խունարի տեր մարթ ի։

Ջաչալ կասի.—Աղա, ես իրեք խունար ունեմ, մեկ էն ի, որ աղեկ ջավահիր քյար կըճանչնամ, մեկ էլ, որ աղեկ ձի կըճանչնամ, մեկ էլ մարթ՝ կուղի ջհել ըլնի, կուղի խալիվոր, ինոր խասյաթից կիմնամ ինչ խոր ղավակ ի։

Զանգինն ի, իր մշակներաց կյլխավորին կասի.—Տար էսա կարիրականին կյեղի կրաղի,

[1] Գառնեց արձակցի ծերունի Դավիթ Միրզոյանը՝ 1931 թ.։

մեր կիսախտրաքա փայխներ մեկ ամսով տու, թո ուր քյուլֆաթ սթարի, ուրան էլ շանց տուր, թո մշակներաց խետ պյանի, ուրան էլ վաղվանից դեն, չուր մեկ ամիս, օրական մեյ խաց թային եապի, չուր մեկ աշխատանքյ ճարի, ուր կյլխու ճարն անի։

Ջաշալն ի. ցերեկները կէրթա ղանդընի մշակներաց քյոմաքյ կանի, հեվարին, ուր թային նաոնի կէրթտ խարարեք։ Կնկան խեա՝ դեսից-դենից փեա-փիաուր կժողվեն, օրական մեյ ծակ կըկալեն, օր կնցուցի՝ չուր էրկու շապաթ։

Էտ օըերն էլ էտա երկրի թաքավոր պիտի փսայվի։ Երկրի ղանդինթեր, մեյ-մեկ տնկյին ջավահիր կհաղրեն, որ տանեն թաղա թաքուհուն ադիյա։ Ջաշլու աղեն կուզի ուր սարածըն հմենից առավելն ըլնի, ջուհառջիյթերաց կանչել կուտա, ինոնց պիրած ջավահիրներաց մեչեն մեյ ճոխ ջավահիր կճոկի՝ կյին կըրարուշի ոը առնի, էն թարաֆեն Ջաշալ կուկյա, ջավահիր կառնի ուր ծեռ, վեր-տիր կանի, կասի.—Աղա՛, էսա ջավահիրներաց որը կառնես՝ առ, հումա էսա մեկ մի՛ առնե, իսոր մեչ բոտ ի։

Ջուհառջին էլ ինաաու, ալմաստի սղոց կըտնի՝ ջավահիր կսղոցի. կիրիշկան ինչ ջավահիրի մեչ բոա ի։ Աղեն ուրիշ ջավահիր կառնի, կասի.— Ջաշալ, տյու էսա ինչ ադեկութեն էր արիցիր ծիկ։ Բոտ ջավահիր աանեյի թաքավրուն ադիյա, թաքավոր իմ վիզ պիտի ղանել տեր։

Ուր մշակներաց կյլխավորին կասի.—Էսով դեն Ջաշլու թային մեյ խացով ավըլցուցեք։

Էառվ դեն Ջաշլու թային կտառցուցեն օրական էրկու խաց։

Կրնցնի մեյ շապաթ, էրկու շապաթ, մեկ օր էլ ջույար կըպիրեն աղին, թե՝ չես աաե, քյու դուշման, քյու սնորն ընցեր ի, կուկյա վեր քյե կռիվ։

Աղեն էլ շաա անվախ իդիթ կըլնի, կասի.— Իմ կըռաթին, որ հալա այար չի արվե վրեն, պիրեք այարեք, ես խեծնեմ էրթամ դուշմնի տեմ կռիվ, սեվ պիրեմ վեր ինոր կյլխուն։ Կըռաթին կպիրեն, ի՜նչ կրոաթ. ոտքեր որ չի ղարկե՝ թաղա ճըրուկ առտի մեչ, թող-դուման կխասնի երկինքյ։

Ջաշալն ի, կուկյա ծիյու կյլոխ կըպռնի, կիրիշկա մեչ ինոր աչկերաց, կասի.—Աղա՛, մեյ խնդիրք կանեմ, էսա ծիյով քյու դուշմնի վրեն էրթալուց առաճ, մեյ խաա քշի, թո տղեկըմ քրռանի, սորա դյոլերաց մոտով քշի, որ էսա ծին ուրան չթալեց դյոլի մեչ, նոր անվախ քըշի վեր քյու դուշմնին։

Աղեն ի կասի.—Փըրծ-փործանքյ չի, մըխա ջըորենք։

Կըխեծնի ծին՝ կես սհաթ կքշի, կքյոտընցուցի, կքշի դյոլերաց թարաֆ։ Ծին ճուր կախսնա թե չէ, ուրան կթալի մեչ դյոլին, կյոմշու պես կըփոքվի. աղի սիլախ-ասպար բիթուն կլխկվի։

Աղեն կասի.—Ծո վա՛յ, էսա ին՞չ պյան էր. որ ես էսա սհաթին կնացած ըլնի դեխ դուշմտն. էսա ծին էլ նսաեր ճըի մեչ, իմ սիլտխ-միլախ թացվեր, ես չի կանի կռվե, դուշմանս կխասներ վրես, կյլոխըս կկտրեր։ Ծո՛, Ջաշա՛լ, կասի, տյու ին՞չըխ իմցար, որ իմ կըռաթին ըտըսկնտ կյեչ խասյաթի աեր էր։

Ջաշալ կասի.—Ես ոը իրիշկիցի մեչ ինոր աչկերաց, խասկըցա, որ ինոր աչկեր կյոմշու աչկերաց նման ախմախավարի էր, միտք արիցի. ծիկ-ծիկ ասիցի՝ էսա ծին ուր քուռակ վախտ, կյոմշու կաթ ի կիրե, կյոմշու էլ խասյաթ ի առե։

Կյլխավոր մշակ կասի.—Վալահի, Ջաշլու ասած դողրի ի, մեր կըռաթին՝ քուռակ վախտ, կյոմշու կաթով ենք ճոճացուցե։

Աղեն կասի.—Ինչ որ ի, Ջաշալ, էսօրվա օր տյու ծիկ իմ դուշմնի ծեռից աղատիցիր, ես քյու աղեկութնի տակ չեմ մնա, էստուց դեն, իմ մուլքի մեչ մնալու քյու վադեն մեյ տարով կըհերկնցուցեմ, քյու թայինն էլ օըական մեյ խացով կավըլցուցեմ։

Էառւց դեն Ջաշլու թային կտառցուցեն իրեք խաց։

Կնիկն էլ ինչ ի արե, էաա խարարեյթերաց մռաերքյ փորե-փորփրե, սոխ-սխտոր, բոհան, նարդիղ, ուրիշ պյան-ման ցանե, օրական-օրական իրկան պիրած թայինթերաց խեա կանանչի կըանեն՝ կուաեն, փառքյ կուաան ասարծուն, կասեն.—Թե՛ ըսաեդ մեր պըճութեն չեն կիաե, մե բենամուս ասող չկա, ինչ կըլնի, թո ըլնի։

Կրնցնի մեյ վախա էլ, մեկ օր աղի տուն դավաթ կըլնի։ Աղեն ի, ուր դավաթվորներաց նըսա կանի ուր կյլխու իկածներ, կկայնի վեր յոտ ջավահիրին, էնան էլ ուր կըռաթիի վրեն։ Կըտիսնա, որ մեյ քանիմ խոկյի կըղարմանան։ Ինքն-ուրան կասի՝ տես, էսա փեյղավանդյներ, ծիկ չավատացին։ Կանչեմ Ջաշլուն, թո ինքն շհադութեն աա։

Ջաշալ կուկյա։ Աղեն կասի.—Ջաշա՛լ, մխատ իմ կրոաթի ծիյու էնան էլ իմ խավնած ջավահիրի կըսեն արա, թո իմ դավաթվորներ լսեն։

Ջաշալն ի, էտա պյաներաց կրսեն կանի, հա-

ման ըսկուն, ինչքխ աղեն էր արև. էլախսա՝ ինչքխ որ իլեր էր։

Դավաթվորներաց մեկըն կասի.—Որ ըսկուն ի, էսա Ջաչալ, ուրիշ-ուրիշ խունարներաց տեր էլ կըլնի։

Աղեն կլսի, եա կտառնա դեխ Ջաչալ, կասի.—Ջաչալ, քու միտ՞ն ի, տյու որ ոտ տրիցիր վեր իմ խողին, ձիկ ասիցիր՝, ապա՛ ասիցիր, ես իրեք խունար ունեմ, մեկ, որ ակն-ակունք կճանչնամ, մեկ, որ ծիյու աղեկն կխասկնամ, սեյն էլ, որ .խան օղլին, կուղի ջ՞եկ ըլնի, կուղի՝ խալիվոր, մեկ սիր որ խասր խեա կյոռծ ալըռնեմ, էն սհաթին կխասկընամ թե ինչ ասլի խոր ղավակ ի։ Ես քյե էրկու ալյանի մեչ ջրորիր եմ. ակն-ակունքն էլ ճանչըցար, ծիյու սնույթն էլ խասկըցար, մնացեր ի հիսան օղլուն ճանչընալըտ ջրորեմ։ Էսա ղավաթվորներ որ կան, ըիթունն էլ կիսեն. որ իմ ծնվելուց առաճ, սաչն իմ խոր զարկեր ի. պակսան որ ես իմ խոր իրես չեմ տիսե։ Դե որ քյու ասած ղորըրսյ ի, ասա տիսնամ, իմ խեր ի՞նչ թավուր մարթ ի իլե։

Էսա ղավաթվորներն էլ ըիթունն էլ աղի խեն դատարքն են, ըիթունն էլ խամողմունքյ ունեն, որ աղեն խասակ ասըլղադա մարթ ի, շատ խնաղանդ էլ ուրթի ի, չումըի չուր օրըս մոր խոսկից տյուս չի ըլնեւ Մերն էլ ինչ մեր, տասը տարի ի՝ տեղ-տեղաշարի մեչն ի։

Տարյ-պակ ըյըտինքյ կատա վեր Ջաչլուն Նեռ կմտուցի բալըդի տակ, մեկ դըր կյլուխ կմածի, ասրա կասի՝

—Աղա, էսա մեկ տարի ի ինչ ես քյու մույրի մեչն եմ, քյու մշակներաց խետ կըռատեմ, շատեն-ըչեն իմցած կաս, որ ես սուխ ասելու խալյաթ չունեմ, ինչ որ կիտեմ՝ ղողըու-ղողըուղանա մարթու իրիսին կասեմ, էլ ընչի՞ ձկնե էտա ալյան խառցուցիր, էն էլ էսա ջաղամաթի առաճ։ Մեկ ուրիշից իմցիր։

Աղեն թե.—Ես քյեզնից կխառդուցեմ, տյու՛ ալիտի ասես։

Ջաչալն ի կասի.—Դե էրթամ-կասամ արա, որ ասելիքիս խամար ձիկ ղարար չիտաս։

Աղեն ի, կասի.—Ես շան դավակ ըլնեմ, շան ծիծ ծըծած ըլնեմ, թե որ քյու ասածի խամար քյե մեկ զարար տամ։

Ջաչալ կասի.—Աղեկ, կասեմ, համա ըսկյուն կյախ կասեմ, որ ես, տյու, մեկ էլ ասպածն ըլնենք։

Աղեն կղոռի.—Չէ, որ չէ, մկա էսա մարթե-րաց առաճ ալիտի ասես, որ ասես։

Ջաչալն էլ կասի.—Աղա, էսա քյու մալ-մուլք, էսա քյու ղանզընութեն, էսա քյու անուն, համեն-համեն ասըլզադայի են, համա քյու արնի մեչ՝ մեյ պուտ ասըլզադու արուն չկա, էլախսա քյու խեր նարամզադայ ի իլե։

Աղի ռանքյ-րուունքյ իրիսից կըթոնի. կասի.—Տո՛, Ջաչալ, տյու էսա ի՞նչ ապուր էր կերար։ Ջուր օրըս իմ խոր հիշատակին օխնանք տալուց ըատ ուրիշ պյան ասող չէր իլե։

Ջաչալն ի, կասի.—Աղա՛, ախըր էն սհաթին, որ ես ոտ տրի քյու խողի վրրեն, տյու իմ ծեռ քյու մոյրով մոյրված սանաթ ես տվեւ էտ օրես դեն էլմ էլ սանտթներ ես տվեւ

Աղեն էլ ավիլի կպարկանա. կասի.—Տո՛, Ջաչա՛լ, տյու էտա ի՛նչ շառեր ի կթալես վեր ձիկ. ծո տյու ինչ շուն ես, որ ես քյե սանաթ տված ըլնեմ։ Խան տյուս էսա ջաղամաթի առաճ ըսպաթ արա։

Ջաչալ կասի.—Աղեկ. աղա, թո քյու ասածն ըլնի։ Քյու միտ՞ն ի. առճի տիր, որ ոտըս տրիցի քյու սնոր, քեզնից ռուջա արիցի, որ ձիկ, իմ ըյուլֆըթին սթար տաս, ասիցի էլ, որ քյու մշակներաց խետ աշխատանքյ կանեմ. ծեռնես էկածն էլ չեմ խնայե. քյու աղեկութնի տկեն տյուս կըլնեմ։ Տյու տեսար, որ ես, կարիրական, ախ-քյառ, սախկաա մարթ եմ, խեաս էլ ջ՞եկ կնիկ, խմորակեր ճիժ։ Տյու էսականդար մալ-մըլքի, էսականդար շնյըրնկյի տեր աղա մարթ, ոն՞ թե քյու քյոլդեն սթրիցիր. տարսր կյեղի կըադի խըռ-խարարեյթերաց մեչ նսարցուցիր, ձիկ իմ ըյուլֆըթին էլ օրական-օրական մեկական խաց էլ թային կադիցիր։ Թե որ տյու ասըլղադա խոր ղավակ ըլնիր, քյու մտքով չէր ընցնե թե՝ օլան, էսա խարարեյթերաց մեչ կյել—կյաղան էլ կմտնի, կյող-հարամի էլ կմտնի, էսա անճար մարթու անճար քյուլֆըթի հալ ի՞նչ պիտի ըլնի։ Հալա էն էլ ասեմ, որ մեկ ամիս էլ վաղա կըրիցիր էսա մեկ։

Էն օր, որ այս թաքավրուն ադիյա պիտի տանիր, ես էկա քյու ծեռաց ջավահիրի խաս-խամ ըլնելն ասիցի, ջրորիցիրքյ, իմ խարարն էլ էլավ։ Տյու՛ ասիցիր, որ ես քյու կյլոխ թարավրու ծեռ-նեն ազատիր եմ։ Տյու իմ բարոկնեմ ճոչ աղեկութ-նի տիմաց ի՞նչ արիցիր։ Իմ օրական մեյ խատ թայինի վրեն՝ մեյ խաց էլ ավլցուցիր։ Վասալամ։

Ասլա ասըլղադա խորից էլած ժառանդյ, կուղի, աղքյատ ըլներ, կուղի ղանդին, ուրան մախից ադատողին՝ բոըսկնեմ ցած չըվանի կկա-պեր՞։

Էս էլ քյե, քյու մոյրով մոյրված սանաթներաց էրկուս։

Քյու կըռաթին, աղա, քյու տան քուռակն ի իլե։ Քյու տտն պստիկ ճըժից չուր խալիվորն էլ, տյու էլ, ռիթունովըտ կիտեյիք, որ էտտ ծին կյոմշու կաթով ի ճոշացե։ Մեկուա մտքովն էլ չի ընցե, որ լտա ծին կյոմշանման կըլնի։ էն սհաթին, որ տյու էտա քյայլան ծին խեծար-քըշիցիր դեխ դուշմընիտ թտրտֆ, էլըմ ես էլա՝ ոը քյե ասիցի մեյ խտտ չըոռի, նոր կընա կռիվ։ Կռաթին քյե տարավ քյշեց մեչ գյոլին, քե էլ, քյու սիլախն էլ թացացուց։ Տյու էլ քյու պենով տսիցիր՝—էսա Ջաշալ ձիկ սպանվելուց փրկեց։ Եդնան այու իր՝ որ քյու պենով ասիցիր՝ էսա քյու աղեկութնի տիմաց, ես քյե աղեկութեն պիտի անեմ, իմ մուլքի մեչ մնալու քյու ողդեն կըհերկընցուցեմ մեյ տարով, քյու թայինն էլ պիաի ավըլցուցեմ՝ օրական մեյ խացով։ Դե, աղեյթեր, կտսի, այուք ըլնեքյ ծեր ասպած, ապա ասըլղադա մարթու որթին բաըսկնեմ էլ նամարդ կըլնի՞։

Աղեն էլ, ուը դոսաերն էլ, ռիթուն կըլալկվեն, կրմնան։

Անոր աղեն կասի.—Ջաշաղ, չուր էսօր որ քյու աըած տդեկութնի արկեն այուս չեմ իկե, էաըա տեղ էսօր այուս պիտի կյամ. ոնչ թե քյու վաղդեն մեչ իմ մուլքին մնաղ կհերկնցուցեմ, ոնչ թե քյու թային կըհավըլցուցեմ, հակաըըն, էաա խարարեյթերն էլ ինոնց մոաի արոան աոան էլ, վաղվտնից թաքավորական թըղթով կըկյրեմ քյու անունով։ Քյե էլ կըկյրեմ ազաա մաըթ։ Տիսնամ էլ քյու մաքի մեչ իմ խոր կըհաշվե՞ս խաըամղադա, ձիկ կըհտշվե՞ս խարամվադա մարթուց ծնված։

Ըսասկնա էղ կանի։

Դորուս էլ կյանք տղի աունւ Ինչկտնդար էղ որ մեը՝ անգյալ պառկուկ ի իղե, ինչկանդար էլ որ նեզսըոտած կյախեր լտճուն ասեր ի՝ «գյոորագյո֊ոի աղա» էն սհաթին էլ ասեր ի՝ —Ախ, եփ ասպած իմ խոկյին կտոնի, ես էրթամ պառկեմ իմ լուսլուսեղեն իրկան կողքին։ Լաճն էլ ուր մոը ամրով ի նստած-կտյնած իլե։ էտ օր որ դավաթվորնեբաց շհադութենով թաքավրուն խնդիրք կուտա՝ ուր փայխըներ, էնան աըոան աոա կպտշխի Ջաշլուն, կէըթա մոը մոտ, ծեռքեր կըպաքի, կասի՝ Մերիկ, չուր էսօը, իմ խոը անվան իաեվ մեյ թարա-խարար ասող չէր իլե, համա էսօր իմ սթրած ախքյաա կարիրական իմ դոսա-դուշմնի առաճ, ձիկ ըսըսկնա-ըսըսկնա պանեը ասաց։ Ես էն սհաթին ինոր ճոչ պըոտուճ ինոը ականջ կթողնի, համա վախեցա որ իմ դտվաթվըըներ որ խտսնեն ուրտնց տնեը, պիտի ձիկ մեղ աընեն, ասեն.—Տես է, զինքյըն ասըլզադա-աղա մարթ, ուր տըոտն ախքյտին թայ տաոցավ, ուը էրթումն էլ շպախեց. իտոր խամար էլա՝ էտա անաղուխտց շան մուլք էլ պաշխիցի։

Մկա, մերիկ, այու ձիկ մեյ խելք սովըըցու, ես ինչ՞խ անեմ, որ հյա՛մ իմ էրթում մնա Լրթում, հյա՛մ իմ մուլքյ մնա իմ ծեռ, հյա՛մ իմ անուն մնտ թտմիզ, հյա՛մ էլ իմ ավքյար էտա Ջաշլուց ըսկուն խանեմ, որ ուր յոթ պոոտով չըմոռնան։

Մերն ի, կասի.—Որթի՛, քյու զանգյընութեն. քյու մալ-մուլքյ անհաշիվ ի, էտա կտոր խարտըեքյ, էաա նախրակյնա տաոցուկ կոոթ խողն ի՞նչ ի, որ տյու ետ աաոցուցես, քյու տված էրթումին փոշման ըլնես, ինչ ի, ինչ, մեյ խարար են ասե։ Հյտմ էլ ավքյար պախես մեյ խեղճ, անճար մտրթու տեմ։ էտա ռիթուն մոոցի։ Մերիկ քյե մեռնի, այու արե, մեյ խալիվոը վարթտպետ պե, ես իմ աշխտըքային մեղքյեր խոստովտնվեմ, իմ սրրփութեն առնեմ, վով կիաի՝ մախ-մեռ որ լա՝ ճոչերաց խամար ի, ռիրդան չըմեռնեմ, անխոստովանանքյ-անմաս մնամ։

էաա քյամրախ աշխըրքյի մեչ էլ խտլիվոր վարթապետ չկա։

Աղեն էլ ուր մոր ամըըր ե՞փ էր կոտրե, որ մկա կոտրեը։ Կըլնի ուը ծին կխեծնի, կէրթա։ Կէըթա, կէրթտ, ասեմ յոթ աշխարքյ կան կուկյա, մեյ խալիվոր վաըթապետ կճտրի, կրթալի ուր ծիու թարքյ՝ կպիրի տուն։

Վարթապետ կասի.—Օղչում քուրիկ, ինչ խոստովանանքյ ոը անելու ես, արա պրոծի. չումքի իմ օրեր խտմբրուկ են։

Աղի մեր կտսի.—Վարթտպե՛տ, ես որ կամ, քյաոսուն տարվա կնիկ եմ, սիըարս էլ լեն ի իլե, ծեոս էլ հեըկեն ի իլե, որ ասեմ՝ քյաոսուն տիր քյաոսուն խտղտր աղեկութեն արած կամ, համտ իմ, իրկան, իմ խոր անվան, ռիթունի աոտճ մեյ մեղք եմ կյոոծե, էտա մեյ մեղք, ինչխ իշու ամոթանք կախված ըլնի վեը իմ ճայաին, ոչ մի մարթ չի աիսնա ձղնից սավայի, իտոր խամար քյե կանչեր եմ, որ քյու սուըփ աչիչ տոտճ պյանամ։

Վարթապետ կասի.—Խոստովանիր, օխնած, խոսաովանիր, ես էլ ասածու անունով քյու կյոոծած մեղաց թոյութեն տտմ։

Սորա աղի մեր կասի.—Վտրթապե՛տ, ես իմ էրիկ յոթ աարվան փսակուկ ինք, համտ ինչըխ յոթ օրվտն փստկուկ ըլնինք, ըսկուն շատ խեա մեյ-մեկու սեր-սավդով ինք։ Մեկ օը էլ իմ իրիկ ասաց՝ կնիկ, ես քեզնից ոչ մեյ սրո չեմ կանտ պախե, մեյ սըո ունեմ, էն էլ պիտի ասեմ։

Ասիցի.—Էտա ի՞նչ սըռ ի։ Ասաց.—Քեղնից պախեր եմ, ասածուց ի՞նչ պախեմ, մեյ տարի առաճ, ես մեյ տիր իմ պյաոց փոխիր եմ։ Հավատացի, ասիցի՝ սուխ կասես, ձիկ կըչորեսւ —Ասաց. Չէ, վալա՜հ, աղորթ կասեմ։ Պյանն ըսըսկնա էլավ. կնացիր ի սնորից էն Թարափ ավ աննլուս Սարվցա, կնացի ախպրիմ վրեն ճյուր խմելու ձղնից առաւ օղյուշաղմ էլ էր իկե նստե էտա տեղ պանջար կիստկեր, սատանեն ձիկ Թրթեց նստա կողքյ, խետ պրուցիցի։ Դե սատանեն շատ էր զուսե. սիրտըս կպիր էր, խետ նստա-կայնա։ Համա ի՞նչ, տեսա որ աղար ախչիկ էր, էտա պյան իյե խոց-խանդյոոց՝ ինգե մեչ իմ սըռտին։

Ես ձեն չըսավի, համա շատ ավքյարռավա. սրտիս մեչ էլ էրթում արիցի, ասիցի.—Ըս Բուրանա իշխանի աղչիկն ըլնեմ, բյե ըսըսկնեմ ուղեմ, տյու էրթաս չոլ տաշտի մեչ պյանջար բյաղող աղչկամ խետ՝ իմ պյաոց փոխես՞, դե, ես էլ պիտի, համտ մեչ բյու բուշկ-սարին բյու պյաոց փոխեմ։

Էտ վախտն էլ կյեղի մեչ մեյ մըղրըր էր իկե։ Էյա իմ բեռյամուն օրախկիցի մեյ զատու տեղ, էտա բեռյամուս խալվրներ խակյա, կնացի մոտ էտա մըղրըր, ասիցի՝ Կիտես ինչ կա, իմ աղեն, էնտոն խանըմ կնացիր են զատու տեղ խսւր, ես մենակ եմ մնացե, կիշերս արե իմ հողեն օր ընցուցենք։

Մըղրըրն էկավ։ Զուր լաս խետ մեյ-մեկու՝ իրիկ-կրնկյան պես էկանք։ Լուսասեմեն էտա տաոցավ ձիկ աղաճանքյ-պաղատանքյ, ասածու սեր տայ, թե ես բեղնից չկըշտացյա, կիշերըս էլ կյամ։

Ես էլ՝ ասա ինոր ինչխ եմ սիրե մաուցե իմ հողեն։ Ասածն արեմտոցից չուր իրիկուն յոթ տարվան կարմիր կյինին խմցուցեր եմ իրկանըս, աղեկըմ շարխոշցուցե, բյրնցուցե, իմ բեռյամու խալվրներ էլ խակյե, տան ճրագյներ բիթուն փչեր եմ. փենջարից եմ ինոր բյաշե ներս։ Մէկտ էսա կայնե. աղաճանք-պաղատանքյ ասածու սեր, թե փաղն էլ կյամ։

Դե, ես էլ դաթի սատանին յախա տված կնիկ արմաւ։ Չէ թե մեյ կիշեր, յոթ կիշեր էլ, բարըսկրնա, իրկանըս շարխոշցուցի. բեռյամու անվան տակ՝ մըղրըրուն ուրախցուցի։ Իսկ կիշեբն էլ խալվրներս փոխելու կյախ. մոոցա ձամբյաղըս չաոցըկիցի։ Ըտըսկնա էլ՝ ձամբյաղով մոտ մըղրըրու ձոց. ընա չում առատունւ

Վասալամ. իտին աատատուն. մըղրըք կընաց ուր ճամխով, ես էլ հմեն կյախվան պես, խանըմավարի. խակյուկ-կապուկ կնացի նստա իրկանս կուշտ՝ ակռատի։ Մեկ էլ մենք հալա ակռատ չեն, պոծե. մըղրըբըս տոնեն մաավ, իմ ձամքյաղ ձեռ. Տըռնից մտավ, ի՞նչ ասի ար աղեկ ըլնի։

—Խանըմ, աղա. ասաց, տյուք ըսըսկնա միասիտ նստուկ ծեր տեղ, խարար չեք, որ էսա մեկ ամիս ի, ինչ ծեր բեռյամեն հմեն կիշեր ձիկ աղաճանքյով-պաղատանքյով կպիրի ուր հողեն, որ խեա ձիկ սեր անի։

Էսա կիշեր էլ իմ ջորից իմ քյիսեն կողցեր ի, որ չեք խավատա, էսա էլ ինոր ծեռով ձիկ տված ուր ձամքյաղւ

Իմ իրիկ ձամքյաղն առեց, իրիշկեց. մեր տանու ոսկըրչու նշան վրեն զարկուկ։ Իմ իրիկ էլ Նյա իտուր. նյա առեց։—Մըղրըր. ասաց. ինչ որ արեր ես, արեր ես, այու քյու ասված, իմ տըռան բեռլամու անուն մի՛ զանե քյարին, քյո քիսու մեչու փարեն ասա, էտա ձամքյաղի կյինն էլ. էսա սհաթին տամ, քյու շառն իմ տըռնից զատ արա։

Էն սհաթին էլ խանեց մըղըրըրու ուզածի պյուրա փարեքյ խամըրբեց։

Ես նոր խասկըցա, թե ինչ նմուշ ասըլղաղա մարթ ի իլե իմ իրիկ. համա ես, ինչկանդար նամուսդ-բենամուս եմ, որ ըսըսկնա մեյ բեզասըլ, սուխ շառջի, բենամուս մըղրըրու խետ պյասցըս փուխ եմ արե։ (Մըղրըր. մըղրըբ, խո հմենն էլ ըսըսկնեմ, ասածու իրիսանց ինդյուկ չե՞ն ըլնե)։

Էսով զեն իրիկըս էլ ավելի սչիչըս կըխլին։ Համա էլ ինչւ Ինն ամիս չըթմմած, ավի անղ առչն իմ իըկան պաարռսեց։ Սորա, ես կայնա վեր ռաաց լաճըմ պիրիցի։ Էտ օրից զես շատ կըվախնամ, որ իմ լաճ համա էն օրերաց աղեն ըլնի, ինչ ես իմ իրկան կըշարխոշցուցի, կըքընցուցի, կէրթի մեյ բեզասըլ, կյող, քյարխանչու խետ կիշեր կընցուցի։ Էն օրից էս օր հյա կվախենամ, որ տապած ներող չէր իմ արած մեղքյին։

Էսա խոսառվանքյ մեկ ասպած իմցավ։ Զունքի աղի խիվընդոտ մերն էլ, խալիվոր վարթապեան էլ՝ մեռան կնացին հոխ. մենք մնացինք նրհախւ

Էլ ըրտեղի՞ց պիտի իմցվեր, թե աղեն ինչ բեղասըլ սերունթ ի, յա՝ Զաչալն ուր ադըքյատասխկատ տեղով ինչ ասըլղաղա մարթու զավակ իւ

Կյարուն պացվավ վեր աշխըրքին, պյացվի վեր ձեյ էլ։ Մեկ էլ էսա Զաչալ՝ մալուղ-մուութ էկավ մոտ աղեն, թե.

—Աղա, ասածու խաթրին՝ մեյ ճար արա. թարավըրու վերդյի ուղողներ իկեր են, էտա խըռխարարեք, էտա կոոթ-նախըրակյընեն վեր ձիկ կյրուկ ի՝ չեներիկ բաղ-բաղչա. ես էլ զաթի, թարա-

վորական գավթրի մեջ կյրուկ եմ մյուլքատեր։ Ասիցին՝ քյի յոթը տարվան խառջ պըլտք եսւ Ասիցին՝ քյի յա էսա սհաթին կըխանես՝ հազըր փարով քյու խառջ կուտաս, յան թե քյու կնիկ, քյու ճիժ կտանենք եղսիր, կըծախենք։

Աղեն էլ կասի.

—Մարթ աստծու, թաքավըրու առաճ, մեյ մըլքատեր՝ ես՛, մեյ մըլքաաեր՝ այո՛ւ։ Տյու կիտես քյու թաքավոր։ Ես էտա տեղ ի՞նչ պյան ունեմ։

Ջաշտլ ետ տոռցավ, էկավ թաքավըրու վերգյի ուզողներաց ոտքյներն ինգյավ, աղաճանքյ-պաղատանյք արաց, ինոնք էլ զաթի տիսիր ին Ջաշլու հալ, սըռտներն ռայմ ինգյավ, ասիցին՝—Աղեկ. իկեք էսա շաշալ մարթու քյուֆրթին-ճժին ծեռ չիտանքյ, մենակ ուրան տանենքյ թաքավըրու խամար կոռբեքյտրի։

Էտա վերգյի ուզողներն էլ դեսից-դենից կըլնի, ես ասեմ՝ խարիր, տյուք ասեք՝ խազար, Ջաշլու նման քյասիր-քյուսուր ժողվեր են, տըվեր են ենի-չարիյթերաց ծեռ, քյշեր են գեխ ամայի անապատ։ Մեկ օր էլ էսա անապատի մեջ օց էտա ենի-չարիյթերաց մեկոմ կըղանի։ Էն մեկել ենի-չարին՝ շոտըմ տանտկ կխանի, ինգյրոշ վրեն օցու ատման տեղ կկնդնի, պուլոր-պուլոր էտա տեղ կկտրի, կըթալի դենի։ Ջաշալ կասի՝—Աղա էտա չէլավ, քիշ ես կտրե, արնի բադալ տեղին ճուր էկավ։ Էլմ կկտրեն, էլմ էլ տեղին ճուր կուկյա։ Ջաշալ տանակ կվիրուցի, զինք կկտրի. արուն ֆըշֆըշալեն ենի-չարու ոտից կթափի։

Դորուս Ջաշալ կասի.—Վալահի, ազուն ըստեղից ներս չի կընացե, մկա պիրեք էտա կտրված տեղաց վրեն «կլիչ-յաղի» կապենք, շոտըմ կլադեյնա։ Աղորթմանց, ենի-չարին կաղեյնտ։ Մեկել օր Ջաշլուն կկանչի-կասի.

—Այ եղսի՛ր, կասի, այու էսա ամայի աեղ իմ ջան ազատիցիր։ Քյու էսա ճոշ աղեկութնի աիմաց մեյ պստիկ պան կա իմ ծեռ։ Քե մեյ թուղթ տամ, յանի թե տյու քյու պաժին կոռբեքյար արիր ես, թըմըմիր ես, էսա թղթով ետ տառցի՝ կնա քյու տուն։

Ջաշալն ի, թաքավորական աղատլամեն կտնի ծոց, ուրախ-ուրախ ետ կաառնա ուր տուն։

Տուն, ի՞նչ տուն։ Աստված ծե շանց չի տա։ Տան տյուսն էլ, նեսն էլ՝ մուր մոխիր փռուկ, էտա մուր-մոխիրն էլ նալշավոր կրընգյով կոխկըռտուկ, կնիկն էլ, ճիժն էլ մտուկ մառան, այուոն էլ ներսից փակուկ։

—Ծո՛, կնիկ, կասի, էսա ի՞նչ պյան ի։

Կնիկ տյուռ կըպանա, իրկան կառնի ներս, կըկյըկի, լալով կասի.—

—Կիտես ի՞նչ, կասի, մեյ զոռբա կյազան ի փայդա իլե, էսա շապթուց տվել ի, ինչ կուկյա, որ ձիկ պատըռտի, ես էլ հախու առիր եմ ճիժ, մտիր եմ էսա մութ մառան, տյուռն էլ մեր իտվանց փակեր եմ, տան նեսն էլ, տյուսն էլ մուր-մոխիր եմ ցանե, որ կյազան զըզվա, խո ճար չկա։

Ջաշալ կասի.—Ծո՛, կնի՛կ, կասի, ինչ կյազան, ինչ պյտն, էսա նալչեյթերաց տեղրանք որ կան, ինչըխ թե մեր աղի ջրզմեյթեր ըլնեն, տյու ղուր տեղից ես վախցե։

Կնիկ կտսի.—Ջէ՛, իմ աղա կյլխավոր, տյու արե ներս, տյուռ փակենք վեր մե, տյու էլ ծեն մի տտ, չուր մութն ինի, տես կյաղանն ինչըխ կուկյա ձիկ պատըռտելու։

Մութ կինի։ Ջմավոր մարթու ոտաց ծեն կուկյա։

—Ծո, Ջաշլու կնիկ,—տըսից հերսոտ կըռռա իկող,—ծո, խերիքյ չի, էսա մեյ շապաթ, ես իմ ասըլզադա տեղով՝ կյամ-կտյնեմ վեր քյու մըռտ խարտբի շիման, քյե մեյ թարաֆեն աղաճանքյ-պաղատանքյ անեմ, մեյ թարաֆեն՝ խասխալավ, ակռնք-մարկյըրիտ խոստանտմ, տյու քյու խաբաքի տուռ վեր ձիկ փակ պախե՞ս։ Ես մեյ տիր քյու խորոտ նմուշ չը տիսնի, որ տիսեր եմ, չուր իեսըրտ չնստեմ-կայնեմ, չեմ դնջանա։ Էսա մեկ օրն էլ քյե ողդա, վաղն էսա կյախ քյու կամքով խետ ձիկ կուտաս-կառնես, տյու կիտես, թե չէ, տուըրտ էլ ճըրխըրնախան կանեմ, լակոտիտ էլ կըթալեմ ոտացըս տակ՝ կտըրըրեմ, նոր իմ ուզած կանեմ։

Ջաշլու կնիկ իրկան կասի.—Իմ սնուշ կյըլխավոր, տյու քյու պարի աչկով տիսար, քյու ակնջով լսար, որ ես քյե կըսա անի, վայ թե տյու չավատիր, թե ըսըսկնեմ ղոռբա կյազան ի կայնուկ հապըր, որ ձիկ պատըռտի։ Աստված քյե խասուցի։

Ջաշալ տուռ կպանա, ծեռ կթալի ապի յախեն։

Աղեն ըիրդանի էկած, մեյ դոր կըթերըռի, տառնա կասի.—Ջաշալ, կիտե՞ս ինչ կա, տյու ըսաեղ չիր, ես քյու կընգյան ուզիցի ջըորեյ։

Ջաշալ ուր կընգյան կասի.—Ծո, կնիկ, աշխըրքյի մեջ թաքավորներաց վերգյի ուզողներացից ավել ըեռայմ մարթ չկա, ես ինոնց մեջն էլ ռայմովի ռաստ էկա, աշխըրքյի ըեաոլեր, որ կան՝ ենի-չարիքն են, չումքյի եթմիջ-իքյի-փուշուխ միլաթներաց պըճերն ի, որ կըժողվեն կըտտռցուցեն ենի-չտրի, համա ինոնքն էլ տեսած մեկ աղեկութնի բադալ, ավլի ճոշ աղեկութեն կանեն, հալա ուրանց արածն էլ պստիկ կհեսարեն։ Համա

Լաւ ասրըղադա ճանչըցված մեր աղի մեջ նյա մարթութեն տխսանքյ, նյա խըղճմտանքյ տի-սանքյ, նյա քոչախութեն, նյա էլ նամուսւ

Էլ, բյանի որ ես իմ սախկատ տեղով չեմ կանա խոոր հախից կյալ, իփ վեր, մեր խմորակեր ճիծ շըլկենքյ, մեր նամուսն առնենքյ, խոոր խողից ելթանքյ, տխնանք հայներս ինչ կըլնի.

Ըտըսկնայ էլ՝ կրյնեն-կէրթան, կէրթան, կէր-թան, կէրթան Հայա կէրթան. Թո էրթան։ Աստված ուրանց խետ Սւրենք խասնեն ուրանց մուրաղին, մենք էլ մեր մուրադինւ

Էրկնուց էլ իրեք խնձոր իճավ, մեկն ասողին, մեկն լսողին, մեկն էլ՝ էսա կրսեն կըսա արողինւ

ԱԽՄԱԽՈՒ ԽՆՔԱՒ

Կրյնի-չիըլնի մեկ չոր կյլոխ մարթ։

Էսա մարթն ի՝ յոս որ կըպացվի, չուր իրի-կուն կնստի վեր ուր շիման, ընցնող-տաւցողին կիրիշկա, կըմեղի, դարտ կանի, կասի՝—Ընչի էսա աշխար-երկիր կըլնեն մալ-մըլքի տեր, կրյնեն կնիկ-ճժու տեր, ես մնացիր եմ ըսըսկընա ուրբատ, չոր կյլոխ, յարաբի ի՞նչխ անեմ, որ ես էլ ուրիշներաց պես մարթամիչու մարթ դառնամւ

Ըսըսկնա դարդ կանի, մտոտխ կանի, օրըմ էլ գինը-գինը կըհըշմի կասի՝—Ըրնեմ էրթամ ըտա բախտ-դանդյնութեն տվող աստված, ինորից խառցուցեմւ

Կըլնի, իրեա կանի գեխ աղոթրան, յա՛, բախտ տվող աստված, տյու դոր ես, ես էկաւ Ըսըսկնա կըլնի-կէրթաւ

Կէրթա, կէրթա, մեկ օր, մեկ շտապաթ, կէրթա. օրմ էլ ճամխին ոտատ կուկյա մեկ սեվ օցոււ Կասի՝ կայնի մեխտ էսա օցուց խառցուցեմ, տխ-նամ, բախտ տվող տարըծու տեղ կիտի՞ւ

Պարեվ կուտա օցուն, ինոր հալ-վախտ կըխառցուցիւ Օց կասի՝—Ինչ սեվ հալ, արեվմտու-ցից չուր ատատուն, ատմանքս ցավ ձիկ կըտանջի, մարթ ախպեր տյու քյու հալից խաբար տուրւ

—Էլ, կասի, օց ախպեր, ինչ ասեմ, աշխար-երկիր տուն-տեղի տեր են, մենակ ես դատ չունեմ, խեր եմ, կէրթամ բախտ տվող աստըծուն խառ-ցուցեմ տխնամ ինչպես անեմ, որ ես էլ միբիչ դանդյնիամ, ճամբախ չեմ կիտեւ

Օց կասի.—Մարթ-ախպեր, պյան ի, թե որ էսա մարթուն բռաստ էկար, չատ ուչքս կանեմ, ինորից խառցու՝ ես ինչ անեմ, որ իմ ատման ցավ կտրիւ

Մարթ կասի.—Օց ախպեր, քյու դարդ իմնից էլ դառ ի. կավէլ ըլնի, որ բախտ տվող աստըծուն բռաստ էկա. առաձ-առաձ քյու ցավի խամար խառցուցեմ, նոր իմ աղքյատութնի խամար խառ-ցուցեմւ—Վըթողնի էտա անդեն կէրթաւ

Կէրթա, մեկ էլ մեկ քյոշկ-սարի բռաստ կու-կյա. էտա քյոշկ-սարից մեկ ծիավոր փայլեվան էրկըթե զիրախներով. մըրախ ծեռ պըռնած տուս կուկյա կըքշի վեր խոոր։

—Հե՜յ, հե՜յ, խողածին,—կըքոռա զատա-մանց,—խավքն ուր թիվու ացն ուր պոռտով իմ սընոր չեն ընցեւ Էտա տյու ի՞նչ մարթ ես, որ իմ սընոր կոխիր եսւ Դե, հաղըրվի, ես էսա սհա-թին քյու ջանդակ պիտի անեմ երկնուց խավքե-րաց կերւ

Էսա մարթ կըչոքի կյետին, փայլեվնու ոտքյեր կկյրկի, կուլա, կասի.—Փայլեվան, պյա-խի, ես քյու սընորի խամար չի, որ իկեր եմ էսըրյաներ, ես իկեր եմ՝ կէրթամ բախտ տվող աս-տըծուն կընդընեմ, որ խառցուցեմ, թե ինչ անեմ, որ դանդյնեամւ Իմ ճամխի վրեն, մեկ նաչար օցու եմ բռաստ իկե, էտա օցն էլ ի աղաճանքյ արե, որ ինոր դարդըն էլ ասեմ, ես էլ կավըլ եմ արե, առաճ էսա օցու դարդն ասեմ՝ բախտ տվող աստըծուն, ետրա իմ աղքյատութնի դարդ լամւ

Փայլեվան կասի.—Դե, ես քյե սաղ կթողնեմ, մենակ թե տյու իմ դարդն էլ ասես էտա նամարդ-օղլի, բախտ տվող աստծունւ

Մարթն ի, կասի.—Տյու քյու դարդն ասա, կավըլ-կըրար ըլնի, որ էտա աստըծուն բռաստ կյամ, առաճ քյու դարդ լամ, ետրա օցուն, ծեր խաեվ նոր իմ դարդ լամւ

Փայլեվանն ի, կասի.—Կիտես ինչ կա, ես ըսըսկնա ծիյով, սիլախով կան կուկյամ, փայլե-վինթերաց խետ կռիվ կուտամ, իմ քյոշկ-սարեն կյող-հարամուց կըպախպանեմ. համա իմ խի-վանդ-պառավ մեր ձիկ հյա կասի.—Ախ, բալամ, ի՞նչ կըլներ, որ տյու տղամարթ ըլնիրւ—Էսա բախտ տվող աստըծուն խառցու, ես ի՞նչ անեմ, որ իմ մեր էլ ըտըսկնա չասիւ

Մարթ կասի.—Հալխն աստըծու, քյու դարդ չատ դառ դարդ ի, երկինք-կյետին վեր մե չհաղ ըլնեն, թե որ ձիկ կըմաթ ըլնի բախտ տվող աս-տըծուն բռասա կյալ, առաճին քյու դարդ լամ, ետրա օցու դարդ լամ, էրկսիցրա ետո իմ աղքը-տութնի դարդ լամւ

Կասի, կըթողնի կէրթաւ

Անոթի, ծարավ, կէրթաւ Մեկ էլ դատումանց մեկ ծառ կըտեսնա, իրեն կանի դեխ էտա ծառ, զորմ էլ կէրթա, աստված ծե պյարի աա, մայադա տանձի ծառ կըլնիւ Կես նուկանոց խասուկ, մոմի պես տեղին, շաղշողուն տանձեր՝ որըն ծառի

պյուվոր կաթուկ արած, որն՝ վեր ծողերաց, տերտիրական չկա։

Շոտըմ մեյ խատ կվիրուցի, կըկոծի, ժյանգի խոաից քիթ կպըռնի, սիռտն էլ կխառնի, խեյքյ կէրթա, կփըռքյվի կյետին։ Որ խեյքյ կուկյա կյլոխ, ծառ հիսանի պես լեղու կառնի, կասի.— Մարթ-արարած, ի՞նչ կըլնի իմ դարդին մեյ ճար ասա, տյու ըլնես քյու ըստեղծող ասպած։

Էսը մարթ կասի.—Ծո՛, փե՛տ, ախըր ես իմ դարդ կիտեմ, իտոր խամար՝ իլեր եմ, կէրթամ մոտ բախտ ավող ասպած՝ իմ դարդ լալու, ճամխես մեյ անասունի տեսա, էսը էլ ուր դարդն ասաց, էնել իմցա, էտը անասունին էլ էրթում եմ տվե, որ առած ինոր դարդ լամ՝ նոր իմ դարդ լամ։ Ըռաստ էկա մեյ կուվաթով փայլեվանի, էտը էլ ուր դարդ ասաց, իտորն էլ խոսկ եմ ավե, թե որ ասպած ձիկ կըսմաթ անի՝ խասնեմ բախտ ավող աստըծու տուռ-առաճ ինոր դարդ լամ, նոր իմ դարդ։ Մկա տյու ձիկ ըստեղծող աստըծով ձիկ աղաճանքյ կանես, որ քյու դարդին մեյ ճար անեմ։ Ախըր, ծո փե՛տ, ես քյու դարդ որտեղե՞ն կիտեմ, որ ճար էլ անեմ։

Տանձի ծառ կասի.—Իմ դարդն էն ի, որ ես հմեն տարի, ծաղկելու վախտ կըծաղկեմ, պըտղելու վախտ՝ կըպաղեմ, պտուղ խասուցելու վախտ պըտըղներս կխասուցեմ (էսը տյու քյու պարի աչկով կտեսնաս) համա պըտըղներըս ղեհրըլամիշ կըլնեն, բարսկնա կըմնամ։ Նյա հիսան-օղլին, նյա երկնուց խավքեր, նյա յաբանի առչեր իմ պըտղից չեն կանա ուտե, ես ի՞նչխ անեմ, որ իմ պըտղըները ղեհրըլամիշ չըլնեն։

Մարթ կասի.—Աղեկ, ես որ խասա բախտ ավող աստըծուն, առաճ ծեր իրիքյի դարդեր լամ, նոր իմ դարդ լամ։ —Կասի, կըթողնի կէրթա։

Կէրթա, կէրթա, մեյ լոս կէրեվա, կասի՝ վալլահի, էսը լոս, որ կա, բախտ ավող ասպածն ի, էրթամ մոտ, իմ դարդ լամ, տեսնամ ձիկ ինչ ճամբախ շանց կուտա։ Բարսկնա կէրթա, կկայնի վեր լուս տվողին, կտեսնա, որ մեյ ծովային ջանավար ի, փըռքյվուկ վիր ավըղներաց, քյթի ծակերաց լոս կթալի տյուս, աչկերացն էլ ախպըրի պես առցունք կըռացուցի։ Ջինքն էլ՝ ժար, փոր կպուկ քյամակ։ Իտոր կըխառցուցի, կասի.— Հե՛յ, ծովային, քյե ի՞նչ ի իլե, որ էտ օրին էս ինդյե։

Ջանավար կասի.—Ի՞նչ անեմ, խողածին, ասպած որ աշխըրքյի ինա-չինա ըստեղծեց, իմ պապերաց, պապերաց պապկեն ասիր էր քյի՝ էսա ծովու ծըկներ որ կան, բիթունին էլ տվեր եմ քյու սերընթին ուտելիքյ։ Ես էլ ասպածային խըրրամանքով. ծուկ ուտելով կկշտանայի։ Էսը քյանի շապաթ ի, որ ծովու ծըկներ բիթուն՝ ձըկնե կըփախնեն, ապա իմ հալ ի՞նչ կըլնի։

Ըսկում էլ ընդյուռ-ընկյուռ կուլա, էտը մարթու սիրտ կըմըխկըտա, կասի.—Ծովային ջանավար, ես մեկ տղքյատ հիսան եմ, իլեր եմ՝ կէրթամ մոտ բախտ տվող ասպած. ինորից խառցուցեմ, թե ինչ անեմ, որ զանգյննամ։ Ճամխես ըռաստ էկա՝ հյա՛մ ատման ցավի տեր օցու, հյա՛մ մըղբախդար փայլեվնի, հյա՛մ պերքյ-պյառով ծառի. էտը իրեքյն էլ դարդի տեր ին, ուրանց դարդեր ձիկ կըսա արիցին, տառցտն ձիկ էլ ռուչա արիցին, որ բախտ տվող աստըծու մոտ ուրանց դարդերն էլ լամ, համա ես իմ աստված, քյու դարդ րիթունիս դարդից ճոչ ի։ Կավլ ըլնի, թե որ ասպած ձիկ խասուց բախտ տվող աստըծու տըռան, հմենիցս տաածին, ես քյու դարդ լամ։

Էմին արաց թողեց էտը տեղից էլ կնաց։

Կընաց, կընաց մեկ էլ մեյ պստիկ քյարի խովանց, մեյ քյոռ խալիվոր՝ պուպուստ՝ թռավ տյուս, կայնավ առաճ.—Պարեվ, ֆլանքյաս. ասաց, տյու իմ խեվն ի կան կուկյաս, էսա ես, դե, ասելիքյըդ ասա։

—Ծո՛, ռաքան, տյու վո՞վ ես, որ ես քյու խտեվանց կան կյամ, ասաց, ես բախտ ավող աստըծու խտեվանց ի կան կուկյամ։

—Դե, խա, էլի, ես որ կամ, բախտն եմ,— ասաց քյոռ հալիվոր,—իմցա որ խտիվանցըս կյան կուկյաս, իլեր եմ աեմըտ, որ ասելիքյդ լսեմ։

Էտը մարթն ասաց.—Ձեմ ավաաա, թե տյու ըլնես բախտ տվող ասպած, ախըր տյու քոռ տեղով ին՞չըխ պիտի հյախ-նըհաղից ձյոկես։

Խալիվորն ասաց.—Ես պյան չեմ տեսնա, իտոր խամար ի, որ վիրն ինչ ըռաստ կուկյա՝ կուտամ, մոնն՝ աղեկին, արժանն՝ անարժանին՝ քյոռ-քյոռանա կուտամ։ Սաբաբն էտը ի, որ բիթունն էլ ձիկ՝ քյոռ բախտ կասեն։ Մենակ տյու ի, որ ձիկ բախտ տվող ասպած կասես։

Սոբա եար մարթ բախտին կասի.—Ասպած ես, թե չէ, տյու կիտես, որ ես ծովային ջանավար չեմ, համա անօթութնի ըռաստ իկեր եմ, էսա մոտ տեղ մեյ ծովային ջանավար փըռքյվե վեր ավըղներաց անօթութնե կուլա, չումքի ինոր կըսմաթ ծըկներ ինորից կըփախնեն։ Քեղնից ռուչա կանի ասես, ի՞նչ անի, որ ծովու ծըկներ ինըրից չըփախնեն։

Քյոռ բախտ կասի,—Էտր ջանավրու քյթի մեչ մեկ անկյին ջավահիր ի թըռե, ճըրադյի պես լոս կուաա, ծըկներ րիթուն էտը լոսից կըխըռտնեն-կըփախնեն, տյու կնա մեյ պըտղունց բուռ-

նուբի տուր խոր պընչին, թո փըռըյնտա. էտը ունելին ջավահիր քյըթից կթոնի տյուս։ Չինքյ կըմտնի ծով, կինի ուր կրսմաթի խտեվ, տյու է։ գաթի, տյու կիտես՝ ինչ կաննս-արա, չուսքյի էար ջավահիր կմնա կյետին ինգուկ։

—Աղեկ, կասի, պյան ո՞ւլ կա, կասի. ևամխի վրեն մեյ տանձի ծառ կա, ինոր պտըղներ տառն-տղույթ են։ Ես նա փայլվիր եմ. նյտ պտուղ եմ ավե, համա կիտեմ, որ աշխըրքյի մեջ տյառը պտղի աեր ըլնելուց գեն՝ տյառն պյան չկա. ասա խանեմ թե, որ կիտես, ձիկ ասա. էտր ծառն ի՞նչ անի, որ էսաուց գեն ինոր աված պտուղներ բյագցրանա։

Ըսխտ կասի.—Էտա ծառի բյոքի տակ պը-գնձե գյուղյումով խաղինա կա թաղուկ։ Գյու-գյումի ժանքյ տարվե-տարի կուտա ուր պուլորի խողին, խողից կրնցնի ծառի բյոքին, բյոքյից՝ պտուղներուց, խոտր խսմար էլ պտուղներ ապու-րմիչ կըլնեն. կէրթաս փետատըմ աո, ծառի տակ փորի, գյուղյում խան տյուս։ Ծառն էսով գեն ժանգյոտ խողից կազատվի, պտուղներն էլ կբբյազցրանան, տյու էլ կիտես, գյուղյումն ինչ կաննս, արա։

—Աղեկ, կասի, գինքյ-գինքյ էստ մարթ, փետի գարգն էլ լացի, փետի գարմանն էլ իմցա, մնաց էն ազամփութեն գարգն էլ յամ։

—Յա՛ ըախտ, կասի, ճամխից դասւ ըագանով ըյաշկ-ասրեմ կա, էար աեղեն մեյ ծիյավոր փայ-լեվան՝ մըգրախ ձեռ թռավ տյուս, ծին քշեց վրես, որ ձիկ սպանեի, համա որ իմցավ, որ ես քյու խեն ի կան կուկյամ, իմ արե խնայելուց սավայի, ապաճանքյ էլ արաց, որ ինոր գարգն էլ մե քյե յամ։ Փայլեվնի աասծով ինչկանդսր էլ կյող-Հա-րամին ի սպանի, ինչկանդար էլ ասլան-թայան կանի, որ աան արունեն ներս մանի, ուր պառավ մեր պիտի ասի՝ ա՜, ինչ անեմ, որ տյու տղա-մարթ չես։ Էար փայլեվան ձկնե էրթում առեց, որ ես բեղնե խառցուցեմ, էլ ի՞նչ անի, որ պա-ռավ մեր ասղի ըլնի։

Քյսւ խալիվորն ի, կասի.—Կիտես ինչ կա, հիսանողի, աշխըրքյիս մեջ ըիթուն մերերն էլ արանց ավըդներուց ինչ ըլնել, ինչ չըլնել կիտեն։ Էար փայլեվնին հանուսյ տիսի։ Ուր ձիյու չըմըռուլ պըռնի, ասա՝ թե որ կուզես մարթս սրու-ավ մեյ պյան ասած ըլնես, կնա իրկանս Ասա. ձեռ թոյ դոշ, ինոր ծըծեր պըռնի, կայիմ ճըմռթի։ Խարից սորա տյու կիտես, ինչ կաննս արա։

Մարթն ի, կասի.—Սուփ խալիվոր, ինդյեր եմ քյու ըախտ, մեկ ասջա էլ կա, էն էլ յսի, իմ համխի վրեն օգըմ պասկուկ. ատման ցավից ծան-ըըր կըտքեր։ Դե, քյե ասյան ի, որ ես օգ չեմ, համա ատման ցավի տառտ իկեր եմ. հատ գառ ցավ ի խոտր խամար, խեսար չարի. որ օգ օյան ատըծու անեծքով ի, որ ատման ցավի ի տիրացեւ Եմին-կասամ արիցի, որ քեղնից խառցուցեմ. էտք անիծվածն ինչ անի, որ ուր ատման ցավ կըտրվի։

Բախան ի, տույաք կուտա քյի՝—Աստվածային խրամանքյով մեջ օգու ատմին դեհիր կըժողվըվի. թե որ կուզես օգուն ասա՝ մեկ ախմախ մարթ կընգի, կըծի. ատմանըտ ցավ կկտրվի։

Կասի, մարթ մեկ էլ աչկ կպանա. կտեսնա՝ խալիվոր չկա։ Կուտա մեջ ուր կյլխուն, կասի՝—Հեյ վա՜խ, ես ըսըսկնեմ աշխարքյ կան էկա, որ ըախտ տվող ատըծուն խառցուցի. թե ինչ անեմ. որ գանգյննամ, համա էսօրվան օր ըսըսկնեմ գարգատերերաց դարդեր լացի, մեյ խատ իմ գարգ չըլացի։ Ըտըսկնա, ուր յանլիշութենի վրեն էլ ճոկ դարդ արաց, դարդլամիշ էլած թողեց, ուր էկած ճամխով ետ տառցավ։

Ճամխին տեսավ ծովային ջանավար՝ էլմ էլ փըռըյըվուկ վեր ավըդներաց անօթութենե կուլա։ Խանեց մեյ պապունց բուռնութի՝ տվեց ինոր պնչին, ջանավար փըռըյնթաց. փըռըյնթաց, թե չէ, մեյ խավու ծվի գյորա ջավահիր բյթից թռավ տյուս։ Ջանավար՝ մարթուն օխնանքյ տալով ուր թայեց ծով։ Էն կնալն էր, որ կնաց։

Էս մարթ ջավահիրն առեց ուր ձեռ (ջավա-հիր մի ասե՝ վառ ճրաք ասա), վեր-տիր արաց, ուրան-ուրան ասաց՝ էսր ջավահիր՝ թարավրա թայքի յայեղ ակ ի. ես խո թարավոր չեմ, որ ձիկ յագրմ կյյա։ Թե պախեմ ծոցըս, ըորսկնա յոս սա, ինչ կյող-Հարամի որ իմնան թե մոտըս ըարսկնա անկյին քյար կա, պիտի ընցրնեն իսեվս, ձիկ ըսպանեն, ուրենք տեր տառնան էսա անկյին քյարին։ Հմենից աղեկն էն ի տնեմ մեկ կայա քյարի տակ, խորեմ մեջ խողին, թո մնա։

Ըտըսկնա էլ արաց, գինք թողեց՝ մալուլ-մը-ռութ կնաց։

Կընաց խասավ տանձի ծառին։ Փետատն առեց ձեռ, ծառի տակ մե քիչ փորեց, թե չէ, մեյ պղընձե գյուղյում էրեվաց, ձեռ թալից տոռթը-կալով՝ էտր ժանգյոտ գյուղյում քյաշեց տյուս, տեսավ մեջ հյին ոսկի՝ ուրան-ուրան ասաց՝—Կա-նի մեյ խատ էսր ծառի պտղից ջրորեմ, տեսնամ ըսկի քյագցրացեր ի՞, թե չէ, իմ քյաշած գախմաթ ըոշ տեղ էրթա։ Քյաղեց՝ կերավ. տեսավ ծառի պտուղներ ըսկուն են քյագցրացե, մարթ ուտե-լուց չի կըշտանա։ Ծեռ զարկեց վեր ուր կյլխուն, ասաց՝ Վա՜յ, յըմր՛ն, ես էսր ի՞նչ էր արիցի. էլա

կնացի խասա բախտ տվող աստծու առւռ, իմ աղքըլըտութնի դարդ թողիցի, էսը տյաշտի միշու ծառի դարդ լացիցի, ինոր տյառը պըտըղներ քյաղցըրացուցի, համա իմ տառն աղքըլտութնի խամար մեյ խատ չզըրուցիցի։ Ըտըսկնա, ուր աըածի վրեն փոշման, հերսլամիշ էլած, ծեռ թալեց դյուդյումի միշու ոսկիներ՝ պուտ-պուտ խանեց, րիթուն ցըվեց տյաշտով մեկ, թողեց՝ կընաց։

Կընաց-կընաց, խասավ քյոշկ-սարին. փայլևվանն էր, առծին տըըվան պես՝ քյահլան ծին խեծուկ, պողպըտե կյլխանոց արըուկ, մըղըրախ ծեռ պըռնուկ, քյոշկից տուս թըռավ համա դողրի քշեց վեր խսոըւ—Ըհր,—բոռաց ղատամանց, —էնօր տյու սութ ասելով իմ ծեռից պըռծար, համա էսօր քյու ջանդակ պիտի փռեմ մեշ իմ խողին. ղե, հաղըրվի։

—Տո, հալա կայնի,—ասաց էսը մարթ. —հալա մեյ հանսային իմցիր, թե բախտ ավող աստըծուն տիսեր եմ, չեմ տիսե, նոր ղավղադյամիշ իլի։ Տո, կնացիր եմ էլ, տիսեր եմ էլ, սառըն սըտուղ տվող ծառի դարդն էլ եմ լացե, անօթութնե լացող ծովային ջանավարի դարդն էլ եմ լացե, ինոնց դարդերաց դարմաններն էլ եմ իմցե, ըսըսկնա-ըսըսկնա պաներ էլ եմ արե, բյու դարդն էլ եմ խառոցուցե, մենակ իմ ախվալից չեմ խառոցուցե։

—Դե որ սութ չես ասե, էսա սըհաթին ասա, բախտ ավող տսպած ծիկ ի՞նչ ի թամբեխ արե, որ ինոր ամըռվ էսա սհաթին անեմ։

—Բախտ արվող ասպածն ասաց՝ էտը փայլևվնին ասա՝ թե որ կուղես մըըրա սըռտովն ըլնես՝ կնա իրկանի։ Հալա ծիկ էլ թոմբեխ արաց, որ ինոր ասածներ ասելուց սորա, ես քյու ծըծեր պըռնեմ՝ ճըմըռթեմ, համա ես ըտըսկնա տըմարդութեն չեմ անե։

Փոյլեվանն էր, շոտըմ ծիյուց իճավ, մըղըրախ ղարկեց կյետին, պողպըտե կյլխանոցն էլ, իրիսին կըպցըրուկ սութմանցի բեղ-մուըուսն էլ պըռծըկեց՝ թալեց ղեն, քյառոսուն ճող թել ծամեր փռեց վեր թիվքյերաց, մեկ էլ ծեր աշկ պյարին տիսնա, էտա մարթու առած կայնավ՝ մեկ հյուրիմալաք աղչիկ։

Աղչիկ չոքյեց ուր տեմ, թե.—Աղա, ես կավլ ի արե, որ վռվ կայներ իմ իրես-ըերես՝ իմ կնիկարմատութենն ասեր, ես մենակ էտը աստղին կյնութեն անի։ Քյանի որ էտը աստղ տյու էյար, էլախսա մկավից տյու իմ իրիկ, ես քյու կնիկ։

Մարթն ասաց.—Աղչի. զատ կաց. իմ աղքըլյտութեն ծիկ խեըիք չի. մկա էլ փսայվելս ի պակաս։

Աղչիկն ասաց.—Քյո, իմ աշկի լոս, իմ կյլխու տեր կյլխավոր, ինչ աղքյտութեն, ինչ պյան, էտը իմ քյոշկ-սարեն հլին խաղինայ ի, րիթունն էլ քյոնն են, պառկի վեր մեշկիտ, կեխմի քյեֆ արա, ինչ վախտ սիրտըա մեկ ուրիշ պյան ուղեց, ծիկ ասա, ես է՛մ էլ ըսըսկնա սիլախավորվեմ, սար-քյար կան կյամ, քյոշ-քյարվայնթերաց առած պըռնեմ, ալան-թալան անեմ, պիրեմ-լցնեմ քյու առած, տան մեշ՝ էլմ էլ քյու խամավոր խարս-կնիկ՝ մտնեմ քյու ծոց։

—Զէ, որ չէ, ասաց. ես ըտըսկնա խամ պյան պըռնող չեմ։

Էտը աղածանքյ-պաղատանքյ արողին էլ թողեց-կընաց։

Կընաց՝ խասավ օցուն։ Նստավ օցու մոտ, ուր կյլխու էկածներ դարդլամիշ-դարդլամիշ կըսա արաց։ Կըսա արաց, կըսա արաց, շուր էկավ խասավ էնտեղ՝ թե բախտ տվող ասպած ինչխ ի ուըան թամրեխ արե, թե՝ օցուն ասա, մեկ ախմախ մարթ կծի, ատման մեշու ժողվռավսծ ղեհիր մտու էտա ախմախի ջանդկի մեշ, քյու ատման ցավ կընցնի։

Օցն ասաց.—Ախըը, ես քեղնից ավելի ախմախ մարթ որ՞տեղից կընդնեմ, աըե, քյե կըծեմ։

Ասաց, ատամ կայիմ ղարկեց ինոր կակուղ տեղաց մեշ, ըսկուն կայիմ, որ ատման մեշ ինչկանդար ղեհիր կեր, բիթուն քամվեց մեշ մարթու ջանդկին։ էլ նյա՛ տվեց, նյա՛ առեց։

ԵՐԳԻԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՔԱՎՐՈԶ ՇՈՒՆ ԽՌՈՎԻՐ Ի

Կըլնի, չի ըլնե, մեյ աղքատ կընիկ կըլնի։ Էտը կընիկ կմնա աղով. իտոր իրիկ կասի.—Ծոճանց խաբար ի՝ «կինի մալի տեր, կկայնի որթու խեր», մկա իմն ի, որ լաճ-տղա ըլնի, իմ քյամկին կխասնի. ես էլ կըղանդյննամ, սաղ կյեղկյեղովի ծիկ բախլութեն կանենք։ Ուրա կնդյան կասի.—Կավըլ-ըըար ըլնի, ով կյա ծիկ ականչկլա սիրի՝ թե քյու կնիկ լաճ ի պիըե, մեյ թոփ կութնի տամ ակնչկըլեն։

Կնիկն էլ որ թոփ կութնու անուն կլսի. ուըան-

ուրան կմեգի՝ —Ես բռրակնեմ տարվան կնիկ եմ. աչկս ուրիշներաց խակյած կութնի գպռնի վրեն է մնացե, արև բսկուն անեմ, որ իմ յանու ակնե-րյեն ես տանեմ իմ իրկան, թոփ-կութնին ծիկ տա, կարեմ գպռն, խայնեմ, յա՛ ադեն կյրկեմ. կայնեմ տռան առա՛, կլեղ-կլեղովի տիանան՝ ծիկ բախրյնան։

Կմնա, ցավ բյաշելու օր մարթու չի աև թե ցավերս տռներ ի. մենակ ուրան ցավեր կբյաշի. ադեն կպիրի. կիրիշկա ադոր թմանց յա՛ ի՛ ծծի դռռռն անկարել կթողնի կլետին, դինր վադելով կէրթա տաշտ, իրկան կասի.—Բյա՛ մարթ, ակըն-կրյա հայրի, յա՛ն եմ պիրե, յա՛ն։

Ձուր եա կառռնա. նիժ չկա. շուն իկե՝ կիրե, տակրներ կլկառի։ Շունն էլ միր շունն ըլնի՝ ուրանց գռնգին բադրաշ շուն։—Վա՛յ, կասի, անաշր, անիրես բադրաշ շուն։ խարամ-զարամն ուտես բադրաշ շուն։ Շիշ մանի անիշառամ փորթ, բադրաշ շուն։ Տյու էոր ի՞նչ արիցիր. բադրաշ շուն։ Համ մեր ադիդ բադրաշ թողիցիր անկանաչ մե-ռան կյրկելու, համ իմ ուրան իրկան թողիցիր անյա՛ ադի, համ ծիկ թողիր անկութնի գպնի։ Չցրրեն՝, չպորանաս՝, բադրաշ շուն։ Կիրածդ տ խաց՝ խանդռռդ տառնա մեչ բյու փորին։ Մխառ-մխկտառ, բադրաշ շուն։

Հեվարին իրիկ այաշտից կուկյա. յալով իրկան կասի՝—Բյա մարթ, չե՞ս տես, շուր եա տառցա յետ, բադրաշ շուն մեր նիժ կիրեր էր։ Էնկանդար եմ թուր մուր տվե, էսօր ըկթուն խնատ արե. պառկե խով. նյա տուն կուկյա, նյա խաց կուտի։

ՅԱՄ-ՅԱՆԴ ԽՄՅՈՂ ԿԸՆԻԿ

Էրկու բյոր մեչ մեյ կյեղի կէրթան իրկան։ Ծուշ բյոր հյամ խորաս կրյնի. հյամ խնադանդ. հյամ միամիտ։ Իրկան խոսկ-խարբով կնասի-կր-կայնի։ Համա պատիկ բյոր շատ շարադա կրյնի։ խադար նմուշ կարահաթ կկյածի. մեյ մարթ չի իմնա. բսկուն որ մեյ բանի խառ էլ յար կդռնի. էմ էլ մարթ չի իմնա։ Երիկն էլ անաղես մարթ կըլնի. համա կրնգյան արածներ չի իմնա. վով որ էլ ասի.—Բյու կրնիկ սսսսդի ի,—չի ավատա։

Մեկ օր էլ Ծուշ բյոր կասի.—Ա՛յ բյուրիկ. ֆանրյաս ինգե իմ խոխվանց. իմ սիրան էլ վեր ինորն ի չդիմացե. ես պիտի խեա ինոր նստեմ, կայնեմ։ Պատիկ բյոր կասի.—Աղչի. աստծու սիրուն, բտրսկնա պյան չանես, բյու իրիկ իմնա՝ կուտա բյե կսպանի։

Ծուշ բյոր կասի.—Ընչի տյու բըրսկնեմ յար կպռնես, բյու իրիկ մեկ օր չի իմնա. ես որ մեյ մարթու խեա նստեմ-կայնեմ. իմ իրիկ պիտի իմնա։ Չէ, որ չէ, պիտի անեմ. որ անեմ։

Պատիկ բյոր էլմել կասի.—Աղչի, ամեն պյան ծեռնե կյալիթյ ի. ես կանեմ էլ. կրոթրեմ էլ. հա-մա բյու ծեռնից չի կա. արև ծի յսի՝ էտա պյան մի անե։

Կրմնա էար բյուրոշ իրիկ կէրթա առտ հրելու. էսա կլնի ուր խոեվ ինգյուկ մարթուն կպիրի կմտուցի տուն, ասա կփակի վեր ուրանց։ Համա էտր ահաթին. իրիկ տուն կթիի։ Մի աև էտր որ՞աթին արի գոր ուրենց չի իյե. եա ի իկե։

—Ծո, կնիկ,—կրռռա տրսանց.—էսա օր ցերե-կով տուռն բնչի՞ ես փակե. պաց արա կյամ տուն։

Կրնիկ կույա-կմխկտա. կասի.—Չե՛մ պանա. ուր չե՞մ պանա, որ մանես ներս կտխնաս իմ արած՝ կուտաս ծի կսպանես։

Իրիկ տրսից յալվար-յախա կինի. կա-սի՝—Տուռ պաց տխնամ ի՞նչ ես արե, որ բտսկր-նեմ կվախնաս։

Կրնիկ նիրսանց կույա. կասի՝—Չէ, որ չէ, չեմ պանա, իմ բյոր էնկանդար ասաց՝ մի՛ անե, չես կանա ոթրե, ես չավատացի։

Իրկան ճար կկարի, կէրթա մոտ բեներն. եասի.—Այ բենի ջան, տյու բյու բյուրոշ ի՞նչ ես տես՝ մի անե, որ մկա մտե ներս, տուռ փակե վրեն, կույա, կմխկտա. ծիկ էլ կասի՝ մի մանե ներս, որ տխնաս՝ ծի կսպանես։

Քենին կասի.—Վա՞յ, փեսա ջան, տյու նստի միատ տար-տար ծվածեղ անեմ կե. ես էրթամ տխնամ ինչ ի իյե։

Ծուշ բյուրոշ իրկան կնստեցուցի. ծվածեղ կանի առա՛, դինր կվադի-կէրթա մոտ բյոր. շտրմ ինոր յարոշ կխանի-կամիի, դինր մեյ պստակ մածուն կլցնի մեչ ակին, մեյ փարխա էլ ճուր կլցնի վրեն, մեյ խառ կռանի-կպիրի. տանակ կրթայի ակի չվան կկարի. ակի կինի կյեարին՝ կրյնի խադար փշուր. թան կրթայի շուրս թարաֆ. դինր կվադի եա, ծծդալով բյուրոշ մարթուն կառ կանի՝ կասի՝—Կտես ի՞նչ ի իյե, ես էկա ծեր տուն, բյորրս մածուն հասրիր էր. որ ակի դաներ, ես տխաա, որ ակի չվան մաշուկ էր. ասիցի՝—Այ բյոր, էոր չվան ծանդրութնի չի տիմանա. կկտրվի, ակին էլ կինի՝ կկոտրի. բյու իրիկն էլ կիմնա, կուտա բյե կըսպանի։ Չի ականջ չի արե. մածուն լցրե, որ ակի դանի, չվան կտրվե, ակին ինգե, առուցե խադար փշուր, խոռ խա-մար ի կույա։

Ծուշ բյուրոշ իրիկ կասի.—Ջանըմ, խադար ակի կուրրան ըլնի իմ կրնգյան, ես մեյ ակի

խամար պիտի ինոր սոտին տիպնե՞մ,—կթողնի-կերթա ուր տուն։

ՕԼՈԼՈ-ԲՈԼՈԼՈ[1]

Մեյ յար պոնող կընգյան իրիկ կէրթա ճաղաց, էտա կընիկ ուր յարոշ կասի՝—էսօր իմ իրիկ կնացեր ի ճաղաց, արե մեր էրտըսի վրեն։ Ես ճիժ կըքնըցուցեմ, իճնեմ տուռ սլանամ, մտնենք մառան՝ խավով փլավ ուտենք։

Համա իրիկ օր ցերեկով ճաղցից եա կուկյա։ Յարն էլ ասած վախտին կուկյա-կըկայնի վեռ էրտըսին։ Կնիկն ի, ճժի թաթկրնեը կըպռնի-կրխաղցուցի, խետն էլ յանի թե խաղ կասի՝

Օլոլո, բոլոլո, էրախսն ի վեր,
Ճժի խեր ճաղցեն իկեր,
էսօր չէլավ, վազն արե կեր։

ՄԵՐ ԽԱՐՍ ՉԿԻՏԵ ԽԱՑ ՏԱՆԵԼ ՊԵՐԱՆ

Մի գյուղից հարս են տանում մի ուրիշ գյուղ։ Ընտանիքը աղքատ է լինում։ Գարունը բացվելուն պես ընաղունի համար ցորեն չեն ունենում, վերցնում են հարսի ականջի օղերը ծախում են՝ տալիս են ցորենի։ Մի առ ժամանակ հետո, հարսի մայրը գալիս է աղջկան տեսության։ Սկեսուրը խնամուն դիմավորում է խիստ հարգանքով, անմիջապես նրա առաջ սեղան է բանում և հարսին էլ է նստեցնում մոր հետ հաց ուտելու։

Ջխոսկան հարսը չի համբերում, մինչև սկեսուրը դուրս գա, նոր մորը հայանի որ կեսարանք աղքատ են ու այդ հացը որ կա, նրա ցորենը գնված է իր ականջի օղերի փողով, հացը կտրում է տանում գնում իր ականջին։ Մայրը բռնում է աղջկան համբուրում.—Բալա ջան,—ասում է.—քոռանամ ես, մանգյար այու ըսկուն պստիկ ես, որ չես կիտե որ խաց պերան կտանեն, տարար տրիցիր քյու ականջի մեջ։

ՍԻՍԸՌԿԵՐ ԽԱՐՍ

Աշուն-աշնանոցով մեյ առւն ուրանց լաճուն կըփսակեն, ղստու տեղից խարս կպիրեն։ Թաջրըմ հլին էլ սիսեռ կլնեն պախած։ Խարս հմեն կյախ տնըցոցից կյաղտիկ, փեշը հլին սիսեռ կըլցի, կէրթա կմտնի ուր մառան՝ կուտի։ Մեկ օր էլ կիրիշկի-կտիսնա որ թաջրի մեչ սիսեռ չի մնացե։ Տնըցիքյ նստուկ կլնեն, գինք տախտ կավիլի, ուր ջոբից մեյ խսււռ սիսըռի խատ կը տնի վեր ավելին տռղտղալով կտանի տնեցոց շանց կուտա, կասի՝

Յաման, ջաղամաթ. էսը ինչ ջանավար ի՝
Տիսեք, ընչիկ ունի, թնչիկ ունի.
Մկան կայգա պնչիկ ունի,
էն աղեկ որ ձի չկերավ։

Տնըցիքյ ըիթուն կըխավատան, որ ուրանց խարս սիսեռ չի կիցե թե ինչ պյան ի։ Հւմա չուր օըըս խալխ արիր են ըեթ, ֆանգ-ֆուլով ջհելներին կասեն՝ «Ինչըխ թե սիսըռկեր խարս ըլնի»։

ՍԻՍԸՌԿԵՐ ԽԱՐՍ (տարբերակ)

Մեյ կարիր տեղից պիըված խալս կըլնի։ Կիսուր կըպիրի խարսի քյրնելու մառնի պուճախ մեյ խին կուժ կրանի, մեջն էլ հլին սիսեռ, կասի՝—Խարսա, էսը կժին ծեռ չիտաս՝ չուր ճոչ պաղս։ Խարսն էլ, որ կիմնա, որ էտը կժի մեչ սիսեռ ի լցուկ, հյա տնգան-անպախ կկյողնա, կյաղտիկ կուտի՝ կըխլսցուցի։ Մեկ օր էլ կիսուր մեյ խատ քյասա կուտա խալսի ծեռ, կասի՝—Տար, էսա քյասով էն կժի միշից սիսեռ լից պե, խատիկ խաշենք։ Խարս որ սիսեռի անուն կլսի, ռանգյ կըթալի, տան ճժի ակրնջին կփսփսա, համա ըսկուն պանցր, որ կիսուր կլսի՝—Աման, կասի, խաթունին ասա, աստծու սիրուն թո ձիկ չօրոխկի սիսըռկան մոա. սիսըռկան սրռսըռալուց, ճրրեբաց ըըղկըըղկալուց ես շաա կվախենամ։ Կիսուր գինք կէըթա սիսեռ պիրելու, որ կուժ տառտակ կտիսնա աան ճժերաց վրեն շֆա կտանի, ինոնց կպռնի՝ կտփի։

Էտ օր էսօր, սութմանց անմեղ ծեվացող, ֆանդ-ֆուլի տեր կիյթերաց, աղչկերաց՝ «սիսըռկեր խարս» կասեն։

ԿԱՃԵՏԱ ԽԵԼԱՑԻ ԽԱՐՍԻ ԿՍԵՆ

Կաճետցինեը քաղքցի մեկ ախչիկ կտանեն խարս։ Խարսնսի կյախ տան ճիժ ծեռ կմտուցի կըժի մեչ, էլ չի կանա քյաշի տյուս, լաց, ճըվճըվոց կտնի։ Խալսնավորներ ըիթուն կխառվեն իրար, ըիթունն էլ մեյ-մեկ կրջըռըեն ճժի ծեռ կըժից քյաշել առւս՝ չըլնե, որ չըլնե։ Կօրոխկեն ռեսին կկանչեն։ Ռես կուկյա կրջըռըի, էլմը չի կանա ճժի ծեռ կըժի պենից քյաշի տուս, կասի.—Պիրեք ճժի ծեռ կարենք։

—Կտրե՞ք։ Խա՛ վալլահ, կտրենք։

[1] Պատմեց վանեցի Տիգրանուհի Ասատրյանը 1970 թ., Երևանում, 70 տարեկան հասակում։

Համա չեն կիտե՝ սզոցո՞վ կտրեն. թե՞ ուրացյով։ Ջուր դես, չուր դեն, խարսն ուր թախտից կուկյա տյոտս, մեկ ճոչ քյար կզանի վեր կըժին՝ կուժ կըլնի բյաոտուն փշուր, ճժի ծեռ կուկյա տյուա։

Սաղ կյեղով կթերրոեն վեր խարսի խեյբին. կասեն՝—Ըսրսկնա խեյբով խարսին ի՞նչ անենք. որ ինոր ոտքեր կյեսին չառնի։

Կյեղ-կյեղովի. ոեսն էլ խետներ կըմեզեն. կըմեզեն, ճար կըկնղնեն։ Կըպիրեն հաոքից մեյ չվան կըկախեն. ցածրի ծեր կանեն օզակ կըթայեն խարսի վիզ, խարսի ոտքեր կյետնից կըկըտրվի։ Կախուկ խարս կէրթա-կուկյա, ուրանքյ կյոնդ կըպոնեն խարսի պուլոր, կխաղան, խետն էլ խաղ կասեն՝

Խարսե, կուրրան քյո խեյբին,
Կուրրան կակող քյո քեյբին։

ԽԱՎԻԾ-ԽԱՎԼԱՎԻԾ

Կըլնեն, չեն ըլնե, մեյ քյոռ խալիվոր, ուր բագրրդյան յաճ, էնա՝ ուր խարսա լաճ կէրթա բագրրդյանութեն, կմնան քյոռ կեսրեր, էնան խարսա խարս կասի՝—արե իսոր բսկուն անեմ, թո շոա մեոնի։ Աստծու օր՝ պազ թան կասնիկանի կեսրիքի առաճ, կասի՝—Թան-թանանա, պապիյն ուտի՝ գվարթանա։

Ջինք էլ ուր խամար նամիկ կթալի վեր թորվան՝ խավիծ կեփի, խեսն էլ կըդնդնա՝—խավիծ-խավլավիծ, պապիյն ուտի՝ ինի ստից։

Պապիյն ադորթմանց օր-ավուր կուզում կուտոր կըլնի, համա խարսն էլ կըսարսամնա։

Բագրրդյան կուկյա տուն, կըտախնա խեր ծեռ-ոտից ինդյակ, կնիկ՝ սարսամցուկ։ Հեքյիմ կպիրի վրեյթեր։ Հեքիմ կասի.—Էսա խալիվրուն դավ չկա, պյան չուտելուց կաղամն ի կտրե. կուշտ-կուշտ կիրրդուցեր՝ կըլնի վեր ոտաց։ Համա էսր խարսի ցավ պան ի, տար եղրդեն շատ ի կիրե, եղ թոե իտոր կաֆեն, դյոլ ի պոնե. չուր օր մախու բարսկնա սարսամ պիտի մնա։

ԱՆԽՈՒՆԱՐ ԱՂՋԸԿԱՆ ԲԱԽՏ

Մեկ անխունար աղչիկ կըլնի, որ աղչկան մանեյ բիլա ծեոնից չի կյա։ Համա էտր աղչկան մեր ամեն տեղ ուր աղչկան կըկյովա. կասի.—Իմ աղչիկ անթիկա բաս կյոռծեյ կիտի։

Մեկ օր էլ զատու տեգից ուզող կուկյան. մեր կառնի ուզողներաց կնստըցուցի խաց-ըքյրամի։ Աղչիկ կուկյա վեր էրտըսին կյլոխ կկախի ցած, կըոռա.—Մարե, ի՞նչ նըխշ տնես վեր խալուն։

Մերն էլ կտխսնա, որ էտր մարթեր ականե կաննեն, քըրթերեն քույար կուտա կասի.—Աիլիֆար, դաստե քայվար, զոյին հըսար, քոռիկ յըյար։

Ուզողներ էտր պյան որ կըլսեն, ուրանքյ-ուրանքյ կասեն՝ մեր ուզած խարսնացուն էսա ի. որ կա։

Անխունար աղչկան կտանեն, խարսնիս կանեն-կպըռծնեն, կըպիրեն մեյ խատ խալի կըխինեն, յոթ ռանգյի թեյլերաց կաժ կուտան ծեռ, կասեն՝— Դե, մեր տան խամար էլ քյու մոր ասած խալուց կյոռծի։

Անխունար աղչիկ կասի.—Տուո փակեք վրես, խաց-ճուր էրտըսից թալեք տակ, որ ոչ մեյ մարթ իմ արած չտեսնա։

Ըսրսկնա էլ կանեն։ Անխունար աղչիկ էտր փակ տրռան խտեվ, էրտըսից թալած ուտելեզեն կուտի, կըխմի, կըպառկի՝ կքրնի։

Էն մեկ օր էլ կեր կուտի, միչի ուսկոռ կանթոլկի տռան խտեվ, ուսկոռ կէրթա կտիպնի սատանի ճըժի վղի վրավի խոցին։ Խոց կծակվի. արուն-թարախ կթալի տյուս, սատանի ճիժ կաղեյնա։ Սատանեք չորս թարաֆեն կուկյան կըժողվրտավեն վեր իսոր կյլխուն, կասեն.—Տյու մեր ճժին ցավից ազատեցիր, մկա ասա քյու ուզելիքն ինչ ի, որ քյու հալս տանք։

Աղչիկ կասի.— Ախպեր, դաշ չեմ ուզե, մենայ թե էսր խալին, ըսրսկնա-ըսրսկնա կյոռծեքյ, տվեքյ իմ ծեռ։

Է, սատանեյթերաց խամար ի՞նչ կա որ. էն սհաթին խալին կկոռծեն-կուտան անխունար աղչկան ծեռ, էտր էլ կթալի վեր թիվին, կըլնի տյուս։

Կեսրանց տան ճոչ-պստիկ կըմաղվրտավեն վեր կյլխուն, կիրիշկան խալուն՝ կըթերուեն. չունքի վրավու նըխշեր կեսն սատանայական կըլնեն. կեսր՝ հիսանի։ Իսոր խամար էլ խառնխըշտիկ կըլնեն։ Ջուր օրրս էլ մեյ-մեկու կասեն. —Վայ կիտի, տյու անխունար աղչկան բախտի տեր հիսան ես, յան թե կասեն.—Քյու հաշիվ՝ անխունար աղչկան խալու նըխշերաց պես խառնխշտիկ ի։

ՍՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ ՍՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայտնի չէր, թե երբվանից կամ ինչու վանեցիները արճակցիներին հորջորջում էին Բարխուդար մականունով, որ համասար էր տարօրինակություններով լի, ծույլ ու ապաշնորհ հասկացությանը։

Արշակցոց Բարխուդար ծաղրանունը գործածել էր անգամ Խրիմյան Հայրիկը։ Սակայն արշակցին երբեք չէր պարփակվել ամոթխած շինականի դերում։ Նա իր արժանապատվությունը բարձր էր պահում առաջինը՝ իր «րաց դոնով» և ապա՝ իր «փշոտությամբ»։ Նա ոչ մեկի, ինչ դիրքի մարդ էլ լիներ, թույլ չէր տա իր անձի նկատմամբ արհամարհանք ցուցաբերեին և դա ոչ թե ֆիզիկական ուժի գործադրությամբ, այլ իր սուր լեզվով։

—«Աստված յեղու ի տվե, թե մարթ ես՝ տիմացինիտ լեզվով հախթե, թե չէ լյանգեն՝ անօրենն էլ ունի»-սա արշակցու հավատամքն էր։ Իսկապես էլ, պեաք եղած ժամանակ արշակցի ամենարարխուդարն էլ կարող էր որևէ սրամտությամբ փակել իրեն ծաղրողի բերանը։

1895 թվականին արշակցի Բարխուդարենց ընտանիքի գավակ, իրականում խիստ սահմանափակ ունակությունների տեր ծերունի Ավագը վան է գնում և իջևանում իրենց վաղեմի ծանոթ Կարա-Սեֆերյանների տանը։ Հյուրընկալների տանը այդ օրը ինչ-որ ուրախ առիթով հավաքույթ է լինում, Մըսաֆր խանայում (հյուրասենյակում), ուր մտնում է Ավագը, շարքով նստած են լինում քաղաքացի մեծատոհմիկ տարեց մարդիկ։

Նկատելով ծերունի դեղշուկի ամաչկոտ կրծկրվածությունը, բանիմաց աղաների խելքին փչում է հարկադրել նրան երգել։ Կարա-Սեֆերյանը տեղյակ էր, որ հին ծանոթը երգելու շնորհք չունի, սակայն անճարակ արճտկցիով զվարճանալու հյուրերի ցանկությանը ընդառաջելով, ինքը ևս միանում է նրանց ու Ավագին խնդրում, որ վերջինս իր խաթրը չկոտրի։

Ավագը կռահելով քաղաքացի աղաների ցանկությունը՝ իրեն ծիծաղելի կացության մեջ գնելու, վճռում է պատասխանել յուրովի։

—Քավոր աղա,—դիմում է նա սանտիրոջը,—ես մենակ կյութան քշելու տաղ կիտեմ, էն էլ ըստեղ տեղը չի։

—Շատ տղեկ էլ սեղն ի։ Տյու էլ կյութան քշելու տաղ ասա,—համաձայնում է սանտերը։

—Ախրը խարեղան էլ չկա,—կմկմում է Ավագը։

Հյուրերից մեկը իր թաշկինակը ոլորում է, մի ծայրին մի հանգույց է անում, մյուս ծայրին կապում է իր երկար ծխափողը և մեկնում է Ավագին ասելով՝—էսա էլ քյե խարեղան։

Ավագը տնտղում է խարեղանը և նորից է դիմում տանտիրոջը։—Քյավոր աղա, լծկյնթեր, խո խամ չե՞ն, բիրգան չխրտանե՞ն,

—Չէ, չէ,—հավաստիացնում է սանտերը, առանց ըմբռնելու Ավագի մտադրությունը։

Ավագը կանգնում է ծալապատիկ նստած հյուրերի մեջաեղում, բարձրացնում է «խարեգանը» գլխավերևում և սկսում է եղանակել՝

—Հո՜, հո՜, հո՜, հոռովել, հո՜, հո՜, հո՜, մեռնեմ ես իմ կայիմ լծկյնթերաց. հո՜, հո՜, հո՜, ...և խարեղանով աջ ու ձախ դիպցնում է ծալապատիկ նստածների՝ որի վզին, որի գլխին, միաժամանակ շարունակելով իր հորովելը։

Նստածները անսպասելի հարվածներից.—Ծո՛, ծո՛, խայ, էտա ի՞նչ ի կանես.—կանչելով վեր են թռչում, իսկ Ավագը հանգիստ դիմում է սանտիրոջը.

—Քյավոր աղա, ապա տյու ասիցիր լծկյնթեր խամ չեն, վալլահի, խամ են, էն էլ ինչը՞ խիամ, քյու պարի աչկով տիսար, ըիթունն էլ խրոտնան, ըիլահի, մեկն էլ ըսկի լծի տակ չէր ինդե։

Ավագին տարեկից, ընավորությամբ խիստ դյուրաբորբոք, իր ողջ էությամբ իսլամատյաց Դըղոյի Պիտրոսին «կոնախ» է գալիս մի տարեց թուրք պաշտոնյա։ Այն պահին, երբ «կոնախը» իր առաջ դրած ձվածեղն էր ուտում, տան կատուն մուկը բռնած բերանին ներս է մտնում։

—Ավսհարի (տանտեր),—քրքջում է «կոնախը»,—էս ինչ թարրիալի (դաստիարակված) կատու ունես, տես է, քեզ համար ին; թիքյա բերեց։

Պիտոն ձեռքը սրտին դրած, գլուխը հարգալից խոնարհելով ասում է,—Աֆանդի, էսը շապաթ մեր Աստրածնա պաղսն ի, մեր ծծկեր ճըժին ըիլա մենք միս չենք իտա։ Կատուն քյե խամար ի պիրե, վերու անուշ արա։

Հյուրը լռում է։

Տեր-Կարապետենց Հովակիմը, թեպետ հարուստ և մեծատոհմիկ տան զավակ, սակայն ընավորությամբ խղճուկ ու անճարակ, ամբողջ կյանքը անցկացրած լինելով սեփական ոչխարներին հովվություն անելով, ոչ միայն գյուղի իշխանավորների հետ շփում չէր ունեցել, այլ իր մեծ եղբայրներից անգամ քաշվել էր։ Արախոսությունը նրան անծանոթ էր եղել։ Անձրևոտ մի երեկո, թրջված ու հոգնած տուն մտնելիս, տանը նստած տեսնում է երկու ուսադիրավոր սպա։ Բարևն ստածունն է իր պարզունակ համոզմունքով նա կոնախներին ողջունում է։

Սպաներից մեկը, որ ըստ երևույթին կատա-

կասեր է լինում, Հովակիմի հետ խոսքի է բռնվում։

— Հը, ադասխկալ (ապիտակամորուք),— ասում է նա,— աշխարհ ման եկած մարդ ես երևում. պատմիր տեսնենք ման եկած աշխարհներում ինչ կա, ինչ չկա։ Պատմիր մենք էլ իմանանք։

Զգալով, որ իրենց սան համով փլավով կշտացած թուրքը իր՝ հայի չարքաշ կյանքն ու աշխարհից անտեղյակ լինելն է ծաղրի ենթարկում, լուրջ դեմք ընդունելով, պատասխանում է.

— Աֆանդիս, դորու ասիցիր. Լիենսա (բամալանին) աշխարհներ կան իկեր եմ, շատ-շատ քաղքներ եմ տիսել։

— Դե, տեսածդ աշխարհների մասին մի քիչ պատմիր, մենք էլ գնանք ուրիշներին պատմենք.
— Համառում է երիտասարդ սպան, այնքան էլ համոզված չլինելով, թե հայ տարիքավոր գյուղացին կարող է որևէ հետաքրքիր նորություն պատմել։

— Աֆանդուս ասեմ,— սկսում է Հովակիմը, կուշտացած մատները մեկ մեկ ծալելով,— Հաղթան, Կրգրլյան, Դյնձան՝ պերքյ-պարով աշխարհներ են, համա շատ են դատու, ինչ եմ սան մոտու Ջյտրյանու բյաղքին, Զնձեմու բյաղքին, Պազ Դյոլա բյաղքին՝ պերքյ-պարին չուրի բողագրդը Աստված չեն պախի, ո՞րն ասեմ, ո՞րն թողնեմ։

— Ադասխկալ, քո ասած անգերը մեր մամլաքյաթի (հայրենիքի) մե՞ջ են,— միջամտում է երկրորդ սպան։

— Հալբաթ բյի, մեր մամլաքյաթի մեջ, աֆանդիներս, ուրիշ կռայների (տերությունների) սնոր սա չեմ տըրե,— պատասխանում է Հովակիմը։

Եվ մինչ երկրորդ սպան ուշադրությամբ լսած հետևում է Հովակիմի թվարկած «աշխարհների ու քաղաքների» նկարագրման շարունակությանը, առաջին սպան երկու ձեռքերի չռած մատները դեմքին սեղմելով, մոթմոթում է.— Իսկ ես էլ այն համոզմունքն եմ ունեցել, թե Ստամբուլի Ասկյար մայթարին մեջ աշխարհագրություն են սովորեցրել։

Հովակիմի թվարկած աշխարհները, որ նա տրապանել էր կիսատ, մոտակա լեռներն էին, իսկ քաղաքները՝ գյուղին մոտիկ արոտավայրերը։

Քիչ հետո «կոնախները» գյուղից մեկնել էին, հավատացած՝ հայ հովվից լսած երկրների ու քաղաքների գոյությանը։

— Թո էրթան, ես խոռնց մասարը...,— գոհունակությամբ իր ձեռքերն էր շփել Հովակիմը,— էտու դեն էլ թո ադասխկալներաց վրեն չծրծղան։

Այս երեք օրինակը բերեցի արճակցի հներից, բայց նորերը այդ խնդրում իրենց պապերից ու հայրերից պակաս չէին։ Ես իր տեղում նշել եմ, որ Արճակի աղբյուրի մասին զրույց կար, թե դա սիրո, սիրահարվելու աղբյուր է։

Փոքրիկ աղջնակ էի։ Աստվածածնա տոնի նախօրեին, մեր տուն էր եկել Վանի Կլոր տար թաղամասի բնակչուհի՝ Մարինոս խաթունը, հիսնամյա մի հարգևոր քաղաքացուհի։ Տեղ հասնելուց մեկ ժամ անց, նկատելով, որ ես աղբյուր եմ գնում, ինքը ևս ցանկություն հայտնեց գալ։

Նախատոնական եռուն օրվա մայրամուտ էր։ Աղբյուրում երեք կին կային, որոնք կժերը լցրած պատրաստվում էին վերադառնալ։

— Էսա սխպրի մոտն ի՞, որ ծեր կյեղի լաճ-վ՞ախչիկ սիրու կրտիրանան,— ընդհանուրին դիմեց մեր հյուրը քմծիծաղով։

Մինչ կանանցից երկուսը, տարօրինակ հարցից զարմացած նայում էին, երրորդը հանդիստ ու լուրջ պատասխանեց.

— Հա, խաթուն, դյո մենակ բստեղն ի, որ մեր կյեղի լաճ-վ՞աղչիկ մեյ-մեկ կտեսնան, մեյ-մեկ կըճանչնան, խոսք կուտան, խոսք կառնեն։

Աչքերս լայն բացած լսում էի այս նոր հայտնությունը, իսկ արճակցի Կրծոյի Մարանը սկսեց նկարագրել ինչպես մեկ ժամ առաջ՝ մի զույգ հասուն տղա և աղջիկ եկել էին և սիրահարվել էին։— Մեր իրերի աչկի առաջ սիրուտեցան, մեյ-մեկու կյրկիցին, նշանվան, եա կնացին, էսր շափթուն էլ կըփսայվեն,

— Ափսոս, որ ես չըտիսա,— տրտմեց Մարինոս խաթունը,— էս օրեր ուրիշ սիրուտերացող չի՞ ըլնյի, կյամ տիսնամ։

— Չէ, խաթուն, բս տարի էլ սիրուտերացու լաճ-վ՞աղչիկ չկան,— եղավ պատասխանը։

Տուն գալով, մեր հյուրը խոր ափսոսանք հայտնեց, որ զրկվել էր Արճակիս աղբյուրի վրա կատարված նշանդրեքը տեսնելուց և իր հերթին ենթարկվեց ծաղրի՝ նման անհեթեթության հավատ ընծայելու համար։

— Ընչի՞, ես խո բյոռ շարխոշ չի՞, որ ճի՞կ բտրեկնա սութ-սութ պաներ սաաց.— սկսեց արդարանալ Մարինոս խաթունը,— ես խակյածն էլ բսկուն խաթուն-մաթուն կնիկրմ կերեվար։ Աման, էսա Արճակ ի՞նչ նմուշ անգ ի, խելացուն կըծրորցնեն։ Ինչկյանդար տեղյանք եմ կան իկե, բսրսկնա պանի ասաա չի իկե։ Ես վաղն ի՞նչի էրթամ Ասպարածին, սաղ կյեղ պիտի ձիկ անեն ծռու տեղ։

1913 թվականին, մի անգամ Վանի շուկայում

կանգնած է լինում Արճակի ժամհարի պառավ, տգեղ ու անասելի թափթփված ղուստրը՝ Սալաթը, որն աչքի էր ընկնում իր սրտխոսությամբ։ Նրա կողքով անցնում է մի մաքուր հագնված վանեցի։ Վերջինս երեում է անծանոթների ծաղրելու վարպետ է լինում։ Նա խոր հարգանքով, ձեռքը ճակատին սանելով բացականչում է,—Խաղար՛, խաղա՛ր պարով, իմ կարոտ մորքրոչ։

Սալաթը անմիջապես բռնում է նրա թևից.
—Աման, քյուրոչ լաճ, իմ իրիկ կուրիսեր ի, մխա դալալ կանչի։

Դալալ, այսինքն մունետիկ սովորաբար լինում էին բոլորովին աննշան ու մեծավ մասամբ աղքատ մարդիկ։ Վանեցին ըստ երևույթին շատ կատակարան է լինում, նա մի ձեռքով բռնում է Սալաթի թևը, մյուսով օդի մեջ է պտտեցնում իր թաշկինակը և մունետիկներին հատուկ ձայնով սկսում է կանչել,—Հե՜յ, շաղամաթ, խայ, ասճիկ, քյուրթ, ասորի, նասրանի, էս կրնգան իրիկ կուրիսեր ի, վով կրնղեր ի, թո սլիրի աա, էսա ալնուխ կրնգընեյա (գտնելու վարձ)... Կանչը կրկնում է երեք անգամ։ Ձայնի վրա հավաքվում է պարապ հետաքրքրասերների մի ստվար խումբ, այդ ժամանակ Սալաթը վերցնում է վանեցու գլխի ֆեսը և շպրտելով բաղմության մեջ ձայնում է,—իմ քյուրոչ յաճու ֆասն էլ կուտանք կրնգընելա, ֆասն էլ...

Հանկարծակիի եկած վանեցին բաց է թողնում Սալաթի թևը և կռանալով հավաքվածների ոտքերի տակ, պոռում է.—Ծո, յամա՜ն, իմ ֆաս, յամա՜ն, իմ ֆաս, թաղա եմ ավե կալրի, չկոխկրճեքյ, ծո մարթ էլ շինայնու խետ խանաքյ կանի, որ ես արիցի...

Վարչականորեն Վան-Տոսպի կազմում էր գտնվում Վանին շատ մոտիկ ընկած, այգեշատ Շահրաղի գյուղը, որը ոչնչով չէր տարբերվում Վանից։

Շահրաղի, Ավանց, Աեկյա, Արտամետ գյուղերը Վան-Տոսպի հնատարազ ու հետամնաց ազգաբնակչություն ունեցող բազմաթիվ հայկական գյուղերի հակապատկերն էին։ Սակայն արճակցիք, հիշյալ գյուղերից կապի մեջ էին Շահրաղիի հետ։

Շահրաղցիները, իջարեներով խաղող էին տանում Արճակ՝ փոխանակում հացահատիկով։ Գինեառատ Շահրաղի գյուղից էին գնում արճակցիները իրենց գինին։ Շահրաղի մոտովն էր անցնում այն լայն ուղին, որով արճակցիները Վան էին գնում։ Ու հաղվագեպ չէին լինում ձմեռային այնպիսի երեկոներ, որ արճակցիները ճանապարհը կարճելու ստիպմունքով գիշերեին Շահրաղիում։ Մի քանի արճակցի և շահրաղցի խնամիացած էին։ Բայց և այնպես արճակցիների համեմատությամբ՝ շահրաղցիները թե՛ իրենց նիստուկացով, թե բնակարանային սարքուկարգով ջատ էին քաղաքացիացած։ «Փշուռ» արճակցին չէր կարող հարգել շահագետ շահրաղցուն և միշտ մի առիթ որոնում էր շահրաղցու «քաղաքացիությունը» ծաղրելու համար։

Հարյուրավոր դեպքերից բերեմ մի երկուսը։

1914 թ. փետրվարին արճակցի երկու երիտասարդ եղբայրներ՝ Ֆրանգյուլի Ղևոնդն ու Մովսեսը գնում են Շահրաղի՝ գինի բերելու։ Ըստ տիրող սովորության, գնվելիք գինու կանխավճարը արդեն տրված էր եղել։

—Գասպար աղայի կանչիր, մենք եկել ենք մեր գինին տանելու,—հայտնում են նրանք շեմքին կանգնած տանտիկնոջը, որը գնորդներին ներս հրավիրելու փոխարեն, գլխով ցույց է տալիս ախոռը։

1896-ի կոտորածին լրիվ որբացած, լրիվ թալանված, սակայն արդեն տնտեսությունները վերականգնված եղբայրներին, որոնցից մեկը մի պարզ գեղջուկ է, մյուսը՝ վարագի որբանոցն ավարտած գյուղական ուսուցիչ, և սակայն իրենց ախոռում ունեին տասը անասուն, զարմանք է պատճառում, որ շահրաղցու ախոռում կա ընդամենը մի կով, մի հորթ ու մի գետնատարած էշ։

Ֆեսավոր Գասպար աղան պպզած իշու առաջ, պղնձյա հին ափսեով գարին մոտեցնում է սատկող իշու դնչին և ոչ մի ուշադրություն չի դարձնում եկողների վրա։ Եկամտաբեր այգու ու երկհարկանի տան տեր քաղաքատիպ շահրաղցու մի էշի համար այդպես վշտահարվելը՝ բուռն ծիծաղ է առաջացնում մշտուրախ եղբայրների մոտ։

Վշտակցի տխուր տեսք ընդունելով, նրանք բռնում են իշատիրոջ թևերից,—Կյաղպար աղա, բտրսկրնա մի՛ անե, խոկյաստաոց կանես, մեզքյ ի,—ասում է ավագ եղբայրը, իսկ փոքրը լրացնում է,—Տյու խաց խալսյ ասա, մենքյ էլ մեր խուկյու խամար շարական ասենքյ։

Պզզում են հրաշալի ձայն ունեցող երիտասարդները՝ գետնատարած էշի գլխավերեն ու ոտնատակը, մեկը բռնում է էշի պոչը, մյուսը՝ ականջը և սկսում են փոխ առ փոխ երգել՝ Կովկասից Արճակ հասած «Սատկած իշու» մասին երգիծական ողբը՝ պրիստավ, գուբերնատոր, մալական և

այլ խոսքերը փոխարինելով Վանի մեծահա-րուստների ազգանվամբ ու ավելի հոխացնելով կատակերգը.

—Ջիղաշուն փայթուացու լայեղ սև կաշուտ մեռնեմ, իշո ջան, չոշո ջան.

Նահրապղու ռես խատններ, տյու չմեռնիր, չոշո ջան...

—Բյութունցու տան լայեղ՝ չայի կաել ակրնջ-ներացրա մեռնեմ, իշո ջան, չոշո ջան.

Նահրապղու տիրացուն խատններ, տյու չմեռ-նիր, չոշո ջան...

—Կափամացու տան դավաթին՝ տաղ ասե-լուն լայեղ բյու գնդուն ծնկին մեռնեմ, իշո ջան, չոշո ջան։

Վանա բյաղրից բառսուն դանգին աղա թո խատնին, տյու չմեռնիր, չոշո ջան...

—Հյուսյանի թաժա փոթիկրներայ պես կրա-կոտն բյու էրկու ջուխա ոտքերաց մեռնեմ, իշո ջան, չոշո ջան,

Վանա բյաղրից բառսուն դուքրնղար թո խատնին, տյու չմեռնիր, չոշո ջան...

—Մեյխանացու Ֆաոի պուխ պոչիտ մեռնեմ, իշո ջան, չոշո ջան։

Կյեղի կյղիր թո խատններ, տյու չմեռնիր, իշո ջան, չոշո ջան...

—Բոշոնց տան խացի տաշտի պես տատրակ բյու փորին մեռնեմ, իշո ջան, չոշո ջան.

Կյեղի ռես-մացլիս թո խատնին, տյու չմեռ-նիր, իշո ջան, չոշո ջան...

—Արկոսկո տիկ լցվող կյինու պես պղտոր, անկրակ բյու աչկերաց մեռնեմ, իշո ջան, չոշո ջան.

Էար կյինուն բեղ ավող առհակցի ջուխտ-ջուխտ ախպերներ թո խատնին, տյու չմեռնիր, իշո ջան, չոշո ջան...

Մինչ այս, մինչ այն, Լշն արդեն սատկել էր։

—Դե, Կյադպոր աղա, ավել-պակաս պաշխի, —դիմում է Ղևոնդը գինեգործին,—էշն ինչ ի. որ իշու խամար ախրես, իլի վեր, մեր կինիներ չափի՝ տուր կյնանք։

—Է, պըտոր կյինի. խին տիկ, պատու համ-բախ. չուր մեր կյեղ խասնենք, մենք էլ Լսր ողորմածի օրին կիննենք,—կատակում է Մովսեսը։

Մտնելով գինու նկուղը, գինեգործը դույզ է տալիս գինու կիսատ կարասը, որից, բաս պայ-մանի, եղբայրներին գինի էր տալու. ապա բաց է անում մի փոքրիկ կարասի բերան.

—Առնակցիր,— ասում է նա,—ասված ծե բորակնա ոտխս պախի, էսա կարաս իմ սան խամար եմ պախե. տյուր էլ էսա կարսի կյինուց խմեք. գինա կասեմ՝ ասված ծե հյա բորակնա ասխի։

Ասված Ֆրանգուլյան եղբայրներին ռու-րախ. պահեց նրանով, որ հենց Թուրքական բա-նակ՝ անվերադարձ... Իսկ երեքը՝ մեծ եղբոր. մեկը՝ փոքր եղբոր մանկիկները, իրենց ջահել մայրերի և պառավ տատի հետ... հալվեցին 15-ի Եղեռնին, այնպես որ Ֆրանգուլյան Սարգսի տոհմը մոռացվեց։

* * *

Օժիտի հրապուրանքով աղջիկներին ամուս-նացնելու ամենուրեք տարածված կանոնը իշխում էր նաև Վանում, դրա համար էլ շատ չքավոր վանեցիներ, ստիպված էին իրենց աղջիկներին ամուսնացնել գյուղացի երիտասարդների հետ. որոնց մեջ դեռ պահպանվում էր դայանի սովո-րությունը։ Այդ առումով, եթե հաշվելու լինենք. Վանի գավառում դժվար թե գտնվեր մի այլ գյուղ. ուր Արճակի չափ քաղաքից բերված հարսներ լինեին. սկսած մեծ դերդաստանի մամիկներ դարձածներից, մինչև Վանի վերջին նորաձևու-թյամբ պճնված նորահարսները։

Չնայած նման դերդաստանների երկու կողմը եւ միմյանց հանդեպ սեր ու հարգանք էր ցուցա-բերում, այնուամենայնիվ՝ գյուղի և քաղաքի հա-կացողության տարբերությունը չէր ջնջվում։

Վանեցին, լինեի բազմածիրք արհեստավոր, թե հաշվենկատ առևտրական, միևնույն է, իր հոգու խորքում չէր կարող արդարացնել գյուղա-ցու անփույթ վերաբերմունքը գյուղատնտեսու-թյունից ստացած բարիքների նկատմամբ, առ էլ այն դեպքում, երբ դրամի նեղություն էր կրում։ Դրանով, ամենահարգված գյուղացի խնամին քա-ղաքացի խնամու համար «շրփրո-թրփրո, ան-մասածմունք» մարդու սահմանից այն կողմ չէր անցնում։

Արճակցին, այս առումով, քաղաքությունը չպիտի ներկայացներ, եթե նա Բարվի հետ կապ չունենար։ Որոշ չափով ծանոթ լինելով կովկաս-յան քաղաքների հայերի նիստուկացին, արճակ-ցին. արդարացում չէր գտնում՝ ինքնասիրության գնով դրամ կուտակելուն։ Հենց դրա համար էլ տասնյակներով «րեթ կպիրեին» հենց խնամի-ների ներկայությամբ, շեշտելով քաղաքացու առօրյայում տեղ գտած ծիծաղելիության հասնող խնայողությունը։

Նման սննկդաններից հիշենք երեքը։

Ա) Քաղաքացի տարեց տանտիկինը ջլբուր էր եփելու (ծվջուր՝ ջրալի կերակրատեսակ)։ Եր-կար մտածելուց հետո նա որոշում է ջլբուրի մեջ

ջարդել երեք ձու, սակայն երեք ձվից մեկը՝ մի կողմի վրա է դնում. «Էրկու ծու կոտրեմ, խերիք ի», մտածում է տանտիկինը։ Կոտրում է առաջին ձուն, կոտրում է և երկրորդը, բայց երրորդի միայն սպիտակուցն է դատարկում օրվա ճաշի մեջ, իսկ դեղնուցը ետ է տանում հաջորդ օրը եփվելիք ջլբուրի համար։

Բ) Զարդարված հարս ու սկեսուր վերադառնում են եկեղեցուց։

—Ախչի, էտա ի՞նչ ուլնիկ ի մեջ խողերաց ինդյուկ,—հարցնում է սկեսուրը, մատնացույց անելով փողոցի հողերի մեջ ընկած ինչ-որ կլոր բանի։—Ավատա անծակ ի, թալ քու ջոր, ես վաղ ասղով յավաշ-յավաշ ծակ կըպյանամ։

—Ուլնիկ չի, խաթուն, պըտըտուր ի,—հայտնում է հարսը։

—Պըտըտո՞ւր ի, վերու տու կապեմ իմ յաղմի ճոթ, տանեմ վաղ թալեմ թոներ,—ողևորված կարգադրում է սկեսուրը։

Գ) Գյուղացի սանահերը գնացել էր քաղաքացի քավորի տուն։ Ճաշից առաջ, տանտերը ասաց.—Սանախեր, արե մեյ դոր իկյին կան կյանք։

Այդում նա բռնեց թթու սալորի ծառի մի ճյուղ։

—Սանախեր, էսա ալուչեն իշտախ պյանալու խամար մեյ խատ ի։

Սանահերը ամբողջ ճյուղը մաքրապարզեց ճաշի ժամանակ, միշտ բաց ախորժակի տեր սանահերը, էլ ավելի բաց ախորժակով սկսեց հաց ուտել։

—Քյա տղա, ծոչ աղա,—դիմել էր հյուրընկալի մայրը որդուն,—էսա մեր սանախոր ընչի ալուչով չպատվիցիր։

—Պատվեց, քյավորմեր խաթուն, պատվեց, պառովելու գյորա էլ կիրա, համա մեյ թարաֆի աւըմներով,—քմծիծաղեց սանահերը։

—Տյու մեյ թարաֆեն ես կիրե, ամա մե էրկու թարաֆեն ղարար խասուցիր,—փնթփնթաց քավորը։

Բ Ե Յ Թ

Արճակցիներին թե՛ վանեցիները, թե՛ շրջապատի գյուղացիները՝ «րեթչի առճակցի» էին որակել, և այդ որակումը ճշմարտացի էր։ Բեյթով խոսելու ձիրքը և՛ հներն էին ունեցել, ե՛ նորերն ունեին։ Արճակցի Ալոյի Մարտիրոսը այնքան շատ էր օգտագործել իր այդ ձիրքը, որ նրա մահից հետո էլ ասում էին.

—Ի՞նչ ի, հո Առճակու Ալոյի Մարտիրոս չեմ, որ բեյթով խոսեմ։

—Բեթչի մեջ ասե, Ալոյի Մարտիրոս ասեքյ, որակում էին որևէ բեյթով խոսողի։

Ալոյի Մարտիրոսի նման բեյթ ասելում վարպետացածի համբավ վայելող արճակցի Տավկե Արթենը մեկ անգամ իր հարևանի հետ Շահրադի էր գնացել։ Շահրադիում լինում է ինչ-որ հոչակված բեյթչի և շահրադցի մի խումբ տարիքավորներ երկու բեյթչիներին նստեցնում են իրար դիմաց մրցելու, պայման դնելով, որ ոչ մի կողմը իր հանդեպ վիրավորանք չհամարի անգամ հայհոյանքը, միայն թե ասվելիքը լինի հանգավորված։

Բավական ժամանակ իրար հետ հանգավոր ընդդիմախոսելուց հետո Տավկե Արթենը իրեն պարտված է ձեացնում. Նա սկսում է իր արեխների կապերը ամրացնելով մրմըջալ.

Ախպեր, չարխըներ կըքեմ, բառեղից էրթամ,
Քյանի շաղրադըցին չի տարե իմ պերնի խամ։

Ես Առճակու խասա Շաղրադի,
Որ խոր աղեկըմ դաղի։
Ես քյանի բեթ պիրիցի՝ էսա բեթ պիրեց
վեր իմ բեթին։

Եվ Արթենը հանգավոր հայհոյանքով ավարտում է խոսքը։ Անակնկալի եկած շահրադցու ղարմանքը տեսնելով, Արթենը հանդիստ հարցնում է.

Շաղրաղցի բեթչի,
Թե ասածս քիչ ի
Տյու էլ՝ քյու ղուռնեն փչի։

—Չէ՛ ախպեր, չէ, ես տըրվուկ եմ, խերիքյ ի,—պատասխանում է շահրադցի ընդդիմախոսը, —իմ կողմանե խերն անիծվի էն մարթուն, վով առճակցու խետ բեթի կըպռնվի։

Արթենի ավագ որդին՝ 20-ամյա Դավիթը իր կատակաբանությամբ, մանավանդ հանգավոր խոսելու ունակությամբ, ընկերների սիրելին էր։ Պետք եղած դեպքում նա հոր հեա ես հանգավոր էր խոսում։ 1913 թ. ձմռանը նա որոշում է այցի գնալ Վանին մոտիկ Շուշանց գյուղում գտնվող ազգականներին։ Նրա գնալուց հետո ծնողները նկատում են, որ դրսի մառանում եղած սերմացու դարու կեսը հազիվ է մնացել։ Առաջին դեպքը չէր, որ Դավթի ձեռքով մառանից որևէ մթերք էր անհետանում, և հայրը մի քանի հայհոյանք տալով սահմանափակվում էր։

Մի քանի օր հետո, հեռավոր ճյուրագնացությունից վերադարձած Դավիթը բարևում է հորը սովորական երկու բառով.

—Պարիկուն քյե, աղա՛,
—Աստծո պյարին,
ապա ո՞ւր ի մասնի կյարին.—բարեր առնում է հայրը։
—Տարա տվի գյուքընդարին,—պատասխանում է Դավիթը։ Սակայն հայտնի չեղավ. թե ում հեղինակությամբ ավելացավ հոր քերանով արտասանված սպառնալիքը.

—Յան պե փարեբյ խամրրի տուս-փուս,
Յան իմ տնից կուրիսի տյուս։
Եվ Դավթի մոր խրատականը.
—Քյա մա՞րթ, տյու քյու խասած պյարուն՝
Լագալ կուտա մեյ չափ կյարո՞ւ...

ԱՐՃԱԿԻ ԶՎԱՐՃԱԽՈՍՆԵՐԸ

Արճակցիների մեջ կա, թե հների և թե նորերի, կային խերնատիպ անհատներ, որոնց արարքները, ավանդավեպի նման, պատմում էին մեկը մյուսին։ Այդպիսի մի անձնավորություն էր և Դրդոյի Պիտոն։ Նրա արարքները դուրս էին եկել ընդունված սահմաններից, ծիծաղելի դրվագների շարքն անցել ու ասացվածքի վերածվել։ Բերենք մի քանի օրինակ։

«Քյաղքի ճամբախ ընչի ուլոր-մուլոր ի»

Հարևաններին ու ծանոթներին երբեք չվիրավորող, չհայհոյող Պիտոն իր կնոջը սակայն, միշտ էլ մի անհեթեթ պատրվակով ծեծելիս էր եղել։ Մի անգամ մի քանի օրով նա քաղաք էր գնացել, և կինը մնացել էր առանց ծեծի։

Քաղաքից վերադարձին կինը նախօրոք պատրաստած է լինում նրա և՛ ոտք լվանալու ջուրը, և՛ մաքուր գուլպաները, և՛ ուտելիքը, ընդհուպ ձվածեղի պարագաներն ու թիկն տալու բարձերը։

Ոտքն ու գլուխը լվանալուց, ուտելուց ու բարձերին թիկն տալուց հետո նա կնոջն ասում է.

—Կնիկ, կնիկ, մե խոսա էստա փետ տասս։

—Ըն, մարթ աստծո, ախըր ի՞նչ ի իլե. ի՞նչն ի պակաս, սաս տեսնամ, ընչի՞ կուզես թիես,—ապերապին հարցնում է կինը։

—Այ կնիկ, շատ եմ բեզարած, մեկ էլ չըլնեմ վեր, մի հակառակվի, շուտ արա, տուր,—հրամայելու է անցնում Պիտոն։

—Ախըր ի՞նչ կարահաթիս խամար, ասա, է՞,—նորից է հարցը առաջ տանում կինը, թողնելով մահակ տալու հրամանը անկատար։

—Ըն, էս քյու խոր խոկյին,— ասում է Պիտոն հայհոյելով,—հալա կխարցուցես էլ թե ի՞նչ ի կյարահաթրա։ Քյաղքի ճամբախ ընչի՞ ուլոր-մուլոր էր. հը՞,—և սկսում է կնոջը ծեծել։

«Դրդոյի Պիտոյի սես հար բըխեց բռնեռ»

Որևէ անհատի կամակորությունը բնորոշելու համար այս դարձվածքն էին կրկնում արճակցիները։ Պատճառը հետևյալն էր.

Որդիներից մեկի հարսանիքն է լինում։ Ըստ գյուղական սովորության, մոտիկ հարազատներն ու հարևանները, յուրաքանչյուրը ըստ իր հնարավորության օգնում են հարսանեքատիրոջը, իսկ տան ղեկավարը, որ խնամիներից ինչ-որ բանով դժգոհ է, խռովել գնացել-մտել է ախոռի հողանը։ Ոչ զավակների, այդ թվում ամուսնացող որդու ծնկաչոք աղերսները, ոչ ներկա եղող հարազատների ու հարևանների խրատ-հորդորները Պիտոյի վրա չեն ազդում։ Նա լուռ ու խռոված նստած է մնում ախոռի հողայում մինչև այն պահը, երբ հարս ու փեսային եկեղեցուց բերել են հասցնում։ Պիտոն հանկարծ մտնում է թոնրատուն մի հսկայական քար գրկած, և անբանբրալով առաջանում է դեպի թոնիրները, որոնց մեջ քլքլթալիս են լինում պսակահաշի համար պատրաստած կերակուրներով լիքը հսկայական, չորսկանթանի պուտուկները։

Ներկաների զարմացած հարցին, թե ի՞նչ է ուզում անել, Պիտոն հեգնելով պատասխանում է՝

—Պյան չէ, մենակ էսա քյար պիտի թիեմ թոնեը։

Ասելն ու քարը թոնրի մեջ նետելը մեկ է անում։ Բարեբախտաբար երկրորդ թոնրան միջի կերակուրները փրկվում են։

«Դրդոյի Պիտոյի տնեցոց նման բերան մեխը են»

Այս դարձվածքը արճակցոց մոտ ծագրական էր ու ուներ իր պատմությունը, որն միայն Դրդոյի Պիտոյի ուղեղը կարող էր ստեղծագործել։

Ի բնե անհանդիստ, ծերության շրջանում էլ բնավական Պիտոն, որի թոնրատունը միշտ էլ բնել են և նրա չորս ամուսնացած որդիները՝ չորս «խայխի ազջիկներին» հետ, և նրանցից ծնված մանր ու մեծ երեխաները, ամեն լուսաբացի հետ աղմըկել է «Ըն՛, հարամակերներ, օրը կեսօր ի, խերիք ի մրափեք»։ Սակայն մի օր ընտանիքի

անդամները հանգիստ քնում, քունները առնում, ուզում են վեր կենալ, տեսնում են երդիկը մութմութ է ու լուռ պառկում են իրենց անկողիններում։ Մեկ էլ նրանց ականջին են հասնում ինչ որ խոսակցություններ ու հոր հաստատուն շեշտով ձայնը՝ «Բիթում, բիթում, րիթումն էլ մեռիր են»։ Հետո թոնրատան դուռը բացվում է։ Ներս թափանցող կուրացուցիչ լույսի հետ ներս են մտնում և՛ Պիտոն «րիթումն էլ մեռիր են» կրկնելով, և՛ գյուղի քահանան՝ երեսը խաչակնքելով, և՛ ժամհարը՝ մեռել տանելու պատգարակը ուսին, և՛ թաղեցի ծերերն ու կանայք՝ սարսափը դեմքերին։ Իսկ իրենց անկողիններում արթուն պառկած կիսամերկ կանայք ու տղամարդիկ, յուրաքանչյուրը իր հագուստը դրկած, վազում են թոնրատան խորքի մառանները։

—Անիծվես դու, անիծվես, ես քյու խաղալի՞քն եմ, հա՞,—վրդովվում է քահանան և սկսում է անեծքներ տեղալ այդ «աստծու երեսից ընկած» մարդու գլխին։

—Տեր հայր, խո տյուք ծեր պարի աչկով տիսաքյ, որ իմ տնըցիքյ րիթումն էլ մեռուկ ին, —հանգիստ պատասխանում է Դըզոյի Պիտոն։

Պիտոն այդ օրը, լուսադեմին իր «հարամակերներին» արթնացնելու փոխարեն, բարձրանում է կտուրը, երդիկը ամուր ծածկում է, այնպես որ ոչ մի շողք չերևա, նույնպիսի խնամքով ծածկում է նաև դռան փակատան անցքը, իսկ օրը բավականին անցնելուց հետո գնում է քահանային հայտնում թե տնեցիք բոլորն էլ մահացել են։ Անօրինակ ողբերգական լուրից հուզված քահանան, իր հետ վերցրած ժամհարին գնում է «մեռելատուն»։ Տերտերին ու ժամհարին են միանում նաև պատահարից սարսափած թաղեցիները։

Ահա թե ինչպես էր Դըզոյի Պիտոն իր «հարամակերներին» ամոթահարել։

«Թաթարի Մարկոսի տեսած սատանեն խո չե՞ս»

Անհիշելի ժամանակներից Արճակում ևս եղել է այն սովորությունը, որ գութանատերերը բավարար չափով լծկան չունենալու դեպքում, տնտեսապես անապահով համագյուղացուց (որը գութան չուներ և ընդամենը երկու-երեք լծկանի տեր էր) վարձու լծկան էին վերցրել։ Դա ունեցել էր մի անփոփոխ սակագին, այն է՝ ողջ սեզոնին բանեցրած յուրաքանչյուր լծկանի համար գութանատերը պետք է մի օրով իր գութանը աշխատեցներ լծկանատիրոջ արտում։ Նման գործարքը կոչվում էր «լծկանը գութանով տալ»։

Դըզոյի Պիտոն այդ տեսակի գութանատերերից չէր։ Նրա սեփական լծկանները փոխով գութանից էլ ավելի են եղել։ Բայց երբ Թաթարի Մարկոսը նրան առաջարկում է իր զույգ եզը վերցնել գութանով, Պիտոն ի հարգանս սուրբ բարեկամության (Մարկոսը Պիտոյի քավորն էր եղել) համաձայնում է։

Եզները գութանով տալուց մի շաբաթ անց Մարկոսը խնդրում է Պիտոյին, եզներից մեկը մի օրով իրեն տրամադրել։

—Ինչ կա որ,—ասում է Պիտոն,—վազ լուսատեմին քյանի կիշերարած լծկայնթեր տաշտ չի տարե, կնա մեր փտյախ, քու եզ տար։—Վերջում էլ հարցնում է,—Ծո մտրթ, խո մեր փայխից չես վախենա։

—Ընչի՞ պիտի վախենամ,—պատասխանում է Մարկոսը։

Գիշերվա կեսին, Պիտոն անկողնուց վեր է կենում, վերցնում է մի աման ալյուր, հետն էլ թոնրան մրոտ փալատիկը, որով սովորաբար թոնիրը փտրատելուց հետո ակն են խցկում ու սուսփուս տանից դուրս գնում։

Լուսադեմին Մարկոսը, որ բավականին սրտոտ ու ճշմարտախոս մարդ է լինում, մտնում է Դըզոյի մութ ախոռը, մի քիչ սպասում՝ մինչև աչքերը մթանը վարժվեն, հետո դիմում է ախոռի այն բաժանմունքը, ուր լծկան եզներն են կապված։ Բայց ի՞նչ. իր սև եզը լույսի պես սպիտակ դարձած, վրան էլ մի սև, կոտոշավոր սատանա հեծած դեպի իրեն է գալիս։

—Իսուս-Քրիստոս, Իսուս-Քրիստոս,—մրըմընջում է Մարկոսը՝ և՛ իր երեսը խաչակնքելով, և՛ «սատանայի» վրա խաչ հանելով։ Սակայն «սատանան» կործանվելու փոխարեն, սպիտակած եզանը ավելի է քշում դեպի Մարկոսը ու սատանայական մաղե մտրակով երկու անգամ խփում է նրա դեմքին։

Ուշաթափվելու աստիճան սարսափած Թաթարի Մարկոսը «Իսուս-Քրիստոս» լփռտալով իրեն դուրս է գցում Դըզոյի ախոռից ու մի կերպ հասնում իր տուն և ընկնում անկողին։ Կեսօրին Դըզոյի Պիտոն գնում է հարցնելու, թե քավորը ինչու չի եկել իր եզը տանելու։

—Աանախեր,—ասում է Մարկոսը,—քյու փայխի մեջ սատանա ի պնակալվե։ Ես վախեցա, ջրով տյուս թռա,—և պատմում է իր տեսածները։

—Յա՜, ի՞նչ ի կասես,—զարմանում է Պիտոն,—իմ փայխի մեչ քյառսուն տարի ի օխնուկ մալ-տավար կպախվի, սատանեն ի՞նչըխ պիտի պնակվի էնտեղ։ Վայ թե աչկի երևույթ ի իլե.

չրկարցա՞ր Իսուս-Քրիստոս ասելով՝ խաչ խանիր իրիսիտ, որ աչկիտ երևույթ խափանվեր։

—Սանախեր, խաչ էլ խանիցի, Իսուս-Քրիստոս էլ կանչիցի, համա ծեր փոյխի սատանեն անկոռծան էր,—սկսում է երգվել Մարկոսը։—Քյըշեց էկավ վրես, մկա էլ աչկիս առաջն ի, ծեռ ուսրավ ուր խուել, մաղե թուփուղ պոնեց, էտա թափուլով բիթ-ոլենիս տուր որ կուտասա։

—Որ ըսկուն ի մեր սան ղոլվաթն ի իլե, չի թողե, որ տյու իմ տան կլուխրնվորին տանես՝ պանցուցես,—եզրակացնում է Պիտոն։

Թաթարի Մարկոսը, որ բոլորին էլ պատմել էր Դրդոյի «փայխի սատանի» մասին, հեշտությամբ համոզվում է, որ Դրդոյի տան ղոլվաթը թույլ չի տվել իրեն՝ Պիտոյի տան վարձու անասունին տանել-չարչարել։

Դրդոյի «փայխի սատանայից» ամենից շատ սկսել էին վախենալ Դրդոյի ընտանիքի անդամները և այդ վախը փարատելու անհրաժեշտությունից դրդված, Պիտոն պատմել էր, որ այդ բոլոր հնարքները իրենն է եղել, ինքն է, որ ոն եղը օծել է ալյուրով, ինքը սկլորացել է, դեմքն ու մարմինը շփել թոնրտն մրոտ փարտոփկով, պտղաթի մաղափունչը բաժանել երկու մասի և եզտն պոչը ձեռքն է առել ու դրանով հարվածել բավլոց դեմքին։

Դադտնիքը բացահայտվելուց հետո, Թաթարի Մարկոսը դառնում է գյուղի ծիծաղի առարկա։

«Դրզոյի Պիտոյի Կնուքեի խոց ատկըցեր ի»

Այս դարձվածքն էլ էր ծաղրասեր արճակցոց մոտ տեղ գտել. Գյուղամերձ՝ «Քյաղքի տափ» կոչված բլրադաշտին կար մի հսկա ժայռ, որը նկատվում էր հեռավոր դաշտավայրերից և որի ստվերը անհիշելի ժամանակներից դաշտային աշխատողների մոտ համարվել էր կեսօրյա ճաշի ու հանգստի ազդարար։ Պիտոն էս այդ ստվերով էր ղեկավարվել։ Քաշաողը Պիտոն ինքն էր եղել մաճկալը։

Օրերից մի օր գութանի հաց բերողը ուշանում է։ Պիտոն բավականանում է հաց բերողին կոպիտ հայհոյանքներ տալով, բայց երբ հաջորդ օրը նայելով բլրաշանթին և տեսնելով ստվերը, արտամիջյան ճանապարհին գութանին հաց բերողի չի նշմարում, Պիտոն կարգադրում է գութանը դուրս բերել արտից ու քշել դեպի գյուղ, դեպի իրենց տուն։

Մոտակա արտերի գութանվորների զարմացական հարցին, թե ինչ է պատահել, Պիտոն հանդիստ պատասխանում է՝

—Կէրթանք տուն ճաշենքյ։

Թե ինչ ճաշ էր եփվել Դրզոյի տնեցոց գլխին, դրանից այնքան շատ բան չէր մնացել ականատեսների հիշողության մեջ, որքան վառ էր մնացել պատկերը՝ գութանը իր չորս լուծ եզով և Պիտոն՝ մաճը բռնած իր տան դռանը։

ԵՐԳ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ

Թափառական երգիչներ էին այցելում Արճակ՝ աշուղներ և «մրդրրներ» (մահմեդական գնչուներ)։ Մրդրրները, Վանի քաղաքամատույցին, Ակրոփի կոչված թաղամասի գնչու մահմեդականներն էին, իրենց մաղագործի արհեստով պիտանի թե՛ գյուղին, թե՛ քաղաքին. հետևաբար արժանի այն սառը հարգանքին, որին արժանանում էին երթևեկ արհեստավորները, ասենք ինչպիսիք էին վանեցի կլայեկչիները, փինաչիները, շատախցի գզրար-թաղիքագործները, նույնիսկ Արճակի ամենօրյա այցելու մոտակա Աղտաշ քրդական գյուղի բնակիչ, մուրացկան ծերուկ, քուրդ Կույր Ալին։ Մրդրրները, որոնք սովորաբար առողջ ու աշխատանքի մարդիկ էին, իրենց բնատուր ստախոսությամբ, մանր գողության հակումներով և աներեսությամբ, արժանացել էին մեծի ու փոքրի արհամարհանքին։

Մրդրրները գյուղն էին գալիս ամռան ընթացքում, տարեկան մի քանի անգամ, իրենց հետ ունենալով նոր շինված տարբեր ձևերի մաղերով բարձված մեկ կամ երկու էշ և ցորենի ջվալներ։ Իրենց մաղերը վաճառում էին ցորենով կամ ալյուրով, փոխանակում ոչխարի մորթով, բայց և միաժամանակ երգասացությամբ զբաղվում։ Ահա թե ինչպես։

Նրանք էին մտնում երկար ձեռնափայտով զինված, երկու առողջ թխարեղ տղամարդիկ մեկի ուսին մի քանի մաղ ու բյունիկ, մյուսին՝ ջվալ ու անմիջապես նստում այան տակ։ Տանտիկինը վերցնում էր իրեն անհրաժեշտ մաղը, սնտղում, սակարկում և մաղը լիքը ցորեն տալով, մաղն առնում էր։

Սակայն մրդրրները մնում էին նստած։

—Դե գնացեք,—ասում էր տանտիկինը։

—Վահ, խանում, խաչ բաջի,—դարմանում

էին նրանք միաբերան,—էսաղաղար շնն սուն, մենակ մեկ մաղ առնես, տես, էոա ծարև մաղին, ինչպես պյուրադ, ինչրի լեն փոկ, պահ, պահ,—շըրթներն էին բաց ու խուփ անում,—Համա-Համտ քյու տան լայնղ ես։

Տանտիկինը հայտնում էր, որ ինքը ծարև մաղ ունի և մատնացույց էր անում պատից կախված մաղը։ Մրդրրները նույն եռանդով առաջարկում էին մաղերի նոր տեսակներ և երբ մերժվում էին, ապա առանց ամոթի ասում էին,—Դե սր քյն մաղ լավըմ չեա, տյու կիտես, մեր բաժին ինչ որ տաս ես՝ տուր, ըլնենք վեր։

Տանտիկինը պայրանում էր, սակայն նրանք, վիրավորվելու փոխարեն, վաճառելիք բյունիկները դաֆի տեղ ծառայեցնելով սկսում էին թմրկահարել և երգել հայկական որևէ երգ։

Երգերը երբեմն լինում էին նորաստեղծ, սիրային երգեր, երբեմն ընդհանրացած հայդուկային հայրենասիրական երգեր։ Սակայն ինչ էլ լիներ երգվածը, նրանք դրա մեջ ինքնահնար անկեղծ պատմություն էին դնում։

Իսկ եթե սիրային երգ էր, ասենք հետևյալը՝

Հյուսնին կայնե փողնի առւռ,
Ծնուն ի ծոցին, վիզն ի ծուռ,
Ջարեկի ռովդից ի ծուռ։
Ուր մորն ասաց՝ այ նանամ,
Խայի խալավ կը խայնեմ,
Սաթրի փանթուլ կը կարեմ,
Երուսաղեմ մկրտվեմ,
Էջմիածին խայանամ
Հետ Ջարեկին միանամ։

—Խոշ բաշի, կիտես, Ջարել Առղրումա թարաֆի մեյ խեղճ, քասիր խայ փնաշու աղջիկ ես, համա ինչ խորոա, ինչ խորոտ,—և մըդրրները աչքերն էին փայլեցնում ինքնասահեղծ Արդրումա թարաֆի հայ փինաշու աղջկա երևակայական գեղից ղմայլված և շարունակում,—Հյուսնին էլ Առզըրում քաղքի վալի-փաշի մեյ դանա ավդալն ես, խայացիր ես, մկա Մըսրա Երուսաղեմ քաղքի մեջ կենաս ես։

Տանտիկինը ստիպված մըդրրի ապրակի մեջ մեկ կամ երկու հաց էր դնում։

Այլ մարդիկ էին հայ աշուղները։

Նրանք ես տարին մի քանի անգամ էին հայտնըվում, նըանք ես լինում էին երկու հոգով, ձեռքներին երկար դավաղաններ, մեկի ուսին մի հին սազ, մյուսին՝ մի հին պարկ, երկուսն էլ ցնցոտիաղգեստ ծերուկներ, մեկը՝ հենված մյուսին։ Առաջնորդը մի աչքանի, մյուսը երկու աչքով կույր։ Մտնում էին տան շեմքից ներս և դանդաղ առաջանում դեպի սյունը։ Տան հարսն կամ աղջիկը շտապում էր նրանց տակ չորս տակ ծալված թաղիք դնել։

Աշուղը սկսում էր երգել՝ աչքի դատարկ խոռոչները դեպի վեր հառած, կերկերուն ձայնի մեջ մեծ հուզականություն դրած, կոշտացած մատները պոնդաղորեն տարուբերելով հին սազի լարերով։ Երգում էր աշուղը և վերջացնելուց հետո, նրանք, առանց իրենց մատուցած ծառայության համար որևէ վարձատրություն ստանալու ամենաթույլ ակնարկություն անելու, ոտքի էին կանգնում, ասես թե մի ուշացած պարտք ունեին վճարելու՝ եկան վճարեցին ու պետք է շտապեն, մյուս տեղերի պարտքերն էլ վճարելու։

Այդ թափառական ծեր երգիչների ցանկում նորը երբեք չէր հայտնվում, այլ հինը, դարերի խորքից եկածը։

Ստորև բերում ենք մի դովք և երկու չափածո ավանդավեպ։

ՍԸՓ ԿԱՐԱՊԵՏ

Սըփ Կարապետ, պանցրիկ պյուլոր,
Քյու ճամփընեը ոլոր-մոլոր,
Քյու տուռ կուկյան շաա ըխտավոր,
Բիթունին կանես րախաավոր։
Առատաձեռն Սըփ Կարապետ,
Ցոթ անվան տեր, Սըփ Կարապետ։
Սըփ Կարապետ, անմար ճրաքյ,
Մենք շըլկիր ենքյ շուխտըմ էրկանքյ,
Էկանք քյու տուռ, տրիցինքյ խանքյ,
Մուրադըմ տուր, առնենք էրթանքյ,
Ռասպոպիկ Սըփ Կարապետ,
Մաղե շապիկ Սըփ Կարապետ։
Սըփ Կարապետ կայնըցուցին,
Լուսեղեն հանթերց խակյուցին,
Խաչ կյավաղան ծեռ տվիցին
Քյրիստոս կյիրկ մկըռտիցին,
Մաքուր քյավոր Սըփ Կարապետ,
Ինակավոր Սըփ Կարապետ։
Տյու ես արև, տյու ես լուսին,
Քյավոր էլար Մայրամ կուսին,
Դիվան նստար խետ Հիսուսին
Արժան արա մե՝ քյու լուսին,
Լոս աղոթրան Սըփ Կարապետ,
Ջանդլի դիվան Սըփ Կարապետ։
Ոտքերս պոպիկ, ծեռքերս անփեա,
Էկանք խաղսանք Մուրադա կյետ,
Մուրադըմ տուր, նոր տառնանք ետ,
Մուրադատուր Սըփ Կարապետ,
Մշու Սուլթան Սըփ Կարապետ։

ԿԱՐՈՍ ԽԱՉ

Քյաոսում խուտաղ ժողվըռավեցին,
Մեյ պողե խաչըմ շինիցին,
Ջորս Թիվին խնձոր շարիցին,
Գյողի Թաֆով փաթութիցին,
Ջոքյան մեյ-մեկ խամրուրիցին
Կարոս ածվի մեչ պախիցին։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Ծառա ըլնեմ ուր լոս ղորքին։
Կնաց էրաղ ճոչ քյախանին,
Ասաց.—Ջիկ սար, տիր մեչ ժամին,
Կիշեր լոս աամ ես քյու ժամին,
Ցերեկ խով անեմ վեր կյեղին։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Ծառա ըլնեմ ուր լոս ղորքին։
Տերտեր վիրուց Կարոս խաչին,
Տարավ տրեց եկեղեցին,
Ցերեկ խով կաներ վեր կյեղին,
Կիշեր լոս կուտեր մեչ ժամին։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Խայոց ասկի լոս խավաաին։
Քյաոսում տարվա մեկ անիծած կյզիր,
Կնաց-մատնեց քյուրթ պարոնին,
Ասաց,—Խաչ մը փայղա իլե մեչ մեր կյեղին,
Ցերեկ խով կանի վեր կյեղին,
Կիշեր լոս կուտա մեչ ժամին։
Էն արժան չի մեր միլաթին,
Էն արժան ի քյու սիվաայքար ամարաթին։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Ծառա ըլնեմ ուր լոս ղորքին։
Պարոն կայնավ վեր րադանին,
Կանչել ի սուր ճոչ քյախանին,
Ասաց.—Խաչ մը փայղա իլե մեչ ծեր կյե-
ղին,
Էն արժան չի ծեր խայ ասկին,
Էն արժան ի իմ քյոշկ-սարին,
Կընա պե, Թասլիմ արա ձիկ,
Թե չէ կըքակեմ քյու եկեղեցին։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին
Խուտըղներաց լոս խավաաին։
Տերտեր կայնավ, աեմ րադանին,
Ջույար ի աուր քյուրթ պարոնին,
Ասաց.—Քաոսում կյուԹանս՝ տյաշտ կը-
պանի,
Թասլիմ անեմ քյուրթ պարոնին,
Թո ղատ կայնի Կարոս-խաչից։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Կարոս-խաչին, ուր լոս ղորքին։
Պարոն ասաց.—Ես իմ Հողեն,
Անկարոս-խաչ մանողը չեմ։
Կընա, շոտըմ ժամուտ աուտ պաց,
Թե չէ կիռնեմ իմ րադտնից,
Արուն կյեա խանեմ քյու անից։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Քաոսում խուտղու լոս խավատին։
Տերաերն ուր շոք զտրկեց կյետին,
Աղոթք արաց առ երկնքին,
Ասաց.—Քյաոսում նախիրս տյաշտ կարա-
ծա,
Կարոս-խաչին կուաամ ընծա
Քյաոսում կտիր ոչխար կա ձիկ,
Էն էլ կուրրտն Կարոս-խաչին,
Քյաոսում ծի կա ձիկ րրխովուկ,
Բիթուն կուրրան Կարոս-խաչին,
Շհաք ըլնես ըստեղծող տեր,
Որ իմ խաչ չի աամ քրթու ծեռ։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Քյաոսում խուաղու լոս խավաաին։
Պարոն իճավ ճոչ րադանից,
Մաավ ուր քյոշկ, սիլախն առեց,
Համա կատղավ մեչ ուր քյոշկին,
Կատղավ խանըմ, մեչ ուր Հողեն,
Կաաղավ աղեն ուրուրոցին,
Կատղավ պարոնի խեր՝ Ալին,
Կաաղավ ուր ծին,
Տաւցավ կերավ ուր ծիու ցին։
Կաաղած խանըմ մեչ ուր Հողին,
Կատղած տըղեն ուրուրոցին,
Մեկ ըղ մեկուն րըղկըտիցին։
Կարոս-խաչի սուփ շնոխքով
Կուրցավ կյզիրն էրկու աչկով։
Ծառա ըլնեմ Կարոս-խաչին,
Ծառա ըլնեմ ուր շնոխքին։
Աաակավ պարոն՝ շան պես կատղուկ։

ԱԱԼԱՆ ԱՂԵՆ

Ասլան աղեն՝ նստե մեչ սողըըթին,
Կուաա արաղ, կառնի կյինին։
Մեչ սողըըթին՝ պայսավ աըաղ, պայսավ
կյինին.
Փարա ի աուր ուր մշակին,
Օրողկեց մեչ ղաաու քյաղքին,
Ասաց.—Կնա առ արաղ, առ կյինին,
Շուըմ արե խասի իմ սողըըթին։
Մշակ կյնաց մեչ քաղաքին,
Կնաց՝ իճավ մեչ մաղաղին,
Անտեր աղքատըմ էր մեռուկ մեչ մաղաղին,
Ուր կյլխու ղարեն վիրուց ի աուր պաաըն-
քյի կյին,

Մեճաց ղարեն քյակեց ի տուր ճուշ քյախանին,
Վիրուցել-թալել ի տուր անաեր մեռել էն աղքըտին,
Սորա կնտց առեց արալ, ասեց կյինին,
Էկավ՝ չխասավ Ասլան ալի սողըրթին։
Ասլան աղեն խառցուց, ասաց.—Ընչի՞ շոռ չէկար, ընչի՞ չխասար իմ սողըրթին
Մշակն ասաց.—Ասլան ապա, ես կնացի մեջ քյաղաքին,
Կնացի իճա մեջ մաղալին,
Անտեր աղքատ ըմ կեր մեռուկ մեջ մաղալին,
Կյլխուս ղարեն տվիցի ինոր պատընքյին կյին,
Մեճացս ղարեն խանիցի տվիցի ճոշ քյախանին,
Իմ խուլկյսւ սաղաղեն, թալել տվիցի էն անտեր աղքըտին,
Սորտ կնացի առի արաղ, առի կյինին,
Էկա չխասա իմ աղիղ աղի սողըրթին։
Ասլան աղեն, ասաց ուր մշակին.
—Կընա, տյուս քյաշի իմ բող-բող հարին
Վրեն էլ ախր թոռ սաղաֆին,
Ես խեծնեմ, Լըթամ կռիվ վեր կյապրել խրիշաակին,
Ընչիյ ի առե ըն անճարի խոկյին,
Թե ուժ ուներ, թո կյեր, առներ իմ խոկյին։
Կյապրել խրիշաակ թիթերմ ղարկեց Ասլան աղին,
Պիրեց թալեց տեղ-դոշակին։ Ասաց.—Կուկյամ կառնեմ քյու խոկյին։
Խերն եկավ, ասաց.—Ի՞նչ ի իլե իմ Ասլան աղին,
Ասլան աղեն ինդեր ի տեղ-դոշակին,
Կնացե ծեռնեն բող-բող հարին,
Կնացե ծեռնեն՝ թոռ սաղաֆին,
Ասա բալամ. ի՞նչն ի տեղ-ճար քյու ցավ-դարդին։
Ասլան աղեն ասաց.—Խերիկ, քյու խոկյին տուր իմ խուկյուն փոխան։
Խերն ասաց.—Բալամ, ես յոթ խարիր տարվան փեսա եմ վեր իմ աթոռան,
Իմ խոկյին չեմ ի տա քյու խուկյուն փոխան։
Կուղես մըլքերըս տամ։
Մերն էկավ, ասաց.—Ի՞նչ ի իլե իմ Ասլան աղին,
Ասլան աղեն ինդե աեղ-դոշակին,
Կնացե ծեռնեն բող-բող հարին,
Կնացե ծեռնեն՝ թոռ սաղաֆին,
Ասա բալամ, ի՞նչն ի աեղ-ճար քյու ցավ-դարդին։
Ասլան աղեն ասաց.—Մերիկ, քյու խոկյին աուր իմ խուկյուն փոխան։
Մերն ասաց.—Բալամ, ես յոթ խարիր սարվան խսրս եմ վեր իմ աթոռան,
Իմ խոկյին չեմ ի տա քյու խուկյուն փոխան։
Կուղես ըրքսերս տամ։
Կնիյն էկավ, ասաց.—Ի՞նչ ի իլե իմ ասլան աղին,
Ասլան աղեն ինդե սեղ-դոշակին,
Կնացե ծեռնեն բող-բող հարին,
Կնացե ծեռնեն՝ թոռ սաղաֆին,
Ասա, իմ կյլխավոր, ի՞նչն ի սեղ-ճյար քյու ցավ-ղարդին։
Ասլան աղեն ասաց.
Կնիկ, քյու խոկյին աուր իմ խուկյուն փոխան։
Կնիյն ասաց.—Արե-արեկյակ թո շհադ կենան,
Ես իմ խոկյին տամ քյու խուկյուն փոխան,
Որ չասեն՝ Գյոզալ խաթունն ի ռոփեվերի։
Կյապրել խըրիշաակ էսը րիթուն լսավ,
Ուր ասպածային արթար տյատ-դիվան տեսավ,
Կնաց առեց խոր-մոր խոկյին,
Տարավ թալեց մեջ տըժողքին։
Ասլան աղեն, Գյոզալ խաթուն պաշխեց մեյմեկու խամար,
Ինոնց օճըխներ խապար տիր, խաղար տալով պախպանեց անմառ։

* * *

Ցուրահատուկ շըջիկ երգիչներ էին շաաախցի դրդըրարները, որոնց սովորաբար կատան էին անվանում։ Կատանները գալիս էին երկու կամ երեք հոգով, դառների բուրդը և՛ գզում էին, և՛ թաղիք գցում, և՛ քոլող շինում ու ստանում կանխօրոք սակարկված վարձը։

Կատանները ամբողջ օրը, բուրդ գզելիս, թաղիք գցելիս, թե թաղիքը կոխկըռճելիս, իրենց քթի տակ երգում էին արճակցիների համար դըժվարըմբռնելի իրենց բարբառով՝ երգեր։ Եղանակից կարելի էր կռահել, որ դրանք տխուր երգեր են։

Սովորաբար կատանները գալիս էին ուշ աշնանը կամ ձմռանը, երբ գյուղացիք երեկոները փայախների հողաներում էին հավաքվում և շաւտախցի կատանները հեքիաթ էին ասում, մեծ մասը երգելով (իհարկե Շատախի բարբառով) Պատմում էին հազար ու մի տեսակ հեքիաթներ, սակայն ամենասրտալին՝ «Սասման ծռերի» հեքիաթն էր, որ կատանները պատմում էին համապատասխան շարժումներ անելով ու երգելով։

Ստորև զետեղում ենք այդ գավառի բարբառով երգված մի երգ, որ լսել ենք Արտակի հին վերարնակիչ շատախցի Գյոզալ մամիկից։ Նա երգում էր պառավական ու աղջկական ձայնով, աղջկականում ցուցաբերելով մեծ հույզ։ (Գյոզալը մահացավ 1911 թ.)։

ԽՈՉԻ ԿԸՆԻԿ ՇԱՏԽՈՒ ԽԱԹԵՆ

Խաթե՝—Խըլա, խըլա, մերիկ, մերիկ, զըմ կաթնատուը, զըմ ամաքյքյար,
Վայ զըմ կյլխուն, վար զըմ աչկի լուսուն էկար։
Խըլա, խըլա, մերիկ, մերիկ, այու ըղքյու իբիկ,
Ջըմ տուն չէ չխո ավեը էրիք,
Ջըմ Շատխուց հընձիկ զըկըցուցիքյ,
Խոկյով-մարմնով մըկըցուցիքյ։
Խըլա, խըլա, մըկըցուցիքյ, մըկըցուցիքյ, մըկըցուցիքյ։
Մայր՝—Տը, վըմ խոլոտ, թուոլան ախչիկ,
Շատխու քարն ու քըոնն հի՞նչ էր,
Կոյոտ փարդյախ, ցանձրիկ տան մուխ քը լայեդ չէը։
Քյե տվիր ենք քաղքի խոջին, տեր ես տառցե պանցրիկ քյոշկին,
Հետա, նստուկ նըխշուն հողեն, տիմաց ըղքյոն ջամ-փենջարեն,
Սևյր կանես դըխ բարով-բախչեն։
Խաթե՝—Խըլա, խըլա, մերիկ, մերիկ, խերիքյ, խերիքյ քյոշկըն պանցրիկ,
Հողեն նըխշուն, ջամ-փենջարեն, զը բարով-բախչեն,
Ջըմեն, զըմեն ուրանց տերն էլ տրած վըեն,
Կուրբան էղնեն մըր սարեըու պետ քարեըուն,
Մըր աաշաերու արածացող տավըրքերուն.
Ըլ չըմ ըսի՝ մըր զըղզդուն ախպըրքյերուն
Մըր խաղարկյոն ծաղկրտիրուն։
Մայր՝—Խըլա, խըլա, տը սիվքյաշուկ, տըմառդ ախչիկ,
Տայտ ի փոուկ կութնի դոշակ, խալվըքեըա՝ ասլաս-կումաշ,
Ջըսքեր ըղ քյոն՝ լալ-մարկյրիտ, անկյին-ալմաստ,
Իրիկ ըղ քյոն՝ առով-փառքյով զանդին խոջա։
Խաթե՝—Տը սիվավոր, փարու կյերի, անսիրտ մերիկ,
Խըոֆիկ խոջեն հրնձիկ էրի՞կ։

Արև չէլած՝ էնիկ կեհա, ծրաք-կպոց նոր տուն կիկյա,
Մաղեն կախուկ խացն ուր կուտա, ըսա տիըմ խարար կուտա՛,
Կըլնտ կեհա մութ մաղաղեն,
Տուռ կըփակա զ՚ուր քյամտկին,
Վառուկ ճըաքյ զ՚ուր տեմ կը տնա,
Էրկաթ սընդուկ զ՚ուր կըպանա,
Կյլոխ կախուկ կըխամբըրա,
Ոսկի, առծաթ, փախըր-փարա, կըխամբըրա, կըխամբըրա, կըխամբըրա
Ջըմեն կյիշեր չուր խըլըսուն,
Ջենու խամբրանքյ չը խըլըսում։
Սեֆիլ Խաթե, տյու խամփըրա, լուսստեմին՝ կիկյա կուշտն իմ,
Սև քյուն կառնի, լեն պընչերով կըխըոխըոա...
Ռարան Խաթե, տյու մըոմոա, հա, մըոմոա։
Մյանչ զուր խյուկյուն խարամ փարան.
Մյանչ զըմ խյուկյուն՝ վարամ-յարա,
Խաթե, արե, դե խամփըրա,
Խըոֆուկ խոշին հեսրա իբիկ դյո խամփուրա։
Մայր՝—Տը կատղուկ շուն, միտն ըղքյոն պե,
Ուզողն ըղքյոն վա՞վ էր՝ չէ չխո, կյևղի նախըորթ ախքյատ Սախոն,
Խաթե՝—Քյաղքի զըմեն ջըհել-ջըհուլ,
Կուրբան կենեմ զըմ Սախոյի
Ծակ քյոլոզուն, խամ շըլվըրուն, խին քյաղախկուն,
Ջենու չարխու չըվըններուն,
Ջենու ծեռաց կայիմ կոպլուն։
Թե չէր իլե խաշ-խաշվըռով օխնուկ փսակ,
Ես ետ տըկյի դըխ մըր Շատախ, զենու խող ու ճըրուն մատաղ։
Ես ետ տըկյի դըխ եմ Սախոն,
Կուրրան եղնամ զենու խյուկյուն։
Մութ-լուսու խեա թը զենիկ լը ուր նախըու խետ
Էհեր մըր զով սարեր կան իկյեր,
Հեվարն եդնեը, դաստեմ ծաղիկ պոնած՝ տուն իկյեր,
Ու Խաթեին անոշ քյուն իկյեր։
Համա՝ օրենք, քյախանա կա,
Խըոֆուկ խոջից փըոթում չկա,
Ջուր օը մախուս տը տապկըվիմ,
Մերիկ, խերիկ, խյոկինըր ծեր մընչ.
Տժոխքյուն թը տապկըվի, թը տապկըվի, թը աապկըվի....

ԵՐԳԱՄԱՑՈՒԹՅՈՒՆ, ԵՐԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հին, ժողովրդական երգերը անմիջապես ձևափոխել ու նույն րոպեին էլ երգել՝ հաջորդ օրը մոռանալու համար, հատուկ էր արհակցի երիտասարդությանը։ Օրինակ՝

1907 թ.՝ սիրահարված մի զույգ կար, երկուսն էլ գյուղի համրա ընտանիքի զավակներ՝ արտաքինով ու տարիքով, նույնիսկ անուններով միմյանց համար։ Երկու ընտանիքների (այն էլ՝ կանանց) միջև տեղի ունեցավ մի հասարակ վեճ և տղայի ծնողները հայտարարեցին՝ թե իրենք կովարար մոր աղջկան իրենց տուն չեն մտցնի։

—Ես իմ աղջիկը նրանց տուն չեմ տալու, —իր հերթին վճռեց հայրը և անմիջապես ձեռնամուխ եղավ իր աղջկան ամուսնացնելու հարևան ունևոր, բայց տարիքով մի մարդու հետ։ Աղջկա մայրը, որ դեմ էր այդ ամուսնությանը, մեծ ողբերգություն էր ապրում։ Եվ ահա հրապարակ իջավ ժողովրդական պարերգ, խոսքերը հարմարեցրած այդ զույգին։ Եղանակն, իհարկե, պարերգինն էր։

Աղջկան հյուր էին տարել մի այլ գյուղ և մինչև ետ բերելը հայրն արդեն հասցրել էր նոր փեսացուին խոսք տալ։ Ու հայտնի չէ ումից հորինվեց, բայց բոլորի կողմից երգվեց.

Թակոն տարան Կուռուպաշ խուլ,
Դըլ վայ, դըլ վայ դըլ վայ-յաման,
Պիրին իճուցին հողի տուռ,
Դըլ վայ...
Կարմըրցիր էր բյանձ խասուկ նուռ,
Դըլ վայ...
Սերոն արին սավդալի ծուռ,
Դըլ վայ...

Խառակոնիս գյուղ տանող ճանապարհը անցնում էր Թակոյենց տան մոտով։ Հակոն, այսինքն՝ սիրահար տղան անցել էր այդ տեղով ու մինչև նա իրենց տունն էր հասնում, արդեն հորինված երգին ավելացել էր ևս մի քառյակ.

Հակոն կյուկեր Խառակոնսա,
Դըլ վայ...
Սինամ կանչեց՝—Արե դեսա,
Դըլ վայ...
Ես քե մեռնեմ, Հակոր փեսա,
Դըլ վայ...
Նյա խոսա առի, նյա խամա տիսա,
Դըլ վայ...

Թակոյի և Սերոյի ամուսնությունը կատարվեց շատ արագ ու առանց որևէ միջադեպի։ Հակոն, որպեսզի ապացուցի, թե ինքն անտարբեր է եղել Թակոյի նկատմամբ, մի քանի ընկերների հետ գնաց եկեղեցի՝ հարսանյաց հանդեսը դիտելու։ Հարսանյաց հանդեսը դիտելը շատ ընդհանրացած երևույթ էր։ Բայց ահա Հակոյի ու Թակոյի շուրջ հորինված արդեն մի քանի տասնյակ քառյակի հասնող դըլ վայ-ով երգվող երգին անմիջապես ավելացավ մի քառյակ ևս.

Ժամտան ճաղեր այս-վ՚էրկըտակ,
Դըլ վայ...
Թակոն թալե կարմիր մետաք,
Դըլ վայ...
Հակոն ի կայնե պատի տակ,
Դըլ վայ...
Ծող-ճող աչկերաց կուկյա տակ,
Դըլ վայ...

Ահա ժողովրդական մի այլ երգի եղանակով հրապարակ իջած երգի շարժառիթը, որ երգվեց 1912 թվականին։ Ընդունված հին սովորույթ էր բարեկենդանի վերջին օրերին աղջիկների խմբերը հավաքվում էին որևէ հարմար տուն և երգով, պարով ժամանակ անցկացնում։ Ամուրի երիտասարդներն էլ իրենց հերթին երեկոները հավաքվում էին որևէ մեկի տուն, երբեմն նույնիսկ նագարա-զուռնայով, ուրախ աղմուկով կարճում ձմռան երկար գիշերները։ Վերջիններիս խաղատեղն էին հավաքվում և՛ պատանիները, և՛ կանայք ու երեխաները։

Բարեկենդանի վերջին շաբաթօրյա երեկոյին նման մի խաղատան էր վերածվել Նշան անունով մի լրջախոհ մարդու ընդարձակ թոնրատունը։ Ինչ-որ մեկի անզգուշությունից գետին է շրջվում տան վերին անկյունում դրված թթու կաղամբի հսկայական կարասը և ողջ պարունակությունը բազմության ոտքերի տակ տրորվում։ Վնաս կրած տանտերը հավասարակշռությունը կորցրած բոլորին էլ հայհոյելով դուրս է վռնդում։

Սակայն հենց այդ պահին, երբ նա բակ է դուրս գալիս, տեսնում է, որ հոտաղներն ու պատանիները, իր բակում «Մշու-խըռ» կոչված աշխույժ պարը բռնած, փոխն ի փոխ երգում են թափված թթվի երգիծական տաղը՝ խոսքերը հարմարեցրած իր տան պատահարին.

...Վա՜յ թթու, վա՜յ-վա՜յ թթու,
Մեկ ըս տաըի մե փըռթու

Դիղնի թըթուն շըռնըվավ,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Սիվտակ լը՛ւաննեն կոխըռծվավ,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Կուկունի թոմրան թըռծըվավ,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Գյոնդբաշին կլնտին փոքըվավ,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Ծոչ պսղըն իկն կայնն տըւան,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Մարոն, Կուշոն կըրոորոան,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
—Խուտըղնեբաց քյաշեք դիվան,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...
Որ մե տվին ըսնա վիյան,
Վա՜յ թթու...
Մեկ ըս...

Դիղեի սաս թթվի տաղը երկար էր, սակայն երկարակյաց չեղավ, քանի որ բարեկենդանը ընդամենը 24 ժամվա կյանք ուներ։

Արծակցի տղամարդկանցից քչերն էին, որ ամեն տեղ երգելու սովորություն ունեին, բայց բոլորն էլ երգ ունկնդրելու տենչ ունեին։ Երգողներից մեկը՝ Մամբրե անունով, անթիվ-անհամար թուրքերեն երգեր գիտեր ու վարպետորեն էր կատարում։ Սակայն եթե ունկնդիր էր ունենում, երգում էր վշտոտ երգեր։ Օրինակ, անծանոթ ու անմարդաբնակ մի վայրում մեռնում է մի երիտասարդ ուղևոր.

Բան աթըմի բաղլադըմ բիը չիմանա,
Կարավանլար դյալն-գյիդան յա մանա
Բան օլուրսըմ ջան բանըմ գեր, քիմա նա։
Կոմա բըլբուլ, կոմա մագաո դաշըմա
Քյաֆիր ֆալադ, կարա գյաթդի բաշըմա։
Բան աթըմի բաղլադըմ բիր ղալիյա,
Արղուհալըմ դեթդի դայդի վալիյա,
Բան օլուրսըմ քիմսա յոդաուր ալլիյա։
Կոմա բըլբուլ... և այլն։

Մահը՝ մահ է, եթե անժամանակ է վրա հասնում։ Մշտապես տառապանքներ ու բոնամահ ճաշակած արճակցին իր սրաին մոտիկ էր ընդունում ամենազոր մահի դիմաց՝ մարդկային անզորության փաստը։ Թեկուզ մահացողը շրջապատված է հարազատներով ու բժիշկներով։

Աղախանդան շուշալարի փտոլիյոր
Անամ-բարամ բաշ ուստյունըմ աղլիյոր,
Դոկտոր դալմիշ յարալարըմ բաղլիոր։
Սոյլադա դոկտուր, սոյլադա օլաջաքըյմիըմ օ՜յ, օ՜յ
Օրուգլիյըմ, ուրադըմդա յաղ օլմադ։
Լոհման հեքիմ գյալսա, յարամ սաղ օլմաղ,
Յարամ իչարդան դեր, մալհամ քյար էթմազ։
Սոյլադա դոկտուր և այլն։

Ահա վերոհիշյալ երկու թուրքերեն երգերի թարգմանությունը.
Առաջինը՝

Ես իմ ձին կապեցի իմ մարգագետնում,
Քարավանները գալիս-գնում են իմ մոտից,
Ես կմեռնեմ, կյանքը իմն է, ումն ինչ։
Մի՛ կանչիր, բլբուլ, մի՛ կանչիր իմ գերեզմանաքարին.
Անօրեն ճակատագիրը սև բերեց իմ գլխին։
Ես իմ ձին կապեցի մի չորուկից,
Խնդրադիրս գնաց-հասավ նահանգապետին
Ես մեռնում եմ՝ ոչ ոք չկա լաց լինի։
Մի՛ կանչիր, բըլբուլ և այլն...
Ահա և երկրորդ երգի թարգմանությունը՝
Դեղասան ապակիները փայլում են,
Մայրս, հայրս իմ գլխավերևում լալիս են,
Բժիշկը եկել՝ վերքերս կապում է.
Ասա բժիշկ, ասա, մեռնելու եմ, օ՜յ, օ՜յ։
Թոքախտավոր եմ։ Արաումս յուղ չի լինում։
Լոհման հեքիմն էլ եթե գա, վերքս չի առողջանա։
Վերքըս ներսից է, ալեղանին օգուտ չի անում
Ասա բժիշկ և այլն...

Արճակցի երիտասարդ մայրերը, որոնցից ոմանք քաղաքացի չքավոր ընտանիքների աղջիկներ էին կամ որբանոցների որբուհիներ, «Աստղիկ ճայտի կյիր» երգին համահավասար օրորոցային էին դարձրել և վերոհիշյալ թուրքերեն երգերը, և ներքոդրելիք քրդերենը։ Երգում է հորեղբոր բոնի ամուսնացրած քրդուհի որբուկը։

...Իշալլահ բարրայեմըն՝ խերե, ջանե խո նա բինի,

Բոմա գըլդի հաչամա, փոփոխ սաշա,
դընջե շինի
(Տա առավոծ, իմ հարեզրայրը իր ջանից
խեր չահանի,
Ինձ ավեց պարտիկի՝ գլխարկը սև, հագուս-
տը կարույա)։

Քրդերեն երգողներ էլ շատ կային, որոնք ծայրե-ծայր գիտեին և «Բերիվանոն» քրդական բանահյուսության այդ գոհար պոեմը, և «Մամե Զինե» սրտահույզ ու բովանդակալից սիրային սքերգությունը։ Բայց և այնպես արճակցին գերադասում էր լսել՝ «Մամե-Աշե»։

...Հայ, հայ, Մամե, Մամե, Մամե, Մամ-
յաո,
Ժարբե Մամե, Մամե, միրո Մամյաո...

Տարաբախտ այրի Աշե մայրիկը, որ աչքի լույսի պես է պահպանել յոթ տարի պանդխտության մեջ գտնվող որդու նորահարս գեղեցկուհի կնոջը, վերջին գիշերը պանդխտությունից վերադարձած ու լսելյայն կնոջ անկողինը մտած որդուն իր իսկ ձեռքով է սպանում՝ որդուն հարսի սիրեկանի տեղ դնելով։

«Մամե Աշե»-ն երիտասարդական սիրո ու կարոտի արտահայտությունը չէր, այլ սիրով, անձնազոհ մայր Աշեի ջերմ սիրո, սպասումի և անասելի ծանր ապրումների ու անմխիթար վշտի հեղեղն էր, որ դուրս էր հորդում շուրթերից ու ողողում լսողի հոգին։

Նույնն էր նաև «Հեգի բաժո»-ն իր արտամա-թախիծոտ եղանակով։

Ինչ-որ տեղից ուրիշ վայր են տանում կռվում վիրավորված մարտիկին։ Թերևս նա վիրավորվել էր հայերին թալանելու կամ ջարդելու ժամանակ։ Բայց արճակցին անսահման հուզվում էր, որ սայլի ցնցումներից քուրդ վիրավորը ծանր ցավեր է զգում և աղերսում է՝ կամաց քշեն սայլը։ «Հեգի բաժոն» լսելիս, հայ երգասեր արճակցին ևս՝ քուրդ հորինող երգասացին հավասար հուզվում էր։

Երբ շեմից ներս էր մտնում թափառական աշուղը, ապա յուրաքանչյուր արճակցի, առաջին հերթին երգել էր տալիս՝ «Ես Հայաստանի Տուրուբերանի» հայ պանդխտի հնօրյա, մրմունջ արտահայտող երգը և ապա միայն՝ «Ասլան աղեն» «Մուկաց Միրզեն», «Սասնա ծռերը» և կամ «Արփ Կարապետ» կամ թե, «Կալուս խաչ» և այլ նմանօրինակ երգեր։

Առհասարակ պետք է նշել, որ արճակցին հակում ուներ դեպի վիշտ ու դժբախտություն արտահայտող երգերը և ինչքան էլ որ ծաղրեին Հակոյի ու Թակոյի հին սերը, որ առաջին իսկ թեթև արգելքից հօդս ցնդեց կամ Դիդեի սան ճթվի թափվելու դառնահարը, նույնքան էլ հարգալից լռություն էին պահպանում ողբերգական դեպքերի հանդեպ։

Արճակում խոլունկ վիշտը հարգվում էր խոր ու լսելյայն։ Վիշտ արտահայտող երգերը, լինեին դրանք հին ժողովրդական, աշուղական, թե օտարազգի (օտար լեզվով), միևնույն էր, արճակցին դրանք պահպանում էր։ Պճնված ու բախտավոր համարված երիտասարդ կանանց շուրթերից միշտ էլ կարելի էր լսել բռնի ամուսնացած թրքուհու բերանով երգվող հետևյալ երգը։

Բան բիր սոնա, բիր քյոթիյա վերդիլար,
Համ վերդիլար, համ դյունահըմ այդիլար։
Իգիթ դայել, բան ալայըմ յաթայըմ,
Կոյին դայել կասարլարա սաթայըմ։
Խոռուզ դայել բոյնուն թութում քյասայըմ։
Ախ, բյուլմանըմ, հեչ բյուլմանըմ նեյնայըմ։

Ահա թարգմանությունը՝

Ես՝ մի վայելչագեղ, ինձ մի անպետքի են
ավել,
Եվ՛ տվել են, և՛ մեղքըս առել են։
Կտրիճ չէ, որ ես առնեմ ու քնեմ,
Ոչխար չէ, մսագործներին վաճառեմ,
Աքաղաղ չէ՝ վիզը բռնեմ-կարեմ։
Ախ, չգիտեմ, բոլորովին չգիտեմ՝ ինչ անեմ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՄԱԼՈՒԼ ՏԱՂԵՐ (ՏԽՈՒՐ ԵՐԳԵՐ)

ԿԱՐԻԲԻ ՄՈՐ ՏԱՂ

Ախ՜, ախ՜, ախ՜, մերիկ, մերիկ.
Քամին փոթով սարի դոշեն,
էկավ ափպավ ծորի փեշին,
էկավ խասավ կյեղի պերան,
Մենակ իմ տուն արաց վերան։
Ախ՜, ախ՜, ախ՜, մերիկ, մերիկ.
Կյարուն էկավ, ծներ խալան,
Խավքերն էկան էրամ-էրամ։
Կռա-կռա առակյել՝ առ՛ւ ասա,
Իմ կարիրին որաե՞դ տիսար։
Ախ՜, ախ՜, ախ՜, մերիկ, մերիկ.
Ըլնեմ սարի դոշ՝ տադց ցանեմ,
Քընեմ՝ քար կյլխուս պառց անեմ,
Պանցրիկ սարերաց խառց անեմ՝
Աջար իմ կարիր չե՞ն ախսնա։
Ախ՜, ախ՜, ախ՜, մերիկ, մերիկ.
էրանեյ ծե, սարեր րիթուն,
Որ չեք ինե կարիրութեն,
Թե չէ ծեր քարեր կըմաշեր,
Կըայ կինեը, ծե կըխաշեր։

ԿԱՐԻԲԻ ՏԱՂ

Կյարուն էկավ աշխար, խալ ինդան ծըներ,
Կարիր խավքեր թռան՝ դեխ ինոնց պըներ։
Առակյել պոն շինեց, կխանի չըըս ծաք,
Կարիրներաց արռներ մնացիր են փակ։
Կանչե կռունկ, կանչե, քյու աայն ի չիման,
Վեր սար-քարին արե, վեր ձիկ ի դուման։
Կըվա, կաքյավ, կըվա, աշխար կյարուն ի,
Կարիրներաց սրռաեր կյունդ-կյունդ արուն ի։
Կարիրի սթարն ի մարաքյ, հառիքյն պաց ի,
Պըռկներ հա չուրցուկ ի, աչքեր հա թաց ի,
Ռասա էկած չոր քյարն՝ ուր կյլխուն պառց ի,
Կարիրներաց խռկյին հա խռկյաաառց ի։

ՄՈՐ ՏԱՂ

Պոն աըրիցի, ձէտ խանիցի,
Մերիկ տառցա կյըկանոցի,
Կըըռղն էկավ իմ պոն քյակեց,
Սուր մըրախով շիդյըըս ծակեց։
էըանեյ քյե՝ անպոն պուպու,
Որ դադ չկա վեր քյու խյուկյուն,
Թուխս չես նստե, ձէտ չես խանե,
Ջես կիտե ջիգարն ինչ պլյան ի։
էրանեյ քյե, րաղի րըլըուլ,
Որ չես տիսե ջիդյըի մըռմուռ,
Որ քյու պոնն էլ իմ պես քյայվեր,
Քյու անուշ լեղուն կըփայվեր։
էրանեյ քյե, սինամախավքյ,
Որ չես կիաե մոր սըռաի դաըդ,
Որ այու տիսնիր ջիդյըի մըռմուռ,
Կըթափեը քյու ոսկի փիտուր։

ԱՆՏՈՒՆԻ ՏԱՂ

Լո, կըռունքյ, կըռունքյ, կըռունքյ.
Խավքյիկ'մ էր ընցավ երկնուց մենավոր,
Վկիկն էր հերկեն, սըռտիկ սեավոր,
Ասպած ձիկ թե աեր, թռնի խետ ինոր,
էն իմ դարդ կիաի, ես կիտեմ ինոը։
Լո, կըռունքյ, կըռունքյ, կըռունքյ.
Երկինքյն ի ամպե, պայ պըռնե դուման,
Ջիկ աարեք արրեքյ էն Շահու դիվան,
Խանեք իմ ծոցի դավթար կարթացեք,
Իմ սըռաի դարդեր տուք էլ խասկըցեք։
Լո, կըռունքյ, կըռունքյ, կըռունքյ.
Երկինքն ի ամպե, կուկյա մարմար ծյուն,
Կը խալի, կը կաթի վեր անտուն մարթուն,
էրթամ խառց անեմ՝ ես իմ ասաըծուն,
Մենակ ձիկ՞ ի աըե անաուն, թե՞ աշխար
րիթուն։

Լո, կրունքը, կրունքը, կրունքը.
Արոս ոտն առրեց՝ պանցրիկ սարերաց,
Զար քյամին էկավ պալբեզար արաց,
Թրխսրմոր քըշեց, լորյան-ճետ մնաց,
Էս ինչ քյափրր պան էր սատված,
Որ քյամին հետ էն խավրյերայ արտը։
Լո, կրունքը, կրունքը, կրունքը.
Սրեկ խըմիր եմ, կոօր խումար եմ,
Անկյին մարկյըրիա խե ոսկոն շարեմ,
Առնեմ թել-վ՝ ասեղ վեր դոշիտ կարեմ,
Քյե պես թանգ-վ՝ ապիղ որտեղի՞ց ճարեմ։
Լո, կրունքը, կրունքը, կրունքը.
Սրատիյս ի նման էն պըլլուկ ալներ,
Կոտրեր են կյերիյթեր, չոքեր են սըներ,
Փայվեր ի էրախս, քյոյվեր են պաաեր,
Էրթամ ձիկ թալեմ էն եղման կյետեր։
Լո, կրունքը, կրունքը, կրունքը.
Ճամխեն քյար, քյըռա, տեմն ի վարար
կյեա,
Իմ թանքյ, իմ աղիղ, ձիկ էլ տար քյու խեա,
Խըղրաց մալուլվենք մեջ մութ ծորերաց,
Խըղրաց խնխտըլվենք մեջ խոր ծովերաց։

ԱՐՇԱԿՈՒ–ՍԱԼԱԹԻ ՏԱՂ

Վանա ծովն ի պարգ-իրեսպաղ,
Գյամին վրեն ելքյանն ի պաց,
Պեռներն են չոր, թիյկներ՝ թաց.
Տաղ ասեր Արշակ, տաղ ասեր,
Իւր մուրազին խասե-խաս էր։
Իսքյալու աեմ մինալույ ի,
Արշակու սիրտ սավդալույ ի,
Իրեքյ տարվա նշանլույ ի,
Շորորեր Արշակ, շորորեր,
Դալկին Արշակուն կօրորեր։
Ցըռթոնայ ի. ծով կըեռա,
Գյամին վեր ծովուն կըֆըռա,
Ալամ-աշխար կըմըռմռա.
Մըռմըռեր Սալաթ, մըռմըռեր,
Արշակ վեր ծովուն կըֆռեր։
Ոտաոշխար՝ զանգըկլույ ի,
Սալաթի ծեռ՝ խինալու ի,
Կյլխու մեաակ սրմաղույ ի.
Սև խայներ Սալաթ, սև քյաշեր,
Դալկին Արշակուն կըքըշեր։

ՄԵՌԵԼԻ ՏԱՂ

Դյունյից ստառակ կէրթամ, ինչըխ որ էկա,
Կաանեմ խետ ձիկ՝ չորս գյազ խամ կտավ։
Իմ թաժա տունն ի անաուռ, անէրտիս,
Աստված սիրողներ, կյախ-կյախ իկեքյ տեսէ
Իկեքյ, տիռեքյ իմ թաժա քյաղաքյ,
Նյա սութ-աղորթ կա, նյա սև, նյա բալաքյ։
Իկեքյ, տիսեքյ իմ թաժա հողեն,
Կըփառավորըվեքյ ուր անուշ խոտեն։
Էնաեղ խունքյ տրեք, ծեր պաաարաքյին,
Կըմըխիթարվի ծեր մալուլ խոկյին։

ԱՅԼ ՏԱՂԵՐ

ԼՈՒՍՆԱՅՆ ԱՆՈՒՇ

Կիշեր կծիք կլորե,
Լուսնայ թամամ պուլորե,
Մեջ սև ամպին մոլորե։
Լուսնայն անուշ, խովն անուշ,
Ռեհնչրրի քյուն անուշ։
Սարից սարին վրղվըղաց,
Պյարակ անձրե շըղշըղաց,
Տալար կազալ աաղալըղաց։
Լուսնայն անուշ, խովն անուշ,
Անձըրվու խոտն ի անուշ։
Հերկեն լարեր սալիցին,
Աև ծին ինե նալիցին,
Սիվտակ ճակաա խալիցին։
Լուսնայն անուշ, խովն անուշ,
Աղոթըրվան լոսն անուշ։
Տըռան առտեր խիրկիցին,
Ջատկի ծըվեր նիրկիցին,
Օղշում ալվին ալրկըցին։
Լուսնայն անուշ, խովն անուշ,
Խում կաթի պաղ սերն անուշ։

ԷՐԻՆ–ԷՐԵՐԻՆ

Էրին,-էրերին, էրերին-էրին,
Բոստան եմ տրե վեր տեմի այալըին,
Ասպած շեն պախի էս տարվան տարին,
Ջէլավ մեյ շամամ օրոխկեմ յարին։
Էրին,-էրերին, էրերին-էրին,
Խովիվն ի պիրե ոչխար վեր բերին,
Կըթեմ թուխ մաքյին, լցեմ սուրահին,
Շամա-շաքյրի խետ օրոխկեմ յարին։
Էրին,-էրերին, էրերին-էրին,
Սուրահին կոտրավ, խովիվ մոլըրվավ,
Ջուր շամամ խասավ՝ ասրին պուլորվավ,
Ամպ-զամպ աշնան պես սըռտիկս մալուլ-
վավ։
Էրին,-էրերին, էրերին-էրին,
Ցարս ի խռովե, չիգյարս ի վառե,
Էսը տաս օր ի պարեվս չի առե,
Անուշ-խոա շամամ գյոհան թոռոմե։

Էրին,-Էրերին, Էրերին-Էրին,
Արե՛ յար, արե՛, խըռով մի՛ մնա,
Աշխարն ի անցվոր, ծիկ-քյե չի մնա,
Արե՛, յար, արե՛, խրռով մի՛ մնա։

ԴԻՆՈ ՋԱՆ
(Պարերգ՝ եզդիական լեզվով)

Դինո ջան, Դինո ջան, Դինո, Դինո, Դինո ջան
Դըլ շուշա, դոստիլ մըռջանւ
Դինոն աարան Դարմանկյեղ,
Կալան առին նուկիմ եղ,
Պիրին արին ծվածեղ,
Տըրին խրերաց առճն,
Դինո ջան...
Դըլ շուշա...
Էրեվան չարշի բաղառ,
Դինոն իչրնդան դյաղար,
Դվիթ-կալամ ալընղան,
Օթուըմիշ դարղըմ յաղար[1]։
Դինո ջան...
Դըլ շուշա...
Դըլ փոլադո Դինոմա[2],
Անկալաառ Դինոմա,
Խունարն ի շաա Դինոմա,
Խերն ի աղքյաա Դինոմա։
Դինո ջան...
Դըլ շուշա...
Դինոն մեր մեյ ղանան էր,
Կըզըլ-Դիզցոց սանամեր,
Բայաղեացոց նանան էր,
Փախավ-էկավ Տիրամեր։
Դինո ջան...
Դըլ շուշա...

ՄԱՐՈՆ
(Ակռափու մըգրըըների՝
գնչուների երգած երգերից)

Մարոն սարից կուկյեր՝ շլակին փուշ էր,
Ջյնի չորեր հլին՝ շաքյըրուկ նուշ էր,
Ասի՝ Մարոն առնեմ, Մարոն խաս կուշ էր,
Մարոյի սիրուսեր աաճիկ չավուշ էր։
Յարո, յանարըմ, քյաղըրղ դոնարըմ վալ-
լահ դիդարըմ,
Դունյա դաղարըմ, քյաղըրղ յաղարըմ[3]։

Մարոն սարից կուկյեր՝ շլակին ժախ էր,
Քյառսուն ճող ծամեր՝ ուր իախվեն կախ էր,
Ասի՝ Մարոն առնեմ, Մարոն կաչախ էր,
Մարոյի սիրուսեր կարա-փափախ էր։
Յարո...
Դունյա...
Մարոն սարից կուկյեր, շլակին պուրթ էր,
Մաաի մատրնկի ակ՝ անկյին յաղութ էր,
Ասի՝ Մարոն առնեմ, Մարոն ղարիթ էր,
Մարոյի սիրուտեր անօրեն քյուրթ էր։
Յարո...
Դունյա...

ՋՈՒԼՈՅԻ ՏԱՂ
(Ճղօրի երգերից)

Ջուլոն խակյե կութնի ղպուն,
Շապիկ՝ ղըրաՀի Հալարու,
Բաժն ի Հերկեն, տալար սալըու,
Կըխրխընչա ինչըխ յարու։
Հավար, Ջուլո, մաղաթ, Ջուլո, աարողիա տուն՝
բարրաթ, Ջուլո։
Ջուլոն էլավ, կէրթա բոսաան,
Ջորն ի լցուկ չամիչ-փըսաա,
Ծամերն իաեվ դասաա-դասաա,
Կանչեք լաճեր՝ թո կյան ըսաա։
Հավար, Ջուլո...
Խարար աարեք ուր կոր մերկան,
Թո Ջուլոյին շոա աա իրկան,
Ջաախանա, մնա վեր աան,
Ախպոր կիյթեր իրիսով աան։
Հավար, Ջուլո...
Ժամաան ճաղեր տայ- վ՚էրկրաակ,
Ջուլոն թալեց չուխտըմ մեաակ,
Մեյն էր կարմիր, մեյն էր սիվաակ,
Ուր յարն էր կայնուկ պաաի աակ,
Ճող-ճող աչկերաց կուկյեր աակ։
Հավար, Ջուլո...
Կամար ընքյվեր՝ մեչաեղ սև ծին,
Ջուլոն իանին խեծուցին ծին,
Պիրին մեր տրոնով ընցուցին,
Ուր յարոչ սիրտ մըրկըցուցին։
Հավար, Ջուլո...
Ջուլոն դուլումաթ Հրնշիկ էր,
Աշխար կյան կյիր նման չըկեր,
Ն՛ա կարած ֆաս, ն՛ա լաչիկ էր,
Ն՛ա խաչապաչա, ն՛ա աաճիկ էր։
Հավար, Ջուլո...

[1] Երևան՝ շուկա-բազար, Դինոն մեջը շրջում է, Թանա-քաման-գրիչ ձեռքին նստել է՝ վշտերես գրում է։

[2] Սիրտը պողպատ իմ Դինոյին։

[3] Սիրածս, այրվում եմ, թուղթ (նամակ) կուղարկեմ, սատված վկա, գնալու եմ, աշխարհ շրջելու եմ, թուղթ կգրես։

Խաբար խասավ տեկյերկընկյան,
Սևոքեր ղարղից վեր ու ծընդյան,
Պրաըղտըրվավ կոլրտխ մըռչան,
Հըմեն մըռչան քյանդ պտտըընչտնւ
Հավար, Ջուլո…

ՅԱՐՈՒՀԻ, ՋԱՆ ՄԱՔՐՈՒՀԻ

Քյտրվան էկավ գընգգընգալեն,
Յարուհի, ջան Մաքրուհի,
էկավ-խասավ Խոյտ-գյալին,
Յարուհի…
Իմ ոչկն ինգյավ Թշիտ խալին,
Յարուհի…
Տու ձիկ արիր քյու սավղալին,
Յարուհի…
էլա տսնիս Թափ քյնիլիցի,
Յարուհի…
Լանգեն գարկի էրտիս պացի,
Յարուհի…
Կարմիր խնձոր կըլորիցի,
Յարուհի…
Իմ յար տուն չէր, նստա լացի,
Յարուհի…
էրթամ Հալար՝ հունչ կըպիրեմ,
Յարուհի…
Սրմա-տարաղունչ կըպիրեմ,
Յարուհի…
Ծըռճըրան փոթիկ կըպիրեմ,
Յարուհի…
Քյու խարսնըսի խինեն պիրեմ,
Յարուհի…

ԽԱՆԻՄԱՆ–ՋԱՆԻՄԱՆ
(Գյուղ-պարի տաղերից)

էրեվանա կուկյեր քյտրվան,
Խանիման, ջանիման,
Մեչ քյարվըրնին ռոց դավե՛մ կեր,
Խանիման…
Վեր էն դավին սնդուկըմ կեր,
Խանիման…
Մեչ սընդըկին ախչիկըմ կեր,
Խանիման…
—Խորոտ ախչիկ, անունտ ինՙչ ի,
Խանիման…
—Խորած, դաված դավիտ ինՙչ ի,
Խանիման…
—Քյու կյինն իմնի՝ ես քյե կյնի,
Խանիման…
Խետ քյե լըմի նոան կյինի,
Խանիման…
Թունդ շարխոշնի, քյու ծոց քյնի,
Խանիման…
Իմ սաս տարվան խավաս խանի,
Խանիման…
—Քյա ըենամուս, քյա ըեմուրադ,
Խանիման…
ԵՒղուտ փայվի, շըըլըլաս,
Խանիման…
Իմ մեը լսի, քյե կըխըըի,
Խանիման…
Եղընղյով աչկերա կըփորի,
Խանիման…
Իմ խեր լսի, քյե կըսպանի,
Խանիման…
Արունտ կանի կյինի՝ կըխմի,
Խանիման…
Ոսկոռտ կըտնի թվանք՝ կըթալի,
Խանիման…
Իմ ախպերներ՝ քյու խոր ասն տեղ,
Խանիման…
Կըվարեն, կանեն կալատեղ։
Խանիման…
—Խորոտ ախչիկ, լեղվիդ մեռնեմ,
Խանիման,…
Երկինք խասնես, քյե կըպըռնեմ,
Խանիման…
Աստված շհադ՝ ես քյե կառնեմ։
Խանիման…
—Խերիքյ քյակես սըռի կծիքյ,
Խանիման…
Առ իմ մատնիկ, քյոնն էլ տու ձիկ,
Խանիման…
Խասնենք Թեյրան, խինա պեր ձիկ,
Խանիման…

ՃՂՈՐԻ ՏԱՂ

Ծըղոր թռնեմ, ծեռ ասմ հառքյին,
Մեռնեմ ուրախ պարկենդընքին։
Լեղուս պաց ի, ամոթ չկա,
Կյլխուս կայնուկ յոթ ուղող կա։
Մեկու անուն Ապրախամ ի,
Թաքավրուն սսարաղամ ի։
Մեկու անուն Մարկյարա ի,
Ըսամբոլա ամիրայ ի։
Մեկու անուն Իսքյանդար ի,
Աչմու շահուն խազնադար ի։

Մեկու անուն Կարապետ ի,
Յոթ վարժատուն վարժապետ ի։
Մեկու անուն Մըկըրտիճ ի,
Ծոչ ծովերացն ի գյամըչի։
Մեկու անուն Խամբարձում ի,
Սանյաթքյար ի աորըշումի։
Մեկու անուն չեմ աա ըստեղ,
Կանչեք յոթն էլ թող կյան մեջտեղ,
Որն ի թուխ-աչկ, թուխ-ունք, թուխ-բեղ,
Էն իմ ուզած սըրտիս լայեղ։
Իմ խավնած յար ուրիշ թայր ի,
Քյրիստոսի պես արթար ի,
Սաղ աշխըրքին բարեմբար ի,
Խուլիկ քշող բռենջբար ի։
Ճղոր թալեք, ճըղոր թռնեմ,
Թուխ-աչկ, թուխ-ունք լաճուն մեռնեմ։

ՃՂՈՐԻ ԵՐԳ

Էս օր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, երկըշպաթ օր ի,
Մեռնեմ իմ յարոչ, հ՜ոյ, չիմ կիաե դսր ի։
Էս օր, ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, իրեքըշպաթ ի,
Մեռնեմ իմ յարոչ, հոյ, կաստֆաթ շատ ի։
Էսօր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, չորոշպաթ, պաղս ի,
Մեռնեմ իմ յարոչ, հ՜ոյ, կասեն՝ չխաս ի։
Էսօր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, կասեն՝ խինգյըշպաթ,
Մեռնեմ իմ յարոչ, հ՜ոյ, սոաիկն ի լիքյ դարդ։
Էսօր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, կասեն՝ ուրպաթ ի,
Մեռնեմ իմ յարոչ, հ՜ոյ, կարիր-կուրբաթ ի։
Էսօր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ,ուախս շապաթ ի,
Մեռնեմ իմ յարոչ, հո՛յ, շաքրե-շարբաթ ի։
Էսօր ի՞նչ օր ի, հ՜ոյ, հ՜ոյ, կասեն՝ կիրակի,
Մեռնեմ իմ յարոչ, կեծել-կրակ ի։
Կեծել-էրակ ի, հ՜ոյ, հ՜ոյ, մենակ ձիյ խամար,
Արար-աշխըրքյին, հ՜ոյ, կյառնուկ ի խոնար։
Ընթեղ ի աառցե, սիրարս կրվառի,
Աստված սիրողներ, խասեք խավարի։

ԴԸԼԵ ՅԱՄԱՆ

(Անսպառ դլե յամաններից մի քանի
քառյակ. դլե յամանները ձգվում էին
երգողի գիտցածի չափով)

Դըլե յաման, յաման, յաման,
Դըլե յաման, խանսո յաման, ջանսո յաման։
Դըլե յաման, աընից էլար, կէրթաս իկյին,
» » կըշորորաս, ինչըխ մաքյին,
» » աստված առնի քյու խոր խոկյին,
» » թո քյե տեր ձիկ, ասեր քյու կյին։
Դըլե յաման...
Դըլե...
Դըլե յաման, տընից էլար, կայնիր ես տուռ,
» » մեչկըտ ի պարակ, խանչըլի պուռ,
» » գոշա ի ուռուկ, ծըծվերըտ նուռ,
» » ձիկ արիր ես սավդալի ծուռ։
Դըլե յաման...
Դըլե...
Դըլե յաման, տրոնեն էլար, կայնար տանիս,
» » բաժըա սրոսըփում, կյարնան կամիշ,
» » ես քյու սիրուն՝ սավդալամիշ,
» » արե անենք՝ ալիշ-վերիշ։
Դըլե յաման...
Դըլե...
Դըլե յաման, սըոսուռ ցորեն, չափն ի սիլա,
» » շապիյա կարմիր, աջմու շիլա,
» » դոշըա սիվտակ՝ պամըկի քյուլա,
» » աչկըս տիսավ, սիրաըս կուլա։
Դըլե յաման...
Դըլե...
Դըլե յաման, տնից էլար՝ մտար բաղչեն,
» » ըոհան քյաղիր, լըցիր բողչեն,
» » կոտիկըա քյակիբ, թողիր մաղչեն,
» » աստված կըտրեր քյու պերնի «չեն»։
Դըլե յաման...
Դըլե...
Դըլե յաման, ես անոթի, աու թաժա խաց,
» » թայ մեյ կիշեր աուըըա թող պաց,
» » ես մտնեմ ներս, տու սութ քյուն կաց,
» » մեկ մենք իմնանք, մեկ էլ՝ աստված։
Դըլե յաման...
Դըլե...

ՋԻՆԱՐ—ՋԻՆԱՐ

(Անսկիզբ ու անվերջանալի «Ջինար—
ջինարներից» մի նմուշ)

Լո, լո, ջինար, ջինար, ջինար, ալոկեց-սրոկեց,
Իմ չինար յար, ջինար, ջինար։
Մեք տուն, ծեր տուն՝ աիմաց-աիմաց,
Խերիքյ անես՝ աչկով իմաց,
Միսըս խալավ, ուսկոռս մնաց,
Իմ իրիսի հայեն կնաց։
Լո, լո, ջինար...
Ջուռ քյավախկով, քոլոզով յար,
Խերիքյ նսաես Սիփանա սար,
Քյոլոզա քյեթրի, փոշին կապի,
Լուսնայ կիշեր ձիկ առ՝ փախի։
Լո, լո, ջինար...
Ես կըմեռնեմ՝ սաբաբ տու ես,
Իմ կյերեզման՝ քյու տուռ շինես,

10—386

Էրթաս տխպուր, պաղ ճուր պիրես,
Օղորմի տաս, նոր ընցրնես,
Ջրղնե կայրի՝ յար շըպռնես։
Լո, լո, ջինար...
Ջիմնի ծիուն ըխով պիտի,
Տու հայլոր ես՝ քյե խավ պիաի,
Ես ջըհնլ եմ, ձիկ յար պիտի։
Լո, լո, ջինար...
Կամար կարմունջ վեր Արաղին,
Ջիկ տես էկար մեշ Լրաղին,
Ես չխասա իմ մուրազին։
Լո, լո, ջինար...
Սիվտակ շավրեն, կանտշ փիլաքյ,
Դուշմրնի առւն քյակի ֆտլայ,
Ջրկատարված սրտիս դիլաքյ։
Լո, լո, ջինար...
Թուխ կունղուռեն, սածաթ պիպեռ,
Տյու՝ թե՛ տրրկեց, թե սիրուսեր,
Ջիկ մի՛ թողնե անկյետի ծեռ։
Լո, լո, շինար...
Հրմեն հերին մեյ-մեյ տեր կա,
Մենակ ես եմ անաեր, ձիկ տեր չկա,
Աշկրս ի չոլցե, առցունք չի կյա։
Լո, լո, շինար...
Իրես կյարի, ապ՝ տարեկսն,
Խաբար տարեք իմ կոր մերկան,
Թո իմ նշանլուն սա իրկան,
Որ չմնա վեր ավեր տանի։
Լո, լո, ջինար...

ԿԱՏԱԿԵՐԳԵՐ

Երգ՝ նորածինների մայրերի մասին

Լաճու մոր ախռավ պիրեք,
Շամա-շաքրով, կովու եղով,
Լաճ ի պիրե, լաճ։
Աղչկա մոր՝ սխաորաճուր,
Խետն էլ կյարե խացի փշուր,
Քած ի պիրե, քած։
Լաճու մոր աարեք իկյին,
Ըոհան քյաղի, վարթ խոտոաա,
Լաճ ի պիրե, լաճ։
Աղչկա մոր աարեք բաղշեն,
Աոխ քյախրնքի, քիթ կծվծա,
Քած ի պիրե, քած։
Սրծում լցրեք էքյու մածնով
Տվեք լաճու մոր՝ թո ղանի,
Լաճ ի պիրե, լաճ։
Պաղ աիկ լցրեք կովու մածնով,
Տվեք աղչկա մոր՝ ղանի,
Քած ի պիրե, քած։
Լաճու մոր աարեք ըտղաո,
Կուժնի պըպուն, դալմա առեք,
Լաճ ի պիրե, լաճ։
Աղչկա մոր իրնն էլ խանիք,
Փսսա քյաշեք շան,
Քած ի պիրե, քած։
Լաճու մոր՝ խեծուցեք ծին,
Թեից պրոնեք, տարեք ըխտեր,
Լաճի ի պիրե, լաճ։
Աղչկա մոր խեծուցեք էշ,
Պոչ տվեք ծեռ, կյեղ կան տվեք,
Քած ի պիրե, քած։

ԱՂՎԸՍՈՒ ՏԱՂ

(Երգվում էր գյոնդապարերի ժամանակ՝ «Խանիման-ջանիմանի»-ի եղանակով)

Աղվեսն էկավ շեկլիկ տյարեն,
Էկավ, իճավ մեր ղուրարեն,
Ապուր կերավ, թափավ վրեն։
Ասինք՝ աղվես, աղով աղվես։
Աղվեսն էկավ արայ-թարակ,
Պոչն էր մեյ գյաղ, պինչն էր պարակ,
Էկավ-մտավ Ծոշանց մարաք։
Ցել-ֆանդի տեր կյաղտար աղվես։
Աղվես ֆրռաց պուլոր կյեղին,
Աչկն էր կարմիր, քյուրքն էր աեղին,
Վով որ ախաավ՝ պատռավ լեղին։
Ասինք՝ ասլանբաշի աղվես։
Աղվեսն ասաց՝ էսր կյեղի
Շրներ ղարթուն, փայտուն նեղ ի,
Կարմիր հայլոր փորիս աեղ ի։
Ասինք՝ աղվես, խոկյով ղաղվես։
Աղվես՝ հայլոր բամփեց թառից,
Ջորս ոտ թե կյեր, չորսն էլ առեց,
Կյեղ-կյեղովի խոկյին վառեց։
Ասինք, չաթան, քյուրթ ըտյ աղվես։
Աղվես փախավ թեթև-թեթև,
Շներ հոպով վաղան իաե,
Կնաց-մաավ քարի իաև։
Ասինք՝ կիշըրվան չարք աղվես։
Փախավ աղվես՝ կյեղի ղուշման,
Ավչի, թե շուն՝ տառաակ, փոշման
Էկան նսաան ճոշանց շիման,
Ասինք՝ խալալ ի քյե, աղվես։

ԹՅՈՒԹՅՈՒՆԻ ՏԱՂ

Թյությունի ճամխըներ փակ ի,
Աստված գյոմրաքշու աուն քյակի։
Ջըհել լաճեր՝ տըրրուկ մոո ֆաս,
Որտեղ նըստեն՝ թյությունի րաս։
Օրն ի շապաթ, էսօր րիթուն,
Չկա թյություն մեչ իմ կութուն։
Խարիր հիսուն տան ըռես եմ,
Թյություն չկա, րենամուս եմ։
—Ախ, իմ թյություն, վախ, իմ թյություն,
Կընմաներ գյոզի կըթուն։
—Իմ թյություն՝ ծեթ-ծեթ փրթուկ էր,
Մեչ ոսկե կութուն լցուկ էր։
—Իմ թյություն կոթից իստակ էր,
Հմեն թաֆ մեյ կյապուտակ էր։
Թյությունիս կյոն՝ աեղին եմիշ,
Խոկյիս կաներ ֆառախլամիշ։
Իմ թյություն՝ ամբրավ էր, նուշ էր,
Խրնկան խոտից էլ անուշ էր։
Չքարես էր՝ պաղի լուլա,
Մուխն էր սիվտակ, պամրկի քյոլա։
Պանող ճաղաց, փոխով կյութան,
Մեյ չքարի կուտամ բյութան։

ԹԱՓՎԱԾ ԹԹՎԻ ԿՑՈՎՔ

Վայ, թրթու, վայ-վայ թըթու,
Մեկ ըս աարի մե փոթու։
Թթվի պուտուկ իաե սան,
Մըկներ ինե աաս-կսան,
Տերեր վրեն վըսվըսան։
Վայ, թըթու, թափուկ թըթու,
Մեկ ըս տարի մե փոթու։
Խին-խոո պուտուկ ջահանա,
Թթուն փրոթուկ լահանա,
Պուտուկ շըռճող աախանա։
Վայ, թրթու, լխկուկ թըթու,
Մեկ ըս աարի մե փոթու։
Նավսաա ախչիյն ինչ անի,
Ականջ իըլներ սաաանին,
Որ չրկայներ ուր պանին։
Վայ, թըթու, խոտուկ թըթու,
Մեկ ըս աարի մե փոթու։
Թրթուն թափավ վեր ական,
Տանարկիյթեր մոա էկան,
Կարմիր խանին՝ սե խակյան։
Դոշ կրթփեն՝ վայ, թըթու,
Մեկ րս աարի մե փոթու։

ԼՎԻ ՏԱՂ

Լվերն էկան թաշրի աըկեն,
Ջանդըկներ ժար, ոտքեր հերկեն,
Ծոչ-պսարկին կրծայծըկեն։
Լվեր, լվեր, վույ-վավելեր,
Խարսին չասինք աախտն ավիլեր։
Լվերն էկան արայ-թարա,
Ծժերաց ջան տրին յարա,
Չիթ ղարկիցին գյո անփարա։
Լվեր, լվեր, վույ-վավելըր,
Խարսին չասինք աախան ավիլեր։
Լվերն էկան կյեղը-կյեղին,
Էկան-շարվան փեսի բեղին,
Ծըկրոցուցին խարսի լեղին։
Լվեր, լվեր, վույ-վավելեր,
Խարսին չասինք աախան ավիլեր։
Լվերն էկան ղիվանխանից,
Փորեր հըլին սիվտակ անիծ,
Մարկյրիա շարին խարսի ծամից։
Լվեր, լվեր, վույ-վավելեր,
Խարսին չասինք աախտն ավիլեր։

ԿՑԵՇ ԿՆԻԿ
(Երգվում էր գյոճղապարերի ժամանակ՝
«Խանիման-չանիման»-ի եղանակով)

Կյեշ կնիկ, քյու խոր աուն ավիրի,
Իրկանա տրիր ավեր-վերի։
Թե փրոթընի թոնիր վառես,
Կեղի կես մխով կըպոնես։
Կյեշ կնիկ, քյու խոր տուն տվիրի,
Իրկանտ արիր ավեր-վերի։
Թե փըոթընի աախա ավիլես,
Պըմպլով պաաեր կըմոլես։
Կյեշ կնիկ, քյու խոր տոմ ավիրի,
Իրկանա արիր ավեր-վըրի։
Թե փըոթընի մեյ պաս իփես,
Իշու պոչ պանչար կըփրթես։
Կյեշ կնիկ, քյու խոր տուն ավիրի,
Իրկանա արիր ավեր-վարի։
Թե փրոթընի ճիժ խաղցուցես,
Կըոկըներաց կըփտղցուցես։
Կյեշ կնիկ, քյու խոր տոմ ավիրի,
Իրկանա արիր ավեր-վերի։
Թե փրոթրնի ախպուը էրթաս,
Ծուր վեր կյեղին կտաոնա պաղս։
Կյեշ կնիկ, քյու խոր տոմ ավիրի,
Իրկանա արիր ավեր-վերի։

ՍՈԽԱԹՆԻ ՏԱՂ

Սոխաթան լցին պուտուկ,
Որթերն ինձ քյանձ տուտուկ,
Որն խլվլուն, որըն խատուկ։
Սոխաթան չէր, պինթան էր,
Ասպած խյուկյոց չխաններ։
Սոխաթան լցին մսուր,
Որթերն ինձ քյանձ մասուր,
Վըրեն կուվտն խարս-կիսուր։
Սոխաթան չէր, պինթան էր
Ասպած խյուկյոց չխաններ։
Սոխաթան լցին քյասեն,
Վրեն կուվան խարս-փեսեն,
Աշխար պոնեց ուր կըսեն։
Սոխաթան չէր, պինթան էր,
Ասպած խյուկյոց չխաններ։
Սոխաթան թյափավ խսրին,
Բիթուն կըաելներ հավըրին,
Կսմաթ էլավ կոր կյղրին։
Սոխաթան չէր, պինթան էր,
Ասպած խյուկյոց չխաններ։

ՎԱՆՔԻ ՊՃԻ ՏԱՂ

Առատըվան լուսու փաշեն,
Տանաըկին կայնե դյոշեն,
Վարթապետ կախվե դոշեն։
Առաաըվան կյախն ի իկե,
Վարթապեա շլուտ պառկե,
Տանաըկնոշ կայիմ կըրկե։
Առատըվան ղանգ կըղնդա,
Վարթապեա կըաընդյաընդա,
Տանաըկին կըթընդյթընդյա։
Առատըվան ասաղ էրեվաց,
Թաժա պիճ կայիմ ճըվաց.
Վարթապեա ծեռքեր լվաց։

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐԻՑ

ԴԱՐԻ, ԴԱՐ-ԴԱՐԻ

(Սա ամենատարածվածն էր, ընդ որում՝ դարի, դար-դարին անսահմանափակ)

Դարի, դար-դար-դար, դար-դար-դար, բալա,
Դար-դար ասեմ, իմ թանդյ ծաքյուն՝ թո չիլա։
Դար-դար, կար-դար ասեմ՝ թո քյուն աանի,
Դուշման թալեմ՝ թո շուն աանի, դար-դար...
Դարի, դար-դար, դար-դար[1]*,*
Քյու ուրուրոց կյոզի փեա ի,
Անուշ-անուշ կըճըռճռա,
Ես քյե մեռնեմ, տյու մի՛ ճըռա,
Մի՛ ճերիրա։ Քյնի, քյնի, մուշ-մուշ արա։
Սերիկ մեռնի ուր թանդյ ծաքյուն,
Մերիկ մեռնի քյու մըշալուն, մըշմըշալուն,
Մերիկ տանի քյու չարկադեն,
Քյու արկի խոզ խարաաուկ ի,
Քյու թաթկըներ կապկպուկ ի,
Դար-դար արա, թառլան բալա,
Դար-դար արա, մերիկ մեռնի
Քյու մըշալուն, մըշմըշալուն։
Դար-դար, դար-դար, դարդըտ աանեմ,
Դարի, դար-դար, դարի, դար-կար...

[1] *Կրկնվում է յուրաքանչյուր տողի սկզբին։*

Ստյրերը, ուրախ տրամադրության մեջ, խոր քնից արթնացած մանկանը օրորոցից դուրս բերելիս, կատակում էին՝

Քընեբ ես քյռաընեբ ես, մարեն քյե մեռնի,
Վախենամ՝ տայտ ք...ես, կյրող քյն տանի։

ՔՆԻՑ ՆՈՐ ԱՐԹՆԱՑԱԾ ՄԱՆԿԱՆԸ ՊԱՐԵՑՆԵԼԻՍ

Սիրիկ մեռնի քյե մկտ,
Քյանի սարեը արև կա,
Քյանի կյել-կյաղան չկա։
Մերիկ մեռնի քյե՝ որ կաս,
Նյա խիվընդնաս, նյա աըքյաս,
Հըխտատեղրանք աընդաընդյաս,
Խարսնըսըներ ղընդղընդաս։
Մերիկ մեռնի քյու բոյին,
Աստծու օխնած քյու սոյին,
Աշխար խնդա քյու թոյին։

ԱՍՏՂԻԿԱՆ ՃԱՅՏԻ ԿԻՐ

Բախսի հարափոփոխության կարճ վիպասանություն էր, որ տխուր եղանակով երգում էին մանկանն օրորելիս. բովանդակությունը հետևյալն էր՝

Հարուստ ապարանքի աիրոջ դուստր Աստղիկին գնել էր շրջիկ վաճառական-քարավանատեր, այն էլ այնպիսի թանկ գնով, որ սնանկացել էր։

Գեղեցիկ ու անփորձ աղջկան՝ թողնելով իր եղբոր կանանց խնամքին, վաճառականը դարձյալ մեկնում է պանդխտության, որ ևևում է յոթ տարի։

Յոթ տարի այդ կանայք խանդելով Աստղիկին, նրա գեղեցկության համար, տանջում են, չարչարում, հետո էլ վաճառում մի շրջիկ մանրավաճառի։

Մանրավաճառի տանը Աստղիկը աղախնություն է անում։ Պատահականորեն այդ տանն է իջևանում Աստղիկի հարստացած ամուսինը։ Աստղիկը ճանաչում է ամուսնուն, բայց միանգամից չի հայտնում իր ով լինելը, այլ մանրավաճառի փոքրիկին օրորելով՝ բացահայտում է իր խղճությունը, կանխորեն մի բուռ ավազ ցանելով ամուսնու անկողնու մեջ, որ վերջինս չկարողանա քնել։

Աստղիկը հասնում է իր նպատակին։ Ավազի վրա պառկած մարդը սկզբից մինչև վերջ լսում է միջնորմի մյուս կողմում երգվող օրորը։

Դար-դար, դար-դար, դար-դար, բալա,
Օրոր ասեմ իմ ուրուրոցին,
Դար-դար, դար-դար, դար-դար[1],
Խալխի խալալ կյրկանոցին։
Տյու քնուկ ես, մենք ենք զարթուն,
Բաղըրդյանն ի իճե ծեր տուն,
Տայն ի ավազ։ էն չըկիտի,
Թե ես վ՛ով եմ, ուսա եմ իկե։
Ես Աստղիկն եմ՝ էն շեն անեն,
Ջինարի ծառ՝ աըռան վըրեն,
Պաղ-պաղ ախպուր՝ խման տըկեն։
Բաղըրդյան էկավ, աչկն ինդյավ ձիկ,
Մաղըմ ջավահիր, մաղըմ ոսկի
Իտուր՝ ձիկ կյնեց, ուր առն պիրեց։
Իմ կյին թանդ էր, բաղըրդյան կոտր ինդյավ։
Ձիկ տվեց ախպորկիյթերաց ամանաթ,
Ինք կընաց կարիրութեն։
Յոթ տարի շիրիկներաց մեջ մնացի տառ-կյիրութեն,
Ջարչին էկավ՝ իմ տեկյերկիյթեր խաըըրներ մեկ արիցին,
Մաղըմ սոխով, մաղըմ սխաորով՝ ձիկ ծախիցին։
Ես ախչիկ ի ղոնդին խեըկան,
Իմ իրիկն էր ծոչ բաղըրդյան,
Մըկա բեսլամա եմ չարչու կյնգան։
Ասպած կամենար՝ մեյմ՝ ականջ աներ,
Իմ կըսեն մեջ ուր սըռտին դավթար աներ,
Որտեղ որ նստեր, իմ կըսեն աներ,
Բաղըրդյան լսեր, կյեր՝ չարչու տընեն Աստըղկեն տաներ։

Առավոտյան Աստղիկի ամուսինը մի բուռ ոսկի է ընծայում չարչուն, այն բանի համար, որ Աստղիկի հետ եղբայրաբար է վարվել։

Տուն են վերադառնում ամուսինները. սեերես տեղորկանայք արժանանում են նրանց արհամարհանքին։

[1] *Կրկնվում է յուրաքանչյուր տողի սկզբում։*

ԿԱՋՈ-ՆԱՋՈ

(Ողբերգական սիրո մորմոքներից: Երգվում էր մանկանն օրօրելիս, տխուր եղանակով):

Աղքատ, գեղեցիկ երիտասարդ Կաղոն սիրահարվել է հարուստի աղջիկ Նաղոյին։ Նաղոն ու Կաղոն երդում են արել անպայման ամուսնանալ։ Նաղոյի ծնողները դեմ են իրենց աղջկա ընտրությանը։ Նրանք աղջկա համար արդեն փեսացու են ճարել ու սկսել են բռնություն գործադրել, փակել են Նաղոյին մութ մառանում։ Կաղոն, ամեն գիշեր, գաղտագողի գնում է Նաղոյի երդիկի վրա ու տեղեկանում նրա վիճակին։ Վերջին անգամ Նաղոն ծանր անքոցով նկարագրում է իր դրությունը.

Ամա՛ն, ամա՛ն, վո՛ւյ-վավելեր, քյա լաճ անավեր, քյա լաճ պնավեր,
էսօր քյու ապով ձիկ էնկանդար են թըփե, քյա լաճ տնավեր[2],
Ջամի ախտըկով կոարածըս են կապե,
Հալարու պամըըկով արունս են ժողվե,
Շամա-չաքյրով յարեքս են քյավե,
Ամա՛ն, ամա՛ն, վո՛ւյ-վավելեր, քյա լաճ անավեր, քյա լաճ պնավեր,
էնկանդար եմ լացե, լոըըս ի խավարե,
Մերըս էլ ի քյաֆըր, չի կյա իմ հավաըին,
Վերևն ասպած կա, ներքե այու ես, այու խո՚աըե,
Ամա՛ն, ամա՛ն...

Աղքատ Կաղոն ոչ մի միջոց չունի Նաղոյին օգնելու, բացի Նաղոյին իրեն աված երդումից ազատելու՝ փարվելով նրա այրիանալու սին հույսին, որից հետո ամուսնանա իր հետ։ (Այրիների կամքի վրա բռնացող չի լինում)։

Ամա՛ն, ամա՛ն...[3]
Ոսկի կաֆաս, տյու մեջ կյերի բլբուլ՝ Նաղո,
Տըըսանց կալմիր, ներսանց սեսիրտ կակաչ՝ Նաղո,
Գյո ըսաա եմ, ծեռիկս ի կառճ, խորոտ Նաղո,
Տյու էրեժնակ, քյու քյոքն ի աառ, անուշ Նաղո,
Ծերոնք ղանդին, ես մեյ նոքյար, բեուժ, Նաղո,
Ծերոնք տանակ, մենք մատղի կյառ, արթար Նաղո,
Դաստուր կուտամ, եմինըտ ե՛ա առ, ե՛ա առ Նաղո,

[2] *Քյա լաճ տնավերը կրկնվում է յուրաքանչյուր տողի վերջում։*

[3] *Աման, աման-ը կրկնվում է յուրաքանչյուր տողի սկզբում։*

Կընա ինոնց ասածին տա, անճար Նազո,
Ռուփեերցի՝ արև ձիկ տա, իմ յար Նազո,

Որ չըմնամ էս չորցակ ծառ, դե եմին տուր,
Նազո, Նազո,
Ամա՜ն, ամա՜ն, ամա՜ն, աղչի...

ՊԱՐԵՐՆ ՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Արճակեցիները, որ բազմամարդ քաղաքներ պանդխտելիս գյուղ էին ներմուծել անսային զարծածության շատ ձևեր, միշտ էլ հավատարիմ էին մնացել բնիկ երաժշտությանը, ճանաչել էին ավանդական երեք երաժշտական գործիք՝ հովվական երկայն փող, դուդուկ և նաղարա-զուռնա (թմբուկն ու իր անբաժան զուռնան)։ Առաջին երկուսով ինքնուս երաժիշտները, շրջապատված մի քանի մարդկանցով կամ մենակ, ժողովրդական մեղեդիներ էին փչում, իսկ երրորդով արդեն հասուկ վարժ վարպետներ էին նվագում մեծ տոներին։

Նույն պահպանողականությունն էր իշխում նաև պարերում։ Թեև երկու սեռի երիտասարդները անմիջապես յուրացնում էին Վանում հնարված նորաձույն պարերը, լինեն դա «ֆոռկա»՝ կանացի կենտապար, «Ջերագի»՝ կանացի զույգապար (ընդորում, մեկը տղամարդ էր ներկայացնում), թե «Իգին Հայեր» երիտասարդական աշխույժ գյոնդապար, սակայն եթե հարսանիք էր լինում կամ մի այլ ժողովրդական հավաք, ապա իշխում էր կլոր գյոնդապարը, լինեն դա ծանր, դանդաղաշարժ՝ «Մանկըր գյոնդ», լինեն դա փեսա պարացնելու՝ «ալաչա գյոնդ» (խառը գյոնդ)։ Ի դեպ, վերջինում հրավիրված փեսան մտնում էր գյոնդի մեջ։

Բոլոր դեպքերում գյոնդը ղեկավարում էր գյոնդբաշին, իսկ վերջինը կոչվում էր «պոչ պըռնող»։ Գյոնդբաշու ձեռքին թաշկինակ էր լինում։ Եվ ծանր գյոնդում, և խառը գյոնդում լինում էին տղամարդիկ ու կանայք։ Սակայն ալաչա (խառը) գյոնդում կանայք ու տղամարդիկ անպայման մեջ ընդ մեջ էին։ Վերջինս ծանր գյոնդից ավելի թեթև էր, բայց ոչ աշխույժ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՐԱԽ ԱՍՈՒՅԹՆԵՐ

Գարնան սկզբներին առաջին անգամ «ղաարիկ» կոչված միջատը տեսնելիս.

Ջաարիկ, ղաարիկ, նավակաարիկ,
Արև նստի մեր տան մաարիկ,
Իմ խնը քյե կանի ուր լաճիկ,
Իմ մեր քյե կանի ուր խարսիկ,
Ես քյե կուտամ իմ խաս չավրեն,
Արե, խեր պե մեր տան վրեն։

*

Մեծ պասի առթիվ երդիկից կախված ակլատիղին ուղղված խոսք (երգով).

Ակլաաիղ, չրվանը վիզ,
Էկավ մե խուր՝ կախվավ էրտիս։

*

Խխունջին տեսնելիս, համոզիչ տոնով և համառորեն երգում էին՝

Մակատուղ,
Ականջ խան այուս,
Քյե ոսկի կյինդ եմ պիրե։

Ժամերով սպասում էին, մինչև խխունջը գլուխը պատյանից դուրս էր հանում:

*

Մրջյունին հայհոյելով՝
Մըռճեմ, մըռճեմ,
Քյու մեր աըռճեմ։
Եղին դուշման,
Կյեղին փուշման։

*

Պուա-պուա նախշերով թևեր ունեցող կլորավուն միջատը՝ ղաարիկը, մեզ մոտ տնվանվում էր մայրամ խաթուն և համարվում էր բարի լրաբեր։ Երեխաները այդ միջատը դնում էին իրենց ձեռքի վրա ու անշարժանում մինչև նա թեածում էր ու թռչում։

Մայրամ-խաթուն, մայրամ-խաթուն,
Իճի մեր տուն, իճի մեր աուն,
Ես քյե կուտամ գյուղի եթունի—Երգում էին աղերսախառն։

*

Երեկոյան, եկեղեցու զանգերի ձայնին իրենց ձայնը համարեցրած՝ մեղմորեն երգում էին՝

Իկեքյը ժամ, իկեքյը ժամ,
Որ չեք իկյա, տուա կըփակեմ։

Երգվում էր նաև մի այլ ձևի՝

Կըտեւըմ թան, վեր կյակըթան,
Պյանթող, պյանթող, սարվածք, կյութան,
Խեր, խորոխպեր իկեքըը ժամ,
Որ ծեր աչկեր չըխըրժվըժան։

*

Մանկական երգեր կային՝ ուղղված մարդկային բնակավայրերին մոտիկ բնակվող թռչուններին։ Երբ առաջին անգամ արագիլը հայտնվում էր իր հին բնին մոտիկ, մեծահասակները ուշադրությամբ հետևում էին, թե արդյոք ինչ նոր բան է բերում հին բույնը վերանորոգելու։ Եթե կտուցում կտավի կտոր էր, ուրեմն մահ էր գուշակում։ Իսկ մանուկները երգում էին՝

Հերկնակաույ խորոխպեր,
Կարիր դյալգան խարրապեր,
Կտցովտ կտավ չպիրես,
Ծժերաց ցավ չպիրես,
Որ մեր ամրրոց շավիրեն,
Քյու ճտերն էլ գյո վրեն։

(Պետք է հիշատակել, որ աթարից կոնաձև շարված ամրրոց կոչված վառելիքի շինվածքի ղըլխըների վրա էլ էին արագիլները բույն դնում)։

Ոմանք արագիլներին էին գիմում նաև այսպես՝

Խամ խըռխավոր Հըռաքյել,
Էկավ կոտ-կոտ առակյել,
Կտցի ճողերն ի թալ ցած,
Պարե ի տուր ճըժերաց.
—Լիյունի, ֆիշնի, կո՛ա-կոա՛-կո՛տ,
Իմ ճեա կյեշ ի, տյուք խորրա։
—Հերկեն կտուց, ճեղպտց առտ,
Խալալ ըլնի քյե օց-կյոռա։

*

Ագռավը համարվում էր լրաբեր, եթե գռան վրա երեք անգամ կըռռում էր. ուստի, եթե ագռավը նստած էր լինում հանգիստ, կանչում էին՝

—Կռիկ, արե վեր մեր տըռան,
Իրեքյ պերան կըռ-կըռ-կրռա,
Պարի խարար պե վեր մեր տան,
Քյե մեյ նուկի չամիչ կուտամ։

Ագռավը չէր ղլանում փախցնել նաև հավի ձվից նոր դուրս եկած ճուտիկներ, ինչպես և կտուրի եզրին գրված մաղերով կիսաչոր չորթան։ Ուստի, մեղք չէր համարվում ագռավների եռեից քար շպրտելը։ Հենց այս անսանկյունով էլ ագռավների մասին երգվում էր՝

Ջորթընի կյող կեշ կըռիկ,
Ք... կըաըցող չոր ըռիկ,
Ծըաերաց մոտ կըռկըռաց,
Ջորթընի մոա ֆըռֆըռաց,
Բարոն պըռնեց պոչ պոլտեց,
Ծոչոն պըռնեց ճիտ ճոլտեց։

*

Կաչաղակը նույնպես համարվում էր լրաբեր. շատերի մոտ էլ ստախոս էր համարվում, իսկ քանի որ չէր կբաղվում ճուա ու չորթան հափշտակելով, ուստի մանուկները մտածել էին նրան կաշառել՝

Անձեղ, անձեղ, մե մի՛ խափե,
Իմ ղարիր խորից խարար պե,
Ես քեյ ոսկի ճտնոց կուտամ,
Ջհեղ կանեմ, կուտամ իրկան։

*

Երկու սեռի երեխաների մեջ էլ շատ էր ամրտցած հոպոպի հեա զրույցի բռնվելու պարանքը։ Հենց որ ծառաստաններից լսվում էր ճյուղերի մեջ թաքնված հոպոպի երկվանկանի կանչը, մանուկները, որ համոզված էին, թե պուպում ինքն իր անունն է կանչում, իրենք ևս սկսում էին կանչել՝ պու-պու։ Ծառերի միջից նորից էր լսվում հոպոպի կանչը՝ պու-պու։ Նրանց հասկացողությամբ, դա ապացույց էր, որ թռչնիկը պատասխանում է, ուսաի իրենք ևս պաաասխանում էին.

—Պու-պու, ք... կե։
—Տյու կե, այու կե։ (Նորից էին համոզված, որ հոպոպը պատասխանեց)։
—Էսօր քյանի՞ խաց ես կիրե։
—Ութ խաց, ութ խաց։
—Սութ ի։
—Սութ չի, ութ խաց...,— և այսպես շարունակվում էր զրույցը, մինչև թռչնակը թռչում—գընում էր և մի այլ տեղից կրկնում իր կանչը։

*

Բոլոր տարիքի գյուղացոց մեջ տարածված էր, որ ուղտին ղայրացնելիս, նա թքում է գայրացնողի երեսին։ Համոզում կար նաև, որ ուղտի թքի մեջ կա ինչ-որ անբուժելի վերքի հարուցիչ։ Այսպես թե այնպես, ոչ մի մեծահասակ չէր փորձում ուղտին ղայրացնել, այնինչ մանուկները թաքնվում էին անկյուններում ու ճչում՝

Ըղաիկ, ըղաիկ,
Քյաման կըզաիկ,

Մկան ականջ կա,
Քյն չկա։

Մանուկները, որ համոզված էին, թե ուղտը հասկանում է այդ բառերը և խիստ զայրանում է. տպարդյուն սպասում էին ուղտի զայրույթին։ Սակայն ուղտը անցնում էր դանդաղ ու անտարբեր։

*

Արճակի երեխաները շատ էին սիրում զայրացնել նաև քաղաքացիների երեխաներին, որոնք, այսպես թե այնպես, ժամանակավոր ընկնում էին գյուղ։ Եթե հետները կռված էին լինում, ապա ընկերովի երգում էին՝

—Քյաղքըցի,
Քայ կըրըցի,
Էշ խեծուցի,
Կեան ընցուցի,
Էշ վռաց՝
Քյաղքըցին ասաց՝
—Փառք քյե, աստված։
Էշ տըռաեց՝
Քյաղքըցին
Վախեցավ,
Պեռ-բըրխանին
Թողեց-փախավ։

Քաղաքացի մանուկները ևս իրենց ասելիքն ունեին։ Բավական էր, որ նրանք հանդիպեին քաղաքի փողոցում որևէ գյուղացու, ապա անմիջապես ձախ ձեռքի բթամատով ու ցուցամատով իրենց քիթն էին բռնում, աջ ձեռքով իրենց ծնոտը ու կանչում՝

Շինական,
Շակալ պերան,
Շնթըռե վեր ական։

*

Տատիկին ուղղված կատակերգ՝
Անձրև եկավ լուլա-լուլա,
Թոփիմ շիլա, մեյ պյուլուլա,
Տերտեր, ժամկոչ, նաշն էլ սիլա,
Մամիկ տարան, աշխար կուլա։

*

Երգ-կատակ՝ տանտիկինների հասցեին՝
Տանտըկին,
Տակրի տըկին,
Տակրի չլուա
Ջոքյե բըկին։

*

Փոքրիկ տղաներին ուղղված կատակ-պատվեր՝

Տղա, աղա,
Ոսկի չղա,
Առ քյու ճտներ՝
Կնա խաղա
Ջուր լիրկուն,
Նոր արե տուն։

ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ահմադ չտվեց, Մայմադ չվերուց։

*

Աղքյատ աղքյըտին խառցուց՝ «Մեչքիտ պեռ վի՞րն ի», ասաց՝ «Նյա իմն ի, նյա քյոն»։

*

Աղքյատ ասաց՝ «Իմ ծավը մուկ կիրեր ի» ավտացող չէլավ. պանդյին ասաց՝ «Իմ սարվածք մուկ տարել ի» չավատացող չէլավ։

*

Աղքյտի վրեն թաժա խալավ տեսնող չի ասե «Ընախավոր ըլնի», կխառցուցի՝ «որտեղից ի»։

*

Ամանաթ՝ չեն անե կիյամաթ։

*

Անավլած հիսան, անկարտքյ հեսան՝ աշխըրքին ֆայդա չեն իտա։

*

Անխաչ տերտրուչ խաչխամբուր ո՞ւտա։

*

Անձըրվու տայ ինդյած ճամխուրթին՝ պաղ թան չեն իտա։

*

Անոթի մարթու խամար՝ ծավրով փոշն ավելի խամով կըլնի, քանձ կուշտ մարթու խամար՝ թաթարի խավիծ։

*

Աշխարքն ուղի բառին ըլնի, սարի կյլոխ սարին կըլնի։

*

Աշնան արև իմ որթուն, կյարնան արև իմ խորթուն։

*

Աչին խառցուցին՝ «Ի՞նչի հյա կթարթես», ասաց՝ «Տիսածիցս կվախենամ»։

*

Առծիվ ինչկանդար էլ պանցր թռնի, էլ՛մ էլ ուր այրոն երկրի էրեսին ի։

*

Առքյավութնի մեչն էլ կրակ կա, ածըխոցի մեչն էլ։

*

Ասիցին՝ «Նթմու ծառ ծաղկավ», ասպած ասաց՝ «Ընչի ես մեռո՞ւկ եմ»։

*

Ասպած որ ուզի կանգընին ուրախցուցի՝ պյառցուկ էշ կմոլորցուցի, կպիրի կայնըցուցի վեր ինոր տռան. որ ուզի աղքյատին ուրախցուցի՝ ինոր էշ կկորիցուցի, սոն-սոնեն կտանի տեղ շանց կուտա։

*

Ասպած որթին առեց ուր, մըռմուռ տվեց Տիրամոր։

*

Բարդի ծառ քյամուց կըհերերվի, համա քյոքյախան չի ըլնի։

*

Բենտմուսի իրիսին թըքյիցին՝ ասաց անձրև իկավ։

*

Բոշից՝ փաշա չի ըլնի։

*

Բոշ քյուլֆըթի տիրոչ պուտկի մեչ՝ վռոշ չի ավըլնա։

*

Եղ սատի՝ էշն ուտի։ Եղան տիրոչն էլ ի՞նչ պիտի։

*

Ես աղա, տյու աղա, մեր աղուն վո՞վ աղա։

*

Երկնուց թափված ինչ էլ որ ըլնի, երկիր կվիրուցի։

*

Զանդրնի պենից, որ սխառրախոս կյա, յան խաշ ի կիրե, յան քյալադյոշ։

*

Էշ՝ Երուսալեմ էրթալով, մուղսի չի այառնա։

*

Էրկեն թելիկ,
Կարճ ասըղիկ,
Հե՞ր աղքյատիկ։

*

Թյոքից՝ խարիսխ չի տրվե։

*

Ժամաան ղանգեր ղարկիցին՝ տիրացույի քյուն նոր էկավ։

*

Ինչ կյուղում՝ հընթին, ինչ պուղում՝ մաքին։

*

Իշուն ասին՝ աչկըդ լոս, քյե քուռայ՚մ էլավ, ասաց՝ էլավ-չէլավ, պեռն իմ քյամկեն պակաս չէլավ։

*

Լեզվին ոսկոռ չկա, որ ակըռկի։

*

Խաբար ճոշին, ճուր պստըկին։

*

Խաշին նոսր էր, օրդուն լճավ վրեն. քյաղվորն ի՞նչ անի։

*

Խաշն իմն ի, ղորութեն ես կյիտեմ։

*

Խացըն՝ խորես, ճիժըն՝ փորես։

*

Ծակ ոլնիկ կյեաին չի մնա։

*

Կալի եզան մռութ՝ լարնով չեն կապե։

*

Կատվուն խառցուցին՝ «Քյու մերն ի քյե շատ կուզի, թե՞ քյու խերը», ասաց՝ «Նյա օ, նյա օ»։

*

Կաառուն կիրե կիդըրմ միս. էսը քյար, էսը կըշեռքյ՝ կատուն տընենք կըշըռենքյ։

*

Կատուն տուն չի, մկներ հանդյուն-հտնդյուն կվաղվղեն։

*

Կընդյան ծամ հերկեն կըլնի՝ խելքյ կառճ. մարթու միտք հերկեն կըլնի, ծեռ կառճ։

*

Կյելու կյլխուն ավետրան կարթացին, ասաց՝ «Շոտ արեք, ոչխար սարից կնաց»։

*

Կյեղի կատուն՝ կաթի սերից զուրկ չի մնա։

*

Կյլոխս թո իմ տան մեջն ըլնի, ոտքերըս թո դյուս մնա։

*

Կյող որ տնեն ըլնի, եզն կտըրեն կըխանի։

*

Կյող՝ ախըր սյուղ։

*

Կիտուր խարսից ինատ արաց, կաթ թողեց կատըվնկրաց։

*

Կրակ չէլած տեղից՝ մուխ դյուս չիկյա։

*

Կուզի՝ ալամ—աշխար մեյ պընով պռնես, մեկ օր իլել ես, մեկ ծր էլ պիտի մեռնես։

*

Կուզի տաս տարի էշն անդյաղ մնա, էլ՛մ էլ պոչ չի հերկընա։

*

Հիսանի աչկ մեյ խողն ի, որ կըկշտացուցի։

*

Հմեն՝ «խաչըն» խաչոխննք չի կանա անե։

*

Հմեն կնիկ ուր ասն կժի պաղ ճուրն ի, համա խոնարով կնիկ՝ ուր աըռան ղուլալ ախպուրն ի։

*

Հմեն պոչ՝ ուր տիրոջն ի։

*

Հմեն պտուղ մեյ խամ չի ըլնե։

*

Մալ՝ ախրանման չըլնի, հյասնա դյողացուրիկ կըլնի։

*

Մարթ ուր ոտքեր՝ ուր յըխնիի դյորա կըղարղի։

*

Մեյ փեթակի մեջ կրկու մեր չեն նստեն։

*

Մըդրրու ախշիկ տարան—արիցին թաքավրուն խարս, ծեռ պարզեց կիսրոջն ասաց՝ «Փառսեմըն բդա» (Իմ պատառ հացը տուր)։

*

Մըկըրբուն թան տվեցին, ասաց՝ «Ջորթան էլ սուս»։

*

Մթան մեջ քելողի ոտ՝ յան քյարին կտիպնի, յան՝ փետին։

*

Միճինքյին՝ մատաղ չեն մորթե։

*

Մոն խրիկ՝ յոթ շիրիկից առավել ի։

*

Մուկ ծակ չէր մտնե, շախկյամ պոչ կապիցին։

*

Մուկն էլ կըճրգճրդտա, խավուն ճեան էլ. խու սանտիկնոշ խամար մեյ պյան չե՞նե։

*

Մուկն ինք մեյ պյան չի, համա ուսեղ ինի՝ կըխարամի։

Ցոթրն քյաղվոր մեյ մաթրաթ ճաշով կկըշտանան, համա մեյ թաքավոր յոթրն աշխըրքով չի կշտանա։

*

Նախըրչու չարոխ ծայ կըլնի, կուռուղչու՝ կրյլոխ։

*

Նյա լուսընկի շող կըփնչվի, նյա ճայտի կյիր կըջնջվի։

*

Նյա սեվին սսպռն կսիվալըկցուցի, նյա խեվին խրատ կխելացուցի։

*

Շան արժալ որ կյա, կէրթա ջամու տըռան կըքյաքի։

*

Շիրիկ առված որ աղեկ պյան ըլներ՝ ասպած խատր՝մ էլ ուր խամար կըսաեղծեր։

*

Շնից ծնված՝ յան քյոփակ պիտի տառնա, յան՝ դել։

*

Որ հիսանի ծեռ կարճ ըլնի, լեղուն ղիղինք կըկառճանա։

*

Որ քյարթու խաց չես կանա ուտե, աղեկը՝մ անոթցի, կառնա եղով պաղարճ։

*

Ջում ճիժ չիլա՝ մեր ծիծ չիտա։

*

Պաղ ճրրից՝ մարթու պերան չի վառվե։

*

Պառվըցած՝ տառնըցած։

*

Պըռտուճնըրաց հմենից տառն աղքըտութենն ի, պարտքերից հմենից ղոռը՝ խյոկին տալն ի։

*

Պըստիկ կյախ՝ շատ քյոթոթն էլ խորոտ կըլնի, իշու քուռակն էլ։

*

Պտուղ ուր ծառից շատ ղատ չի ինե։

*

Պուտուկն ասաց՝ «Տակս ոսկի կա» շերեփն ասաց՝ «Ես հո՞ւստ կուկյամ»։

*

Ռես չէլած տեղ՝ կյըլըխն էլ «աղա» կկանչեն։

*

Սթի պռչ՝ հերկեն կըլնի, ծեր՝ չուխի տկից կթըռնի տուս։

*

Սյուքյ չէլած սան էրտըսից՝ վույ-վույի ձեն տուս չի կյա։

*

Սոխի սեյրադն ի որ կյըոխ կուտա։

*

Տախ ախչկան ասիցին՝ «Ընչի՞ չես կընացե իրկան» ասաց՝ «Ուղող չէկավ, իմ խերն էլ չի-տուր»։

*

Տան, որ էսնու տանտենկն ըլնեն, տախտն անավել կմնա։

*

Տաշտի խմոր ի՝ թխելով կըխլըսի, խո թաշտի լվածք չի, որ սատանեն ավըլցուցի։

*

Տերտըլըռչ խարս՝ նշխարքյ ճրի ճամխեն կուտի։

*

Ուռու ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես դարդի տեր եմ».
Բարդի ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես սիրու տեր եմ».
Քյան բարդի ծառ՝ պանցր չկա, քյան սիրու տեր՝ քյաղցր չկա։

*

Քյամին ասաց՝ «Մարաքյ, այուըրտ պյաց, քյե հառթ եմ պիրե.
Մըրաքյն ասաց՝ «Նյա քյու պիրած կուղեմ, նյա քյու աըրած»։

*

Քյամին ասաց՝ «Վույ, վույ, վույ, իմ տունտեղ քյամին տարավ»։

*

Քյանիմ՝ կուղի պոչն հերկընեա, կյոռտան կաել ծուկ չի տառնա։

*

Քյառսուն փակ տիր վեր առան, կրողի առաճ չի պռնվե։

*

Քյսթադն՝ առքավութնից ի իկե։

*

Օցի կծած կըսաղանա, լեզվի կծած չի սաղանա։

*

Օցն ի որ կանա մտնի օցի պյոնի մեչ, խո խուլվի կոպալ չի՞ կանա մտնի օցի պյոն։

ՕՐՀՆԱՆՔ, ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ, ԵՐԴՈՒՄ, ԱՆԵԾՔ, ՊԱՐՍԱՎԱՆՔ

ՕՐՀՆԱՆՔ[1]

Առպած քյե հերկեն ումբր անի։

*

Ատենախոս՝ խանա Փյութկի սըփ Կյևոըք ուր ղորութնով քյե հիմդաա ըլնի։

*

Դոռ որ էըթաս՝ ճամխետ դուզ ըլնի, կըսմաթըտ՝ յուղ-ղուղ ըլնի։

*

Թըխթըմորըտ օխնուկ մնա։

*

Լոս կաթի վեր քյու խոր-մոր կյերեղմնին։

*

Խաղար օղորմի քյու ծնողաց։

*

Խեր Ապրախամու կյոք նստելուն առժանանաս։

[1] Սովորաբար այս օրհնանքները ուղղված են աղամարդկանց։

*

Խեր Ալլախսմուն կոնախ իկողներ՝ քյու սուփրի վրեն էլ նստենք։

*

Սեւըռ չըր ճողին թալես՝ ծաղկած ծառ տառնաս։

*

Մայրիկ-Մայրամ տապարածին՝ ոռ սափ պենով քյն օխնի։

*

Յոթ որթով սեղան նստես։

*

Պյարով յաճերացըա թաք-փսակին արժանանաս։

*

Սիմոն ծերունի տառնաս։

*

Սիվտակ մուրուս ըլնես։

*

Վեր աստվորին՝ ախ չքյաշես։

*

Տունըդ շեն մնա։

*

Քյրիստոսի օխնենքյն առնես։

*

Քյու մեկըն խաղար տյառնա։

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

Սիրելի անձնավորությանը խմիչքով հյուրասիրելիս՝

—Դե, կյալըա պյալի, հյա ասպած ըսըսկնա ուրախ սրտով, ցամաքյ աչկով մեյ մեկու տիսուն առժան անի։

—Տյուք էլ սաղ ըլնեք, ասպած հյա ըսըսկնա ուրախ սեղնի ռասա պիրի։

*

Բաժակը պարպելուց հետո՝

Հյուրասիրող.—Անուշներ։

Հյուրասիրված.—Անուշ կենաս, սաղ ըլնես։

Հյուրասիրող.—Մեկ էլ թալենք (խմենք), տիսնանք աղո՞րթ անուշ ի։

*

Ով այսպես խոսակցելով ու ուտելով բաժակների թիվը ավելանում էր, սակայն միշտ միևնույն «անուշներ» կամ՝ «անուշ արա»-ն, «անուշ կենաս»-ն ու «իմ անուշ սյու էսա»-ը։

ՆՐԴՈՒՄ[1]

* Ալահվաքյիլ։

*

* Անունն առածս։

*

Ես իմ խյուկին (ձեռքը կրծքին խփելով)։

*

Էսը սըրթըրնի արթար լուսուն առժան չըլնեմ (Ձեռքը դեպի արևելք պարզելով)։

*

Էսը արեվ-արեկյակ շհադ ըլնեն (Ցույց տալով արևը)։

*

Էսը թոնրխան խալալ խացի պախապան խըրիշտըկներ շհադ ըլնեն (Միաժամանակ ձեռքը թոնրան շրթան մոտեցնելով կամ ուղղակի խփելով)։

*

Էսը խաց յոթ սուռն ինեմ ծեռըս չինի (Հացը ձեռքը բռնելով)։

*

Էսը ճրաքյի լոս վրես խավար մնա (Ձեռքը դեպի վառ ճրագը պարզելով)։

*

* Թե սուտ կասեմ՝ իմ կնիկն իմ մեր, իմ քյուրն ըլնի։

*

Իմ մոր տված անարատ կաթ ծիկ խարամ ըլնի։

*

Խոկյիս՝ սատանին տամ։

*

Կյապրել խըրիշտըկի փողի ծենին առժան չըլնեմ։

*

Մաս-պատարաքյի առժան չըլնեմ։

*

* Մեր ախպերութեն շհադ։

*

Մեր ճայտի մեռոն շհադ։ (Ձեռքը ճակատին տանելով)։

*

* Վալահ, բիլա, թալահ։

---

[1] Աստղանիշով (*) նշանակված երդումները սովորաբար տղամարդիկ են ասում, առանց աստղանիշի՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք։

•

* Վալտ՞ի։

•

* Քյրիստոսւ

•

* Քյրիստոս ուր տատասաանով վրես խռով կենա։

•

* Քյրիստոսի պիպեռ ղարկող ըլնեմ։

•

* Քյրիստոսի սուփ տվաղան, թե խայ իս՝ ավատա։

ԱՆԵԾՔ[2]

Ախ կանչի՝ լսող չխասնի, մախ կանչի՝ կյլող չխասնի։

•

Անկյալծակի ցավի աիրանա։

•

Աչկ պյաց ըլնի՝ մեչ լոս չըլնի, ափ պյաց ըլնի՝ մեչ խաց չըլնի։

•

Աստըծուց խնթրեմ՝ լոս թափվի, ծեռից պըռնեն՝ սանեն-պիրեն։

•

Աստըծուց կանչեմ խացն ըլնի՝ ծոց չըլնի, ծոցն ըլնի՝ խաց չըլնի։

•

Ասըծուց կանչեմ՝ վեր կուշա փորին ծեռ չըանի։

•

Աստծուց կանչեմ՝ ուրախութեն ուր տան տըռնեն ներս չմտնի։

•

** Բեմուըաղ

•

* Գյալուլախորով ըլնես։

•

* Էրաղի մեչ իրիկ տիսնաս։

•

Թաժա խացի խոտ տնից տուս չիկյա։

•

** Թաժա մեռել։

•

* Թաքյ-փսակի չառժանանաս։

•

** Ժուռ-մուռամեռ։

•

Իմ անճար պերանով կանչեմ՝ մախ չտիսնա, նստի՝ միս թափվի, կայնի՝ ուսկոռ պեյպըկվի։

•

Իմ մեղավոր պենով կանիծեմ՝ ուր ղոլվաթ կյել-կյաղտնին ըլնի, ուր խոկյին՝ սե սատանին ըլնի։

•

* Ինգընավորես, փ՛ռփրոտես, խաչ տընեն պերանտ, զանգյակ կախեն վզետ, տանեն Ջաղսր՝ սրփ Նշանա տուռ։

•

* Խըրխընշան ծիյով տուս էրթաս, սելի վրեն պառկուկ քյե առւն պիրեն։

•

Խոկյին ասաըծուն չիտա։

•

* Ծամեըըտ սիվտակ իստըկես։

•

** Կյրողի խեխտած։

•

** Կյրողի տարած։

•

* Մեջ խորըտ տան պառվընաս։

•

* Յոթ սարից ղեն սատկես, սեվ խտրարըտ տուն կյա։

•

* Նաղալա-վուռնով քյե խորեն։ (Նաղարա-ղուռնայով թաղելիս են եղել միայն երիտասարդներին՝ անսպասելի, ողբերգական մահվան դեպքում, երբ սրանք նշանված են եղել կամ նոր ամուսնացած)։

•

* Նխշուն ծիյուց ցած կյաս։

•

* Նշանլուտ տամ իրկան։

•

* Շախմար օցու ղե՞իր մտնի մեչ ջիգրիտ։

•

* Շվտթի կատվու պես տանսրներ ննատ կանչես։

•

** Պատանքյըա կարվի։

•

* Պաաանքյըա մաղի թելով կարենա։

[2] Առանց սատղանիշի անեծքները սովորաբար ասում են կանայք կանանց. մեկ սատղանիշով անեծքները ուղղված են ամուրի տղաներին ու աղջիկներին և առհասարակ նորապսակներին. երկու սատղանիշով՝ փոքր տղաներին։

*

Պատից կախուկ մաղ չալրոտվի, կապից կախուճ սիկ չրթանոտվի։

*

* Ջալաղի սաճեվ չոքյես բալքիմ։

*

* Ջհեյլրտ սնդրկի մեջից տյուս չիկյա։

*

Սեվ թոլխմ ուր կյլոխ։

*

* Սեվ փոշիտ քյոլողիտ վրայեն առնեն տակ, թալեն վեր մորրտ կյլխուն։

*

* Սուր թրի ռաստ կյաս։

*

Սուք ըլնի ուր փայ-պյաժին։

*

** Վարամ թալած։

*

Վիղրտ տակրտ մնա, խեր-ղյարին չտիսնաս բալքյիմ։

*

* Տիրամոր սառըցրվոր տառնաս, այլակերպվես՝ հիսան-օղլու ջյարդ չմանես։

*

Ուր իրիկ խորեմ։

*

Ուր լաճեր խորեմ։

*

Ուր շեն անից մեյ ջուխտ սոլ ըլնի ուր փայ-պյաժին։

*

Ուր վանք տնից փեշեր թաղթրփելով այուս կյա։

*

Ուր տուն Անի քյաղքի ավերակներ սառնա։

*

Ուր տունն ավիրվի, ուր տյուռ փայվի։

*

Ուր ունեցվածք էրաղ տառնա, ղինք աշխրրքում բեմուրաղ տառնա։

*

* Փառացրա տակ կյաս։

*

* Քյու թաժա խարս կրնդա նխշուն քյողք սեվ նիրկեն։

*

* Քյու խինեն քյամին սանի։

*

* Քյու մոր ծամեր կրտրեն փռեն վեր քյու նաշին։

ՊԱՐՍԱՎԱՆՔ[1]

*Աղաբարդ։

*

Աղքյտի թրնթոց։ (Կարճահասակ ու նիհար տղամարդու հասցեին)։

*

Բարայողուրդ։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

*

*Խառու կրճա։

*

Բենամուս։

*

Թափաղյող։

*

*Լավրնդու կրճա։

*

Խերվան խրորնդատ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Կրնգյան կնիկ։

*

Կրռտուկ եղ։

*

Կիշրրվան կյեշ։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

*

Կյարնան կյել։ (Կարճահասակ, նիհար տղամարդու հասցեին)։

*

Կյեմշու կուռոփ։ (Կարճահասակ, դեր տղամարդու հասցեին)։

*

Կյրողի թարանշա։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Կոթ կըտրած դընքյ։ (Կարճահասակ, դեր տղամարդու հասցեին)։

*

Կույանոցի ցախավել։ (——»——)

*

Կուռուղույի կասուս (——«——)

*

Աչմու բայրաղտար։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

[1] Առանց աստղանիշի պարսավանքները, սովորաբար կանայք հասցեագրում են տղամարդկանց, մեկ աստղանիշով՝ կանայք կանանց։

*

Ծոլ պաղըրվան ակլատիզ։ (——«——)

*

Ճվտուկ սակառ։ (Կարճահասակ, նիհար տղամարդու մասին)։

*

Մայմտդի սունաթ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Մըդըրբու մաղրակա։ (Կարճահասակ, նիհար տղամարդու հասցեին)։

*

Մըսրի կոճոն։ (——«——)

*

Նախրի էշ։

*

Շարխոշի շոախոա։ (Կարճահասակ, դեր տղամարդու հասցեին)։

*

Սաղի ռուղա։
Սալախանի շուն։

*

*Սոխաարի։

*

Վարակյա կոտան։

*

Տավրի չլուտ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Տրժրխոցի ղուռնաչի։(——«——)

*

Ուտի ախպ։

*

Քյարվընի քյուրթ։

*

Քյոռ Աղնավուր։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Քյոռ Թյաքյա։

*

Քյոփաքյ շուն։

*

Օդոսառսի աղվես։ (Կարճահասակ, նիհար ադամարդու հասցեին)։

*

* Օռոսպի։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Երր մի քանի պարապ տղամարդիկ կամ կանայք միասին էին լինում, որպես մտքի վարժություն, միմյանց հանելուկ էին առաջարկում։ Ահա այդ հանելուկներից մի շարք։

Անդերձան շարած,
Անասեղ կարած,
Անկյործ շավրի մեջ
Փակ կութով պիրած։
(Նուռ)

Կլոր՝ քյանձ նուկի,
Տափակ՝ քյանձ խառջեկաթ,
Սե՝ քյանձ սաթ,
Սիվտակ՝ քյանձ կաթ։
(Կաշաղակ)

Էն որ խավքն ի՝ երկինք-կյեաին կան կուկյա,
Ուրա պոնից տյուս չի կյա։
(Աչք)

Նա՝ ռաղըրդյան կպիրի,
Նա՝ դուքընդար կըծախի,
Նա՝ տվող խամ կախսնա,
Նա՝ ուտող կյոն կախսնա։
(Մայրական կաթ)

Էն ինչ, էն ինչ՝
Որ ասես՝ արե-արե, չի կյա,
Որ ասես՝ մի՛ կյա, մի՛ կյա, կուկյա։
(Շրթունք)

Հմեն ջանին՝ մեյ մութ մարաքյ,
Մեջն էրկու ջար անկոթ ուրաքյ։
(Բերանն ու ատամները)

Էրկու աուն՝ մեյ սուն։
(Քիթ)

Անպոչ կաել՝ կպե պլաա։
(Ականջ)

Անջան, անսաս,
Տյու դոր էրթաս,
Լոքյա-լոքյա
Խետըա կուկյա։
(Ասվեր)

Ինքյն Ատամուց առաճ ի ծնվե,
Համա ուր քյառսունքյ աեռ չի թըմըմվե։
(Լուսին)

Քյալեն-փետեն, արթալը դադեն,
Ջորս չոր, հերկեն ոտ փորի աակ,
Արաիկն ի սե, կյլոխն ի ծակ։
(Թոնրատուն)

Դադեն նստե վեր թըմրան,

Կլլխուն քյաշե թաց թոմբանւ
(Կաղամբ)
Մեյ տուն՚ըմ կա, տուն մ՚էլ ինե,
Տեղին Տավիթ նստուկ իներ
(Հավկիթ)
Խանելուկ—խտնղտկելուկ,
Մեչն ուտելուկ,
Տյուս վառելուկ։
(Ընկույզ)
Մե կով՚ըմ կա ղաառ յան ի,
Ուռ-պառւկ ոպահանի,
Կաթ կուտա, առւն չի կյաւ
(Խաղողի վազ)
Լարան պառկավ մեչ ծովուն,
Ասաց՝ ծյաքն եմ արիվունւ
(Պասրույզ, ձեթ, ճրագ)
Մսև սյուն, էրկըթե առունւ
(Անասունի պայտված ոտք)
Կտրպետ կփուն տակ,
Ծևոով կըվղըրցուցեն ծակ,
Կրվերուցեն, կկայնըցուցեն պատի ատկւ
(Երկանք)
Քյու տափակ՝ վեր իմ ատիկին,
Իմ սուլուլիկ՝ մեչ քյու ծակին,
Աշխար կուտի իմ-քյու տկինւ
(Երկանք ու ձավար)
Պատի՝ մլի, պըռաի՝ մլի,
Որ չի մտնի՝ կոծի մլիւ
(Թել-ասեղ)
Փետե փողորակ,
էրկըթե սողըրակ,
Սատանեն մեչ քյունւ
(Լիքը հրացան)
Անփարա ելչի,
Անղարար յալանչի,
Զիկ, քյե կկանչիւ
(Կաչաղակ)
Ցերեկով՝ խեղճ, ղարբեզար,
Կյիշըրով՝ աշխըրքին նոբազարւ
(Լուսին)
Ըստեղ՝ պուպուղ, էնտեղ՝ պուպուղ,
Ինչ կյա տիմաց՝ կըթըլի տյուսւ
(Ավել)
Սլվլուն էլավ սարնըվեր,
Սըրպեց-պիրեց այնըվերւ
(Ածելին ու երեսի մազը)
Երկնուց իրեքյ խավք ընցան,
Մեյն ասաց՝ ակաս, մեյն ասաց՝ պակաս,
Մեյն էլ ասաց՝ հիսանին իբեքյ պյան կա
պակասւ
(Ափին՝ մաղ, լեղվին՝ ոսկոր, աչքին՝ կշառւմ)
Երկնուց իրեքյ խավք ընցան.
Մեյն ասաց՝ Ալո, մեյն տսեց՝ Բալո,
Մեյն էլ ասաց՝
Աստված աստվոր շինելու օր իրեքյ պյան պակաս
ի թողե,
Տիսնաս մոոցեր ի՞, թե՞ ինչւ
(Երկնքին՝ սյուն, ծովին՝ ծածկոց, գրողին՝ աչք)
Աե սըլա, սիվտակ սըլա,
Խաթունն ինե կրխլվլաւ
(Աչք)
Ես թալեմ քյե, տյու թալ գեխ ձիկ, թո էրթա-կյա,
Երկսիս էլ պոստին կպնի, մե պարե տաւ
(Խնոցի)
Փորը հլին՝ ք... շսաթա,
Կէրթա-կյուկյա, կէրթա-կյուկյա՝
Քյու մոր պոոտին կյլոխ կուտա,
Քյու խեըն ըսկի ծեն էլ չի տաւ
(Խնոցին՝ մեջը կարագ ու թան)
Ըղտու փոր լցուցին,
..ից փչլիցին,
Աղթամարա լուս-ճրաքյներ վառիցինւ
(Թոնիր)
Ձինք կլոր քյանց պաարնչան,
Անծըներ մեչ կըխըլվլճան,
Տնես պերանս՝ կբկոչկըռչանւ
(Թուղ)
Պըռնեմ ափով,
Թտլեմ թափով,
Մեռնի աըրով,
Հարի պյարովւ
(Ցանված հաաիկ)
Ձինք քյանց լում,
Ուր ղատ քյանց սյումւ
(Կանեփատ)
Պառավ նստե վեր տեգին,
Պոչն օլըրե վեր վղինւ
(Կաղամբ)
Թաց աղիքյ,
Ծեր՝ ծաղիկւ
(Վառ մոմ)
Մեյ մերիկ,
Խաղար իրիկւ
(Մեղվի փեթակ)
Անճյուր ճաղաց,
Անթուխ պաղարճւ
(Մեղրի խորիսխ)
Լեն առւռ, նեղ տուն,
Մեչ խոշ-խաթյունւ
(Խխունջ)

ՀԱՎԵԼՎԱԾ

ՑՈՒՑԱԿ ԱՐՃԱԿԻ ՏՆԵՐԻ*

(Առ ապրիլ 1915 թ.)

Ցուցակում օգտագործված են հետևյալ համառոտությունները.

Երկ.—երկհարկանի տուն

Ջիթ.—տունն ունի ձիթհան

Ջաղ.—տունն ունի ջրաղաց

Գութ.—գութանատեր է

Փ. գութ.—փոխով գութանատեր է

Պետ.—կառավարության կողմից 1914 թ. պատերազմի առնչությամբ բռնագրավված ու ռազմական նպատակների համար օգտագործվող տուն։

Փակագծում բերված է ծխի (տան) մականունը։ Նույն նախապապերից սերված ընտանիքները կազմում էին դասեր (տասեր). դա ևս արտահայտված է ցուցակում։

ՓՈՍ ԹԱՂ

Ավեդի Կազարի դասեր՝

Ավեդի Ավեդի տուն
Ավեդի Եղոյի տուն (Երկ., Փ. դութ., Պետ.)
Ավեդի Հուսեփի (Բողեի) տուն
Ավեդի Պարսըղի տուն
Ավեդի Սիմոնի տուն (Երկ., Պետ.)

Բարաջանի դասեր

Բարաջանի Արթընի տուն
Բարաջանի Նեսոյի տուն
Բարաջանի Նուրոյի (Գյալհոյի) տուն
Բարաջանի Օվանեսի (Շիրոյի) տուն

Բաղդըկե դասեր

Բաղդըկե Հուսեփի (Դավոյի) տուն
Բաղդըկե Սախակու տուն
Բաղդըկե Վոհանի տուն
Բաղդըկե Քյարամու տուն

Բարխուդարի դասեր

Բարխուդարի Ամրոյի (Պուլուղի) տուն (Ջաղ.)
Բարխուդարի Սիմանեսի տուն
Բարխուդարի Թումոյի տուն

Բառոյի դասեր

Բառոյի Ճոչ տուն (Գութ.)
Բառոյի Հմայակի տուն

Բուդի տուն

Դըզոյի դասեր

Դըզոյի Մելքոնի տուն
Դըզոյի Նարաթցու տուն
Դըզոյի Պիտոյի տուն (Երկ., Պետ., Փ. դութ.)

Դհերցու Դադեի տուն
Դհերցու Պետլեի (յարըմ բիթունի) տուն
Եղտղարի տուն (Փ. դութ.)

Թաժդընի դասեր

Թաժդընի Բաղեի տուն
Թաժդընի մամու Սողկե կամ Պապոր Արամու տուն
Թաժդընի Մտոտոյի տուն
Թաժդընի Մկոյի տուն

Թաթարի Խաչոյի (Քյալոյի) տուն

Թառկե դասեր

Թառկե Ապրոյի տուն
Թառկե խուլ Նշոնի տուն

---

* Ցուցակը կազմելուն հեղինակին աջակցել են երևանաբնակ արճակեցիներ՝ Անդրանիկ Դավթյանը, Միհրան Հարությունյանը, Արծրուն Կծոյանը, Սենիկ Մկրտչյանը և խառակոնիսցի Մաթեոս Մարգարյանը։ Անունները գրված են Արճակի արտասանությամբ։

Ժամխըրի դասեր

Ժամխըրի Արթրնի տուն
Ժամխըրի Նշտնի տուն
Ժամխըրի Սենոյի տուն

(Ժար) Փանրսու տուն
Լրմտ Միսակի տուն
Լուրուգի տուն
Խանթումնի տուն

Կազոյի դասեր

Կաղոյի Կաղոյի տուն
Կաղոյի Սախակու (Ճեճերի) տուն (Երկ., Պևա.)
Կաղոյի Վտրթոյի տուն (Փ. գութ.)

Կարթտլանցու Արշակի (Ծրատոտի) տուն
Կենգոյի տուն
Կեվըրկու Մատոոյի տուն

Կըծոյի դասեր

Կրծոյի Հակըրու Սարղոյի տուն
Կրծոյի Սարգոյի տուն (Փ. գութ.)

Կըռոյի դասեր

Կրռոյի Պուղու (Մանթաշովի) տուն
Կրռոյի Սարգրսի տուն (Փ. գութ.)
Կրռոյի Վարթանի տուն

Կումըրկե դասեր

Կումըրկե Կումրոյի տուն (Երկ., Պետ., Փ. գութ., Ջաղ.)
Կումըրկե Մնոյի տուն
Կումըրկե Պուղուսու տուն

Հասրաթի դասեր

Հտսրաթի Կոստտնի (Կոտեի) տուն
Հտսրտթի Նեկոյի տուն

Ճեմոյի տուն (Գութ.)
Ճրնոյի տուն
Մառտոյի Ավեգի տուն
Մառտոյի Օխանեսի տուն

Մուքյայելի դասեր

Մուքյայելի Արշակու տուն
Մուքյայելի Կյուրուկրու տուն
Մուքյայելի տերտըրոչ (Տուտեմի) տուն

Նուրիջանի Բաղեի տուն

Շայնի դասեր

Շտյնի Գյուրջոյի տուն
Շտյնի Ենգոյի տուն
Շայնի Թուիլու տուն
Շայնի Հտրոյի տուն

Շատրղցու Հակոյի տուն
Շտարղցու Շայենի տուն
Շտտրղցու Օվտնեսի տուն
Շոտնի Արշտկու (Թուիալ Խուռկե) տուն
Շուտնի Լիլոյի (Կենչոյի) տուն
Չլուտի տուն
Պարանկե տուն

Պարեի դասեր

Պտրեի Աշոտի տուն
Պարեի Սախտկու (Տեղնուկի) տուն

Ջրնըբարու դասեր

Ջրնըրարու Ալոյի (Դուրգանի) տուն
Ջրնըրարու Պարսոյի տուն

Ռավոյի դասեր

Ռավոյի Ճոչ (Կոլոտու) տուն
Ռավոյի Ստխակու տուն

Սանոյի (Քյոսքըսոյի) տուն
Սիյանսու Ասլանի (Թրստանի) տուն (Երկ., Պետ., Փ. գութ.)
Սիյանսու Մրնեի տուն (Երկ., Պետ., Գութ.)
Վանից տուն (Փ. ղութ., Ջաղ., Չիթ., ունեին քառակաղմ, մտգաղտթե «Թաքավոր ավետըրան»)
Տաժու Մտրոյի տուն
Տավկե Ասլտնի (Չուռոյի) տուն
Տտվկե Խըլղաթի (Ժտոյի) տուն

Տավոյի Միրզոյենց դասեր

Տավոյի Ոնգրկե տուն
Տավոյի Կտրոյի (Ծըլըլեկի) տուն
Տավոյի Միրզոյի (Ջամու) տուն
Տտվոյի Ոնգրկե տուն
Տավոյի Սեթրտկու տուն

Տեր Կազարի դասեր

Տեր Արթրնի Աերոյի տուն
Տերտըրոչ Կրռութի տուն
Տեր Կաղարի Նշանի (Դիզեի) տուն (Ունեցել էին «Կարմիր ավետրան», որը գերեվտրել էին ե տեղը՝ մտռանը, սրբացված էր)

Փալասի դասեր

Փալասի Թտնոյի տուն
Փալասի Խարսի տուն
Փտլտսի Տայրոյի տուն

Փանոյի դասեր

Փտնոյի Մկոյի տուն (Պետ.)
Փտնոյի Փտնրսու տուն (Փ. գութ.)

Փանըսու դասեր

Փանըսու Ասպատրու (Ալոյի) տուն
Փանըսու Խերոյի տուն
Փանըսու Փտնըսու (Պտպուկի) տուն

Փարկե տուն

Փիլիճի դասեր

Փիլիճի Ավեգի (Գյալտլու) տուն
Փիլիճի Խամրոյի (Պիպոյի) տուն

ՔՅՈՋԱՐԻ ԹԱՂ

Ալթունի տուն
Աղտաշա Ավոյի տուն (Փ.գութ.)
Աղտաշա Հակոյի տուն (Փ. ղութ.)
Աղտաշա Միրզախանի տուն
Անդոնի Նանեի տուն
Բուլուչու տուն (Փ. գութ.)
Թաթարի Զաքյոյի (Զավտնողի) տուն
Թաժախտյերաց Մարտիրըսու տուն

Թեոյի դասեր

Թեոյի տուն
Թեոյի Ժամխըրի տուն
Թեոյի Մկոյի (Ավզընոցի Պըճոյի) տուն

Խաժոյի Պիտըրսու տուն
Խաժոյի Վտրթանի տուն (Փ. գութ.)

Խսան դասեր

Խսան Ավեգի տուն (Երկ., Պետ.)
Խսան Կարոյի տուն
Խսան Պապկե տուն
Խսան Ուսեփի տուն
Խսան Օխտնի տուն (Երկ., Պետ.)*

Խուգոյի Կյուրուկըրու տուն
Կաղկե Ասլանի կամ Տուրտնենց տուն
Կագկե Կազոյի (Կըզոյի) տուն
Կաղկե Մամիրեի տուն (Պետ.)
Կըլորի Արթընի տուն
Կըլորի Հտկոյի (Բոտեի) տուն

Կյազպարի դասեր

Կյաղպարի Մկոյի տուն
Կյաղպտրի Վանոյի տուն
Կյտղպտըի Օվանեսի տուն

* Հեղինակը՝ Սերինե Ավագյանը, Խսան Օխանի տնից է (Ծ. Խ.)։

Կուլկե դասեր

Կուլկե Տոճատի աուն
Կուլկե Կարոյի տուն
Կուլկե Վարթանի տուն
Կուլկե Օխանի տուն

Մոլոյի դասեր

Մոլոյի Հակոյի կամ Մարոյի տուն
Մոլոյի Կյուրուկըրու (Արթարի) տուն
Մոլոյի Մուսեսի (Պստիկ Պուպուշի) տուն (Պետ.)
Մոլոյի Պիտոյի (Ճոչ Պուպուշի) տուն (Փ. գութ.)
Շտվեռի տուն

Շտտըղցու Ավոյի տուն (Գութ.)
Շտտըղցու Եղոյի տուն

Ջոմոյի դասեր

Ջոմոյի Ավետիսի տուն (Պետ.)
Ջոմոյի Խաչկե տուն (Պետ.)
Ջոմոյի Քինոյի տուն

Պըհոյի տուն
Պյուպճի տուն
Ատյրտգի տուն

Տերտըրոչ դասեր

Տեր Կտրապտի տուն (Երկ., Պետ., Փ. գութ., Ջտղ.)
Տերտըրոչ Կտղտրի տուն (Երկ. Պետ.)
Տերտըրոչ Պուղուսու (Դրեժոյի) տուն
Տերտըրոչ Անթտոտնի (Շեպոյի) տուն

Փտնկե Մինտսի տուն (Երկ., Պետ.)
Քյողտրի Կյտպոյի տուն
Քյողտրի Մինտսի տուն

Քոչոյի դասեր

Քոչոյի Մտնուկի (Վտղվտն էլ պախեմի) տուն (Գութ.)
Քոչոյի Լեսկցու տուն
Քոչոյի Մկոյի տուն

ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐ

ՀՈՐՈՎԵԼ


(♪= 132
հա-ռա-վել, հա- ռա-վել, հա-ռա-վել,
Հա-ռա-վել ըլ- նի պըլ-տի կե- մեշ
հո-րո-վել, հո- րո- վել հո- րո-վել...
հա-ռա-վել, հա- ռա- վել, հա- ռա-
վել, հա-ռա-վել Ջեյ- րա-նին կուր-բան եմ, խո-րոտ
Ջեյ- րա- նին կուր- բան եմ:
հա-ռա- վել, հա-ռա- վել Ջեյ- րան ջան,
հա-ռա-վել, հա- ռա- վել Սեյ- րան ջան,
հա-ռա-վել, հա- ռա-վել վել, հա-ռա- վել.
ջա- նիտ մա-տաղ ա- նուշ կե-մեշ,
հո-րո-վել, հո-րո........ հո-րո- վել:


Դե՛, փա-րա-փա-րա, իմ Ծե-կո ջան, դե՛-փա-րա-փա-րա,
իմ Ծե-կո ջան, հո-րո-վել, հո-րո-վել, հո-րո-վել ըլ-
նենք իմ Ծե- կո ջան, քյա-շիր ջա-նիտ մա-տաղ իմ
Ծե- կո ջան, հա փա-րա-փա-րա, փա-րա-փա-րա:
դե, տը-ղե-ներ, խու-րիկ քյա-շեք, դե, տը-ղե-ներ, խու-րիկ քյա-շեք:
փա-րա ի, հա փա-րա ի կե-մեշ ջան:
դե՛, փա-րա-փա-րա, ցա-վըդ տա-նեմ, դե փա-րա-փա-
րա ցա- վըդ տա-նեմ, է-լանք, է-լանք, է-լանք ե-լը:
դե՛, փա-րա-փա-րա, դե՛, փա-րա-փա- րա,
հա-ռա-վել, հա-ռա-վել, հա-ռա վել ըլ-նենք,
հա-ռա-վել, հա-ռա-վել, հա-ռա-վել ըլ-նենք. տղա, խուրիկ
շոռ տը-վեք, տղա, խու-րիկ շոռ տը-վեք դե փա-րա փա-րա...

ԹԱԳՎՈՐԻՆ ՊԱԳԵԼՈՒ ԵՎ ԹԱԳԸ ԿՅՆՆԼՈՒ ՏԱՂ



ԴԱՐ-ԴԱՐ



ԾՂՈՐԻ ՏԱՂ


(♩=120)
Ծը-ղոր թըռ- նեմ, ծեռ սամ հառ-քյին, մեռնեմ ու-
-րախ պառ-կեն-դըն-քին: Լե-զու---սպս---ցի, ա-մըթ չը-
-կա, կըյլ-խուս կայ-նուկ յոթ ու-զող կա: Մե-կու ա-նուն
Ա- պրա-խամ ի, թա-քա-վը-րուն սա-տրա-զամի:
Մե-կու ա-նուն Մար-կյա-րա ի, Ըս-տամ-բո-լա
ա-մի- րա ի, մե-կու ա-նուն Իս-քյանդարի
Աջ-մու շա-հուն խազ նադարի: Մե-կու ա-նուն
Կա-րա-պե-տի, յոթ վար-ժա-տան վարժապե- տի:
Մե-կու ա-նուն Մը-կըր-տի...նի, ճոչ ծո-վե-րա-
-ցնի, գյամը-չի: Մե-կու ա-նուն Խամ-բառ-ցու-մի,
Սա-նյա-թքյա-րի առ-րը-շու-մի: Մե-կու ա-նուն
չեմ տա ը-սաեղ, կանչեք յոթնել թո կյան մեչտեղ, ------

ՃՂՈՐԻ ԵՐԳ



ԴԸԼԵՅԱՄԱՆ





ԷՐԻՆ-ԷՐԵՐԻՆ

(♩= 92)



ՋԻՆԱՐ-ՋԻՆԱՐ



ԽԱՆԻՄԱՆ-ՋԱՆԻՄԱՆ



ՋՈՒԼՈՅԻ ՏԱՂ


Ջու-լոն խա - կյե կու - թնի գր - պուն,
շա-պիկ դա - բա - նի Հա - լա - բու
բաժ-նի ննր - կեն, աա - լար ալ - բու, կը-
-խըր-խըն-ջա ին - չըն յա - րու, յա - րու:
նա-վար Ջու - լո, մա - դաթ Ջու - լո, աա-րո-դիա
տուն բար-բաթ՝ Ջու - լո: Ջու-լո-նէ-
-լավ, կեր - թա րո - ստան, չոր...նի լը-
-ցուկ չա-միչ փը - ստա, ծա-
մեր...նի-տեվ՝ դա - ստա-դա - սաա, կան-չեք
լա-ճեր՝ թո կյան ը - սաա:
նա-վար, Ջու-լո, մա - դաթ Ջու-
-լո, տա-նո-դիա տուն՝ բար - բաթ, Ջու - լո:

ՅԱՐՈՒՀԻ, ՋԱՆ ՄԱՔՐՈՒՀԻ

(♩ = 132)



Մ Ա Ր Ո Ն

(♪ = 132)



ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբրշում—մետաքս
Ագարսըղ—անպատկառ
Ագամորդի—մարդու որդի, մարդ արարած
Ագիյա—ընծա, նվեր
Աղա—Արցախում ռեսից (տանուտեր) դիրքով բարձր համայնքի գործիչ, որը միջնորդն էր հասարակության և գավառապետի
Աղալ-բաշի—ամուրիների գլխավոր. այսպես էին կոչվում հարսանիքների ժամանակ սկզբից մինչև վերջը փեսայից անբաժան այն երկու ամուրիները, որոնցից մեկը՝ ամուրի քավորն էր, մյուսը՝ փեսայի հարազատը
Ազատլամա—ազատածը, փրկածը
Ազնաուր—առասպելական հսկա մարդ
Ալահ-վաքիլ—աստված երաշխավոր, աստված վկա
Ալաչա—խայտաբղետ. նաև նըրահյուս պատուղ
Ալիչ-վերիչ—առետուր
Ախպուր—աղբյուր
Ախտավ—հալած տաք յուղի մեջ խառնած փոխինձե ուտելիք, որ ընդունում էին տաք-տաք
Ախվալ—դրություն
Ախունդ—մահմեդական հոգևորական
Ակընչկլա—աչքալուսանք
Ակըռկել—արգելակվել, որևէ բանից արգելվել
Ակլատիզ—մեծ պահքի հենց սկզբի օրից երդիկներից կախվող սոխ, որ զարդարվում էր հավի յոթ փետուրով՝ որպես մեծ պահքի շաբաթների խորհրդանիշ. ամեն շաբաթ երեկոյին՝ մի փետուր պոկում էին ակլատիզից
Ակոլ—քանդված, պրիշակված
Ակռաստ—նախաճաշ
Ակթաղաղ—Ուխտի լեռ, գտնվում է Արցախի հյուսիս-արևելքում
Աղոթրան—արևելյան կողմ, նաև լուսաբաց
Ակոռթ—ճիշտ, ճշմարիտ
Ակոռթմանց—իսկապես, իսկականից
Աքսախկալ—սպիտակ մորուք, ծերունի
Աղդաշ—սպիտակ քար. Արցախի ամենամոտ քրդական գյուղի անունը
Աղու—թույն
Աղուտ—թունոտ
Ամանաթ—ավանդ, պահ արված
Ամարաթ—դղյակ
Ամրախտի—աշխարհական, ոչ հոգևորական
Ամել—գութանը քաշող չորս լծերից մեկը
Ամր, ամրով—հրաման, հրամանով
Ամըոց (ամըըոց)—փթիրից շարված և թաց դոմաղրով ծեփված կոնաձև շինվածք, որի մեջ վառելիք էին լցնում
Այան—հայտնի
Այար—թամբ
Անըսպեռություն—անզգամություն
Անթրոց—թոնրի տակը խառնելու երկար փայտ, փայտյա ձող
Անկյալծակի—հանկարծակի, կոթվածային ցավ
Անձեղ—կաչաղակ
Անջան-անսաս—անմարմին-անձայն
Անուղորմ—անողորմ, անգութ
Անփոխ—գութանի տեսակ, որն ուներ ամբողջ օրը բանող ընդամենը չորս զույգ լծկան, փոխով գութանին կար նաև չորս զույգ պահեստի լծկան, որոնց լծում էին կեսօրից հետո
Աշալա—ցորենի կանաչ արա
Աշիրաթ—քրդական ցեղային կոչում
Աջամ—պարսիկ
Աջլաչեր—այլանդակ, այլակերպ
Աչմու շիլա—պարսկական կարմիր կտավ, որ համեմատած Վանի տնայնագործների պատրաստած կարմիր կտավի հետ, նուրբ էր ու որակով
Առավել—վարելահողերի արանքում թողնված խոպան, որ գութանի վարի ժամանակ սարվածքի շրջադարձին ծառայում էր որպես ազատ տարածություն
Առասամ—գութանի փայտե մանիկներից մեկը
Առճին—առաջին
Ասըլզադա—ազնվատոհմի որդի, տոհմիկ անձնավորություն
Ասլ—տոհմ
Ասլան բաշի—առյուծապես
Ասլան-կափլան—առյուծ-վագր
Ասլի—կանացի անուն. նաև տոհմիկ
Ասկ—ազգ
Ասլար—զենք
Ավ-որս
Ավալ—սկզբներում, նախնական ժամանակներում
Ավատա—հավատա, հավատացիր
Ավի բուլուրսըն—տունը գիտե՞ս
Ավլադ. ավլըդներաց—որդի, զավակ, զավակներին
Ավչի—որսորդ
Ավքարռավա—ոխակալվեցի
Ավքյար—ոխ, ոխակալություն
Ասավոր—աշխարհ
Ադամա մութ—Ադամի մութ. այսպես է համարվում լուսադեմին խտացված մութը

Արայ-Թարայ—խունջիկ-մունջիկ, կոարատվել
Արապախ—կտուրի եզր
Արժալ—օրհաս

Բ

Բարայողուրթ—անճպարար
Բադալ—փոխարեն
Բադան—պարիսպ
Բակրրդան—երկրե-երկիր իր անձնակազմով շրջող մեծամնորդ, ինչպես և մեծաքանակ վաճառող, առևտրական
Բաղում խալեր (պաղում խալեր)—բազմաթիվ խալեր. այսպես էին անվանում նաև գերեզմանոցներին
Բալաքյ—երկգույն, նաև՝ երկգույն մորթ ունեցող անասուն, բալաքյ էր կոչվում նաև սպիտակ ու կարմիր չերտեր (գույներ) ունեցող շալվարը
Բալմ—կտավատի ցարդոտված ցողուններ, որ օգտագործում էին ախոռների հողանների հատակին փռելու համար
Բայրյի—թերես, դուցե
Բախլուլեն—Նախանձություն, չկամություն
Բամիել—ափով արագ խփել, նաև շտապով վերցնել
Բայրաղ—դրոշակ
Բայրաղտար—դրոշակակիր, դրոշակ տանող
Բանավշա (թրգ.)—մանուշակ, բանավշա էին կոչվում հայ պեղջուկների մոտ ընդհանրացած կապույտ և կարմիր գույների խառնուրդ ունեցող, նուրբ մանուշակագույն շալվարները
Բաշ—ճակատին սպիտակ խալ ունեցող անասուն, բաշ է անվանվում նաև ձիերի վզի մազափունջը
Բատագի—չկազմակերպված, անտեր թողնված
Բառին—արևոտ, տաք երկրներ
Բար—բարիք
Բարաքյաթ—լի, առատ, շուտ չսպառվող
Բարրադ—ավերակ. բարրադ է կոչվում նաև դեղին ծաղիկ ունեցող մի թունավոր բույս, որին Արճակում անվանում էին խարրրուկ
Բալե—գոնե, գեթ
Բարեմրտր—հավասար
Բարով-բախլա—բարիքով պարաեղ
Բարուշել—սակարկել, նաև՝ հաշտվել
Բաքիր—մահմեդական արական անուն
Բեասրլ—անտոհմ, ստոր
Բեզիր—բեռնատար ձի
Բեշի-բիլիկ—հինգ լիրանոց օսմանյան ոսկեդրամ, որ կանայք օգտագործում էին որպես վզից կախելու զարդ
Բեռահմ—անգութ
Բեսլամա—ազախին
Բեր—այն պահը, երբ ոչխարները բերվում էին որոշ տեղ՝ կթելու համար
Բերվար—ոչխարները դաշտում կթելու գնացած կին
Բոռիկ—անջրդի վայրերում աճող մի բույս, որ օգտագործում էին իրրև ավել
Բիրի—մայր
Բիթուն—ամբողջը, բոլորը
Բիլա—մինչև անգամ, նույնիսկ
Բխով—երկաթյա մի զույգ ոտնակապ՝ իրար միացված կարճ շղթայով
Բյութան—փոխարեն, փոխհատուցում
Բնագում—անանր նախատեսված ազալիք հացահատիկ
Բող—խիստ շիկավուն գույն
Բող-բող հարին—Ասլան աղայի ձին, հավանաբար՝ բող-բռհարին, որ նշանակում է շիկավուն ծովային
Բողաղ-քյասան—կոկորդ կտրող. այդ անունով մի հայկական գյուղ կար Վանի նահանգում
Բոշ—շատվոր, նաև՝ անպետք
Բոշա—գնչու
Բոշենք—շատվորենք, Բոշենց տուն գոյություն ուներ Վանի Այգեստան թաղամասում
Բունիկ—մազի սախտակյա շրջանակին՝ մազացանցի փոխարեն կարված մազաղերծ կաշի, որը օգտագործվում է ալյուր, հացահատիկ և այլն տեղափոխելու համար
Բուրա—այստեղ

Գ

Գրխտիկ—Նորածին անասունի ստամոքսում կուտակված պինդ, պանրանման նյութ, որը համարվում էր պանրի ամենահիմնական մակարդիչը
Գլուխ անուշել—մխիթարանքի խոսքեր ասելու նպատակով այցի գնալ նոր մահացածի հարազատներին
Գյազ—Երկարության չափ՝ արշին
Գյաղնա—Արճակում մի ձորի անուն, որը համարվում էր սատանայարնակ
Գյալան գիդան—(թուրք.) եկող-գնացող
Գյալ բուրա— » արի այստեղ
Գյալի— » ձոր, միաժամանակ՝ հարս
Գյամրչի— » նավավոր
Գյամի— » նավ
Գյավառ—Վանի Հեքյարի սանջակի մի քրդաբնակ գավառի անուն
Գյնա—Նորից
Գյո, գյոհան—ահավասիկ
Գյորադ—հյուսվածքեղենի այն ձեր, որի հյուսքը շեղակի է
Գյոդ—ընկույզ
Գյոլ—լիճ, լճակ
Գյոմրուքչի—մաքսային աստիճանավոր
Գյոշա—անկյուն
Գյոռ, գյոռխանա—(թուրք.) գերեզման, գերեզմանոց
Գյուգում—երկարավիզ, մի կանթանի պղնձե կժաձև անոթ, որ օգտագործում էին թոնրան մեջ ջուր տաքացնելու համար
Գյուլ—վարդ, նաև՝ ծաղիկ
Գյուլրան—ծաղկազարդ, նաև՝ ծաղկազարդված
Գյուռ—մեջը փորված քարե մեծ սանդ, որի մեջ ջրում էին անասուններին,
Գոսաիլ—(քրդերեն) ապարանջան

Դ

Դալալ—մունետիկ
Դալամա—պանրի համար մակարդված կաթ, որ ավելի ջուտ դոնդողի է նմանում, քան մածնի
Դալկի—ալիք
Դալմա—Թևերի թեզանիքներին և շրջազծերին արծաթե եզրազարդեր ունեցող մահուդյա կանացի վերարկու
Դալվաթ—պետություն, իշխանություն
Դան—անգամ
Դանա—երկու տարեկան արու հորթ
Դանդանա—աչքերի վերևի կոպերին ներսից գոյացած մանր բշտիկներ
Դաննա—միակ, մի հատիկ
Դաստա—փունջ

Դաստուր—թույլտվություն
Դավա—ուղտ, նաև վեճ
Դավլաթ—հյուրասիրություն
Դավթար—մատյան
Դավքյ—սպիտակ կտորից կարված ժանյակազարդ վզկապ, որ Վանի նաև գավառի հարս-աղջիկները կապում էին զգեստի տակից, այնպես, որ միայն ժանյակները երևային. սա ստեղծում էր նոր ու մաքուր շապկի պատրանք
Դարահի—խիստ նրբահյուս մետաքսյա հյուսվածք
Դարաղ—բամբասանք
Դարբար—շրջակայք, շրջապատ
Դարբեդար—տեղահան եղած, կայանից հեռու ընկած, ավերակված
Դար-ղար—երեխաներին օրորելիս, քուն բերելու համար մրմնջացող ձայնարկություն
Դարմանկյեղ—Վանի Վան-Տոսպ գավառի մի հայկական գյուղի անուն
Դաֆ, դուֆ—թմբուկ
Դեխ—դեպի
Դեսա-դենա—այս կողմ-այն կողմ
Դերա բալաքյ—Վանի Թիմար գավառում գտնվող Տիրամոր վանքը մահմեդականներից այդպես էր կոչվում՝ իր շարվածքի քարերի երկգույն լինելու համար
Դերձան—կարելու թել
Դրխ—դեպի (Շատախի բարբառ)
Դըմփել—խփել, հարվածել
Դրոր—ուժ, ուժով
Դիզե—կարճլիկ
Դիլաքյ—փափագ
Դին—կրոն, հավատ
Դինո—(թրք.) խենթուկ. գործածվում էր որպես կանացի անուն
Դիշ-քրասի—ատամնավարձ
Դիվան—ատյան, խորհրդարան
Դոլվաթ—տան հարստության ոգի, նաև հարստություն
Դոշու—շնորհ տվող երեխայական ըմպելիք՝ օշարակ
Դողրի, դողրու—ուղիղ, ճիշտ
Դոնամա—պետական տոնակատարություն՝ հրավառությամբ
Դոշ թփել—կուրծք ծեծել
Դոշին—կրծքին
Դոր—ուր, որտեղ
Դո՞ր ի—որտե՞ղ է
Դորուս—դրանից հետո, այս անգամ էլ
Դվիթ—թանաքաման
Դուզ—ուղիղ
Դունյա—աշխարհ
Դուքընդար—խանութպան

Ե

Եթիմ—որբ
Եթմիշ իքի փուշուխ—յոթանասուներկու և կես
Ելագ—տղամարդու անթև և կրծքի կեսից բաց զգեստ՝ վերնաշապկի վրայից հագնելու համար
Եղունիկ—աղավնի
Ելչի—արքայական արտոնյալ լրատար, նաև դեսպան
Ելքյան—առագաստ
Եմին—երդում
Երթում-կասամ—կրկնակի երդվել
Եփ—երբ

Զ

Զաբիթ—սպա
Զախմաթ—նեղություն
Զանգին—հարուստ
Զանգըկլու—զանգակված, վզից զանգակ կախված
Զանգըննալ—հարստանալ
Զավղաղլամիշ—ավելորդաբանել
Զաղարրո—դեղնածաղիկ մի բույս, որ օգտագործում էին դեղին ներկ ստանալու համար
Զատու—հեռու, հեռավոր
Զարարքյար—վնասակար
Զարեն—ոսկյա զարդարանք
Զըհիրլամիշ—թունավորված
Զըմ (Շատախի բարբառ)—իմ
Զըմեն (Շատախի բարբառ)—բոլորը, ամբողջը
Զըպուն—կանացի հնօրյա զգեստ, որ հագնում էին Վանի նահանգի հայ գեղջկուհիները։ Զըպունը կարվում էր երկարությամբ բարակ գոլեր ունեցող մանիսյա կոչվող բամբակե կտորից, ինչպես նաև շամա և կութնի կոչվող մետաքսյա գործվածքներից։ Զըպունը լինում էր աստառով, առջևի ճեղքվածքը լրիվ, իսկ կողքերինը՝ մինչև ազդրերը
Զըքսեր (Շատախի բարբառ)—զարդեղեն
Զիան—վնաս
Զիարաթ—սրբավայր
Զիղինք—ինքն իրեն
Զինք—ինքը
Զիրախ—զրահ
Զոռ—դժվար
Զոռբա—ուժեղ, մեծ, նաև արտոնություն ունեցող մարդ
Զոքանչ-փերթի—ամուսնության օրը փեսայից զոքանչին նվիրված զգեստացու, որի արժեքը պետք է համարել մի փերթի. փերթը՝ ոսկեդրամին խիստ նման կնիք ունեցող հասարակ թիթեղյա դրամ էր, որ չքավորները ու մանկահասակները գործածում էին իբրև զարդ
Զուրարա—մեկօրյա, հավաքական նվիրաբերված աշխատանք
Զուլումաթ—մեծ դժբախտություն

Է

Էլ—քրդական ցեղ
Էլա-խսա—ասել կուզի, ուրեմն այդպես
Էլգուն-էլաչիր—հարազատ-ազգակից, արյունակից
Էլըմ—նորից
Էկան—եկան
Էնան—նաև
Էնիկ—նա
Էնկանդար—այնքան
Էք—դոմշակով
Էհեր (Շատախի բարբառ)—դնար
Էար—այդ
Էարա—դրա
Էրամ—երամ
Էրեժնակ—երեժնակ. խիստ փշալի, բայց անուշահամ կոթուններ տվող բույս, ուտվում է հում վիճակում ու աղ դրած
Էրենչիկ—երինչ
Էրին-էրերին—առանձին ոչինչ չնշանակող, երգի մեջ հնչող բառ
Էրկանքյ—երկանք

Էրմանց—Վան-Տոսպում գտնվող հայ-ասորախառն գյուղ
Էրախս—երդիք

Ը

Ըվքյոն—(Շատախի բարբառ) քո
Ըխտատեղրանք—ուխտատեղիներում
Ընթեղ—անթեղ
Ընքուռ-ընքուռ—հոնկուր-հոնկուր
Ըռահմ, ռոյմ—գութ
Ըռանքյ—գույն
Ըռհան—ռեհան
Ըռուպա—տպրուստ
Ըռուջա, ռուջա—խնդիր, խնդրանք
Ըսոսկրնա—այսպես
Ըսոսկընեմ—այսչափ
Ըսկի—բոլորովին, ամենևին
Ըսկուն—այնքան
Ըսպաթ—ապացույց
Ըստա—այստեղ
Ըտոսկնա—այդպիսի, այդպես
Ըտոսկընեմ—այդքան

Թ

Թաբարուք—ընտիր, հաղվագյուտ ապրանք. գործածվում էր հեգնական իմաստով
Թաբուռ—զորամաս
Թաղախաց—որևէ առիթով, որևէ սրբի խոստացված, նոր թխած հաց, որ մատաղացու նվիրած մսի պես բաժանում էին
Թաթ—դուլպա, նաև մարդու, թե գազանի ձեռք
Թալել—գցել
Թախըմ—գործածվում էր երկու իմաստով՝ արհեստի հետ կապված գործիքների խումբ և ընտանիքի, տոհմի խըմբակցություն
Թախկին—վայրկյանին
Թաղթա-փափուչ—տախտակե կոշիկ. չնայած անվանը, իրականում ընտիր կաշվից կարված, կրունկները բավականին բարձր և տակերը պողպատյա կիսալուսնաձև նալեր խփած, ռանդաթերի ուղղությամբ էլ մի քանի շարք կլորագլուխ մեխերով պատված կանացի տանու կոշիկ. թաղթա-փափուչը թանկ էր ու նորաձևություն էր
Թաղլիկ—լեռնային բլուրներով օղակված, ոչ շատ մեծ, սեղանատ մարգագետին
Թամանդա—հարգալից բարևելու ձև. Բարևողը իր ձախ ձեռքը դնում էր կրծքին, աջ ձեռքի ցոռս մատները հպում էր իր շուրթերին և ապա՝ ճակատին
Թամբեխ—պատվեր
Թայ—հավասար. հավասար տարիքի, հավասարակշիռ
Թային—օրապարեն
Թայր—տեսակ
Թաշտ—լողանալու և լվածք անելու պղնձե մեծ սան
Թաչըր—տան ներսում, պատերից մեկի առաջ կառուցված տախտակյա երկմասանի ամբար, ուր ցորեն ու ալյուր էին լցնում, թաչըրների յուրաքանչյուր մասի վերևում կար մի մեծ անցք՝ ապրանքը լցնելու, իսկ ներքևում փոքրիկ դռնակ՝ ապրանքը դուրս քաշելու համար
Թառմա—ախոռի չորս սյուների արանքում կապված քնելու հարմարանք. Լինում էին թառմաներ նաև այգիներում.
Թասլիմ անել—հանձնել
Թավուր—տեսակ
Թարանչա—սանդուղք
Թարաֆ-թարաֆեն—կողմ, կողմից
Թարբիալի—դաստիարակված
Թարեխ—դարաշրջան
Թար-թացան—մածնեղեն, այսինքն թացացնող
Թարաքյ—զավակ. հեծյալի ետևում դրված իր կամ մարդ
Թափադյող—գագաթին աչք ունեցող առասպելական հրեշ-մարդ
Թաքա—նոխազ, արու այծ
Թոֆ—տերև
Թելեգրաֆխանա—հեռագրատուն
Թըմըմել—լրացնել
Թընչուկ—թելերի խառն կապուկները ընդհանրապես, սակայն մասնավորապես՝ տուղտի արմատի ծեծված, թելիկների վերածված փոքրիկ կապուկներ, որոնցով գլուխներն էին լվանում գեղջկուհիները
Թընթոց—փայտյա տափակ ու երկարավուն կերակրախառնիչ
Թըրթել, թըրթեց—դրդել, դրդեց
Թեղ—կալսված, բայց դեռ հարդից չանջատված հարդի կոնաձև կույտ՝ կալատեղում
Թեշիր—թուրք անասնահավաք
Թո—թող
Թոմրան—վարտիք
Թոյ—հարսանիք, խնջույք, նաև ուրախ բացականչություն՝ թո՜յ, թո՜յ...
Թոներ—թոնիր
Թոռ-սադաֆին—մարգարիտի խեցուց հյուսված ժանյակ
Թուլում—շրջազգեստաձև մի հագուստ, որ Վանի ու շրջակայքի ժողովուրդը հագցնում էր երկսեռ մանկիկներին

Ժ

Ժամ—եկեղեցի
Ժառ—նիհար
Ժուկ—ժամանակ
Ժու-կուճափ անել—առանց հասունանալու պոկել

Ի

Ինալի (Արարատյան բարբառ)—կարող
Ինակավոր—Սուրբ Կարապետի վանքին տրված տիտղոսներից մեկը՝ ինը ակ (աղբյուր) ունեցող
Ինատ—խռով
Ինգնավոր—ընկնավոր
Ինե—մեջ
Ինեմ—ընկնեմ
Ինըս-ջինս—ցեղ, ծագում, ազգ-տոհմ
Իմնի—իմանալի
Ինչըխ—ինչպես
Իշլիկ—աստառով կարված երկարաթև և մինչև ազդրերը հասնող զգեստ, որ հագնում էին շապիկի վրայից և՛ կանայք, և՛ տղամարդիկ
Իշաահ—ախորժակ
Իտոնք—դրանք
Ի սուր—ավեց
Իրես—երես

Լ

Լազըմ—պետք, հարկավոր
Լալ—համր, նաև՝ մեղեսիկ. թանկագին ակունք, որ կանայք շարում էին մարգարիտի հետ՝ մեջընդմեջ. լալը լինում էր տարբեր գույնի՝ կանաչ, կարմիր, կապույտ և այլն

Լաճ—աղա
Լահոռի—մեջքին կապվելիք ընտիր շալի մի տեսակ. այդ-պիսի ընտիր գործվածքները ճանաչում էին դաած իրենց գործվելիք քաղաքների անուններով, ինչպես օրինակ՝ քիրմանի շալ, լահոռի շալ, շամի կութնի և այլն
Լամուկ—մահմեդականի երեխա, մահմեդականի աղա
Լայեղ—արժանի
Լավանդ—քաղաքի անուն
Լար—ախոռների բաժանմունքներ
Լարան—մաղե հաստ ու ամուր դերձան, որով կարում էին ջվալների բերանները. լարանի մի ծայրին մեծ կաշկոռ էր լինում, մյուս ծայրին՝ բարակ թել, որ մացնում էին մախաթի անցքի մեջ
Լըխեփ—վերմակ
Լըծառ—լծի շփումից կոշտացած, անասունի վզի տրորված տեղ
Լըպ—բուռ
Լհանա—կաղամբ
Լյանղառի—պղնձյա լայնաշուրթ սկավառակ, որի մեջ ձվա-ծեղ էին անում
Լրք—լայնակի գցված քայլ, մեծ քայլ

Խ

Խաղինա—գանձ
Խալավ—հագուստ
Խալթ—հիմարություն
Խալիվոր—ծերունի
Խալ-խալ—շատ բարակ ապարանջաններ, որոնք մեկից մի քանի հատ անց էին կացնում լայն ապարանջանների աջ ու ձախ կողմերում
Խաղք—ծիծաղելի դրություն. խաղք էին անվանում նաև բարեկենդանի օրերին ծիծաղաշարժ տեսարան ներկա-յացնող երիտասարդներին։ Նրանք ծպտված էին լինում մորթե թիկնոցում և դեմքը ծածկում այծի մորթուց պատ-րաստված յուրատեսակ դիմակով, որի վրա, տեսնելու համար, երկու անցք էր բացված։ Խաղք էր կոչվում և ներկայացումը
Խամ—հասարակ, անորակ, նաև՝ հում
Խամրրրա (Շամախի բարբառ)—համրիր
Խամփըրրա— » համրերիր
Խամփուրրա— » համրուրիր
Խանչալի պուռ—դաշույնի դաստակ
Խանք—հանգստանալ. աշխատելիս կամ քայլելիս մի քիչ հան-գիստ առնել
Խաշկ— հասկ
Խաշին—մարդատեսին
Խառց—հարց, հարցմունք
Խասուկ—հասունացած
Խավիծ—յուղով բոված ալյուր՝ տաք շաքարաջրով թուլաց-րած փափուկ ճաշ
Խավի ծրվու—հավի ձվի, հավկիթի
Խավրծիլ—լեռնային ախորժելի թթվաշահամ բույսի խավոտ ու դալար կոթուն
Խավք—թռչուն
Խարեղան—մարակ. մշակված կաշվի բարակ զոլերից հյուս-սում էին մի մասի հաստության թոկ, որի մի ծայրին թողնում էին կաշվի հավելվածք. մյուս ծայրը կապում փայտյա ձողիկին և այդ մարակ-խարաղանով էլ քշում անասուններին
Խարսխուր—հարսին տուն բերելու համար գնացած հյուրեր
Խըղրաց—միասին, մեկտեղ
Խըթում—զատկի նախորդ երեկոյի կերուխում, որով պասը վերջանում էր
Խըլա—շատախցիներից գործածվող ոչ որոշակի իմաստ արտահայտող խոսք որ արտասանում էին նախադասու-թյան սկզբում
Խըլըսում (Շամախի բարբառ)—վերջանում
Խըլըսուն—առավոտ, լուսաբաց
Խըմթուրծ—տաք մոխրով ու աղաջրով կամ մանկան մեզով շաղախ, որ կապում էին մարմնի որևէ մասի վրա, եթե ջնջխվածք էր ստացել
Խըռընղատ—բարձր և հաստ կոթունավոր դեղին բազմածա-ղիկ բույս. խըռընղատ անասունները չեն ուտում. նա պետքական է միայն որպես վառելիք։ Կա նաև կոթուն լավող խըռընղատի մի այլ տեսակ, որին անվանում են որձ խըռընղատ. հեքիմները դա օգտագործում էին որպես դեղանյութ
Խըռընցավ—հարբուխ
Խըռխա—Բամբակած, լայնափեշ և երկար վերնազգեստ, որը հատկանշական է արևելյան ժողովուրդներին
Խըռշկուկ—բկացավ
Խըռֆուկ—ծերությունից շշմած
Խինա—հինա
Խին-խոռ—հին և բերանը կոտրած կավե աման
Խող—հող
Խոնչան—վարտիքների ու ջալվարների վերնամասում անց-կացվող բարակ թոկ, որով ավլալ հագուստը ամրացնում էին մեջքին
Խոշ-խաթուն—քաղցրիկ, գեղանի տիկին
Խումար—կիսահարբած, անցած օրվա խմիչքի զգացողություն, նաև՝ քիչ շիլ աչք, նաև կանացի անուն
Խունը—հրեղեն
Խուսաուկ—աչքացավից առաջացող կսկծոցի զգացողություն. խուսաուկը մեղմելու համար ցավող աչքի մեջ մայրական կաթ էին լցնում, ընդ որում աղջիկ երեխայի մոր կրծքի կաթը և այն էլ՝ տաք-տաք
Խուրիկ—դութանին լծված չորս լուծերից մեկը. խուրիկը ամենաառաջին ընկնող լուծն էր. խուրիկի վրա չէր ընկնում մաճը շարժելու ծանրությունը, այլ նրան էր մնում ուղ-ղություն պահպանելը
Խրեղեն—հրեղեն

Ծ

Ծայ—ծակ
Ծար—ձիու պոչի մազ
Ծեթ—ձեթ, նաև՝ մանր
Ծեռիկս—ձեռիկս, ձեռքս
Ծեր—ձեր, նաև ծայր
Ծըծում—լայնաբերան կժի ձև ունեցող մի կանթանի փոքրիկ խնոցի, որը ոչ թե կախում. էին ցցերից. այլ ուղղակի դնում էին հատակին ու հարում
Ծըռծակ—ջրծակ, անցք՝ ջրի համար. շինության դրսի պատի ներքևից բաց թողնված անցք, որտեղից պետք է ջրերը դուրս հոսեին
Ծին—պիսակ, խալ
Ծոցվոր—հղի
Ծուռ—գիժ

Կ

Կաբահաթ—հանցանք
Կալամ—գրիչ

Կալան—ղալան, այն ղումարը, որ փեսան պարտավոր էր վճարել հարսնացուի ծնողներին
Կալատ—արտ
Կալտարիգ—շղթայով միմյանց կապված մատղաշ անասունների խումբ, որ գնում էր կամի առջևից և կոխկրճում ցողունը
Կախպա—անբարոյական կին
Կամ—կալսելու ընդհանրացված տախտակյա կալսիչ. կամի արտաքին կողմը հարթ էր, որի վրա կանգնում էր կամ բշողը, իսկ ներսի կողմի վրա խիտ առ խիտ ամրացված էին լինում փոքրիկ ու սրածայր կայծքարեր։ Կամը քաշում էին երկու եզ
Կամշուռ—պետության կողմից սահմանված անասնահարկ
Կայա—հսկա, ժայռանման քար
Կայդա—նմանօրինակ
Կայիմ—ամուր
Կայրի—բացի
Կան—արյուն
Կանչրակ—արեածաղկին ցեղակից յուղատու բույս
Կառցար—կարողացար
Կառամ—երդում, կրկնակի երդում։
Կասաֆաթ—հոգս
Կավըլ—ուխտ, երդում
Կավուշ—ոստիկանատուն
Կատղուկ—ղաղաղած, կատաղած
Կաֆաս—վանդակ
Կեհա—կգնա, գնում է
Կըզըլ-ղիզա—Հին Բայազետի մոտակա քրդական մի գյուղի անուն է. բառացի նշանակում է՝ ոսկու գող
Կըշաիկ—ստամոքսում ամրացած կղկղանքի աննշան կտոր
Կըթերրոի—կզարմանա, կապշի
Կըլըղ—սարաղ
Կըլիչյաղ—թրի յուղ, ապեղանի, որով բուժում էին թրով կտրված վերքերը
Կըճա—մուսուլմանուհի
Կընդընելա—կորած իրը գտնողին տրվելիք վարձ
Կըշլա—զորանոց
Կըռաթի—սպիտակ ձի
Կըռալ—թագավոր, թագավորություն, տերություն
Կըռըմ—թուրքական հնօրյա խոշոր ոսկեդրամ, որ կանայք գործածում էին որպես մանյակ
Կըռճոն—մսուրների միջի անասնակերի ավելցուկ
Կըռտան—ամորձատված անասուն
Կըսա—պատմել, պատմություն, խոսակցություն
Կըփրոքըրվի—կտապալվի, կընկնի
Կիշըրվան կյեշ—այլանդակ չար ոգիներ, որոնք գիշերները հայտնվում էին միայնակ մարդկանց
Կյախ—ժամանակ
Կյախ-կյախ—երբեմն-երբեմն, ժամանակ առ ժամանակ
Կյաղտոր—գաղտագործ, խորամանկ
Կյաղաիկ—թաքուն, գաղտնի
Կյապուտակ—խավրծիլ կոչվող լեռնային բույսի մաղալափ, գետնատարած տերև
Կյեա—գեա
Կյերի—գերի
Կյին—գին, արժեք
Կյոն—գույն
Կյոտան կաել—ջերեփուկ
Կյոքյ—գոգ
Կոլըտխ—մարջանից, սաթից և այլ զանազան արժեքավոր հուլունքներից կազմված բաղկակապ, որ օգտագործում էին գերազանցապես քրդուհիները
Կոմշու կուտոփ—գոմեշի թարմ աղբ
Կոն—վրան
Կոնախ—հյուր
Կոնղոռա—աղամտըգու նորաձև կոշիկ։ Կոնղոռա էին հագնում նաև քուրդ կանայք
Կոպալ—կլորագլուխ, հաստ մահակ
Կոռ-բեքյար—հարկադիր, չվարձատրվող աշխատանք
Կոռթ—կոշտացած, խոպան հող
Կոտըր ընկնել—սնանկանալ
Կոտիկ—հայկական գյուղերի հնատարազ կանայք, չոմբարի տակից իրենց գլխին ատխտակյա կլոր օղակ էին դնում՝ գագաթին տափակ ձև տալու համար
Կոր—կույր
Կութնի—հենքը մետաքս, գործվածքը բամբակե թելերից՝ բավական հաստ ու փայլուն կտոր, որից հայ կանայք զպուն էին կարում. կութնին լինում էր կարմիր, մեջը՝ սև, սպիտակ կամ այլ գույնի երկար շերտերով
Կուլ—ղուլ, ծառա
Կուկու—փոքրիկ մանկիկներին տրվող փաղաքշական հորջորջում
Կույանոց—ախոռի այն փոքր ինչ փոս ընկած մասը, ուր կուտակում էին օրվա ընթացքում գոյացող անասնաղբը
Կոռն—եվրոպական մետաքսյա գունազարդ գործվածք
Կտրած ֆաս—նահապետականությունը պահպանած հայկական գյուղերի աղջիկները գլխներին ֆես էին դնում, և այն էլ՝ կարած, կարճացրած
Կուշթուրքի—բառացի՝ փետրաբարձ. սակայն հայերը բարձը պատրաստում էին փափուկ և ընտիր բրդից
Կուռիկ—կավե հաստարակ փոքրիկ խոր աման. լինում էին և ջնարակված
Կուռուղ—համայնքի մարգագետին, ուր արգելված էր անասուն արածեցնել
Կուռուղչի—համայնքի կողմից վարձված դաշտային պահակ. կուռուղչին պահպանում էր և՛ կուռուղը (արգելված արոտավայրը), և՛ ցանքատարածությունները՝ օրինազանց հոտաղներից
Կուռուղու—կաթնատու վայրի մի բույսի ուտվող կոճղարմատ
Կուվաթ—ուժ, զորություն
Կուտապ—խաշած ոսպով ու համեմունքով թխված պտավա բաղարջ

Հ

Հալտրու—Հալեպի
Հալրաթ—անշուշտ, իհարկե
Համրա—մեծատոհմ
Համիդիե—քրդական ցեղ, որ սուլթան Համիդի կողմից զինվել էր որպես իր անվան աղաա զորախումբ
Հայա—պատկառանք
Հայլոր—աքաղաղ
Հանսա—անպայման
Հավա—օր, եղանակ
Հավար—հեռվից օգնություն խնդրողի կանչ
Հեսաբ—հաշիվ
Հեվար—մայրամուտ, իրիկնամուտ
Հեր—այր, քարայր
Հերերվի—երերվի
Հլին—լիքը
Հրնթին—թևի տակին

Հընձիկ—(Շատախի բարբառ) ինձ
Հըհնչիկ—հանելուկային, զարմանալի
Հըմեն—բոլոր
Հըրպով—արագ, միանգամից խուժել
Հյամ, (համ)—նաև
Հյանգում—անկյուն
Հողա—սենյակ, օթյակ
Հորի—(Շատախի բարբառ) ինչու

Ջ

Ջըղնե, ձըկնե—ինձանից
Ջիկ—ինձ

Ճ

Ճայտի կապ—ճակատակապ. ճայտի կապ էր կոչվում թե՛ տարեց կանանց լոմբարների տակից ուղիղ ճակատին կապվող փոքրիկ, եռանկյունի շորը և թե՛ աղջիկների մազերի վրա կապվող թավշյա, երկու մատի լայնություն ունեցող կապը
Ճայտի կիր—ճակատագիր
Ճեղպաց—աղղրերը բաց, անվարաիկ
Ճեա—ճուա
Ճերերալ—կիսաքուն ժամանակ կամացուկ տնքանքալ
Ճըլճըլուկ—մարգագետնային բույս. մանուշակագույն ծաղիկներ ավող այդ բույսի բավական երկարավուն ու խիստ ամուր տերևներից աշնանը հյուսում էին բութ մատի հաստություն ունեցող չվաններ, որ օգտագործում էին, որպես խսիրի հենք. նույն այդ չվանների մի քանիսի միացումից ստանում էին ջրհորից ջուր քաշելու հաստ չվան
Ճըղոր—Թարեկենդանի զվարճալիքներից մեկը. ճըղորը հատակապես կանացի զվարճալիք էր։ Երդիկից կախում էին երկճյուղ ամուր չվան. գետնից բարձր, ամեն ճյուղի մեջ մի հոգի էր նստում ու իր ոտքը պարզում դիմացինի նստած ճյուղի մեջ, այսպիսով միանում էին իրար. երկու հոգի էլ կանգնում էին ճղորից բավական հեռու և դեպի իրար հրում ճղորը։ Այսպիսով, նստածները անընդհատ տարուբերվում էին և գլուխները երբեմն մոտենում էր առաստաղին. նստածները թռչելիս երգում էին, հետո այդ զույգին փոխարինում էին ուրիշները
Ճըվաուկ—ճըվված, պոկըռավաժ
Ճիժ—երեխա
Ճիլ—ճահճային բույս՝ խիստ երկար ու ամրաթել տերևներով, որից խսիր էին հյուսում։
Ճմուռ—յուղով ու փոխինդով ճմըռված տաք հաց
Ճոչ—մեծ
Ճութ—ժանյակ
Ճուր—ջուր

Մ

Մագեն կախուկ—դեմքը խոժոռած (Շատախի բարբառ)
Մաղրակա—լավաշի բացված խմորը թոնրան կողքին կպցնելու բարձի ձև ունեցող հարմարանք
Մաթրաթ—խոր ու մեծկակ խեցեղեն կերակրաման
Մալավա—սակավաջուր. Արճակին մոտիկ քրդական մի գյուղի անուն էր
Մաղաղա—նկուղ
Մաղչա—եռանկյունի չթե գլխակապ, որ գործածում էին տարեց կանայք, կապելով լոմբարի տակ
Մամլաքյաթ—հայրենի երկիր
Մայասուլ—հիվանդություն՝ թութք
Մայլա—թաղ, թաղամաս
Մանխա—ղծավոր, հասարակ կտոր, որից գեղջկուհիները կարում էին իրենց զպունները։ Մանխան իր անունը ստացել էր Թուրքիայի Մասախա քաղաքից
Մանճ—մաս, կութանի կարևոր մաս
Մանճկալ—կութանի աշխատանքի ժամանակ մանը բռնող հողագործ
Մաշլիս—իշխանավորներից գումարված խորհրդակցություն. մաշլիս էին կոչվում և ռեսի օգնականները
Մեղար—քաստկասի կաավե կտոր, որով կանայք հաց էին տանում դաշտի աշխատավորներին։ Մեղարով էին բանջարը տուն հասցնում, սերմնացանները մեղար էին կապում, հատիկը մեջը լցնում, տարեցները նույնիսկ գոգնոցին մեղար էին անվանում
Մեղել—խորհել, մտածել
Մեճացըս—մեջքիս
Մեյ պոր—մի պահ
Մեյ խաա—մի հատ
Մեյ տիր—մեկ անգամ
Մեյխանաչի—գինեպան տեր, գինետուն պահող
Մեռուկ—մեռած
Մեսակ—մետաքսյա կիսածածկոց, որ իրենց գլխին էին վերցրել վանեցի օրիորդները։ Մեսակին փոխարինել էին ավսյա մետաքսախառն քառակուսի շալերը
Մգրախ—նիզակ
Մըզրախդար—նիզակակիր
Մըլի—մացրու
Մըխա—մի հաա
Մըկա—հիմա
Մըրանի—մկուրի առաջամասի մեծ ու տափակ սալ
Միլլաթ—ժողովուրդ
Միճնապլիթ—հիսունօրյա մեծ պա՞քի քսանհինգերորդ օրը կոչվում էր միճինք. այդ օրը թխվում էր մի մեծ ու բախտագուշակ բլիթ՝ միճնապլիթ
Մինղար—ներքնակիկ
Մյանչ—մեջ (Շատախի բարբառ)
Մյասաակ—երկար, փայտե ձող
Մյուգուր—գավառապետ
Մյուգուրլըք—գավառապետական պաշտոնատուն
Մոլա—տան պատերն ու կտուրը հարդախառն կավաշաղախով պատելը
Մոլիչ—սվաղ անելու գործիք՝ հաստ թիթեղյա մի փոքրիկ տախտակ, վրան ամրացված փայտյա բռնակ
Մոլլա—մահմեդական հոգևորական
Մոյր—կնիք
Մոն—վաա, վատություն անող անձ
Մուլք—կալվածք
Մուղսի—Երուսաղեմ ուխտի գնացած մարդ
Մունաթ—խնդիրք, աղաչանք
Մունութեն—վատություն
Մուրաղ—փափագ, նաև արական անուն է

Յ

Յա—կամ
Յաղմա—գունագեղ, ծաղկազարդ, նուրբ մարմաշյա գլխաշոր, որ հյուսում էին պոլսահայ արհեստավորները
Յալանչի—սամխոս,սաելում վարժ. նաև լարախաղացին ուղեկցող
Յալգուղ—ասաղ, նաև ոսկի
Յալվար-յախա—աղաչանք-պաղատանքով օձիքից կախ ընկնել

Յաղութ—գունավոր, թանկարժեք ակնեղեն
Յան—կողմ, նաև՝ կամ

Յաներ—կողմեր
Յանլիշութեն—սխալմունք
Յարարի—արդյոք
Յուզ-դուզ—հարյուրը լրիվ

Ն

Նալչավոր—երկաթյա կրնկատակերով ոտնաման
Նաղըլ—պատմություն
Նախս—նենգ
Նախրակյնա—գյուղերում նախիրը հավաքվելու հրապարակ, որտեղից նախրապանը նախիրը քշում էր դեպի արոտավայր
Նամարդ—տմարդի, անմարդկային
Նամիկ—տափականիստ ցածրադիր և լայնաբերան պուտուկ, որի մեջ ուտելիք կին տապակում
Նանա—մայր
Նայ—եկեղեցական պարզ պատգարակ, որի մեջ դնելով ննջեցյալին՝ տանից տանում կին եկեղեցի և եկեղեցուց էլ՝ գերեզմանոց
Նավաղի—մրսելուց կամ նյարդային հողի վրա առաջ եկած ամբողջ ատամների ցավ
Նաֆիլա—իզուր
Նիաթ—աչքով տալ
Նյա, նա—ոչ այս, ոչ այն
Նոբաղար—նոբաղար էր կոչվում և՛ գյուղի շուրջը շրջող զինյալ պահակը, և՛ ցանքերի ու արոտավայրերի հսկիչը, և՛ անգամ բոստանների հսկիչ պահապան՝ վարձու պահակը
Նոքար—ծառա
Նվեժ—մահմեդականի աղոթք
Նուկի—չորսհարյուր գրամանոց կլորավուն կշռաքար կամ այդքան հեղուկ չափելու աման
Նուֆուս—պետական հարկի մի տեսակի անուն է

Շ

Շահնա—հացահատիկի տուրքը հավաքող թուրք պաշտոնյա
Շանց տալ—ցույց տալ
Շարագա—ճարպիկ, խորամանկող
Շեղջ—հացահատիկի մեծ կիտվածք
Շըրլեխ—շիրը՝ թարմ ձվի հետ հարած, որ ճանաչում էր դատած, որպես աչքի ցավը մեղմող միջոց
Շըլվալ—(Շատախի բարբառ) շալվար
Շըշկոցուցեր են—շփոթեցրել են
Շրաթա—ստամոքսի մեջ եղած կիսամարս ուտելիք
Շըփըռ-թըփըռ—աշխատասեր ու ճիշտ շարժումներ կատարող և ամեն ինչ չարդող-թափող
Շըֆայրա—կասկածամիտ
Շիման—շեմքին, դռան մեջ
Շիշ—թոնիր խառնելու երկաթյա կեռաղլուխ շամփուր
Շիրիկ—ժառանգության իրավահավասար տեր
Շոր—սարափոխիկ, բայց ոչ հարատև հիվանդություն
Շոր—աղի
Շուշփա—մետաքսյա նուրբ թաշկինակ, որով սրբությունները էին փաթաթում

Ո

Ոժտուն—ուժ տվող. դութանին լծված այն զույգը, որ իր ետևից քաշում էր խոփը, ոժան վրա է ընկնում դութանի ծանրության մեծ մասը
Ողղե—ժամկետ
Ոնչ—ոչ
Ոսկեպյան—ոսկեհյուս, ոսկով բանված

Չ

Չաթան—ավազակ
Չակեա-միսո—կանացի վերնաշապիկ և կիսաշրջազգեստ
Չամ—ծառատեսակ, որից պատրաստում էին գլուխ սանրելու գեղեցիկ սանրեր
Չաշալ—ճաղատ
Չավրա—երեսսրբիչ
Չարոխ—տրեխ
Չաքյ—տրտաքին հանդերձանքի կողքերից բաց թողնված ճեղքվածք։ Չաքյ էր կոչվում նաև գզրարների կլորագլուխ գործիքը, որ խփելով աղեղի լարին՝ բուրդ ու բամբակ էին գզում
Չաքյան—ամուր, կպչուն նյութ պարունակող սերմնահատիկ, որ ներմուծվում էր ու վաճառվում Վանի շուկայում։ Չաքյանը ծեծում էին սև ծամոն կոչվող բուսակաթից պատրաստված յախուլի հետ
Չէ-չխո—արդեն (Շատախի բարբառ)
Չըլաշ—ջրաղաց. չըլաշներ էին կոչվում այն բազմաթիվ ջրաղացները, որ գտնվում էին Վանի Շամիրամա թաղ կոչվող թուրքական թաղամասում, «Շամիրամա ջրի» հոսքի վրա
Չըլուտ—մերկ
Չըխաս—չհաս. արյունակից այնպիսի ազգականներ, որոնց ամուսնությունը եկեղեցին չի թույլատրում
Չըղ—բարակ փայտերից իրար կապված միջնորմ, որ կապելով գոմի անկյունում, այնտեղ կին պահում նորածին գառներին
Չըֆայմա—չմտածեցի, գլխի չընկա
Չիթ զարկիցին—չիթ խփեցին։ Հին անայնագործ ջուլհակները փայտյա փոքրիկ կնիքը թաթախելով սև ներկի մեջ, խփում էին սպիտակ կտավի վրա, նախշեր գոյացնում և ապա այդ կտորը ներկում էին կարմիր գույնով։ Կտորը կոչվում էր չիթ
Չիման—մարգագետին
Չխփացել—սիրար կպել, սիրահարվել
Չոլ—դաշտ։ Չոլ էր կոչվում նաև ախոռի այն բաժանմունքը, ուր անասուններին էին լողացնում։ Չոլումն էին լողանում նաև գյուղացիներն իրենք, և դրա համար էլ չոլ հասկացողությունը համընկնում էր բաղնիք հասկացողության հետ
Չոթրրիկ—կավե ոչ շատ մեծ երկկանթանի տափակ սան, որ գործածում կին տնային զանազան կարիքների դեպքում, ամենաշատը՝ չորթան արորելիս
Չոմբար—եռանկյունի, ծաղկավոր չթից կարած գլխաշոր, որ հնաարաղ կանայք կապում կին յաղմայի տակից, այնպես, որ եզրերը՝ երկու մատնաչափ երևար
Չոպանօղլի—հովվի զավակ. նաև հայկական գյուղի անուն՝ Վանի գավառում
Չում—մինչև
Չումքյի—որովհետև
Չուռ—անգորական այծ, նաև նրա փափուկ, փայլուն ու գանգուր բուրդ։ Չուռ էին կոչվում նաև այդ բրդից

նմանվող ոչ միայն քյաղալիկները, այլ նաև ամեն ինչ, որ զանգլամաղ էր
Ձուր—մինչև, երբ
Ձքարա—ծխախոտի գլանակ

Պ

Պամբակ—բամբակ
Պայ—լուսնի շուրջը կապած լուսապսակ, նաև բակ
Պարիկուն—բարի հսկո
Պենով—բերանով
Պետ—խոշոր, խոշորահատիկ
Պըլուկ—փլված
Պըծառ—պեծ, կայծ
Պրճեղ—անասունի սանապճեղ. մի պճեղ էր կոչվում նաև արճակցոց ջրի իրավունքի յուրաքանչյուր 12 ժամը. այդ իրավունքը որոշված էր պապերի օրոք. ջրատերը իր ջրի չափը ընդմիշտ վաճառելու իրավունք չուներ, բայց յուրաքանչյուր տարի ուզած մարդուն ընծայաբերելու իրավունք ուներ
Պըսախն—հրակայուն մի հող, որից շինում էին և՛ թոնիրները, և՛ տան գործածելիք պուտուկները
Պըռառուճ—պասատ
Պըտուկ—սախնքապտուկ, նաև՝ ծաղկի կոկոն. պըտուկ է կոչվում նաև վայրի կակաչի մի տեսակ, որի կոկոնները, դեռ չբացված ուտում են
Պիլիմասա—հեքիմների կողմից օգտագործվող սպեղանի. պիլիմասաը եփվում էր կարագով, սոխով, ալյուրով ու մածունով, ստացված խավիծանման այդ զանգվածը կապում էին վերքի վրա
Պիճ—ապորինի դավակ
Պյան-թող—աշխատանքային օրվա ավարտ
Պյաշխի—շնորհիր, նվիրի
Պյաոց-փոխ—բարձ փոխել, ամուսնական անկողինը արատավորել
Պյուլոր—շուրջ
Պոզ-բիբի—անբարոյական կնոջ մայր, նաև անբարոյական կանանց հովանավորող կին
Պողիկ—թեյնիկաձև պոզ ունեցող, ջուր խմելու խեցեղեն փարչ, աման
Պոծառ—պայծառ
Պող (պողուկ)—հայերի ու ադրբեջանցիների կողմից ճանաչում զաած աղ դնելու բանջար
Պուրթ—բուրդ
Պրներ—ըներ
Պոչիկ—մազերի ծայրերին հյուսվող եռաճյուղ կտոր
Պուպուշ—փոքրիկ, գեղեցիկ
Պուրթ—բուրդ

Ջ

Ջաղամաթ—բազմություն
Ջադդա—լայնուղի, նաև բաց
Ջամ—ապակի
Ջամի—մզկիթ
Ջան—հոգի, շունչ
Ջանավար—հրեշ, երևակայական այլանդակ կենդանի
Ջանդակ—դիակ
Ջառահ—թարախ
Ջաոչառ—կալսելու հարմարանք. ջաոչառը կազմված էր պտտվող երկու ձողերի վրա շարված, ուրագանման պողպատերան ջարդիչներից, իսկ դրանց հետևում կար նստելու հատուկ աթոռակ. ջաոչառին ես լծում էին երկու եզ
Ջըղմեյթեր—երկարաճիտ կոշիկներ
Ջըլրուր—ուտիս օրվա կերակրատեսակ, որի մեջ ձու շատ էր գործածվում
Ջըհեղ—օժիտ
Ջըհել-ջուհուլ—երիտասարդներ
Ջըդա—երիզագարդ
Ջըաա—մի կանթանի, լայնաբերան և կժանման խեցեղեն անոթ, որով բերվոր կանայք շալակով կաթ էին բերում
Ջըրբել—փորձել
Ջըվալ—այծի մազից հյուսված կոշտ ու ամուր պարկ, որով ցորեն ու ալյուր էին փոխադրում մի տեղից մի այլ տեղ
Ջինար—հարևան
Ջոր—ղրպան
Ջոլ—ձիերի երամակ. ջոլ էր կոչվում այն խմբակցությունը, որի շուրջն էին հավաքվում որոշ ոչխարատերեր
Ջույար—պատասխան

Ռ

Ռարան—խղճուկ
Ռահըմ—գութ
Ռամազան—մահմեդականների ծոմապահություն
Ռաստ գալ—հանդիպել
Ռասութ—կարմիր դեղափոշի, որ կին հեքիմները գործածում էին աչքի կոպերը բուժելիս
Ռենչբար—հողագործ
Ռես—գյուղապետ

Ս

Սաթըրչամ—թոքերի բորբոքում
Սախեն—հողե մեծ տաշտ՝ շողանալու և լվածք անելու համար
Սակառ—մեծ կողով անասնակեր փոխադրելու համար
Սանաթ—մուրհակ
Սանդրխքյար—պետական գանձապահի պաշտոնակատար
Սանյաթ—արհեստ
Սանյաթքյար—արհեստավոր
Սավդալի—սիրուց խելագարված
Սաարաղամ—թուրք բարձրաստիճան զինվորական
Սարակ—օրավարձով աշխատող
Սարայ—դղյակ, պալատ, ինչպես նաև Վանի նահանգում Պարսկաստանին սահմանամերձ մի փոքր քաղաքի անուն
Սարաղունչ—գործածությունից արդեն դուրս եկած մի գլխազարդ, որ դեռ պահպանել էին Թիմարի հնաարաղ պառավները. սարաղունչը մահուդյա երկարավուն կտոր էր, երիզապատված սիմերով և զարդարված արծաթյա զարդերով. սարաղունչը կախ էին դցում մազերի վրայից, որը ետևից հասնում էր մինչև գոտկատեղ
Սարեկ—սարյակ, նաև ոչխարի սատմոքսի մաքրած, աղով մշակված մի կտոր, որով փակում էին յուղի ամանների բերանները
Սարին—զեփյուռ, հով
Սարծիլ—զութանը քաշող չորս լծերից մեկի անունն է
Սեյր-անել—հաճույք ստանալ, վայելել
Սեյրագ—նոսր
Սեռիկ—լայնափոր, նեղաբերան անկանթ խեցեղեն աման
Սիվաթլու—արծաթյա իրերի վրա քսվող սև ներկ
Սև կոիկ—սև ագռավ, այդպես էին անվանում սերմնագողավներին

Սեվատավար—եղ, կով, հորթ և այլն, սև խոսքով՝ ոչ դոմշեղեն
Սեֆիլ—դժբախտ, խեղճ
Սըլա—սալա։ Սալան գործում էին դալար ու մաքրված ուռենու ճյուղերից և օգտագործում անային պայմաններում
Սըխթ—հավատ
Սըմբուլ—փետրախոտ
Սընոր—սահման
Սըռկեց—գաղտնիքին իրազեկ
Սըփ—սուրբ
Սիլա—ապտակ. սիլա է կոչվում նաև այն վիճակը՝ երբ ամանի մեջ լցված ապրանքը՝ մինչև շուրթերը լիքը-լիքն է
Սիլախ—զենք
Սինամախավք—սիրամարգ
Սորա—թիթեղյա վառարան
Սոլ—հասարակ ոտնամանի մի տեսակ
Սախաթան—թարմ պինթանի և եռացրած կաթի խառնուրդ, որ պահում էին նորաթուրծ ու ճաքեր ունեցող պուտուկների մեջ և աշնան կողմերը, երբ անասունները ցամաքում էին, գործածում մածնի փոխարեն
Սոկ—սնձանման կաթնատու բույսի մի տեսակ, որի հյութից պատրաստում էին և՛ ծամելու ծամոն, և՛ բուժիչ յախսուն
Սողրաթ—ուրախ կերուխումի հավաքույթ, խնջույք
Սողսրակ—խողովակ, նեղ ու երկար անցք ունեցող իր
Սոյ—տոհմ
Սոն-սոնա—վերջիվերջո
Սպահանի—կարմիր ուռենի, որ գործածության մեջ ավելի հարգի էր քան սովորական ուռենու փայտ
Սուլուլիկ—սրածայր
Սուրահի—երկարավիզ ու անկանթ աման։ Սուրահիները ներմուծվող ամաններն էին. նրանք պատրաստվում էին քարը կավի հետ խառնած. և՛ ներսից, և՛ դրսից կոկ ու փայլուն էին. սուրահիները խմիչք լցնելու խիստ հարգի անոթ էին ու թանկ էին գնահատվում

Վ

Վաղա—ժամկետ
Վալաղ—ուղեկա, ճանապարհն իմացող
Վալահ-բիլա-թալահ—մուսուլմանական կրկնակի երդում՝ ինչպես ասվում է՝ աստված, Քրիստոս, սուրբ հողի
Վանից—վանքին, վանքապատկան
Վասալամ—ինչևէ, նաև՝ շատ բարի
Վասն սրո քյուլախո—գաղտնախորհուրդ, անտեսանելի դարձնող գլխարկի մասին
Վավ—(Շատախի բարբառ) ով
Վար—վրա
Վաքյիլ—երաշխավոր
Վերան—ավերակ
Վերգյի—տուրք
Վրոռշ—պասվա ջրալի ապուր՝ եփված ձավարով
Վիծկի—մի լուծանի արորի տեսակ
Վովքեր—(Շատախի բարբառ) ովքեր

Տ

Տախտա—տան հողե հատակ
Տանտրկին—տան ղեկավար կին։ Տանտրկին էին կոչվում նաև վանքերի տնտեսություններում աշխատող կանայք, որոնք մեծավ մասամբ լինում էին այրի և աղքատացած կանայք
Տառթ—անասնաղբի կոշտ ու ամուր զանգված, որ թոնիրների հիմնական վառելիքն էր։
Տավրի շլուտ—անասնացավ տարածող ոգի. սնոտի պատկերացումով, անասնացավը մերկ մարդու կերպարանքով շրջում էր երկրե-երկիր ու կոտորում անասուններին
Տափ—գետին. տափ էր կոչվում նաև ցանված արտերը հարթելու այն մեծ ավելանման գործիքը, որը հյուսված էր լինում կարծր թփուտներից։ Տափին լծում էին մի զույգ ուժեղ գոմեշ, տափի վրա կանգնում էր հմուտ տափավարը և իր ծանրությամբ պահպանում էր տափի վեր-վեր թռչելը. տափը ծառայում էր ցանված սերմերը հողով ծածկելուն
Տե—տես
Տէղ—գեղ
Տեղճուր—նորածին անասունի ստամոքսով, այնտեղ եղած չմարսած կաթնակոշտուկով պատրաստված պանիր մակարդելու հեղուկ
Տեռ-տիր—աչքին դեղ կամ սուրմա քսելու ոսկրե ձողիկ
Տըրկեց—դրացի
Տիժար գալ—մեղքանալ, խղճալ
Տիկ—խեցեղեն խնոցի
Տիր—անգամ. տիր էր կոչվում նաև գարնանացան ցորենի մի ընտիր տեսակ, որ ցանում էին շարքացանով ու անջրդի արտերում
Տիրամեր—Բերկրի գավառի հայկական մի գյուղի անուն, որտեղ գտնվում էր Տիրամոր հռչակավոր վանքը։
Տիրամոր խեղճ—բորոտ. ժամանակին հասարակությունից հալածվող այդ հիվանդներին, երբ Մարիամ աստվածածինը խղճացել էր ու ապաստանել. բորոտների ապաստանն էր նաև Բերկրիի Տիրամոր վանքը
Տիրըմ—մեկ անգամ
Տմառդ—ամարդի
Տյաշա—դաշա
Տյար—դար, բլուր

Ց

Ցախ—ծառերի չորացած ճյուղեր և այլ խռիվներ, որ օգտագործում էին որպես վառելիք
Ցախավել—հաստ ճյուղերից կապված ավել, որով ախոռի անասնաղբն էին մաքրում, ինչպես և կալատեղում գործածում որպես ավել
Ցան—չորացած անասնաղբի մանրը, որ վառում էին թոնրում
Ցըմփոր—ահաճորեն ուռած փոր, գեր անձնավորություն
Ուտիս—ոչ պաս, ամեն ինչը անարգել ուտելու օրեր

Փ

Փախրր փարա—պղնձադրամ. փախըր փարան վաղուց գործածությունից դուրս էր եկել. ներկայումս գործածվող պղնձադրամից ավելի թեթև էր
Փայախ—ախոռ
Փայդա—ի հայտ գալ, հայտնվել
Փայեն—մանր ու չոր անասնաղբ, որ փռում էին անասունների տակ
Փայլեվան—լարախաղաց
Փայվեր ի—փակվել է
Փանթոլ—փանթալոն, եվրոպական ձևի տաբատ
Փարդախ—(Շատախի բարբառ) ախոռ
Փարղիսո—կանացի վերարկուի նորաձև մի տեսակ.

Փարխաշ—պղնձյա կարճ դույլ՝ ջրհորից ջուր հանելու համար

Փենջարա—լուսամուտ

Փըթիր—անասնագոր՝ աղյուսաձև չորացրած վառելիք

Փըշտացեք—անբարոյականացեք

Փըռթընի—պատահի, միաժամանակ՝ ազատվի

Փըռթո՛ւ—փրկի՛ր, ազատի՛ր

Փիլաք—մանրիկ, փայլուն տափակ և մեջտեղերը ծակ՝ թիթեղյա զարդարանք, որ կարում էին հագուստների վրա

Փոթիկ—նորաձև, երկարաճիտ կոշիկ

Փոխան—փոխարեն. նաև ազայի անուն, որ դնում էին այն նորածին տղաների վրա, որոնց ծնվելուց առաջ տանից մահացել էր որևէ տղամարդ, ու նա ծնվել էր նրա փոխարեն, նրան փոխարինող

Փուլորակ—պտուտակաձև բացված անցք

Փողքյիկ—փոքրիկ եռանկյունի գլխաշոր, որ հնաոճ կանայք կապում էին չոմբարի տակից

Փոշած—որևէ բանջարով ու ձավարով եփված, մեջն էլ ալյուր ավելացրած պասվա կերակուր

Փուշի—մետաքսե սև մեծ թաշկինակ՝ մոխրագույն եզրագծերով, երկու կողմից երկար ծոպերով, որ տղամարդիկ կապում էին գլխների քոլոզի շուրջը այնպես, որ ծոպերը դուրս մնային

Փորես—փորիցս

Փութկի սուրբ Գևորգ—Շատախում գանվող այդ սուրբը մեծարվում էր նաև այլազգիներից. Փութկի ս. Գեորգի նվիրահավաքները անձեռնմխելի էին. նրանք երկրով մեկ շրջում էին և բնակչությունից հավաքում Փութկի Ս. Գեորգին խոստացած անասուններն ու դրամը

Փուփուշ—քնքուշիկ, նաև ուռուցիկ. այդպես էին անվանում նաև՝ կանացի հագուստի թևերի ուռուցիկ վերնամասին

Ք

Քաշմիկ—սրճագույն, մանրիկ ու տափակ սերմիկներ։ Ներմուծում ու վաճառում էին թուրք մանրածախ խանութպանները։ Հեքիմները քաշմիկի սերմի միջուկներից պատրաստում էին աչքի դեղափոշի

Քեթըր—թեք, մի կողմի վրա դրված

Քիրտր—հպարտ, վեհանձն։ Նաև արական անուն

Քիրման շալ—գեղեցիկ, գունազարդ, լավորակ շալ, որ կին թե աղամարդ, կապում էին մեջքին՝ հագուստի վրայից։ Հավանաբար Պարսկաստանի Քերման քաղաքի անունով էր քիրմանի շալ կոչվում

Քյա—բացականչություն՝ ասվելիք խոսքից առաջ, զարմացկոտ իմաստով

Քյազազիկ—կարճ թևերով մինչև մեջքը հասնող կուրծքը բաց աղամարդու վերնազգեստ. քյազազիկը դեղչկական հագուստ էր, գործում էին կանայք. նյութը՝ անգորական այծի (լուռ) բուրդն էր։ Դրսի կողմից այնքան խավոտ էր, որ այծի մորթու պատրանք էր տալիս, իսկ ներսից՝ հարթ էր ու ամուր. դրա համար էլ քյազազիկից անբաժան էր լուռ բառը (լուռ-քյազազիկ)

Քյալավեր—ավերակ

Քյակի՛—քանդի՛ր

Քյագըր—հալվա՝ ալյուրով, յուղով ու շաքարով շաղախված

Քյայվիր են—քանդվել են

Քյառեշա—կալսի, հերանի սայլերի վրա խուրձերը բարձրացնելու համար օգտագործվող վեց ճյուղանի փայտե հարմարանք՝ ամրացված երկար կոթի վրա։ Քյառեշտի ատամները պատրաստում էին խիստ ամուր փայտից

Քյասա—կավե մեծ և խոր կերակրաման

Քյավե—քավել են, վնասազերծել, ցավ չպատճառող նյութով բաց վերքը հականեխել

Քյար—օգուտ, շահույթ, միաժամանակ մասնակի օգուտ ստանալու վարպետություն

Քյարթու—հնացած ուտելիք՝ հաց կամ կերակուր

Քյարխանա—շահութաբեր հաստատություն՝ ջրաղաց, ներկատուն, ձիթհան և այլն

Քյարխանաշի—շահութաբեր հաստատության տեր, միաժամանակ՝ հասարակաց տուն պահող

Քյաֆիր—անխիղճ, անաստված

Քյե—քեզ

Քյոշկ—երկհարկանի բարձր շինություն, տուն

Քյուփաղ—արու շուն

Քյոք—արմատ

Քյուլա—գզված բամբակի կույտ, դրան նմանվող որևէ բան

Քյուլաշ—քանդված, գզգզված, կալսելու պատրաստված հացահատիկի խրձեր

Քյուրք—մուշտակ

Քոլող—թաղիքե կլորավուն գլխարկ

Օ

Օրա—մեծ դերդաստանի ընտանիքներից մեկը

Օթ—(թուրքերեն) խոտ

Օլան—այ աղա

Օխնուկ—օրհնված

Օղլին—բոլորին

Օղշում—ողջույն

Օրթախ—փայատեր, բաժնետեր

Ֆ

Ֆալաղ—բախտ, ճակատագիր

Ֆայմ, ֆայմել—գիտակցություն, ըմբռնողականություն, ըմբռնել, գլխի ընկնել

Ֆառախլամիշ—սրտարացվել

Ֆել-ֆանդ—խորամանկում, աչկակապություն

Ֆրոթոնա—ծովային փոթորիկ, մրրիկ

Ֆրստան—կանացի լրիվ շրջազգեստ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սերինե Մովսեսի Ավաղյան 5
Արճակ 7
Ինստիտուտի կողմից 9

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բնական միջավայրը 10
Արճակի գավառի գյուղերն ու ազգաբնակչությունը . 11
Արճակ գյուղը 12
Պատմական անցքեր 16
Զբաղմունք 21
Երկրագործություն . . . 22
Ջուրարա 29
Անասնապահություն 30
Արհեստներ . . . 33
Առևտուր 34
Արտագնացություն (պանդխտություն) . . 35
Նյութական մշակույթ 37
Բնակարանի համալիր 37
Կահ-կարասի 40
Ուտեստ 41
Բույսերի գործածությունը 44
Տարազ 50
Հասարակական կյանք 53
Վարչական կառուցվածքը . . 53
Գյուղական վարչակազմը . . 53
Հողեր կազմը 55
Համայնքի հավաքատեղին . . . 58
Պետական հարկերի վճարումները . . . 58
Դատավարական սովորույթներ . . 60
Կոնախներ 61
Արճակի դպրոցը 61
Ընտանիք 62
Կազմը 62
Հարսանեկան սովորույթներ 63
Տղաբերքի սովորույթները 73
Թաղման ծեսեր 73
Հիվանդություն և բժշկություն 74
Առանձին հիվանդություններ 74
Մանկական տարափոխիկ հիվանդություններ 81
Բուժիչ բույսեր 82
Մաքրակեցություն 84
Հավատալիքներ 84
Սրբավայրեր 84
Սնոտիապաշտություն 88
Ժողովրդական տոներ 91
Ժամանց 98
Մանկական խաղեր 98
Հոգաներ 100

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ավանդավեպեր, ավանդություններ, ավանդական զրույցներ 101
Քուչակյան ավանդավեպ . . . 101
Աղնավուրի գերեզման 100
Ճժերաց մախն ինչխ ի փայղա իլե . . 106
Անհիշատակ պառավին ուղղված ողորմիս . 107
Ուստա Նազարի ասածուն ապավինելը . 107
Ցորեն խաց պաղս չարող Թոփալ վարթապետ . 107
Շան փրկած ցորեն խաշկ 107
Հմեն մարթ ուր կսմաթի տերն ի . . 108
Կյոռտան քյարար 109
Հիսանի ումրը 109
Լեգենդներ Արճակի լճի մասին . . 110
Հեքիաթներ 112
Կուրքյ Թաքավրու խեքաթ 112
Ասըլղապու խեքաթ 113
Ախմախի խեքաթ 119
Երգիծական զրույցներ 122
Քավրոշ շուն խոռվիր ի 122
Ցել-Ֆանգ իմացող կընիկ . . . 123
Օչոչո-բոչոլո 124
Մեր խարս չկիտե խաց տանել պերան . . 124
Ախսըոկեր խարս 124
Սիսըոկեր խարս (տարբերակ) . . . 124
Կաճետա խելացի խարսի կըսեն . . . 124
Խավիծ-խավշավիծ 125
Անխունար աղջըկան բախտ . . . 125
125
Սրամտություն-սրախոսություն . . . 130
Բեյթ 131
Արճակի զվարճախոսները . . . 133
Երգ, երաժշտություն, պար 133
Թափառական երգիչներ 134
Սըփ Կարապետ (գովք) . . . 135
Կարոս խալ 135
Ասլան աղեն 137
Խոյի կընիկ շատխոս Խաթեն 138
Երգասացություն-երգասիրություն . . . 141
Ժողովրդական երգեր 111
Մալուլ տաղեր 142
Այլ տաղեր 146
Կատակերգեր 148
Օրորոցային երգերից . . . 150
Պարերն ու երաժշտական գործիքները . . . 150
Մանկական ուրախ ասույթներ 152
Առած-ասացվածքներ 152
Օրհնանք, բարեմաղթանք, երդում, անեծք, պարսավանք 155
Հանելուկներ 159

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՎԵԼՎԱԾ 161
Ցուցակ՝ Արճակի ծխերի 161
ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐ . . 165
Բառարան 176

ՍԵՐԻՆԵ ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱԳՅԱՆ
СЕРИНЕ МОВСЕСОВНА АВАКЯН

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա Ր Ց Ա Խ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ
Նկարիչ
Ն. Հ. ԽԱՆՋԱԴՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՖ 02038 Պատվեր 336 Հրատ. 4627 Տպաքանակ 2000
Հանձնված է շարվածքի 17.5. 1977 թ.։ Ստորագրված է տպագրության 18.5.1978 թ.։ Տպագրական 11,88 մամուլ, պայման. 23,76 մամուլ, հրատ. 18,48 մամուլ։ Թուղթ № 1, 60×90 1/8, գինը 3 ռ. 40 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.
Издательство АН Арм. ССР. Ереван, 375019, ул. Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջմիածնի տպարան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿ

Էջ	Սյունակ	Տող	Տպված է	Պետք է լինի
11	I	25 ն.	60 տնից։	160 տնից։
42	II	24 ն.	գլխիկ	գրիտիկ
45	II	3 ն.	հոզային	հողային
72	I	25 ն.	հաղթ անակ	հաղթական
85	II	5 վ.	սուխրաներ	սուփրաներ
90	I	9,8 ն.	տա- նում	ստա- նում
97	II	10 ն.	հրախսա	հարիսա
103	I	5 ն.	կիշնի	կչինի
112	I	1,2 ն.	1. Պատմեց արձակցի ծերունի Դավիթ Միրզո- յանը...	տողերը չկարդալ
131	II	8 վ.	կուտա	կուտաս
137	I	21 վ.	կոյատ	կույատ